


## ՈՐԻԴԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ԲԱՐՁՐ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ԳՈՐԾՈՂ ԵՎ ՀԵՂԱՆԿԱՐԱՅԻՆ ԳՋԵՐԸ



Զիսխորշից  
մինչև

Գործող գծեր

ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ

Երևանի ընդհանուր երկարությունը՝ 47 կմ. 36 կայարանով,

# ԶԻԱՔԱՐԾԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՏՐՈՂՈԼԻՏԵՆ

ԵՐԱՎՈ - 2003

ՀՏԴ 725.314 (091)  
ԳՄԴ 39.81դ  
Գ 479

Խմբագիրներ՝  
Լուիզա Սուրենի Սարաֆյան  
Միլվա Վարագդատի Աչոյան

ՆՎԻՐՎՈՒՄ Է  
ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ, ՄԵԾ ՇԻՆԱՐԱՐ  
ԿԱՐԵԼ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ  
ՊԱՅԾԱՌ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Գևորգյան Ռ.  
Գ 479 Զիաքարշից մինչև մետրոպոլիտեն -  
Եր.: «Արենի» ՍՊԸ, 2003 - 394 էջ

«Զիաքարշից մինչև մետրոպոլիտեն» գիրքը առաջին փորձն է մեր հասարակության մերկայացնելու Երևանի հասարակական տրանսպորտի զարգացման և մասնավորապես հանրապետության հզոր կառուցներից մեկի Երևանի մետրոյի շինարարության տարեգործությունը։ Ոուղիկ Գևորգյանը գրքում ներկայացնում է իրողությունը, փաստական տվյալներով խոսելով մետրոյի շինարարության յուրաքանչյուր փուլի մասին։ Գրքի արժեքներից է այն, որ հիշոտակվում են նախագծային ինստիտուտները, շինարարական կազմակերպությունները, պաշտոնական անձիք, ճարտարակները, երկրաբանները, տարբեր մասնագիտությունների տեր բանվորները, համաժողովրդական կառույցները և այլ մասնակիցները։ Երևանի մետրոպոլիտենը իսկական ինտերնացիոնալ կառույց էր, որի աշխատանքներին մասնակցում էին 200 հանրապետությունների մետրոշինարարները։ Միության ավելի քան 200 կազմակերպություն։

Դաստիարակությունը է ընթերցողի լայն հասարակայնությանը։

ԳՄԴ 39.81դ

Գևորգյան Ռ., 2003

I ISBN 99930-78-34-4



## Արժեքավոր գիրք հղոր կառուցի մասին

Ներկա գիրքը՝ «Զիաքարշից մինչև մետրոպոլիտեն», առաջին փորձն է մեր հասարակությանը ներկայացնելու Երևանի հասարակական տրանսպորտի զարգացման պատմությանը ընդհանրապես և Երևանի մետրոպոլիտենի կառուցման պատմությանը մասնավորապես:

Ըստ գրքում բերված հարուստ փաստերի՝ 344 Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի անվան հետ է կապված Երևանի մետրոպոլիտենի կառուցման իրականացումը, կառուց, որն այսօր իրավամբ կոչվում է նրա անունով։

Դեղինակը գրքում մանրամասնում և հանգանանորեն ներկայացնում է իրողությունը, փաստական տվյալներով խոսելով մետրոյի շինարարության յուրականչյուր փուլի մասին։

Երևանում մետրո կառուցելու միտքը ծնվել է դեռևս 1962 թվականին։ Դա Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ Գրիգոր Շասրաբյանի մտահղացումը և առաջարկությունն էր, որը հետագայում հավանության էր արժանացել 344 Կենտրոնի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի կողմից։ Դեղինակը նկարագրում է, թե ինչպիսի դժվարությունների գնով է հաջողվել Ա.Քոչինյանին Մոսկվայից թույլտվություն ստանալ 4 կմ երկարությամբ, «ստորգետնյա արագընթաց տրամվայ» կառուցելու վերաբերյալ, որի գծերը, որոշ հատվածներում, պետք է դուրս գային երկրի մակերես և կապվեին վերգետնյա տրամվայի գծերի հետ։ Դա, իհարկե, չէր լուծում Երևանի տրանսպորտային ապահովածության խնդիրը։

Ստորգետնյա արագընթաց տրամվայի շինարարական աշխատանքների գործընթացը պատկերվել է մանրամասնորեն և արխիվային հարուստ նյութերի հիման վրա՝ արժեքներով այն անհատների գործունեությունը, որոնց շնորհիվ շունչ էր առնում կառուցը։ Շինարարության ընթացքում ստեղծվել էր բարձր բարոյահոգեբանական մթնոլորտ, բոլորն աշխատում էին նվիրվածությամբ։ Չնայած որան շինարարությունը դանդաղում էր, և նախատեսված ժամկետում ավարտը վտանգի տակ էր։ Բարդությունները հիմնականում կապված էին ֆինանսավորման և մատակարարումների հետ։ Այնուամենայնիվ՝ 4 կմ թունելային աշխատանքները կատարվեցին։ Եվ, ի պատիվ մեր այն ժամանակվա դեկա-

վարների, պետք է ասել՝ այնպիսի չափերով և հեռատեսությամբ, որ հետագայում հնարավոր լիներ դրանք վերափոխել մետրոպոլիտենի թունելների:

1975թ. նոյեմբերին Հայաստանի Նախարարների խորհրդում քննարկվեց հարցը և արձանագրվեց, որ շինարարությունը ժամկետին ավարտելը վտանգի տակ է, և որոշվեց 1978 թվականի փոխարեն շինարարության ավարտի իրական ժամկետ նշանակել 1980-ը: Այդ ժամանակ արդեն 744 Կենտկոմի առաջին քարտուղար էր Կարեն Ղեմիրյանը:

Պետք էր ելք գտնել և շինարարությունը հասցնել հաջող ավարտի: Իսկ ելքը միակն էր միութենական կառավարության համաձայնությունը Երևանի արագընթաց տրամվայի շինարարությունը մետրոպոլիտենի վերափոխությունը մասին: Սակայն այդ որոշումը ստանալը թվում էր անհնարին:

Խորհրդային Միությունում, ինչպես նաև աշխարհում, մետրո կառուցելու առաջին չափանիշը ոչ պակաս, քան մեկ միլիոն բնակչության առկայությունն էր: Իսկ Երևանն այդ ժամանակ ուներ ընդամենը 800 հազար բնակչություն: Խորհրդային Միության մի շարք քաղաքներ ուր բնակչության թիվն անցել էր մեկ միլիոնի սահմանը, վաղուց պայքարում էին միութենական կառավարությունից այդ որոշումը ստանալու համար:

Այդ և այլ արգելքները հաղթահարելու համար Կ.Ղեմիրյանը գնաց այլ ճանապարհով, առաջարկեց այլ չափանիշներ և մոտեցումներ: Նա իր մոտ հրավիրեց «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Դանդուրովին և հանձնարարեց ուսումնավորություններ կատարել և նախապատրաստել մետրոյի կառուցման անհրաժեշտությունը հաստատող նոր հիմնավորումներ և առաջարկություններ Ելնելով նոր չափանիշներից, դրանք էին Երևանի բնակլիմայական պայմանները, դիրքը, ուղիեցքը, նեղ և նոր հովհանքներն ու կիրճերը, քաղմազան լանդշաֆտները, տարածքների սղության պատճառով փողոցների ոչ քավարար լայնությունը, որով խոշընդուռավում էր մեղքետնյա հասարակական տրանսպորտի անխափան աշխատանքը: Կարծ ժամանակ անց մասնագետները ներկայացրեցին նոր գիտական հիմնավորումներ Երևանում մետրոպոլիտեն կառուցելու անհրաժեշտության մասին: Ղեմիրյանը այդ փաստարկումներով մեկնեց Սոսկվա: Մի շարք անգամներ, ՀՍՍՀ Նախարարների խորհրդում աշխատանքի անցնելու առաջին իսկ օրե-

րից ես նույնպես միացա այդ աշխատանքներին: Բազմաթիվ անգամ Կարեն Ղեմիրյանի հետ միասին եղել ենք Մոսկվայում, հանդիպումներ ունեցել տարբեր ոլորտների ղեկավարների հետ: Այս բոլոր մանրամասները գրքում բերված են փաստերով և ժամանակագրական ծցգրիտ տվյալներով:

Անկերծ ասած, ես մինչև այժմ էլ հիացած և զարմացած եմ, թե ինչպես կարողացավ Կարեն Ղեմիրյանը բոլորին համոզել, ապացուցել, հիմնավորել Երևանում մետրոպոլիտեն կառուցելու անհրաժեշտությունը: Շատ ջանքեր և ժամանակ պահանջվեց այդ ամենի համար, իսկ արդյունքը հայտնի է բոլորիս: 1977թ. Խոկտեմբերի 6-ին ԽՍՀՄ Նախարարների խորհրդոր որոշում ընդունեց Երևանում մետրոպոլիտեն կառուցելու մասին: Այդ որոշման շնորհիվ հիմնական պատվիրատուն դաշնություն էր «Գլխավորմելմետրոշինը», այստեղից հետևող բոլոր դրական արդյունքներով Ֆինանսավորումը և մատակարարումը կատարվում էին միութենական բյուջեից և ֆոնդերից, ապահովվում էր նաև մասնագիտական օգնությունը:

Սակայն դժվարագույնը հաղթահարելուց հետո ինչպես և պետք է լիներ, առաջացան նոր դժվարություններ: Մեծացավ աշխատանքների ծավալը, խնդիրները ավելի բարդացան: Նորից սկսեցին աշխատել նախագծային ինստիտուտները, շինարարական կազմակերպությունները, արտադրական ծեռնարկությունները, մատակարարող կազմակերպությունները: Մետրոյի շինարարությունը հայտարարվեց համաժողովրդական կառուցյաց: Ներկայական այս բոլոր ներկայացնությ է ամենայն բարեխորդությամբ, հավաստի փաստերով՝ վկայակոչելով բազմաթիվ փաստաթրթեր, ամսաթվերով, տարեթվերով, անուն ազգանուններով: Զգալի տեղ են գրավում սեփական դիտարկումները:

Գրքի կարևոր արժանիքներից է և այն, որ չի մոռացվել ոչ մեկը, չի մոռացվել ոչինչ՝ նախագծային հնատիտուտները, շինարարական կազմակերպությունները, պաշտոնատար անձինք, ճարտարապետները, երկուարաբները, հորատողները, բետոնագործները, փականագործները, խառատները, այլ մասնագիտության տեր բանվորները: Նրանք բոլորը ներկա են գրքում իրենց կատարած աշխատանքով: Հայաստանի կոմերիտմիտությունը այս շինարարությունը հայտարարեց հարվածային կառուցյաց, ստանձնեց շեֆությունը և գգալիրեն նպաստեց իրականացմանը: Սա իսկապես համաժողովրդական կառուցյաց էր:

Երևանի մետրոպոլիտենի կառուցմանը ակտիվորեն նասնակցել են նաև մյուս հանրապետությունների մասնագետները, որոնք իրենց մետրոխնարարի հարուստ փորձն ու գիտելիքները ներդրել են այդ կառուցման, սովորեցրել հայ մետրոխնարարներին: Երևանի մետրոպոլիտենը խևապես ինտերնացիոնալ կառույց էր: Բավական է բերել մի թիվ կառույցի շինարարությանը մասնակցել են ավելի քան 200 կազմակերպություն:

Այժմ էլ, տարիներ անց, երբ հետաղարձ հայացքով հիշում են, թե ինչ վիթխարի աշխատանք կատարեց մեր ժողովուրդը, ինչպիսի կառույց տվեցինք մեր սերունդներին, խորին հարգանք եմ տածում մեր ստեղծագործ, աշխատասեր ժողովրդի և պետական այն գործիչների նկատմամբ, ովքեր այդ գործի սկիզբը դրեցին, նրանց նկատմամբ, ովքեր շարունակեցին և հաղթական ավարտին հասցեցին այդ հզոր կառույցը: Այդ անունների թվում առաջինը Կարեն Դեմիրճյանի անունն է, որին պարտական է մեր ժողովուրդը և որի հիշատակին նվիրված այս գիրքը:

Գրքի մի ամբողջ բաժին նվիրված է մամուլին՝ «Չորրորդ իշխանություն» վերնագրով: Ինչպես հերիխնակն է բնորոշում, «չերևացող շինարարները» ևս իրենց մեծ մասնակցությունն են բերել այդ կառույցին:

Գրքում հանդիպում ենք նաև մետրոպոլիտենի կառուցման և շինարարության ակունքներում կանգնած և շինարարության ակտիվ նախակիցների բազմաթիվ անունների: Նրանք շատ շատ են և այդ տարիներին տարեր պաշտոններ էին զբաղեցնում, կատարում տարբեր պարտականություններ: Սակայն բոլորն էլ անձնուրաց և մեծ նվիրումով էին աշխատում, և եթե նրանց անուններն այստեղ չի նշվում միայն այն պատճառով, որ նրանք մեծ թիվ են կազմում, և որևէ մեկին անգուշորեն նոռանալը հանցանք կիանարեի:

Գրքի հաջողությանը նպաստել է նաև այն, որ հեղինակը՝ Ռուդիկ Գևորգյանը, անձանք մասնակից է եղել մետրոյի շինարարության աշխատանքներին, սկզբում՝ ի պաշտոնե, իսկ հետագայում՝ որպես անմիջական աշխատակից: ՅԿԿ Կենտկոմի որոշմամբ մի խումբ կուսակցական, պետական պատասխանատու աշխատողներ, այդ թվում Ռուդիկ Գևորգյանը, գործուղվել են մետրոյի շինարարական տեղամասեր՝ օգնելու տեղի կազմակերպություններին և համակարգելու աշխատանքները: Ծուրջ մեկ տարի նա աշխատել է մետրոյի շինարարության ամենաբարդ հատվածներից մեկում և իր աշխատանքով ապահովել տեղամա-

սը պլանավորված ժամկետում շահագործման հանձնելը: Նա և շատերի հետ արժանացել է կառավարական բարձր պարգևի:

Յեղինակը պատմության է հանձնել XX դարի Դայաստանի Հանրապետության հզոր կառույցներից մեկի տարեգորությանը: Ուր էր թե լինեին Ռ.Գևորգյանի նման մարդիկ, որոնք գրեին մեր երկրի մյուս հզոր կառույցների մասին... Օրինակ, Յրազդան-Իջևան, Արփա-Սևան-Որոտան, «Յրազդանմեքենա», Մարս և այլ կառույցների պատմությունը:

Գիրքը ավարտվում է «Մետրոպոլիտենի հեռանկարները» վերնագիրը կրող բաժնով: Շատ հետաքրքիր բաժին է, բայց կարդում ես ափսոսներով: Այստեղ ամփոփված է մետրոյի հեռանկարային ծրագրերը, որ, ցավոք, մնացին անավարտ: Յուսանք, որ հետագայում Դայաստանը հնարավորություն կունենա իրականացնելու այդ նախագծերը Դամենայն դեպք այսօր մեր ժողովուրդն օգտվում է այդ արագընթաց, էկոլոգիապես նախուր, հարմարավետ տրանսպորտից, երախտագիտությամբ հիշելով այն նվիրյալներին, որոնք մեզ պարզեցին այդ հրաշալի կառույցը:

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՅ  
ՖԱԿԵՏ ՍԱՐԳԱՅԱՆ

ՀԱՎԵԼԻ քան 20 տարի է, ինչ Երևանում գործում է մետրոպոլիտենը: Եղջանիկ բերումով կառույցի շինարարության առաջին իսկ օրերից կապի մեջ էի շինարարական կոլեկտիվի հետ: Ծուրզ մեկ տարի աշխատելով մետրոյի շինարարությունում նրա կոլեկտիվի անդամներից մեկն էի: Երկար ընդմիջումից հետո կարծես վերակենդանացան գործարանային կյանքիս յոթ տարիները, շինարարական փոշու մեջ նորովի զգացի բանվորական կոլեկտիվի անկեղծ մրնոլորտը, ազատ շունչ քաշեցի... .

Այստեղ փորձ է արվում պատկերել դեռևս 1962 թվականից Երևանում մետրոպոլիտեն ունենալու գաղափարից մինչև ստորգետնյա արագճարաց տրամվայի էլեկտրատրանսպորտի շինարարության թույլտվությունն ու դրա ստեղծման աշխատանքներին ծերնամուխ լինելու գործընթացը. 1977-ին, անհնարինը իրականություն դարձավ: Նախկին խորհրդային միուրայն իշխանությունից մեծ դժվարությամբ հանրապետությունը ստացավ Երևանում մետրոպոլիտենի շինարարություն իրականացնելու թույլտվությունը, առանց որի հատկապես դա պարզ երևում է այսօր՝ խորհրդային կարգերի փլուզումից հետո/անհնարին էր Երազել 10.5 կմ Երկարությամբ ուղեգծի առաջին հերթի գործարկումը մեր ուժերով:

Թեկուզ ոչ մանրամասնորեն խոսենք մեր շինարարների և նախկին խորհրդային Միուրայն մի շարք քաղաքների ներկայացուցիչների ջամքերով ստեղծված կառույցներից մեկի մասին: Հուսով ենք, որ մեզ համար եղակի այս կառույցի շինարարության իրականացման մանրամասն պատմությունը ականատեսների և փաստական նյութերի օգնությամբ խորությամբ ի մի կրերվի քանի դեռ ուշ չէ, և սերունդներին կներկայացվի որպես հայոց պատմության շինարարական հերոսապատումների մի վար էզ: Գուցե և այդ բոլորի համար, ոպես շտեմարան կծառայի ապագա «Մետրոդարանը» ...

## ԶԻԱՔԱՐԾԸ, ԷԼԵԿՏՐԱՏՐԱՆՍՊՈՐՏԸ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից քաղաքն անհնար է պատկերացնել առանց հասարակական տրանսպորտի, առանց շրջանները միմյանց կապող փոխադրամիջոցների: Անհնարին է իրականացնել պետության սոցիալտնտեսական գարգացումն առանց երկաթուղային, օդային, խճուղային տրանսպորտային միջոցների համընթաց աճի: Այս հարցում առանձնահատուկ դեր ունի էլեկտրատրանսպորտը. որի լայն տարածումը ոչ միայն հնարավորություն է տալիս ընդարձակել ժամանակակից քաղաքները, այլև իր մեջ է ընդգրկում նոտակա արվարձաններն ու բնակավայրերը՝ նպաստելով նրանց հետագա առաջընթացին: Զարգացած քաղաքային փոխադրականի առկայությունը հնարավորություն է ընծեռում ռացիոնալ պլանավորել արդյունաբերական ծեռնարկությունների տեղաբաշխումը քաղաքի տարբեր շրջաններում: Կազմակերպված տրանսպորտը նպաստում է քաղաքի ծայրամասերի բնակեցման խտացմանը:

ԽՍՀՄ-ում ինդուստրացումը պայմաններ ստեղծեց քաղաքների արագ զարգացման համար: Եթե ցարական Ռուսաստանում 1913թ. քաղաքային ազգաբնակչությունը կազմում էր ամբողջ ազգաբնակչության 18%-ը, իսկ Հայաստանում ավելի պակաս, ապա 1959թ. մարդահամարի տվյալներով քաղաքային ազգաբնակչությունը ԽՍՀՄ-ում կազմեց ազգաբնակչության 48 %, իսկ խորհրդային Հայաստանում՝ 50%: Խորհրդային իշխանության տարիների Երևան քաղաքի տարածքն աննախընթաց չափերով մեծացավ: Քաղաքաշինական պլանների կատարման շնորհիվ 1920-70թթ. Երևանի շրջագծի մեջ մտան Աջափնյակը, Արաբկիրի և Քանաքեռի սարահարթերը, շրջակա բնակավայրերը Նորագավիթը, Խարբերդը, Չարբախը, Սովետաշենը, Դավիթաշենը, Նոր Արեշը և այլն: Վիթխարի տարածության վրա՝ Արարատի դեմ դիմաց, Արարատից և Արագածից գրեթե նույն հեռավորության վրա տարածվեց քաղաքամայր Երևանը իր արդյունաբերական ծեռնարկություններով, բնակելի զանգվածներով, ճարտարապետական համալիրներով:

Երևանի գարգացումն ուղեկցվեց բնակչության թվի արագ աճով /տես աղյուսակ N1/: Այդ աճի աղբյուրներն էն՝ բնական աճը ծննդի խիստ աճը մահացության նկատմամբ և մեխանիկական աճը ինչպես նախկին ՀՍՍՀ տարբեր բնակավայրերում և մյուս հանրապետություններում բնակվող հայերի, այնպես էլ սփյուռքահայերի ներհոսքը /ավելի քան 175 հազար մարդ/:

Ընդամենը հինգ տասնամյակների ընթացքում Երևանը դարձավ նախկին ԽՍՀՄ-ի արդյունաբերական, մշակութային և գիտական խոշոր կենտրոններից մեկը:

Երևանի ազգաբնակչության աճին մեծապես նպաստեց քաղաքային տրանսպորտի զարգացումը: Այդ նպատակով հանգանառութեան անդրադարձ Հայաստանի մայրաքաղաքի տրանսպորտային զարգացման պատմությանը:

#### Աղյուսակ – 1

Երևան քաղաքի բնակչության աճը /հազարներով/

Տարիներ	Բնակչության թիվը
1913	30
1926	64,6
1939	204,2
1959	517,7
1970	775,2

Երկրի սոցիալ-տնտեսական խնդիրների իրականացման, ազգաբնակչության տրանսպորտային սպասարկման գործում անգնահատելի է փոխադրամիջոցներից էլեկտրատրանսպորտի դերը. այն ցայտուն նկատվում է Երևանի օրինակով, և առանձնահատուկ է նրա նշանակությունը մետրոպոլիտենի զարգացման գործում:

Երևանի մետրոպոլիտենի կառուցելու մտահղացման գաղափարից մինչև դրա իրականացման մասին խոսելը հակիրծ կանգ առնենք մետրոյի-«նախահայերի» ծիաթարշի, այնուհետև էլեկտրատրանսպորտի

ստեղծման և Երևանում դրա գործարկման պատմությանը:

Տրանսպորտում մինչև էլեկտրական էներգիան քարչում ներդնելը, Արևմտյան Եվրոպայի մի շարք խոշոր քաղաքներում, որպես քաղաքային հասարակական մարդատար տրանսպորտի միջոց, օգտագործվում էր օմնիբուսը /լատիներեն «բոլորի հանար»/ և ծիաթարշը:

Ուսասատանի քաղաքներում մինչև օմնիբուսի և ծիաթարշի հանդես գալը, որպես մարդատար փոխադրական միջոց համարվում էին մարդատար կառքերը, որոնք ծառայում էին միայն ունկոր խավին: Կառքերը չին կարող ապահովել զարգացող արդյունաբերական քաղաքների պահանջները: 1840թ. առաջին անգամ միտք հղացավ հիմնադրել մարդատար տրանսպորտային ընկերություն: Ընկերության համար կազմվեց կանոնադրության նախագիծ, որտեղ նշված էր քաղաքի բոլոր բնակչների համար մատչելի փոխադրական միջոց ստեղծելու հարցը: Այդ նախագիծը չիրագործվեց: 1859թ. հիմնադրվեց Պետրոգրադի հասարակայնության կառքային ընկերությունը, որն առաջարկեց ծեռք բերել 150 –ից ավել կառք:

Նաև ընկերություն ստեղծվեց նաև Մոսկվայում: Երկարուդային տրանսպորտի հիմնադրումը արագացրեց քաղաքներում ռելսային մարդատար տրանսպորտի ծիաթարշի զարգացումը:

Արևելյան Հայաստանը, մասնավորապես Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքները շուրջ մեկ դար գտնվելով ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, մնացել էին զարգացման ցածր մակարդակի վրա: Միշև էլեկտրական տրանսպորտի ստեղծվելը Երևանի դումայի ղեկավարները սկսեցին զբաղվել նաև այս փոխադրամիջոցների ստեղծման հարցով:

Երևանի քաղաքային վարչության՝ 1901 թ. մարտի 4-5-ի, 1902թ. մարտի 14-15-ի և ապրիլի 8-1-ի նիստերում ըննարկվել են Երևան քաղաքում մասսայական տրանսպորտի միջոցներ ստեղծելու համար ցարական Ռուսաստանի ներքին գործերի նախարարություններից համապատասխան բոլյտվություն ստանալու հարցը:

Ցարական Ռուսաստանի ներքին գործերի նախարարի և Երևանի նահանգապետի 1903թ ապրիլի 9-ի թիվ 128 գործյան համաձայն, մի կողմից ինժեներ մեխանիկ Ա. Ս. Բաբյանի, մյուս կողմից Երևանի քաղաքային դումայի վարչության հ/Կ. Սելիք Աղամյան/ 1903թ մայիսի 2-

ին կնքվեց Երևանի ծիաբարշի Երկարուղու կառուցման պայմանագիրը:

Այդ պայմանագրով Ա. Ս. Բարյանին հանձնարարվում է կառուցել Երևանի ծիաբարշի Երկարուղի 4 վերստ Երկարությամբ, որը պետք է ունենար Երկու գծամաս.

ա/ Ղանթարի մոտից, այսպես կոչված, Վեսովյայ հրապարակով մինչև Երկարուղու կայարան,

բ/ Ղանթարի մոտից զգելու է դեպի Աստաֆյան փողոց /այժմ Արքյան/:

Պայմանագրերը բաղկացած են 43 հոդվածից, որտեղ նախամասն շարադրված է Երևանի ծիաբարշի Երկարուղու կառուցման ու շահագործման աշխատանքների բովանդակությունը: Զիաբարշի կառուցման առաջին հերթի աշխատանքները սկսվել են 1904թ. հոկտեմբերի 25-ին, ավարտվել են 1907թ. սեպտեմբերի 20-ին: 1906թ. դեկտեմբերի 9-ին բացվել է Աստաֆյան փողոցի Երթուղին: Այդ նույն օրը Երևանի քաղաքային դումայի մասնակի խորհրդակցությունը միաձայն համաձայնություն է տվել ծիաբարշի Երթեկուրյան բացմանը: 1907թ. սեպտեմբերի 17-ին սկսել են աշխատել բոլոր Երթուղիները: 1910թ. ինժեներ Վ.Չ. Միրզանը թողնում է պետական ծառայությունը, որի հետևանքով Ա. Բաբովը /Բարյան/ ազատվում է ծիաբարշի տնօրինության լիազորություններից: Երևանի ծիաբարշը նորմալ աշխատում է մինչև 1918թ. Վերջը, 1919թ. ընթացքում աշխատում է ընդմիջումով: Իրագործելով պայմանագրի իրավական փաստաթղթերը՝ դումայի դեկավարներն այդ հարցը մտցնում են դումայի խորհրդի իրավաբանական հանձնաժողովի քննարկմանը, որը 1919թ. սեպտեմբերի 1-ի նիստում կարծիք է հայտնում, որ գոյություն ունեցող պայմանագրի համաձայն ծիաբարշի Երթեկուրյունը պետք է դառնա դումայի սեփականությունը, ու հարցը մտցնում է նախարարների խորհուրդ՝ Այսպիսով, ծիաբարշի գոյությունն ավարտվում է 1919թ., հետևաբար մինչև Ելեկտրական տրանսպորտի շահագործումը Երևանի բնակչության փոխադրումը կատարվում է ծիաբարշի միջոցով: Զիաբարշը 5-6 նստատեղերով մի կառք էր, որը Երթեկուր է Արքյան փողոցով՝ կայարանից մինչև ներկայիս մետրոպոլիտենի «Երիտասարդական կայարանի» մոտակայքը:

...Քաղաքային Ելեկտրատրանսպորտի ստեղծման հարցը գիտնականների միտքը գրաղեցրել է դեռևս 19-րդ դարի առաջին կեսին: Այդ

1.Տես ՊԴԿԱ ֆոնդ 199 ցակ., գործ 80, թերթ 19-22

խնդրի լուծումը պայմանավորված էր շարժակազմում Ելեկտրատներգիայի օգտագործումով: Այդ գործով առաջին անգամ գրաղեցրեց ոռւս գիտնական, ակադեմիկոս Բ.Ս.Յակոբինը: Նա 1834թ. հայտնագործեց Ելեկտրամագնիսային շարժիչը: Մի քանի տարի անց Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կողմից առանձնացված հանձնաժողովի ղեկավարությամբ պատրաստվեց առաջին Ելեկտրագնացքը, որի անիվները պտտվում էին Ելեկտրական շարժիչի միջոցով: Ելեկտրական շարժիչը սնուցումը ստանում էր գալվանական մարտկոցից: 1838թ. Նևա գետի վրա փորձարկվեց ակադեմիայի հանձնաժողովի կառուցված Ելեկտրագնացքը, որով իհմք դրվեց քարշի մեջ Ելեկտրական էներգիայի օգտագործմանը: Սակայն դա մեծ գործի սկիզբն էր միայն: Դեռևս չեղ հաղթահարվել ավելի Երկար տարածության վրա Ելեկտրական էներգիան հաղորդելու սահմանափակությունը: Ուսւ ինժեներ Ֆ.Ի. Պիրեցկին 1874–1876 թթ. հայտնագործեց «Ելեկտրատներգիայի հաղորդումը ռելսերին և այլ հաղորդիչների» գյուտը: 1880թ. նա Պետրոգրադում աշխարհում առաջին անգամ կառուցեց տրամվայի վագոն, որը պատրաստված էր ծիաբարշ կառքի ձևով հարմարեցնելով Ելեկտրական շարժիչը: Վերջապես 1892թ ոռւս գիտնականներին հաջողվեց Ելեկտրական էներգիան ծառայեցնել բնակչության փոխադրության գործին:

Կիևում կառուցվեց և շահագործման հանձնվեց առաջին տրամվայը, որով իհմք դրվեց տրամվայի տնտեսություններում Ելեկտրական էներգիայի մասսայական օգտագործմանը:

Մինչև Խորհրդային կարգերի հաստատումը նախկին ԽՍՀՄ-ի տարածքում գործել են տրամվայի 36 տնտեսություն՝ 1000 կմ Երկարությամբ, որոնց շարժակազմը բաղկացած էր տրամվայի 4253 վագոններից: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին տրամվայի տնտեսությունները գրեթե քայլայվեցին: Ուսւաստանի 23 քաղաքներում դադարեց տրամվայի գործունեությունը:

Յայստանը, մասնավորապես Երևան քաղաքը, որը շուրջ մեկ դար գտնվում էր ցարական Ռուսաստանի տիրապետության տակ, մնացել էր գարգարման ցածր մակարդակի վրա:

Մինչ Ելեկտրական տրանսպորտի շահագործումը, Երևանի բնակչության փոխադրումը կատարվել է ծիաբարշի միջոցով:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Երևանում առաջին 10 տարիների ընթացքում կառուցվեցին մի շարք արդյունաբերական ծեռնարկություններ, որոնց առկայությունը պայմաններ ստեղծեցին Երևանի քաղաքաշինության զարգացման համար: Դրանցից էին Զերժինսկու անվան հասոցաշինական, կաբելի, պահածոների գործարանները, Շահումյանի անվան մետաքսի կոմբինատը, կարամել-մակարոնի, ծխախոտի ֆաբրիկաները, Երևանի հիդրոէլեկտրակայանը և այլն: Սկսվեցին Ս.Ս. Կիրովի անվան կառուցուկի գործարանի կառուցման աշխատանքները: Շահագործման հանձնվեցին կուլտուր-կենցաղային մի շարք ծեռնարկություններ: Արագ տեմպերով աճում էր նաև բնակարանային շինարարությունը: Այս պայմաններում ծիածառշն ի վիճակի չեր ապահովել զարգացող արդյունաբերական կենտրոնի ազգարնակչության պահանջները: Երևանում անհրաժեշտություն էր դարձել բնակչության մասսայական փոխադրամիջոցների ստեղծումը: Տրամվայի գծերի, դեպոյի, արեհստանունների և օժանդակ օբյեկտների կառուցումը ոչ միայն նպաստավոր պայմաններ էին ստեղծում բնակչության կուլտուրական սպասարկման համար, այլև խթանում էին մայրաքաղաքի բարեկարգման գործին:

Դրան Երևանը կառուցվել էր առանց որոշակի պլանի, տարերայնութեա, դրա հետևանքով չկային բարեկարգ փողոցներ, որոնցով հնարավոր լիներ առանց լրացուցիչ ծախսերի և շինարարական աշխատանքների լուծել Երևանեկության հարցը: Նախատեսվեց գոյություն ունեցող հին, ներ ու կարծ փողոցների փոխարեն կառուցել նոր փողոցներ և պողոտաներ: Այս խնդրի լուծումը կապված էր դժվարությունների հետ, որոնց հաղթահարման համար պահանջվում էին հսկայական կապիտալ ներդրումներ, տեխնիկական և շինարարական բազմաթիվ կոնյակացային հարցերի լուծում:

Ա.Վ.Բաղրայանի կատարած խորը ուսումնասիրությունները և «Հայաստանի էլեկտրատրանսպորտի ստեղծման պատմությունից» /Լրաբեր Հայկ. ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի, հասարակական գիտությունների 1966թ 2/273/ արժեքավոր աշխատությունը լույս է սփռում Երևանում էլեկտրատրանսպորտի հիմնադրման և գործարկման պատմության վրա: Նետագայում Ա.Վ. Բաղրայանի «Հայաստանի քաղաքային տրանսպորտի պատմությունից» /«Հայաստան» հրատարակչություն,

Երևան 1968թ/ ծավալուն գրքում առաջին անգամ լուսաբանվում է Հայաստանի քաղաքային մասսայական տրանսպորտի բազմահազարանոց կոլեկտիվների անցած փառավոր ուղին:

Դեշտ չի եղել մեզ մոտ էլեկտրատրանսպորտի ստեղծման անցած ուղին: Հայաստանի կառավարությունը և Երևանի քաղաքային խորհրդի գործկոնք դեռևս 1928 – 1929թթ. սկսել են գրադարձ Երևանի էլեկտրական տրանսպորտի ստեղծման հարցերով: Ի դեպ, այդ ժամանակ Հայաստանի ժողովների նախագահի առաջին տեղակալը՝ Արամայիս Երգնելյանը, միաժամանակ վարել է Երևանի քաղաքությունի գործկոնքի նախագահի պարտականությունները, և մայրաքաղաքում տրամվայի գծի շահագործումը մեծապես պայմանավորվեց նրա կողմից այս ուղղությամբ տարվող ծանրակշիռ աշխատանքներով: Էլեկտրական տրանսպորտի շինարարության ծեռնարկման առաջին խկ օրից մինչև նրա հաջող ավարտն անգնահատելի մեծ աշխատանք է կատարել

Ն.Ս. Յուզբաշյանը եղել է Երևանի տրամվայի կառուցման բյուրոյի պետը, այնուհետև տրամվայի վարչության առաջին տնօրենը: /Ա. Երգնելյանը և Ն. Յուզբաշյանը հետագայում տրամվայը շահագործման հանձնելու կապակցությամբ պարգևատրվել են «Կարմիր դրոշի» շքանշաններով: Մեծ է եղել Ն. Յուզբաշյանի ծառայությունը նաև Հայաստանի քաղաքային մասսայական տրանսպորտի ստեղծման ու զարգացման գործում:

1930թ. Երևանում սկսվել են տրամվայի շինարարության նախապատրաստական աշխատանքները, իսկ շինարարությունը սկսվել է 1931թ. փետրվարին: Ինչպես շինարարության, այնպես էլ դրա հետ կապված մյուս խնդիրները լուծելու համար Երևանի քաղաքությունի գործկոնքի կոնունալ բաժնին առընթեր ստեղծվել է էլեկտրաքարշի կառուցման բյուրո, որի աշխատանքներ ղեկավարել են Թթիլիսիից հրավիրված հայ ճանաչված ինժեներներ:

1930թ. հուլիսի 10-ին Երևանի քաղաքությունի գործկոնքի նախագահության նիստում հաստատվել են տրամվայի կառուցման նախագծերը: Նույն թվականի օգոստոսի 15-ին ԽՍՀՄ-ի պետական տեխնիկական սեկցիան, պայա օգոստոսի 24-ին Մոսկվայում տրամվայների համամիութենական բյուրոյի եքանդերության համապատասխան պատճենագիրը կատարվել է Երևանում 1930թ. սեպտեմբերի 23-ին նախագիծը

հաստատել է Անդրֆեղերացիայի պետպանի տեխնիկական խորհրդի շինարարական սեկտորը:

ԽՄՀՄ ժողովնախորհը 2 մլն. 700 հազ. ռուբլի գումար է տրամադրել Երևանի էլեկտրական տրամսպորտի կառուցման համար:

ԽՄՀՄ ժողովնախորհը Երևանում տրամվայի գծի կառուցման համար սկզբնական շրջանում ԽՄՀՄ կառավարությունից խնդրել է 1600 տոննա ռելս, որը կարող էր ապահովել 28,3 կմ միակողմանի գծի կառուցումը: Նախատեսվել է կառուցել Երևանութիւնից մեկը ծգվելու էր քաղաքի կենտրոնական մասով մինչև Երևանութու կայարան, մյուսը քաղաքի կենտրոնական մասը կապելու էր Փարիիկագործարանային շրջանի հետ, մինչև կաշվի գործարան, երրորդը կայարանից գործարանային թաղամասը:

Նկատի ունենալով, որ Թիֆլիսի տրամվայի պարկը կառուցվել է արտասահմանից ստացված նյութերի և սարքավորումների գնացուցակի համաձայն, Յայաստանի կառավարությունը ԽՄՀՄ կառավարության միջոցով ներկայացուցիչներ է ուղարկել Գերմանիա, որոնք համապատասխան առևտրական պայմանագրեր են կնքել սարքավորումների, հարմարանքների, կոնտակտային ցանցի, պղնձյա լարերի, ստորգետնյա կարելների մատակարարման համար: Այդ հարցով գրադիւնը է ԽՄՀՄ ժողովնախորհի նախագահի առաջին տեղակալ Արամայիս Երզնկյանը: Անհրաժեշտ էր լուծել նաև տրամվայի վագոններ ստանալու հարցը, որի համար հանրապետության դեկավարները դիմել են միութենական կառավարությանը: 1930թ նոյեմբերի 23-24-ը Մոսկվայում տեղի ունեցած կոմունալ մտնեսության ժողովնախտի գլխավոր վարչության խորհրդակցությունում քննարկվել է 1931-1933թթ տրամվայի վագոնների մատակարարման հարցը, և տրամվայների թողարկման սահմանափակ քանակի պատճառով որոշել են Երևանի համար պահանջարկն ապահովել 1934թ: Սակայն մայրաքաղաքի քաղխորհը գործելով և հանրապետության դեկավարները գործնական քայլերի են դիմում աշխատանքները նախատեսված ժամկետին ավարտելու և տրամվայի վագոնների հարցը լուծելու համար: Քաղաքային խորհրդի գործելով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սկսված շինարարական աշխատանքները ընթանում են պահանջված տենտերով, միութենական վերադաս օրգանների առաջ հարց է քարձրացնում մինչև 1932թ. հու-

լիսը շինարարական աշխատանքների ավարտը, Երևանի տրամվայի պարկին տրամադրել 20 մարդատար վագոններ:

1931թ. մայիսի 12-ին Երևանի քաղխորհը գործկոնում տեղի է ունեցել միջտնտեսական խորհրդակցություն, որին նաև ակցել են ջրուղի, Երևանի ջրապահության մասնակիցների Երևանի տեղամասի, խօսուղային ճանապահների վարչական, Անդրկովկասայան էլեկտրական հոսանքի գրասենյակի, ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդի, քաղաքային էլեկտրացանցի, Երևանի կապի բաժանմունքի ներկայացուցիչները: Այստեղ էր նաև Ալեքսանդր Թամանյանը, ինչպես նաև՝ գործի հետ առնչվող պաշտոնական մի շարք անձինք: Այս խորհրդակցությունում առաջարկվել է տրամվայի գծեր անցկացնել Երևանի Յարավային պղղոտայով, մինչև Երևանու կայարանը: Խորհրդակցությունում ըննարկվել են նաև տրամվայի էլեկտրասնաման, ստորգետնյա կաբելների տեղադրման հարցերը և որոշվել է սննան ու ստորգետնյա կաբելները տեղադրել Արտվան փողոցի աջ կողմում, իսկ մնացած բոլոր տեսակի կաբելների տեղադրումը՝ ջրմուղի, կոյուղու, թողմել ծախ կողմում:

Նկատի ունենալով այն, որ Արտաշատի խօսուղու շրջակայքում Արշակունյաց (Օքջոնիկիծեի) պղղոտայի դեպի Ս.Մ. Կիրովի անվան կառուչուկի գործարանն ընկած քաղամասում ապագայում նախատեսված էր կառուցել գործարաններ, ֆաբրիկաներ և այլ բազմապիսի հիմնարկեծունարկություններ, անհրաժեշտություն է գգացվել տրամվայի N 2 երթուղին բացել 26 կոմիսարների /Ագրարանգեղոս/ փողոցով, Արտաշատի խօսուղու մինչև կաբելի գործարան (այժմ ռետինատեխնիկական իրերի գործարան):

Այս տարիներին էլեկտրական տրամսպորտի կառուցման աշխատանքները հեշտությամբ չեն իրականացվել, պահանջվել է մորթիի գացմնել ուժերը, գործնական քայլեր կատարել: Բոլոր տեսակի թերթերի, շինարարական նյութերի փոխոցով: Էլեկտրաքարշի կառուցման բյուրոն իր տրամադրության տակ Երած տրամսպորտով ի վիճակի չեր սահմանված ժամկետում ավարտել նախատեսված շինարարական աշխատանքները տրամվայի գծերի, դեպոյի, մեխանիկական արեհստանոցների, ենթակայանների, վարչական շենքերի և մյուս օժանդակ օբյեկտ-

ների կառուցումը, եթե ռացիոնալ չօգտագործվեր Երևանում եղած տրանսպորտը, և օգնության ծերո չմեկնեին քաղաքի արդյունաբերական ծեռնարկությունների կոլեկտիվները:

Երկու ամսվա շինարարական աշխատանքների արդյունքները ցույց են տվել, որ տրամվայի կառուցման բյուրոյի կոլեկտիվի և նրա օժանդակ կազմակերպությունների կատարած աշխատանքները սահմանված ժամկետից հետ են մնացել 20 օրով: Այդ էր պատճառը, որ Երևանի քաղխորհողի գործկոմը 1931թ. մայիսի 17-ին, լսելով շինարարական աշխատանքների ընթացքի մասին, ընդունած որոշման մեջ նշել է. «Փոխադրամիջոցների (ծիերի, եզների, սայլերի) անբավարար քանակի և տեղական շինանյութերի և ոչ ժամկետային մատակարարման հետևանքով կառուցման աշխատանքները երկու տասնօրյակի չափով ետ են մնացել նորմալ ընթացքից»: Քաղխորհողի գործկոմի որոշումը կատարելու համար կառուցողները և Հայտնարկուող գործնական միջոցներ են ծեռնարկում շինարարական աշխատանքները նորմալ ընթացքի մեջ դնելու: Ավելացվում են փոխադրամիջոցները և բարելավվում շինանյութերի ժամանակին մատակարարումը դրանով իսկ պայմաններ ստեղծելով կառուցման տեմպերն արագացնելու համար:

Սակայն կային նաև այլ լուրջ դժվարություններ: Անհրաժեշտ էր արագ կերպով լուծել բնակելի տարածության իրացման հարցերը: Մասնավոր տները քանդելու համար պահանջվում էին լրացուցիչ միջոցներ և բնակարաններ՝ բնակչությանը տեղափորելու համար: Միայն Սիլաշի թաղամասում պետք է քանդվեր 37 սեփական տուն: Պահանջվում էր ժամանակին լուծել նյութատեխնիկական մատակարարման հետ կապված հարցերը: Այս հարցերը նույնպես լուծվեցին:

Մայրաքաղաքի հիմնարկ ծեռնարկությունների կոլեկտիվները շեֆություն են վերցնում տրամվայի շինարարությունն արագացնելու համար, բայց նյութատեխնիկական մատակարարման վատ կազմակերպումն արգելակում է դրան: Դայաստանի ժողկոմի նոր ֆեղերացիայի բարձրագույն տնտեսական խորհրդի առաջ հարց է բարձրացրել՝ Երևանի տրամվայի շինարարության մատակարարումը մտցնելու առաջին խմբի մեջ: Բացի դրանից, Անդրֆեղերացիայի կառավարության նշտական ներկայացուցիչներին հանձնարարվել է ԽՍՀՄ կառավարության օրգաններում արագորեն լուծել Երևանի տրամվայի օր-

յեկտների կառուցման համար սարքավորումների ձեռքբերման հետ կապված բոլոր հարցերը: Այդ միջոցառումները օգնել են վերջնականացնելու կատարելու մատակարարման գործը: Լուծվել է նաև շինանյութերի փոխադրման հարցը:

Գծի կառուցման աշխատանքները դեկավարել են Մոսկվայից հրավիրված տեխնիկ Պ.Պավլովը, Թթիլիսիից՝ Ալոարել Ֆարեզյանը, իսկ Ենթակայանի մոնտաժման աշխատանքները՝ Լենինգրադի «Էլեկտրոսիլլա» գործարանից հրավիրված Ա.Կուզնեցովը և Վ.Իվանովը: Տրամվայի կոնտակտույին ցանցի մոնտաժումը դեկավարել է Ա.Կարապետյանը, որը պատրաստել և դաստիարակել է տասնյակ կադրեր:

Տրամվայի շահագործման աշխատանքները կարգավորելու համար Միության տարբեր քաղաքներից հրավիրվել են Վագոնավարներ՝ Աղրբեջանից Բագրատ Հարությունյանը, Պատվական Մարտիրոսյանը, Արտեն Զագյանը, Ավան Պետրոսյանը, Խալիլ Կուլինը, Կրասնոդարից Վարդան Շադիրովը և ուրիշներ: 1933թ. հունվարի մեկից Տրամվայի կառուցման բյուրոն վերանվագում է Տրամվայի վարչության:

1933թ. հունվարի 12-ին՝ տրամվայի շահագործման հանձնելու օրը, Երևանի աշխատավորները հավաքվում են միտինգի: ԽՍՀՄ ժողկությորիի նախագահի առաջին տեղակալ Ա.Երզնկյանի ճառից հետո տրամվայի վագոններն սկսում են շարժվել Արովյան փողոցի, կայարանի, գործարանային թաղանասի երթուղիներով:

Տրամվայը շահագործման հանձնելու առիվ Երևանի քաղխորհողի գործկոմին, տրամվայի կառուցման կոմիտեին ողջույնի հեռագիր է հղել ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը, ուր ասված էր. «Այսօր մենք գործարկում ենք մի ծեռնարկություն, որը խոշոր խթան պետք է հանդիսանա մեր մայրաքաղաքի, նրա արդյունաբերության, շինարարության հետագա առաջընթացի զարգացմանը»:

\* \* \*

Խորհրդային իշխանության տարիներին Երևանը դարձավ Միության խոշոր արդյունաբերական կենտրոններից մեկը: Այդ հսկայական աճի հետ միասին զարգացավ նաև քաղաքային էլեկտրատրամսապորտը (տես աղյուսակ-2):

## Երևանի քաղաքային տրանսպորտի միջոցները

	1940	1950	1960	1970
Տրանվայ գծի շահագործման երկարությունը /կմ/	39.5	45.3	72.0	99.0
Տրանվայ ուղևորների փոխադրումը (մլն մարդ)	47	35.3	63.8	52.9
Տրոլեյբուս գծի շահագործման երկարությունը /կմ/	-	23.2	61.3	95.1
Տրոլեյբուս ուղևորների փոխադրումը (մլն մարդ)	-	8.1	38.1	62.1

Տրանվայը շահագործման հանձնելուց հետո հակայական չափերով մեծացավ նրա գործունեության շառավիղը: Եթե տրանվայի շահագործման առաջին տարին գծի երկարությունը 7կմ էր, ապա 1965թ, այն հասավ 85 կմ-ի: Իրարից տասնյակ կիլոմետրեր հեռու գտնվող թաղամասերը և արդյունաբերական ձեռնարկությունները էլեկտրատրանսպորտը կապեց միմյանց: Տրանվայի արտադրական բազայի զարգացմանը գուգընթաց մեծ չափով ավելացավ շարժակազմը: 1933թ. 10 վագոնների փոխարեն 1965թ. գիշեր դուրս գալիս օրական 180-190 տրանվայի գնացքներ, 200-ից ավելի տրոլեյբուսներ:

Քաղաքային էլեկտրատրանսպորտը լուրջ վերափոխումներ մտցրեց մայրաքաղաքի տնտեսական և կուլտուրական կյանքում, մեծ դեր խաղաց քաղաքի քարեկարգման գործում, նպաստեց արդյունաբերական ձեռնարկությունների, կենցաղային օբյեկտների ռիթմիկ աշխատանքին, մշակությի զարգացմանը: Էլեկտրատրանսպորտի դերը մեծ է ոչ միայն բնակչության ժամանակի խնայողության, հոգևոր կյանքի, հանգիստը լավագույնս կազմակերպելու գործում, այլև արտադրական գործընթացների կազմակերպման անմիջական շարունակողն է.

առանց որի հնարավոր չելանի տրամվայը (հետագայում 1957թ. նրան ընկերակցեց տրոլեյբուսը): Սակայն անընդհատ աճող և զարգացող Երևանին էլեկտրատրանսպորտի այս ծևերը սկսեցին չքայլարոել, անհրաժեշտ էր կտրուկ քայլերի դիմել:

Եկա ահա ծնվեց Երևանում մետրոյի շինարարության գաղափարը...

\* \* \*

Անշուշտ ընթերցողին կիետաքրքրի մետրոշինարարության ծագման և զարգացման պատմությունը, դրանից ելնելով հակիրծ կանգ առնենք այս հարցի վրա:

1963թ. լրացավ համաշխարհային մետրոշինարարության հիմնադրման 100 տարին: Ակիզբը դրվեց Լոնդոնում՝ 1863-ին, շահագործման հանձնելով առաջին մետրոն: 19 դարի վերջին և 20-րդ դարի սկիզբին վերջնականացես մետրոն հաստատվեց՝ որպես քաղաքային տրանսպորտի ժամանակակից և առաջավոր ծև, իսկ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածում մետրոշինարարության մեջ տեղի ունեցավ արմատական տեխնիկական վերազինում, այդ գործընթացը շարունակվում է նաև մեր օրերում: Նախկին Խորհրդային Միության մեջ առաջին մետրոն կառուցվել է Սովորակում 1934թ. 11.6 կմ ընդհանուր երկարությամբ, 13 կայարաններով: Այն կառուցվել է Երեք տարում, ընդ որում, աշխատանքի 80 տոկոսը իրականացվել է 1934թ.: Շինարարությունում աշխատել են 75 հազ. մարդ, այդպիսի ծագալով և այդպիսի տեմպերով շինարարության ծեռնարկում մետրոպոլիտենի շինարարությունում աշխատիր չէր տեսել:

Մինչև 1966թ. հունվար ամիսն աշխարհում գործում էր 34 մետրոպոլիտեն: Թրիլիսիի մետրոն դարձավ աշխարհում 35-րդը... Այդ տարի նախագծվում և աշխատիր 70 խոշոր քաղաքներում իրականացվում է մետրոպոլիտենների շինարարությունը:

Անհատ տվյալներ, որոնք հետաքրքրություն են ներկայացնում: Վերցված են 1965թ. տվյալները: Եյու-Յորքում ապրում էր 14.3 մլն մարդ, գործող մետրոյի 29 ուղղությունների երկարությունը հասնում էր 380 կմ-ի, կայարանների թիվը՝ 482-ի: Տոկոսում ապրում էր 11.3 մլն մարդ,

գործող մետրոյի 13 ուղղությունների երկարությունը հասնում էր 60կմ-ի, կայարանների թիվը՝ 46-ի: Լոնդոնում ապրում էր 10.5 մլն մարդ, գործող մետրոյի 7 ուղղությունների երկարությունը հասնում էր 393կմ-ի, կայարանների թիվը՝ 230-ի: Չիկագոյում ապրում էր 6.1 մլն բնակիչ, գործող մետրոյի 7 ուղղությունների երկարությունը հասնում էր 131 կմ-ի, կայարանների թիվը՝ 135-ի . . . Թվարկվեցին մի քանի մլն ազգաբնակչություն ու թիվ 128 քաղաքներում մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերող տվյալներ: Սակայն չէ՝ որ եղել են քաղաքներ 1 մլն ազգաբնակչություն ունենալու շեմին գտնվելու պայմաններում և սկսել են մետրոպոլիտենի շինարարությունը . . .

Ստոկհոլմ, 1964թ. ապրիլին շահագործման է հանձնվել մետրոպոլիտենի երկրորդ հերթը՝ 11կմ երկարությամբ, 11 կայարաններով: Ավելորդ չեն նշել, որ Շվեդիայի մայրաքաղաքում մետրոպոլիտենի շինարարությունը սկսվել էր այն ժամանակ, երբ քաղաքի ազգաբնակչության թիվը չեղ հասել 1 մլն-ի:

Բնակչության աճի տեմպերը թելադրում էին, որ մի քանի տարի հետո Երևանն էլ կդառնա միլիոնանոց քաղաք: Իսկ ինչո՞ւ այսօր՝ 1962թ. այդ մասին չմտածենք . . .

Աշխարհի մեկ և կես տասնյակ քաղաքներում մետրոպոլիտենի ստորգետնյա ուղեհատվածի երկարությունն այնքան էր, որքան կարող էր լինել Երևանուն:

Այսպես՝ Կոպենհագենում թունելի երկարությունը հասնում էր 1.5կմ, Օսլոյում՝ 2կմ, Տորոնտոյում՝ 5.2կմ, Լու Անգելեսում՝ 1.2կմ, Նագոյում՝ 2.63կմ, Միջնեյում՝ 2.4կմ:

Դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ տարիները թշում են, մարդիկ իրենց մահկանացուն են կնքում, իսկ մասնագետի՝ լրագրողի, իրապարակախոսի, կամ լրատվական այլ ծառայությունների աշխատողների մտքով անգամ չի անցնում Երևանում իրականացված դարի հզոր կառույցներից մեկի՝ մետրոպոլիտենարարության մասին, երկու փոքրիկ գրքույկներից քացի, լուրջ մնայուն գործ ստեղծել: Չէ՝ որ ժամանակակիցներս իրավունք ունենք հպարտանալու . . .

Ընդամենը երկու կամ երեք մանուլում տպագրվել են տեղեկություններ մետրոյի շինարարության մասին հիշողության ձևով. ծով գործերի մեջ մի կարի է, չերևացող մի քան: Պատվավոր կառույցի նկատմամբ անտարբեր մոտեցումը ինձ հանգիատ չէր տալիս: Զրուցեցի իմ բարեկամ Լավրենտի Աշոտի Բարսեղյանի հետ:

Իրոք, լինում են պահեր, որոնք թեզ (Երեսն նաև շրջապատի) համար որոշիչ են լինում ինչպես Երևանի մետրոյի շինարարության ժամանակ պայթեցումից հետո ժայրի միջից դուրս եկող ջրի հզոր շիթը. Լավրենտի Բարսեղյանի հետ զրույցից իմացա, որ Երևանում մետրոյի շինարարության գաղափարը ծնվել է 1962թ: Նա 1960-ականի սկզբներին Երևանի քաղաքուրիդի գործկոմում պատասխանատու պաշտոն էր վարում գործկոմի քարտուղարն էր և տեղյակ էր ոչ միայն նախագահի, տեղակալների գործունեություններին, այլև գործերի առաջին կազմակերպիչներից մեկն էր: Նրա հիշողություններն օգնեցին տողերիս հեղինակին շատ հարցեր պարզել:

Նպատակահարմար համարեցի, ուսումնասիրել հաճրապետության կառավարության որոշումները, կարգադրությունները, արխիվային այլ փաստաթղթեր, սկսած 1962թ, զրուցել նախկինում պատասխանատու պաշտոններ գրաված մարդկանց հետ, որոնք առնչվել են Երևանի մետրոպոլիտենի գաղափարի իրականացման աշխատանքներին: նպատակ ունենալով միայն և միայն ծիծու և արժեքավոր հիմնավորումներով թղթին հանձնել Երևանի ստորգետնյա հզոր կառույցի հակիր նկարագիրը՝ հույս ունենալով, որ գրածն ազդակ կիանդիսանա, քանի դեռ ուշ չէ, կատարված մաքառումների պատմության ստեղծմանը:

... Արժեքավոր իշխողություններով ու փաստացի նյութերով մեծ օգնություն ցույց տվեց Երախորհրդի գործկոմի 1963-1973 թթ. նախագահի տեղակալ Արամ Նիկիտի Արամյանը, որը նույնպես իմբնավորեց 1960-ականների առաջին տարիները որպես Երևանի մետրոպոլիտենի շինարարության գաղափարի իրականացան ուղղությամբ տարվող աշխատանքի «իմբնադրման» տարիներ: Երախորհրդի գործկոմի 1962-1975թթ. նախագահ Գրիգոր Հովհաննեսի Հասրայանը Երևանում մետրո կառուցելու գաղափարի հեղինակն է: Ահա թե Գրիգոր Հասրայանը այդ մասին ինչ էր գրել.

«Նրանք, ովքեր տարբեր քաղաքներում օգտվել են մեւրոյի ծառայություններից, անկասկած, փայփայել են փոխադրամիջոցի այդ հրաշալի տեսակը հարազատ ուստանում ունենալու գրեթե անիրականանալի երազանքը: Այդ միտքն ինձ գրադեցրել էր շատ տարիներ առաջ, բայց այն վերածվեց անդիմադրելի անհրաժեշտության և քաղխորհրդի նախագահ աշխատելու առաջին իսկ ամիսներից անձամբ առնչվեցի ծոճվող տրամվայի ու տրոլեյբուսների, ծիս ու փոշու մեջ Երթևեկող ավտորուսների հետ: Ամենակին չերագնահատելով անցած և ներկա ժամանակաշրջաններում այդ փոխադրամիջոցների ծառայությունը՝ Երևանցիների սպասարկման գործում մետրոյի առկայությունը և նրա ծառայությունից օգտվելը որակական նոր Երևույթ պետք է հանդիսանային, ազդարարեին նոր ժամանակներ, աշխատանքային, մարդկային փոխհարաբերությունների նոր նոտեցումներ, նոր ըմբռնումներ ներարկեին քաղաքային կյանքին: Առանց մետրոյի անխափան և ծշտապահ գործունեության, առանց նրա բարձրորակ սպասարկման և քաղաքացիների իրոք բարեկիրք փոխհարաբերությունների անհնար կիխներ շոշափելի, տեսանելի դարձնել այդ ամենի հմայքն ու արժեքները»<sup>1</sup>:

Եվս մեկ հավաստի փաստ:

«Գիտություն և տեխնիկա» ամսագրի 1979թ Ն 7-ում «Երևանի մետրոյի գծերի գարգացման հեռանկարները» խորագրով «Հայպետուրանախագիծ» ինստիտուտի «Մետրո և քունելներ» բաժնի գլխավոր մասնագետ Ուսուլալդ Գեղամյանը գրում է «...Երևանում մետրոպոլիտենի պրոբլեմով նախագծողները գրադկում են արդեն շուրջ 15 տարի:

1. «Կոմունիստ», 1999 թ. 916 ապրիլ, N13 (268) «Ինչպես է կառուցվել Երևանի մետրոն»:

1964թ. սկզբներին, երբ հարց բարձրացավ քաղաքի հեռավոր հեռանկարի նոր գլխավոր հատակագծի մասին, նույն ժամանակ էլ առաջացացավ քաղաքի ողջ տրանսպորտային համակարգի վերակառուցման և գարգացման պրոբլեմը: Նախագծային նշակումների խորացման հետ ակնհայտ է դառնում, որ առանց արագընթաց տրանսպորտի համակարգի, մեծ Երևանը չի կարող գոյություն ունենալ»: Այսուհետև գրում է «...1966թ. «Կավգիպրոտրանս» ինստիտուտը մշակեց «Երևան քաղաքում մետրոպոլիտենի շինարարության տեխնիկա-տնտեսական հիմնավորման» նախագիծը»: Պարզ է, որ այն ոչ պակաս մեկ-Երևուու տարվա ջրտնաջան աշխատանք էր պահանջելու:

Խոկ Ռ.Գեղանյանը 1964թ. «Կավգիպրոտրանսուում» էր Թթիլիսիում, ուր հայորդի Վլադիմիր Ղանդուրովի հետ մտածում էին՝ ինչպես օգնեին մայր հայունիքին, մայոքքաղաքին:

Այսքանը քավական էր ինձ համար փաստացի նյութերի ծեռք բերմանը լավատեսորեն տրամադրվելու, ուսումնասիրություններն ակունքից՝ «Երևաննախագիծ» ինստիտուտից, սկսելու հանար: Չե՞ որ մայոքքաղաքի սոցիալտնտեսական խնդիրների, նրա հեռանկարային՝ հատակագծի գարգացման հարցերով գրադկում էր նախագծային այս կազմակերպությունը, ուր ամփոփված էին նաև մետրոպոլիտենի ստեղծման գաղափարի իրականացման ուղիները:

Դիմա խոսքն ըստ հերթականության և հակիրճ:

\*\*\*

1960-ական թվականների առաջին կեսը Երևանի համար շատ խնդիրների իրականացման տեսակետից իրավամբ կոչվելու է «Ուկե տարիներ»: Դրամից մեկում «բախվեցին» Երևուու մեծություններ, որոնց հավաքական ուժը հնարավորություն էր տալու մայոքքաղաքի գարգացման պատմության մեջ մնայլու հետք թողնել:

1961թ. վերջն էր: Արդեն կյանքի մեծ ծանապարի անցած Բաղալ Հմայակի Մուրադյանը պետք է աշխատեր կուսակցության՝ Երևանի քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար: Նա կուսակցական աշխատանքի մեծ փորձ ուներ. դեկավարել էր Լենինյան կուսչրջկոմը:

Միության ամենախոշոր և կարևորագույն ձեռնարկություններից մեկը Ս.Մ. Կիրովի անվան քիմիական կոմիտենատը, պետք էր ուժի

կանգնեցնել. այլ կերպ՝ տասնյակ, նույնիսկ եղած ու նորակառույց ծեռնարկություններից հարյուրավորների բախտը որոշվելու էին նրա հստակ աշխատանքով, հզորացնամբ: Որոշվել էր կուսչրջկոնի առաջին քարտուղարին ուղարկել իր նախկին «վարանը»՝ քիմիական կոմբինատը որպես տնօրեն, որտեղ իր արտադրական մկրտությունն էր ստացել, տարիների ընթացքում աճել, դարձել արտադրության խոշոր կազմակերպիչ, ինտո ընտրվել կուսկոմիտեի քարտուղար: Արդեն որպես տնօրեն 4 տարի ղեկավարելով քիմկոմբինատը՝ Բադալ Մուրադյանն անհնարինը դարձրեց հնարավոր իր կազմակերպչական տաղանդով: Ծեռնարկությունը և դրա հետ առնչվող կազմակերպությունների կուեկտիվները ուղղակի ուժի կազմնեցին: Եվ հանկարծ Յայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Յակով Նիկիտի Զարությանի մտահղացմանը որոշվեց մայրաքաղաքի կուսակցական կոմիտեի առաջին քարտուղար ընտրել Բադալ Մուրադյանին: Կոմբինատի աշխատողները, հատկապես բանվորները, «բունտ» բարձրացրին: Չէ՞ որ սիրված, արդեն սրբացրած տնօրենին իրենց մոտից «հանում են»: Անհարժեշտ եղավ մարդկանց հասկացնել, որ ոչ միայն իրենց, այլև մայրաքաղաքի շահերն են պահանջում նրա տեղաշարժը, նա պետք է բոլորին: Յամոգվեցին: Նույնիսկ իմ հասակակիցները (այն ժամանակ ուսանող էի) դաւակ են իշխում: Այլ վերաբերմունք ցույց տրվեց Երևանի քաղսորհրդի գործկոնի ապագա նախագահ «հյուսիսից եկած» Գրիգոր Յովհաննեսի Յասրաթյանի նկատմամբ: Գործնական աշխատանքի մեջ ճանապարհ անցած քաղաքաշինության գիտակը 4 տարի ղեկավարեց «Երևաննախագիծ» ինստիտուտը, այնուհետև ղեկավարեց Լենինական քաղաքի գործադիր կոմիտեն, վաստակեց մեծ ճարտարապետի անուն: Որոշել էին նրան տեղափոխել Երևան: Գյումրեցիները իշխում են, թե ինչպես գործկոնի նախագահը, քաղաքի շինարարության ամեն մի «ծակ ու ծուկ» մտնելով, փոխում էր քաղաքի բարեկարգման հետ կապված նախագծերը՝ այն ավելի հրապուրիչ և տեսանելի դարձնում: Կավիճը միշտ գրանին, անհրաժեշտության դեպքում ասֆալտի վրա գծագրելով իր մտահղացումները և մասնագետներին համոզելով, պարտադրում էր մինչև նրա ավարտը ջնջել ասֆալտի վրայի «գծագրերը»: Այս ճանապարհով Լենինականում /Գյումրի/ կիմնադրեց պուրակների, ցայտաղբյուրների մի շարք: Գրիգոր Յասրաթյանը գալու էր Երևան, որ այս-

տեղ էլ ծեռնարկեր նմանօրինակ շինություններ և հավերժանար...

Ի հակադրություն քիմիագործների գյումրեցին «բունտ» չբարձրացրեց: Նախագահի նկատմամբ երախտիքը արտահայտվեց նրանով, որ մի քանի «ծեռք» դիոլ-զուռանյով, մինչև Շիրակի տարածքի ճանապարհի ծայրը Թալինից էլ այն կողմ, յուրաքանչյուր բնակավայրի մոտ ճանապարհին աղ ու հացով, հայկական սեղան գցած, նվազով ու պարով ճանապարհ դրեցին նրան, ինչպես ասում էին, «հայրաքաղաքից» մայրաքաղաք:

Եվ այսպես, Երկու մեծություններ Բադալ Մուրադյանը և Գրիգոր Յասրաթյանը 1962թ. Երևանում հանդիպեցին Երևանի հոգսերը հոգալու և մասնավորապես ապագայում նետրոպոլիտենի գաղափարի իրականացման գործնական քայլեր ծեռնարկելու համար:

Ճիշտ է ասված «Յացքուխը պետք է հաց թխի, կոչկակար կոչիկ կարի»: Մայրաքաղաքի նշված Երկու մեծությունները՝ Երևանի բնակչության հոգսերի և ծգոտումների գիտակները, գիտեին ինչից սկսել և, ինչպես քաղաքի կյանքում, արմատական տեղաշարժ կատարել, Երևանը զարգացած և քաղաքակիր մայրաքաղաք դարձնելու, սպասարկման ոլորտում բեկում մտցնելու ճանապարհով մարդկանց հոգսերը թերևացնելու համար, ինչպես նաև հետմորդներին ապացուելու, որ կյանքի մեջ ճանապարհ անցած մարդիկ կարող են մինյանց հետ հանգործակցված աշխատել, իրենց արժանի հետք բողնել ...

Եվ նրանք բողեցին:

\* \* \*

Առաջին իսկ օրից, օրվա խնդիրներին զուգահեռ, քաղաքի նոր ղեկավարությունը ծեռնարկուխ եղավ մայրաքաղաքի հեռանկարային գարգաման ուսումնասիրությանը և դրանից թխող կոնկրետ միջոցառումների ծեռնարկմանը: Չէ՞ որ 1951թ. Երևան քաղաքի հին գլխավոր հատակագծով նախապատրաստված հողատարածքները վաղուց սպառվել էին. անհրաժեշտ էր նոր հատակագիծ մշակելը: Ահա թե ինչու քաղաքի ղեկավարների ահազանգի հիման վրա հանրապետության կառավարությունը 1962թ. օգոստոսի 29-ին N 408 որոշմանը նոր տարածքներ հատկացրեց Երևանին, իրական հիմք ստեղծելով՝ մայրաքաղաքի նոր հատակագիծ մշակման համար:

Երքաղիստորիոդի գործկոմի նախագահ Գրիգոր Հասրաթյանը, և Երբաղկոնի առաջին քարտուղար Բաղդալ Մուրադյանը ծեռնամուխ եղան կարավարության որոշման կատարմանը՝ «Երևաննախազիծ» ինստիտուտի կողեւկտիվի ուժերով Երևանի նոր հատակագծի ստեղծման աշխատանքներին:

2. Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ, իրոք, մայրաքաղաքի նոր հատակագծի ծեռնարկումը կենսական անհրաժեշտություն էր: Այդ են վկայում ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հաշվողական կենտրոնի հետազոտման արդյունքները: Ըստ որի մայրաքաղաքին հատկացված /1951թ./ տարածքների արագ իրացումը պայմանավորված էր Երևանում տարբեր պրոֆիլի արդյունաբերական ծեռնարկությունների զարգացումով, որը բերելու էր բնակչության մեծ աճ: Այսպես երե 1939թ. մայրաքաղաքի բնակչության թիվը կազմում էր 200 հազար մարդ, ապա 1959թ. այն կազմեց 508 հազար փաստացի այն աճեց Երևան և կես անգամ: Դինամիկ զարգացման հաշվարկները ցույց տվեցին, որ հեռանկարում՝ 1980թ. Երևանի բնակչության թիվը հասնելու է 900 հազար մարդու: Դրանից ելենով նոր հատակագծով նախատեսվեց բնակելի շենքերի համար հողահատկացում կատարել հարավարևմտյան /Շահումյանի շրջան/ և հյուսիս-արևմտյան /Ավան, Նոր-Նորք/ ուղղություններով, որոնք միկրոկլիմայի տեսակետից ավելի բարենպաստ էին:

Քաղաքի ծայրանասային տարածքների իրացումը, մասսայական շինարարության իրականացումը միաժամանակ բերում էր հասարակական տրանսպորտից /տրամվայ, տրոլեյբուս, ավտորուս/ օգտվելու, տրանսպորտային տեղափոխումների նորմավորված ժամանակի ավելացմանը /մարդկանց ժամանակի կորուսի/: Ահա թե ինչու Երևանի գլխավոր հատակագծի հիմնական բաժինների՝ քաղաքի ճարտարապետական հատակագծի իրականացման, բնակելի շենքերի շինարարության, արտադրական տարածքների կազմակերպման, կանչալապատման և ոռոգման, կուլտուր-կենցաղային, մշակույթի և այլ բնագավառների հարցերի լուծման հետ միասին, նոր հատակագծով առանձնահատուկ ուշադրության արժանացավ հասարակական տրանսպորտի զարգացման հարցը: Զատակագծի ուղևորատրանսպորտի կոմպլեքսային զարգացման սինեմայի աշխատանքներին ծեռնամուխ եղան «Երևան-

նախազիծ» ինստիտուտի ճարտարապետական հատակագծման արվեստանոցի աշխատակիցները, ղեկավարն էր ճարտարապետ Է.Ա. Պապյանը, տրանսպորտի բաժնի հեղինակներն էին ինժեներներ Վ.Վ. Վարդանյանը, Ռ.Ն. Զարգարյանը, աշխատանքին մասնակցեցին նաև ինժեներ Ռ.Գ. Գեղամյանը և ճարտարապետ Ֆ.Ա. Մարկոսյանը:

3. ✓ ճարտարապետների և ինժեներների խորհ ու բազմակողմանի ուսումնասիրությունները հանգեցրին այն մտքին, որ մարդկանց տրանսպորտային երթևեկության ժամանակի կորուստները կրծատելու համար նպատակահարմար է ունենալ արագընթաց գծային տրանսպորտ տեղափոխման մեծ թղունակությամբ: Այդ իսկ պատճառով նպատակահարմար գտնվեց և հատակագծում նախատեսվեց հասարակական տրանսպորտի սպասարկման երեք ծև, որից մեկը մետրոպոլիտենն էր: Ըստ նախազիծ մետրոպոլիտենի գծի անցկացումը բաղկացած էր օդակածեւ և տրամգծային գծերից: Օդակածեւ գիծն ընդգրկում էր քաղաքի հարավային, կենտրոնական, հյուսիսային և արևմտյան մասը: Տրամգծային գիծը նախատեսվել էր հարավ-արևմտությից դեպի հյուսիսարևելք անցնելով քաղաքի կենտրոնական մասով: Յատելով օդակածենի ստեղծվում էր Երևան կայարաններից փոխադրման հնարավորություն: Ըստ սինեմայի մետրոպոլիտենի գծերի Երևանունը կազմելու էր 37կմ, 23 կայարաններով:

4. 1962-1964թ. մշակված Երևանի նոր հատակագծի համաձայն մետրոպոլիտենի միջոցով ազգաբնակչության տրանսպորտային սպասարկումն ամենաարդյունավետն էր, և այն բավարարում էր մայրաքաղաքի զարգացման հեռանկարին:

Մնում էր նրա հիմնարար լուծումը միութենական կառավարությունում և ոչ պակաս կարևոր նախագծային կազմակերպության կողմից տեխնիկա-տնտեսական հիմնավորումը և նախագծային աշխատանքների ծեռնարկումը, որից գուրկ էր հանրապետությունը:

Ելք գտնվեց...

Ահա թե ինչ է գրում իր հիշողություններում Գրիգոր Հասրաթյանը.

«...Անսպասելիորեն ինձ այցի եկավ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, անվանի Երևանաբան Գեորգի Ստեփանյանն ու հայտնեց, որ Թբիլիսի քաղաքի մետրոյի նախազիծ հեղինակը՝ Ղանդրովը ազգանունով հայ ինժեներ է ու ին մտերիմ բարեկամը, և նա պատրա-

տուկամ է Երևանի համար մետրո նախագծելու: Ես մեկնեցի Թբիլիսի և հանդիպեցի ինժեներ Վլադիմիր Դանդուրովին: Մանրամասը խորհրդակցելուց հետո նա համաձայնվեց նախագծել պայմանով, եթե լինի միութենական տրանսպորտի շինարարության նախարարի կամ նրա առաջին տեղակալի կարգադրությունը ... »<sup>1</sup>:

Իսկ ո՞վ էր Դանդուրովը.

Դիլիջանում ծնված Վլադիմիր Կոնստանտինի Դանդուրովի վրա հսկայական էր նրա հորեղբոր՝ Մեսրոպ Դանդուրովի ազդեցությունը: Դոկտոր-պրոֆեսոր Մեսրոպ Դանդուրովը Թիֆլիսի Երևառության տրանսպորտի ինժեներների ինստիտուտի (ԹԲԵՏԻ) ամբիոնի վարչէն էր: Երկրի բոլոր նշանակալի թունելները կառուցվել են նրա անդիջական մասնակցությամբ: Գիտականի հեղինակային կարծիքը գնահատում էին և արտասահմանում: Նա պիտի ներգրավվեր Լա-Մանշի տակ թունելի կառուցման հանձնաժողովի կազմում, եթե չլիներ անժամանակ մահը...

Զարմանալի չէր, որ Վլադիմիրն էլ տարվեց թունելներով և ընդունվեց ԹԲԵՏԻ-ն, որն ավարտեց պատերազմը վերջանալուց մեկ տարի առաջ: Նա ֆակուլտետի միակ Ստալինյան թոշակարուն էր, չնայած հայրը 1937թ. բռնարարի էր Ենթարկվել:

Աշխատանքն սկսեց Յուսիսկովկասյան մերձճակատային արշավախմբում, որտեղ Երիտասարդ ինժեները զբաղվում էր նախագծային և պատերազմի ժամանակ ավերված կամուրջների և թունելների վերականգնման աշխատանքներով, որը լավ պրակտիկա եղավ նրա համար: Ապա հաջորդեց Երկար տարիների աշխատանքը «Կովտրանսնախագծում»: Դեռևս իր գործունեության ամենասկզբում Վլադիմիր Դանդուրովը դեկավարել է «Պուշկինի Լեռնանցքի թունելի», ապա և Հայաստանի այլ խոշոր կառույցների նախագծման աշխատանքները: Երկարուղիների, այդ թվում և թունելների կառուցման ինստիտուտի հսկայական փորձը Թբիլիսիի մետրոպոլիտենի նախագծման համար լավ հիմք ծառայեց: Ինժեներական ֆայլուն հատկությունների, բարձր աշխատունակության շնորհիվ, Վլադիմիր Կոնստանտինովիշը նշանակվում է գլխավոր մասնագետ, այնուհետև մետրոյի և թունելի նոր կոմպ-

1. «Կոմունիստ», 1999 թ. 916 ապրիլի, N13 (268), «Ինչպես է կառուցվել Երևանյան մետրոն»:

լեքսային բաժնի պետ: Դանդուրովը ոչ միայն նախագծի կազմակերպիչ էր, այլ նաև նախագծի գլխավոր ինժեները, ասել է թե՝ հեղինակը:

Նա էր սկսում և ավարտում նախագիծը, նա էր կրում հուսալի կոնստրուկցիաների ստեղծման և լավագույն լուծումներ գտնելու հսկայական պատասխանատվությունը. նրա հարուստ գիտելիքները եական դեր էին կատարում նախագծում գիտության և տեխնիկայի առաջավոր նվաճումներն ընդգրկելու հարցում: «Թբիլիսիի մետրոն» գրքում գրված է, «...Փառք այն կոլեկտիվին, որը դեկավարեց նախագծի գլխավոր ինժեներ Վլադիմիր Կոնստանտինի Դանդուրովը...»<sup>1</sup>: Յեղինակություն, որի անունը գիտեր ողջ խորհրդային երկիրը...

\* \* \*

Մայրաքաղաքի նոր դեկավարությունը ծեռնամուխ եղավ բոլոր ուղղություններով Երևանի կյանքի համաչափ զարգացմանը: 1960-ականի առաջին տարիներին ժողունակացնելու ստեղծումը նոր թափ հաղորդեց մայրաքաղաքի արդյունաբերության զարգացմանը, դրա կառուցվածքում տեղի ունեցան արմատական որակական տեղաշարժեր. արագ տեմպերով զարգացան հատկապես գիտատեխնիկական առաջընթացն ապահովող ճյուղերը սարքաշինությունը, ուղղութեկտրոնիկան: Բնակչության բուն աճին զուգընթաց մեծ թափ ստացավ պետական, ապա նաև կոռպերատիվ բնակարանային շինարարությունը: Յիմնվեցին ընակելի խոշոր զանգվածներ (Արարկիր, Աջափնյակ, Զեյթուն, հետագայում Նոր-Նորը, Ավան, Դարավարևմտյան, Արարատյան), ծավալվեցին Կենտրոնի վերակառուցման և խարխուլ բնակելի ֆոնդերի վերացման աշխատանքները: Շարք մտած գիտահետազոտական և նախագծային կազմակերպություններ, մշակութային լուսավորչական հիմնարկներ և այլն:

Երևանում կատարված բոլոր բարեփոխումներին զուգահեռ առաջնահերթ ուշադրություն էր դարձվում հատկապես քաղաքային տրանսպորտի զարգացման վրա:

Մայրաքաղաքում 1965 թվականին 1960 թվականի համեմատ Երթուղային գծերի ընդհանուր Երկարությունն ավելացավ 1/5-2 անգամ, տրանսպորտի զարգացման վրա:

1. «Тбилисское метро» – Изд. «Мерани» Тбилиси 1968г. с. 38

Շահագործման հանձնվեցին նոր ավտոկայան, տրամվայի պարկ, մարդատար տաքսամոտորային ծեռնարկություն, երկու ավտորուսային պարկ: Տրանսպորտային ծեռնարկությունները հանալրվեցին նոր շարժակազմով: Բավական է ասել, որ 1967թ. հունվարի 1-ի դրությամբ Երևանում ավտորուսների թիվն ավելացավ 4 անգամ, տրոլեյբուսների՝ նը 2 անգամ, տրամվայինը 1.5 անգամ: Եթափայում 1975 թվականին, 1970-ի համեմատ տրոլեյբուսների գծի երկարությունը ուղղակի փոխադրումն ավելացավ շուրջ երկու անգամ: Ինչ խոսք, ծեռնարկված միջոցառումներն իրենց դրական արդյունքն ունեցան: Սակայն քաղաքի տրանսպորտային սպասարկություն հիմնական հատվածում կենտրոնում, գրեթե մնում էր լարված: Գործնական այլ քայլեր ևս ծեռնարկվեցին: «Պիկ» մամերին երթևեկությունը կարգավորելու համար մշակվեցին և գործողության մեջ դրվեցին ուսումնական հաստատությունների, դպրոցների և այլ հիմնարկ ծեռնարկությունների աշխատանքային գրաֆիկը: «Սահուն գրաֆիկ» հատկապես աշխատանքային օրվա սկզբի մեկ ժամվա հատվածում մարդկային հոսքը տրանսպորտի միջոցով «բեռնաբափելու» նպատակով: Յուրաքանչյուր տարի նման միջոցառում գործողության մեջ էր դրվում հատկապես ուսումնական տարվա նախօրյակին: 1967թ. հունիսից վերանայվեց Երևանի տրոլեյբուսների, ավտորուսների, բոլոր կանգառների տեղաբաշխումը մինհմումի հասցվեցին երկար երթուղիները, տարբեր շրջանների, բաղանամերի միջև սկսեցին գործել էքսպրես ավտորուսներ, միկրոավտորուսներ և այլն:

Մայրաքաղաքի կյանքի առաջընթացի գիտակ դեկավարները բավականին հեռատես էին: Գտնում էին, որ ծեռք բերած հաջողությունները ժամանակավոր բնույթ են կրում, դրանցով հանգստանալ չի կարելի: Դամոզված էին, որ մայրաքաղաքի տնտեսության աճը, քաղաքաշինությունը փակուղու առաջ կկանգնեն, եթե Երևանի տրանսպորտային սպասարկման բարելավման համար արմատական միջոցներ չծեռնարկվեն: Մտավախությունն անտեղի չէր, և ահա թե ինչու:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիսարևելյան մասում, ամֆիբատրոնաձև և հյուսիսից հարավ իջնող Երևանյան գոգավորության վրա: Ուելյեֆի համար բնորոշ են կտրտվածությունը և ծերերի բազմազանությունը: Բարձրությունը ծովի մակերևույթից

տատանվում է 865-1450-ի միջև: Տարածքը ավելի քան 230 կմ է, հատակագիծը անկանոն, ուղղանկյուն տեսքով, առավելագույն երկարությունը հյուսիսով 16, լայնությունը՝ 14կմ (թվական տվյալները բերվում են 1970թ. Վիճակագրությանը): Երևանը տարածված է Արարատյան դաշտում և նախալեռնային դարավանդների վրա: Մակերևույթը հարթությունների, իրաբխային դարավանդների, բլուրների, ներ ու խորը հովիտների և կիրճերի մի բարդ համակցություն է: Երևանյան գոգահովիտը արդյունք է տևական, երկրաբանական պրոցեսների, ժամանակակից լանդշաֆտները ծևավորվել են չորրդական ժամանակաշրջանում հրաբխային և տնտեսական գործունեության հետևանքով: Երկրակեղեկի ակտիվ գործունեության արդյունքն են հաճախ դիտվող երկրաշարժերը, այդ նպատակով քաղաքում կատարվում է սեյսմակայուն շինարարություն (7-8 բալի հաշվով):

Բարդ ուելյեֆը և բազմազան լանդշաֆտները նպաստում են ճարտարապետական ինքնատիպ համալիրների ստեղծմանը, քաղաքի համայնապատկերի գեղագիտական արտահայտչականությանը և միաժամանակ դժվարացնում են քաղաքաշինական աշխատանքները:

Երևանի աշխարհագրական դիրքի հակիրծ նկարագրությունից պարզ երևում է, որ նրա բնատուր գեղեցկության հետ մեկտեղ կան նաև քաղաքաշինության որոշ խնդիրների լուծման հետ կապված բարդություններ: Պարզ երևում է, որ երկրաբանական առկա վիճակը նոր փողոցներ, մայրուղիներ բացելու համար ոչ միայն կպահանջնեն ֆինանսական մեծ ներդրումներ, այլ շատ դեպքում դրանց կառուցումը կլինի անհնարին:

1960-70 թթ. մայրաքաղաքի համար ամենահրատապ հարցը մարդատար տրանսպորտի շուտափույթ կարգավորումն էր: Բանն այն է, որ քաղաքի գաղաքացին ընդունել էր այնպիսի ընթացք, եթե հիմնական բնակելի թաղամասերը կենտրոնացնել էին հյուսիսում և հյուսիս-արևելքում, իսկ արդյունաբերությունը՝ հարավում: Ստացվում էր մի վիճակ, եթե ամեն օր առավոտյան 1-2 ժամվա ընթացքում միաժամանակ պետք է միայն հյուսիսից հարավ տեղափոխվելին 80-100 հազ մարդ, իսկ երեկոյան հետ բերվելու: Դարձի լուծման բարդությունը պայմանավերված էր ոչ թե տրանսպորտի սակավությամբ (ինչպես նկատվեց այդ հարցը

լուծվում էր), այլ հյուսիսից հարավ ձգվող մայրուղիների անբավարությամբ և դրանց քանակի ավելացման անհնարինությամբ: Փաստուն, միակ մայրուղին Կոմիտաս-Բաղրամյան, գերբեռված էր:

Արդյոք հնարավո՞ր էր Կոմիտաս-Բաղրամյան փողոցին զուգահեռ նոր փողոց կառուցել: Այդպիսին կարող էր լինել Սարալանջային փողոցը Կիրովի (Կորյունի) փողոցի շարունակությունը Մատենադարանի ստորոտից թունելով (մոտ 800մ), իետո կամուրջով (Օրբեց ձորի վրայով) մինչև Վ.Վաղարշյան փողոցը, ապա շարունակվեր Դավիթաշենի կամուրջով դեպի Աջափնյակ: Իհարկե, այս տարբերակը շատ ու շատ բարդությունների հետ էր կապված, այդ պատճառով էլ նպատակահարմար չէր: Բացի այդ, եթե սա համարվեր հարցի լուծում, հնարավոր չէր այլև Երևանի հետագա զարգացման ողջ ծրագրերի համապատասխան ուղևորատրանսպորտի նոր ծևի մետրոպոլիտենի միջոցով նոր թաղամասերի, նոր զանգվածների միջև անհրաժեշտ կապի ապահովումը, որի բացակայությունը կխոչընդոտեր հիշյալ լուրջ խնդիրների իրականացմանը:

Ակնհայտ է, որ աշխարհի խոշոր քաղաքներում, որոնք ունեն պատմականութեն կազմակերպված պլանավորում, ստորգետնյա երթուղիներ համարվող մետրոպոլիտենները թույլ էին տալիս լուծել ուղևորների փոխադրման պրոբլեմը չխարթաբելով փողոցային տրանսպորտի աշխատանքային պայմանները: Բացի այդ, քաղաքի զարգացման գործում մետրոպոլիտենը հատուկ դեր է խաղում: Այն ընդլայնում է քաղաքի սահմանները և, միաժամանակ, ստեղծում բարենպաստ պայմաններ հեռավոր շրջանների զարգացման համար, որոնք մոտիկ անցյալում արրանյակների դեր էին կատարում վերածելով դրանք քաղաքի կենտրոնական մասի հետ օրգանական ամբողջության: Հետևաբար, Երևանի բնական դժվարությունները և քաղաքի հեռանկարային զարգացումը թելադրում էին քաղաքի դեկավարությանը, որ մայրաքաղաքի ուղևորատրանսպորտի արմատական լուծնան միակ ելքը մետրոյի շինարարության զաղափարի իրականացումն էր: Որը թվում էր անհուսալի ...

Իրոք, անհուսալի էր: Արդարամիտ լինելու համար պետք է ասել, որ ամենից դժվարը դեկավարության համար եղել են զաղափարի հիմնավորման և կառուցման թույլտվություն ստանալու աշխատանքները և

1971թ., երբ ստացվեց ստորգետնյա արագընթաց տրամվայի շինարարության թույլտվությունը, և 1977թ., երբ համաձայնություն տրվեց ստորգետնյա Էլեկտրատրանսպորտի շինարարությունը վերափոխել մետրոպոլիտենի շինարարության: Երկրորդ դժվար փուլ կարելի է համարել շինարարական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը:

...1950-ական թվականների վերջերից Թբիլիսիում մեծ թափ էր ստանում մետրոպոլիտենի շինարարությունը և աստիճանաբար մեծ համբավ էր ծեղու թերում մետրոյի նախագծի հեղինակ, հայորդի Վլադիմիր Կոնստանդինի Դանդուրովը: Երևանում ապագա մետրոյի շինարարության գաղափարի հեղինակը սերտ և գործնական կապի մեջ է մտնում Վլադիմիր Դանդուրովի հետ: Ակսած 1964 թ-ից Վ. Կ. Դանդուրովը գալիս է Երևան և միշտ առաջին հերթին հանդիպում Գրիգոր Յասրաբյանի, ապա կուսակցության քաղաքային կոմիտեի առաջին քարտուղար Բաղրամ Մուրայյանի հետ, Վերջինս ՀՍՍՇ Նախարարների խորհրդի նախագահ նշանակվելուց հետո՝ նորմնտիր առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանի հետ, ինչպես նաև Երազկոնի արդյունաբերության և շինարարության գծով քարտուղար Կարեն Դեմիրճյանի, քաղաքործկոնի նախագահի տեղակալ Արամ Արամյանի հետ:

1966 թ. հունվարին շահագործման է հանճնվում Թբիլիսիի մետրոպոլիտենի առաջին հերթը: 1968թ. «Մերանի» իրատարակության կողմից լույս է ընծայվում «Թբիլիսիի մետրոն» գիրքը: Վլադիմիր Դանդուրովը գրքի մասին Արամ Արամյանին ուղղված նամակում գրում է.

«... Այն մեծ հետաքրքրություն կներկայացնի Ձեզ մոտ ահռելի շինարարության իրականացման ժամանակ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ...»: Միաժամանակ խորին շնորհակալություն է հայտնում հանդիպումների ժամանակ մշտական ուշադրություն ցույց տալու համար:

Ուշագրավ է Գրիգոր Յասրաբյանի հետևյալ հիշողությունը.

«Երևանում մետրո ունենալու անհրական միտքը զարմանալիորեն արագ հասունացավ և միանգամայն հնարավոր թվաց Թբիլիսի քաղաքի մետրոյի առաջին հերթի շահագործման հանդիսավոր արարողության ժամանակ (1966թ. հունվար), որին մասնակցելու էի մեկնել որպես Երևանի պատվիրակության դեկավար:»

Երբ ականատես եղա այդ շքեղ տոնահանդեսին, ինձ մոտ վերջնականացես կայունացավ այն հավատը, որ Երևանում նույնպես կարելի է կառուցել: Գաղափար կար, բայց ինչպես՝ և ինչից սկսել, ի՞նչ անել»<sup>1</sup>:

... Նա Վլադիմիր Դանդուրովից իշխանում է, որ արձակուրդից հետո Թթիլսի է գալու տրանսպորտի շինարարության միութենական նախարարի առաջին տեղակալ Իվան Դմիտրիկիչ Սասնովը /կոնջ հետ/, որը դեկավարում էր մետրոպոլիտենի շինարարության բնագավառը (հետո նա դեկավարեց միութենական նախարարությունը): Դիմում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին (որն արդեն հավանություն էր տվել մետրո կառուցելու գաղափարին) խնդրելով քույլատրել իր անունից ի. Սասնովին հրավիրել Երևան: Սասնովի այցի մասին Վլադիմիր Դանդուրովից հեռախոսագիր ստանալուց հետո զանգահարում է Թթիլսի և Անտոն Քոչինյանի անունից ԽՍՀՄ տրանսպորտային շինարարության նախարարի առաջին տեղակալին հրավիրում է Երևան:

Այս ինչ է հիշում Արամ Արամյանը. («Գոլոս Արմենիա» 2000թ. մարտի 17), 1966թ. գարնանը Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանը կանչում է Արամյանին իր առանձնասենյակ: Այնտեղ էր նաև Գրիգոր Ջասրաբյանը: Ներկայացնելով իմ հյուրերին, հանձնարարում է ծանրացնել քաղաքին և հնարավորության սահմաններում՝ տեսարժան վայրերին: Յշուրեն էին Իվան Սասնովը կոնջ հետ, Վրաստանի նախարարների խորհրդի քարձաստիճան մի պաշտոնյա և «Կավտրանսչինի» կառավարիչ Ա. Շատուրովը:

Մենյակից դուրս գալիս Անտոն Երվանդիչը Ա. Արամյանին հայերեն ասում է. «Նկատի ունեցիր մետրո ունենալու բախտը սրանից է կախված»: Ամեն ինչ հասկանալի էր:

Ամբողջ օրը շրջում են քաղաքում. Ա. Արամյանը պետավտութեսչության աշխատողներին նախապես գգուշացրել էր և նրանք նպատակադրությանը կերպով ավտոմեքենայի երթը ուղղում են բոլոր այն մայրուղիներով, որտեղ երկարուղին հատում էր փողոցները Կոմիտաս, Օքջոնուկիծ, Ազատության, Բարձրի (այժմ Արցախի): Հատման կետում Երկար սպասումների հանգամանքը գրավում է ի. Սասնովի ուշադրությունը:

1. «Դաշտավայրի կոմունիստ» 9-16 ապրիլի 1999թ. «Ինչպես է կառուցել Երևան մետրոն»:

Այս կարմանք պատճառում: Ամբողջ օրը շրջելուց հետո իրիկնամուտին, հյուրերի խնդրանքով լինում են էջմիածնում, որտեղ և նրանք արժանանում են վեհափառի Վազգեն Առաջինի ընդունելությանը, որը արտակարգ լավ տպավորություն է բողոքում նրանց վրա:

Դաջորդ առավոտյան նրանք հրավիրվում են Ա Քոչինյանի մոտ, ի. Սասնովը մերս մտնելուն պես ասում է. «Անտոն Երվանդիկ, որ այս տարբերությունը կամ մետրոպոլիտենի շինարարության բնագավառը (հետո նա դեկավարեց միութենական նախարարությունը): Դիմում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանին (որն արդեն հավանություն էր տվել մետրո կառուցելու գաղափարին) խնդրելով քույլատրել իր անունից ի. Սասնովին հրավիրել Երևան: Սասնովի այցի մասին Վլադիմիր Դանդուրովից հեռախոսագիր ստանալուց հետո զանգահարում է Թթիլսի և Անտոն Քոչինյանի անունից ԽՍՀՄ տրանսպորտային շինարարության նախարարի առաջին տեղակալին հրավիրում է Երևան:

Դաջորդ առավոտյան Երևան են ժամանում «Կավգիպրոտրանսի» տնօրենը, գլխավոր ինժեները և Թթիլսիի մետրոպոլիտենի նախագծի գլխավոր ինժեներ և հեղինակ Վլադիմիր Դանդուրովը: Թթիլսիից եկած պատվիրակներն անմիջապես ուղևորվում են «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետական-հատակագծման արվեստանոց: Ինստիտուտի տնօրեն Գ. Ալբունյանը, արվեստանոցի դեկանագիտ Մ. Մազմանյանը, եղ. Պապյանը և ամբողջ կազմը միանգամից ընդունում են համագործակցությունը և Վլադիմիր Դանդուրովին որպես այդ գործի անառարկելի դեկանագիտի: և լծում են գործի:

Եվ այսպես:

Ներքաղաքային ուղևորատար տրանսպորտի գարգացման կառուցվածքի մշակման համար որպես հիմք ընդունվեց /1962-1964թ./ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի դրույթները քաղաքի արագընթաց ուղևորատար տրանսպորտի կոմպլեքսային գարգացման սխեման ու տեխնիկատնեսական հիմնավորումը /ՏՏՀ-Ը/: 1966-1968թ իրականացվեցին մեծածավալ աշխատանքներ: «Երևաննախագիծ» ինստիտուտի հեղինակային կոլեկտիվը ճարտարապետ Է.Ա. Պապյանի դեկանագիտայմբ ճարտարագետներ Գ.Ա. Հախվերդյանը, Ռ.Գ. Գեղամյանը, Գ.Ս. Մուլզա, Տ. Ավագյանը, Ֆ.Ա. Մարկոսյանը մշակեցին Երևան քաղաքի ուղևորատար տրանսպորտի կոմպլեքսային գարգացման սխեման: Նրանց աշխատանքներին մեծապես նպաստեցին ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի գլխավոր հաշվողական կենտրոնի աշխա-

տակիցներ Ա.Խ. Կարապետյանի, Շ.Ա.Կարանյանի, Ա.Շախպարոնյանի կատարած ուսումնասիրությունները մայրաքաղաքի տրանսպորտային աշխատանքների հետազոտման ուղղությամբ և հեռանկարային ուղղության հաջարկների հաշվարկները: «Կավաբետրանսնախագիծ» ինստիտուտում /ք. Թթիլիսի/ Վ.Ն.Դանդուրովի գլխավորությամբ կատարվեցին Երևան քաղաքի նշված ուղղության ապորտի տեսակի կոմպլեքսային գարգացման տեխնիկատեսական հիմնավորումները և նախագծային աշխատանքներ:

Հիմքում դնելով 1964թ. մշակված Երևանի մետրոպոլիտենի ցանցը առաջարկվեց մետրոպոլիտենի գծերի Երկու տարրերակ:

Առաջին տարրերակը մետրոպոլիտենի գիծը մայրաքաղաքի հարավյան հատվածը կապում էր հյուսիսայինի հետ քաղաքի կենտրոնում Երկու ճյուղավորմամբ ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավյան մասերում:

Հյուսիսային մասում ընդգրկվեց Աջափնյակ և Արաբկիր բնակելի թաղամասերը և Երրորդ մասը: Եյուղավորումը կատարվում էր հյուսիսային մասում «Սասունցի Դավիթ» /Կայարան/ հատվածից: Տանցի ընդհանուր Երկարությունը կազմում էր 21,35 կմ 15 կայարանով: Ընդորում նախատեսվեց առաջին հերթին շինարարության Երկարությունը 13,3 կմ, 10 կայարանով, սկսած «Սուրեն Սպանդարյան հրապարակ» /այժմ՝ «Գարեգին Նժդեհի հրապարակ»/ կայարանից մինչև «Արագած» կայարանը /Աջափնյակ թաղամասում Զամիթելյան և Շիրազի փողոցների խաչմերուկում/:

Երկրորդ տարրերակը մետրոպոլիտենի գիծը կրկնում էր առաջին տարրերակը բացառությամբ հարավյան մասի, որտեղ մետրոպոլիտենի ճյուղավորված գիծը փոխարինվում է մեկ գծով, որը «Կայարան» /«Սասունցի Դավիթ»/ հատվածից ուղղություն էր վերցնում դեպի Նոր Արեշ, ապա թերվում էր դեպի հարավյան արդյունաբերական շրջանը առաջին և երրորդ մասերը մինչև «Սպանդարյան հրապարակ» /«Գարեգին Նժդեհ»/ կայարանը: Երկրորդ տարրերակում մետրոպոլիտենի ընդհանուր ցանցի Երկարությունը 20 կմ էր, իսկ կայարանների թիվը 15: Շինարարության առաջին հերթում նախատեսվեց 12,1 կմ Երկարությամբ, 10-ը կայարաններով «Սպանդարյան հրապարակ» /«Գարեգին Նժդեհի հրապարակ»/ կայարանից մինչև «Բարեկամություն» /«Կիլյան»/

կայարանը:

Երկու տարրերակների վերլուծությունից եկան այն եզրակացության, որ ամենանպատակահարմար Երկրորդն է:

Մոսկվայից հատկապես պահանջում էին քաղաքի կենտրոնից հյուսիս-հարավ Բաղրամյան փողոցին գուգահեռ Երկրորդ Կիրովի /Կորյունի/ փողոցի շարունակությամբ տրանսպորտային նագիստրայի բացման անհրաժեշտության մասին հիմնավորումը, որը պնդում էին նաև կենտրոնից եկած փորձագետները, մետրոյի շինարարությունը մերժելու համար: Դրան հակառակ, մեր նաև գետագետներն ամեն ինչ անում էին ստորգետնյա արագընթացի շինարարության բույլտվություն ատանալու համար: Աշխատանքներն ավարտելուց հետո արդյունքները լայնորեն քննարկվեցին Երբախտրիդի գործկունում և հավանության արժանացան, որից հետո այն քննարկվեց և հաստատվեց ՀՍՍՀ պետշինի կողմից:

Արամ Արամյանին հանձնարարվում է անձանք գրադիւն «անհուսալի» գաղափարի Երևան քաղաքի ապագա մետրոյի մտահղացման կազմակերպչական բոլոր հարցերով և նրա մոտ են կենտրոնանում հետագա տեղեկատվական նյութերը, կոորդինացվում աշխատանքները, մշտական կապ է պահովվում Վաղինի Դանդուրովի հետ, որը ամենակարևորն էր, հաջողությունների հիմքերից հիմքը, մի մարդ, որի նիցողով և դեկավարությամբ Թթիլիսիում հայողությունը մեծ գործ էին ծեռնարկում, կանխագծում Երևանյան մետրոյի ապագան:

Պատահական չեր քաղյուրիդի նախագահի տեղակալին այդ մեծ թերի տակ դնելը: Արամ Արամյանը կյանքի մեծ ճանապարհ էր անցել: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շրջանավարտը, հասարակական ակտիվ աշխատանքները մի կողմ դնելով, որը, ինչպես ասում էին, նրան մեծ ապագա էր խոստանում, ամբողջությամբ նվիրվում է հանրապետության հետաքաղաքյան տարիներին իրականացվող շինարարությանը: 1953թ. «Յիղորէլեկտրոաշխինի» Աքարեկյանի հիղորէլեկտրոաշխականում աշխատել էր, այնուհետև տեղամասի պետ և 1957թ., երբ շինարարությունն ավարտի փուլում էր, անհրաժեշտությունից եւ-նելով նրան տեղափոխում են հանրապետության շինարարության նախարարություն որպես Չարբախի արդյունաբերական հանգույցի շինարարության պետ: Մի քանի կարևորագույն կառույցների ավարտից հե-

տո (այդ թվում էր նաև ժողովրդական տնտեսության ցուցահանդեսի համալիրը) նրան վստահվում է Երևանի քաղխորհրդի գործկոմի կապիտալ շինարարության վարչության պետի պաշտոնը, իսկ 1963թ. շուրջ 10 տարի, աշխատում է Երքաղխորհրդի գործկոմում որպես նախագահի տեղակալ: Այս ժամանակահատվածում էր, որ որպես փորձառու շինարարի նրա վրա դրվեց Հրազդանի մարզական համալիրի շինարարության պատասխանատվությունը: Երևանում մետրոյի շինարարության գաղափարի իրականացման գործում մեծ դեր է խաղում Արամ Արամյանի և Վլատիմիր Դանդուլովի միջև ստեղծված աշխատանքային համագործակցությունը: Նրանցից մեկը՝ փորձառու շինարար, մյուսը մետրոյի հանրահայտ ճարտարապետ, իրենց վճռորոշ խոսքը պետք է ասեին Երևանի ապագա մետրոպոլիտենի ստեղծմանը, նրանք այդ հարցը լայնորեն պետք է քննարկեին «շտաբում» Գրիգոր Շամրաքյանի աշխատասենյակում, ապա նոր կատարվեր հաջորդ քայլը ..

1967թ. մայիսի 3-ին ծնվում է Երևանի մետրոպոլիտենին վերաբերող անդրանիկ որոշումը՝ Հայաստանի կառավարության նախագահ Բաղդա Մուրադյանի ստորագրությամբ. «Երևանի մետրոպոլիտենի շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորման մասին» (ուշադրություն դարձնենք «մետրոպոլիտեն» բառի վրա) ուր հավանություն է տրվում ԽՍՀՄ տրանսպորտային շինարարության նախարարության «Կավճիպոտրանս»-ի կողմից մշակված և Երքաղխորհրդի գործկոմի և ՀՍՏ պետշինի կողմից քննարկված Երևան քաղաքի մետրոպոլիտենի շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորմանը (ՏՏՀ): ՏՏՀ-ին հավանություն է տալիս ԽՍՀՄ պետպալանին կից տրանսպորտային պրոբեմների կոմպլեքսի ուսումնասիրության ինստիտուտը (ԻԿՏՊ), որից հետո փաստաթուղթը ներկայացվում է ՀՍՏ-ի պետպալանի հաստատմանը: 1967թ սկզբին Հայաստանի կառավարության ապագա մետրոյի մասին ընդունած որոշումը մեկ անգամ ևս վկայում է, որ Երկար տարիներ լուրջ աշխատանքներ են տարվել Երևանում մետրոյի շինարարության անհրաժեշտությունը հիմնավորելու համար:

Մինչև ԽՍՀՄ պետպալանի կողմից Հայաստանի կառավարության ներկայացրած ՏՏՀ-ի հաստատման մասին խոսելն ասենք, որ կատարված լայնածավալ և քրտնացան աշխատանքի հետ մեկտեղ Երբեմն անհրաժեշտ է եղել մեծ ծիգեր գործադրել տարբեր տեսակի խոչընդոտ-

ները վերացնելու, մայրաքաղաքում տրանսպորտային սպասարկման իրական պատկերը ներկայացնելու համար, իսկ դրանք միշտ չեն եղել: Դիշենք թեկուզ փոքր թվացող խոչընդոտմերի վերացման օրինակներ, որոնք բնորոշում են նաև մեր ազգին յուրահատուկ երկու գծերի նախագահի դրական լուծմանը:

Ահա թե ինչպես .

Երևան ժամանակ ԽՍՀՄ պետպալանի հատուկ հանձնաժողովի անդամներից (Բորբովսկի, Կորոբով, Կաբանով) տրանսպորտի վարչության գլխավոր մասնագետ Կորոբովը մյուսների համեմատ իր որոշիչ դերն է ունեցել: Անհասկանալի պատճառով նա տրանսպորտած չէր հարցը դրական լուծել: Ըստ նախնական պայմանագրովածության առավոտյան «այիկ» ժամից մինչև ուշ երեկո պետք է ուսումնասիրվեին Երևանի փողոցներում տրանսպորտի ծանրաբեռնվածության վիճակը: Նրանց նպատակն էր ապացուցել Երևանում ստորգետնյա արագընթաց էլեկտրաքարշ կառուցելու անհրաժեշտությունը կամ վնասարերությունը: Նախօրոք քաղաքի պետակուտեսչության պետ, գնդապետ (այսօր գեներալ-մայոր) Սերգեյ Մարտիրոսյանին տեղեկացվում է, թե ինչ ճանապարհներով են ուսումնասիրությունները կատարվելու, և որպեսզի ապացուցվի, թե ապագայում ինչպիսի ծանրաբեռնվածություն կունենան փողոցները, /իհարկե հյուրերից գաղտնի/, պետակուտեսչության աշխատողներին զգուշացվում է մոտակա մեքենաների ուղևորահոսքը ուղղել դեպի իրենց անցնելիք ճանապարհը: Այլ կերպ ասած, ստորգետ փողոցներում և պողոտաներում ստեղծում էր այնպիսի ծանրաբեռնվածություն, որ անգամ տեղիդիր էր տալիս խցանումների:

Ըստ Երևանյան, Կորոբովը կրահում է ինչ-որ բան և ընթացքում փոխել է տալիս ճանապարհի ուղղությունը: Սակայն տարբեր ճանապարհներով ուղեկցող մեքենայում գտնվող Ս. Մարտիրոսյանին զգուշացվում է նոր ուղղության մասին և պետակուտեսչության աշխատակիցների միջոցով նա կարգադրում է մեքենաների ուղղությունը փոխել:

Կորոբովը ընթացքի ժամանակ անհասկանալի ուշադրությամբ նայում է փողոցներում տարբեր նպատակներով աշխատող մարդկանց: Դաջող օրը նրա խնդրանքով լինում են մայրաքաղաքի մի քանի արդյունաբերական ծեռնարկություններում: Զարմացած միշտ նույն հարցն է տալիս ուղեկցողներին. «Մի՞թե ծեզ մոտ այլ ազգի, ասենք

ռուս, աշխատողներ չկան, միայն հայեր են»; Պատասխանը միանշանակ լինում է. «Կան և աշխատում են յուրաքանչյուրն օստ իր կրթության, գրադեցրած պաշտոնի, բոլոր օղակներում»: Նկատում են, որ աստիճանաբար նրա տրամադրությունը փոխվում է, և վերաբերմունքը դառնում բարյացակամ: Երեկոյան ճաշկերույթի ժամանակ, բացվում է գաղտնիքը: Պարզվում է Թթիլիսիում և հատկապես Բաքվում եղած ժամանակ, Կորոբովը նկատել է ճանապարհային երթուղագծերում, նաև արդյունաբերական ծեռնարկություններում և այլուր, որ ժանր ֆիզիկական աշխատանքներում գրադված են այլազգի աշխատողներ, իիմնականում ուսւներ, և շատերը կանայք են: Սկզբում կտրուկ դեմ Կորոբովը, հետագայում մեր հոգսերի լուծման դրական ընթացք տվողներից մեկն էր...

Ինչպես նշվեց, կառավարության 1967թ. մարտի 3-ի որոշման մեջ օգտագործվել է «Երևանի մետրոպոլիտեն» արտահայտությունը: ԻԿՏՊ -ի գլխավոր էքսպերտները, որոնք ցանկություն են ունեցել ընդարձել Երևանում տրանսպորտի կարգավորման հեռանկարային ծրագրերին, կտրուկ հրաժարվել են «Մետրո» բարից: Բանն այն է, որ Երկրում նոր մետրոպոլիտենի շինարարության հրականացումը խիստ սահմանափակ էր, այս հզոր կառույցի հնարավորություններից դուրս կիրակ մնացել Երկրում մեկ միլիոն բնակչություն ունեցող շատ քաղաքներ, մինչդեռ Երևանի ազգարնակչության նոտավոր թիվը 750 հազար էր: Այդ էր պատճառը, որ ԻԿՏՊ-ի բոլոր փաստաթղթերով այն արձանագրվում էր որպես արագընթաց տրամվայ: Էքսպերտ խնդիր դեկապար տեխնիկական գիտությունների դրկոտը 4. Սկզբով գտնում է ելքը, առաջարկում է վերջնական անվանումը «Տրամվայի գծերի վերակառուցման և քաղաքի կենտրոնով թունելային անցմանը արագընթաց տրանսպորտային գծի կառուցում» և այդպիս էլ ներկայացվում է ԽՍՀՄ պետպալանի:

1968թ. օգոստոսի 29-ին N 36 գրությամբ ՀՍՍՀ Նախարարների

խորհրդի նախագահ Բաղալ Մուրադյանը դիմում է ԽՍՀՄ պետպալանին քննարկեու Յայաստանի կառավարության կողմից ներկայացված Երևան քաղաքում արագընթաց տրանսպորտի տեխնիկատնտեսական հիմնավորությը և տալու համապատասխան ընթացք:

1969թ. մարտի 14-ին ԽՍՀՄ պետպալանի դեկապարությունը, պատասխանելով Յայաստանի կառավարության նախագահի գրությանը (N BU-183/48-139), նշում է Երևան քաղաքի ուղևորային տրանսպորտի առկա վիճակը. տեղ գտած թերություններն ու բացքողումները, արժեքավոր առաջարկություններ անում վիճակը բարելավելու համար: Միաժամանակ հաշվի առնելով Երևանի տեղանքի բարդ ռելիյեֆը, Քրագաղան և Գետառ գետերի խորը կիրճներով քաղաքի մասնատումը, կառուցվող մասսայական բնակելի շրջանների տեղադրություն ունեցող արդյունաբերական շրջաններից գգալի հեռավորության վրա, նաև անհրաժեշտությունը բոլոր տեսակի տրանսպորտային հոսքերի բացքողումը քաղաքի նշակութային, վարչական և առևտութական կենտրոններով, ԽՍՀՄ պետպալանը, հնարավոր է համարում Երևան քաղաքի զարգացման ընդհանուր հատակագծում հեռանկարում նախատեսել ստորգետնյա արագընթաց ռելիսային տրանսպորտի շինարարությունը: Յաշվարկային ժամկետների շրջանակներում նպատակահարնար է քաղաքի կենտրոնական մասում իրականացնել թունելի շինարարություն (մետրոպոլիտենի թունելների տրամագծին հավասար) մոտ 4 կմ Երկարությամբ, դրանց միջոցով արագընթաց տրամվայի գնացքների թողարկման համար, որոնք վերջնահատվածներում երկու ծայրերում, միանալով վերգետնյա տրամվայի գծերին, անցնելու էին Կոմիտասի, Կիևյան, Բարեկամության փողոցներով և Օղջոնիկիծի պղղոտայով:

Դիմք ընդունելով վերոհիշյալ գրությունը (N BI-183/48 14 մարտի 1969 թ.) ՀՍՍՀ Նախարարների խորհրդադին իր կարգադրությամբ (N 836 26.09.1969 թ.) հանձնարարեց մասնագիտական կազմակերպություններին սկսել Երևան քաղաքի կենտրոնական մասում արագընթաց տրամվայի համար թունելների նախագծման աշխատանքները, այդ բվում:

Երբաղյա՞լի գործկոնին «Կավգիպրոտրանս» նախագծային ինստիտուտին տալ տեխնիկական առաջարկանք մետրոպոլիտենի գարարիտներով արագընթաց

տրանսպորտի 4 կմ երկարության թունելների նախագծման համար:

-«Երևաննախագիծ» ինստիտուտին ստորգետնյա և վերգետնյա տրանսպորտային կառույցների, ինչպես նաև արագընթաց տրանսպորտի համար թունելների հետ կապված տրամվայի ցանցի վերակառուցման նախագծման նպատակով կազմակերպել մասնագիտական արվեստանոց:

-Երկրաբանության վարչությանը և «Դաշիդրոնախագիծ» ինստիտուտին վերգետնյա արագընթաց տրանսպորտի ուղեգծով իրականացնել երկրաբանական և հիդրոերկրաբանական հետազոտություններ:

Այդ կապակցությանը «Երևաննախագիծ» ինստիտուտում ստեղծվեց N8 մասնագիտացված համալիր արվեստանոց (ղեկավար՝ Ա.Ֆ. Աղայան), որը պետք է իրականացներ համապատասխան նախագիծ, ապահովեր ենթակապալառուների կողմից կատարվող բոլոր աշխատանքների կոռորդինացումը և հավաքեր ամբողջ նախագծային նյութերը որպես մեկ ամբողջություն:

Ստեղծված արվեստանոցում սկսվեց «Արագընաց տրանսպորտի համար տրամվայի ցանցի վերակառուցման Երևան քաղաքի կենտրոնում տրամվայի գնացքները թունելներով անցնելու» տեխնիկական նախագիծ» մշակումը (հեղինակային խումբ՝ ճարտարապետ Ա.Ֆ. Աղայան, ինժեներներ Ռ.Գ. Գեղամյան, Է.Ա. Ստեփանով):

4կմ թունելային հատվածի նախագծումը կատարվեց Թբիլիսիի «Կավկազի արդյունաբանություն» ինստիտուտում (ինժեներ Վ.Կ. Դանդուրով), իսկ նախասրահների ու կառամատույցների ճարտարապետական ծևավորումների նախագծումը «Երևաննախագիծ» ինստիտուտում: Բացի դրանց, «Երևաննախագիծ» ինստիտուտի «ինժեներական կոնսորտիումի» բաժնում (պետ Վ.Զիտեցյան) սկսվեցին նախատեսված նախասրահների տարածքներից ինժեներական կոմունիկացիաների տեղափոխման նախագծային աշխատանքները:

Այսպիսով՝ «Երևաննախագիծ» ինստիտուտի ողջ կոլեկտիվը սկսեց նպատակամներ աշխատանքներ իրականացնել կոմպլեքս հանձնարարությունները կարծ ժամանակում կատարելու համար: Այս հարցում

իր անգնահատելի դերն ունեցավ ինստիտուտի տնօրեն Պարույր Բադյալյանը:

Նախագծի մշակումն ավարտվեց 1970 թվականին: Կուսակցական և գործադիր վերադաս մարմնների կողմից հավանություն ստանալուց հետո ստեղծվեց համապատասխան ինֆրաստրուկտուրա՝ նախագծային և փաստաթղթերի կատարման և շինարարության կազմակերպման նպատակով:

Այդ ժամանակ, չնայած, որ ԽՍՀՄ պետականի և պետշինի դիրեկտիվ փաստաթղթերում նշվում էր, որ արագընթաց տրամվայը Երևանում կարող է լինել մետրոպոլիտենի համար որպես տրանսպորտի անցումային ծև, նախագծողները հասկանում էին, որ 4 կմ թունելային հատվածի կառուցումը, որը պետք է դուրս գար գետնի երես և կապվեր վերգետնյա ռելսավոր տրամվայի գծի հետ, հեռանկարում չի լուծում ապագայում միլիոնից ավելի բնակչության տրանսպորտային հիմնախնդիրները և բերում է անուղղելի քաղաքաշինական սխալի, որը հետագայում անհնար կլիներ ուղղել և քաղաքը, փաստորեն, կգրկվեր ապագայում և արտափողոցային ճյուղավորված արագընթաց ուղևորատրանսպորտ մետրոպոլիտեն ունենալու հնարավորությունից:

Հետևաբար անհրաժեշտ էր ժամանակակից մեթոդներով, հենվելով գոյություն ունեցող վիճակի խորը ուսումնասիրությունների արդյունքների վրա, մշակել նոր նախագիծ «Քաղաքային ուղևորատրանսպորտի բոլոր տեսակների զարգացման կոմպլեքս սխեմա» (ՏԿՍ), որտեղ պետք է հիմնավորվեր Երևանում մետրոպոլիտենի ճյուղավորված ցանցի ստեղծումը: (Այդ գլորալ խնդրի լուծումը հանձնարարվեց «Երևաննախագիծ» ինստիտուտին, որը 1976 թվականին ՀՍՍՀ պետական հաշվողական կենտրոնի հետ համատեղ ծեռնամուխ Եղան նշված նախագծի մշակմանը, և 1980 թ. ավարտվեց այն: Նախագծային աշխատանքների կազմակերպման գործում մեծ եղավ ինստիտուտի տնօրեն (1977-1982 թթ.) Սպարտակ Խաչատրյանի դերը: Յիշենք, որ արդեն 1976 թվականին Յկկ Կենտկոմի առաջին քաղտուղարն էր Կարեն Դեմիրճյանը...):

... ԻԿՏՊ-ի կողմից 1970 թ. դեկտեմբերին, խորությամբ ուսումնասիրելով հարցերը տրվում է քաղաքի կենտրոնով արագընթաց տրանսպորտի թունելներով անցնող, տեխնիկական նախագծի եղակացու-

թյունը: Յակիրծ խոսենք այստեղ թերված մի քանի կարևոր եզրահանգումների մասին:

Տեխնիկական նախագծի առաջին մասը ընդգրկում էր մոտակա տարիներին իրականացվող անհրաժեշտ միջոցառումները, որոնք ուղղված էին քաղաքային ուղևորատրանսպորտի համակարգում տեղ գտած թերությունների վերացմանը և աշխատանքների հետագա բարելավմանը: Տեխնիկական նախագծի երկրորդ մասում քննարկվում էին թունելների շինարարության հարցերը «Լենինի հրապարակ» /այժմ «Յանրապետության հրապարակ»/ կայարանից մինչև «Քարեկանություն» կայարանը: Միաժամանակ նշվում էր, որ տեխնիկական նախագծում առաջարկվող հիմնական որոշումները համապատասխանում են «Երևանի քաղաքային ուղևորատրանսպորտի գարգացման կոմպլեքսային սխեմայի և արագընթաց տրանսպորտի տեխնիկատնտեսական երաշխավորման հիմնավորմանը», ու ԽՍՀՄ պետական 1969թ. մարտի 14-ի նամակում շարադրված առաջարկությունների ուղղությամբ առարկումներ չկան:

1971թ. օգոստոսի 14-ին ընդունվում է ԽՍՀՄ նախարարների խորհրդի N 484 որոշումը «Ք. Երևանում տրամվայի գծերի վերակառուցման և քաղաքի կենտրոնով թունելային անցնամք արագընթաց տրանսպորտային գծի կառուցման տեխնիկական նախագծի հաստատման մասին»: Որոշմամբ հաստատվում է Երևանի քաղաքային խորհրդի գործկունի կողմից ներկայացված, ԽՍՀՄ պետական կողմից հավանության արժանացած Երևան քաղաքի տրամվայի գծերի վերակառուցման ու քաղաքի կենտրոնով թունելային անցնամք արագընթաց տրանսպորտային գծի կառուցման տեխնիկական նախագիծը, որի վերգետնյա մասը կատարել է «Երևաննախագիծ» ինստիտուտը, իսկ ստորգետնյա մասը «Կավգիպրոտրանս» ինստիտուտը: Ծինարարության նախահաշվարկային արժեքը կազմում էր 50,96 մլն ռուբլի: Միաժամանակ հանձնարարվում է Երքաղխորհրդի գործկունին և նախագծային ինստիտուտներին, աշխատանքային գծագրերի ժամանակ հաշվի առնել ԽՍՀՄ պետականի 1971թ. մայիսի 3-ին և ճամապարհային շինարարության նախարարության 1971թ. հունվարի 9-ին արված առաջարկությունները:

Երևանում մետրո կառուցելու գաղափարից մինչև ստորգետնյա

արագընթաց տրամվայի թույլտվություն տալը կառուցման անհրաժեշտության հիմնավորման և տեխնիկական նախագծի պատրաստման ողջ ժամանակահատվածը (չնայած մեծ դժվարությունների), հաջողությամբ ավարտվեց: Կիևան փողոցի և Մարշալ Բաղրամյան պողոտայի խաչմերուկից մինչև Լենինի հրապարակ /Շանրապետության հրապարակ/ երկու միջանկյալ կայարաններով ստորգետնյա էլեկտրատրանսպորտի տեխնիկական նախագիծը հաստատվեց Միության վերադաս կազմակերպությունների կողմից:

Սկսվեց երկրորդ վճռական փուլը: Անհրաժեշտ էր արագորեն ծեռնամուխ լինել արագընթաց տրամվայի բանվորական գծագրերի նախագծմանը տեղում Երևանում և ամենօրյա հեղինակային հսկողության իրականացմանը շինարարությունում: Յանրապետության ղեկավարությունը բարացիրեն կանաչ ճանապարհ էր բացել նախագծողների համար: Նախ ԽՍՀՄ տրանսպորտային շինարարության նախարարության 1971թ. հուլիսի 15-ի N 176 հրամանով, հիմք ընդունելով «Սոյուզգանշին» ինստիտուտի մասնաճյուղը, Երևանում հիմնվեց «Յայպետուրանսախագիծ» ինստիտուտը, և օգոստոսին տնօրեն նշանակվեց Վլադիմիր Կոնստանտինի Դանողուրովը: Վերին Զեյթունի 10-րդ փողոցի վրա (այժմ Դավիթ Անհաղթի փողոց) գրեթե ամբողջությամբ ավարտված «Յայտղարդնախագիծ» ինստիտուտի համար նախատեսված վեցհարկանի շուրջ 9000 քանակ գրադանող հզոր մասնաշենքի ավելի քան մեկ երրորդ տրվեց «Յայպետուրանսախագիծ» ինստիտուտին: Վլադիմիր Դանողուրովն իրեն հատուկ եռանդով ծեռնամուխ եղավ ինստիտուտի ստեղծմանը: Կարծ ժամանակամիջոցում նրան հաջողվեց Թրիլիսից, Բաքվից, Ռուսաստանի քաղաքներից որակյալ մասնագետներ հրավիրել աշխատանքի: Ընդամենը մի քանի օրվա ընթացքում կարևորագույն մասնագետ – ղեկավարներին Երևանի քաղաքային խորհրդի գործկուն ապահովեց բնակարաններով, Փարիզյան կոմունայի փողոցի հարևանությանը գտնվող բնակելի բարձրահարկ նոր շենքում շատ հրավիրվածներ բնակարաններ ստացան, մյուսներն ապահովեցին 2-3 տարվա ընթացքում:

Տնօրենը աշխատանքային բեղուն ճանապարհ անցած և մեծ հեղինակություն վայելող գլխավոր ինժեներ Սարգս Անտոնի Անտոնյանի հետ ծեռնամուխ եղան բաժինների ստեղծման և կաղրերի ընտրության

հարցին:

Մայրաքաղաքի արագըթնաց տրամվայի հետազոտական և նախագծային աշխատանքներն իրականացնելու համար ստեղծվեցին նոր բաժիններ, իգորացվեցին եղածները: Ինստիտուտում սկսեց գործել «Մետրո և թունելներ» հատուկ բաժինը: Սկզբնական շրջանում այն դեկավարում էր Կիմ Ստեփանյանը, այնուհետև Արկադի Կուրիսկոն, որը գրաղվում էր մետրոպոլիտենի և տրանսպորտային թունելների կոմպլեքսային նախագծմամբ: Բաժնին կից ստեղծվեցին «Դետազուտություններ և տրասսաներ» (դեկավար Վազգեն Խաչատրյան), «Ինժեներական երկրաբանություն» (դեկավար Վիլեն Հարությունյան), «Օդափոխում, սանտեխնիկա» (դեկավար Պյոտր Լազավոյ), «Արհեստական կառույցներ» (դեկավար Ռաֆայել Գևորգով), «Կայարաններ և հանգույցներ» (դեկավար Բարկեն Գևորգյան), «Կենտրոնացում, շրջափակում և կապեր» (սկզբնական շրջանում դեկավարեց Գեորգի Բունիաթովը, այնուհետև եղվարդ Բայանդուրովը), «Արհեստական կառույցներ» /Գրիգոր Գուլանյան/, «Ավտոճանապարհներ» (դեկավար Վալերի Բարխուդարյան) բաժինները, որոնք գրաղվում էին ավտոմոբիլային ճանապարհների հետազոտմամբ:

Արագըթացի նախագծման աշխատանքներին պարբերաբար կանորադառնանք: Սակայն ցանկանում ենք բազմահատորյակների ծավալներ պահանջող նրանց այլ գործերի մասին խոսել մի քանի նախադասությամբ:

Ինստիտուտում ստեղծվեցին սարքավորումներով և տեխնիկայով հագեցված 8 հետազոտական և 16 արտադրական բաժիններ: Շատ կարծ ժամանակահատվածում ինստիտուտի բարձրորակ աշխատանքների հեղինակությունը այնպես տարածվեց, որ նրա գործունեության մասին խոսեցին Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս: Կոլեկտիվի համար աշխատանքային ճակատներ բացվեցին Հայաստանում, Խորհրդային Միության հանրապետություններում, Ասիայի, Աֆրիկայի և մի շարք այլ պետություններում: Աստիճանաբար ընդլայնվեց կոլեկտիվը, որը բարեխաղորեն էր կատարում իր առջև դրված խոնդրները: Ավտոճանապարհների նախագծման աշխատանքների իրականացման գործում մեծ եղավ տնօրենի տեղակալ, այդ աշխա-



Ձիաքարշը Աստաֆյան (Աբովյան) փողոցում, 1912թ.:



Երևանի Ստալինի (Մաշտոցի) պողոտան, 1930-ական թվականների վերջերին



**Ա. Երգնկյան**  
Երքաղխորհրդի  
գործկոմի նախագահ



**Ն. Յուզբաշյան**  
Երևանի տրանվայի  
կառուցման բյուրոյի պետ



**Ա. Բաղդյան**  
«Դայաստանի քաղաքային  
տրանսպորտի պատմու-  
թյուն» գրքի հեղինակ



Նկարում՝ «Երևաննախագիծ» ինստիտուտում քննարկվում է Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, ծախից աջ, գլխավոր ճարտարապետ Յովհան-նս Մարգարյանը, ինստիտուտի գլխավոր ինժեներ Կոնստանտին Ալբուն-յանը, գլխավոր կոնստրուկտոր Ռոբերտ Մանուկյանը, գլխավոր հատակագիծ քամին պետ Միքայել Մազմանյանը, «Երևաննախագիծ» ինստիտուտի տնօրեն Գրիգոր Հասրաթյանը:



ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Թոշինյանը և  
Երքաղխորհրդի գործկոմի նախագահ Գրիգոր Հասրաթյանը



Նկարում ՀՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Բաղդալ Մուրադյանը  
(ծախից երկրորդը), և ՀԿԿ Երքաղկոմի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղա-  
րիբջանյանը Վրաստանի պատվիրակության հետ

1970 թվական

Երբախսորհիք գործկոմի նախագահի տեղակալ Արամ Արամյանը «Կավգապուտրանս» ինստիտուտի Թթվիլսի մետրոպոլիտենի նախագծի ինժեներ և հեղինակ Վլադիմիր Դանդուրովի հետ



Մտորումներ Երևանի ապազա մետրոպոլիտենի շինարարության նախագծային աշխատանքները իրականացնելու համար (ձախից Արամ Արամյան, Վլադիմիր Դանդուրով):



Արամ Արամյանը և Վլադիմիր Դանդուրովը ճշտում են ապազա մետրոյի «Երիտասարդական» կայարանի նախագծային աշխատանքները:

Նկարում «Լոփի» ռեստորանի շենքը,ուր այսօր կառուցված է մետրոյի «Երիտասարդական» կայարանը:



Միգուցե այստեղ կառուցվի դեպի «Երիտասարդական» կայարան գնացող ստորգետնյա անցումը (տարածքը գտնվում է Բժշկական համալսարանի, Անատոմիկումի շենքերի դիմացի մայթի հատվածում, ուր հետագայւմ կառուցվեցին երկու բարձրահարկ շենքեր):

տանքների առաջին պատասխանատու Վալերի Բարխուդարյանի կատարած աշխատանքը: Վերակառուցվեցին Իջևան - Սևան 40 կմ, Դիլիջան - Վանաձոր 25կմ երկարությամբ, տեխնիկական երկրորդ կարգի մայրուղիները: Ինստիտուտի նախագծով կառուցվեցին Գորիս - Անգեղակոր 30 կմ, Մեղրի - Քաջարան 40 կմ երկարությամբ ավտոճանապարհները: Իրականացվեցին Աշտարակ-Մալին-Գյումրի 90 կմ երկարությամբ տեխնիկական երկրորդ կարգի և Լճաշեն-Կամո 30 կմ երկարությամբ տեխնիկական երրորդ կարգի ավտոճնրիլային ճանապարհների շինարարությունը և այլն: Ինստիտուտի նախագծերով ավտոճնրիլային ճանապարհներ են կառուցվել Ռուսաստանի Դաշնության Օոլովի և Ստավրոպոլի մարզերում: 1972թ ինստիտուտում բացվեց երկարգի բաժինը: Ղեկավար Վագեն Խաչատրյանը մեծ աշխատանք կատարեց բաժինը հանապատասխան կադրերով համալրելու և աշխատանքները հստակ կազմակերպելու համար: Բաժնում նախագծվեցին Սևան-Շորժա 121 կմ, Մասիս-Նուռնուս-Երևան քաղաքը շրջանցող 52 կմ, Իջևան-Ջրազդան 80 կմ երկարությամբ երկաթգծերը: Դայաստանի երկարգի ցանցի հեռանկարային զարգացման նպատակով ինստիտուտը մշակեց տեխնիկատնտեսական հիմնավորումներ Վարդենիս-Զերմուկ 66 կմ, Գյումրի-Բոգդանովկա 82 կմ, Վանաձոր-Ֆիլոլետովո 32 կմ, Կամո-Գագարին 32 կմ երկարությամբ նախագծային աշխատանքների համար: Իջևան-Ջրազդան երկարգի հատվածի վրա նախագծեց 19 կամուրջ, Գյումրիում Զորիթաղ կիրճի վրա՝ 210 մ երկարությամբ կամուրջը, Երևանի Դավթաշենի կամուրջը, Ստեփանավանի և Աշտարակի կամուրջները:

\*\*\*

Երևանում արագընթաց տրամվայի, ապա մետրոպոլիտենի շինարարությունն սկսելու և գործարկման ողջ ժամանակահատվածում ստեղծվեց աշխատանքային աննախադեպ մթնոլորտ, առանց որի երազանքի իրականացումը, դժվարությունների հաղթահարումն անհնարին կլիներ: Այս ծնունդ առավ Երևանում և հիվանավորվեց ԴԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Երվանդի Քոչինյանի կողմից: Կարևոր հանճնարարություն ունեցող յուրաքանչյուր աշխատող կարող էր համարձակորեն դիմել այն ատյանին (անկախ իր գրադեցրած պաշ-

տոնից), որը կարող էր աջակցել լիարժեք լուծելու իր առջև դրված խնդիրները, մթնոլորտը շարունակվեց և իր հետագա զարգացումն ունեցավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Սերոբի Դեմիրճյանի օրոր: Նաման մթնոլորտը դարձավ այս ամենաբարդ կառույցի հաջողության անկյունաքարը:

1966-1973թ., մինչ Արամ Արամյանի քաղխորհրդի նախագահի տեղակալի պարտականություններից այլ աշխատանքի անցնելը նկատվում էր, որ ստորգետնյա արագընթաց տրամվայի շինարարական աշխատանքների կոռորդինացման, անհրաժշտ օգնություն կազմակերպելու ողջ պատասխանատվությունը ոչ միայն նրա վրա էր դրված, այլև նրա առջև, բարիս բուն ինաստով, բացի էր կանաչ ծանապարի բոլոր հարցերի լուծման ուղղությամբ: Փաստորեն Արամյանը դարձել էր «միանձնյա» դեկավար: Գործի հետ առնչվող միութենական բարձրաստիճան դեկավարների (ասենք, «Գլխարության դեմքի հարցին») Գլխավոր վարչության պետի, նրա տեղակալների), հանրապետության այլ բարձրաստիճան դեկավարների, մասնագետների մասնակցությամբ Արամ Արամյանը անց էր կացնում այդ կառույցին վերաբերող տեխնիկական խորհրդակցություններ, հաստատում քաղաքի գլխավոր ճարտարապետ Զիմ Շերոպյանի և կառուցվող արագընթացի տնօրինության կողմից առաջարած, «Երևաննախագիծ» և «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտների կողմից մշակված հեռանկարում (1980-2000թթ) դեպի Նորքի զանգված գնացող այս շինարարության տեխնիկական հանձնարարությունը և այլն: Գրություններից մեկում (1973թ. ապրիլի 12 N 02/408), որն ուղղված էր ՀՍՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Գ. Չարությունյանին, ըստ արված առաջարկների տեղեկացվում էր, որ նախատեսվում է պայագայում Նորքի բնակելի զանգվածում ստորգետնյա էլեկտրատրանսպորտ անցկացնելու դեպքում օգտագործել աշխարհի խոշոր քաղաքներում կիրառվող վերելակային սիստեմը (քանի որ քաղաքի կենտրոնի և Նորքի բնակելի զանգվածի մակերեսների տարբերությունը տատանվում է 300-400մ) և ելելով՝ նպատակահարմարությունից խողոված է օգնել 3-4 մասնագետներ 2-3 շաբաթով ուղարկել Մարտել, Փարիզ կամ Լոնդոն մի շարք հարցեր պարզելու, մոտիկից նմանատիպ գործունեություններ ծավալող մետրոպոլիտենների աշխատանքներին ծանոթանալու համար: Դիմել էր

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Շամբարձումյանին (1973թ ապրիլի 12-ի N 02/414)՝ խնդրելով ակադեմիայի մասնաճյուղի շենքից տեղ հատկացնել արագընթաց էլեկտրատրանսպորտի տնօրինության համար: Գործի անհրաժեշտությունից ելնելով մեկ ամսվա ընթացքում դիմել է ՀՍՍՀ նախարարների խորհրդի նախագահին, Հանրապետության բանկի կառավարիչին, ՀՍՍՀ պետականի նախագահին շինարարության հարցերով: Գործերի վիճակի մասին տեղեկացրել է ՀԿԿ երքաղկոմի առաջին քարտուղար Լյուդվիգ Ղարիբջանյանին, կուսակցական, խորհրդային այլ դեկավար աշխատողների իհարկե միշտ խորհրդակցելով քաղխորհրդի գործկոմի նախագահ Գրիգոր Հասրաթյանի հետ, նրան տեղեկացնելով գործերի ընթացքի մասին, անհարժշտության դեպքում խնդրելով նրա օգնությունը: Երքաղկոմի աշխատակիցներս նկատում էինք, թե ինչպես կայծակնային արագությամբ ընկալող, հարցերը արագ լուծող Կարեն Դեմիրճյանի մոտ Արամ Արամյանի ընդունելությունը տևում էր ժամեր, ուր քննարկվում էին արագընթացի հետ կապված հարցեր: Թե ինչպիսի մեծ իրավունքներ էր տրված երքաղդորձկոմի նախագահի տեղակալին, ցոյց է տալիս նրա կողմից գործնական հարցերի լուծման հետևյալ օրինակը: Մաշտոցի պողոտայի NN 43, 44, 45 շենքերի բակում, համաձայն նախագիծի, պետք է տեղադրվեր արագընթաց էլեկտրական տրանսպորտի համար օդափոխանակման խողովակ՝ ստորգետնյա օգտագործված օդը դուրս մղելու համար: Այդ կայանքը հետագայում կեղստուելու էր օդը, և այնտեղ շինհրապարակի կազմակերպումը կիանգեցներ բուսականության ոչնչացմանը: NN 40, 43 բնակելի շենքները, որոնք կառուցվել էին Հայրենական պատերազմի տարիներին, կամ մինչ այդ ունեին ցածրակայուն հիմքեր և զգալի շինարարական արատներ, որոնց մասին շինարարությունը սկսելուց ենք շատ առաջ նշվել էր շրջանուրիդի գործկոմի հատուկ հանձնաժողովի կողմից: Հողի չնչին ցնցումները բողել էին իրենց ազդեցությունն այդ շենքերի վրա, իսկ հորատումը կարող էր անցանկալի հետևանքներ առաջացնել: Նշված փաստերի մասին շենքի բնակիչները նշում էին դիմումներում և դրանք հեղում ոչ թե քաղխորհրդի գործկոմի կամ այլ վերադաս «առաջին դեմքի», այլ քաղխորհրդի գործկոմի դեկավարի տեղակալ Արամ Արամյանին: 15 բնակիչների ստորագրությամբ, որոնց մեջ էին նաև ԽՍՀՄ ժողովական պատուի աշխատանքների աշխատանքներին ծանոթանալու համար: Դիմել էր

տիստներ Առնո Բաբաջանյանը, Վարդան Աճեմյանը, ԽՍՀՄ ժողովրդական արտիստուիդի Արուս Ասրյանը, ՀՍՍՀ ժողովրդական արտիստներ Գևորգ Աշույսյանը, Գեղամ Աֆրիկյանը, արթեստի Վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Թամարա Շահնազարյանը: Նրանք նամակով և անհրաժեշտ փաստաթղթերով գնում են նախագահի տեղակալի մոտ: Հինարարության դեկավարից Լեռնիդ Յարությունովից, նախագահի տեղակալը հեռախոսով հարցնում է կատարված ծախսերի մասին: Ինձնալով որ դրանք չնչին են և համոզվելով բողոքի ճշտության մեջ, իրահանգի համաձայն անմիջապես դադարեցնում է աշխատանքները: Այս, միայն մեկ հեռախոսային զանգով: Այս ազատ ու անկաշկանդ գործելակերպի վառօրինակ: Ուժեղ դեկավարության լյուրվիգ Դարիքջանյան, Գրիգոր Յասրաբյան, անվախ գործելակերպի, նաև բանինաց դեկավարի ճիշտ ընտրության և անսահման վստահության վառ օրինակ: Իրոք, կյանքի մեծ ծանապարհ անցած մարդիկ ի վիճակի էին հարցեր լուծել անվախ ու անկաշկանդ, մասնագիտական խորը վերլուծության մեջ հնարավորությունների օժտվածության առկայությամբ:

... 1972թ. կազմվեց արագընթաց տրամվայի կառուցման տնօրինությունը, որի վրա դրված էր բարդ և պատասխանատու պարտականություններ: Տնօրինությունը պետք է զբաղվեր արագընթացի ողջ հոգսերով սկսած նախագծային աշխատանքներից, վերջացրած շինարարական բոլոր գործերի կոորդինացման, նյութատեխնիկական մատակարարման և մի շարք այլ հարցերով: Կազմակերպությունների կողմից պայմանագրերի ժամանակին կատարման հսկողությունն ու օգնություն կազմակերպելը, լինելու էր տնօրինության գործունեության ամենօրյա հոգսը: Այդ իսկ պատճառով, դրա դեկավարի ընտրությունից էր կախված այս կարևոր օղակի ճիշտ գործունեությունը: Կատարվեց միանգանյան խելացի ընտրություն: Տնօրեն նշանակվեց Իվան Գերգի Պապիկը: Նա ուներ համապատասխան կրթություն (ավարտել էր Թբիլիսիի երկաթուղային ինստիտուտը), և իր մասնագիտությանը աշխատել էր ցածր օղակներում, ապա Անդրկովկասյան երկաթուղու վարչությունում զբաղեցրել բավականին բարձր պաշտոններ: Նրա ակտիվ գործելակերպը, սկսած 1945թ., նշտապես գտնվել է 344 Կենտկոմի առաջին քարտուղար /1937-1953/ Գրիգոր Արտեմի Յարությունյանի ուշադրության կենտրոնում: Նա հետագայում պատասխանատու աշխատանք-

ներ կատարեց հանրապետության կուսակցական, պետական օրգան-ներում: Պատահական չէ, որ 1960թ. թոշակի անցած ի, Պապիկին նշանակում են այս պատասխանատու պաշտոնին: Ընտրությունը ճիշտ էր, և դա ապացուցվեց արագընթաց տրամվայի (ապա հետագայում մետրոպոլիտենի շինարարության) առաջին օրից:

Արագընթաց տրամվայի շինարարության տնօրինության փոքրաթիվ կոլեկտիվը իվան Պապիկի գլխավորությամբ, ծեռնամուխ եղավ նորատիպ կառույցի հոգսերի լուծմանը: Որպես առաջնահերթ խնդիր հետևողական աշխատանք տարվեց նախագծային կազմակերպությունների կողմից (իիմնականում «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի) ժամանակին նախագծային, նախահաշվային փաստաթղթերով ապահովելու ուղղությամբ: Հանրապետության պետականի միջոցով լուծվեցին անհրաժեշտ նյութերի հատկացման, մեխանիզմների ծեռք բերման, ֆինանսավորման հարցերը: Տեղական իշխանությունների հետ կապված շինարարական բոլոր հարցերը լուծվում էին շատ արագ և ժամանակին: Կազմակերպչական բազմապիսի հարցերի դրական լուծման գործում լուրջ և բարեխիղծ աշխատանք կատարեցին գլխավոր ինժեներ Սերգեյ Բաղալովը և արտադրական տեխնիկական բաժնի աշխատողները:

## ԱՐԱԳԸՆԹԱՑ ՏՐԱՄՎԱՅԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Միութենական կառավարության կողմից Երևանում արագընթաց ստորգետնյա տրամվայի շինարարության իրականացման մասին որոշումից ելնելով՝ միութենական տրանսպորտային շինարարության նախարարության 1971թ. նոյեմբերի 10-ի հրամանով «Գլխունելմետրոշին»-ին հանձնարարվեց Դայաստանում գտնվող N 307 շին. մոնտաժային գնացքի հիման վրա 1971թ չորրորդ եռամսյակում հիմնել N 8 բունելային ջոկատը, որն իրականացնելու էր Երևանի ստորգետնյա արագընթացի շինարարությունը: «Գլխունելմետրոշին»-ին միաժամանակ հանձնարարվեց ջոկատը համարել անհրաժեշտ բանվորական և ինժեներական կարգերով, մեխանիզմներով և տրանսպորտային միջոցներով, այն հաշվով, որպեսզի ապահովի 1972թ. պլանավորվող շինարարական աշխատանքների անվերապահ կատարումը: Առաջին տարում նախարարության հրամանով թունելային ջոկատի պետ հաստատվեց Լենինի Արկադիի Հարությունովը: 1973թ. արագընթացի լայնածավալ մասշտարք թելադրեց միութենական «Գլխունելմետրոշին»-ին Երևանում ստեղծել նոր N 160 շիննոնտաժային վարչությունը, որը պետք է իրականացներ միայն արագընթացի շինարարությունը: Վարչությանը ապահովելով անհրաժեշտ տեխնիկայով N 8 թունելային ջոկատը ծեռնամուխ եղավ հանրապետության տարրեր շրջանների թունելների շինարարությանը: Որոշ ժամանակ անց, 1975թ. Դայաստանի հեռանկարային զարգացման խնդիրներից ելնելով և հաշվի առնելով հանրապետությունում երկարուղային գծերի ընդլայնումը, ճանապարհաշնուրությունը և դրանից բխող թունելների կառուցումը, «Գլխունելմետրոշին»-ի ենթակայության տակ Դայաստանում հիմնվեց «Դայրունելշին» վարչությունը, որի ենթակայության տակ մտան N 160 շիննոնտաժային վարչությունը, N 8 թունելային ջոկատը և այլ կազմակերպություններ: Միաժամանակ, արագընթացի շինարարությանը գործնական օգնություն ցույց տալու համար, «Դայրունելշին»-ի կազմում ստեղծվեցին յուրօրինակ աշխատանքներին համապատասխան շինվազություններ, տնօրինություններ, բազաներ և այլն:

... 1972թ. մարտի 31-ին ՀՍՍՀ Գերագույն խորհրդի հրամանագրով

Երևանում ստեղծվեց 7-րդ Խորհրդային շրջանը: Շրջանի տարածքի մեջ մտավ Ավանի աղյուսականը, որտեղ նոր էր «հանգրվանել» արագընթացի շինարարությունն իրականացնող կազմակերպությունը: Մեկ ամիս հետո տողերիս հեղինակն ընտրվեց նորաստեղծ կուսչողկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ: Հիմնական պարտականություններիս մեջ ընդգրկվեց նաև շինարարական կազմակերպություններով անձանք գրադկելու խնդիրը, որպես այս հարցում առաջին անմիջական պատասխանատու անձ շրջանում (շրջանիրդի գործկոմում նման բաժին չկար): «Դայրունելշին»-ի վարչության պետ նշանակվեց Լենինի Արկադիի Հարությունովը: Նա, Թթիլիսիում ճանապարհային հաղորդակցության շինարարության բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո, աշխատել էր Վրաստանում Միության «Գլխունելմետրոշին»-ի համակարգում, այնուհետև Դայաստանում և մեծ ճանաչում ու հեղինակություն էր ծեռք բերել: Որպես բանիմաց թունելագործ դեկանական կարգերել էր Թթիլիսիի մետրոշինի տեխնիկական ծառայությունը, իսկ վերջին 6 տարիներին՝ 1966-1972թթ. գլխավորել էր N 307 թունելային ջոկատը, (կարճ ժամանակահատվածում նաև N 8 թունելային ջոկատը և N 160 շիննոնտաժային վարչությունը): «Դայրունելշին» գլխավոր հիմքներ նշանակվեց Դմիտրի Բորիսի Ոզյանկինը, որը երկար ժամանակ աշխատել էր Ռուսաստանում, մի քանի տարիներ գլխավորել Վորկուտայի թունելաշինության տեխնիկական ծառայությունը: Բանիմաց, գործել կազմակերպչական և տեխնիկական մեծ կարողություններ ունեցող հիմքներ էր և հետագա տարիներին դարձավ Երևանի մետրոպոլիտենի շինարարության գիտակներից մեկը: «Դայրունելշին» վարչության պետի տեղակալ նշանակվեց Գևորգ Մկրտչիչ Հարությունյանը, որն անցնելով կյանքի մեջ ճանապարհ, իր անգնահատելի ավանդը ներդրեց հանրապետության տնտեսության այդ կարևորագույն բնագավառի առջև ծառացած խնդիրների իրականացման գործում:

«Դայրունելշին» վարչության բաժինները և ստորաբաժանումները ղեկավարեցին կյանքի մեջ փորձ ունեցող մարդիկ: Վարչությունը դասվեց այն շինարարական կազմակերպությունների շարքում, ուր ինժեներատեխնիկական որակյալ կադրերի ընտրության շնորհիվ կարողացան ոչ միայն լուծել շինարարության ընթացքում ծագած բարդ տեխնի-

կական խնդիրները, այլև թունելաշխնության բնագավառում ներդրած նորանություններով իրենց ծանրակշիռ խոսքն ասացին:

Ըստ ընդունված կարգի, շրջկոմը և շրջգործկոմը «Հայրունելշին» վարչության ղեկավարության անձնական գործերի հետ ծանրանալուց, գրույցից և շրջկոմի բյուրոյում նրանց թեկնածությունը հաստատելուց հետո, ծեռանամուխ եղան շինվարչությունների, մյուս կարևոր ստորաբաժանումների ղեկավար կադրերի (միայն պետերի, գլխավոր ինժեներների, երբեմն էլ պետի տեղակալների) ընտրության աշխատանքներին: Ելելով հոյժ կարևոր կառույցի պահանջներից կադրերի ընտրությունը կատարվում էր շատ թճախնդրորեն: Բաժնում, շրջգործկոմի նախագահի, այնուհետև շրջկոմի առաջին քարտուղարի մոտ տեղի էին ունենում անհատական գորոյցներ, որից հետո թեկնածուները հաստատվում էին շրջկոմի բյուրոյում: Մեծնասամբ ղեկավար կադրերի ծիշտ ընտրությունով էր պայմանավորված շինարարական աշխատանքների հստակ կազմակերպումը: Հենց սկզբից ասենք, որ ի տարբերություն շրջանի այլ կազմակերպությունների, «Հայրունելշին»-ի ղեկավարության կողմից ներկայացված բոլոր կադրերը միանգամայն արժանի էին գրադեցնելու առաջարկված պաշտոնները և ոչ մի թեկնածության նկատմամբ որևէ առարկություն չեղավ: Բոլորն էլ կյանքի մեջ ճանապարհ անցած մարդիկ էին: Ի դեպ, պետք է ասել, որ վարչության ղեկավարության միանգամայն ծիշտ մոտեցման շնորհիվ ինժեներական ոչ շատ բարձր պատասխանատու աշխատանքներում ընդգրկվեին նաև երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գերազանց և մեծ ապագա խոստացող շրջանավարտները, դրանով իսկ նախ լուծվեց ամենաբարդ հարցերից մեկը՝ ինժեներական կադրերի պակասը, և երկրորդ նրանք վստահությունն արդարացրեցին, մեծ եռանդով աշխատելով, կարծ ժամանակում իրենց փայլուն դրսերեցին և դարձան «Հայրունելշին» ղեկավար կազմի իհմնական կորիգօք:

Շրջանի ղեկավարության, ինչպես նաև երաշկոմի և ՀՀԿ Կենտկոմի ղեկավարների վրա մեծ տպավորություն բողեց ամենակարևոր օլակի N 160 շինարարական մոնտաժային վարչության պետ ժորժ Բագրատի Ավանեսյանը: Նա թունելների շինարարության աշխատանքի մեծ փորձ ուներ և առաջին իսկ օրից նկատվեց, որ նրա նշանակումը այդ պաշտոնում, միանգամայն ծիշտ էր: Միջին հասակի, ամրակազմ, ճա-

ղատ գլխով բարի հայացքի տեր ժորժ Բագրատիչը ինչքան էլ մարդանու էր բոլորի հետ, սակայն խիստ ու պահանջկուր էր, քայլուս: N 160 շինմոնտաժային վարչության պետի տեղակալ նշանակվեց եղուարդ Արտուր Հարաբետյանը, որը Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում ավարտելուց կարծ ժամանակ հետո իրեն դրսերեց որպես խելացի ինժեներ և կազմակերպված ղեկավար: Յետագայում նա տեղափոխվեց Մեղրածորի տեղամաս և ղեկավարեց թունելային ջոկատը, ապա անցավ կուսակցական աշխատանքի:

... Կարծ ժամանակ էր անցել ինչ սկսվել էր արագընթացի շինարարությունը, բոլոր ուղղություններով աշխատանքների առաջընթացն ակնհայտ էր: Նկատվում էին փոփոխություններ բոլոր տեղամասերում, մոտենում էր արագընթացի շինարարության առաջին տարվա ավարտը: «Հայրունելշին» վարչության պետ Լենինի Յարությունովի հետ եղանք շինարարության բոլոր 4 օրյեկտներում: Տեղամասերից մեկում առաջին անգամ ծանրացած հերթափոխների պետք էր կարեն Աղամյանի և Գագիկ Մարտիրոսյանի հետ: Երկուսն էլ սովորել էին նույն դասարանում, երկուսն էլ պոլիտեխնիկականի շինարարական ֆակուլտետն ավարտելուց հետո, ցանկություն էին հայտնել աշխատել արագընթացի շինարարությունում: Կարծ ժամանակում իրենց դրսերել էին որպես խելացի ինժեներներ ու կազմակերպիչներ և դեռ մեկ տարին չլրացած նշանակվել էին պատասխանատու պաշտոնների: Տեղամասում աղողեն ավարտվել էր ուղղաձիգ հորատանցքի աշխատանքները (հորանը ծառայում էր մարդկանց, սարքավորումները, նյութերը վար իջեցնելու համար որպես վերելակ): Սկսվել էր հորիզոնական հորատումը: Տեղամասում աշխատանքային նոր ճակատ ստեղծելու, աշխատողների թիվն ավելացնելու, հանձնարարություններն արագ կատարելու նպատակով, սկսվել էին հորատված ներքին հատվածի աջ և ձախ կողերի հորատման աշխատանքները: Քարերի, ժայռերի ճեղքերից ստորգետնյա ջրերի հոսքը խանգարում էր նորմալ գործունեությանը: Աշխատանքներն իրականացվում էին մեծ ջանքերի ներդրմանը, ջրի մեջ շիթերի հարվածների տակ: Իրոք, երբսական գործ էր կատարվում, նոյնիսկ կողդից նայողը կզգար, թե ինչպիսի անձնագործ, նոյնիսկ կյանքի համար վտանգավոր աշխատանք էին ծերնարկում հորատողները: Տեղամասում ավարտին էր մոտենում պոմպակայանի շինարարությունը և մո-

տաժումը: Դրա ավարտով ու գործարկումով հնարավորություն կրնձեռքի արագ թափով կատարել շինարարությունը: Ահա թե ինչու պոնպակայանի գործարկումն ավարտելու համար ավելի քան մեկ ամիս կազմակերպվեց շուրջօրյա աշխատանք: «Բարեկամություն» և «Մարշալ Բաղրամյան» կայարաններում ավարտվել էին ուղղաձիգ հորատման աշխատանքները, և սկսվել էր հորդզոնական հորատանցումը, միաժամանակ տեղադրվել էին հորատանցման լեռնային համալիրի սարքավորումները: Սկսվել էին N 5 ուղղաձիգ հորի և «Երիտասարդական» կայարանի թեք նախասրահի մուտքի աշխատանքները: Ամենատպավորիչն այն էր, որ բոլոր աշխատողների մոտ նկատվում էր հպարտություն ու մեծ պարու:

1972թ. նախատեսված էր կատարել 1 մլն. 300 հազ. ռուբլու աշխատանքներ, այդ թվում 1 մլն. ռուբլու շինարարական և մոնտաժային աշխատանքներ: Փաստորեն կատարվեց 1մլն. 550 հազ. ռուբլու աշխատանք, կամ 159 տոկոս, որից շիննոնտաժային աշխատանքները գերակատարվեցին 128 %-ով:

1973թ. արագընթացի շինարարության համար ողջ ծավալով նախատեսվեց կատարել 4 մլն. 100 հազ. ռուբլու աշխատանք: Շիննոնտաժային աշխատանքները կազմում էին 3 մլն. 700 հազ. ռուբլի, որից ստորգետնյա աշխատանքներին հատկացվել էր 2 մլն. 700 հազ ռուբլի, իսկ վերգետնյա ժամանակավոր կառույցներին 1 մլն ռուբլի: Հենց տարվա սկզբից բոլոր ուղղություններով կատարվեցին լայնածավալ աշխատանքներ: «Գլխունելմետրոշինի» կողմից համապատասխան սարքավորումների արագ տեղափոխման և փորձված մասնագետների կազմակերպված աշխատանքի շնորհիվ գգալի տեղաշարժեր նկատվեցին բոլոր տեղամասերում:

Չորս կայարաններում տեղադրվեցին հորատանցման լեռնային համալիրի սարքավորումները, ինչպես նաև ավարտվեցին ուղղաձիգ հորատանցման աշխատանքները: Մեծ թափով սկսվեց «Բարեկամություն»-«Մարշալ Բաղրամյան»-«Երիտասարդական» կայարանների հորատանցումը: Տարվա երկրորդ կեսից շինարարները ծեռնամուխ եղան «Բարեկամություն»-«Մարշալ Բաղրամյան»-«Երիտասարդական» տեղամասերում շարժասանդությունների համար թեք հորանների անցահատման աշխատանքներին: «Հանրապետության հրապարակ» տեղա-

մասում կառուցվեց հզոր տրանսֆորմատորային ենթակայան 400 կվա, իսկ «Երիտասարդականում» 200 կվա հզորությամբ: Վերջնական արդյունքում կատարվեցին բոլոր աշխատանքները: Ստորգետնյա աշխատանքները հատկապես վերջին ամիսներին լավ կազմակերպելու շնորհիվ նախատեսված 2 մլն. 700 հազ. ռուբլու դիմաց կատարվեցին 3 մլն ռուբլու աշխատանքներ:

Արագընթացի շինարարության առաջին երկու տարիները մեխանիկական ծառայությունների համար եղան լարված աշխատանքի տարիներ մեծ փորձության ճանապարհին: Նրանց ուժերով սեղս ժամկետում Մոսկվայից և Միության տարբեր քաղաքներից բերված 5 վերելքային մեքենաներ տեղադրվեցին տեղամասերում: Տեղադրվեցին նաև հորատանցման բարձման թուժե վահանակների մոնտաժման (հորատումից հետո պատվում էին թուժե կամ երկար վահանակներով «շապիկներով», որից հետո նորից շարունակում հորատանցումը) լեռնային ապարների բարձման համար օգտագործվում էին այնպիսի նորագույն սարքավորումներ ինչպիսիք էին ՊՊԻ - 5 - ՍՊ բարձիչ, ԿՄ - 14, Մ - 15 վահանակներ տեղադրող մեքենաներն էին Մ Մ - 8, Կ - 7: Աշխատանքների մեծ հաջողությունների պայմաններում, երբեմն այնպիսի իրավիճակ էր ստեղծվում, որ եղած հնարավորությունները, թույլ չեն տալիս հաղթահարել դժվարությունները: Նոյնիսկ մի քանի ամսվա աշխատանքը կարող էր ջուրն ընկենել, աստիճանաբար նկատվում էր, որ դժվարությունները կրկնապատկվում, եռապատկվում էին:

Եթզանիկ պատահականությամբ, մետրոյի շինարարությունը մասնվի միջոցով լուսաբանողներից առաջինը եւ եղա հանրապետությունում: Եվ ահա թե ինչպես:

Ինձ զանգահարեց «Երեկոյան Երևան» թերթի արդյունաբերության և շինարարության բաժնի վարիչ Ղազարոս Յովակիմյանը, որի հետ տարիների ընթացքում բավականին մոտիկ ընկերական հարաբերություններ էին ստեղծվել: Ասաց, որ չուրց մեկ և կես տարի է, ինչ խստիվ արգելվում է ստորգետնյա արագընթաց էլեկտրատրանսպորտի մասին, որևէ լուր հաղորդել կամ գրել մամուլում: Քանի որ այս բարդ շինարարությունը մեծ թափ էր ընդունել, և ես էլ ի պաշտոն մոտ էի կանգնած այս շինարարությանը և գգում էի գաղտնիության սկզբունքի պատահանատվությունը, թերթի գլխավոր խմբագրին համոզել է, որ գրեմ հոդ-

ված իրենց թերթի համար, բայց այնպես, որ չհասկացվի մետրոյի շինարարությանը վերաբերող որևէ միտում, այլ, որ գործ ունենք ստորգետնյա արգելնեաց տրամվայի հետ: Այլապես «սրտացավները» կարող են գրել Մոսկվա, թե խաբեռթյուն է ոչ թե ստորգետնյա տրամվայի, այլ Երևանում մետրոյի շինարարության մասին է խոսքը, պետական միջոցները շոայլում են, հոդվածն էլ կրադմանեն ոռւսերեն և իրենց գրածի հետ կուղարկեն Մոսկվա:

1974թ. ապրիլի 14-ին «Երեկոյան Երևան» թերթում տպագրվեց «Արգելնեաց տրանսպորտի շինարարության հոգսերը» խորագրով հոդվածը: Յետազա տարիներին շատ հոդվածներ եմ գրել մետրոյի շինարարության վերաբերյալ, որոնք տպագրվել են «Սովետական Հայաստան» թերթում, կամ հաղորդվել են ռադիոյով, բայց այս առաջինն էր և ինձ համար դարձավ սուրբ մասունք:

Կարծես պատովեց վախն ու նորակառուց շինարարության մասին լրության քողը: Նույն գգուշությամբ, մի քանի օր հետո արագելնեաց տրամվայի մասին փորձիկ նախաբանով «Սովետական Հայաստան» թերթում սխեմատիկ ցույց տրվեց, թե ինչպիսի ուղղությամբ պետք է գնա տրանսպորտը չորս կիլոմետրի ուղեգծով:

Յոդվածից օգտվելով, շատ կարծ նկարագրենք արագելնեացի շինարարության սկզբի և իրավիճակին համապատասխան նաև նտավախությունների մասին: Յետազա երկու տարիներին, ցավոք, պարզ նկատվեց, որ կառույցի բախտով էլ ավելի խորը և լուրջ պետք է զրադվել, հարց, որի լուծումն ամբողջությամբ պայմանավորված չէր միայն հանրապետությունում իրականացվող գործերով ...

Երևանի արագելնեացի կառուցման 1974թ. առաջին կիսամյակի շեմին կատարվել էր ավելի քան 870 մետր ուղղահայց հորատանցման աշխատանքներ և զգալի չափով օժանդակ կառույցներ, շինարարական այլ աշխատանքներ: Սակայն արդեն պարզ նկատելի էր, որ հետագա գործողությունների իրականացումը վլանգի տակ է, այլև հնարավոր չէր այդպես շարունակել: Աշխատանքների անբավարար պայմանները թելադրում էին ծեռնարկել կազմակերպչական-տեխնիկական լուրջ միջոցառումներ: Բանն այն էր, որ յուրաքանչյուր գործողությունից հետո, ստորգետնյա ջրերի հոսքը ավելանալով, օր-օրի ավելի էր խանգարում բոլոր տեղամասերի աշխատանքներին: Արագ կերպով

տեղամասերում սկսվեցին հորատանցքերի ստեղծումը: Այսպիսի վեց հորատանցքեր բացվեցին «Հանրապետության հրապարակ» տեղամասում, որոնցից ջրին պոմպերի միջոցով մեկ ժամում դուրս էր մղվում 1500 լիմ ջուր: Աշխատանքային լայն ճակատ ապահովելու համար հետազայում ստեղծվեցին ևս չորս հորատանցքներ: Նման միջոցառումներ ծեռնարկվեցին նաև մյուս տեղամասերում:

Առավել դժվար խնդիր էր դրված շինարարների առջև 1974թ. հաջորդ ամիսներին և 1975թ.: Ելենլով աճող մայրաքաղաքի տրանսպորտային աշխատանքները կարգավորելու հրատապ անհրաժեշտությունից նախատեսվում էր արագելնեաց տրամվայի (իր 4 կայարաններով և 4 կմ ուղեգծով) շահագործման հանձնել 1978 թ.: Այդ նպատակի համար N 160 շինմոնտաժային վարչությունը կատարելու էր 5 մլն ռուբլու աշխատանք կամ մոտ 2 անգամ ավելի, քան 1973թ., իսկ 1975թ. պետք է իրացվեր 8 մլն. ռուբլի:

Արդյո՞ք բոլոր պայմանները ստեղծվել էին այս կարևոր կառույցում նախատեսված աշխատանքները կատարելու համար, պետք է ասել ոչ Չնայած N 160 շինմոնտաժային վարչության կողեկտիվի աշխատանքը արժանի էր ամեն դրվագների, բայց եղած բանվորական անձնակացմը անկարող էր իրականացնել առաջադրված մեծ ծրագիրը: Յաշվարկները ցույց են տալիս, որ 1974թ. աշխատանքները կատարելու համար կողեկտիվի անդամների թիվը պետք է կրկնապատկվեր: Յաշվի առնելով բանվորական ուժի, անհրաժեշտ տեխնիկական բազայի աստիճանական ապահովումը, 1974թ. առաջադրանքների հիմնական ծանրությունը թողնվել էր 3-րդ և 4-րդ եռամսյակներին: Այսպես, եթե առաջին եռամսյակին պետք է իրականացվեր 800 հազ. ռուբլու շինմոնտաժային աշխատանքներ, ապա 4-րդ եռամսյակին շինարարական աշխատանքների ծավալը նախատեսված էր 1մլն. 800 հազ. ռուբլի: Մինչդեռ, 1974թ. հունվար մարտ ամիսներին ոչինչ չէր արվել բանվորական ուժի հավաքագրման համար: Պարզ էր, որ վարչության անհրաժեշտ էր ապահովել համապատասխան բնակարանային ֆոնդով որակյալ հորատողներ իրավունքուն համար: Չնայած այն բանին, որ հանրապետության Նախարարներին սպահովել պահանջվող բնակելի տարածությամբ, սակայն 1973թ. հատկացված բնակելի ֆոնդերը չափազանց անբավարար էին:

Լուծված չեր նաև կառուցյան անհրաժեշտ քանակությամբ ինքնարաբափ մերենաներով ապահովելու հարցը: 1974թ. պետք է կատարվեր 350 հազ. տոննա շինանյութերի և հողի տեղափոխման աշխատանքներ, սակայն հանապետության ավտոտրանսպորտային նախարարության կողմից պլանավորված մերենաներով հնարավոր էր կատարել միայն 100 հազ. տոննա փոխադրման աշխատանքներ: Անհրաժեշտ էր վարչությանն ապահովել պահանջվող քանակությամբ ինքնարաբափ մերենաներով, որպեսզի եղած մերենաների հետ իրականացվեն տեղափոխումներ կամ էլ այդ պարտականությունները լիովին դնել ավտոտրանսպորտային նախարարության վրա:

Ոչ բոլոր տեղանասերում էին ստեղծվել աշխատանքային նորմալ պայմաններ: Այսպես «Հանրապետության հրապարակ» և «Երիտասարդական» կայարանների տեղանասերում չէին ստեղծվել ժամանակավոր այնպիսի կառուցյաններ, ինչպիսիք էին բաղնիքը, ցեմենտի և ավագի պահեստները, մեխանիկական արտադրամասը և այլն, որոնք խիստ անհրաժեշտ էին: Առանձին տեղանասերում ձգվում էր շինարարական հրապարակներում գտնվող բնակելի տների իրացունը: Երբաղ-խորհրդի գործկոնը դեռ 1972թ. հոկտեմբերին հաճապատասխան շրջանային խորհուրդներին պարտավորեցրել էր մեկ շաբաթվա ընթացքում լուծել իրացման հարցը: Այդ պատճառով, 1974թ. ապրիլի դրությամբ «Հանրապետության հրապարակ» տեղանասում, հնարավոր չէր շինարարակը ցանկապատել, որը առաջ էր բերում դժվարություններ անվտանգ աշխատանքներ ապահովելու տեսակետից: «Երիտասարդական» կայարանի տեղանասում անհրաժեշտ էր իրացնել երկու հարկանի բնակելի շենքը, որը նույնանություն էր տեղում էր: Ստորգետնյա արագընթաց տրամվայի շինարարության իրականացման համար նախատեսվել էր ստեղծել շինարարական հզոր բազա 150 ինքնարաբափ մերենաների համար հավաքակայանով, երկաքետոնե կոնստրուկցիաների գործարանով, նորոգման արիեստանոցներով, պահեստային տնտեսություններով և այլն: Այդ աշխատանքներն սկսվել էին: Բայց պլանավորվել էր 1974թ. իրականացնել միայն 200 հազ. ռուբլու աշխատանքներ, այն դեպքում, երբ հզոր համալիրի համար պետք է կատարվեր մոտ 10 մլն. ռուբլու շինարարություն:

Շինարարական աշխատանքների ծավալների ընդլայնումը պայ-

մանավորված էր նաև մի շարք այլ հարցերով, որոնք չեն լուծվել: Օրինակ սեղմված օդի մատակարարման համար ամեն մի տեղամասում տեղադրվել էին կոմպրեսորներ, որոնց հզորությունները չեն բավարարում աշխատանքի ծավալի հետագա ընդլայնմանը: Այդ նպատակով նախատեսվել էր կառուցել կենտրոնական կոմպրեսորային կայան, որի շինարարությունը հանձնարարվել էր «Երևանշին» գլխավոր վարչությանը, Երբաղխորհրդի գործկոմի որոշմամբ կայանի շինարարությունը պետք է ավարտվեր դեռ 1973թ. նոյեմբերի 25-ին: Սակայն «Մարշալ Բաղրամյան» տեղամասի մոտ գտնվող այդ օբյեկտի կառուցման վիճակը լավ չէր: Կոմպրեսորների տեղադրումը հեշտ խնդիր չէր: Այդ գործը մոնտաժային կազմակերպությունների մեջքով մի քանի անգամ հետաձգվել էր, ուստի N 160 շինմոնտաժային վարչությունն ստիպված ինքը ծերնամուխ եղավ կոմպրեսորների վերջնական մոնտաժմանը, որը հնարավոր էր ավարտել միայն շինարարական աշխատանքներից հետո, երբ պատրաստ կլիներ մասնաշենքը: Մինչդեռ 1974թ. ապրիլին արդեն սեղմված օդի պակասը խիստ զգացնել էր տալիս տեղանասում: Մեկ այլ դժվարության մասին ևս: Կառուցի առանձին տեղանասեր ապահովված չէին անհրաժեշտ քանակի էլեկտրաէներգիայով: Վարչության աշխատողները «Հանրապետության հրապարակ» տեղանասում ավարտել էին 2 հազ. կվտ հզորությամբ պահեստային ենթակայանի շինարարությունը: Վրարի դեպքում կարող էր դադարել ջրուղի պոմպերի էլեկտրասնուցումը և կարծ ժամանակում ստորգետնյա շինարարությունը կլցվեր ջրով, դա կարող էր մեծ վնասներ պատճառել, իսկ ջրի հեռացումը հետագայում օրեր կպահանջեր: Պահեստային ենթակայանը, որի գործարկումը ձգձգվում էր, հենց այդպիսի արտակարգ դեպքերը կանխելու համար էր նախատավագած: Բավական է ասել, որ էլեկտրաէներգիայի ընդհատումների, էլեկտրասնուցման խափանման դեպքում կղաղարեր ջրամդիչ պոմպի էլեկտրասնուցումը, միայն մեկ ժամում ստորգետնյա ջրերի մակարդակը կրածրանար շուրջ 9մ, դրանով իսկ կտրվեր հազարավոր ռուբլիների վնաս, աշխատանքները վերականգնելու համար կպահանջվեր 2-3 ամիս:

Մեկ այլ տեղեկության մասին ևս: Մեկ մետր հորատանցում կատարել նշանակում էր հանել 30 խ.մ ապար: Անհարժեշտ է նաև նշել, որ, օրինակ, «Բարեկամություն» կայարանից մինչև «Հանրապետության

հրապարակ» կայարանը ստորգետնյա հատվածի շինարարության ողջ ժամանակահատվածում ամենուրեք զգացվում էին նոր բարդություններ: Ամբողջ ուղեգծով խստ փոփոխվում էր Երկրաբանական կառուցվածքը: Լեռնաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները ծանր էին: 3 կմ վրա 5 տեսակի շերտեր էին հանդիպում շինարարները, 7-8 մետր խորությունից սկսվում էին ջրատար շերտերը: Իսկ դա նշանակում էր, անընդհատ պատրաստ լինել անակնկալների, անընդհատ փոխել աշխատանքի ձևը, արագությունը: Բավական է ասել, որ «Երիտասարդական», «Հանրապետության հրապարակ» տեղամասերում ժամում 5000 խ.մ ջուր էր դուրս մղվում Երկրի երես: Պետք էր պոմպերով դուրս մղել ջուրը, զգովայ լինել հողային շերտերի հետ, չխարվել բազալտի աճրությանը: Հաճախ մեր տղաներն առաջ էին քայլում սանտիմետր առ սանտիմետր յուրաքանչյուր նվաճված ուղին դարձնելով հուսալի առաստաղ գնացքի և կայուն հիմք առանձին տեղում 7-8 մետր բարձրության վրա գտնվող շենքերի հանար: Ահա թե ինչու ամրությունն ապահովելու համար մի շարք տեխնոլոգիաների (ցեներն բետոնով ամրացում, բենտոնիտով «սրսկում» և այլն) հրականացումից հետո թունելների և կայարանների վերջնահատման համար կիրառվում էին թուշ վահանակներ աճրող սալիկներ, հավաքովի և միացյալ երկարեւոսն: Ահա այսպիսի, Միությունում դեռ նաև չհանդիպած մետրոշնարարության պայմաններում, մեր հորատողները կամաց-կամաց մեծ փորձ ու հմտություն էին ծեռք բերում և աստիճանաբար արդյունավետ օգնում իրենց աշխատանքային ընկերներին: Այսպես, «Բարեկամություն» տեղամասում «Ռենորդակիր» եղավ Ռ. Ջարությունյանի զլիսավորած բրիգադը, նրանք մեկ ամսվա ընթացքում անցահատեցին 32 խմ, որոշ ժամանակ հետո Յ. Չատինյանի բրիգադը գերազանցեց նրանց հասնելով 36 խ.մ, Ն. Հակոբյանի բրիգադը 51 խ.մ և այսպես անընդհատ նոր հաջողություններ էին ծեռք բերվում, սակայն մեծ դժվարություններով, առանց չափազանցության, երբեմն անձնագործ աշխատանքով:

Անկախ անընդհատ աճող Երկրաբանական բարդություններից առաջացած դժվարություններից, կառույցն իրականացնող N160 շինուածային վարչության կոլեկտիվը որոշակի հաջողություններ էր ծեռք բերում ստորգետնյա արագներաց տրամվայի շինարարության աշխատանքներում: Ընթերցողին փաստացի թվերով շատ չծանրաբեր-

նելու համար հակիրծ բերենք հետագա 2, 3 տարիների աշխատանքներո բնորոշող մի քանի թվեր: 1975թ. ծանր և պատասխանատու տարի էր շինարարների համար: Վարչությունը տարեկան հանձնարարությունը կատարեց զլիսավոր կապալառուի գծով 10 տոկոսով, իսկ սեփական ուժերով՝ 95 տոկոսով: Գրեթե նույն պատկերը կրկնվեց 1976թ.: Շինոնտաժային աշխատանքների պլանը զլիսավոր կապալառուի գծով, կատարվեց 104,2 տոկոսով, սակայն սեփական ուժերով այն ծախողվեց, պլանը կատարվեց 96,7 տոկոսով:

Նպատակ չունենալով շինարարների կողմից թույլ տված թերություններն ու բացքողումներն անտեսել տարեց տարի աճող հանձնարությունների և դրա դիմաց հնարավորությունների փոքրաթիվ տեղաշարժից պարզ երևում է, որ արագներացի շինարարության գործին լծված մարդիկ, ամրողությամբ վերցրած վատ չեն աշխատում, երբեմն նույնիսկ անհնարինը դարձնում հնարավոր, նպատակներին հասնելու համար: Երբեք հնարավոր չէ մոռանալ 1977թ. հունվարի 14-ը: Դեռ ամիսներ առաջ բնության մատուցած անակնկալներից ելնելով (ամիսներ շարունակ հիդրոերկրաբանական պայմանները թույլ չեն տալիս կազմակերպել նորմալ աշխատանք) ասվում էր, թե ժամանակին չի կատարվի երկու թունելների «Երիտասարդական» և «Հանրապետության հրապարակ» տեղամասերի միջև ընկած հատվածի միացումը: Մինչդեռ նախատեսված ժամանակից 15 օր շուտ՝ հունվարի 14-ին, բրիգադավարներ Զատինյանի և Յակոբյանի մարդիկ կատարեցին Ծված հատվածների միացումը: Նույն դժվարին պայմաններում փետրվարի 26-ին տեղի ունեցավ 2-րդ միացումը՝ «Բարեկամություն» և «Մարշալ Բաղրամյան» տեղամասերի միջև և այլն:

Արագներաց ստորգետնյա տրամվայի շինարարության շուրջ 5 տարիների աշխատանքի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ միայն ֆինանսական մեծ միջոցներ էին պահանջվում, այլ բավականին թվով որակյալ կադրեր (1977թ. առաջին կիսամյակի տվյալներով լրացուցիչ պահանջվում էր 220 հորատող բանվոր): Ամենից առաջ արագներացի շինարարությունը անհրաժեշտ էր հայտարարել ժողովրդական հարվածային կառույց (ըստ Միությունում ընդունված կարգի, նաև կառույցներին մեծ հնարավորություն էր տրվում) և կոչ անել Երիտասարդներին, կոմերիտականներին: Իրենց ակտիվ մասնակցությամբ օգնելու շինա-

րաբներին կառույցը ժամանակին շահագործման հանձնելու գործում: Արագընթացի շինարարների լավագույն աշխատանքը պետք էր լուսաբանել մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության միջոցով: Մայրաքաղաքի բնակչության համար կենսական նշանակություն ունեցող այս կառույցի համար պետք էր բացել կանաչ ճանապարհ առանց արգելքների և խոչընդոտների: Արդյոք մայրաքաղաքում, համրապետությունում հնարավո՞ր էր ստեղծել ննան պայմաններ թեկուզ այս ոչ շատ մեծ պահանջներն իրականացնելու համար:

Ինչպես ընթերցողը նկատեց, բարձրացվեցին հարցեր, որոնց լուծումը մեծ մասամբ պայմանավորված էր համրապետության, հատկապես Երևանի կազմակերպությունների գործնական աշխատանքներով: Ոչ մի խոր չափեց հանարապետությունից դուրս կազմակերպությունների կողմից ցույց տրվող օգնությունների մասին, առանց որի անգամ մեկ քայլ, մեկ մետր հորատանցման աշխատանք կատարել հնարավոր չել: Նպատակահարմար չգտնվեց դրսից եկող մեծ ու փոքր օգնությունների մասին խոսել: Մինչդեռ, պարզության համար անհրաժեշտ է արտահայտել որոշ կարծիքներ:

Արագընթաց տրանսպորտի շինարարությանը քիչ թե շատ մոտիկ կանգնած մարդիկ լավ գիտեն, որ դա հեշտ գործ չել: Միայն հանրապետության շինարարների, գործարանների ուժերով անհնարին էր ստանալ անհրաժեշտ քանակի թուշե և պողպատի հազարավոր միատիպ կամ տարբեր տեսակի հարմարանքներ, շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացման համար մերենասարքավորումներ, կատարել բանվորական քարդ ու հմուտ յուրօրինակ գործողություններ պահանջող աշխատանքներ: Առանց միութենական խիստ մասնագիտացված շինարարական կազմակերպությունների հետ միասնական ուժերի հնարավոր չել Երևանի այս շինարարությունը կատարել և ավարտել, ինչպես նախատեսված էր, 1978թ.: Վերջապես կառույցը, ինչպես որոշման մեջ գրված էր, «արագընթաց տրանսպորտ» էր, բայց ոչ մետրո: Գործի հետ առընչվող մարդիկ գիտեին, որ մինչև Երևանում մետրոյի շինարարության մասին միութենական կառավարության կողմից որոշման կայացումը, այդ 4 կմ երկարությունը, արագընթացի շինարարության անցումը, երկար ու ծիգ տարիներ կտևեն: Այնպես, որ ըստ պատշաճի և մեծ երախտագիտության զգացումով լցվելով ոչ թե

մետրոյի, այլ նրա առաջնեկը հանդիսացող արագընթաց էլեկտրատրանսպորտի շինարարությունն սկսելու համար ջանքեր գործադրողի կամ գործադրողների նկատմամբ, ասենք, որ 1972թ. Երևանում մետրոյի շինարարության հիմնադրման տարի չեր, այլ «արագընթաց տրամվայի»:

Որպեսզի ընթերցողին պարզ լինի և համոզեցուցիչ վերը նշված եղանակացությունները, բերենք ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1975թ. նոյեմբերի 11-ի N 628 որոշումում (որը վերաբերվում է ստերգետնյա արագընթաց տրամվայի շինարարությանը) արձանագրված որոշ փաստեր, այնուհետև այն հակիրծ վերլուծենք:

Այս պաշտոնական փաստաթղթում նշվում էր, որ 1972-75թթ որոշ աշխատաքննիր են կատարվել Երևան քաղաքի ստորգետնյա արագընթաց տրամվայի շինարարության ուղղությամբ: Ամբողջությամբ ավարտվել են շինարարության նախապատրաստական աշխատանքները և ընթացքային և կայարանային թունելներում իրականացվում են հորատանցման աշխատանքները: Միաժամանակ նշվում է, որ շինարարական աշխատանքների դիրքը շատ ցածր է: Պատրաստի 12 փորվածքակատներից միայն 7-ում են իրականացվում աշխատանքներ, որի հետևանքով ամսական 250-300 գծամետր հորատանցման դիմաց կատարվում է 160-180 գծամետր: Աշխատանքները դանդաղ տեմպերով են ընթանում նաև կայարանային թունելներում: Եվ այս բոլորը հիմնականում բացատրվում էր նրանով, որ անբավարար է կատարվում թուշե վահանակների մատակարարումը. պլանավորված 28 հազ. տոննա թուշե վահանակների փոխարեն 3 տարիների ընթացքում ստացվել է ընդամենը 5 հազ. տոննա:

Ստեղծված վիճակից ելնելով կառավարությունը որոշում ընդունեց Երևան քաղաքի արագընթաց ստորգետնյա տրամվայի շինարարությունն ավարտել «Բարեկամություն» կայարանից մինչև «Դամրապետության իրավարակ» կայարանը 1980թ. (մինչ այդ որոշված էր 1978թ.) այդ նպատակի համար նախագծային արժեքի 50,9 մլն ռուբլու աշխատանքներից (որից առ 1-ը հունվարի 1975թ. ծախսվել էր 17.7 մլն ռուբլի) 1976-80 թթ. նախատեսվեց իրացնել 33.2 մլն ռուբլի (1976թ. 6.8 մլն. 77-79թթ. 8-ական մլն ռուբլի, իսկ 1980թ.՝ 2 մլն 400 հազ. ռուբլի): Ըստ որոշման, ընթացքային թունելներում անցահատման աշխատանքներն

ավարտվելու էին 1978թ.: Ծրագրվել էր 1976թ. 1-ին եռամսյակում ավարտել «Բարեկամություն», «Մարշալ Բաղրամյան» հրապարակ, «Բարեկամություն» տեղամասերում, կայարաններում շինարարության համար բնակարանների իրացման աշխատանքները և այլն:

Ուշադրություն դարձնենք այն թվի վրա, որ 72-75 թթ. ընթացքում թունելագործները շուրջ 6 անգամ պակաս թուժե վահանակներ են ստացել, հետևաբար հիմնական որոշիչ աշխատանքը 6 անգամ հետ էր մնում:

Եթե հաշվի առնենք, որ վերջնական արդյունքում այս պրոցեսը թունելաշինության մեջ ամենահիմնականն է, ապա առանց որևէ չափազանցության կարելի է ասել, որ եթե նույնիսկ պլաններն ինչ-որ այլ շինությունների կառուցման շնորհիվ կատարվեին, ամբողջությամբ վերցրած գործը ետ էր մնալու շուրջ 6 անգամ: Հետևաբար թեկուզ միայն առանց այս հարցի արմատական լուծման, հաջողության մասին խոսելը բացարձակապես անհմաստ էր: Եվ պատահական չէր, որ 12 փորվածքներից միայն 7-ում էին աշխատանքներ իրականացվում: Օրական հորատանցումը կատարվում էր մի քանի անգամ պակաս և խոսվում էր աշխատանքների ամբողջական դադարի մասին: Ինչ խոսք, թունելագործները ծեռքերը ծալած չին նստում, դիմում էին ամեն միջոցի վիճակը կարգավորելու համար: Բավկական է ասել, որ երևանից բեռնատար մեքենաներ էին ուղարկվում Դնեպրոպետրովսկ, Լենինգրադ թուժե վահանակների փոքր դետալները բերելու համար: Ավելին, թուժե վահանակներով վագոնների բեռնավորմանն օգնելու համար Երևանից գործուղվում են «Դայրունելշին» տասնյակ աշխատողներ, սակայն տեղաշարժը գործե անտեսանելի էր: Միության ծեղնարկությունների միջոցով առաջին հերթին պետք էր լուծել թուժե վահանակների մատակարարնան հարցը: Այս ամբողջությամբ չլուծվեց նաև 76-77թթ.: Պարզ էր, որ նախատեսված 78թ. անցահատման աշխատանքների ամբողջական ավարտը նաև պայմաններում ցնորդ էր և հետևաբար հնարավոր չէր նույնիսկ այս 4 կմ երկարության ստորգետնյա արագընթացի շահագործումը: Բացի թուժե վահանակներից, անհրաժեշտ էր միութենական երկու հարյուրից անցնող ծեղնարկություններից ծեղ բերել սարքավորումներ, սարքեր, դետալներ, բանվորական ուժի պակասը լրացնել փորձառու բանվորներով միութենական մետրոպոլիտեններից և այլ

կազմակերպություններից, աշխատատեղերն ապահովել փոքր մեքենայացման սարքերով, գործիքներով: Չլուծված հարցերը բազմաթիվ ու բազմապիսի էին:

Միակ ելքը՝ մորիկիզացմել Միության տարածքում աշխատող մետրոշինարարներին, մատակարարնան հարցերի կարգավորմանը գուգահեր, շինարարության ավարտի վերջին տարիներին տարբեր քաղաքների մետրոշինարարներին ուղարկել երևան աշխատանքներին օգնելու համար: Մինչդեռ ննան ընդունված կարգ կար միայն մետրոշինարարության մեջ: Պետք էր միութենական կառավարությանը դիմել արագընթաց տրամվայի շինարարությունը մետրոշինարարություն դարձնելու համար: Զ՞է որ Խորհրդային Միությունում կային 16 խոչոր քաղաքներ, ինչպիսիք էին Ալմա-Աթան, Պերմը, Չելյաբինսկը, Գորկին, Նովոսիրիսկը, Կուրյիչևը, Սվերդլովսկը, Ղնեպրովետրովսկը, Ուգան, որոնց ազգաբնակչության քանակը մեկ միլիոնից ավելի էր, սակայն հիշյալ քաղաքները չունեին մետրոպոլիտեններ: Մինչդեռ, այս քաղաքների կողքին, 1 մլն ազգաբնակչություն չունենալով ցանկանում էինք Երևանում մետրո կառուցել, տեղյակ լինելով, որ ինչպես արտասահմանում, այնպես էլ Խորհրդայինն Միությունում ընդունված էր մետրոշինարարություն ծեղնարկել, ոչ պակաս 1 մլն ազգաբնակչություն ունեցող քաղաքներում: Այս սահմանափակումները բացառում էին Երևանում մետրո կառուցելու պաշտոնական թույլտվություն ստանալու հարցը: Ասենք թե 1980թ. կառուցվեր 4 կմ երկարության ստորգետնյա արագընթաց տրամվայը: Կրեքանա՞՞ր քաղաքի կենտրոնով անցնող մի հատվածի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը ու դրանով ամեն ինչ կավարտվէ՞ր: Մինչդեռ այդպիսի գուցե և ոչ պակաս ծանրաբեռնված փողոցների թիվը չէր: Եվ ամենահիմնականն այն էր, որ ցրված Երևանին «կապել» էր պետք: Խև քաղաքը տարեցտարի ընդլայնվում էր: 70-ական թվականների երկրորդ կեսից Երևանում շահագործման էր հանձնվելու միջինը 450 հազար ք.մ բնակտարածություն: Բերենք միայն քաղաքի մի հատվածի կառուցման և վերակառուցման շնորհիվ ազգաբնակչության աճին վերաբերվող թվեր: Ըստ Երևանի հատակագծի, միայն Նոր Նորքի բնակելի քաղամասում, նրա զանգվածների կառուցման ամբողջական ավարտից հետո, բնակվելու էին 180 հազ, Նոր Ավանում 135 հազ., իսկ Քանաքեռում 50 հազ. բնակիչ: Մեծ քափով

մայարաքաղաքն իր գարգացումն էր ապրելու նաև մյուս ուղղություններով: Այս բոլորին համընթաց առաջ էր գալու ազգաբնակչության տրանսպորտային նորմալ սպասարկման պրոբլեմը: Դետևաբար ապագան ևս թելադրում էր Երևանում սկսել մետրոպոլիտենի շինարարությունը իր բոլոր կանոններին համապատասխան: Մինչդեռ այդ «կանոնները» մեր օգտին չէին, իիշենք 1 մլն ազգաբնակչության առկայության պարտադիր օրենքը: Իսկ Երկրաբանական «ճեղքվածքնե՞րը», մակերևույթների բարձրությունների արագ փոփոխումը նույնիսկ մի քանի տասնյակ մետր հեռավորությունների վրա մայրաքաղաքի հարավային բանվորական թաղամասի և ասենք Նոր Նորք թաղամասի մակերևույթների բարձրության տարբերությունը չուրջ 450 մ և այլն: Այս բոլորը հուշում էին քաղաքաշնարարներին, նախագծողներին, գիտնականներին, որ պետք է փոխել այս ուղղությամբ աշխարհում ստեղծված «դրվածքը», անհրաժեշտ է ճեղքել մասնագետների մեջ կարծրացած հոգեբանական այն պատճեզը, որ մետրո կառուցելու համար բոլոր տեղերում, աշխարհի բոլոր ծայրերում կա «ստանդարտ» կայուն դրվածք մեկ մլն և ավելի ազգաբնակչություն: Ինչպես նշվել է, «Երևաննախագիծ» ինստիտուտը ծերնամուխ էր եղել Երևան քաղաքի ուղղության սպորտի բոլոր տեսակների գարգացման կոմպլեքսային սիեմա կազմելու աշխատանքներին: Արագնթաց տրամվայի շինարարությունը մետրոպոլիտենի վերածելու համար Մոսկվայում իիմնավորելու նպատակով լրացուցիչ փաստարկներ էին անհրաժեշտ:

... «Դայպետորաննախագիծ» ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Դանդուրովին իր մոտ է հրավիրում ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրջյանը (այդ մասին ճարտարապետն է անձամբ ինձ պատմել): Նրանց գրույցը Երկար է տևում: Քարտուղարն իր կարծիքն է արտահայտում այդ պատճեզը վերացնելու, մետրոյի շինարարության կարգի սահմաննան արմատական փոփոխության մասին: Նախագծային ինստիտուտի տնօրենին համեմատություններով ապացուցում էր, որ իրոք մայրաքաղաքում մետրոպոլիտեն կառուցելու համար նորովի և ճիշտ, կյանքից բխող մոտեցում է անհրաժեշտ, առանձնահատուկ Երևանները պետք է համեմատվեն աշխարհի շատ քաղաքներում եղած մետրոների կառույցների հետ:

Ծննդում են մտքեր, առաջ են գալիս հարցի լուծման տարրեր մոտե-

ցումներ: Պետք էր նախագծողների ուժերով ապացուցել, որ Երևանում մետրոպոլիտենի կառուցումը ազգաբնակչության թվաքանակով թեև չի համապատասխանում «համաշխարհային ստանդարտին», բայց այս տեղ ստորգետնյա տրանսպորտի կարիքն ավելի շատ է և կառուցումը անհրաժեշտ, քան 1 մլն և ավելի ազգաբնակչություն ունեցող քաղաքներում:

...Ի հակակշիռ եղած սկզբունքի, «Դայպետորաննախագիծ» և «Երևաննախագիծ» ինստիտուտների նախագծողները տալիս են մետրոպոլիտենի կառուցման անհրաժեշտության նոր սահմանում: Դրանից ելնելով այնպիսի քաղաքներում ինչպիսիք են Թբիլիսին, Բաքուն, Երևանը, Միջին Ասիայի մի քանի քաղաքները և այլն, մետրոպոլիտենի շինարարության անհրաժեշտությունը և կարևորությունը, որպես պարտադիր օրենք, ոչ թե պետք է բխի ազգաբնակչության թվաքանակից, այլ հաշվի պետք է առնվեն տեղի ունիեթքը, նեղ ու խորը հովհաններն ու կիրճերը, բազմազան լանջաֆտները, պատմական արժեք ներկայացնող կառույցների պահպանումը, կլինայական պայմանները, նույնիսկ տեղի բնակչիների ստվորույթները, ազգային առանձնահատկությունները: Երևանի բարդ ունիեթքի կտրտվածությունը և ծկի բազմազանությունը, գումարած քաղաքում գետնի մակերևույթների արագ փոփոխությունը՝ մինչև 500 մետր, բացարձակորեն այլ էր և բոլորովին անհամեմատելի այլ քաղաքների հետ: Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս, ուր կառուցվել էր մետրո, չկար Երևանի հետ համեմատելի մի քաղաք, որտեղ ունիեթքն այդքան բարդ լիներ և քաղաքային տրանսպորտի տրամվայի, տրոլեյբուսի, ավտոբուսի շահագործման համար այդքան անբարենպաստ բնական պայմաններ: Մի շարք մայրությներում փողոցների թեքությունն անցնում է վեց, իսկ որոշ տեղերում նույնիսկ 9-10 աստիճանից: Առանձին ճանապարհների թեք վայրէջքներում կառուցվել են մեքենաները «որսալու» կետեր, որոնք ստվորաբար ընդունված են կիրառել Երկարուղային տրանսպորտի համար:

Եղան նաև այլ հիմնավորումներ, որոնցով ևս պարզաբանվեց Երևանում մետրոպոլիտենի կառուցման անհրաժեշտությունը: Այսպես մայրաքաղաքի այնպիսի շրջաններում, ինչպիսիք են նորքի բնակելի գանգվածը, Ավանը, Շահումյանի շրջանը, որոնք տեղավորված են կիրառել Երկարուղային տրանսպորտի համար:

տարրեր սարահարթերի վրա կամ կտրված են կենտրոնից բնական արգելքներով, ինչպիսին Յաղաղանի ձորն է, բարդանում է տրանսպորտային նորմալ սպասարկումը: Մեկ այլ հանգանանք ևս. ին Երևանի պատմական կառույցները իրենց դասավորությամբ հնարավորություն չեն տալիս ստեղծել ժամանակակից վերգետնյա տրանսպորտային ցանց: Տրանսպորտի նորմալ աշխատանքի ապահովման վրա իրենց ազդեցությունն են թողնում կլիմայական պայմանները: Երևանին բնորոշ է շոգ ամառը, հաճախ նաև ցուրտ ձմեռը և այս պայմաններում մայրաքաղաքի շատ շոշաններում ծովի մակերևույթից 1000 մ. բարձր լինելը, մայրուղիների թեքությունները, աղեղնածն ծուռ փողոցները դժվարացնում են վերգետնյա տրանսպորտի նորմալ աշխատանքները, տրանսպորտի տեխնիկական սպասարկումը: Մեքենաներն աշխատելով գերեռնված, մքնուրության բարձր ջերմաստիճանի տակ, անթույլատրելի քանակով օգտագործված գազ են արտանետում օդ՝ վտանգ պատճառելով շրջակա միջավայրին:

Այս բոլորը խորությամբ ուսումնասիրելուց հետո «Հայպետտրանսախագիծ», «Երևաննախագիծ» ինստիտուտների նախագծողները, ինժեներները հանգեցին մի շարք հիմնավոր եզրակացությունների: Պահանջվեց կատարել որոշակի ուղղումներ՝ «բնակչության տեղաշարժի» և «գնացքների միջին հեռավորության» հաշվարկային մեծությունները որոշելիս: Ազգաբնակչության ուղևորահոսքը և գնացքների միջին հեռավորությունը որոշելիս, ՀՍՍՀ պետական հաշվողական կենտրոնը, «Երևաննախագիծ» և «Հայպետտրանսախագիծ» ինստիտուտների մասնագետները եկան հետևյալ եզրակացության: Մոսկվայի մետրոպոլիտենում ուղևորների փոխադրման գնացքների միջին հեռավորությունը կազմում է 8 կմ, իսկ հաշվարկները ցույց տվեցին, որ Երևանում այն կազմում է 4 կմ: Միաժամանակ Երևանի ազգաբնակչության ուղևորահոսքը բարձր է միութենական միջինից: Դաստատվեց, որ Երևանում ռելիյեֆի բարդ պայմաններում քաղաքի հին կառույցները, բնակիմայական պայմանները և այլն թելադրում են աշխատեցնել մեծ քանակությամբ գնացքներ, կարծ հեռավորությունների վրա: Այս բոլորը հնարավորություն տվեց ապացուցել, որ ընդունված հաշվարկային չափի մեջ պետք է փոփոխություն նոցնել և մետրոպոլիտենի ուղևորահոսքի 1 կմ գծի վրա սպասելիք բերնվածությունը Երևանի համար կլինի 10-12 մլն.

ուղևոր մեկ տարում, միության քաղաքների համար ընդունված 6-8 մլն, մարդու դիմաց:

Մեր մասնագետների, գիտնականների հաշվարկները համոզիչ էին և հուսադրող, որ բոլոր ատյաններում կապացուցվի իրական վիճակը, հետևաբար Երևանում կլինի մետրոպոլիտեն...

Այս փաստաթղթերից բացի «Հայպետտրանսախագիծ» ինստիտուտի կողեւկտիվն ի մի թերեց ապագայուն մի քանի տարիների ընթացքում մետրոպոլիտենի համար կատարվելիք աշխատանքները: Ամբողջությամբ ավարտվեցին Երևանի ապագա մետրոպոլիտենի առաջին հերթի տեխնիկական նախագծերը, որով նախատեսվեց «Բարեկամություն» կայարանից մինչև «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանը 10,5 կմ Երևանություն: Պատրաստ էին այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ էին հանրապետության դեկավարությանը վերգետնյա մետրոպոլիտ լուծման հետ առնչվող, մայրաքաղաքի համար կենսական նշանակություն ունեցող հարցը լուծելու համար:

Ինչպես ասվել է, երջանիկ պատահականությամբ խորհրդային շրջանում էին գտնվում «Հայպետտրանսախագիծ» ինստիտուտը և «Հայթունելշին» վարչությունը: Պարզ է, նրանց դեկավարներն ամենօրյա կայի մեջ էին հանրապետության դեկավարության հետ, յուրաքանչյուր նորություն իրենք ավելի շուտ էին տեղեկանում: Նրանց հետ հաճախակի շփվելով, տեղեկանում էինք, որ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Ղեմիրյանը և հանրապետության նախարարների խորհրդի նախագահ Ֆադեյ Սարգսյանը հաճախակի մեկնում են Մոսկվա, հաճապատասխան նախարարություններում և գերատեսչություններում, խոսում, իհնականում էին Երևանի մետրոպոլիտենի կառուցման անհրաժեշտության հարցը, լինում էին նաև ԽՄԿԿ Կենտկոմի և ԽՍՀՄ կառավարության դեկավարների մոտ: Այս գործի բարեհաջող ավարտը արդեն տեսանելի էր և ահա թե ինչու: Հայաստանում սկզբանական շրջանում քչերը գիտեին Կարեն Ղեմիրյանի և ԽՍՀՄ նախարարների խորհրդի նախագահ Ալեքսեյ Նիկոլայի Կոսիգինի առաջին հանդիպման մասին: Միության կառավարության դեկավարի այն ծանրակշիռ կարծիքը, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին քարտուղարը ոչ միայն խելացի նախագետ է, այլ նաև տաղանդավոր դեկավար է: Մեկ-երկու տարվա ընթացքում ԽՄԿԿ Կենտկոմում

բարձրացավ Կարեն Ղեմիրճյանի վարկանիշը և նրա արած ծանրակշիռ և արժեքավոր առաջարկություններն ու հիմնավորումները, բարձրացված հարցերը հավանության էին արժանանում: Եթե երարար երևանում մետրոպոլիտենի շինարարության անհրաժեշտության մասին քննարկումները և հիմնավորումները չեն կարող իրենց դրական արդյունք չունենալ: Այդպես էին մտածում շատերը և չսխալվեցին: Ղեկավար անհատի հեղինակությունը միշտ իր որոշիչ դերն է կատարել: Եվ ամսներ շարունակ այս ուղղությամբ տարվող աշխատանքը պետք է իր պտուղները տար:

Ահա թե իր հիշողություններում ինչ է գրում Ֆադեյ Սարգսյանը.

«Նախարարների խորհրդում աշխատելու առաջին իսկ օրերից սկսած հարկ եղավ Կ.Ս. Ղեմիրճյանի հետ միասին գրադպել մետրոպոլիտենի շինարարության հարցերով: Այդ ժամանակ մեկ միլիոնից պակաս բնակչություն կար երևանում, և մետրոպոլիտենի շինարարություն չէր թույլատրվում: Մեզ հարկ եղավ շատ անգամ լինելու Ա.Ն. Կոսիգինի մոտ, պետպանում, տարբեր նախարարություններում...»<sup>1</sup>:

Եվ ահա մաքառման արդյունքը: Երևանի արագընթաց տրամվայի շինարարությունը մետրոշինարարության վերափոխությունը անհրաժեշտությունը պարզելու նպատակով 1977թ. օգոստոսին կազմակերպվեց ԽՍՀՄ պետական և պետշինի երսպերտային հանձնաժողով, որի մեջ ներգրավվեցին ԽՍՀՄ մետրոպոլիտենի հեղինակավոր մասնագետներ: Ուսումնասիրելով երսպերտին ներկայացված հիմնավոր նյութերը և տեղում ծանոթանալով քաղաքի կենտրոնական տեղամասի ստորգետնյա խորը գծերի շինարարության ընթացքին, հանձնաժողովը եկավ այն եզրակացության, որ Երևանի կենտրոնական մասում խորը թունելների շինարարությանը հատկացված կապիտալ ներդրումների արդյունավետ օգտագործման և դեպի հարավային արդյունաբերական շրջանը աշխատավորների մասսայական տեղափոխումների պողորեմի շուտափույտ լուծման համար անհրաժեշտ է արագընթաց տրամվայի կառուցման շարունակությունը մետրոպոլիտենի տեսքով:

Արագընթաց տրամվայի համեմատությամբ մետրոպոլիտենը օգտվում է արագության և շահագործման բարձր բնութագրով, ինչպես նաև

թողումակության նշանակալից պաշարով, որոնք թույլ կտային հուսալիորեն ու հարմարավետության բարձր մակարդակով ապահովել ուղևորների անհրաժեշտ տեղափոխությունները նաև հեռանկարում 2000թ հետո: Երևանում մետրոպոլիտենի շինարարությունը, բացի վերը նշված հիմնավորումներից, ունի մի շարք այլ առավելություններ ստորգետնյա արագընթաց տրամվայի համեմատությամբ: Ուղևորների համօրյակային վերլուծությունը ցույց է տալիս, որ արագընթաց տրամվայի տարբերակով ուղևորների տեղափոխումը նեկ ուղղությամբ «պիկ». Ժամերին հասնում է 16-18 հազ. ուղևորի, որը բավականին ցածր է սպասվող աճից 25-30 հազ. ուղևորից: Այդ պատճառով մի քանի տարի հետո լիովին կսպառվեր արագընթաց տրամվայի փոխադրաունակությունը և անհրաժեշտությունը կառաջանար այդ գիծը վերասարքավորել մետրոպոլիտենի: Որի համար կպահանջվեցին նշանակալի լրացուցիչ կապիտալ ներդրումներ:

1. Ֆադեյ Սար սյան «Կյանքի դասերը» (77 «Գիտության հրատարակչություն», Երևան 2000թ. էջ 84)

# ԷԶԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՅԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ԿՅԱՆՔԻՑ

## ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վերջապես ծնունդ առավ հանրապետության մայրաքաղաքի մետրոպոլիտենի շինարարության իրականացման համար պատմական կարևորագույն նշանակություն ունեցող մի փատութուղբ: 1977թ. հոկտեմբերի 6-ին ԽՍՀՄ կառավարությունը որոշում ընդունեց Երևանում սկսել մետրոպոլիտենի շինարարությունը: Մայրաքաղաքի մետրոպոլիտենի շինարարությունն իրականացնող կազմակերպության պատվիրատուի ֆունկցիան դրվեց ԽՍՀՄ ճանապարհային շինարարության նախարարության «Գլավմետրոպոլիտենի» վրա, իսկ մետրոպոլիտենի շինարարության գլխավոր կապալառու ճանաչվեց ԽՍՀՄ տրանսպորտի շինարարության նախարարության «Գլխունելմետրոշինի» «Հայրունելշինը»: Այսպիսով սկսվում էր Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի ազգաբնակչության, տրանսպորտային սպասարկման համար մի նոր դարաշրջան, որն իր որոշիչ խոսքն էր ասելու քաղաքի գլխավոր հատակագծի ձևավորման, նրա սոցիալ տնտեսական նորովի զարգացման գործին:

Երկար ու ծիգ ամիսներ պահանջվեցին այս հիմնավոր փաստաթուղթը ստանալու համար: Այդ վճռորոշ փաթեթն ստեղծվեց հանրապետության նախագծային, շինարարական, տրանսպորտային և մի շարք այլ հիմնարկ-ծեռնարկությունների կողեկտիվների լարված և քրտնացան աշխատանքի շնորհիվ: Սակայն ստեղծված փաստաթղթերը հիմք ծառայեցին, և միութենական կառավարության կողմից վերջնական որոշումը ընդունելուց հետո պետք էր ստեղծել նաև գործարկման հիմնարար ծրագրերը՝ յուրաքանչյուր օղակի, հատվածի համար, ապա կայացնել համարի շինարարության ավարտին համապատասխան ստույգ որոշումը: Ահա թե ինչու, միութենական կառավարության որոշումից հետո բազմաթիվ կազմակերպություններ և հիմնականում կառուցող «Հայրունելշինի» հնժեներատեխնիկական անձնակազմը, «Երևան-նախագիծ» և «Հայպետրանսնախագիծ» հնստիտուտների կողեկտիվները Հայաստանի կոմիտսի և կառավարության հանձնարարությամբ

բժախնդրորեն սկսեցին ուսումնասիրել մետրոպոլիտենի շինարարության իրականացման հետ կապված բոլոր խնդիրները, Երևանի ստորգետնյա աշխատանքների յուրահատկությունները, ինչպես նաև մետրոպոլիտենի կառուցման հետ կապված հանրապետության (նաև հանրապետությունից դուրս) բոլոր կազմակերպությունների հնարավորությունները: Այս բոլորն իմի բերելով, հիմնավոր փաստաթուղթը ստեղծվեց մայրաքաղաքի մետրոպոլիտենի շինարարության առաջին հերթի համալիր աշխատանքների իրականացման և ավարտի մասին: Մրանք հիմք հանդիսացան հետագայում ՀԿԿ Կենտրոնի և ՀՍԽՀ Նախարարների խորհրդի համատեղ որոշումը կայացնելու համար:

Որպես ականատես չեմ կարող չխսուել «Հայրունելշին» և «Հայպետրանսնախագիծ» հնստիտուտների կոլեկտիվների սրտացավ և բարեխիղդ մոտեցումների մասին:

Գլխավոր մասնագետներից շատերը, բաժնի վարիչները, ճարտարապետները, նախագծող և կառուցող կազմակերպությունների ղեկավարները, տաճանակիր աշխատանք կատարեցին շինարարության ողջ ընթացքում նախագծողների և շինարարների փոխհամաձայնեցված գործողությունների ժամկետները ճշգրտելու և դրանք ժամանակին կատարելու համար, երբեմն աշխատելով նույնիսկ օրը 20 ժամ, և այսպես շուրջ երեք ամիս, մինչև Հայաստանի կուսակցությունը և կառավարությունը համատեղ որոշում ընդունեցին Երևանի մետրոպոլիտենի շինարարության իրականացման մասին: (Անհրաժեշտությունից ելնելով հաճախ, հարկ է եղել նոյն տեմպով աշխատանքները շարունակել նաև հետագա տարիներին): Բազմաթիվ անգամ այդ օրերին, շրջկոմի առաջին քարտուղար Պավել Սաֆյանի հետ եղել ենք «Հայրունելշին» վարչությունում, ինչպես նաև «Հայպետրանսնախագիծ» հնստիտուտում: Անքուն գիշերներ անցկացնողի հայացքով, աշխատողները մեծ ոգևորությամբ ասում էին, որ լարված աշխատանքներ են կատարվում նաև հանրապետության կառավարության շատ բաժիններում, պետականում, նյութատեխնիկական մատակարարման կառուցմերում, այլ կազմակերպություններում և հատկապես Երևանի մաթեմատիկական մեթնաների գիտահետազոտական ինստիտուտում: Բոլոր աշխատանքների կողրդինացման պարտականությունը իր վրա էր վերցրել Երևանի մետրոպոլիտենի տնօրինությունը: Այս բոլոր գործողություննե-

որ դեկավարում էր հանրապետության ճանապարհների շինարարության և շահագործման նախարար Յանան Արամի Հայրապետյանը, որն իր աշխատանքային անսպառ եռամդով Հայաստանի ճանապարհին արարության մեջ մեծ հետք է թողել և արդեն մեկ տարուց ավելի էր, ինչ առաջ էր քաշվել և դեկավարում էր հանրապետությունում իրականացվող շինարարական բոլոր կազմակերպությունների աշխատանքները՝ արդեն որպես ՀՍՍԴ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ:

Եվ ահա ծնվեց Երևանի մետրոպոլիտենի շինարարության իրականացման առաջին փաստաթուղթը: 1978թ. հունվարի 24-ին ընդունվեց ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍԴ նախարարների խորհրդի համատեղ որոշումը «Երևան քաղաքի մետրոպոլիտենի շինարարության իրականացման միջոցառումների մասին»: Իրոք, այն դարձավ մայրաքաղաքի հետագա վերակառուցման, Երևանի ազգաբնակչության տրանսպորտային սպասարկման խոշոր հիմնարար փաստաթղթերից մեկը, որն իրավամբ կարելի է համարել պատմական: Միավաճ չենք լինի, եթե ասենք, որ ինչպիսի բարձրորակ և գիտակ մասնագետ էլ լիներ իր խստապահած մասնագիտական մոտեցմամբ, կարդալով այս գործնական փաստաթուղթը, չեր կարող գտնել մի հարց, որի կարիքը գգացվեր և այն շոշափված չլիներ ապագա մետրոպոլիտենի շինարարության նորնալ աշխատանքն ապահովելու համար: Խորը և բազմակողմանի ուսումնակիրությունները, ընդունված գործնական և մարդակրկիտ որոշումը հանրապետությունում տիրող բարձր կատարողական կարգապահությունն ու, ամենակարևորը ժողովրդի մեջ առաջացրած հայրենասիրական մեծ ալիքը հուսադրում էին, որ Երևանի մետրոպոլիտենի շինարարությունը կիրականացվի նշված ժամկետներում: Այդ որոշումը բոլորիս հավատ էր ներշնչում, որ մետրոպոլիտենի շինարարությունը կղառնա իրոք համաժողովրդական կառույց և դրանով իսկ կլուծվի ամենանեղ հարցերից մեկը՝ կառույցը կապահովվի անհրաժեշտ բանվորական ուժով ու Երևանում մետրոյի շինարարության ավարտը կիրականացվի նախատեսված ժամկետում (ծիշտ է, նոր բողարկումը տեղի ունեցավ ծրագրվածից երկու ամիս ուշ, սակայն այն իր օրենքամբ պատճառներն ուներ, ստորև հնարավորին չափ այդ կիմմավորվի):

Նախ, որոշվեց Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի, առաջին

հատվածի շահագործումն իրականացնել 1980թ. վերջերին: Պարզ էր, որ նրա գործարկման իիմնական ծանրությունն ընկնելու էր «Հայթութելշին» վարչության, «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի և որպես բոլոր կազմակերպությունների աշխատանքները կոորդինացնող, սպասարկող կազմակերպություն մետրոպոլիտենի շինարարության տնօրինության վրա: Յենց այս երեք կազմակերպություններին հաճարարվեց համատեղ խորությամբ ուսումնասիրել մետրոպոլիտենի շինարարությանը մասնակցող բոլոր կազմակերպությունների առաջարկություններն ու հնարավորություններն այն հաշվով, որպեսզի նրանց ուժերն ավելի արդյունավետ օգտագործվի, համալիրի բողարկումն ապահովվի 1980թ և լրացուցիչ առաջարկությունները կառավարությանը ներկայացվեն մինչև 1978թ առաջին եռամյակը: Նրանց կողմից տրված նյութերի քննարկումից և հավանության արժանանալուց հետո կայացվելիք որոշումը պետք է ելակետային լիներ մետրո կառուցող և դրա հետ առնչվող բոլոր կազմակերպությունների համար: Նրանց հիմնական պարտականություններից էր նաև 1978-1980թթ մետրոյի շինարարության ողջ ընթացքի համար շիննոնտաժային աշխատանքների օրացույցային գրաֆիկ կազմելը: Այս կարևոր հանձնարարության կատարմանը մեծապես օգնեց Երևանի նաբեճատիկական մեթենաների գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվը, որի ուժերով մշակվեց աշխատանքների իրականացման ցանցային գրաֆիկը ըստ տարիների, ամիսների, օրերի, որը մետրոյի շինարարության ողջ ժամանակահատվածում հանդիսացավ աշխատանքների հսկողության կարգավորման խևական բարոնետը:

Երևանի մետրոպոլիտենի շինարարության աշխատանքների հաջող ընթացքը մեծապես պայմանավորված էր նաև Երքաղկոմի և Երքաղիսորիդի գործկոմի կողմից մետրոյին հոգաբերի լուծման գործում ծկուն և արագ քաղաքականության իրականացմամբ, լուրջ ուշադրություն դարձնել կառուցվող կայարանների համար պայմանները ստեղծելու հարցին: Այդ նպատակին հասնելու համար առաջնահերթ խնդիր էր ստեղծել նախագծով նախատեսված շինհրապարակներ, նախապես իրացնել այդ տարածքներում եղած բնակելի շենքերը, տեղի բնակչներին ապահովելով նոր բնակարաններով, և մյուս կառույցները: Բանվորական ուժի պակասը զգացվում էր բոլոր տեղանասիրում,

մինչեռ կարծ ժամանակահատվածում նրանց թիվը պետք էր կրկնապատկել, եռապատկել: Բանվորական ուժի հավաքագրման նպատակով որոշվեց մետրոպոլիտենի շինարարության աշխատողներին առաջին հերթին ապահովել կոռպերատիվ բնակարաններով: Բացի այդ, 1978թ. հենց առաջին կիսամյակից, կենտրոնացված կարգով, մետրոշինարարների համար բնակելի շենք կառուցելու նպատակով քաղաքում համապատասխան տեղ հատկացվեց: Այս հարցի հետ միասին մետրոպոլիտենի շինարարության հաջող ավարտն ապահովելու համար որոշմամբ բոլոր ուղղություններով բազմաթիվ ու բազմապիսի խնդիրներ էին իրականացվում Երքաղխորհրդի գործկոմից կողմից:

Գործի հաջողությունը մեծապես պայմանավորված էր «Հայպետրանսախագիծ» ինստիտուտի կոլեկտիվի բարեխիլծ աշխատանքով: Արդեն միութենական կառավարության որոշմամբ՝ հնարավորություն ստեղծվեց մետրոպոլիտենի շինարարության ծրագրման համար լայն թևեր բացել Երևանի տարբեր ծայրամասերում աշխատանքներ ծավալելու համար: Ահա թե ինչու Հայաստանի կուսակցության և կառավարության վերոհիշյալ որոշմամբ՝ նախագծային կազմակերպության առաջնահերթ խնդիրը համարվեց մայրաքաղաքի հարավային արդյունաբերական շրջան ձգվող մետրոպոլիտենի նոր գծի տեխնիկական նախագծի մշակումը, որը մինչև 1978թ վերջը պետք է ավարտվեր և ներկայացվեր կառավարության հաստատմանը: Միաժամանակ նպատակահարմար գտնվեց ինստիտուտի կողմից կատարել շինարարության բոլոր հանգույցների, սարքերի մանրազնին ծախսերի հիմնավորված հաշվարկ: «Պարտավորեցվեց նաև մինչև 1978թ առաջին եռամյակի վերջը տալ «Հանրապետության հրապարակ» կայարանից մինչև «Հոկտեմբերյան» («Չորավար Անդրանիկ») կայարանն ընկած հատվածի ընթացքային բունելների բանվորական գծագրերը: Ինչ խոսք, կոլեկտիվը, և իր ծանրաբեռնվածության, և իր առանձնահատկություններից ելելով, ի վիճակի չեր իրականացնել ամեն տեսակի նախագծային աշխատանքներ: Ահա թե ինչու հանձնարարվեց «Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվին «Հայպետրանսախագիծ» ինստիտուտի հետ պայմանագրային սկզբունքներով, մինչև 1978թ. սեպտեմբերն իրականացնել քաղաքի «Հանրապետության հրապարակ», «Հայէկտրոգրժարան» («Գարեգին Նժդիկի հրապարակ») երթուղու վերգետն-

յա և ստորգետնյա կոմունիկացիաների տեղափոխման, ինչպես նաև այդ տեղամասերում քաղաքային արտաքին ցանցերի նախագծային աշխատանքները: Այս կազմակերպությունների կողմից կապի տան, մետրոպոլիտենի վարչական շենքի նախագծային աշխատանքները ժամանակին ավարտելու նպատակով Երքաղխորհրդի գործկոմին հանձնարարվեց մեկ ամսվա ընթացքում որոշել շինարարության իրականացման համար տեղ հատկացնելու հարցը:

Նախագծային այս երկու կազմակերպությունների առաջնահերթ խնդիրներից էր նաև կարծ ժամկետում, մինչև 1978թ սեպտեմբերի 1-ը, տալ վերգետնյա և ստորգետնյա մետրոյի կայարանների, ինչպես նաև նրանց նախարարանների աշխատանքների նախագծային, նախահաշվային փաստաթղթերը: Նախատեսվեց կայարանների նախագծնան համար հայտարարել մրցույթ: Ժամանակակից ճարտարապետական նվաճումներին համապատասխան նախագծեր իրականացնելու, նրանցում հայկական ժողովրդական ստեղծագործությունները լայնորեն օգտագործելու համար առաջարկվեց Հայաստանի ճարտարապետների, նկարիչների միություններին լայնածավալ ու ակտիվ մասնակցություն ունենալ, ճարտարապետական բարձր ճաշակի նախագծումներով մասնակցել մրցույթին:

Նախատեսվեց հանրապետության արդյունաբերության շինարարության նախարարության կողմից մի շարք շինարարական կազմակերպությունների հետ հաճատեղ 1979թ ավարտել և շահագործման հանձնել «Հայքունելշին» վարչության արտադրական բազան, Ենթակապալառու կազմակերպության սկզբունքով կատարել դեպոյի շինարարությունը, կապի տունը, մետրոպոլիտենի աղմինիստրատիվ շենքը և, որ ամենակարևորներից էր, մետրոյի շինարարության ամենանեղ տեղերից մեկը վերացնելու նպատակով՝ 1979թ. կազմակերպել Երկարբետնյա կոնստրուկցիաների արտադրությունը 10 հազ. խ.մ տարեկան թողարկման հզորությամբ:

Ինչպես հանրապետության, այնպես էլ միութենական հարյուրավոր կազմակերպություններից մետրոպոլիտենի համար նախատեսված ամեն տեսակի հումքի, նյութերի, սարքավորումների մատակարարման և դրանք ժամանակին, առանց պարապուրդի մետրոշինարարներին հասցնելու գործում մեծ էր ԽՍՀՄ հաղորդակցության ժամապարհների

Երևանի երկաթուղային բաժանմունքի դերը: Ահա թե ինչու այս ուղղությամբ ևս անխափան աշխատանք պահովելու համար բաժանմունքին կոնկրետ հանձնարարություններ տրվեցին: (Ամենք նաև, որ բաժանմունքի պետ, հմուտ կազմակերպիչ ու դեկանավար Յամբարձում Ղանդիշանի անձնական հետևողական աշխատանքի շնորհիվ տարիների ընթացքում չարձանագրվեց մետրոշինարարներին հասցեագրված բեռ ժամանակին տեղ չհասցնելու կամ ծախողելու և ոչ մի դեպք: Այն մատակարարողի կողմից բեռնվելուց հետո գտնվում էր մեր երկաթուղայինների ամենօրյա հսկողության տակ):

Մետրոշինարարներին անխափան էլեկտրակերգիա մատակարարելու, հեռախոսային և ռադիոկապով պահովելու, շինարարությանն անհրաժեշտ ավտոմեքենաներ տրամադրելու, աշխատանքային շուրջօրյա բուժսպասարկում պահովելու, մայրաքաղաքից և հանրապետությունից դուրս հատուկ մասնագետներին Երևան հրավիրելու և նրանց բնակարաններով պահովելու, մետրոպոլիտենի աշխատանքներին նյութատեխնիկական անխափան մատակարարում իրականացնելու և այլ հարցերի ուղղությամբ կառավարության որոշմանը հանձնարարություններ տրվեցին հանրապետության տարբեր նախարարություններին և գերատեսչություններին: Հանձնարարվեց Համես-ին մետրոյի շինարարների հանգստի և բուժման կազմակերպման, ինչպես նաև աշխատողների երեխաններին պիոներական ճամբարներ ուղարկելու, նրանց հանգստի կազմակերպման համար տրամադրել լրացուցիչ սանատորա-կուրորտային ուղեգործեր: ՀՍՍՀ Նախարարների խորհրդի հաշվեկշից Աշտարակի պիոներ պալատը պետք է տրվեր «Հայրունելշին» վարչությամբ և այլն: Հանձնարարությունները շատ էին, կոնկրետ ըստ ամիսների, օրերի, սակայն ընթերցողին շատ չժամբարենելու համար կանգ առնենք ևս մեկ-երկու հարցի վրա:

Մետրոպոլիտենի շինարարությունը մի քանի հատուկ մասնագիտությամբ բանվորական կադրերով պահովելու համար հանձնարարվեց հանրապետության պրոֆեսիոնալ տեխնիկական կրթության պետական կրնակին երեք ամսվա ընթացքում վերանայել իրենց համակարգում մասնագետների պատրաստման ցանկը և մետրոպոլիտենին անհրաժեշտ մասնագետների, բանվորների պատրաստման գործը պահովելու համար առաջարկություններ ներկայացնել կառավարու-

թյանը: Եվ երկրորդ հանձնարարվեց հանրապետության բարձրագույն և միջնակարգ մասնագիտության կրթության նախարարությանը արագ կերպով ծեռնամուլս լինել մետրոպոլիտենին հատուկ բարձրագույն կրթությամբ մասնագետներ պատրաստելու խնդրին: Այդ նպատակով առաջարկվեց 1977-78 թթ. ուս. տարում Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետի հիդրոտեխնիկայի և ճանապարհային շինարարության մասնագիտությունների երրորդ կուրսի ուսանողներին վերապրոֆիլավորել «Կամուրջներ, թունելներ և մետրոպոլիտեն» մասնագիտության: Բացի այդ, նպատակահարմար գտնվեց միութենական բարձրագույն միջնակարգ մասնագիտության կրթության նախարարության կողմից Հայաստանի համար տրված տեղերի դիմաց հանրապետությունից դուրս բարձրագույն ուսումնական հաստատություններում արտամրոցության կարգով ընդունել մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերող հատուկ մասնագիտությամբ սովորել ցանկացող երիտասարդներին: Նաև խնդրվեց Միության բարձրագույն և միջնակարգ մասնագիտության կրթության նախարարությանը 1979թ. տարբեր բուհեր ավարտած «Մետրոպոլիտենի շինարարություն և շահագործում» մասնագիտությամբ ավարտածներին ըստ ցանկության գործուղել Երևան մետրոշինարարությունում աշխատանքի անցնելու համար:

Անհրաժեշտ էր ընդմիջտ լուծել մետրոպոլիտենի շինարարության անենանել տեղը թուժ վահանակների քանակի պահովումը, ինչպես նաև հանրապետությունում գտնվող միութենական նախարարությունների ենթակա ծեռնարկությունների միջոցով սկսել դրանց փոխարինող երկարթետոնյա կոնստրուկցիաների թողարկումը: Ահա թե ինչու, ՀԿԿ Կենտկոմը և ՀՍՍՀ Նախարարների խորհրդության խնդրեցին ԽՍՀՄ հաստոցաշխնության և գործիքաշխնության նախարարությանը Զարենցավանի «Ցենտրալիտ» գործարանում և «Արմվոդինոդւստրիա» արտադրական միավորումներ սկսած 1978թ առաջին ամիսներից, պլանավորել Երևանի մետրոյի շինարարության համար թուժ վահանակների արտադրությունը տարեկան համապատասխանաբար 1000 և 200 տոննա թողարկմանք: Խնդրվեց ԽՍՀՄ էներգետիկայի և էլեկտրոֆիկացիայի նախարարությանը Երևանի մետրոպոլիտենի շինարարության համար «Հայէներգոշին» վարչության ծեռնարկությունում, սկսած

1978թ. կազմակերպել տարեկան 5-10 հազ. խմ երկաթբետոնյա կոնստրուկցիաների թողարկումը:

Անհրաժեշտ էր կտրուկ շրջադարձ կատարել աշխատողներին բնակարանով բավարարելու ուղղությամբ: Այդ նպատակով խնդրվեց ԽՍՀՄ տրանսպորտային շինարարության նախարարությանը հատկացնել կապիտալ ներդրումներ Երևանում բնակելի շենք կառուցելու համար և այլն:

1978 թվականին հանրապետության կառավարությունն անդրադեմ է վերոհիշյալ դրոշման կատարման հարցերին, հատկանի բազմաթիվ կարգադրություններ են եղել մետրոպոլիտենի շինարարության աշխատանքները խոչընդոտող հանգամանքները վերացնելու, գործնական օգնություն ցույց տալու համար: Սակայն կցանկանայինք հակիրծ խոսել համատեղ ընդունված մեկ այլ որոշման մասին:

1978 թ. դեկտեմբերի 12-ին հրապարակվեց ԴԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի համատեղ որոշումը, մետրոպոլիտենը անհրաժեշտ քիչ բանվորական ուժով ապահովելու մասին: Հանձնարարվեց կուսակցության քաղկոմներին, շրջկոմներին և քաղաքային ու շրջանային խորհուրդների գործադիր կոմիտեներին կազմակերպել և Երևանի մետրոպոլիտենի շինարարությանը տրամադրել բանվորներ, որակյալ մասնագետներ: Նախատեսվեց, սկսած 1978թ. վերջին ամսից բանվորական ուժով օգնել մետրոպոլիտենի շինարարներին.

1978թ. դեկտեմբերին հանրապետության 10 քաղաքներից և շրջամասներից գործուղել 165 մարդ, 1980թ. հունվարին՝ 14 քաղաքներից 295 մարդ, 1980թ. փետրվարին՝ 17 քաղաքներից և շրջաններից 345 մարդ, 1980թ.-մարտին՝ 14 քաղաքներից և շրջաններից 310 մարդ և 1980թ. ապրիլին՝ 6 քաղաքներից և շրջաններից՝ 145 մարդ: Ամբողջությամբ վերցրած 29 քաղաքներից և շրջաններից նախատեսվեց գործուղել 1260 բանվոր, որոնցից Երևանի շրջաններին բաժին էր ընկնում 650 մարդ:

Հայաստանի կոնունիստական կուսակցության և կառավարության համատեղ ընդունած 1978թ. հունվարի 24-ի և նույն թվականի դեկտեմբերի 12-ի որոշումները շրջադարձային եղան մետրոպոլիտենի շինարարության գործունեության արմատական տեղաշարժերի համար:

Նպատակ չհետապնդելով թեկուզ հակիրծ կանգ առնել քաղաքնե-

րի, շրջանների և կուսակցության քաղկոմների, շրջկոմների և մասնավորապես Երևանի կուսակցության քաղկոմի և շրջկոմների մետրոպոլիտենի աշխատանքների բարելավմանը նպաստող գործողություններին ասենք, որ Երևանի կուսակցությունը հատուկ ուշադրություն էր դարձնում Հայաստանի կուսակնետկոմի և կառավարության որոշումների կատարման ապահովմանը: Մասնավորապես հայկոմկուսի և կառավարության վերը նշված երկու որոշումները ըննարկվեցին Երազկոմի և շրջկոմների բյուրոներում, կատարվեցին կոնկրետ և գործնական քայլեր, որոնք մեծապես նպաստեցին մետրոշինարարների աշխատանքների բարելավմանը (մասնավորապես նշված ժամանակում մետրո ուղարկվեցին 650 բանվորներ): Անհրաժեշտ է նշել, որ մետրոպոլիտենի շնարարության ողջ ընացքում Երազկոմում և շրջկոմներում բազմիցս ըննարկվել են այս կարևոր կառույցին վերաբերող հարցեր և ցույց է տրվել կոնկրետ օգնություն: Միաժամանակ Երևանի կուսակցությունները Երազկոմի կողմից առաջադրած շինարարությանը վերաբերող բոլոր խնդիրների իրականացումը համարել են առաջնային և գործնական միջոցների են դիմել դրանք անվերապահորեն կատարելու համար: Այլ կերպ ասած համաժողովրդական այս մեծ կառույցը գտնվել է մայրաքաղաքի կուսակցական կազմակերպությունների օգնության և հսկողության տակ: Բերենք մասնակի օրինակ: Խորհրդային շրջանը որպես Երկու կարևորագույն մետրոյի նախագծող և կառուցող կազմակերպությունների «նստատեղերի», յուրաքանչյուր ամիս հետևողական աշխատանք է տարել մետրոշինարարներին գործնական օգնություն կազմակերպելու ուղղությամբ: Երազկոմի շինարարության և քաղաքային տնտեսության բաժնի հետ ամենօրյա կապի շնորհիկ հարցեր են բարձրացվել գործին անհրաժեշտ ընթացք տալու համար: Եղել են դեպքեր, երբ անհրաժեշտություններ եւնելով շրջանի ունկավարությունը դիմել է Երազկոմին «Հայթունելշինի» և «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի առջև ծառացած խնդիրները լուծելու համար, և դրանք անհետանք չեն մնացել, երբեմն էլ դարձել են Երազկոմի բյուրոյի ըննարկման առարկա, հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

\*\*\*

Մինչև միութենական կառավարության 1977թ. հոկտեմբերի 6-ին

ընդունած որոշումը, Երևանի ստորգետնյա էլեկտրատրանսպորտը, ինչպես ասվեց վերևում, պետք է կառուցվեր Կիևան, Քոչարի փողոցների և Մարշալ Բաղրամյան պողոտայի հատման կետից մինչև քաղաքի կենտրոն՝ Հանրապետության հրապարակ՝ չորս կայարաններով։ Ելնելով 744 կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1978թ. հունվարի 24-ի որոշման պահանջներից՝ «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի կողեւկտիվը պատրաստեց բարդ տեխնիկական նախագիծ, արագընթաց տրամվայի համեմատ մետրոպոլիտենի գծերի երկարությունը չուրց 2,5 անգամ ավելացնելու համար։ Ինստիտուտի մասնագիտական 10 բաժինները կատարեցին երկրաբանական և տեղագծագրման աշխատանքներ, նախագծվեցին ուղեգծեր, շինարարական կոնսորտիւմներ, գնացքների երթևեկության ավտոմատ կառավարման սխեմ, էլեկտրամատակարարման, օդափոխության և դրենաժային հարմարանքներ, կամուրջներ, ուղելարեր և այլն։

Ինստիտուտում սկսեցին մշակել մետրոյի Հանրապետության հրապարակից դեպի քաղաքի արդյունաբերական հարավային շրջանը գնացող հատվածի տեխնիկական գծագիրը։ Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի երկարությունը նախատեսվեց 10,5 կմ։

Երևանում մետրոպոլիտենի առաջնահերթ գծի նախագծով նախատեսվեց 9 կայարան՝ «Բարեկամություն», «Սարալանջային» /«Մարշալ Բաղրամյան»/, «Ուսանողական» /«Երիտասարդական»/, «Լենինի հրապարակ» /«Հանրապետության հրապարակ»/, «Շոկտենքերյան» /«Չորավար Անդրանիկ»/, «Սասունցի Դավիթ», «Գործարանային», «Ծենգավիթ», «Սպանդարյան հրապարակ» /«Գարեգին Նժդեհի հրապարակ»/: Այսպիսով, մետրոպոլիտենի ուղեգիծը սկսվելու էր Մարշալ Բաղրամյան պողոտայի, Քոչարի ու Կիևան փողոցների անկյունից և հատելով ամրող քաղաքը՝ ավարտվելու էր էլեկտրամեքենաշինական գործարանի շրջանում։ Կիրովի /Կորյունի/, Արովյան փողոցների, Հանրապետության հրապարակի, նոր հանրախանութիւնների շենքի տակով մինչև ալրադաց կոմբինատ անցնելու էր թունելով, որից հետո երկարուղային կայարանի մոտով դեպի կարելի գործարան՝ բացօթյա ուղերթով, այնուհետև նորից թունելներով՝ դեպի էլեկտրամեքենաշինական գործարան։ Այսպիսով երկնագույն ճեղքներացների մայրուղին քաղաքի հյուսիսային բնակելի շրջանները միացնելու էր հարավային նասի արդյունաբե-

րական ծեռնարկությունների կենտրոնացված գոտու հետ։ Մայրաքաղաքում ստորգետնյա արագընթաց տրամվայի համար արդեն ստեղծված կառույցների քազայի վրա հնարավորություն էր ստեղծվում շահագործման համար անհնարին թվացող 4 կմ հատվածը կարծ ժամանակում հասցնել 7,6 կմ /առաջին հերթի առաջին հատվածը «Բարեկամություն» կայարանից մինչև «Սասունցի Դավիթ» կայարանը/ և շահագործել 1980թ., իսկ հաջորդ տարիներին ամբողջությամբ գործարկել մետրոյի առաջին գիծը՝ 10,5 կմ և Երևանում կառուցել ժամանակակից մետրոպոլիտեն իր բոլոր հարմարություններով և հետագա զարգացման հեռանկարներով։ Այսպիսով լուծվում էր սոցիալական նշանակության մի հարց ևս մայրաքաղաքի բնակչների տրանսպորտային փոխադրումների պրոբլեմը։ Ի դեպ, հաշվարկները ցույց էին տալիս, որ վերգետնյա տրանսպորտային միջոցներով Կոմիտաս փողոցի սկզբնամասից մինչև Վերջին «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանը ծախսվում էր մոտ մեկ ժամ, իսկ մետրոպոլիտենով՝ միայն 16 րոպե։

Այս յուրօրինակ շինության Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի տեխնիկական նախագծերի սկզբունքային բոլոր հարցերը լուծելուց հետո 1978թ. առաջին կեսի ավարտի շեմին, «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի կողեւկտիվը ծեռնամուխ եղավ նրանց բանվորական գծագրերի աշխատանքներին կատարելով յուրօրինակ հանգույցների և տեղամասերի հաշվարկները։ Ի դեպ, 1979թ. մայիսի դորւթյամբ, բանվորական գծագրերի մեջ մասը տրվել էր շինարարներին հնարավորություն տալով իրականացնել լայնածավալ աշխատանքներ։

Ինչպես վերը նշվեց, մետրոպոլիտենի նախագծման աշխատանքներն իրականացվում էին «Հայպետտրանսնախագիծ» և «Երևաննախագիծ» ինստիտուտներում առաջատար ճարտարապետները և աշխատում էին համագործակցված մշակում էին ներգետնյա նախարարների և կայարանների ճարտարապետական ծևավորման աշխատանքները։

Ինչու՞մն էր նրանց համագործակցությունը։

Վերցնենք ուղերին ծանոթ մետրոպոլիտենի մի մասը ստորգետնյա կայարանը, շարժասանդուղքը, արտաքին նախարարի։ Այսպես «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի կոնսորտուրները նախատեսում էին սենյակների, տարածքների տեղերը, որտեղ պետք է լինեին

մեքենայական պարկը, շարժասանդուղբները, տարրեր սարքավորումները, նախագծում էին կայարանային և շարժասանդուղբների թունելները, որոնց շինարարությունը նախատեսվում էր իրականացնել լեռնային եղանակով։ Ինչ վերաբերում է կայարանների և նախարարական արտաքին տեսքին, ապա դրանք ծնվում էին «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետների նշանակած մաքրությամբ։ Մետրոպոլիտենի առաջին երթին գործարկվող թունելների կոնստրուկտիվ լուծումները և դրանց շինարարության իրականացնան ձևերը նախագծվում և իրականացվում էին հաշվի առնելով տեղանքի երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները։ Այդտեղից էլ նրանց բազմազանությունը եռականար կողմնային պատերով մոնուխտ բետոնի կատարմամբ, եռակամար շրջանաձև հավաքովի տարրերակով, միակամար սաղոներորմամբ։

Ընթացքային թունելները նախատեսվեցին մի քանի կոնստրուկտիվ լուծումներով՝ մոնուխտ, հավաքովի երկարետոնով և թուժե վահանակներով։ Մի շաբաթ կոնկրետ խնդիրների լուծման ժամանակ շատ արդյունավետ եղավ ուժերի համախմբումը։

Յուրաքանչյուր կայարանի կառամատույցի տակ նախատեսվեց ծառայողական սենյակների համալիրի տեղադրումը, տեխնոլոգիական սարքավորումներով եռակառավարման և այլ կարևոր ավտոմատ միջոցների կենտրոնացումը, կապը յուրաքանչյուր կայարանում, նախատեսվեց քարշող ենթակայաններ, օդափոխիչ սարքեր և այլն։ /Ի դեպ, օդափոխիչ սարքերի միջոցով յուրաքանչյուր կայարանի համար մեկ ժամում տրվում է 400 հազ. խոր. մետր օդ/։

Ամփոփելով «Հայպետրաննախագիծ» ինստիտուտի կողմից 1978թ. կատարված աշխատանքների հակիրծ նկարագրությունը ասենք, որ այդ կարծ ժամանակահատվածում կոլեկտիվը կատարեց իր առօս դրվագ բոլոր խնդիրները։ Տսկայածավալ այս աշխատանքներն ամիսներ շարունակ, «Հայպետրաննախագիծ» ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Կոնստանտինի Դանդուրովի գլխավորությամբ կատարում էին ինստիտուտի աշխատողները Արևադի Կուրիսկոն, Զոն Հարությունովը, Կիմ Ստեփանյանը, Վազգեն Խաչատրյանը, Վիլեն Հարությունյանը, Մարգարիտա Օգանեզովան, Կարլոս Արոյանը, Մամիկոն Աստրյանը, Վալերի Դանդուրովը, Ժերմոն Պետրոսյանը, Ալբերտ Կամ-

դարյանը, Էդուարդ Բայանդարովը, Ռուզաննա Երսուզյանը, Լևոն Տիգրանյանը, Ժաննա Ռուշյանը, Գեորգի Բունիաթրովը, Ալբերտ Փափազյանը, Կարլոս Արոյանը, Ռոմիկ Գեղամյանը և շատ ուրիշներ։ Մետրոպոլիտենի նախագծման աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցան «Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվի շատ անդամներ։ Նախագծային աշխատանքներին մեծ քափով ծեռնանուխ եղան Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Զիմ Թորոսյանը և «Երևաննախագիծ» ինստիտուտի աշխատակիցներ Ֆենիքս Դարբինյանը, Ստեփան Քյուրքչյանը, Վանիկ Չիտեյյանը, Ջենրիկ Կրիչյանը, Բաղդասար Արզումանյանը, Էդուարդ Ստեպանովը, Սկրտիչ Մինասյանը, Ջենրիկ Ղուկասյանը, Լևոն Գևորգյանը, Արեգ Խորաբյանը, Սարգիս Ներսեսյանը, Սպարտակ Կներցյանը, Ալբերտ Զուրաբյանը, Ռոբերտ Թալևոյանը, Սուրեն Բուրխաջյանը, Ռոմեն Զուլիհակյանը, Ֆելիքս Մարկոսյանը, Ալբերտ Միրզոյանը, Կարլեն Ջովհաննիսյանը և շատ ուրիշներ։

\* \* \*

ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1978թ. հունվարի 24-ի որոշման կատարման ուղղությամբ մետրոպոլիտենի տնօրինությունը գործնական քայլեր ծեռնարկեց։ Արագներաց տրամվայի շինարարությունը մետրոպոլիտենի կառուցման վերափոխելը հնարավորություն տվեց ըստ նոր հաստիքային ցուցակի կոլեկտիվը համարել փորձառու և որակյալ կադրերով։ Տնօրեն Խվան Պապիկը աշխատողների առաջնահերթ խնդիրը համարեց մետրոպոլիտենում աշխատող բոլոր կազմակերպությունների նկատմամբ ամենօրյա հսկողության սահմանը, ցանցային գրաֆիկի անվերապահ կատարումը, որը սրբորեն իրականացվեց Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի շահագործման ողջ ժամանակաշրջանում բաժինների կողմից խստագույն հսկողության իրականացման ճանապարհով։

Մետրոպոլիտենի տնօրինությունը Միության հաղորդակցության ուղիների նախարարությունում, ըստ նախագծային կազմակերպությունների կողմից ներկայացված նախագծերի, պաշտպանեց մետրոպոլիտենի համար պատվիրվող սարքավորումների իրական քանակը։ Հանրապետության պետական բոլոր մատակարարող կազմակերպություններին ֆոնդերց և համապատասխան պայմանագրեր կ-

թեց, ժամանակացույց կազմեց և հետևեց դրանց կատարմանը: Սկսվեցին լուրջ նախապատրաստական աշխատանքներ տարվել սարքավորումների ստացման, դրանց տեղափոխման և պահեստավորման ուղղությամբ: Այս աշխատանքների կազմակերպիչը մատակարարման գծով տնօրենի տեղակալ Վոլոյյա Ղազարյանն էր, միաժամանակ այս գործում մեծ լրումա ներդրեց սպասարկման ողջ անձնակազմը: Հետևողական աշխատանքներ կատարվեցին շինարարից փաստացի կատարված աշխատանքների ծավալների ընդունման և վճարման համար: Այս աշխատանքները նեկավարում էր բազմափորձ թունելագործ, տնօրինության գլխավոր ինժեներ Մերգեյ Բադալովը: Յեշտ չեր հանրապետության և Միության ավելի քան 240 կազմակերպությունների գործունեության օպերատիկ կապի ապահովումը /որոնց միջոցով ստացվում էին ավելի քան 1000 անուն նյութեր, սարքավորումներ, դետալներ և այլն/, լուծել մետրոպոլիտենի շինարարության մեջ ընդգրկված 35 շինարարական կազմակերպությունների հոգսերը: Այս հարցում իր դրական, որոշիչ դերը կատարեց հետևյալ հանգամանքը:

Կարեն Դեմիրճյանն իր մոտ է հրավիրում Իվան Պապիկին՝ գրուցելու գործերի և հիմնական հոգսի մասին: Միության տարբեր ծայրերում սփռված շուրջ երկու և կես հարյուրի հասնող հիմնարկ ձեռնարկությունների հետ անմիջական կապի ապահովման անհրաժեշտության մասին գեկույցը լսելուց հետո համապատասխան գերատեսչությունների միջոցով արագ լուծում է այդ հարցը: Եթեք օր հետո մետրոպոլիտենի տնօրենի առանձնասենյակում անց է կացվում, և սկսում է գործել օպերատիկ կապը «ԵՎ»-ն «Մետրո-Պապին» նշանաբանով: / Ի դեպ, նման կապից օգտվում էին միայն 344 Կենտրոնի առաջին քարտուղարը, ՅՍԴ Գերագույն խորհրդի նախագահը, կառավարության նախագահը և հանրապետության մի քանի կարևոր ոլորտների դեկավար աշխատողների/: Խամապատասխան նշանաբանը հարողություն է կապը խորհրդային Միության ցանկացած ծայրամասում գտնվող կազմակերպության հետ: Պարզ է նման հեռախոսային զանգի «զորության» արդյունքը:

1979-1980թթ. ժամանակահատվածում մետրոպոլիտենի շինարարության տնօրինությունը հետևողականորեն գործնական քայլեր էր

ձեռնարկում Միության և հանրապետության տարբեր վայրերից առաքվող սարքավորումների ստացման, տեղափոխման և պահեստավորման ուղղությամբ: Մոնտաժող կազմակերպություններին հանձնելուց հետո տնօրինության բաժինները խստորեն հետևում էին դրանց ժամանակին և որակով գործարկմանը: Նախապատրաստվեցին ու հանրապատասխան իրահանգներով ծևակերպվեցին օրյեկտների հանձնման բանվորական և պետական հանձնաժողովների կազմը, և կազմակերպվեցին դրանց աշխատանքները:

ԽՍՀՄ ճանապարհային հաղորդակցության նախարար Իվան Պավլովսկու հրամանով՝ 1980թ. փետրվարին ստեղծվեց Երևանի մետրոպոլիտենի վարչություն /հաստիքային ցուցակով 23 մարդ/: Մետրոպոլիտենի գլխավոր ինժեներ, մետրոպոլիտենի պետի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց Մարլեն Գրիգորի Յարությունովը, զնացքների անվտանգ երթևեկության գլխավոր վերստուգիչ Վլադիմիր Գեորգիի Ստեպանովը, «Կապի և ազդանշանների» ծառայության պետ Արմենակ Պարույրի Զորյանը /1981թ. հոկտեմբերից մետրոպոլիտենի պետի տեղակալ/, «Շարժակազմի» ծառայության պետ /միևնույն ժամանակ կաղորերի բաժնի պետ/ Բարկեն Շմայակի Պողոսյանը, «Գծերի և թունելների կառույցների» ծառայության պետ Զուրաբ Ղազարի Ունչյանը, «Էլեկտրաենթակայանների և ցանցերի» ծառայության պետ Վալերի Վլադիմիրի Դանդուրովը, «Էլեկտրամեխանիկական ծառայության» պետ Լեռնիդ Ալեքսանդրի Սավչենկոն:

Ցուրաքանչյուր ծառայությունում ընդունվեցին 2-3 աշխատող, որոնք զբաղվում էին ծառայությունների կազմակերպումով, իրականացնում սարքավորումների մոնտաժման աշխատանքների հսկողությունը:

1980թ. հուլիսին ստեղծվեց միջանկյալ հաստիքացուցակ /200 մարդ/, որի նպատակն էր շահագործման հիմնական աշխատողների հավաքագրումը: Քանի որ մետրոպոլիտենի «Կապի շենքը» և «Ինժեներական մասնաշենքը» գտնվում էին շինարարության ընթացքում, մետրոպոլիտենի վարչությունը և ծառայությունները տեղավորվեցին N 2 կառավարական տան երկորդ հարկում:

Յեշտ չեր այն օրը, երբ Երկնագույն ճեպընթացը կալանար Երևանի ստորգետնյա մայրուղիներով, հետևաբար մեկ կարևոր գործ ևս պետ

է կազմակերպվեր: Դա մետրոպոլիտենի վարչության աշխատակազմի ստեղծումն էր, որոնց շնորհիվ պետք է ապահովվեր գնացքների անվտանգ երթևեկությունը, սպասարկման բոլոր ծևերը առաջին հսկ օրից դրվեր անհրաժեշտ բարձրության վրա, ծևավորվեր որոշակի «քնավորություն»՝ ազգաբնակչությանը հաճելի ծառայություններ մատուցելու համար:

ԽՍՀՄ ժանապարհային հաղորդակցության նախարարության Երևանի մետրոպոլիտենի վարչության իրավունքների և պարտականությունների անթերի կատարման գործում մեծ էր բաժնների, ծառայությունների կողմից մետրոպոլիտենի հետագա կաղրերի ընտրության, նրանց համապատասխան մասնագիտությունների ուսուցման, փորձնական աշխատանքի կազմակերպման ուղղությամբ տարվող հետևողական ծրագրավորված աշխատանքի նշանակությունը: Այս հարցում փորձված դեկավարի հենարանը եղավ կաղրերի հարցով առաջին պատասխանատուն Բարեն Պողոսյանը, որն իր սրտացավորությամբ, հետևողականությամբ, համապատասխան ծառայությունների գծով մարդկանց ընտրության հարցում իրեն փայլուն դրսեւուց:

Նշշտ չեր բառացիորեն «Օ»-ից Յայաստանում նմանը չունեցող, մեծամասամբ բարդ մասնագիտությունների տեր կոլեկտիվի ստեղծումը: Մեր հանրապետությունում առաջին անգամ էր մետրոպոլիտեն հիմնվում, սակայն փորձի պակասը լուրջ խոչընդոտ չդարձավ: Միության մետրոպոլիտենի հարուստ փորձը և նրանց օգնությունը նպաստեցին հաղթահարել դժվարությունները, կարծ ժամականամիջոցում ստեղծել բոլորվին նորատիպ կոլեկտիվ և, անհրաժեշտությունից ելնելով, նրա անդամների թիվը հասցեվ ավելի քան 1000-ի...

Ստորգետնյա մայրուղիներում միայն առաջին հերթ գործարկելուց հետո մետրոպոլիտենի տարբեր ծառայություններում աշխատելու էին երկու տասնյակից ավելի մասնագիտությունների տեր մարդիկ: Մետրոպոլիտենում հիմնական մասնագիտություններն էին էլեկտրագնացքի մեքենավարները, նրանց օգնականները, դեպոյի հերթապահները, օպերատորները, երթևեկության դիսպեչերները, թումելային կառուցվածքների և գծային տնտեսության, կապի և ազդանշանային ծառայությունները, ռադիոծառայության մասնագետները և այլն: Ինչպես տեսնում ենք, մետրոպոլիտենի գործարկումով Երևանը հարստանալու

էր տեխնիկական բարձր որակավորման նոր մասնագետների ստվար ջոկատով:

Երևանյան մետրոպոլիտենի սպասարկման համար համապատասխան կաղրեր պատրաստվում էին Թբիլիսիում և Երևանում: Մոտ 100 երիտասարդներ գործուղվեցին Եղբայրական Վրաստանի մայրաքաղաքը: Նրանք Թբիլիսիի մետրոպոլիտենի վարչությանը կից տեխնիկական դպրոցում վրացի մասնագետների օգնությամբ տիրապետում էին էլեկտրագնացքների մեքենավարների, մեքենավարների օգնականների, շարժասանդուղընների մեքենավարների մասնագիտություններին: Տեխնիկական դպրոցն ավարտելուց հետո շարժակազմի մեքենավարները և փականագործները գործուղվեցին Մոսկվա մետրոպոլիտենում գործնական աշխատանքի փորձ ծեռք բերելու համար: Մեր սովորողները Թբիլիսիում շրջապատվել են ամենաշերմ ուշադրությամբ: Նրանց համար ստեղծվել էին թե՛ ուսումնական, թե՛ կենցաղային լավագույն պայմաններ: Բավական է ասել, որ Երևանից գործուղված բոլոր սովորողները 6 ամսից ավելի բնակվեցին հյուրանոցում: Մեր մայրաքաղաքի ստորգետնյա մայրուղիում երթևեկելու էին միայն նոր տիպի, տեխնիկայի վերջին խոսքով կառուցված էլեկտրագնացքներ, որոնք ունեին ինքնակառավարման և ռադիոռելեային ժամանակակից կատարելագործված հարմարանքներ, գեղագիտորեն ծևակորված ուղևորաբաններ, սպասարկող անձնակազմի համար հիանալի կահավորված խցիկներ: Եվ քանի որ Թբիլիսիի մետրոպոլիտենում չկային այդպիսի էլեկտրագնացքներ, Երևանի մետրոպոլիտենի ապագա մեքենավարներին ուսուցանելու համար, Մոսկվայից Թբիլիսի էր ուղարկվել նոր տիպի մեկ էլեկտրագնացք:

Միաժամանակ մետրոպոլիտենում աշխատելու համար Երևանի N19 պրոֆտեխնիկական ուսումնարանում կազմակերպվեցին մասնագիտական դասընթացներ՝ կայարանի հերթապահի, հսկիչների, ապարատավարների, էլեկտրամեխանիկների, էլեկտրամունտյորների, վերանորոգող փականագործների, փականագործ-սանտեխնիկների և այլ մասնագիտություններով վեց ամսի ժամկետով: Կազմակերպվեցին նաև կարճաժամկետ կուրսեր՝ մետրոպոլիտենը շահագործող անձնակազմի նախապատրաստման համար: Մասնակիցներն ապահովվեցին հանրակացարաններով, և տրվեց կրթարշակ: Դասընթացներն անց-

կացվում էին բարձրորակ մասնագետների, դասախոսների կողմից, նրանց մեջ ընդգրկվեցին նաև Երևանի երկաթուղային բաժանմունքի, մետրոպոլիտենի վարչության մեջ փորձություն և բարձր որակավորում ունեցող ինժեներներ:

Կարճ ժամանակամիջոցում 170 երիտասարդ տղաներ և աղջիկներ ուսումնարան ավարտեցին և ստացան դժվարին և հետաքրքիր մասնագիտություն մետրոպոլիտենի շահագործման և վերանորոգման քարտ մասնագիտությունը: Նրանք դիպլոմային աշխատանքների պաշտպանությունից հետո ստացան օպերատոր-կոնսուլտորների, կապի էլեկտրամեխանիկների, ֆականագործների և հերթապահների /դիսպեչերների/ որակավորում: Քննություններն հաջող անցկացնելուց հետո նրանք անցան արտադրական պրակտիկայի Միության տարբեր քաղաքներում գործող մետրոպոլիտեններում Մոսկվայում, Կիևում, Խարկովում և Թբիլիսիում, որից հետո ուղեցիր ստացան Երևանի մետրոպոլիտենում աշխատելու համար:

Առաջ անցնելով ասենք, որ Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի շահագործման նախօրյակին վարչությունում աշխատում էին 1100 մարդ /հաստիքացուցակով 1234 մարդու դիմաց/: Մետրոպոլիտենի բացումից Երկու շաբաթ առաջ բաց թողնվեցին զնացքներ վագոնները և գծերը փորձարկելու նպատակով:

Երևանի ազգաբնակչության համար բացառիկ տոն էր մետրոպոլիտենի գործարկումը (ինչ խոսք, նրանից հետո ողջ ժամանակահատվածում, նաև այսօր): Իրենց բարձրության վրա գտնվեցին Թբիլիսիի մետրոպոլիտենի վարչությանը կից տեխնիկական դպրոցի և Երևանի N 19 տեխնիկական ուսումնարանի սաները, որոնք երախտիք զգացումով են լցված ոչ միայն Երևանի մետրոպոլիտենի վարչության ուսուցման կազմակերպիչների, այլև ուսուցումն անցկացնող Թբիլիսիի տեխնիկական դպրոցի ողջ կոլեկտիվի և Երևանի N 19 տեխնիկական ուսումնարանի կոլեկտիվի նկատմամբ, հանձին տնօրեն Համլետ Պետրոսյանի: Նա ջանք ու եռանդ չխնայեց կոլեկտիվի ուժերն ու գիտելիքները նպատակամելու Երևանի մետրոպոլիտենի համար որակյալ ու պատասխանառու աշխատողների ուսուցումը պատշաճ մակարդակով կազմակերպելու և որակյալ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ:

\* \* \*

Արագընթաց տրամվայի կառուցման համար նախատեսված համեստ հնարավորությունները փաստորեն դժվար դրության մեջ էին դրել շինարարներին: Մայրաքաղաքի զարգացման շահերից և բնակչության տրամսապորտային սպասարկման պահանջներից բխող միութենական և հանրապետական կուսակցության և կառավարության ընդունած որոշումները մեջ խանդավառություն առաջացրին մետրոշինարարների «Հայրությունշինի» N 160 շինարարական և մոնտաժային վարչության կոլեկտիվի մոտ: Վիճակը բառացիորեն փոխվեց: Եթե առաջին հինգ տարիներին վարչության կոլեկտիվը կատարել էր 30 մն. ուրելու շիննոնտաժային աշխատանքներ, ապա միայն 1980թ. այն հասցելու էր 60մն. ուրելու: Բացի այդ, մեծանալու և կայունանալու էր կառույցի նյութատեխնիկական բազան: Միայն 1978թ. վարչությունն ստանալու էր այնքան թուժը վահանակներ, որքան չէր ստացվել շինարարության առաջին օրից մինչև 1977թ. ներառյալ: Նոր որոշմամբ Երևանի ստորգետնյա պողպատն մայրություններում աշխատող շինարարների 600 մարդուց բաղկացած կոլեկտիվն աճելու էր կրկնակի անգամ: Երևանի մետրո կառուցողները Երկրի մյուս քաղաքների մետրոպոլիտենների նման ունենալու էին իրենց կրծքանշանը, բանվորական լավ ավանդույթները, իրենց փառքն ու պատիվը: Շինարարների համար նախատեսված էր կառուցել առանձին բնակելի զանգված, նրանք իրենց արձակուրդների ընթացքում կարող էին ընտանիքի մեկ անդամի հետ անվճար ճանապարհորդել Միությունում, ինչպես ընդունված էր Երկրի բոլոր մետրոշինարարների համար:

Մետրոպոլիտենի շինարարությունը ժամանակին ավարտելու համար, ինչպես ասվել է, Երևանի մաքենատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի համապատասխան բաժինների և շինվարչության աշխատողների ուժերով ընդամենը մեկ ամսում ավարտվեց մետրոպոլիտենի աշխատանքների հստակ կազմակերպման ծրագրի ցանցային գրաֆիկի նշակումը: Դրա միջոցով պարզաբանվում էր գլխավոր և ենթակապալառու կազմակերպությունների միջև աշխատանքների փոխադարձ կապը: Ցանցային գրաֆիկը հավաստում էր եթե մետրոպոլիտենի շինարարության հետ առնչվող բոլոր կազմակեր-

պուրայուները ժամանակին կատարեն նախատեսված հանձնարարությունները, ապա մետրոյի առաջին հերթի շահագործումը կդառնա ու-ալ, և կավարտվի 1980թ. վերջին: ճիշտ է, մետրոյի շինարարության աշխատանքներն ավարտվեցին մի փոքր ուշացումով, բայց կազմած ցանցային գրաֆիկը մեծապես օգնեց մետրոյի շինարարության բոլոր օլակների փոխգործողության ապահովմանը, աշխատանքներն էլ ավելի ճիշտ կազմակերպելուն:

...«Բարեկամություն» կայարանից մինչև «Դանրապետության հրապարակը» մոտ 7կմ ստորգետնյա ուղուց 6.2 կմ-ը և լրացուցիչ 5 կմ օժանդակ հորատանցքները բացված էին: Այսպիսով, «Բարեկամություն»-«Մարշալ Բաղրամյան»-«Երիտասարդական»-«Դանրապետության հրապարակ»-«Սասունցի Շավիթ» կայարանները համարվում էին առաջին հերթի առաջին տեղամասերը, որոնք պետք է շահագործման հանձնվեին 1980թ. վերջին և շինարարները լավ էին հասկանում, որ դրան կարելի է հասնել միայն յուրաքանչյուր օրվա, ժամվա լարված, արդյունավետ աշխատանքով:

1978թ. այս աշխատանքներին գործադրությունը սկսվեց «Սասունցի Շավիթ»- «Գարեգին Նժդեհի հրապարակ» ստորգետնյա մայրուղու շինարարությունը: Սա արդեն առաջին հերթի երկրորդ տեղամասն էր, որի ավարտով մետրոպոլիտենի ընդհանուր գծի երկարությունը հասնելու էր 10,5 կիլոմետրի: «Սպարտակ» մարզադաշտի մոտ սկսվել էին ուղղահայաց փորվածքի աշխատանքները:

1978թ. հիմնական խնդիրներից էր արագ կերպով սկսել մետրոպոլիտենի վերգետնյա կայարանների կառուցումը: Դորատանցման և մյուս աշխատանքներին գործադրությունը պետք է արագացվեր նաև ստորգետնյա կայարանների և նախարարական շինարարությունները, որոնց ուղղությամբ տարվող աշխատանքներին տարվա սկզբից և եթ մեծ թափ հաղորդվեցին: Զերժինսկու անվան հաստոցաշինական գործարանի մոտից մինչև Թամանցիների փողոցը պողպատ մայրուղիներն անցնելու էին վերգետնյա տարածքով: Մի բան, որ բավկանին կարագացներ շինարարությունը և այդ էր վկայում հատվածում սկսած աշխատանքների ընթացքը:

Անհրաժեշտ էր գործնական քայլեր ծեռնարկել բանվորական ուժի արդյունավետ օգտագործման, նյութական և բարոյական խորհուսման

միջոցների կիրառման ուղղությամբ, որի համար կոնկրետ և գործնական քայլեր ծեռնարկվեցին: Բավական է ասել, որ կուսակցության քաղկունների, շրջկունների կողմից գործնական միջոցառումների իրականացման շնորհիվ հանրապետության գործարաններից, շինարարական և այլ կազմակերպություններից երկու ամսվա ընթացքում մետրոպոլիտենի շինարարություն (ինչպես N 160 շիննոտաժային, այնպես էլ այլ շինարարական կազմակերպություններում աշխատելու համար) գործուղվեցին շուրջ 500 տարբեր մասնագիտությունների բարձրորակ բանվորներ:

Շինարարների համար 1978 թվականը լավ սկսվեց: Երկու և կես տարի պահանջվեց երկրարանական բարդ պայմանների, ստորգետնյա առատորեն հոսող ջրերի հաղթահարման ճանապարհով անցնել 1400 մետր հատվածը, անցահատել «Մարշալ Բաղրամյան»-«Երիտասարդական» կայարանների միջև ընթացքային թունելը, որն իրականացվեց 1978թ. հունվարի 16-ին: Ուազիկ Յարությունյանի ղեկավարած բրիգադը կատարեց վերջին պայթեցումը: Ավելի ծզգիտ աշխատեցին «Դարբունելշին» գլխավոր մարկեյդեր հ.հվանովը, N160 շիննոտաժային վարչության գլխավոր մարկեյդեր Ա.Կազարենկոն տեղամասի մարկեյդեր Ա.Զավգորոդինի գլխավորությամբ: «Երիտասարդական» տեղամասի հենց հորանի հիմնանցքի մոտ տեղի ունեցավ այս կարևոր աշխատանքի հաջող ավարտը նշելու արարողությունը, որտեղ հանդիս եկան Խորհրդային կուսարչեկոմի առաջին քարտուղար Պավել Ասֆյանը, հորատող Անուշավան Մուրադյանը և «Դարբունելշին» վարչության պետ Լեռնիդ Ջառությունվորը: Մետրոշինարարության մեջ նման պահերը համարվում են աշխատանքային հաջողությունների գագաթնակետ և պատահական չեր, որ բոլորը ցննության պահ էին ապրում: Ես էլ դարձա այդ երջանիկ պահի մասնակիցներից մեկը: Իսկ մի քանի օր հետո սկսվեց «Զորավար Անդրանիկ» կայարանի նոր հորանի հորատանցման աշխատանքները:

Շինարարության վերելքի հիմնական լծակը ծեռք բերած հաջողությունների ժամանակին գնահատումը և արժեքավորումն էր, իսկ այս գործում առանձնահատուկ նշանակություն ուներ արդյունավետ աշխատանքի կարևոր շարժիչ ուժի՝ տնտիշաշվարկային եղանակով աշխատանքի կազմակերպումը, որը բանվորի բարոյական և նյութական

խթանման ամենաառաջավոր ձևերից էր: Երկրի շինարարական պրակտիկայում զլորինյան մեթոդով՝ տնտիաշվարկային եղանակով աշխատելը, հիանալի քննություն էր բօնել: Այս եղանակով աշխատելը հաջողություններ էր բերում «Մարշալ Բաղրամյան» և «Երիտասարդական» կայարանների տեղամասերում աշխատող շինարարներին: Այս երկու կայարանների միջև աշխատում էր հորատողների բրիգադը Ռազմիկ Հարությունյանի ղեկավարությամբ, որը առաջինը երևանի մետրոշինարարության մեջ ներդրեց զլորինյան աշխատանքի մեթոդները, բրիգադը դարձավ ամենաառաջավորը հորատողների բրիգադների մեջ: Նրա օրինակը լայնորեն տարածվեց նաև մյուս շինարարական բրիգադներում:

Առաջինը «Մարշալ Բաղրամյան» տեղամասում կիրառվեց կառամատուցային սյուների տեղադրուման մեքենայացված մեթոդը: Բրիգադն սկզբնական շրջանում դժվարությունների հանդիպեց հատկապես առաջին սյուները տեղադրելիս: Այնուհետև վարժվեցին և ժամկետից երկու ամիս շուտ վարտեցին բոլոր աշխատանքները: Նրանք մեծ հաջողությամբ ծոնանուի եղան միջին կայարանային բունելում հիդրոմեկուսացման աշխատանքներին, իսկ աջակողմյան բունելում լրիվ ավարտեցին հորատանցման, ամրակապման և բետոնապատման աշխատանքները: Փամբակ - Կիրովականի, Մեղրածորի և այլ բունելների շինարարությունում մեծ փորձ ծեռք բերած Ռազմիկ Հարությունյանի 25 հոգուց բաղկացած բունելագործների համերաշխ ընտանիքում արդեն մեծ համբավ ունեին բրիգադի անդամներ երվանդ Բարսեղյանը, Արտակ Անդրեասյանը, Նորիկ Մանուկյանը, Սերգեյ Աղասայյանը, Սերյոժա Պողոսյանը, Լելյոն Մանուկյանը և մյուսները: 1978թ. սկզբից բրիգադը գրավվեց անցումային բունելների կառուցումով: 1050 մետր բունելացումից և երկու բունելախորշերի միացումից հետո բրիգադը ծեռնանուի եղավ կայարանային բունելների և էստակադայի կառուցման բարդ գործին: Այստեղ յուրաքանչյուր աշխատող տիրապետում էր մի քանի մասնագիտությունների հորատողի, բետոնագործի, բարձիչ մեքենավարի, ստորգետնյա էլեկտրաքաշի մեքենավարի, մոնտաժողի և այլ մասնագիտությունների: Նրանց ինչպես նաև մյուս առաջավորների/ աշխատանքները միշտ բարձր են գնահատվել: Այս փոքր, համերաշխ ընտանիքն արդյունավետ էր օգտագործում ժամանակը, խնա-

յում շինանյութերը, աշխատանքները կատարում որակով և ժամանակին: Բավական է ասել, որ միայն 1978 թ. առաջադրանքները ժամկետից շուտ կատարելու և շինանյութերի գգալի խնայողության համար բրիգադը պարգևատրվեց 9 հազ. ռուբլի հավելյալ աշխատավարձով:

Յաճախակի ապարների կտրվածքի կտրուկ փոփոխություններ, հատկապես բազալտի բույլ շերտերից տեղի էին ունենում ստորգետնյա կուտակված ջրերի առաջ հոսք: Նման պայմաններում աշխատելն ավելի դժվար էր, քանի որ հորատման ընթացքում փլվածքներ էին առաջանում: Որպեսզի առաջանցումն ապահովվեր, մետրոշինարարները կատարում էին ամրակապման կրկնակի, եռակի ծավալի աշխատանքներ: Լինում էին նաև փլուզման դեպքեր: Դա առանձնապես առկա էր աջընթացքային բունելախորշում, որտեղ աշխատում էր Ռազմիկ Հարությունյանի ղեկավարած բրիգադը: Ընդհանրապես մետրոշինարարությունում վտանգավոր փլուզման հետ կապված դեպքեր շատ են եղել, որպեսզի հորատողների հերոսական աշխատանքը թեկուց չնչին չափով պատկերացնեք, նշենք միայն մի դեպք:

Վառ առավոտ էր: Ռազմիկ Հարությունյանի բրիգադի 23 ամդամները 24 ժամ անընդհատ պայքարում էին ապարների դեմ: Դեպքն անսպասելի էր: «Հանրապետության հրապարակի» աջ ընթացքային բունելախորշում Վ. Սաքոսյանը նոր էր ավարտում պայթեցման աշխատանքները և հորատող է. Սարգսյանը նոր էր հերթափոխի մուրճը սեղմում բազալտի շերտին, երբ հանկարծակի ահարկու ծայն լսվեց: Փորձառու հորատողն անմիջապես իրեն նետեց էլեկտորի (մոնտաժող սարք) մետաղն հարթակի վրա և հենց այդ պահին մոտ 3-4 մետր տրամագծով նստվածք առաջացավ: Տղաները նկատում են, որ հենց իրենց գլխավերկում ծագար է գոյացել, որտեղից դանդաղորեն շարժվում է հողի շերտը՝ ջրի և բազալտի մասն կտորներին միախանանված: Բրիգադավար Ռ. Հարությունյանը, զգալով վտանգը, անմիջապես կրահում է, որ պետք է բրիգադի մյուս օղակներին ևս շտապ այս տեղամաս տեղափոխվել:

Գիշերվա ժամը 2-ին բրիգադի 23 ամդամները արդեն բունելախորշում էին: Նորատողներ Վիտյա Լազյանը, Սերգեյ Պողոսյանը, Ավետ Ավոյանը, Ավլասիմով Եղբայրները և մյուսները 24 ժամ մնում են բունելախորշում: Ի վերջո, նրանք կանխում են վտանգավոր փլուզումը հատ-

վածի ամրակապումն ավարտելով հաջողությամբ: Այս այսպիսի ճանապարհով, նոյնիսկ իրենց կյանքը վտանգելով՝ հորատողները կարողանում են նախ իրենց ընկերների կյանքը փրկել և այս առաջ անցնել մետք առ մետք մետրոն ժամանակին գործարկելու համար:

Եվ պատահական չէր, որ Ռազմիկ Հարությունյանին ողջ կողեկտիվն ընտրեց ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր, իսկ բրիգադի անդամներից Արշակ Անդրեասյանին Երազխորհրդի պատգամավոր, Վիտյա Լազյանին Խորհրդային շրջխորհրդի պատգամավոր:

Այդ ժամանակաշրջանում մետրոյի բոլոր տեղամասերում ճանաչում և մեծ հարգանք ուներ նաև Ալեքսեյ Կրիվոշապովը, նրա օրինակը ուսանելի էր Երիտասարդների համար: Նա այստեղ էր եկել որպես փորձված վարպետ՝ հաղթահարած լինելով Արական-Տայշետ ուղեգծի լեռնային հատվածները. Պուշկինի և Սեղրածորի բունելների հարյուրավոր դժվարին մետրերը: Արդեն լայնորեն տարածվել էր նաև ինտերնացիոնալ /ցավոք, այս բառն այսօր քիչ է օգտագործվում/ բրիգադի անդամների անունները ուսումնական աշխատում էին ռուս Պյոտր Սերգեևը, հույն Ալեքսանդր Մագդալյանովը, հայ Վիտյա Լազյանը: Չեզ քերած հաջողությունների համար այս տեղանասի բանվորները և ինժեներատեխնիկական աշխատողները 1978թ. առաջին եռամսյակին պարզատրվեցին 20 հազար 700 ոութլով: Նրանց լավագույն փորձը տարածվեց մյուս տեղամասերում:

Մետրոշինարարության աշխատանքների որակի ապահովման նկատմամբ առանձնահատուկ պահանջներ էր ներկայացվում: Միայն և միայն գերազանց աշխատանք էր պահանջվում՝ անխստիր բոլոր գործողությունների համար և հսկողությունն էլ միանգամայն տեղին էր ու ծայր աստիճան խիստ: Գործող որակի հանձնաժողովն ավելի բժախնդրորեն և միանգամայն տեղին էր պահանջում բարձրորակ աշխատանքի ապահովումը, առանց նրանց եղակացության, աշխատավարձ չէր գրվում: Կոնկրետ քայլեր արվեցին նաև շինարարության մեջ բոլոր տեսակի մեխանիզմները լայնորեն օգտագործելու համար, որը մեծապես նպաստեց ծերջի աշխատանքների կրծատմանը: Նախկինում մոնուխտ բետոնի փոխարեն, որի ժամանակ առանց բաի հնարավոր չէր աշխատել, սկսեցին ինդուստրիալ եղանակով երկարետուն ամբողջական մեծ հատվածներ տեղակայել: Դրանք ստացվում էին բարվից և ոչ մի

համեմատություն նախկին եղանակով աշխատանքի հետ: Տարբեր գործարաններից ստացվում էին երկաթբետոնն մոնուխտ կոնստրուկցիաներ, որոնց շնորհիվ աշխատանքի բնույթը կատարելապես փոխվեց: Ինչ խոսք, այս բոլորի միջոցով աշխատանքներում կատարվեց արագ տեղաշարժ, սակայն գործերի մեծ ծավալն ավելին էր պահանջում, անհրաժեշտություն էր զգացվում լուծել նաև շինարարության հետ կապված մի շարք կարևոր հարցեր, պահանջվում էր օպերատիվ միջամտություն... Օր-օրի տարբեր աշխատանքների կոորդինացման պահանջը զգացվում էր: Պատահական չէր, որ 1978թ. հունվարին կայացած 3ԿՎ խորհրդային կուսչորչկոմի պետնում N160 շին.մոնտաժային վարչության պետ ժողով Ավանեսյանն իր հիմնավոր և կոնկրետ առաջարկություններն արեց: Գրեթե բարացիորեն ասաց հետևյալը. «Մեր շինվարչությունը գտնվում է խորհրդային շրջանում: Ենշտ է, մենք գործնական օգնություն և օժանդակություն ենք ստանում շրջանի դեկավարություններից, նաև շրջանի շատ կազմակերպություններից, բայց և այնպես, ժամանակն է շրջանում ստեղծել մի շտաբ, որպեսզի ամիսը մեկ անգամ այստեղ ամփոփվեն մետրոշինարարությունում կատարված աշխատանքները և միջոցառումներ ծեռնարկվեն շրջանի և քաղաքի հիմնարկ-ծեռնարկությունների և նախագծային կազմակերպությունների հետ կապված դժվարությունները հաղթահարելու համար»: Ահազանգը տեղին էր:

Ծրջանում սիստեմատիկարար ուսումնասիրվում էր գործերի վիճակը, ամսիս մեկ անգամ հրավիրվում էր ընդլայնված խորհրդակցություն, ամփոփվում էին մետրոշինարարների կատարած աշխատանքները, ծգուում մեծ ծավալով աճող աշխատանքների դժվարությունների հաղթահարմանը նպաստել գործնական քայլերով: Ինչ խոսք, ծեռնարկած միջոցառումները ծիշտ էին, իրենց դրական հետքը թողնում էին, բոլորս այդ նկատում էինք, բայց աշխատանքների լայնամասշտար ծավալը, խորը մասնագիտական ուղղվածությունը պահանջում էին հանրապետական մասշտարով ամենօրյա և հետևողական միջամտություն: Մայրաքաղաքի մետրոշինարարության ընթացքը թելաղորեց, որ հանրապետությունում ստեղծվի մի օղակ, որի շնորհիվ պահովվի կազմակերպությունների աշխատանքների կոորդինացումը, ամենօրյա օգնությունն ու դեկավարությունը երևանի մետրոյի աշխատանքներին:

Ստեղծվեց ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի շտաբը, որն իր որոշիչ դերն ունեցավ մետրոյի շինարարության ողջ ընթացքում /այդ մասին կիսումի ստորև/:

1978թ., հատկապես փետրվար-մարտ ամիսներից, լայնածավալ շխատանքներ սկսվեցին բոլոր տեղամասերում, աշխատատեղերում: 1978թ. պլանավորված էր իրականացնել 7 մլն. ռուբլու շինոնտաժային աշխատանքներ: Դա անշուշտ թից էր և կառավարության որոշմամբ հանձնարարվեց լրացուցիչ կատարել ևս 1 մլն. 200 հազ. ռուբլու աշխատանք: Շարունակվեցին «Մարշալ Բաղրամյան» և «Երիտասարդական» կայարանների միջև ծգվող թունելի աշխատանքները, բայց հիմնականում զգալի տեղաշարժեր նկատվեցին «Բարեկամություն», «Մարշալ Բաղրամյան», «Երիտասարդական», «Դանրապետության հրապարակ» կայարանների կառուցներում: Աշխատանքներ տարվեցին նաև օժանդակ կառուցներում ուր պետք էր իրականացվեին մոնտաժային աշխատանքներ: Սակայն դա լուրջ և դժվարին գործ էր: Նախ պետք էր լիովին ավարտել սարքավորումների մոնտաժումը և հետո նոր սկսել երեսպատման աշխատանքները: Կայարանների շինարարական աշխատանքները շարունակվեցին հաջորդ տարիներին:

\*\*\*

ՀՍՍՀ Նախարարների խորհուրդը 1978թ. նոյեմբերի 28-ին լսեց «Երևանի մետրոպոլիտենի շինարարության ընթացքի մասին» հարցը: Իրոք, գործերը վատ չեն ընթանում: Ինչքան էլ, ինչպես նշվեց, լրացուցիչ լարված պլան իշեցվեց N 160 շինոնտաժային վարչությանը, այն ոչ միայն կատարվեց, այլև գերակատարվեց: Փաստորեն տարվա սկզբին 7 մլն. ռուբլու շինոնտաժային աշխատանքների դիմաց կատարվեց 8 մլն. 300 հազ. ռուբլու աշխատանք: Կառավարությունում քննարկումն օգնեց հաջորդ 1979թ. համար լրացուցիչ միջոցառումների իրականացմանը: Նպատակ չունենալով թեկուզ մակերեսորեն անդրադառնալ այդ որոշման մեջ արծարծված հարցերին, որոնց լուծման շնորհիվ 1979թ. բարեկամվեցին աշխատանքները, ցանկանում ենք խոսել միայն մեկ կարևոր հարցի մասին:

Դայաստանի կառավարության որոշմամբ Երբախորհրդի գործկոմի վրա դրվեց մետրոպոլիտենի համար իրականացվող վերգետնյա և

ստորգետնյա կոնունիկացիաների կառուցման գլխավոր պատվիրատուի պարտականությունները և հանձնարարվեց մինչև 1979թ. առաջին կիսամյակը իրականացնել որոշմամբ նախատեսված բոլոր աշխատանքները: Երբախորհրդի գործկոմի նախագահ Մուրադ Չովհաննեսի Մուրադյանը մեծ սրտացավություն էր ցուցաբերում մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերող յուրաքանչյուր հարցի նկատմամբ և այս բոլորի հետ մեկտեղ նրա խստապահանց և հետևողական աշխատանքի շնորհիվ կատարվում էին գործկոմին տված բոլոր հանձնարարությունները: Օրինակ, որոշման համաձայն, 10 օրվա ընթացքում ավարտվեցին, մետրոպոլիտենի պահանջներին համապատասխան, Տյուբենինի փողոցի ինչպես վերակառուցման, այնպես էլ ստորգետնյա ողջ կոմունիկացիաների տեղափոխման աշխատանքները: 1978թ. ղեկատեմբերին լուծվեց N 8 օդափոխիչ հորանի համար տեղամասի իրացման հարցը հնարավորություն տալով նախատեսված ժամանակին սկսել կառուցի աշխատանքները: Քաղխորհրդի գործկոմի համապատասխան ծառայությունների առաջարկով մետրոպոլիտենի հատկացվեց հողատարածություն երկու բնակելի հանրակացարանների շինարարության իրականացման համար: Ինչպես նախատեսված էր, մինչև 1979թ. հուլիսի 1-ը Երևանի Մանվածքային, Զերօճառի կոմբինատների, Ծիսակուտի ֆաբրիկայի տարածքներում և նրանց հարող մասերում իրականացվեցին մետրոպոլիտենի շինարարության համար անհրաժեշտ աշխատանքներ հնարավորություն տալով ըստ նախատեսված գրաֆիկի կատարել նաև մյուս գործողությունները: Այստեղ պետք է հիշատակել նաև քաղզործկոմի նախագահի առաջին տեղակալ Յուրի Լևոնիչ Զավարյանին (նրան ենթակա տրեստմերն ու վարչություններն էին գրադպում մետրոյի հետ կապված հարցերով), որն իր գործնական հատկություններով և բարձր պատասխանատվությամբ միշտ իր բարձրության վկա էր գտնվում:

Մետրոպոլիտենի շինարարության իրականացման մասին կուսակցության և կառավարության որոշումից հետո հետևողական լուրջ միջոցներ ձեռնարկվեցին տեղամասերում կարդերի համալրման, որակավորման բարձրացման, նրանց հետ տարվող աշխատանքի ուղղությամբ: Առաջին իսկ օրից միութենական տարբեր քաղաքներից գործուղվեցին բարձրորակ մասնագետներ, ելեկտր մետրոյի շինարարու-

թյան կարիքներից նրանց գործուղումը Երևան շարունակվեց մինչև 1988թ. /այս առիթով երբեմն կշեցտվեն նրանց Երևան գալու փաստերը/: Սակայն այստեղ ուզում ենք նշել հիմնական շինարարի N 160 շինոնուտաժային վարչության կողմից կարծ ժամանակահատվածում 1978թ. ընթացքում կադրերի համարման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Առ 1-ը հունվարի 1979 թ. N 160 շինոնուտաժային վարչությունում աշխատում էին 924 մարդ, որոնցից 780-ը, բանվորներ էին, ինժեներներ 95-ը, ծառայողներ 25-ը: 1978թ. կատարված գործնական քայլերի շնորհիվ 1977թ. համեմատ հատկապես բանվորների թիվը կրկնապատկվեց /ցավոր, հոսունությունը նույնանում մեծ էր, հեշտ չեղ ընդերքում աշխատելով/: Ընդունված աշխատողներից 241-ը աշխատանքի էին անցել իրենց դիմումների համաձայն, իսկ 119-ը ըստ հասարակական կոչի, կոմերիտական ուղեգործությունը: Բանվորական որակյալ կադրերով ապահովելու համար բավականին լուրջ միջոցառում ծերնարկվեց: «Դայրունելշինի» և N 160 շինոնուտաժային վարչության ջանքերով ստեղծվեց ուսումնական կենտրոն – կոմբինատ, ուր նորեկները 3-4 ամսվա ընթացքում ստանում էին նախընտրած մասնագիտությունը:

Նախատեսված էր 1978թ. կոմբինատում պատրաստել 200 պրոֆեսիոնալ կադրեր: Պատրաստեցին 225-ը, որոնցից 37-ը սովորեցին երկրորդ մասնագիտությունը, իսկ դա մետրոյի շինարարությունում մեծ նշանակություն ուներ:

Ասվեց, որ մետրոշինարարությունում բանվորական ուժի հոսունությունը մեծ էր, համեմատած նույնիսկ շինարարական այլ կազմակերպությունների, արտադրության հատկապես քիմիական ծանր արտադրանասերի հետ և դա բնական էր /պատահական չէ, որ նճան կառույցներում աշխատանքային տևողությունը 6 ժամ էր և նրանց տրվում էր ծրի սնունդ/: Ահա թե ինչու աշխատողների հոսունության կրծատման ուղղությամբ անհրաժեշտ էր ծերնարկել կոնկրետ և գործնական քայլեր: Որքան էլ կարծ ժամանակ էր անցել մետրոպոլիտենի շինարարության մասին հաճարահայտ որոշումից, շինվարչության դեկավարության, կուսակցական, արհմիութենական կազմակերպությունների ծերնարկած միջոցառումները դրվատանքի էին արժանի: Եվ այսպես, միայն

մեկ տարվա ընթացքում (այն էլ ոչ ամբողջ տարվա) 1978 թ., իրականացվեցին մի շարք միջոցառումներ աշխատավորների բնակարանային և կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ: Օրինակ, 46 ընտանիքներ ստացան ընտանեկան հանրակացարաններ, 15-ը ապահովվեցին հանրակացարանով, 7 ընտանիքների հատկացվեցին նոր բնակարաններ, 174 ամուրի աշխատավորների տեղավորեցին հանրակացարանում: /Իհարկե, դեռ հերթի սպասողներ կային, նրանց թիվը հասնում էր 130-ի/: Կտրուկ շրջադարձ կատարվեց տեղամասերում, N 160 շինվարչության բոլոր տեղամասերում արդեն գործող բուժետների, բաղմիքների, գրադարանների հետ մեկտեղ ստեղծված «Կարմիր անկյունները» կահավորվեցին նոր հեռուստացույցով, ստացվում էին թերթեր և ամսագրեր: Որոշակի աշխատանք տարվեց կանանց աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ: Ծինվարչությունում աշխատում էին 167 կին, որոնցից 120-ը բանվորներ էին, 17-ը ինժեներներ, տեխնիկներ, 18-ը ծառայող և այլն: Ներգետնյա աշխատանքներին ընդգրկված էին 33-ը, որոնք հիմնականում գրադպում էին թերթ աշխատանքով: Նրանց համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանն առաջնահերթ ուշադրություն դարձվեց, նախատեսված բոլոր միջոցառումներն իրականացվեցին:

Դոգ տարվեց աշխատողների հանգստի կազմակերպման, բուժման ուղղությամբ: 1978թ. աշխատողներից 16-ը գնացին բուժման առողջարաններում, հանգստյան տներում եղան 18-ը, տուրիստական ուղեգործությունից դուրս գնաց 8 մարդ, պանսիոնատներում հանգստացել են 12-ը և այլն: Ի դեպք, որպես ականատես, պետք է ասեմ, որ վարչության բոլոր տեղամասերում տարվա բոլոր ամիսներին և հատկապես ամռանը, հատուկ առանձնացված «Դայրարարությունների համար» տախտակի վրա փակցվում էր ցուցակ, ուր նշվում էր հանգստյան տների և պանսիոնատների տեղերը, քանակը, ուղեգործությունը 20 տոկոսը մուտքում էին մետրոշինարարները, մյուս մասը շինկոմը: Դանդաղանտության Դամբի կողմից այս առումով մետրոշինարարների համար կանաչ ճանապարհ էր բացվել: Նրանց հարցով անմիջապես գրադպում ու բացառիկ մեծ օգնություն և սրտացավ մոտեցում

Եր ցուցաբերում հանրապետության արհեստակցական միության նախագահ Լևոն Գուրգենի Սահակյանը:

Կադրերի հետ առնչվող աշխատանքը, նրանց տրվող անհրաժեշտ գնահատականը նույնպես գտնվում էր շինվարչության դեկավարության ուշադրության կենտրոնում: Խոսենք փաստերով.

Ներգետնյա փականագործ – մննտաժող Ֆ.Աբրահամյանի աշխատանքին մեծ փորձը, խորը գիտելիքները հուշեցին վարչության դեկավարությանը նրան առաջ քաշել և նշանակել գլխավոր Ենթգետիկի պաշտոնին, չնայած, նա բարձրագույն կրթություն չուներ: Հորատող բանվոր Ա. Մանուչարյանի աշխատանքային փորձը և կազմակերպչական ունակությունը հաշվի առնելով, նրան հրամանագրեցին որպես հերթափոխի ինժեներ, հորատող բանվոր Գ. Չակորյանը հրամանագրվեց արտադրական պլանային բաժնում որպես տնտեսագետ, Ե. Ղազարյանը՝ որպես վարչության պետի տեղակալ, Ն. Բարսեղյանը՝ որպես գլխավոր հաշվապահ: Կին կադրերից 8-ը ևս առաջ քաշվեցին, որոնցից Պ. Զավագորդգսկայան հերթափոխի մարկչեյթերից հրամանագրվեց որպես տեղամասի մարկչեյթեր և այլն: (Առաջ քաշված կադրերն ունեին բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն): Ուսումնական հաստատություններում սովորելու համար միանգամայն բարենպաստ մքնոլորտի մասին են խոսում հետևյալ տվյալները: 1978 թ. շինվարչության աշխատողներից 4-ը ընդունվեցին բուհ, երեքը տեխնիկում, բուհերում շարունակում էին սովորել 11 մարդ, տեխնիկումներում՝ 7-ը, իսկ երեկոյան դպրոցներում՝ 8-ը:

Կադրերի հետ տարվող աշխատանքի, նրանց առաջ քաշման, ուսումը շարունակելու հարցում մեծ սրտացավությամբ էր վերաբերվում վարչության պետ Ժորժ Ավանեսյանը և եթե որևէ դեպքում նա իր բնափորությանը հակառակ մերժում էր մարդկանց /իհարկե, ելնելով օրենքի պահանջներից/, ապա երիտասարդների ուսման հարցում օգնելու, նրանց ծիշտ գնահատականի արժանացնելու հարցում, ինչպես շրջապատի մարդիկ էին տեսնում ու ասում, նրա նմանը չկար: Այս բոլորն իր դրական կնիքն էր թղթում գործի առաջընթացին: Նա հայրական մոտեցում էր ցույց տալիս նաև Միության տարբեր քաղաքներից արտադրական պրակտիկայի եկած բուհի ուսանողների նկատմամբ: Եվ պատա-

հական չէ, որ 1978թ. Լենինգրադից, Մոսկվայից, Մինսկից արտադրական պրակտիկայի եկած բուհերի 29 ուսանողներից 24-ը աշխատեցին Երևանի մետրոպոլիտենի բանվորական տեղամասերում և վարձատրվեցին ըստ արժանվույց:

Բանվորական կոլեկտիվում սնված ու մեծացած մարդն ուրիշ է, նա շինարար է նաև իր վերաբերմունքով, հոգով ...

Դեռ չեր լրացել մեկ տարի ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1978թ. հունվարի 24-ի որոշումից, սակայն կարծ ժամանակում մետրոպոլիտենի շինարարությունում լուրջ քայլեր կատարվեցին, ծեռքբերումները մեծ էին: /Ի դեպ, ՀԿԿ Կենտկոմի բյուրոն 1978թ. հունվարի 10-ին մանրազնին քննարկել, հավանություն էր տվել մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերող ողջ ծրագրին, որից հետո միայն կառավարության հետ հունվարի 24-ին կայացրել համատեղ որոշում/: 1979թ. անելիքներն ավելի շատ էին, իսկ 1980թ. անհամենատ ավելի շատ, քան անցած երկու տարիները միասին վերցրած: Սակայն դեռ պարզելու շատ խնդիրներ կային, որոնք պայմանավորված էին միութենական կառավարության գործնական քայլերով: Բանն այն էր, որ անհրաժեշտ էր կտրուկ հստակեցնել միութենական համապատասխան վերին օղակների դերը երևանի մետրոպոլիտենում նրանց կողմից նախատեսվող աշխատանքների ծավալների ուղղությամբ և, որ ամենակարևորն էր, ելնելով 1978թ. աշխատանքների ծավալների նախնական տվյալներից առաջարկություններ ներկայացնել միութենական կառավարությանը ըստ տարիների մայրաքաղաքի մետրոյի շինարարությունը ֆինանսավորելու համար:

Մետրոպոլիտենի տնօրինության, «Հայթունելչինի», «Հայպետտրանսնախսագիծ» ինստիտուտի և գործի հետ առնչվող այլ կազմակերպությունների մասնագետները, ելնելով 1978թ. աշխատանքների ծավալների հավանական տվյալներից, 1978թ. վերջերին կազմեցին ծանրակշիռ փաստաթուղթ՝ հետագա գործունեության առաջարկներով, ՀԿԿ Կենտկոմում և Հայաստանի կառավարությունում մանրազնին քննարկելուց հետո ներկայացվեցին նախապարհային հաղորդակցության և տրանսպորտային շինարարության միութենական նախարարություն-

Ներին, որից հետո հանրապետության կառավարությունը միութենական նախարարությունների առաջարկները ներկայացրեց ԽՍՀՄ պետպանին:

ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1979թ. մարտի 2-ին N 431 կարգադրությամբ Երևանի մետրոպոլիտենի շինարարությունը մտցրեց միութենական կառավարության նոր սկսվող 1979թ. կապիտալ շինարարության տիտղոսացուցակի մեջ: Այս փաստաթուղթը ևս մեծ կարևորություն ուներ. դրանով ամբողջությամբ հաստատվեց Երևանում կառուցվող մետրոպոլիտենի շինարարության առաջին հերթի ողջ ընթացքը: Ելնելով ընձեռված հնարավորություններից, 1979թ. մարտի 29-ին ՀՍՄ նախարարների խորհուրդը կայացրեց N 163 կարգադրությանը, որով նախատեսվեց «Բարեկամություն» կայարանից մինչև «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանի առաջին հերթի շինարարության (11,5 կմ երկարությամբ), 9,9 կմ-ը շահագործման հանձնել 1980թ., որի առաջին հերթի առաջին տեղամասն էր լինելու «Բարեկամություն» կայարանից մինչև «Սասունցի Դավիթ» կայարան հատվածը, իսկ 1981թվականին հաջորդ 1,6 կմ-ը /մինչև «Գարեգին Նժդեհի հրապարակ»:

Այդ նպատակով նախատեսվեց հիմնական ֆոնդերի արժեքը՝ 86,4 մլն. ռուբլի /1980թ. ներդրվելու էր 78,2 մլն. ռուբլի, իսկ 1981թ.՝ 8,2 մլն. ռուբլի/: Նախատեսվեց իրականացնել 88,2 մլն. ռուբլու կապիտալ ներդրումներ՝ 1979թ.՝ 14,8 մլն. ռուբլու, 1980թ.՝ 24 մլն. ռուբլու և 1981թ.՝ 8,2 մլն. ռուբլու, այդ թվում՝ շինմոնտաժային աշխատանքների ծավալը՝ 76 մլն. ռուբլի և այլն /տես այսուսակ 2/:

Ի դեպ, կուսակցական, կառավարական օրգանների կողմից ընդունված որոշումները շատ կոնկրետ էին ծգտելով խուսափել շատ որոշումներ ընդունելուց, և դա արդյունք էր հարցերի խորը ուսումնասիրության, հարցերին տրվում էին արմատական լուծումներ: Կառավարությունը առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում կարգադրությունների կատարմանը, որոնց անհրաժեշտությունը ցայտուն նկատվում է մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերող փաստաթղթերում, դրանք եղել են շատ հստակ և իրականացվել են կարծամկետում, առանց խախտումների:

Բերենք միայն մեկ օրինակ. 1979թ. հոկտեմբերի 2-ին մետրոպոլի-

տենի տնօրինության պետ ի. Պապիկը գրություն է հղում ՀՍՄ նախարարների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանին, տեղեկացնելով, որ

### **Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի գործարկման համար նախատեսված ծախսերը ըստ տարիների**

Վյուսակ - 2

	Նախագծային- նախահաշվային փաստաթղթերով նախատեսված ծախսերը	Ըստ տարիների կատարվելիք աշխատանքների համար նախատեսված ծախսերը
Գծի երկարությունը /կմ/	11,5	— 9,9 1,6
Նիմունական ֆոնդեր /մլն ռուբ./	86,4	— 78,2 8,2
Կապ. ներդրումների ծավալը /մլն ռուբ./ այդ թվում	88,2	14,8 24,0 8,2
Շինմոնտաժային աշխատանքներ /մլն ռուբ./	76	11,4 20 6,1
Անավարտ շինարարություն /մլն. ռուբ./	—	56 1,8 —

Երևանի մետրոպոլիտենի շինարարությունում սկսվում են մոնտաժային աշխատանքները: Հանրապետությունից դուրս գտնվող կազմակերպություններից օրական ստացվում էին մեծ քանակությամբ սարքավորումներ: Որպեսզի ժամանակին մոնտաժողներին տրվեն սարքավորումները և չձախողվեն դրանց ժամանակին տեղադրումը, խիստ ան-

րաժեշտություն էր զգացվում ավելացնել կոմպլեկտավորման բաժնի աշխատողների քանակը: Երկու օր հետո, Ֆ. Սարգսյանի կարգադրությամբ, երեք ամիս ժամանակով բարձրորակ մասնագետներ գործուղվեցին հանրապետության Կոնունալ-կենցաղային նախարարությունից և ՀՍՍՀ Էներգետիկայի և էլեկտրաֆիկացիայի գլխավոր վարչությունից՝ մետրոպոլիտենի տնօրինության տրամադրության տակ: Նման դեպքերի շատ հաճիպեցինք հանրապետության Պետական արխիվում մետրոպոլիտենի տնօրինությանը վերաբերող ՀՀՍՊԿԴ Ն 1165 ֆոնդի փաստաթրեն ուսումնասիրելիս:

...«Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտում 1979թ. տարվա առաջին իսկ օրից /ինչպես միշտ/ լայն թափով ընթանում էին մետրոպոլիտենի համար նախատեսված նախագծային աշխատանքները: Այն ավելի լարված բնույթ կրեց կառավարության 1979թ. մարտի 29-ի կարգադրությունից հետո: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բառացիորեն նախատեսված ժամկետներում կատարվեցին ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1978թ. նոյեմբերի 28-ի N 730 որոշմամբ նախատեսված բոլոր հանձնարարությունները: Լայնածավալ աշխատանքներ կատարվեցին բունելմերում գծերի տեղադրման, ջրմուղի գծի անցկացման, լուսավորության ապահովման, ուժային և ցածր լարման կարելմերի, կոնստրուկցիաների, բանվորական գծագրերին բնորոշ փաստաթրերի ստեղծման ուղղությամբ: Բերենք մի քանի օրինակ: Ընթացքային բունելմերում լուսավորության գծի անցկացման համար բանվորական գծագրերով 1979թ. փետրվարին ապահովեցին «Բարեկամություն»-«Մարշալ Բաղրամյան» աջընթացքային բունելի համապատասխան մասնագետներին, «Ուսանողական»-«Հանրապետության հրապարակ» ձախ ընթացքային բունելի շինարարներին մարտին, «Հանրապետության հրապարակ» - «Զորավար Անդրանիկ» ձախ ընթացքային բունելի շինարարներին ապրիլին, քարշային իջեցման ենթակայանի համար հովանոցի ներքին կոնստրուկցիաների, էլեկտրատեխնիկական, սանտեխնիկական կարգավորման, կարելմերի և օդափոխության սարքերի տեղակայման բանվորական գծագրերը տրվեցին «Ուսանողական» կայարանի աշխատողներին 1979թ. հունվարին, «Հանրապետության հրապարակ» և «Մարշալ Բաղրամյան» կայարանի աշխատանքների հրականացման համար 1979թ. մայիս ամսին և այլն: Իհարկե, երբեմն եղել

են նախագծողների կողմից գծագրերը կամ համապատասխան փաստաթրերը ժամանակին չհանձնելու դեպքեր, որոնք արծարծվել են նաև կառավարության կողմից արձանագրված որոշումներում: Սակայն երկույթը բառացիորեն չի ազդել շինարարության ընթացքի վրա, ժամկետների շեղումը եղել են մեկ կամ երկու ամիս: Յիշատակենք նաև, որ երբեմն էլ ընդունված որոշումները եղել են շատ «սեղմ», ելմելով նրանից, որ ինստիտուտի աշխատողները կիասցնեն դրանք կատարել, դառնալով շինարարական գործողությունների համար «արագացուցիչ»: Չմոռանանք մի հանգամանք. եթե «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի կողմից իրականացված և «Ժամանակին չհասցրած», ասենք, նախագծային աշխատանքները նույնիսկ մեծ խստությամբ նորմավորենք, ապա կիանգենք մի եղրակացության, որ նրանք կատարվել են կրկնակի անգամ շուտ:

Պարզ է, որ շինարարական նոր գործընթացների, նյութերի, լեռնային հորատանցող տեխնիկայի յուրացման համար պահանջվում էր նաև ինժեներատեխնիկական աշխատողների ընտրության և բանվորական կաղրերի մասնագիտական պատրաստման կոնվերս միջոցառություննիւն: Այլ քաղաքների մետրոպոլիտեններից ինժեներատեխնիկական անձնակազմ և բանվորներ աշխատանքի հրավիրելու ժամանակին կիրավող համակարգն իրեն արդարացրեց: Սակայն աշխատանքների ծավալի կտրուկ աճն ստիպեց նոր ձևով նոտենալ այս հարցի լուծմանը: Վերցվեց հորատանցողների և ինժեներական աշխատողների աճի ապահովման անշեղ կուրս: Այդ կապակցությամբ ՀԿԿ Կենտկուսի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիկական ֆակուլտետում բացվեց «Ստորգետնյա կառույցների շինարարություն» մասնագիտություն: Կարծ ժամանակ էր անցել, սակայն արդեն Երևանի մետրոպոլիտենում հաջողությամբ աշխատում էին մետրոշինարարության խնդիրներին վերաբերող թեմաներով դիվլոմային աշխատանքները պաշտպանած Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շրջանավարտներ Համբետ Սիմոնյանը, Ռաֆիկ Հայրապետյանը, Ֆելիքս Պետրոսյանը և ուրիշներ:

Հայաստանի կոմերիտմիությունն այս շինարարությունը հայտարարեց հարգածային կառույց և ստանձնեց դրա շեֆությունը: Մետրոշինարարները մեծ հույսով սպասում էին, որ այդ նախաձեռնությունը

նույնքան լավ շարունակություն կունենա և նրանք արժանի համալրում կստանան: Քաղաքի կուսշրջկոմները, Երքաղկոմի որոշման համաձայն սխտենատիկաբար գրադպում էին մետրոպոլիտենին բանվորական ուժով ապահովելու գործով: «Հայրունելշինում» ստեղծված ուսումնանական կոմիտենատը առաջնահերթ ուշադրություն եր դարձնում բազմապոտիկ կադրերի պատրաստման խնդրին:

Այս ամրող հավաքական ուժն իր նպատակին ծառայեց: Ամիսների ընթացքում աստիճանաբար շինարարությունը համալրվեց նոր կաղրեռով, որակյալ տարբեր օպերացիաներ կատարելու ունակ բանվորների թիվն աստիճանաբար մեծացավ: Համախմբված և հետևողական աշխատանքն իր արդյունքը տվեց՝ տարեվերջին մետրոշինարարների կուլտուրի անդամների թիվը կրկնապատկվեց:

Կարևորագույն խնդիրներից էր նաև բանվորների մասնագիտական որակավորման բարձրացումը: Այդ նպատակով 1978-1980թ. թ. 500' մարդ մասնագիտական գիտելիքներ և փորձ ծեռք բերեցին Մոսկվայում, Լենինգրադում, Թրիլիսիում: Ծրագրված էր, որ սկզբնական շրջանում մեր տղաները փորձաշրջան անցկացնեն այդ քաղաքների մետրոներում, ապա նոր տեղափոխվեն Երևան:

Զեղոնարկած միջոցառումները դրական ազդեցություն ունեցան տարեկան աշխատանքների ծավալների իրականացման գործում: 1979 թ. նախատեսված էր կատարել 11,4 մլն ոուրլու շինմոնտաժային աշխատանքներ: Տարվա սկզբին եղած հնարավորություններն արդյունավետ օգտագործելու շնորհիկ որոշվեց այն հասցնել 15 մլն ոուրլու: Սակայն նոր կաղրերով համալրումը, մի շարք կազմակերպչական—տեխնիկական միջոցառումների իրականացումը և ամենահիմնականը 1980թ. վերջին մետրոյի գործարկումը պահանջում էր պլանը գերակատարել ոչ պակաս ևս 25 տոկոսով, որի իրականացման համար 1979թ. ընթացքում ստեղծվել էին գրեթե բոլոր նախապայմանները: Արդեն պատվիրվել և 1979թ. ամբողջությամբ ստացվել էր Երկրի ավելի քան 200 գործարաններից 8 մլն ոուրլու արժողության 4000 անուն սարքավորումներ (նախատեսվածի 60 տոկոսը):

Առանձնահատուկ պետք է նշել Պողոլսկ քաղաքի կարելի արտադրական միավորման գլխավոր տնօրեն Գեղրդի Գրիգորի Թովմասյանի անգնահատելի օգնությունը Երևանի մետրոպոլիտենի շնարարությա-

նը: Նա Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շրջանավարտներից և Երքաղկոմի առաջին քարտուղար Լեռնիդ Ներսեսյանի ուսանողական ընկերն էր: Եվ ահա այս մոտիկ հարաբերությունները իրենց մեջ գործը կատարեցին: Միավորման կողմից բողարկվող մետրոպոլիտենի համար անհրաժեշտ կարելային իրերը Երևան էր փոխադրվում նախատեսված ժամկետից էլ շուտ: Անհրաժեշտությունից ելնելով Երբեմն Գ. Թովմասյանը նույնիսկ մեկ օրվա ընթացքում հատուկ ինքնարիուզ մետրոշինարարներին հասցեր է անհրաժեշտ կարելներ: Լ. Ներսեյան-Գ. Թովմասյան ընկերական հարաբերությունները այնպիսին էին, որ քարտուղարն իր ընկերոց ուժերն օգտագործում էր, որպես «արագացուցիչ» Միության այլ գործարաններից կապի միջոցներ ժամանակին ստանալու գործում: Ավելին, Գ. Թովմասյանի մեջ հեղինակությունը ու գործնական կապերը օգտագործեցին տարբեր քաղաքներից նրա օգնությամբ ժամանակին սարքավորումներ ստանալու համար: Եթե՛ տարուց ավելի է, ինչ իր մահկանացուն կնքեց Գեղրդի Թովմասյանը: Դպրության մեջ զգացումներ են ապրում հայ որդու հիշատակին նվիրված «Տնօրենի ճակատագիրը» գրքի յուրաքանչյուր տողն ընթերցելիս («Գլորուս» հրատարակչություն, Մոսկվա 2002թ.): Ահա նրա նկատմամբ երախտիքի զգացունքով ներշնչված մեկ նախադասություն. «Նրա անսպասելի մահը ցնցեց ողջ քաղաքը: Եվ եթե հնարավոր լինի հանեմատել այդ զարմանալի մարդու ընկերներին, գործարանի կոլեկտիվին, Պողոլսկ և նրա սիրելի Հայաստանը երաժշտական ինչ-որ բարդ գործիքի հետ, ապա Գեղրդի Գրիգորիչի մահը կտրեց նրա մեջի մի շատ կարևոր, մի գուցե և միակ խորհրդավոր լարը»:

Աշխատանքները լավ էին ընթանում բոլոր տեղամասերում: Մայրաքաղաքում մետրոպոլիտեն ունենալու բուն գաղափարը ոգեշնչել, շինարարություն էր բերել բազմաթիվ հայրենասերների, որոնց կամքով շունչ ու մարմնի էր առնում Երևանի այս հազվագյուտ կառույցը: Ինչպես ընդունված է ասել, լավերի մեջ կան լավագույնները և կցանկանայինք նշել նրանցից մի քանիսի անունները: Ընթերցողին հայտնի երիտասարդ շինարար Կարեն Աղամյանին, որպես լավ հնժենների և կազմակերպչի, Վատահերի էր «Երիտասարդական» տեղամասը: Այստեղ 80-ի շեմին ավարտին էին մոտենում Ելեկտրամոնտաժային և սանհանգույցի շինարարական աշխատանքները: Չնայած հիդրոերկրարանական

բազմաթիվ դժվարությունների, հորատողները հաստատում քայլերով առաջ էին գնում «Հոկտեմբերյան» (Զորավար Անդրանիկ) կայարան տաճող ընթացքային գետնուղիներով: «Մարշալ Բաղրամյան» տեղամասի ղեկավարն էր արդեն մետրոյում մեծ հեղինակություն և համբավ վայելող, բանվորության սիրելի մարդկանցից մեկը Գագիկ Մարտիրոսյանը, և պատահական չեղ, որ նրա մասին ասում էին, մարդկանց «հոգու գիտակ», նրա մոտ հիանալի շատ աշխատողներ կային: Բարձր արտադրողականությամբ և աշխատանքի որակով աչքի էին ընկնում տեղամասի շատ աշխատողներ հատկապես հորատողներ Յրաշիկ Գոգանյանը, Վիկտոր Լազյանը, Ալեքսանդր Մանսուրյանը, Լևոն Սարգսյանը, որոնք իրենց աշխատանքային ընկերների հետ միասին մեկ ամիս շուտ կատարեցին 1979թ. պյանը: Սպարհից ազատեցին կայարանային բոլոր երեք սրահները: Տեղափոխվեց ավելի քան 5 հազար խորանարդ մետր ապար: Տարեվերջին աջակողմյան սրահը հանձնվեց հարդարողներին: Դեպի «Բարեկամություն» կայարան տանող գետնուղիներում մոնտաժվեցին հազար գծամետր հիմնական երկաթօտեր: Մետրոշինի «Բարեկամություն» կայարանի Ուկիկ Ստեփանյանի ղեկավարած «Արփա-Սևանչին» տարբեր ազգություններից բաղկացած կոլեկտիվի ներկայացուցիչները՝ բրիգադիրներ Իվան Մարկինը և Սաշիկ Սահակյանը, հորատողներ Ալեքսանդր Գրիգորյանը, Կախրանգ Գրիգորյանը, Էդիկ Բարյանը և մյուսները, 1979թ. ընթացքում հաջողությամբ կատարեցին իրենց հանձնարարված գործը: Խակ հորատողների վլադիմիր և Սաշա Զաքարյաններ, ժորա Սահակյան և Վիկտոր Զալարյան, կոմպլեքս բրիգադը կուտակելով մեծ փորձ Սիբիրում, Միջին Ասիայում և Հայաստանում, հաջորդությամբ կատարեց նաև տեղամասի ստորգետնյա սրահների շինությունների աշխատանքները:

...«Բարեկամություն» և «Զորավար Անդրանիկ» կայարանների միջև մեծ թափով ընթանում էին ստորգետնյա աշխատանքները: Ավարտվում էր թունելի հորատանցումը, սկսվում էր նախարահների հարդարման աշխատանքները, սարքավորումների մոնտաժումը: Խակ «Հայտրանսչին» առաջավոր բրիգադներն սկսել էին՝ հաջորդ աշխատանքների ցիկլը մետրոպոլիտենի բացօթյա մայրուղու գծերի տեղադրումը, որոնք անցնում էին Երևանի երկարուղային ճանապարհներից մինչև Լենինյան շրջանի արդյունաբերական ծեռնարկությունների

## կենտրոնը:

Ցանկանում ենք վերիիշել մետրոշինի առաջավոր աշխատեկության գործությունը մի փոքր ժամանակահատվածի աշխատանքի մասին ևս: Յուլիս ամսին Սևան փողոցը վեր էր ածվել շինարարական հրապարակի, իսկ սառցակոմբինատի պահեստներին գուգահեռ ծգվում էր մեծ փոտրակ, որտեղից Երևանի մետրոպոլիտենի ներգետնյա գիծը վեր էր բարձրանալու գետնի երես:

Սևանի և այլ փողոցների որոշ հատվածներում ճանապարհը մի քանի օրով փակվեց: Աշխատեկ եղանակը սահակյանը կազմակերպեց 24 ժամյա աշխատանք ճանապարհին երթևեկությունը արագ վերականգնելու համար: Նրա ղեկավարությամբ ավարտվեցին Սևանի փողոցի ուղղությամբ 590 մետր երկարությամբ հենապատի բետոնապատման և մոնտաժային աշխատանքները, որից հետո սկսեց Երևանի կայարանի տակով անցնող 70 մետր երկարությամբ ստորգետնյա անցուղու հորատանցումը:

Լուծվել էր մետրոշինարարության ամենակարևոր խնդիրներից մեկը՝ լրացվել էր թուշե վահանակների պակասը: Մետրոպոլիտենի բոլոր տեղամասերում արագ կերպով տեղադրվում էին թուշե վահանակները: Բան այն էր, որ տարվա սկզբից, հատկապես Ռուսաստանից, ստացվում էին նախորդ տարիներից «պարտք» մնացած թուշե վահանակները:

Երևանի մետրոպոլիտենի վերգետնյա կառույցներից մետրոպոլիտենի տնօրինության և նրանց կապի ծառայության 14 հարկանի ինքնատիպ և գեղեցիկ շենքի շինարարությունը մեծ թափ ընդունեց 1979թ.: Աշխատանքներն իրականացվում էին «Երթմշշին» տրեստի կողմից: Այստեղ տեղադրվելու էին ամենաբազմապիսի ապարատներ, ավտոմատիկա, հեռուստամեխանիկա, մետրոպոլիտենի կառավարման բոլոր լծակները, ուստի դրա ժամանակին գործարկումը կենսական պահանջ էր և այս շինարարությունը առնվեց ամենօրյա հսկողության տակ:

Մետրոպոլիտենի բարդ համալիրի կարևոր օբյեկտներից էր նրա վագրնային դեպոն, որը կառուցվում էր «Հայէլեկտրո» գործարանի մոտ: Դա լինելու էր մի խոշոր շինություն, որը գրանցվելու էր 24 հա տարածություն: Այստեղ կատարվելու էին շարժական կազմի բոլոր նո-

րոգումները, կոմպլեկտավորվելու էին զնացքները: Թունելի շինարարների համար մեծ օգնություն էր արտադրական երկու բազմների կառուցումը, որոնց աշխատանքներին և 79-ին առանձնահատուկ հսկողություն դարձցվեց: Բազաների նախագծային արժեքն անցնում էր 3 նվազ: Ռուբլուց: Դրանից մեկը Արփի համբի մոտ է գտնվում, իսկ մյուսը հիմնականը, կառուցվում էր Սովետաշենի մոտ:

1979թ. առաջին իսկ օրից «Հայրունելշինում» ստեղծվեց նոր կազմակերպություն N 25 թունելային ջոկատը, որի աշխատանքների հիմնական պարտականությունը սկզբնական շրջանում «Հոկտեմբերյան» («Զորավար Անդրանիկ») կայարանի շինարարությունն էր, հետագայում նրան հանձնարարվեց նոր տեղամասերի շինարարություն: Դարձ է նշել, որ կայարանի շինարարությունն ընթանում էր մեծ դժվարություններով: Ապարները միասնակ չէին, թույլ ապարներում երթեմն փլուզում էր առաջանում: Շինարարներին խանգարում էր ջուրը, որը մյուս տեղամասերի համեմատ այստեղ գրեթե կրկնակի անգամ ավելի էր: Տեղ-տեղ մետրոշինարարները մեծ ուժ էին ծախսում ստորգետնյա ջրերը պոնդերով դուրս մղելու համար: Կոլեկտիվում իրենց լավ աշխատներով աչքի էին ընկնում մեխանիկները, փականագործները, եռակցողները ։ Հարություն Սարգսյանը, Թելման Մանուկյանը, Վարագան Պատրոսյանը, Օնիկ Սահակյանը: Հետաքրքիր է N 25 թունելային ջոկատի գլխավոր մեխանիկ Ալեքսանդր Հարությունյանի աշխատանքային ուղին: Նա երկար տարիներ որպես մեխանիկ ծառայել էր խոշոր ջերմանավում: Սակայն, հրապուրվելով ստորգետնյա աշխատանքներով, դարձավ Երևանի մետրոշինարար և կարծ ժամանակում մեծ հեղինակություն վաստակեց: N 25 թունելային ջոկատում 79-ի հոկտեմբերին շինարարությունում լարված աշխատանքներ էին կատարվում: Արդեն հնարավոր էր «Բարեկամություն»-«Հանրապետության հրապարակ» տեղամասերից ազատ անցնել «Զորավար Անդրանիկ» կայարան միջկայարանային աջ թունելով: Թունելային ջոկատի ուժերով «Զորավար Անդրանիկ» կայարանում մննտաժվում էր «ԿՄ-15» տիպի թուժ վահանակի տեղադրիչը:

80-ականի շնմին մետրոյի բոլոր տեղամասերում աշխատանքները մեծ բափ էին ընդունել: «Բարեկամության» և «Մարշալ Բաղրամյան» տեղամասերը մինչանց հետ կապող կայարանամեջ աջ թունելում տե-

ղաղովում էին հիմնական երկաթուղիները: Դրանց 950 մետր արդեն տեղադրվել և մոնտաժվել էր: Երկաթգծի տեղադրման համար կազմակերպվել էր հատուկ տեղամաս, ուր հիմնականում աշխատում էին երթասարդները: Երկաթգծերը գետնի տակ էին իջեցվում «Հանրապետության հրապարակ» տեղամասից: Այնուհետև ստեղծված հատուկ թեք փորվածքով վագոններով փոխադրվում էր տեղադրման վայրը: Կոճղերն ու մյուս անհրաժեշտ հարմարություններն իջեցվում էին «Մարշալ Բաղրամյան» տեղամասում փորված հորանով: Այդ եղանակն առաջին անգամ կիրառվեց Խորհրդային Միության մետրոյի շինարարության մեջ: Այն նշակվեց «Հայրունելշինի» մասնագետների կողմից, հետագայում այդպիսի թեք փորվածք ստեղծվեց նաև «Երիտասարդական» տեղամասում: Հակիրծ կանգ առնենք այս տան, գործունեությանը:

«Լոռի» թեք մուտքի N 2 տեղամասի պետն էր Միխայիլ Պոժիդակը: Միջահասակ, լայնարձիկունք, բարեհամբույր տեսքով փորձված շինարարը Մոսկվայից կնոջ հետ տեղափոխվել էր Երևան: Նրա բարեխիղձ աշխատանքը երեք չեն մոռանա Երևանյան ընկերները: Տեխնիկական գրագետ և փորձված մասնագետը շատերի համար դարձավ իսկական ուսուցիչ և ավագ ընկեր: Մետրոշինարարության մեջ բանիմաց ինժեների համբավ ծեռք բերած և կարծ ժամանակաշրջանում մեծ բարձունքների հասած N 160 շինմոնտաժային վարչության ինժեներատեխնիկական աշխատողները երթեմն կրիմնեին Մ. Պոժիդակն այս կամ այն վիճելի հարցի պատասխանը ստանալու համար: Նա նաև լավ կազմակերպիչ էր, և այդ էր պատճառը, որ նրան տեղափոխել էին հետ մնացող «Լոռի» տեղամասը:

1979թ. ընթացքում մետրոպոլիտենի կայարանների միջև ընկած հատվածում մեծ աշխատանքներ կատարվեցին: Բավական է ասել, որ մոտ 5 կմ հատվածում մնում էր կատարել ընդամենը 500 գծամետր ընթացքային թունելների հորատանցում, տեղամասերում սկսվել էին միջին կայարանների հատվածներում շարժասանդուղների, էլետրակայանների խորը ցեմենտացումը, գցվել էին 1 կմ երկարությամբ ռելսեր:

Մետրոպոլիտենի շինարարական տեղամասերում 1980թ. շեմին մեծ աշխատանքներ էին տարվում կայարանային ստորգետնյա հատվածները հարդարողներին հանձնելու համար:

Մետրոպոլիտենի վերգետնյա կայարաններում սկսվել էր կայարանային շենքերի շինարարությունը:

1980թ. ամենաժմվարին տեղամասը «Հանրապետության հրապարակ» - «Զորավար Անդրանիկ» կայարանների միջև ընկած հատվածն էր: Այստեղ աջ և ձախ ընթացային թունելախորշերում մնում էր դեռևս 250-ական գծամետր անցահատման գործ: Որպեսզի պատկերացում կազմվի, թե դա իրենից ինչ է ներկայացնում, ասենք նաև, որ հորատողներն աշխատանքային ծանր պայմանների պատճառով օրական առաջ էին անցնում ընդամենը մեկ մետր: Դա նշանակում էր, որ ամբողջ գործն ավարտելու համար հարկավոր էր 250 օր, իսկ նման տեմպերով աշխատելու դեպքում հարցականի տակ էր դրվում մետրոպոլիտենի առաջին հերթի գործարկվող հատվածի շահագործման ժամկետը: Մինչդեռ «Հանրապետության հրապարակ» տեղամասը, Յանտ Ֆարմանյանի գլխավորությամբ, վատ չեղ աշխատում: 300 մարդուց բաղկացած կոլեկտիվը 1979թ. կատարեց ավելի քան 3,5 մլն. ոուր. շինարարական աշխատանքներ, կարողացավ պահպանել սա հավանական տվյալներ...

«Հայտրանսչին» տրեստին էր հանձնարարվել Երևանի երկարությաին կայարանից մինչև Կալինինի փողոցի հատվածը գցել 1960 մետր երկարությամբ վերգետնյա գիծը: Այս գործին տրեստը ծեղնամուխ եղավ հիմնականուն 1979թ. առաջին եռամսյակին: Արդեն 1980թ. շեմին տրեստը հասցեց ավարտել վերգետնյա ուղենմասի երկարությամբ ճանապարհը, Զրվեցի գետի հունում տեղադրվեց բետոնե խողովակ, Ալրաղաց, գործարանի մոտ մետրոպոլիտենի գծի տեղադրման համար երկարուղային գիծ տեղափոխվեց, Երևանի երկարուղային կայարանի ժամապարհի հատվածի տակ սկսվեցին հորատանցման աշխատանքները ստորգետնյա անցնան համար /1980թ. հունվարի 1-ի դրությամբ 65 մետրից հորատանցվել էր 15-ը/: Ամբողջությամբ վերցրած տրեստը 1979թ. պետք է կատարեր 300 հազ. ոուր. շինմոնտաժային աշխատանք, փաստորեն կատարվեց 590,6 հազ. ոուր. աշխատանք:

... 1979 թ. նոյեմբերին երգակոմի բյուրոն քննարկեց 744 Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1978 թ. հունվարի 24-ի որոշման կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին հարցը: Նշվեց, որ շինմոնտաժային և նախագծային կազմակերպություններում,

իմնարկ-ծեղնարկություններում որոշակի աշխատանքներ են կատարվել մետրոպոլիտենում 1978 թ. հունվարի 24-ի վերը նշված որոշման կատարման ուղղությամբ: Մետրոպոլիտենում կապիտալ ներդրումների պլանը 1978 թ. և 1979 թ. 10-ը ամիսներին կատարվել է 119,8, շինմոնտաժային աշխատանքներինը 121,8 տոկոսով: Սկսվել են «Բարեկամություն» և «Սարալանջային» («Մարշալ Բաղրամյան») տեղամասերում ընթացքային թունելների գծերի տեղադրման աշխատանքները, որոշակի գործ է կատարվել ինժեներատեխնիկական աշխատողներով և բանվորներով համարելու ուղղությամբ, մետրոպոլիտենի շինարարների համար ստեղծվել են բնակարանային և կուլտուր-կենցաղային պայմաններ:

Միաժամանակ մանրակրկիտ նշվում են տեղ գտած թերությունները և բացքողումները, նշվում ուղիներ դրանք վերացնելու համար: Այսպես, 1979 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ ընթացքային և կայարանային թունելներում 354 ք.մ ետ էր գրաֆիկից, չեն լուծվել նի քանի բնակելի շենքերի իրացման հարցը: Մի շարք կազմակերպությունների հասցեին քննադատական խոսք է ասվում այս քանի համար, որ անբավարար էին կատարվել տրված հանձնարարությունները: Ելենով աշխատանքների հետագա առաջնաթացից երգակոմի բյուրոն իր որոշումով գործնական քայլեր ծեղնարկեց, որոնց իրականացման շնորհիվ տեղերում նկատվեց դրական տեղաշարժեր: Այսպես, մետրոպոլիտենի շինարարությունում կուսակցական դեկավարության ուժեղացման, գործնական օգնություն կազմակերպելու համար, ելենով երգակոմի բյուրոյի որոշումից, ստեղծվեց քարտուղարների խորհուրդ, ուր ընդգրկվեցին մետրոպոլիտենի շինարարությունում աշխատող խոշոր տրեստների, շինվարչությունների կազմակերպությունների քարտուղարները: Նրա առաջնահերթ խորհրդ համարվեց ադմինիստրացիայի նկատմամբ վերահսկողության ֆունկցիայի իրականացումը և այդ ճանապարհով 1978 թ. 744 Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1978 թ. հունվարի 24-ի որոշման անվերապահ կատարումը: Յարկ է նշել, որ խորհուրդն իր դրական գործը կատարեց:

Երգակոմի որոշումը քննարկվեցին մայրաքաղաքի բոլոր կուսչորչկոմներում, ըստ ընդունված կարգի, հսկողություն սահմանվեցին հանձնարարությունները կատարելու համար: Օրինակ, խորհրդային շրջկո-

մի հանճնարարությամբ սահմանված ժամկետում «Բազալտ» գործառանից, «Հայարդկապ», տեխնոլոգիական սարքավորումների արտադրական միավորումներից լրացուցիչ որակյալ մասնագետներ ուղարկվեցին մետրոպոլիտենի շինարարություն, շրջկոմի կողմից հսկողություն սահմանվեց «Հայպետորանսնախագիծ» ինստիտուտի նկատմամբ, մետրոպոլիտենի տեղամասերի շնարարության համար նախագծային, նախահաշվային փաստաթերող ժամանակին հանձնելու նպատակով: Եվ ամբողջությամբ վերցրած Երքաղկոմի, մայրաքաղաքի կուսշղզումների կողմից ձեռնարկած միջոցառումներն օգնեցին 1980 թ. մետրոշինարարների աշխատանքները հաջողությամբ սկսելու համար:

\*\*\*

... Երևանի մետրոյի շինարարության խնդիրների իրականացման, նրա որակական ցուցանիշների ապահովման գործում անգնահատելի էր Երևանի մետրոպոլիտենի տնօրինության դերը, որը կատարում էր պատվիրատուի դժվարին և պատվավոր աշխատանքը: Կապիտալ շինարարությունն իրականացնող ձեռնարկությունների աշխատանքի արդյունքների հետազոտությունից և փոխկապակցվածությունից պարզվում էր, որ շինարարության կատարելագործման համար նշանակալից ռեզերվ էր թաքնված պատվիրատուի ծառայությունում: Կյանքի մեծ ճանապարհ անցած, կազմակերպչական յուրօրինակ տաղանդի տեր, տնօրինության ղեկավար Իվան Պապիկը ոչ միայն կարողացավ կատարել տնօրինության կաղըների ծիշտ ընտրություն, այլև հետևողականության և խատապահանջության շնորհիվ ապահովվեց ծառայությունների օղակների գործունեության արդյունավետությունը, որն ավելի ցայտուն արտահայտվեց մետրոյի շինարարության նախապատրաստական ամենակարևոր ժամանակահատվածում 1979թ.: Մետրոպոլիտենի տնօրինության աշխատողները քախսնդրուեն զբաղվում էին պատվիրատուի և կապալառուի պայմանագրային հարաբերություններով, ապահովում շինարարություն համապատասխան կազմակերպությունների կողմից կատարվող նախագծային - նախահաշվային փաստաթերով, իրականացնում նախագծային ինստիտուտներից ստացվող բանվորական գծագրերի և նախահաշիվների ստուգումը և հանձ-

նումը կապալառուին արտադրության համար, մատակարարում տեխնոլոգիական սարքավորումներ և հատուկ նյութեր, իրականացնում կատարված աշխատանքների ծավալի ընդունում և վերահսկում, աշխատանքների կատարման կազմակերպում հատուկ ուշադրություն դարձնելով աշխատանքների որակին, ապահովում շինարարության ժամանակին ֆինանսավորումը կապիտալ ներդրումների ծավալներին համապատասխան, որոնք նախատեսված էին տիտղոսացուցակով: Ինչ խոսք, նրանց աշխատանքներում լինում էին նաև թերություններ և բացքողումներ, որոնք շտկվում էին: Եվ երբեք ի հայտ չեկավ մի փաստ, որ աշխատանքների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի պատճառով մետրոշինարարները կանգնեին դժվար կացության առաջ:

Կազմակերպական այս վճռական փուլում անձնուրաց աշխատանքով փայլեցին գլխավոր ինժեներ Սերգեյ Բադալյովը, արտադրատեխնիկական բաժնի պետ Գագիկ Ղաֆլանյանը, շինարարական աշխատանքների որակի հսկողության տեսուչներ Սլավիկ Ակրտումյանը, Յանտ Բեգլարյանը, Գևորգ Պապիկյանը, Գենադի Խախանովը, Կամո Աթայանը և Յարեք Ամատունին:

Իրականացնելով այսպիսի բարձր տրանսպորտային կառույց, ինչպիսին մետրոպոլիտենն էր, չէր կարելի աշխատանքի որակին առաջնակարգ ուշադրություն չդարձնել: Այն պահանջները, որոնք պետք է բավարարեն շինարարական-մոնտաժային աշխատանքների որակը, որոշվում էին արդեն հաստատված շինարարական նորմաներով և կանոններով, իսկ մետրոշինարարության մեջ այս կամ այն կառույցի երկարակեցությունը որոշում էին հատուկ համանգներով և տեխնիկական պայմաններով: Շինարարական – մոնտաժային աշխատանքների որակի բարձրացման համար հսկայական նշանակություն ուներ աշխատանքի նոր ձևերի և մերժմերի կիրառումը, նյութական և բարոյական խրախուսումը: Տնօրինությունը հատուկ ուշադրություն էր դարձնում բարդ հիդրոերկրաբանական, գրունտային ջրերի մեծ հոսքի պայմաններում տարվող ստորգետնյա աշխատանքների որակին: Երևանի մետրոյի շինարարության տեխնիկական ստուգումը կատարվում էր շինարարության վարչության տնօրինության լեռնային գործի փորձված տեսուչների և «Հայպետորանսնախագիծ» ինստիտուտի հեղինակային խմբի կողմից: Ցուրաքանչյուր շինարարական տեղամասում գործում

էին հեղինակային հսկման մատյաններ, որտեղ ամեն շաբաթ կառուց-  
վող շինարարության դիտումից հետո նշումներ էին կատարվում աշխա-  
տանքի որակի վերաբերյալ։ Այստեղ հատուկ նշանակություն ուներ բե-  
տոնացման և հիդրոմեկուսացման աշխատանքների հսկումը։

Անհրաժեշտ որակի ապահովումը պարտադիր օրենք էր և մոտեցու-  
մը միանգամայն խիստ։ Հսկող աչքից ոչ մի բան չէր վրիպում։ Բազմա-  
թիվ օրինակներից բերենք միայն մեկը։ Ստուգումներից մեկի ժամանակ  
պարզվեց, որ «Բարեկամություն» շինարարական տեղամասում բետո-  
նային աշխատանքների որակը ցածր էր և միայն տնօրինության հաճառ  
պահանջներից և կառուցի տեխնիկական բաժնի միջամտությունից հե-  
տո վերանայվեցին ցեմենտի բաղադրությունը և դրա ծախսի նորման,  
որի հետևանքով բետոնի և հարդարման աշխատանքների որակը զգա-  
լիորեն բարձրացավ։

Հետագայում /իհմնականում 1980թ./ խիստ հսկողություն սահման-  
վեց ստորգետնյա կայարանների, նախարարների, թեր շարժասան-  
դությների, թունելների ճարտարապետական հարդարման աշխա-  
տանքների որակի ապահովման վրա։ Այս աշխատանքների իրակա-  
նացման, Երևանի մետրոշինի արդյունավետության և որակի բարձրաց-  
ման գործում իր բարձր գիտելիքների և անհրաժեշտ պահանջկուտու-  
թյան շնորհիվ իր դրական հետքը թողեց Երևանի մետրոպոլիտենի  
տնօրինության գլխավոր ինժեներ Սերգեյ Բաղալովը։

\*\*\*

...1979թ. առաջին օրերից Երևաց, որ Երևանի մետրոպոլիտենի շի-  
նարարությունը շահագործման կիանձնվի նախատեսված ժամկետին։  
Բանն այն էր, որ ոչ միայն Միության յոր քաղաքների մետրոպոլիտեն-  
ների լավագույն մասնագետները գործուղվում և գալիս էին Երևանի  
մետրոշինարարներին օգնելու, այլև ցայտուն նկատվում էր Միության  
հանրապետությունների ամենագործուն աջակցությունը։ Եվ ինչպես  
միշտ, առաջատար դերը պատկանում էր Ռուսաստանին, որոնցից մենք  
ստանում էինք էլեկտրագնացքներ, թուց վահանակներ, ռելէներ, օդա-  
փոխիչ սարքավորումներ, շարժասանդուղքներ, քարշային ենթակա-  
յաններ և այլն։ Էլեկտրասարքավորումները, թուց վահանակներն ու  
խողովակները ստացվում էին Ուկրաինայից։ Ուզբեկստանից ստանում

էինք մարմար, Վրաստանից էլեկտրասարքավորումներ, խողովակներ,  
փայտակոր, Աղրբեջանից երկաքքետոն թուց վահանակներ և այլն։

3ԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1978թ. հունվարի  
24-ի որոշումից դեռ մեկ տարի չեր անցել, սակայն մետրոպոլիտենի շի-  
նարարության և հանրապետության կազմակերպություններին ծեռնար-  
կություններին տրված հանձնարարությունների արդյունքները ուրա-  
խացնում էին մեզ։ Պետք է նշել, որ նրանք մեծ պատասխանատվու-  
թյամբ էին վերաբերում տրված հանձնարարությունների կատարմանը։  
Բավարարվենք միայն մեկ օրինակով։

Շինարարության պրոցեսում օգտագործվում էին զգալի քանակու-  
թյամբ թուց վահանակներ։ Չարենցավանի «Ցենտրալիտին» հանձ-  
նարարվել էր թուց վահանակների փականների արտադրությունը։  
Չեռնարկության կոլեկտիվը մեծ պատասխանատվությամբ վերաբեր-  
վեց այս պարտականությանը և կարծ ժամանակամիջոցում յուրացնե-  
լով այդ դետալների արտադրությունը մեկ տարվա ընթացքում շուրջ  
1000 տոննա թուց վահանակների փական առաքվեց Լենինգրադ, որի  
շնորհիվ հնարավորություն ընձեռվեց կոմպլեկտավորել մեծ քանակու-  
թյամբ թուց վահանակներ։ Մետրոպոլիտենի շինարարության հաջո-  
ղություններն արձանագրվեցին մեկ կարևոր փաստաթղթում։

1979թ. դեկտեմբերի 17-ին 3ԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների  
խորհուրդը համատեղ քննարկեց «Երևան քաղաքի մետրոպոլիտենի  
առաջին հերթի գործարկումն ապահովելու միջոցառումների մասին»  
հարցը։ Նշվեց, որ Երևանի մետրոշինարարները բավականին մեծ ծա-  
վալի աշխատանքներ կատարեցին, որով լուրջ նախադրյալներ ստեղ-  
ծեցին առաջին հերթի կոմպլեքսի թղարկումը ժամանակին իրակա-  
նացնելու համար։ Այս, կատարվեցին սպասվածից ավելի աշխատանք-  
ներ։ Երևանի մետրոյի շինարարությունն իրականացնող N 160 շինոն-  
տաժային վարչությունը և, 1979թ. մարտից շինարարությամբ ծեռնա-  
մուխ եղած N 25 թունելային ջոկատը, նրանց օգնող՝ «Հայրունելշինի»  
մեխանիզացիայի վարչության, ավտոբազայի, N 23 և 8 թունելային ջո-  
կատների և մի շարք ենթակապալառու կազմակերպությունների ակ-  
տիվ աշխատանքը տվեցին իրենց պտուղները։ 1979թ. ընթացքում կա-  
ռուցվեցին 1264 մետր ընթացքային և 344 մետր կայարանային թունել-  
ներ, տարբեր նշանակությունների համար իրականացվեցին 2 կմ հորա-

տանցման աշխատանքներ, սկսվեցին հիմնական գծերի տեղադրումը, իրականացվեցին համատեղված քարչային ենթակայանների օդափոխիչ համակարգերի, տարբեր նպատակների համար ծառայող սարքավորումների մոնտաժման աշխատանքներ, ավարտման եզրին հասցեց կարելային ցանցերի տեղադրումը, սկսվեց վերգետնյա նախասրահների շինարարությունը, խորը ներդրման կայարանների հարդարումը և այլն: Անբողջությամբ վերցված մետրոպոլիտենի շինարարությունուն շինմոնտաժային աշխատանքների տարեկան պլանը կատարվեց 123,9 տոկոսով:

Անկախ այս ամենից մետրոպոլիտենում շինարարական աշխատանքները դեռ բավականին շատ էին և 1980թ. շեմին Յայաստանի կուսակցության և կառավարության կողմից մետրոյի աշխատանքների ընթացքին անդրադառնալը միանգամայն տեղին էր ու կենսական անհրաժեշտություն գործնական մոտեցմամբ, հետագա անելիքների հստուկ ծրագրերի շարադրմամբ, կատարման վերահսկողությամբ:

...Մետրոյի շինարարության գործուն ծեռք բերած հաջողություններն անհնարին էին առանց վարչության բոլոր ծառայությունների կազմակերպված և նպատակային գործունեության: Նրանց ըստ արժանվույն գնահատելու համար հակիրճ կանգ առնենք հիմնականուն երկու ծառայությունների գործունեության վրա:

Մետրոպոլիտենում շինարարական ծառայությունների աշխատանքներում հատկապես լուրջ բեկում կատարվեց 1979թ. և իր օրգագումն ապրեց 1980-ին: Առանց բացառության, բոլոր ստորաբաժնումներում մարդիկ աշխատում էին մեծ պատրաստականությամբ, նվիրումով: Ցանկանում ենք հիմնականուն խոսել ամենաորոշիչ օղակներից մեխանիկական ծառայության աշխատանքների մասին:

Իրոք, շինարարության առաջընթացը մեծապես պայմանավորված էր մեխանիկական ծառայությունների հստակ աշխատանքով: Ստորգետնյա անբարենպաստ աշխատանքային պայմանները հնարավորություն չեն տալիս տարբեր նպատակների համար նախատեսված մերենաներն արդյունավետ օգտագործել, դրանք երբեմն օրվա ընթացքում մի քանի անգամ շարքից դուրս էին գալիս, հետևաբար այդ ծառայությունների հստակ աշխատանքով էր պայմանավորված մերենաների ժամանակին վերանորոգումը, բանվորական ուժին պարապուրներից:

զերծ պահելը: Մեխանիկական ծառայությունների ղեկավարներն էին «Բարեկամություն» տեղամասում Կոլողյա Հովհաննիսյանը, «Մարշալ Բաղրամյան» տեղամասում Սաշիկ Ավանեսյանը, «Երիտասարդական» տեղամասում Հովհաննես Պոնչոյանը, «Զորավար Անդրանիկ» տեղամասում Ալեքսանդր Յարությունյանը: «Սասունցի Դավիթ» տեղամասում այդ պարտականությունները դրված էին «Երթինչինի» համապատասխան ծառայությունների վրա: Պետք է ասել, որ նշված տեղամասերի բոլոր գլխավոր մեխանիկները հմուտ և բարեխիղ, իրենց գործը սիրող մարդիկ էին: Նրանք աշխատում էին առանց որևէ «հրահագի», անսահման մեծ նվիրումով: Բացի հերթափոխություններում, առանց որևէ իրահանգի աշխատանքի հստակ կազմակերպումից, իրենց սուրբ պարտականությունն էին համարում բոլոր հերթափոխությունների աշխատանքներին մասնակցելը: Անհրաժեշտության դեպքում օգնություն էին խնդրում հարևան տեղամասի աշխատողներից, անձամբ օգնում վթարված մեխանիզմն արագ նորոգելուն: Նրանց առաջին «շտապ օգնությունն» էր N 160 շինվազության մեխանիկական արտադրամասը: Արտադրամասի պետ Գարուշ Պապյանը մեխանիկների ոգին էր: Նրա բարեխիղը աշխատանքը մեծապես օգնեց հաղթահարելու դժվարությունները: Արտադրամասում աշխատում էին շուրջ 30 որակյալ բանվորներ: Գարուշ Պապյանը հատկապես 1979թ. վերջին և ողջ 1980թ. ընթացքում տեղամասում առաջացած վթարները վերացնելու, մեխանիկական մշակումներ, անհրաժշտ զոդման աշխատանքներ կատարելու համար սահմանեց շուրջօրյա հերթապահություն, դրանով իսկ հնարավորություն ընծեռվեց խափանված սարքերը, մերենաներն արագ վերանորոգելու համար: Նա երկար ժամանակ պահանջող դետալների պատրաստման հսկողությունը վերցրեց իր ծեռքը: Նրա և արտադրամասի աշխատակիցների բարեխիղը նոտեցումները մեծապես նպաստեցին մետրոպոլիտենի աշխատանքների կատարման ապահովմանը: Որպեսզի մեխանիկական ծառայությունների գործունեության մասին ընթերցողն անբողջական պատկերացում կազմի, ասենք, որ նրանց պարտականության մեջ էր նմտում այնպիսի կարևորագույն աշխատանքների իրականացումը, ինչպիսիք էին շարժասանդուղքների, օդափոխիչ շարքերի, ուժային ենթակայանների, տրանսֆորմատորների, 25 մետր երկարությամբ ուղեւերի, շավալների,

պատրաստի բետոնի, մետաղամեկուսացման թիթեղների ժամանակին աշխատատեղեր հասցնելը, մեքենաների և սարքավորումների մոնտաժային հրապարակ տեղափոխելու: Ինչպես երևաց, մետրոպոլիտենում ամենակարևոր և պատասխանատու գործին էին լծված մեխանիկական ծառայությունները: Եվ մետրոյի տեղամասերում շինարարության ամենակարևոր ժամանակահատվածում, բացահայտ նկատվում էր այս ծառայության բարեխիդ աշխատանքը: Այստեղ մետրոպոլիտենի համար ստացված մեքենաների, սարքավորումների մոնտաժային հրապարակ հասցնելու գործում իր կազմակերպչական աշխատանքով, մտահետացումներով ուղղակի փայլեց N 160 շինանոտաժային Վարչության գլխավոր մեխանիկ Սուրեն Սեղրակյանը: Նա հասավ այն բանին, որ բոլոր տեղամասերի մեխանիկական ծառայությունները վերածվեցին մեկ ամբողջական ընտանիքի: Անկախ այն բանից, թե որ տեղամասի համար էին ստացվել սարքավորումները, մեխանիզմները, մեխանիկական ծառայության մասնագետների հավաքական ուժի միջոցով անմիջապես կազմակերպվում էր որպանց արագ տեղափոխումը մոնտաժային հրապարակ: Ահա թե ինչու մետրոպոլիտենի գործարկման նախապատրաստական կարևոր ժամանակահատվածում /հիմնականում 1979-1980-ական թթ./ չի արձանագրվել թեկուզ մեկ դեպք, եթե նախատեսված աշխատանքները չիրականացվեն այս ծառայության կողմից: Իր բարձրության վրա գտնվեց շինվարչության գլխավոր էներգետիկի ծառայությունը Ֆելիքս Սարգսյանի գլխավորությամբ, որպանց որի հնարավոր չեր ամբողջությամբ իրականացնել մեխանիկների առջև դրված խնդիրները:

Ստորգետնյա ջրերից ծերազատվելու գործում մեծ էին ջրերի «չեղացման» աշխատանքները: Ահա թե ինչու հիմնականում նաև այդ նպատակների համար «Հայթունելչին» ենթակայության տակ ստեղծվեց մեխանիզմացիայի վարչությունը: Նրա վրա դրվեց բունելներում մետրոպոլիտենի բոլոր հատվածներում մետաղների թիթեղներով գործման և այլ աշխատանքների իրականացման ճանապարհով ջրամեկուսացումը: Մետաղամեկուսացման աշխատանքների կազմակերպումն առաջին իսկ օրից հանձնարարվեց այդ վարչության պետ Ռաֆիկ Իգիթյանին: Նրան հետագայում կառավարության կողմից բարձր գնահատականի արժանացնելը միանգամայն տեղին էր: Տարիներ շարունակ

մետրոպոլիտենի մետաղամեկուսացման բոլոր աշխատանքները կատարվեցին ժամանակին և բարձր որակով:

Այժմ ծանոթանանք մետրոյի շինարարության առաջին քայլի հնարավորությունները «ստեղծողներից» մի քանիսի հետ, որոնք գրեթե առաջին իսկ օրից տարիներ շարունակ աշխատեցին սկզբնական շրջանում որպես N 8 բունելային ջոկատի, այնուհետև N 160 շինմոնտաժային վարչության մարկեզերներից լավագույնների հետ. Զինահիմա Անտոնեսյան, Ելենա Ակրիտովա, Կարինե Օգանովա, Գոհար Տանանյան: Բոլորն էլ սկսած ստորգետնյա արագընթաց տրամվայի շինարարության սկսվելուց, մարկեզերային գործ էին անում. գործիքները ծեղբներին իջնում էին բունել, որոշում հորատանցման ճիշտ ուղղությունը: Նրանք եկել էին Միության տարրեր վայրերից Զինան Սուլիումից, Ելենան Թթիլսիից, Կարինեն Աղստաֆայից, իսկ Գոհարը Երևանից էր: Այս, նրանք շնորհակալ, պատասխանատու և անհրաժեշտ մեծ գործ կատարեցին: Որքան էլ տարօրինակ էր, բայց փաստ էր, մարկեզերի խիստ պակաս էր զգացվում:

Շինարարությունից հեռու կանգնած մարդու մտքով անգամ չի անցնի, որ մարկեզերներն այս «անհորիզոն» ընդերքում, բառացիրեն «կուրորեն» հորատանցողների առջև բացում են գործելու հորիզոնը, որոշում ապագա բունելի միակ ճիշտ ուղղությունը: Ընդերքում որևէ նպատակի, թեկուզ մեկ սանտիմետր ծանապարհ գնալու ուղղություն տվյալը, անվտանգ քայլի ապահովման հիմք դնողը մարկեզերն է: Այս աշխատանքը պահանջում է սանտիմետրի հարյուրերորդական, նույնիսկ հազարորդական ծշտություն: Մարկեզերները սինալվելու իրավունք չունեն:

Հորատանցումն իրականացվում էր չորս հերթափոխում, բայց մարկեզերների պակասի պատճառով աղջկներն ստիպված աշխատում էին երկու, երրեմն երեք հերթափոխ առանց տրտնջալու, զգացվում էր նրանց մեծ նվիրվածությունը սիրված գործին:

Իրոք, յուրաքանչյուր բնագավառում հաջողության առաջին աղյակն այն է, թե նրա դեկավարումն ում է հանձնարարվում, արդյո՞ք նա ի վիճակի է բացի իր գիտելիքներից, կազմակերպչական ունակություններից, աշխատողների նկատմամբ լինել հոգեհարազատ: Ուղղակի երջանկություն էր, որ այս կարևոր պատասխանատու գործն ղեկավարում

Եր այնպիսի բանիմաց մարդ, ինչպիսին Իվան Ակիմի Իվանովը էր: Իր գործին նվիրված, բնածին տաղանդի տեր մարդու աշխատանքը, ինչպես Երևաց նրա հետ մեր համատեղ աշխատանքի շուրջ քսան տարիներին, անհնարին էր, որ տեսանելի չլիներ նրան շրջապատող մարդկանց: Ինչպես ասվել է, Երևանի Խորհրդային շրջանի կազմավորման առաջին հսկ օրից N 8 թունելային ջոկատի գործունեությանը ծանոթանալիս մեզանից յուրաքանչյուրը նկատում էր, թե Իվան Ակիմովիչը, որպես կուսկազմակերպության քարտուղար, ինչպիսի մեծ հեղինակություն էր վայելում կոլեկտիվի շրջանում և կարծ ժամանակից հետո նա եղավ նաև շրջանի ակտիվի կողմից սիրված անձնավորություններից մեկը: Նրա անցած ողջ բեղմնավոր կյանքը նվիրվել է շինարարական աշխատանքներին աննացորդ ծառայելու գործին և պատահական չէր, որ մինչև Հայաստան գալը Միության «Գլխավորնելմետրոշինի» կողմից միշտ գործուղել է թունելաշխնության պատասխանատու վայրեր:

Տօնսկում ծնված և մեծացած, այնտեղ մասնագիտական կրթություն ստացած երիտասարդ մասնագետը գործուղվում է Բաքու, դարձում այնտեղի մետրոշինարարության առաջին մարկչերներից մեկը: Աշխատելով թե Սևաստոպոլում, թե Կրասնոյարսկում, Նովոկուզնեցկում, թե Տաշքենդում, իրեն միշտ դրսնորել է որպես գրագետ մասնագետ, իր գործը լավ հասկացող, բանիմաց կազմակերպիչ ու դաստիարակ և պատահական չէ, որ նրա բարեխիլծ աշխատանքը միշտ գնահատուցել է կառավարական բարձր պարզությունը: Հայաստանում թունելաշխնությանը մեծ զարկ տալու նպատակով 1967թ. միութենական «Գլխավորնելմետրոշինը» կազմակերպեց N 307 շինոնտաժային գնացք /CMIT 307/ շինարարական խոշոր կազմակերպությունը, որը հետագայուն վերափոխվեց N 8 թունելային ջոկատի, ապա N 160 շինոնտաժային կազմակերպության, կարծ ժամանակից հետո՝ «Հայթունելշին» վարչության: Եվ նշված բոլոր կազմակերպություններում առաջին հսկ օրից որպես գլխավոր մարկչերեղ այս աշխատանքները դեկավարել է Իվան Իվանովը և միշտ նկատվել է սրտացավ ու բարեխիլծ աշխատանքը: Պատահական չէ, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Միության մետրոշինարարության ողջ ընտանիքում մեծ գոհունակությամբ ընդունեցին նրան Հայաստանի Հանրապետության վաստակավոր շինարարի բարձր կոչման արժանացնելու լուրը:

## Վճռուղող ԺԱՄԱՆԱԿԱՐԱՏՎԱԾ

1980թ. Երևանի մետրոպոլիտենի շինարարության ծավալի մասին կուտակված ֆաստագրական հարուստ և արժեքավոր նյութերը հուշում են անտարբեր չանցնել նրանց կողքով, թեկուզ հակիրճ անդրադարձնալ կատարված աշխատանքներին երբեմն առանց մեկնաբանությունների ու վերլուծության:

... 1980թ. դարձավ մետրոշինարարների համար վճռական, գերլարված, միաժամանակ ամենապատվարել տարին: Առաջնահերթ խնդիրն էր անվերապահորեն կատարել մետրոյի շինարարության իրականացման գրաֆիկը: Դեռևս մնում էր անցահատել 1982 մետր թունել, տեղադրել ավելի, քան 11,3 կմ երկարության գծեր /տես ամփոփագիրը/, ինչպես նաև մնութանել 4 համատեղված քարշային ենթակայաններ, անցկացնել ավտոմատ ազդանշանների համակարգը, կատարել կայարանների ճարտարապետական հարդարման աշխատանքներ և այլն: Միայն մետրոյի թղթարկման առաջին հերթի անփոփագրի մեջ նախատեսված հինգ աշխատանքների ծավալներից պարզ նկատվում է, որ 1980 թ. համար դեռ շատ ու շատ անելիքներ կային:

... «Հայպետրանսնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը 1979թ. օգոստոսի 25-ին ավարտեց մետրոպոլիտենի համար նախատեսված տարեկան բոլոր աշխատանքները բանվորական գծագրերը, և սկսեց 1980թ. ծրագրված նախագծերի իրականացումը: Տարվա սկզբից կոլեկտիվը ծերնանուխ եղավ «Գործարանային» կայարանից մինչև «Շենգավիթ» կայարանն ընկած հատվածի նախագծային աշխատանքների մշակմանը: Ինստիտուտի մասնագետները լուրջ միջոցներ ծերնարկեցին նախագծերի կատարելագործման, նոր, առաջավոր կոնստրուկցիաների օգտագործման, առաջավոր տեխնոլոգիաների ներդրման, նախագծերի ինքնարժեքի իշեցման, մետաղների, ցենենտի և անտարայութերի խնայողաբար օգտագործման ուղղությամբ:

1980թ. ընթացքում «Հայպետրանսնախագիծ» ինստիտուտի կողմից նախագծերի և այլ փաստաթղթերը ժամանակին չափահովելու և ոչ մի դեպք չեղավ:

... Հայաստանում առաջին անգամ իրականացվում էր բարդ ինժե-

Ներական կառույց մետրոպոլիտեն, հետևաբար փորձված մասնագետների մասնակցությունը մետրոյի շինարարությանը ոչ միայն անհրաժեշտ էր, այլև կենսական պահանջ էր թեկուզ որակյալ, սակայն տեղի անփորձ մասնագետների համար: Ահա թե ինչու սկսած հիմնականում 1978թ. և հատկապես 1979թ., Ուլսաստանից, Բելոռուսիայից, Ուկրաինայից, Վրաստանից և այլ հանրապետություններից եկած մետրոպոլիտենի շինարարները և այլ մասնագետները մեծ թափ հաղորդեցին Երևանի մետրոյի շինարարության առաջին հերթի գործարկման աշխատանքներին:

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի թողարկման համար աշխատանքների ծավալները «Բարեկամություն» կայարանից մինչև «Սասունցի Դավիթ» կայարանը

Աշխատանքների անվանումը	Աշխատանքները	Առ 1980թ. կատարված աշխատանքներ	Մնացողորդ աշխատանքներ 1980թ. համար
Ընթացքային թունելներ	9723	8314	1409
Կայարանային թունելներ	1410	1137	273
Թունելներում գծերի տեղադրում	1076	61335	9431
Վերգետնյա ուղեմասում գծերի տեղադրում	1900	—	1900
Հիդրոմեկուսացման աշխատանք.	9550	4655	4895

1980թ. հունվարին Երևան եկան բավականին մեծ թվով մետրոշինարարներ, որոնցից էին Լենինգրադից հանրահայտ հորատողների բրիգադավար, Սոցիալիստական աշխատանքի հերոս Միխայիլ Գրիգորի Շիխոնովիչը, ԽՄՀՍ պետական մրցանակի դափնեկիր Դմիտրի Պավլովիչ Դորոֆեևը: Նրանք ծեղնամուխ եղան ամենածանր տեղամա-

սի ապագա «Զորավար Անդրանիկ» կայարանի հորատանցման աշխատանքներին: Մինչևի մետրոպոլիտենից եկած հորատանցողներն սկսեցին «Զորավար Անդրանիկ» կայարանում շարժասանդուղքի համար թեք հորանի հորատանցումը: «Մոսմետրոշինից» եկան հորատողների բրիգադներ, Ծանաչված բրիգադավարներ, Սոցիալիստական աշխատանքի հերոսներ Ալեքսանդր Սերգեյի Սոլիխանովի և հյան Իվանի Շեպելի գլխավորությամբ: Մոսկվացիները ծեղնամուխ եղան «Մարշալ Բաղրամյան» տեղամասի հորատանցման աշխատանքներին, իսկ Խարկովի հորատողներն սկսեցին ստորգետնյա հորատանցումը «Հանրապետության հրապարակ» տեղամասում:

1980թ. հունվարի 6-ի տվյալներով, Երևանի մետրոշինարարների հետ կողք-կողքի աշխատում էին Միության հանրապետություններից և մարզերից եկած 240 որակյալ մասնագետներ:

Օգնության եկած մեր հյուրերին հայկական երախտիքի զգացումով առ ու հացով դիմավորեցին և նույնպես էլ ճանապարհեցին:

«Գլխավորնելմետրոշինի» ուղեգորով Լենինգրադի 70 մետրոշինարարներ եկան Երևան: Մեծ ջերմությամբ նրանց ընդունեցին «Հայրունելշին» N 25 բունելային ջոկատի ընկերները, տեղավորեցին հարմարավետ հանրակացարաններում: Աշխատանքի գնալու համար հատկացվեց ավտորուս, աշխատատեղերում ստեղծվեցին աշխատանքային և կենցաղային նորմալ պայմաններ և անհրաժեշտ վերաբերունք: Կարծ ժամանակի ընթացքում նրանք ծանոթացան Երևանի տեսարժան վայրերին, գնացին Ծաղկաձոր, Եղան Հայիհաներգում և այլն: Այսպիսի եղբայրական վերաբերունքը, ինչպես լենինգրադցիներն էին ասում, ոգևորում էր նրանց, ներդնում էին բոլոր ուժերը, որպեսզի իրենց հանձնարարված 450 մետր հորատանցումը կատարեն մինչև տարվա առաջին կեսը: Եվ դա իրականություն դարձավ:

Երևանի մետրոպոլիտենի շինարարությունն իրավամբ դարձավ խորհրդային ժողովուրդների բարեկամության, եղբայրության վառ արտահայտություն: Մեզ օգնողների սրտացավ մոտեցումը յուրաքանչյուր քայլում նկատելի էր: Նրանք աշխատում էին ամենառժամանակակի և պատասխանատու տեղամասերում: Այսպես, Մոսկվայի Կալինինի շրջանի մետրոյի աշխատանքներն ավարտելուց հետո Երևան եկան «ճանապարհին» մննտաժային բրիգադը: Կատարված աշխատանքների ծավալը

պատկերացնելու համար ասենք, որ նրանք պետք է գցեին 150 կմ ազդանշանային ուղղեկապման համակարգ, տեղադրեին 120 լուսանշան, 65 ինքնարգելակ /ավտոստոր/ և 250 կարգավորող կափարիչ /դրոսել/ տանսֆորմատորներ, 5 ռելեային սենյակներում մոնտաժեին 110 աճատիչ /էլեկտրական խրոցակ/ և 3000 այլ սարքեր: Կոնստանտին Սերգեևի բրիգադը մեծ պատրաստակամությամբ ծեռնամուխ եղավ գործին: Արդեն ապրիլ ամսվա շեմին նրանք տեղադրել էին 20 կմ կարել, նախապատրաստել էին ընթացքային սարքավորումների մոնտաժման համար անհրաժեշտ աշխատանքային մեծ ծակատ: Գործին մեծ նվիրումով տրվել էին էլեկտրամոնտաժողներ Նիկոլայ Մարչենկոն, Իվան Բորիսովը, Նիկոլայ Մինասը և ուրիշներ:

«Զորավար Անդրանիկ» կայարանից մինչև «Հանրապետության հրապարակ» կայարանն ընթացքային թունելներում աշխատում էին «Մինսկմետրոշինի» N 1 վարչության հորատանցողները: Նրանցից էին հորատողներ Ալեքսեյ Մուրավյովը, օղակավար Վլադիմիր Լաղուտան, բրիգադիր Պյոտր Շիխոնիրովը, լեռնային վարպետ Եվգենի Լևոնվը: Այստեղ աշխատում էին նաև «Տրանսազդանշանշինի» N 801 շինոնտաժային գնացքի մոնտաժողները: Մինսկի N 1 շինվարչության հորատողներին հանձնարարվեց հորատել «Զորավար Անդրանիկ» կայարանի շարժասանդուղքի համար թեր հորատանցը: Իրենց հանձնարարությունը կատարելուց հետո առաջին եռամսյակի վերջին օրը խուժեցին ծախ ընթացքային թունելը, անցահատեցին առաջին մետրը և տեղադրեցին առաջին թունե վահանակը: Նրանց հանձնարարված էր մինչև հուլիսի 1-ը ընթացքային թունելում անցնել 200 մետր, իսկ կայարանայինում 30 մետր: Յաղթահարելով տեղամասի բնական խիստ դժվարությունները հորատողները որոշեցին մինչև ապրիլի առաջին կեսն ընթացքային թունելում անցահատել 95 մետր: Կազմակերպված աշխատանքի շնորհիկ իրականացվեց նախատեսվածը հնարավորություն ստեղծելով իրենց տրված հանձնարարությունը կատարել նույնիսկ ժամանակից շուտ:

Ի դեպ, պետք է ասել, որ Միխայիլ Շիխոնովիչն ավելի քան 30 տարի էր, ինչ աշխատում էր «Լենմետրոշինում»: 1976թ. արժանացել էր Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչմանը: 1979թ. դեկտեմբերին մետրոպոլիտենի Մոսկվա-Պետրոզավոլոսկ-Լենինգրադյան գծում աշ-

խատելով արագընթաց հորատանցման եղանակով մեկ ամսում ընթացքային թունելու հորատանցել էր 1000 մետր, դրանով իսկ սահմանել համաշխարհային ռեկորդ: Սակայն գալով Երևան առաջին ամսվա աշխատանքի արդյունքից շփորչել, կարծես իրեն կորցրել էր: Բան այն է, որ «Հանրապետության հրապարակ» տեղամասում իր բրիգադի 10 մարդկանցով աշխատելով հորատանցման մեթենայական եղանակով/Երկու հերթափոխով/ փետրվարին անցահատել էին ընդամենը 33 մետր և տեղադրել 33 թունե վահանակներ: Իհարկե, հետագայում հաղթահարելով Երևանի ընդերքի ապարները և խանգարող ահեղի ջրահոսքը, այստեղ ևս բոլորի համեմատ փայլեց իր աշխատանքային մեծ թափով:

Սակայն իիշենք մեկ ամսում 1000 մետր և դրա դիմաց 33 մետր Երևանում....

«Գլավմետրոպոլիտենի» Մոսկվայի N 901շինոնտաժային գնացքի տեղամասերից մեկը ղեկավարում էր Ս. Դիրմովը, որի կոլեկտիվն աշխատում էր Երևանի մետրոյի տարբեր տեղամասերում: Նրանց կարգախոսն էր մետրոշինարարության մեջ չկա Երկրորդական աշխատանք, քանի որ ստորգետնյա մայորությների ստեղծման հետ կապված բոլոր գործերն էլ կարևոր են: Շինոնտաժային գնացքի կոլեկտիվին առաջադրվել էր իրականացնել «Բարեկամություն», «Մարշալ Բաղրամյան», «Երիտասարդական» կայարանների հարդարումը: Նրանք դեռ 1979թ. ծերնամուխ եղան այս գործին: Համեմատաբար սեղմ ժամկետում ավարտեցին «Բարեկամություն» տեղամասի աջ կայարանային թունեի հարդարման աշխատանքները, իսկ 80-ի մայիսին ավարտեցին նաև ծախ թունելի աշխատանքները /խոսքը սպաղի մասին է/:

Մոսկվայի մասնագետներն ավարտեցին նաև «Երիտասարդական» կայարանի շարժասանդուղքների թեր թունելի հարդարումը, իսկ ապրիլի վերջին աշխատանքներ ծավալեցին «Մարշալ Բաղրամյան» կայարանում:

Երևանում եղած ժամանակ Մոսկվայի մետրոշինարարները տեսնում էին, որ հայ մետրոշինարարների Երիտասարդ կոլեկտիվը ջանք չի խնայում աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար: Շինոնտաժային գնացքի պետ Ս. Դիրմովն այս տեսնելով ասում է. «Մեգանից յուրաքանչյուրը ևս ծգուում է լավ աշխատել և իր ավանդը ներդ-

նել Երևանի մետրոպոլիտենի առաջնեկը խոստացված ժամկետում գործարկելու համար»:

«Թրիլիստունելշինի» մշտական հարմարանքների մոնտաժման աշխատողները եկել էին Երևան մետրոպոլիտենի «Երիտասարդական», «Հանրապետության հրապարակ» կայարանների շարժասանդուղբերը մոնտաժելու համար։ Նրանք մեզ մոտ եղան 1979թ. Երկրորդ կեսին և մոնտաժեցին նոր «ԵՏ-3» և «ԵՏ-5» տիպի շարժասանդուղբերը, որոնց առաջին անգամ պետք է մոնտաժեն մեր մայրաքաղաքում։ Դրանք հնի համեմատ մի շարք առավելություններ ունեին։ Բավական է միայն ասել, որ իհն տիպի շարժասանդուղբերի քաշը հասնում էր 2400-2500 կգ-ի, իսկ նորերինը չին անցնում 750-800 կգ-ից։ Դասկանալի է, որ անհամեմատ հեշտանում էր դրանց մոնտաժումը, իսկ հետագայում նաև շահագործումը։ Թրիլիստիները մեզ մոտ կիրառելու էին ևս մեկ նորույթ։ Մեղադրվելու էր շարժասանդուղբերի նոր տիպի հաղորդակներ։ Դինը, որը կշռում էր 52 տոննա, մոնտաժողներին էր տրվում նաև-մաս, տեղում հավաքելու համար։ Դժվար չէ կոահել, թե որքան ժամանակ, ջանքեր, ավելորդ աշխատանք էր պետք։ Նոր հաղորդակները, որ նախկին ներից թերև էին 10 տոննայով, ստացվում էին արդեն հավաքված, և մոնտաժողներին մնում էր միայն տեղադրել դրանք։ Ի դեպ պետք է ասել, որ Երևանի մետրոպոլիտենի շինարարության մեջ օգտագործվեցին նոր տեխնիկայի նաև այնպիսի տեսակներ, որոնք առաջին անգամ ներդրվեցին միութենական մետրոպոլիտենի շինարարությունում։

Թրիլիսիի բոլոր մետրոշինարարներն աշխատում էին եռանդով։ Նրանցից հիշատակության արժանի են հատկապես բրիգադավար Նոյարի Մաղլակալիձեն, օղակավար Զոնի Միքիալվիլան, մոնտաժողներ Զեղամի Մաճավարիանին, Կաժա Ենոքիձեն, որոնք մեծ սրտացավությամբ կատարեցին շինարարական մոնտաժային աշխատանքները։

... Կատարեն կարելի է ասել, որ Երևանի մետրոպոլիտենը ոչ միայն համաժողովրդական, այլև ինտերնացիոնալ կառույց էր։ Արդեն 1979թ. վերջերին Խորհրդային Միության ավելի քան արդյունաբերական 200 ձեռնարկություններ և կազմակերպություններ Երևանի մետրոպոլիտենի շինարարության համար պատրաստում և մատակարարում էին լեռնահորատանցման տեխնիկա, Էլեկտրասարքավորումներ, ավտոմատացման միջոցներ, կոմպլեկտավորող սարքեր և սարքավորումներ, շինարարական կոնստրուկցիաներ և նյութեր։ Լենինգրադի վագոնաշինական և «Մտիշինի» մեքենաշինական գործարանները Երևանի

մետրոպոլիտենին պետք է հատկացնեին նոր սերիայի 52 վագոն։ Տրանսպորտային վերամբարձ սարքերը շարժասանդուղբերը, արտադրում էր Լենինգրադի «Էքսկավատոր» արտադրական միավորումը, որոնց շինարարները փետրվար ամսին առաջինն ուղարկվեցին Երևանի «Երիտասարդական» կայարանի տեղամասի համար, իսկ մարտին սկսեցին շարժասանդուղբերի մոնտաժման աշխատանքները։ Կոնստրուկցիոն ռելսեր Երևանի մետրոպոլիտենն ստանում էր Սիրիաից Նովսուխիրսկի մետաղուրգիական գործարանից և այլն։ Միության տարբեր հանրապետություններից, քաղաքներից 1980թ. առաջին երամսյակում նախատեսված հիմնական սարքավորումները, մեխանիզմներն ստացվեցին ժամանակին և մետրոպոլիտենի տեղամասերում գրաֆֆիկի համապատասխան կատարվում էին դրանց տեղադրման, մոնտաժային աշխատանքները։

Լավ էր դրված նաև հանրապետության ձեռնարկությունների կողմից մետրոպոլիտենին տրվող ստանդարտ և ոչ ստանդարտ սարքավորումների պատրաստման և մատակարարման գործը։ Անհրաժեշտ ոչ ստանդարտ սարքավորումների պատրաստումը հանձնարարվել էր այնպիսի խոշոր և առաջավոր ձեռնարկությունների, ինչպիսիք էին «Դայլեկտրո», «Էլեկտրաապարատներ», «Էլեկտրասարքեր» արտադրական միավորումները, Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանը և այլն։

1980թ. վճռական ժամանակահատվածում կարևորագույն խնդիրներից էր արդյունաբերական ձեռնարկությունների կողմից մետրոյին անհրաժեշտ պատվերներով պահովելը, թեկուզ 1980թ. առաջին ամիսների աշխատանքների վերլուծությունից ելնելով ասենք, որ և միութենական, և հանրապետական ձեռնարկություններին ու կազմակերպություններին տրված պատվերների կատարման և ժամանակին պահովման գործում անպակաս էր հսկող աչքը Երևանի մետրոպոլիտենի տնօրինության վերահսկողությունը։

\*\*\*

«Բարեկամություն» կայարանից մինչև «Սասունցի Ղավիթ» կայարանը 1980թ. վետրվարի 1-ի դրությամբ աշխատանքների կատարման ամփոփ պատկերը հետևյալն էր։ Անցահատվել էր ընթացքային թունել 8435,6 գծամետր /մնում էր 1288 գծամետր/, կայարանային թունել

1160,6 գմ /մնում էր 249,2 գմ/: Տեղադրվել էին ռելսեր 1335 գմ /մնում էր 44 հազ. 817 գմ/, հիդրոմեկուսացվել էր 4 հազ. 885 գմ տարածություն /մնում էր 4780 գմ/:

Ինչպես ասվեց, կապված մետրոպոլիտենի շինարարության ծավալի անընդհատ մեծացման հետ 1979թ. ստեղծվեց «Չայքունելշին» վարչության N 25 բունելային ջոկատը, որը ծեռնամուխ եղավ սկզբնական շրջանում «Զորավար Անդրանիկ» տեղամասի շինարարությանը: Երիտասարդ կոլեկտիվի գործադրած համար ջանքերի շնորհիվ առաջին դժվարությունները, հիմնականում հաղթահարվել էին: Ստեղծվեց անհրաժեշտ նյութատեխնիկական բազա, թունելային ջոկատը համալրվեց մետրոշինարարության բովով անցած փորձառու հորատողներով: Դեռևս մեկ տարի առաջ «Զորավար Անդրանիկ» տեղամասում պատրաստվում էին միայն հիմնական աշխատատեղերի գործն ապահովելու համար մոնտաժվում էր ուղղահայաց հորանը, ամրապնդվում մեխանիկական բազան, ստեղծվում և կարգի էին բերվում օժանդակ ծառայությունները /հիմնական աշխատանքները դեռևս կատարվում էր N 160 շիննոնտաճային վարչության կողմից/, ծեռնարկած միջոցառումները հնարավորություն տվեցին իրականացնել ավելի լայնամասշտար գործողություններ:

Թունելային ջոկատի կազմակերպման գործում մեծ աշխատանք կատարեց պետք Ուրբեն Շարությունյանը, իր բարձրության վրա գտնվեց նաև հետագայում նրան փոխարինող Գրիշա Ստեփանյանը:

Տեղամասում հորատանցման որակյալ բանվորների սուր կարիք էր զգացվում, ահա թե ինչու 1980-ի առաջին եռամսյակի վերջերին Մինսկից և այլ քաղաքներից եկած հորատանցողների շնորհիվ պատկերը լրիվ փոխվեց, հնարավորություն տրվեց ամսե-ամիս հորատանցման աշխատանքներում կատարել լուրջ տեղաշարժ և ապահովել պահանջվող անհրաժեշտ քանակի հորատում. ճեղքվածքը փակվեց:

Իհարկե, աշխատանքներն անցնում էին բարդ երկրաբանական պայմաններում, հորատողների ճանապարհն անցնում էր բազալտի միջով, բայց ոչ միատարր, դա անակնկալների պատճառ էր դառնում: Հորատանցողների աշխատանքը բավականին դժվարացնում էին նաև ստորգետնյա ջոկատը: Դրանց քանակի մասին պատկերացում կազմելու համար կուգենայինք նշել մի քանի թվեր, յուրաքանչյուր ժամ հորա-

տունից դուրս էր մղվում 250 խորանարդ մետր ջուր: Գետնաջրերը դուրս մղելու համար աշխատում էր 26 պոմա: Բոլոր աշխատողների, հատկապես հորատող բանվորների համար դժվարություններ հաղթահարելու դարձել էր աշխատանքային առօրյա:

Վերգետնյա աշխատանքները նույնպես կատարվում են N 25 թունելային ջոկատի կողմից: Նախ որոշ պարզաբանում: Ինչպես հայտնի է, թունելը «Ալրաղաց» կոմբինատի մոտ դուրս էր գալիս ընդերքից:

Այստեղ անհրաժեշտ է վերիիշել մեկ կարևոր հանգամանք:

Ինչպես հետագայում ավելի մանրամասն կնշվի, Միության «Գլխաթունելմետրոշին» կառավարիչի տեղակալ Կ.Յանչևսկին, Երևանի մետրոպոլիտենի շինարարության առաջին հերթի գործարկման հետ կապված, գրեթե մշտապես գտնվում էր Երևանում և տեղյակ էր մետրոյի շինարարության ընթացքի մանրունքներին: Տեսնելով «Զորավար Անդրանիկ» կայարանի և «Սասունցի Դավիթ» կայանների միջև եղած հատվածում և հատկապես «Զորավար Անդրանիկ» տեղամասում տիրող ծանր վիճակը նրա օգնությամբ ժամանակից շուտ Լենինգրադի մետրոշինարարներից 65 հորատողների գործունեցին Երևան:

Առաջին իսկ օրից Լենինգրադի և Երևանի մետրոշինարարների միջև սկսվեց փոխկապակցված աշխատանք, որով և պայմանավորվեցին բոլոր բրիգադների աշխատանքային մեծ հաջողությունները: Լենինգրադցիների վերաբերմունքից կարծ ժամանակ հետո տեսանելի էր մեր շինարարների համար, որ նրանց հոգսը միայն հորատանցման աշխատանքը չէր: Երբեմն Միությունում մեծ համբավ վայելող Ս.Ժիխոնովիչը, Տ. Ղորժեկը և Ֆ. Պենկովը իրենց հերթափոխն ավարտելուց հետո մնում էին մեր հորատողների մոտ, անհրաժեշտ խորհուրդներ տալիս, օգնում աշխատանքներին: Քիչ չեն եղել դեպքեր, երբ հորատանցման ժամանակ անսպասելի դժվարություններ են առաջացել և մեր հյուրերն օգնել են հորատողներին, ժամերով պայքարել բնության կողմից հրամցված անակնկալները վերացնելու համար, նոր միայն գնացել: Ստեղծված այս եղբայրական մթնոլորտին որպես փոխհատուցում, մերոնք էլ նրանց հետ միշտ սերտ կապեր են պահպանել, անհրաժեշտության դեպքում դժվար պահերին նրանց մենակ չեն բողել, հաճախակի եղել են նրանց հատկացված հանրակացարանում, աշխատել ինչ-որ ծևով փոխհատուց լինել նրանց:

.... 1979թ. գործերը լավ էին ընթանում «Մարշալ Բաղրամյան» տեղամասում: Այստեղ ավարտվել էր աջ ընթացքային թունելի հորատացումը և նախապատրաստական աշխատանքներ էին տարվում գերի տեղադրման համար: Զախ ընթացքային թունելում շարունակվում էր հորատանցումը: 1980թ. նախատեսված էր այստեղ ամսական հորատանցել 80 մետր:

Աջ կայարանային թունելի մի մասը 1980թ. սկզբներին հանձնվեց հարդարողներին, որոնք 80-ի փետրվարին ձեռնամուխ Եղան հարդարման աշխատանքներին: Թվում էր, թե այս տեղամասում երկրարանական պայմանները նպաստավոր էին /քաղալտ էր, ջրեր չկային/: Բայց ինչպես սովորաբար լինում է ընդերքում, մետրոշինարարները յուրաքանչյոր քայլափոխի անսպասելի դեպքերի էին հանդիպում: Դրանցից մեկն իրեն «ցույց տվեց» փետրվարի սկզբներին:

Թունելում աշխատում էր Մանվել Սմբատյանի բրիգադը Ալեքսանդր Մանսուրյանի ղեկավարած հորատանցողների օղակը: Ամեն ինչ լավ էր ընթանում, եթե անսպասելիորեն երևաց ավագային սորունապարատեսակը, որը բառացիորեն կանգնեցրեց առաջխաղացումը: Օղակի անդամները համառ միջոցներ էին ձեռնարկում: Յաղթահարելով իրար հաջորդող դժվարությունները նրանք կարողացան վերջապես ամրակապել թունելի /թույլ/ հատվածը, փակել ավագի ճանապարհը, որից հետո շարունակվեց հորատանցումը: Յորատանցողները կորցնում են թանկագին ժամանակը համարյա մեկ հերթափոխ, որով փաստորեն խախտվում է նախատեսված գործիքը: Յորատանցողների աշխատանքների մյուս օպերացիաների գործը չձախողելու համար իրենց օրական առաջադրանքը գերակատարելով հիմնականում արտաժամյա աշխատանքների կազմակերպման միջոցով, փետրվարի վերջին կատարեցին իրենց հասանելիք 50 մետր հորատանցման աշխատանքը:

N 160 շինմոնտաժային վարչության գերի տեղամասային վարպետ Յ. Մինասյանը երկարգի շինարարությունում աշխատել էր 30 տարի և այդ ընթացքում հազարավոր կիլոմետրերով ռելսեր էր տեղադրել: Նա մետրոշինարարություն է գործուղվում այն ժամանակ, եթե սույն կարիք էր զգացվում մետրոպոլիտենում ռելսերի գցման գործում: Սակայն այս փորձառու վարպետն էլ զգում է, որ մետրոպոլիտենի գերի

տեղադրումն ունի իր առանձնահատկություններն ու նրբությունները: Տեղամասում պատրաստի վարպետներ չեն եղել, և նա էլ այն անհատներից մեկն էր, որ մեծ ջանապարհությամբ սովորեցնում էր մյուսներին այս կարևոր մասնագիտությունը, և մարդիկ սկսում են, վարպետից որոշակի որակավորում ձեռք բերելու շնորհիվ, հաջողությամբ կատարել իրենց գործը: Նրանցից էին երիտասարդ բրիգադավարներ Միքայել Խաչատրյանը և Պետուշ Ալեքսանյանը, որոնք, դառնալով բարձր որակավորման գծայիններ, միաժամանակ հմտորեն կազմակերպում են այս գործի ուսուցումը կարդերի հետ:

Նրանց և ընդունված ու որակավորում ստացած գծայինների շնորհիվ «Բարեկամություն» - «Մարշալ Բաղրամյան» հատվածի աջ ընթացքային թունելում 1980թ. փետրվարի առաջին կեսի տվյալներով տեղադրվել էր 1000, իսկ «Մարշալ Բաղրամյան» - «Երիտասարդական» հատվածում 900 գ.մ ունելու:

...«Յայթունելչինի» N 160 շինմոնտաժային վարչության ենթակապալառու կազմակերպություններից էր «Յայէլեկտրամոնտաժ» տրեստի N 1 մոնտաժային վարչությունը: Չնայած վարչության աշխատողների համար անսովոր էր գետնի տակ աշխատելը, սակայն նրանք անմիջապես ընտելացան միջավայրին և մեծ հաջորդությամբ կատարում էին իրենց հանձնարարված գործը: Նրանք «Մարշալ Բաղրամյանի» տեղամասում աշխատանքներն սկսել էին 1979թ. հոկտեմբերին և ընդամենը 3 ամիսների ընթացքում տեղադրել ընթացքային թունելների լուսավորման ջահերը, կարելային հատուկ կոնստորուկցիաները, ջահերի կարելների միացման տուփերը: 1980թ. փետրվարի վերջին օրերին սկսեցին, այսպես կոչված, կարելային եղջյուրիկների ամրացումն արդեն տեղադրված կոնստորուկցիաների վրա: Դա մեծ ծավալի աշխատանք էր և տեղադրվող եղյուրիկների թիվն անցնում էր 4000-ից: Էլեկտրամոնտաժողների բրիգադներից իրենց գործի մեծ վարպետությամբ և ջանապարհությամբ աշխատում էին Յարություն Բժնիկային, Ռուբեն Մելիքյանի, Նորիկ Յովհաննիսյանի ղեկավարությամբ բրիգադները, որոնց անունները լայնորեն տարածված էին մետրոշինարարների ընտանիքում:

1980թ. «Յայտրանսչինի» տրեստին լուրջ հանձնարարություն էր տրված: Տրեստի կոլեկտիվը պետք է կատարեր 500 հազ. շինմոնտաժային աշխատանքներ, իսկ մետրոպոլիտենի առաջին հերթի թողար-

կումն ապահովելու համար պետք է ավարտեր երկաթուղային կայարանի ստորգետնյա անցուղու աշխատանքները, տեղադրեր ավելի, քան 300 խորանարդ մետր ջրահեռացման երկաթետոննե նավդան /լոտօկ/, մետրոպոլիտենի վերգետնյա ողջ մայրուղու երկարությամբ բարձրացներ երկաթետոնյա ցանկապատ, շարունակեր 300 մետր երկարությամբ երկաթգծի ճյուղը «Դաստոցաշխնական» գործարանի մոտ և ամենահիմնականը իրականացնել մետրոյի հիմնական մենուղու ճանապարհի վերջին աշխատանքները 3720 մետր երկարությամբ: Դաշվի առնելով իրենց հնարավորությունները տրեստի շինարարները նախատեսեցին մինչև ապրիլ ամիսը կատարել վերգետնյա ուղենասի գծի մեկ կմ ճանապարհը, իսկ հուլիսի մեկին կատարել տարեկան պլանը, մնացած մյուս աշխատանքներն ավարտել մինչև տարեվերջը:

Դարկ է նշել, որ տրեստի կոլեկտիվը կատարեց իր առջև դրված խնդիրները ժամանակին և աշխատանքների պատշաճ որակով: Վերգետնյա մետրոյի շինարարությունում իրենց աշխատանքով մեծ հեղինակության էին արժանացել բետոնագործների բրիգադը բրիգադավար Անդրանիկ Աղաջանյանի գլխավորությամբ, երկարության ինժեներ Ալբերտ Կարապետյանը, մոնտաժողների բրիգադավար Բարսեղ Խաչատրյանը: Նրանց աշխատանքները դեկավարում և մեծ օգնություն էր ցույց տալիս վարպետ Ֆերբախ Արշակյանը և աշխեկ Գագիկ Խաչատրյանը:

...1980թ. պատվավոր և պատասխանատու հանձնարարություն էր դրված «Երթիմշին» տրեստի կոլեկտիվի առջև: Հանձնարարվել էր կառուցել կապի տունը, «Բարեկամություն» կայարանի վերգետնյա նախարարը, «Մարշալ Բաղրամյան», «Երիտասարդական», «Հանրապետության հրապարակ», «Սասունցի Դավիթ» կայարանների, ինչպես նաև մետրոպոլիտենի ներգետնյա մասի ծառայողական սենյակների հարդարման աշխատանքները: Տրեստին տրված շինարարական աշխատանքների ծավալը կազմում էր 2 մլն ռուբլի: Բավական է ասել, որ միայն կայարաններում պետք է տեղադրվեին մոտ 20 հազ ք.մ երեսապատման տարրեր տեսակի քարեր, որոնցից 9000 ք.մ ողորկած, Այլության տարրեր տեղերից բերված գրանիտ: Այս գործը հաջողությամբ ավարտելու համար լուրջ աշխատանքներ ծավալվեցին: Տրեստում բացվեց ուսումնական կետ, ուր պատրաստվեցին մարմար և գրանիտ

շարող 25 որակյալ բանվորներ: 1980թ. գերակատարվեցին պլանային առաջադրանքները: Տեղամասերում լավ աշխատեցին N 30 շինվարչությունից Մ. Ավոյանը և Գ. Թադևոսյանի ղեկավարած բրիգադը, թիվ 25 վարչությունից Գ. Նիկողոսյանի և N 27 շինվարչությունից Լ. Բաղդասարյանի բրիգադը:

1980թ. առաջին եռամսյակի կատարած աշխատանքի արդյունքները գոհացուցիչ էին: Չնայած խստաշունչ ձմռանը բոլոր տեսակի աշխատանքներում կատարվեցին լուրջ տեղաշարժեր: Անգնահատելի եղավ միութենական տրանսպորտային շինարարության նախարարության «Գլխավորնելմետրոշինի» և այլ նախարարությունների և գերատեսչությունների կողմից երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի բողակումն ապահովելու գործում ցույց տված գործնական օգնությունը: Պատահական չէ, որ 1980 թ. մարտի 30-ին ՀՍՍՀ Նախարարների խորհուրդը, քննարկելով երևանի մետրոպոլիտենի շինարարության ընթացքը, նշեց, որ այդ մեծ օգնություն շնորհիվ հնարավորություն ընծեռվեց հունվար, մարտ ամիսներին ընթացքային և կայարանային թունելներում կատարել 540 խ.մ հորատանցման աշխատանքներ: Բավական է ասել, որ հորատանցման այսպիսի մեծ տեմար հնարավորություն տվեց փետրվարին ավարտել «Երիտասարդական», «Հանրապետության հրապարակ» տեղամասերի ծախս ընթացքային թունելի 900 մետր հատվածը, իսկ մարտին «Բարեկամություն», «Երիտասարդական»-ի ծախս ընթացքային թունելի 1400 մետր հատվածը դնել մոնտաժային և գծային աշխատանքների հրականացման տակ:

1980թ. առաջին եռամսյակի ամի դիմամիկան ցույց էր տալիս, որ նման տեմպերի դեպքում կատարվեն նախատեսված ծրագրերը, ստեղծված խոչընդոտները կանխելու ճանապարհով հավանական է ցանցային գրաֆիկի իրականացումը: Որոշ հատվածներում նկատվում էին լուրջ հաջողություններ: Այսպես, մարտ ամսին հունվար ամսվա համեմատ, շուրջ երկու անգամ ավելացան ընթացքային թունելներում հորատանցման աշխատանքները, ավելի քան 5 անգամ գերազանցվեցին նախարարներում կատարված աշխատանքները, եթե հունվարին գեր չէին տեղադրվել և կայարաններում հարդարման աշխատանքներ չէին կատարվել, ապա մարտին գցվեց մետրոպոլիտենի 1670 մ հիմնական գեր, կատարվեց կրկնակի անգամ ավելի հարդարման աշխատանք-

ներ: Ամբողջությամբ վերցված մետրոպոլիտենում 1980թ. առաջին եռամսյակի շինմոնտաժային աշխատանքների պլանը կատարվեց 110,8 տոկոսով:

\*\*\*

Անկախ 1980թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարված մեծածավալ աշխատանքներից ամբողջությամբ վերցված պլանների գերակատարման համար, դեռևս շատ անելիքներ կային հատկապես Երկրորդ եռամսյակում, առաջին եռամսյակում տարրեր աշխատանքների թերակատարման պատճառով առաջացած որոշ ճեղքվածքները փակելու ուղղությամբ: Ինչպես ՀՍՍՀ Նախարարների խորհրդի 1980թ. ապրիլի 30-ի որոշման մեջ նշվեց 80-ի առաջին եռամսյակում չհաջողվեց կատարել կարևորագույն որոշ աշխատանքներ: Նախատեսված 682 խ.մ ընթացքային և կայարանային թունելների հորատման փոխարեն կատարվեց 532 խ.մ աշխատանք, կամ պլանը կատարվեց 78 տոկոսով: Դաստատված գրաֆիկից ետ մնացին «Մարշալ Բաղրամյան» կայարանում շարժասանդուղքի թունելի, համատեղված քարշային ենթակայանի շինարարության աշխատանքները, իսկ «Երիտասարդական» կայարանում հարդարման աշխատանքները դեռ չեն սկսվել:

Ելելով հանրապետության կառավարության հանձնարարություններից շինարարական և մոնտաժային կազմակերպությունները և հիմնականում N 160 շինմոնտաժային վարչությունը, N25 թունելային ջոկատը լրացուցիչ քայլեր ծեռնարկեցին: Որքան ավելի էր մոտենում մետրոպոլիտենի գործարկման ժամկետը, այնքան երևանցիներին ավելի մեծ օգնություն էին ցույց տալիս Մոսկվայի, Լենինգրադի, Տաշքենդի, Թրիլիսիի և այլ քաղաքների մետրոշինարարները, ծեռնարկությունների կոլեկտիվները: Օրինակ շարժասանդուղքները մոնտաժելու համար լրացուցիչ ուժեր ուղարկեցին մետրոպոլիտենի լավագույն կոլեկտիվներից Մոսկվայից և Տաշքենդից, կայարանների հարդարանքներն իրականացվում էին հիմնականում մետրոպոլիտենի գլխավոր վարչության շինմոնտաժային գնացքի մասնագետները, որոնց կողմից օգնության համար ապրիլին լրացուցիչ որակյալ մասնագետների մի խումբ եկավ Երևան:

1980թ. ապրիլին սկսվեց վերջին թունելի հորատանցումը, որը 12 կիլոմետրանոց ուղեգիծը միացնելու էր վերգետնյա գծի հետ: «Զորա-

վար Անդրանիկ» կայարանի և ընթացքային թունելների միջև դեռ պետք էր անցահատել 345 մետր թունել:

Առաջին եռամսյակի ճեղքվածքը փակելու նպատակով ապրիլի երկրորդ կեսից մեծ թափով շինարարություն էր ընթանում ինձ մետրոպոլիտի կայարաններում, նախարարահներում, թեր մուտքերում: Արդեն աշխատանքներն այնպիսի փուլի մեջ էին մտնում, որ աստիճանաբար նկատվում էր ճարտարապետների և նախագծողների մտահղացումները: Ահա թե ինչու անհրաժեշտություն էր դառնում հեղինակային հսկողության իրականացումը կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ: Շինարարությունում նրանց արդեն հաճախակի երևալը կարծեք մետրոշինարարության մեջ նոր երևույթ լիներ: Արդեն շինարարները նկատում էին, որ ճարտարապետների աշխատատեղում չինելը ոչ միայն տեխնիկական, այլև կազմակերպչական դժվարությունների առջև էին կանգնեցնում: Կառուցողների կողմից երթեմն առաջանում էին առաջավոր տեխնոլոգիական պրոցեսների մտահղացումներ, շինարարների, բանվորների կողմից առաջարկություններ արվում, դրանով իսկ հեշտացնում աշխատանքների իրականացումը, տրվում հումքի, նյութերի խնայողություն: Նամաստիպ օրինակներ շատ եղան աշխատանքի գրեթե բոլոր հատվածներում: Այս բոլորն օգնում էր նաև գործի ծիշտ կազմակերպմանը, ժամանակի խնայողությանը:

...«Դայէլէկտրամոնտաժ» տրեստն ամբողջությամբ վերցված հաջողությամբ էր կատարում իր առջև դրված առաջադրանքները: Տրեստում չկար մոնտաժային որևէ վարչություն, որ իր առաջադրանքները չկատարեր, կամ նրանց կողմից աշխատանքները վատ կազմակերպելու պատճառով խոչընդունվեր մետրոպոլիտենի շինարարության որևէ այլ օղակի աշխատանքը:

Նախ ասենք, որ էլեկտրամոնտաժային համակարգը մետրոպոլիտենի նյարդային համակարգն էր, առանց որի պարզապես չէր կարող գործել ստորգետնյա մայրությին: Դժվար է թվարկել այն բոլոր հանգույցները, որոնք ստեղծվում էին հազարավոր մետր կարելներից ու էլեկտրայությունից, բազմապիսի սարքավորումներից և հարմարանքներից: Այդ համակարգի հստակ, անխափան աշխատանքը պայմանավորված էր նախ և առաջ այն ստեղծողների բացարձակապես բարեխիդ ու ծագրիտ աշխատանքով:

«Մարշալ Բաղրամյան» կայարանի մետրոպոլիտենի «Նյարդային համակարգի» ստեղծումը վստահված էր «Հայելեկտրամոնտաժ» տրեստի առաջին մոնտաժային վարչության աշխատող Տիգրան Տոնոյանի դեկավարած ջոկատին: Անսովոր ստորգետնյա պայմանները, իհարկե, որոց դժվարություններ էին առաջացնում, բայց էլեկտրամոնտաժութերը կարծ ժամանակում կարողացան հարքահարել «թունելային առանձնահատկությունները»:

Էլեկտրամոնտաժութերի ջանքերով աջ ընթացքային թունելում և զնացքների հավաքակայանում արդեն տեղավորվել էին կարելային կոնստրուկցիաները, հողանցման շերտերը, լուսատուները, գծային արկդերը: Արդեն ապրիլ ամսից սկսեցին մոնտաժել կառամատույցների տակ գտնվող ծառայողական սենյակների լուսավորությունը, ուժային ցանցերը: Միայն աջ ընթացքային թունելում անցկացվել էր մոտ 1,5 կմ երկարությամբ ուժային կարել: Դա ի դեպ, բավականին դժվար գործ էր, որը էլեկտրամոնտաժութերը կատարեցին մեծ ջանքերի գնով: Այսպիսի կարելի մեկ մետրը կշռում է 5 կգ: Ուրեմն թունել է իշեցվել ու բունելային նեղվածքում տեղադրվել 7-8 տոննա կարել: Եվ ամիսներ շարունակ, մտավոր և ֆիզիկական ծանր աշխատանքի պայմաններում իրենց օրինակելի աշխատանքով աչքի ընկան էլեկտրամոնտաժութեր Ժ. Կեշուլյանը, Ն. Լարինովը, Ր. Բժշկյանը, Ի. Ալկամյանը, Վ. Անանյանը, որոնց անձնվեր աշխատանքը ոգևորում էր նաև մյուսներին:

Բայոդ և պատասխանատու աշխատանքներ կատարող էլեկտրամոնտաժութերի բարեխիղճ աշխատանքով էր պայմանավորված, որ ստորգետնյա բնական ծանր պայմաններում նրանց կողմից չնկատվեց տեխնիկայի անվտանգության կանոնների խախտման և ոչ մի դեպք, չարձանագրվեց ոչ մի դժբախտ պատահար:

...Նալբանդյան փողոցի այն հատվածը, որտեղ իրար են միանում Հանրապետության հրապարակը, գլխավոր պողոտան և Աղամյան փողոցը, վերածվել էր մի ընդարձակ շինհրապարակի: Այստեղ կատարվում էր «Հանրապետության հրապարակ» տեղամասի վերգետնյա կայարանի համալիրի շինհրարությունը, որը ստորգետնյա մայրուղու ինքնատիպ հատվածներից մեկն էր:

«Վերգետնյա» բառը պետք էր ընդունել վերապահորեն, քանի որ վերին կայարանասրահը և ամբողջ համալիրը նախատեսված էր կա-

ռուցել գետնի մակերևույթի նիշից ցածր, որպեսզի չխախտվի հրապարակի ճարտարապետական համալիրը: Նախատեսված էր, որ կայարանը ունենա 400 ք.մ մակերես երեսպատված փայլուն գրանիտով: Մրահի երկու կողմներում նախատեսված էին տարրեր ծառայությունների շինություններ՝ մոտ 120 ք.մ ընդհանուր մակերեսով: Դամալիրի մյուս մասը լինելու էր ստորգետնյա հրապարակը, որտեղ տեղաբաշխվելու էին հանգստի սենյակներ, գեղարվեստորեն ձևավորված շատրվաններ՝ 230 ք.մ ջրավազանով:

Միայն սալարկված մակերեսը կազմելու էր 2500 ք.մ: Նոյնատիպ հրապարակ, նույնպես սալարկված, ստեղծվելու էր վերևում գետնի մակերեսին, իսկ այդ երկու հրապարակներն իրար «կապվելու» էին վարդագոյն բացվածքով, որի միջով էլ ցայտելու էր շատրվանը: Ամբողջ համալիրի նախահաշվարկային արժեքը էր 1 մլն. 480 հազ. ռուբլի: Այս բվից կարելի է եզրակացնել թե ինչ ծավալի շինհրարական աշխատանքներ էին կատարվելու: Այստեղ աշխատում էին «Երդիմշին» տրեստի 24-րդ շինվարչության Գալուստ Արշակյանի և Արտավազդ Մանուկյանի աշխատեկությունները: 1980թ. հունիսի 1-ի դրությամբ երկու օրյեկտներում արդեն կատարվել էին 110 խ.մ հողային աշխատանքներ: Սկսվել էին կայարանասրահի բետոնային աշխատանքները: Այստեղ օրական միջին հաշվով օգտագործվում էր 100 խ.մ բետոն, նախատեսված գրաֆիկով արվում էին 10000 ք.մ երեսպատման աշխատանքներ:

...«Բարեկամություն» կայարանում երկու ուղղությամբ վերգետնյա և ստորգետնյա, աշխատանքներն ընթանում են մեծ թափով: Վերգետնյա աշխատանքները կատարում էին N160 շինմոնտաժային վարչության աշխատողները: Հանրապետության գլխավոր մոնուածային հատուկ շինվարչության բանվորները կատարում էին կայարանի սանտեխնիկայի, օդափոխության աշխատանքները: Վերգետնյա աշխատանքները կատարվում էին «Երդիմշին» տրեստի կողմից: Աշխատողների գլխավոր խնդիրն էր հնարավորին չափ արագ կողորդինացնել բոլոր աշխատանքները, որպեսզի աշխատանքային ճակատ ստեղծվեր այնտեղ աշխատող բոլոր ենթակապալառու կազմակերպությունների համար:

Հունիսի վերջերին «Մարշալ Բաղրամյան» տեղամասում արձանագրվեց ևս մեկ նշանավոր իրադարձություն՝ տեղի ունեցավ «Մարշալ

**Բաղրամյան» - «Երիտասարդական» կայարանների ծախս ընթացքային բունելների միացումը, որն իրականացրեցին Սամվել Մմբատյանի բրիգադի և Յուրա Հարությունյանի օղակի հորատանցողները: Երկու բունելների հորատանցումն իրականացվեց Երեքից հինգ միլիմետր ծշտուրյամբ, մի ցուցանիշ, որը վկայում է տեղամասի մակշեյքեր Լյուդմիլա Զավգորոդնայի և ամբողջ մակշեյքրական ծառայության գերազանց աշխատանքի մասին: Պետք է նշել, որ սա տեղամասի կոլեկտիվի համար մետրոպոլիտենի շինարարության առաջին լուրջ և կարևորագույն նվաճումն էր, քանի որ այդ միացումով ավարտվեցին անցահատման համարյա բոլոր աշխատանքները:**

... Ըստ մետրոպոլիտենի շինարարության իրականացման ցանցային գրաֆիկի՝ արդեն ժամանակն էր մետրոյի կայարանների, նրա նախարարների լուսավորության հարցով մոտիկից գրադարձը: Կայարանների շինարարությանը գուգանքաց «Լույս» արտադրական միավորնան էլեկտրալամպերի, «Լուսատեխնիկական» գոծարանների կոլեկտիվները, նրանց ինժեներատեխնիկական աշխատողները կայարանների ճարտարապետների հետ սկսեցին խորությամբ ուսումնասիրել մետրոպոլիտենի վերգետնյա և ստորգետնյա կայարանների, նախարարների հարմարավետ և ճաշակով լուսավորության ապահովման հարցերը: Դեռ անբողջական տեսքի չեկած մետրոպոլիտենի կայարաններում, նրանց շքամուտքերում, ծեռնարկությունների աշխատողներն իրենց պատրաստած փորձնական նմուշները «փորձարկում» էին, տեղում նախնական քննության ենթարկում կոնստրուկտիվ առաջարկները: Չնայած խիստ գրավվածությանը միավորնան գլխավոր տնօրեն Բենիամին Շակորի թումասյանին հաճախակի կտեսնեիր մետրոպոլիտենի տարբեր կայարաններուն: Փոքր թվացող այս երևույթն իր ոգևորիչ դերն էր կատարում կառուցողների համար, կարծեք ազդարարվում էր մետրոպոլիտենի շուտափույք ավարտը: Շետագա ամիսներին կոլեկտիվի քրտնաջան աշխատանքը գուր չանցավ, այսօր այն տեսնում են բոլորը.....

Մետրոպոլիտենի շինարարության աշխատանքներին իրենց օգնությամբ որոշչի խոսք ասացին հանրապետության շատ կազմակերպություններ, և չեղավ մի հիմնարկ-ծեռնարկություն, որը բարեխիճ չվերաբերվեր Երևանի այս հղոր կառույցին: Նշենք ևս մի ծեռնարկության մա-

սին. Դա Երևանի «Էլեկտրամեքենաշինական» գործարանն է: Կոլեկտիվը ծեռնամուխ եղավ մետրոպոլիտենի համար ոչ ստանդարտ սարքավորումների պատրաստմանը: 1980թ. առաջին կիսամյակի շեմին մետրոպոլիտենի համար տարեկան նախատեսված անհրաժեշտ կարևոր սարքավորումների պատրաստումը գրեթե ավարտվել էր: Գործարանը բոլոր կայարանների համար պատրաստեց էլեկտրաբաշխիչ կայան: Այս պատվավոր պատվերը հանձնարարվեց կատարել ծեռնարկության N 38 էլեկտրամոնտաժային արտադրամասին, որը 1980թ. երրորդ եռամյակին պետք է ամբողջությամբ ավարտեր: Փականագործների բրիգադը Մ. Բարսեղյանի գլխավորությամբ, Պ. Հարությունյանը, Ռ. Սարգսյանը, Պ. Մկրտչյանը իրենց բարեխիճ աշխատանքի շնորհիվ արդեն հունիսին ավարտեցին սարքավորումների պատրաստումը և առաջինը էլեկտրամոնտաժողներին հանձնեցին «Երիտասարդական» կայարանում տեղադրելու համար, որը մեծ փորձություն բռնեց: Նույն հաջողությամբ պատվիրատուին հանձնվեցին նաև մյուս կայարանների էլեկտրաբաշխիչ կայանները: Ժամանակից շուտ հանձնվեցին նաև մյուս պատվերները:

1980թ. երկորրդ եռամյակին բավականին մեծ աշխատանքներ կատարվեցին:

\*\*\*

Միանգամայն պարզ նկատվեց, որ 1980թ. առաջին կիսամյակին մետրոպոլիտենի շինարարությունում կատարվեց լուրջ բեկում: Բոլոր կայարաններում, տեղամասերում, շինարարական կազմակերպությունների կողմից իրականացվեցին գրաֆիկով նախատեսված բոլոր առաջարկանքները: Սակայն դեռ շատ անելիքներ կային, ավելի լարված աշխատանք էր սպասվում 80-ի երկրորդ կիսամյակի առաջին իսկ օրից: Այն ցայտուն նկատվում է անփոփագրում բերված տվյալներից: Բավական է միայն ասել, որ մետրոպոլիտենի նախարարներում երկրորդ կիսամյակում երեք անգամ ավելի շատ աշխատանք պետք է կատարվեր, քան մյուս ժամանակահատվածներում մինչ այդ կատարվել էր: Նույնքան անգամ շատ հարդարման աշխատանքներ էին կատարվելու կայարաններում և այլը: Անհրաժեշտ եղավ նորից դիմել Միության մյուս քաղաքների մետրոշինարարներին: «Գլխավունելմետրոշինի» կա-

ռավարիչի տեղակալ Կ.Յանչևսկու օգնությամբ հարցը մեկ շաբաթվա մեջ լուծվեց. հարդարողներ երեսպատողների բրիգադներ եկան Հայաստան, մեր տղաների ամիսների ընթացքում ծեռք բերած մեծ հմտությունը, ինչպես նաև ուսումնական կենտրոնի կողմից նոր կաղութի ուսուցումը ևս որոշիչ նշանակություն ունեցավ:

### Ամփոփագիր

Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի թողարկման համար աշխատանքների ծավալները «Բարեկամություն» կայարանից մինչև «Սասունցի Դավիթ» կայարանը

Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծինարարության սկզբից կատար- ված աշխատանք- ները	Ըստ գրաֆիկի մնացած մյուս աշխատանքների ծավալը առ 01.07.80թ.
Ընթացքային թունելներ	մետր	<b>9269.3</b>	<b>454.3</b>
Կայարանային թունելներ	մետր	<b>1262.4</b>	<b>146.9</b>
Թունելներում և կայարաննե- րում գծերի տեղադրում	մետր	<b>5193.6</b>	<b>6449</b>
Վերգետնյա մայրուղիներում գծերի տեղադրում	մետր	<b>725</b>	<b>2995</b>
Յիշրումնեկուսացման աշխ. ըն- թացքային թունելներում	մետր	<b>7303</b>	<b>2420.6</b>
Յիշրումնեկուսացման աշխա- տանքներ կայարաններում	մետր	<b>814.1</b>	<b>595</b>
Յարդարան աշխատանքներ կայարաններում	հազ.հ.	<b>297.1</b>	<b>1526.6</b>
Ծինարարական աշխատանք- ներ նախասրահներում	հազ.հ.	<b>342.2</b>	<b>953</b>

...«Երօիմշին» տրեստի N 27 շինվարչության ուժերով կառուց-  
վում էր ամենախոշոր օբյեկտը՝ կապի տունը, որի նախահաշվային ար-  
ժեքն ավելի քան 1մլն ռուբլի էր: Ծինարարները կառուցը բարձրացրին  
բավականին դժվարին պայմաններում, հատկապես փոքր-ինչ ծգծգվեց  
երկրորդ մասնաշենքի շինարարությունը, որը կապված էր շարժասան-  
դուղների թեր հորանի շինարարության ավարտի հետ: Ենթա է, մի քա-  
նի անգամ խախտվել էին կապի տան շինարարության գրաֆիկները,  
բայց կարճ ժամանակաշրջանում հաղթահարվեցին դժվարությունները  
և արդեն հուլիսի սկզբներին վերջին շինարարական աշխատանքներն  
էին կատարվում երկրորդ մասնաշենքում. սկսվում էր կողապատերի  
երեսպատումը: Նախահաշվով նախատեսված 444 հազ. ռուբլու շին-  
մոնտաժային աշխատանքներից չնչին մասն էր կատարվելու: Ծենքում  
օգոստոս ամսվա շեմին մնում էր կատարել աշխատանքների 10-15 տո-  
կոսը: Տեղադրվում էին շենքի վիտրաժները, հարդարվում էին սենյակ-  
ները, տեղադրվում մանրահատակները և այլն: Երրորդ հարկի սրահնե-  
րից մեկում ավարտվում էր 600 համար հզորությամբ ավտոմատ հեռա-  
խոսային կայանի մոտաժումը: Մեծ աշխատանքներ էին տարվում Ու-  
ֆայից և Ռիգայից կայանի համար ստացված սարքավորումների տե-  
ղադրման և մոնտաժման ուղղությամբ: Յուլիս, օգոստոս ամիսներին  
«Դայկապշին» տրեստի հատուկ մոնտաժային վարչության մոնտաժող-  
ներն աշխատում էին բարձր արտադրողականությամբ: Դրանք էին Վե-  
րա Ժուկովսկի, Անժիկ Առաքելյանը և Մարիամ Ջայրապետյանը: Աշխա-  
տանքները ղեկավարում էր փորձված աշխատեկ Յովիկ Խաչատրյանը: Առանձին տարածքներում տեղակայվում էին միջքաղաքային կապը, դիստացիոնական կոմուտատորը, ռադիոհանգույցը: Կայարաններում և  
վերգետնյա սրահներում ավարտվում էին էլեկտրական խորոնմետրով  
ժամացույցի պուլտի մոնտաժման աշխատանքները: «Դայկապշին»  
տրեստի գծային տեղամասի աշխատողներն ընթացքային թունելնե-  
րում տեղադրում էին կաբելները կապի տնից մինչև բոլոր կայարան-  
ներն ու հանգույցները:

Նշվեց կապի տան շինարարության չնչին մասը: Օբյեկտում մոն-  
տաժային աշխատանքները, որոնք բավականին բարդ և մեծ ծավալի  
էին, կատարվում էին ենթակապալառու ութ կազմակերպությունների

կողմից: Բոլոր կազմակերպությունների աշխատանքներն առաջին հերթին պայմանավորված եր Երքիմշինի N 27 շինվարչության հստակ աշխատանքով: Վարչության Ենոք Եսայանի աշխատեկությամբ աշխատող մարդիկ գործում էին հիմնականում երեք ուղղություններով: «Երքիմշին»- ցիները հարդարման և այլ աշխատանքներ էին կատարում ուժաքարշային Ենթակայանում, գծային հանգույցներում և ծառայողական շինություններում: Այդ երեք հատվածներում օբյեկտների թիվը անցնում էր 10-ից, և դրանցից ոչ մեկին չեղ կարելի դասել երկրորդականների շարքը:

Չնայած «Դանրապետության հրապարակ» տեղամասում արձանագրված հաջողություններին՝ տեղամասում ընթացքային թունելների անցահատման ծրագիրը թերակատարվում էր 30 մետրով: Որոնք էին ետ մնալու հիմնական պատճառները: Ընթերցողին տեսյակ պահեց, որ երեմն կմեկնաբանվեն 1980թ. ընթացքում մետրոյի շահագործումը ժամանակին չկատարելու պատճառները: Բարդ աշխատանքային պայմանների մասին վերը շարադրվածից դժվար չէ կրահել «ծախողման» պատճառները: Այս տեղամասում 30 մետրով հետ մնալը հակիրծ պարզաբնենք: Թերակատարման հիմնական «մեղավոր» բարդ երկրաբանական պայմաններից եկող դժվարություններն էին: Ընդերջում նետրուի հանդիպում էին «ավանդական» դժվարությունների, մարդիկ «դիմադրում» էին կավախառն բազալտի և բավականին առատ գետնաջրերի «քմահաճույքներին»: Օրինակ այս տեղամասի աջ ընթացքային թունելում ժամում արտահանվում էր միջինը 100 խմ ջուրը: Այդ նապատակով անդադար գործում էին 8 պոմպեր: «Անդադարը» հարաբերական էր, քանի որ որպես կանոն, օրվա ընթացքում 1-2, նույնիսկ ավելի պոմպեր շարքից դուրս էին գալիս, այնպես որ համարյա բոլոր հերթափոխներում ստիպված էին զրադիքը պոմպերի նորոգումով: Դա լուրջ խոչընդոտ էր. եթե պոմպերի մի մասը կանգ առներ կես ժամով ապա հորատողները կկորցնեին մոտավորապես երկու հերթափոխի աշխատանք, այսինքն անցահատման պլանը կկատարվեր կիսով չափ: Մետրոյի նախարարներն ուղղակի կատարում էին հերոսական աշխատանք:

... «Երիտասարդական» կայարանի բակը ծանրաբեռնված էր շինանյութերով և տարբեր կոնստրուկցիաներով: Տեղամասի վերգետնյա

և ստորգետնյա բոլոր հատվածներում աշխատանքներն ընթանում էին մեծ թափով:

1980թ. օգոստոսի մեկի դրությամբ տեղամասի աջ ընթացքային թունելում, որտեղ արդեն տեղադրվել էին ռելսերը, իրականացվում էին հիմնականում բետոնապատման աշխատանքները: Այստեղ դեռևս կատարվում էին հիդրոմեկուլացման աշխատանքները: Արդեն հիդրոմեկուլացման էր 250 մետր, մնում էր 550-ը: Այս գործը վստահվել էր շեֆական կարգով հիմնականում արդյունաբերական, շինարարական կազմակերպություններից օգնության եկած բանվորներին և ուսանողական ջոկատներին, որոնք բավականին հաջող էին կատարում իրենց հանձնարարված գործը: Աջ կայարանային թունելում հուլիսի վերջին ավարտվեցին պատի բլոկների տեղադրման աշխատանքները, որից հետո սկսվեց երեսպատումը գրանիտով և մարմարով: Մոսկվայի «Մետրոշինից» Սերգեյ Դավիդովի բրիգադը ծեռնամուխ եղավ թունելի առաստաղի սպաղի աշխատանքներին: Աջ կայարանային թունելի բոլոր աշխատանքները կատարվում էին ըստ սահմանված գրաֆիկի:

Մեկ - երկու օրինակով նկարագրենք օգոստոս ամսում մետրոշնարարության կատարված գործերը:

«Զորավար Անդրոնիկի» տեղամասում կողը կողը աշխատում էին Լենինգրադի, Կիևի, Մինսկի և Երևանի մասնագետները, որակյալ բանվորները: 1980թ. յոթ ամիսներին տեղամասի պլանով նախատեսված 3 մլն. 573 հազ. ոուբլու աշխատանքների փոխարեն իրականացվել էին 4 մլն. 608 հազ. ոուբլու անցահատման, բետոնապատման, հիդրոմեկուլացման և այլ աշխատանքներ: Դա կազմում էր պլանայինի 128 տոկոսը:

Պետք է նկատել, որ ընդհանրապես մետրոշինարարներն, ինչպես ասվել է, աշխատում էին լեռնաերկրաբանական դժվարին պայմաններում: Նրանց ճանապարհն անցնում էր այնպիսի ապարների միջով, որտեղ հնարավոր չեղ հասնել ջրահեռացման աշխատանքների բարձր արդյունավետության, յուրաքանչյուր թունելախտորշից արտանողվում էր ժամում մինչև 80 խորանարդ մետր ջուրը: Դա լուրջ խոչընդոտ էր հորատողների ճանապարհին: Անցահատման նման պայմաններում դժվարությանը էր առաջ գնում յուրաքանչյուր մետրի աշխատանքը, մինչդեռ անելիքները շատ էին:

Աջ ընթացքային թունելում դեռևս մնում էր անցահատել 130 մետր, իսկ ժամանակը չեղ սպասում: Ենթագրադի, Մինսկի, Երևան մետրոշինարարները, «Չորավար Անդրանիկ» տեղամասում փոխհամագործակցված աշխատանքի կազմակերպման շնորհիվ կարողացան իրենց նպատակին հասնել: «Չորավար Անդրանիկ» տեղամասում ժամանակին ավարտվեց ջրահեռացման հորանի պատրաստումը:

Շինարարության սկզբից այսինքն մարտի սկզբից մինչև օգոստոսի 1-ը, «Հանրապետության հրապարակ» տեղամասում կատարվել էր 400 հազ.քառ. մետր աշխատանք, որից միայն հուլիսին իրացվել էր շուրջ 120 հազարը: Ի դեպ, օգոստոսին կատարողականը կազմեց 150 հազար, որից պարզ երևում էր, որ ամսեամիս աշխատանքների ծավալը ավելանալում էր: Օգոստոսին արդեն կառուցվեցին հենապատրը, շարժասանդուղիք բետոն էինքան իրականացվում էին հրապարակի ծածկի/ որը, փաստորեն, լինելու էր վերգետնյաշիրապարակ/ նախապատրաստական աշխատանքները: Շինարարությունը թևակործել էր կարևոր փուլերից մեկը սկսվել էր հենապատրի բետոնապատումը: Ավելի քան 500 քառ. մետր հենապատր արդեն «զուգվել» էին Բյուրականի տուֆով: Քարասալերի հաստությունը 12 սմ էր, և որպեսզի շարվածքը լիներ ավելի դիմացկուն, երեսպատման ժամանակ կիրառվում էր քարերը հենապատրին որմնակապերով ամրացնելու եղանակը:

Կայարանի համալիրի շինարարությունն իրականացնում էր «Երթիմշին» տրեստի Վահե Մանուկյանի ղեկավարած հաստոկ շինտեղամասի կոլեկտիվը: Տնտիաշվարկային այս կազմակերպությունը բոլորովին նոր էր և ստեղծվել էր մետրոպոլիտենի շինարարության այս կարևոր տեղամասում օգնելու համար: Նորաստեղծ շինտեղամասի կազմում, ուր ընդգրկվել էին 135 մարդ, ճարտարապետական ուրույն, քարո, սակայն արդյունավետ լուծում պահանջող աշխատանքներին մասնակցում էին բարձորարակ վարպետներ, մարդիկ, որոնց, հանրապետությունում մատների վրա կարելի էր հաշվել: Գործում էին երկու բրիգադներ՝ Մարզար Մինասյանի և Արտավագ Մանուկյանի գլխավորությամբ, աշխատանքներն իրականացվում էին երկու հերթով: Տնտիաշվարկային շինտեղամասի երիտասարդ կոլեկտիվը, ստեղծման առաջին իսկ օրից հանդիպում էր լուրջ դժվարությունների, որոնք շատ խելացի կերպով հաղթահարվում էին:

... «Մարշալ Բաղրամյան» տեղամասում աշխատանքները և վերգետնյա, և ստորգետնյա հատվածներում լավ էին ընթանում: Այստեղ ստորգետնյա կայարանում ավարտվեց աջ և ձախ թունելների առատաղների սվաղը:

Սկսվեց միջին կայարանային թունելի և թեք հորանի առատաղի հարդարումը: Ավարտման եզրին էր սյուների մարմարապատումը, մնում էր հարդարել 6 սյուն: Աջ կայարանային թունելում ավարտվեց ուլսերի տեղադրումը, իրականացվում էր ուլսերի ամրացումը բետոնապատումով: Զախ կայարանային թունելում տեղադրվում էին ուլսերը: Ընդհանուր առմանը օգոստոսը տեղամասի համար նշանավորվեց որպես դժվարությունների հաղթահարման ամիս: Կատարվեցին մեծ ծավալի անցահատման, բետոնային, երկարքետոնային, մոնտաժային և հարդարման աշխատանքները:

Թունելները բետոն էին հագնում: Այդպես կարելի էր բնութագրել օգոստոսին այս տեղամասի ընդերքում կատարված աշխատանքների մեծ մասը: Կառուցվեցին աջ և ձախ կառամատույցների երկարքետոնները պատերը 23,6 մետր ընդհանուր երկարությամբ, բետոնապատման աշխատանքներ իրականացվեցին ետաղարձ կամարի, ջրակուտակիչների, անցման միջանցքի ծածկի, ուժաքարշային կայանի և այլ հատվածներում:

Ավարտվեցին նաև թեք հորանի, անցման միջանցքի բետոնապատման և մեկուսացման աշխատանքները: Ավարտին էր նուտենում գլխամասային հատվածի կառուցումը, որին սպասում էին վերգետնյա կայարանարակի շինարարները, քանի որ միայն այդ հատվածի կառուցումն ավարտելուց հետո էր հնարավոր իրականացնել մոնտաժային մեծ ծավալի աշխատանքները: Պետք է ասել, որ մետրոշինարարներին զգալիորեն օգնում էին բուհերի ուսանողները: Ամռանն աշխատած տղաների հիմնական մասը գնացել էր, քայլ սեպտեմբերի առաջին կեսին նոր համալրում էր սպասվում մոտ 400 երիտասարդներ:

Ամբողջությամբ վերցրած օգոստոս ամսին մետրոպոլիտենում իրականացվեցին հետևյալ աշխատանքները: Ընթացքային թունելներում 105.4 մետր երկարությամբ ավարտվեց հիմնական աշխատանքը, իսկ կայարանային թունելներում 39.4 մետր երկարությամբ հատվածում ավարտվեցին հիմնական աշխատանքները: Վերգետնյա մայրու-

դիմերում կատարվեցին 230 մետր երկարությամբ գծերի տեղադրման աշխատանքներ: Ընթացքային թունելներում կատարվեցին հիդրոնեկուսացման աշխատանքներ 150 մետր երկարությամբ: Կայարաններում, ըստ նախատեսված ծրագրի, իրականացան 59.4 հազ. ռուբլու, իսկ կառամատուցներում 129.7 հազ. ռուբլու աշխատանքներ: Դարձ է նշել, որ մետրոպոլիտենի շինարարության ողջ ժամանակահատվածում և հատկապես աշխատանքների իրականացման որոշչիչ 1980 թվականին, իր գործնական քայլերով վճռորոշ դեր կատարեց Կուսակցության Երևանի քաղաքային կոնյտեն: Գրեթե յուրաքանչյուր ամիս Երքաղկոմի բյուրոյում քննարկվել են շինարարությանը վերաբերվող հարցեր և շրջաններում շրջկոմների միջոցով կոնկրետ աշխատանքների իրականացման շնորհիկ օգնել մետրոշինարարներին: Երքաղկոմի և շրջկոմների կողմից կատարած քայլերով ընթերցողին չծանրաբեռնելու համար շատ հակիրծ կանգ առնենք Երքաղկոմի երեք բյուրոներում քննարկվող հարցերին:

1980 թ. ապրիլի 11-ին քննարկվեց «Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի բողարկումն ապահովելու համար լրացուցիչ միջոցառումներ ձեռնարկելու մասին» հարցը: Ընդունված որոշումը բավականին լայնածավալ է, սակայն կոնկրետ ելնելով ուսալ վիճակից հանձնարարություններ են տրվել մայրաքաղաքի հիմնարկ-ձեռնարկություններին, կուսշրջկոմներին մետրոյի շինարարության հետ մնացող տեղամասերին օգնություն կազմակերպելու համար: Հանրապետության Կառավարության առջև բարձրացված հարցն էլ տեղին էր և ժամանակին:

Ելնելով ԴԿԿ Կենտկոմի բյուրոյի 1980 թ. մայիսի 8-ին մետրոշինարարությանը վերաբերվող որոշման պահանջներից չորս օր հետո հարցը քննարկվում է Երքաղկոմի բյուրոյում: Ընդունված որոշման կետերից մեկում պարտավորեցվում է կուսշրջկոմներին մինչև 1980 թ. մայիսի 20-ը լրացուցիչ բանվորական ուժ ուղարկել մետրոպոլիտենի շինարարություն (շուրջ 300 որակյալ նախագետներ):

1980 թ. հուլիսի 4-ին Երքաղկոմի բյուրոյում քննարկվում է 1980 թ. հունիս ամսին մետրոշինարարության պլանային առաջդրանքների կատարման մասին հարցը: Նշվում են յուրաքանչյուր օղակում տեղ գտած թերությունների և բացքորումների մասին, այստեղ ևս տրված հանձնարարությունները կոնկրետ են, նշվում են դրանց կատրաման ժամկետները:

Դարցերի քննարկումները եղել են միանգամայն տեղին, արդյունքները տեսանելի: Նախ ընդունված որոշումներին համապատասխան մայրաքաղաքի շրջկոմներում քննարկվել են Երքաղկոմի բյուրոների որոշումները (շրջկոմներն ել հրենց հերթին, ելելով իրավիճակից, երբեմն քննարկվել են մետրոշինարարությանը վերաբերող հարցեր) և որպես գործին առընչվողներից մեկը ասեմ, որ շրջկոմները մետրոպոլիտենին վերաբերող հարցերով գրադպել են ամենայն մանրամասնությամբ, նույնիսկ անհնարինը դարձել հնարավոր. Երևանի հզոր կառույցի նկատմամբ ստեղծված մթնոլորտն էր հրամայական պահանջումն և չպետք է անտեսել այս ուղղությամբ Երքաղկոմի խստագույն կարգապահության առկայությունը:

Անհրաժեշտ է թթին «հանձնել» հետևյալ ռեալ ծշմարտությունը Երքաղկոմի, շրջկոմների կողմից ընդունված որոշումները դեռ գործի սկիզբն էին. ամենօրյա խնդիր էր որոշման կատարմամբ գրադպելը: Սկսած շարքային կուսակցական աշխատողից մինչև առաջին դեմքերը գոնե մետրոպոլիտենի հետ կապված հարցերում երբեք «դիտողին» դերում չեն եղել, օգնելով եղել է առաջնայինը: Այդ առումով բերենք մի օրինակ, որը ժամանակին մեզ մոտ մեծ հնչեղություն ունեցավ: Կուսքաղկոմի առաջին քարտուղար Լեոնիդ Սերսիսյանը լինելով «Մարշալ Բաղրամյան» տեղամասում (իսկ նա շաբաթվա ընթացքում հաճախ էր լինում շինարարությունում) տեղեկանում է, որ ոչ միայն հանձնարարված ժամկետում չի ավարտվելու կայարանի լատունն թիթեղներից հավաքվող առաստաղը, այլև բացառվում է նման կոնստրուկցիայով աշխատանքների իրականացումը: Պարզվում է երեք մետրից ավելի երկարություն ունեցող լատունի թիթեղների նիկելապատումը հնարավոր չէ: Հանրապետությունում չի եղել մի գործարան, արտադրական միավորում, որ ունենա նման նպատակների համար երկար ու հզոր շերմանաշակման վառարաններ: Բարտարապետ Սպարտակ Կոնդոյցյանի կողմից հարցին նոր լուծում տալը նշանակում էր ամբողջովին ձախողել մետրոյի նույնիսկ ժամանակին շահագործումը: Արտադրական մեծ փորձության ճանապարհ անցած, գործերին տեղյակ առաջին քարտուղարը գտնում է հարցի լուծումը. տեղամաս է կանչում Երևանի կենցաղսպասարկման վարչության պետ Գարուշ Կարապետյանին և Վարչության ծեռնարկություններից մեկում 200 հատ թիթեղները 1 շաբաթում նիկելապատվում են:

\* \* \*

Աշխատանքներն ավելի մեծ թափ ընդունեցին սեպտեմբեր ամսին:

Միքայել Տիխոնովիչը օգոստոսին այլ տեղամաս տեղափոխվելու պատճառով իր աշխատատեղը հանձնեց N 25 բունելային ջոկատի հորատող Ստեփան Խաչատրյանին: Երիտասարդ մասնագետը, լեռնահետախուզական աշխատանքից տեղափոխվելով մետրոպոլիտն, կարծ ժամանակահատվածում տիրապետել էր մետրոշինարարի բարդ մասնագիտությանը և իր շուրջը հանախներել «Մոսմետրոշին» և «Հայռուսշին» կազմակերպությունների մի խումբ հորատողների: Առաջին հաջողությունները ծեռք բերվեցին սեպտեմբեր ամսվա առաջին իսկ օրերից: Կոլեկտիվը սեպտեմբերին անցավ հորատանցման «Զորավար Անդրանիկ» - «Ռամպա» տեղամասում և անկախ աշխատանքային ծանր պայմաններից կարողացավ անցահատել 27 խորանարդ մետր: Համառորեն դժվարությունները հաղթահարելով մեծ համբավ ծեռք բերեցին բրիգադի անդամներ Արտյոն Առաքելյանը, Ժորա Հայրապետյանը, Սերգեյ Ստարչենկոն և Վարուժան Արշակյանը: Նրանք աշխատում էին Միքայել Տիխոնովիչին ընդառաջ:

Չնայած լեռնաերկրաբանական դժվարին պայմաններին, «Զորավար Անդրանիկ» տեղամասի կոլեկտիվը գերազանցեց ուր ամսվա հորատանցման, հիդրոմեկուսացման, բետոնապատճան աշխատանքների պլանը և մինչև սեպտեմբերի վերջը ավարտեց հորատանցումը:

...«Սասունի Դավիթ» տեղամասում վերգետնյա կայարանի շինարարությունն իրականացնում էր «Երքիմշին» տրեստի N 30 շինվարչությունը: 1979թ. սեպտեմբերի մինչև 1980թ. սեպտեմբերի վերջը կատարվեցին մեծ ծավալի աշխատանքներ: Արդեն 1980թ. սեպտեմբերին պատրաստ էր երկաթուղագիծ տակով դեպի մետրոյի կայարան տանող անցուղին, ավարտվում էր աջ սպասարարի բետոնային և երեսպատճան գործը: Կառուցվեց նաև ուժաքարշային կայանի քառահարկ շենքը: Հարկ է նշել, որ իրենց բարեխիղճ աշխատանքով աչքի էին ընկել մոնտաժող Տիգրան Սարգսյանը, հյուսներ Մնացական Մարգարյանը, Վաղինակ Բաբայանը, բետոնագործ Ռաֆիկ Դավթյանը:

«Երքիմշին» տրեստի շինարարներն ամեն միջոց ծեռնարկում էին կապի տան շենքը շահագործելու համար, իսկ «Հայկապշին»-ի մասնա-

գետները, շինոնտաժային աշխատանքները ժամանակին և որակով իրականացնելու համար բավականին նախապատրաստական աշխատանքներ էին ծեռնարկել: Սկսվեց և մինչև սեպտեմբերի վերջը ավարտվեց էլեկտրական ժամանակացույցների սարքի տեղադրումը: Դա բավականին բարդ ու պատասխանատու գործ էր, որի մոնտաժման աշխատանքներն իրականացվեցին արագ և որակով:

«Երիտասարդական» տեղամասում կայարանասրահն ամբողջությամբ հարդարողների, ամրանագործների, բետոնագործների տրամադրության տակ էր:

Աջ կայարանային թունելում ավարտվել էր գրանիտապատումը, իսկ մինչև սեպտեմբերի վերջը մարմարի գգեստ հազար մյուս հատվածները: Երեսպատճան աշխատանքները կատարում էին Մոսկվայի մասնագետները: Աշխատում էին բարեխորդուն և որակով: Սեպտեմբերին իրականացվեցին ընթացքային թունելներում գծերի տեղադրումը, ջրահավաք առուների բետոնային աշխատանքները: Միաժամանակ բետոնապատվում էր կայարանասրահի աջ ու ձախ թունելների միջև ընկած հատվածը: Սկսվեց և ավարտվեց աջ և ձախ կայարանային թունելների կամարների մետաղապատումը:

Որպես կանոն, աշխատանքները կատարվում էին նախատեսված գրաֆիկին խստ հանապատասխան: Կառուցում անվանի շինարարներ շատ կային: Միքայել Մելիքյանը, Սերգեյ Սարգսյանը, Գրիշա Գուլյանը, Ալեքսանդր Կրիվոշապովը և շատ շատերը ցույց էին տալիս իրենց բարեխիղճ մոտեցումները հանձնարարված գործի նկատմամբ: Լավ էին աշխատում նաև Երևանի պոլիտեխնիկական, Բրյուսովի անվան ուսուաց և օտար լեզուների ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի ուսանողական շինարարական ջոկատները:

Սեպտեմբերն աշխատանքային հաջողությունների ժամանակաշրջան եղավ նաև Հենրիկ Սարգսյանի դեկանատ ամրանագործների բրիգադի համար: Կյդ օրերին նրանք գրանված էին թեք մուտքի վերին հատվածի ամրանակապաման աշխատանքներով: Այն ավարտվեց սեպտեմբերի վերջին օրերին, որից հետո իրենց խոսքն ասացին բետոնագործները: Հենրիկ Սարգսյանը, որպես բրիգադավար, միշտ բարձր էր գնահատում և մեծարում ամրանագործ Հարություն Յաղալյանին, Վիլեն Պազարյանին, Գառնիկ Թաղիսոյանին նրանց գերազանց աշխա-

տանքի համար:

Երևանում ապագա մետրոպոլիտենի վերգետնյա կայարանաս-  
րահներն աչքի էին ընկում ինքնատիպությամբ, ճարտարապետական  
և ինժեներական հետաքրքիր լուծումներով։ Դրանից մեկը «Մարշալ  
Քաղաքացիան» էր։

Կայարանի հսկայական սրահի եզակի հեծանները պատրաստվում  
էին մետաղական կոնստրուկցիաների գործարանում, իսկ մոնտաժումն  
իրականացնում էին «Հայիատուկմոնտաժի» մասնագետները։ Հասկա-  
նալի էր, որ նման չափերի հեծանների փոխադրումը բավականին  
բարդ խնդիր էր, այդ նպատակով պատրաստվեց հեծանակիր ավտոմե-  
քուրայի հատուկ բափը 26. մետր երկարությամբ, որով փոխադրվեցին  
հեծանները և դրա մասերը։ Լուրջ դժվարությունների հետ էր կապված  
նաև տեղադրումը, քանի որ ամբողջ գործողությունը կատարվելու էր  
«Բարեկամություն» գրոսայգում, և մոնտաժողները ձգտում էին չվնասել  
ոչ մի ծառ։

Հետաքրքիր է նշել, որ մետաղական ամբողջ կոնստրուկցիան ծա-  
ռայելու էր նաև որպես ճարտարապետական ծևավորման բաղադրա-  
մաս, այսինքն երկալու էր ամբողջությամբ։ Այդ պատճառով էլ հսկայա-  
կան հեծանները և մետաղական մյուս մասերը պատրաստելուց հետո  
դրանց մակերեսները նաքրվելու-կոկվելու էին ծեռքի խարտոցով։

Կայարանասրահի շինարարությանը երթինշինցիներին օգնում էին  
«Հայսանտեխնոնտաժի» և «Հայէլեկտրամոնտաժի» մասնագետները։  
Առաջիններն իրենց անելիքներն ավարտեցին սեպտեմբերին 70%, երկ-  
րորդները՝ 50%-ով։ Կայարանասրահի շինարարությունը թևակոխել էր  
իր վերջնական և պետք է ասել, դժվարին փուլը։ Ըստ գրաֆիկի, մետա-  
ղական ծածկի տեղադրումը պետք է ավարտվեր մինչև հոկտեմբերի 1-ը, իսկ ամբողջությամբ օբյեկտը պետք է պատրաստ լիներ հոկտեմբերի  
վերջին /նշված ժամկետում/։

Միաժամանակ պետք է նշել, որ ավարտին էր մոտենում «Հանրա-  
պետության հրապարակ» - «Զորավար Անդրանիկ» - «Շամապա» հատ-  
վածների միջև ընթացքային թունելների հորատանցման աշխատանք-  
ները։ Սեպտեմբերի 16-ին ավարտվեց «Բարեկամություն» կայարանից  
մինչև «Հանրապետության հրապարակ» կայարանի աջ ընթացքային  
թունելներում գտների տեղադրումը։ Մինչև փորձնական գնացքի թողար-

կումը մնում էր 4.5 կմ հատվածում տեղադրել ռելսերը և հավաքել 15 կմ  
կոնտակտային ռելսեր։ Գծային աշխատանքների տեխնիկական դեկա-  
վարն էր Վյաշեսլավ Վլադիմիրի Պոնոմարյովը, որը բարձրորակ մաս-  
նագետների ուժերի մորիկիզացման և անհրաժեշտ տեխնիկական հս-  
կողության իրականացման շնորհիվ այս պատասխանատու աշխա-  
տանքը կատարեց գերազանց։

Սեպտեմբեր ամսում կատարված աշխատանքների ամփոփ պատ-  
կերը ներկայացնենք մի քանի բվերով։

Ընթացքային թունելում 139 մետր տարածության վրա կատարվե-  
ցին անհրաժեշտ աշխատանքները և մնաց ընդամենը 77 մետր /ամբող-  
ջությամբ կատարվել էր 9644.5 մետր/, կայարանային թունելներում  
ավարտվեցին աշխատանքները /1408.1 մետրից սեպտեմբերին բաժին  
ընկավ 57 մետր/, թունելներում գցվեց 2219 մետր ռելս, մնաց 3730  
մետր /ամբողջությամբ գցվել էր 7912.6 մետր/։ Բացօրյա ուղեմասում  
դեռ մնում էր գցել 2150 մետր ռելս /գցվել էր ընդամենը 1570 մետր,  
որից սեպտեմբերին 390 մետր/։ Անկախ ամսվա ընթացքում ընթացքա-  
յին թունելներում հիդրոմեկուսացման մեջ աշխատանքին /300 մետր/  
դեռ մնում էր ևս 1790.6 մետր /ամբողջությամբ կատարվել է 7933.1  
մետր/։ Կայարաններում մնում էր հիդրոմեկուսացնել 512 մետր /կա-  
տարվել էր 8907.1 մետր որից սեպտեմբերին կատարվեց 48 մետր/։ Կա-  
տարվել էր կատարվածի համեմատ ավելի քան կրկնակի անգամ  
հարդարման աշխատանքներ էր իրականացվելու, խստ ետ էին մնում  
նաև նախասրահների շինարարական աշխատանքները։

\* \* \*

1980թ. հոկտեմբեր ամսին կատարված աշխատանքներից մի քանի  
օրինակներ՝ «Զորավար Անդրանիկ» տեղամասի թունելեզրի հորատող-  
ները, ինչպես ասվել է, իրար ընդառաջ գնալով, ամեն ինչ անում էին  
անցահատման աշխատանքներն արագ վերջացնելու համար։ N 25 թու-  
նելային ջոկատի Արտյոմ Առաքելյանի դեկավարած հորատողների  
բրիգադը հասավ լավագույն արդյունքի. սեպտեմբերին անցահատեց  
27 մետր։ Աշխատանքային այդ հաջողությունը բարոյական մեծ խթան  
հանդիսացավ և պատահական չէր նրանց նոր հաջողությունները հե-  
տագա ամիսներին։

Կայարանային քունելմերում իրականացնում էին կոշտ հիմքերի բետոնացման, հիդրոնեկուսացման և այլ աշխատանքներ: Աջ ընթացքային քունելը համարյա պատրաստ էր: Հոկտեմբերի 23-ին այստեղ սկսվեց ռելսերի տեղադրումը:

Անցահատման աշխատանքներն իրականացվեցին սահմանված գրաֆիկի համաձայն օրական մեկ մետրի սահմաններում /չմոռանանք, որ այստեղ հիդրոերկրաբանական ամենածանր տեղամասն էր/:

Թունելեզրի տեղամասում շարունակվում էր ռելսերի տեղադրումը, որն իրականացնում էր Նիկոլայ Նեստերովի բրիգադը:...

Հոկտեմբերի առաջին օրերին ստացվեցին մետրոպոլիտենի երկնագույն 6 վագոններ, որոնք տեղավորվեցին «Սասունցի Դավիթ» կայարանի տարածքում և կարծես ազդարարում էին մետրոպոլիտենի շինարարության ավարտը:

«Սասունցի Դավիթ» կայարանի շինարարությունը մտել էր վճռորոշ փուլի մեջ: Աշխատանքները կատարում էին երկու գլխավոր կապալառուներ «Յայրունելշինը» և «Երքիմշինը»: Այստեղ Յայաստանի հատուկ մոնտաժշին գլխավոր վարչության մասնագիտացված բրիգադների աշխատողները կատարում էին օդափոխության, սանտեխնիկայի մոնտաժային կարգավորման աշխատանքները: «Մոսմետրոշինի» հատուկ մոնտաժային վարչության բրիգադը հավաքում էր երեք շարժասանդուղները և ԱԲԿ-ն /ազդանշան-բլոկավորում-կենտրոնացում/:

Ավարտվում էր վերգետնյա կառամատույցի ծածկը կայարանի ծառայական սենյակներում կատարում էին հարդարման վերջին աշխատանքները, իսկ նախարարական ներում շարունակում էր հենասյուների մարմարապատումը: Դրանք կատարում էին «Երքիմշինի» N 2 շինվառչության՝ Սուրեն Շահնազարյանի տեղամասի որակյալ բանվորները:

«Յայտրանսշինի» տեղամասի պետ է.Սահակյանի աշխատողները տեղադրում էին գծերը: Նրա աշխատանքային սենյակը տեղավորված էր փոքր վագոնիկում, որտեղ հաճախ անց էր կացվում օպերատիվ տեխնիկական խորհրդակցություն:

Իսկ ինչպես էին ընթանում «Երիտասարդական» տեղամասի վերգետնյա կայարանի շարժասանդուղքի մոնտաժնան աշխատանքները հոկտեմբեր ամսին:

«Թրիլմետրոշինի» N 5 քունելային ջոկատի բրիգադավար, Աշխա-

Երևանի մետրոպոլիտենի նախագծող,  
կառուցող և շահագործող  
«հզոր եռյակ» ղեկավարները



Վարդիմիր Դանիուրով  
«Յայտրանելշին» վարչության  
պետ




Լեոնիդ Շարությունով  
«Յայրունելշին» վարչության  
պետ



Իվան Պաշինեան  
Երևանի մետրոպոլիտենի պետ

**«Երևաննախագիծ» ինստիտուտի կողմից Երևան քաղաքի  
մետրոպոլիտենի ցանցը մշակող  
հեղինակային կոլեկտիվը**



**Եղուարդ Պապյան**  
Նախագիծ գլխավոր  
ճարտարապետ



**Ֆելիքս Մարկոսյան**  
Նախագիծ գլխավոր  
ճարտարապետ



**Եղուարդ Ստեփանով**  
Նախագիծ գլխավոր  
ինժեներ

**«Դայպետտրանսնախագիծ» ինստիտուտում Երևանի  
մետրոպոլիտենի նախագծման աշխատանքների  
ղեկավարներ**



**Արշակ Կարապետյան**  
Մետրո և բունենքեր  
բաժնի վարիչ



**Զոն Հարությունով**  
Մետրո և բունենքեր  
բաժնի գլխավոր  
մասնագետ



**Լևոն Շիգրանյան**  
Մետրո և բունենքեր  
բաժնի գլխավոր  
մասնագետ

**Երևանի մետրոպոլիտենի շինարարությունն իրականացնող  
մի շարք կարևորագույն կազմակերպությունների  
ղեկավարներ**



**Ժորժ Ավանեսյան**  
N160 շինմոնտաժային  
վարչության պետ



**Միքայել Մկրտչյան**  
ՐՍՍՀ նախարարների խորհրդի  
մոնուաժային և հասուլկ շինարարական  
աշխատանքների գլխավոր վարչության պետի  
տնօնակալ



**Յուրի Շավահյան**  
Երթադիրիքի գործկուն  
նախագահի առաջին տեղակալ,  
մետրոյի շինարարությունում Երթադիրիքի  
ինչ շինմոնտաժային կազմակերպությունների աշխատանքները կողրդինացնողն ու ղեկավարողը



**Պետրոս Թումանյան**  
«Երմիջին» տրեստի  
կառավարիչ



**Բոգդան Հարությունով**  
«Դայլեկտրամոնտաժ»  
տրեստի կառավարիչ



**Որբերտ Տոնոյան**  
«Դայլեկտրամոնտաժ» տրեստի  
կառավարիչ



**Երվանդ Ավետիսյան**  
«Դայլեկտրամոնտաժ» տրեստի  
կառավարիչ



**Աբրամ Սարգսյան**  
«Արփասևանչին»  
տրեստի կառավարիչ




Երևանի մետրոպոլիտենի պետ Կվան Պապիեվի առանձնասենյակում, ձախից մետրոպոլիտենի գլխավոր ինժեներ Սաոլեն Յարությունովը և մետրոպոլիտենի պետի տեղակալ Արմենակ Զոյսանը, աշխատությունում ծառայության պետ Վալերի Դանդրոն-վը և մետրոպոլիտենի կաղըքի բաժնի պետ Նիկոլայ Մերիլջանյանը

Երևանում կառուցվող մետրոպոլիտենի տնօրինության մի խումբ պատասխանատու աշխատողները



Հրանտ Բեգլարյան  
Ծննդարձության որակի  
ընդունման տեսուչ



Գենադի Խաչանով  
Էլեկտրական սարքավորումների  
մոնտաժման աշխատանքների  
որակի ընդունման տեսուչ



Կամո Արայան  
Սանտեհնիկական սարքավորումների մոնտաժման աշխատանքների որակի ընդունման  
տեսուչ



Յարեկ Ամասյան  
Սարքավորումների և մեխանիզմների ապահովման բաժնի պետ




Հողատանգում երևանի ընդերքում





ՀԿԿ Կենտկոմի առաջին  
քարտուղար Կարեն Դե-  
միրճյանը մետրոյի շի-  
նարարությունում, ՀԿԿ  
Կենտկոմի և ՀՍՍՀ նա-  
խարարների խորհրդի  
մետրոպոլիտենի շտաբի  
մի խոմք ղեկավար ըն-  
կերների հետ



Դեռ ամենիցներու շաստ են...

## Փորձնական գնացքի թողարկման օրը



Նկարում Կ.Դեմիրճյանի հետ ծախսից ՀԿԿ Երքաղկոմի առաջին քարտուղար Լ.Ներսեսյանը, աջից ՀՍՍՇ գերագույն խորհրդի նախագահության նախագահ Բ.Մարգարյանը և ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Կ.Ղամբարյանը

Փորձնական գնացքում նստած են ծախսից «Գլխավունելմետրոշին» կառավարիչի տեղակալ Վ.Յանչեվսկին, ՀՍՍՇ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Վ.Յայրապետյանը, «Դարրունելշինի» վարչության պետ Լ.Զարուխունով, գլխավոր ինժեներ Դ.Ռոյանկինը





Մի խումբ մետրոշինարարներ



Փորձնական գնացրում նստած են ծախից մետրոպոլիտենի պետ Ի.Պապիեվը և «Երթիմշին» տրեստի գլխավոր ինժեներ Ռ.Մելքոնյանը, կանգնած է մետրոպոլիտենի առաջն միլպետ Է.Դովիհանիսյանը

տանքային կարմիր դրոշի շքանշանի ասպետ Նոդար Մաղլակելիձեն փորձության մեջ ճանապարհ անցած, ճանաչված մասնագետ էր և միշտ գտնվում էր աշխատանքային դժվարին տեղամասում։ Գործերը, կարելի էր ասել, վատ չէին գնում։ Շարժասանդուղքների զգալի մասը մոնտաժված էր մոտ 70 տոկոսը։ Տեղադրվել էին քարշող շղթաները, ինչպես նաև շարժասանդուղքի եզրակոնքները և մի շարք այլ մետաղական կոնստրուկցիաներ։

«Մարշալ Բաղրամյան» կայարանում կատարվում էին մոնտաժային հիմնական գժերի տեղադրման, հարդարման աշխատանքներ։ Լեցինգրադի ինժեներա-շինարարական ինստիտուտի մի խումբ ուսանողներ իրենց արտադրական պրակտիկան անց էին կացնում այս տեղամասում։ Նրանց ճնշող նեծամասնությունը որոշեց միաժամանակ աշխատել մետրոպոլիտենի շինարարությունում՝ ըստ իրենց ընտրած մասնագիտության։ Իհարկե, հրամանով, որպես քանվորներ վարձատրվեցին կատարված աշխատանքների դիմաց։ Նրանց համար մեծ պատիվ էր մետրոյի գործարկման շեմին շուրջ 6 ամիս աշխատել երևանի մետրոպոլիտենում, ծանոթանալ շինարարության բոլոր նրբությունների հետ։ Այստեղ նրանք հնարավորություն ստացան մոտիկից ծանոթանալ արտադրական գործընթացներին, կազմակերպչական յուրահատկություններին։ Ուսանողների նկատմամբ հոգաւոր մոտեցում էին ցույց տալիս «Մարշալ Բաղրամյան» տեղամասի պետ Ա.Վենտիսյանը, կոմպլեքսային բրիգադավար, Սոցիալիստական աշխատանքի հերոս Ի.Շեսելկը, N 160 շինմոնտաժային վարչության շատ աշխատողներ։

Դոկտերեր ամսին մետրոպոլիտենի շինարարությունում տեսանելի էին վերգետնյա հատվածում գժերի անցկացման ուղղությամբ տարվող աշխատանքները։ Այս գժերի տեղադրման առաջին իսկ օրվանից իրականացվել էր ռելսերի տեղադրումը, որից միայն հոկտեմբեր ամսվա բաժինը կազմում էր 1040 / դեռ մնում էր 1110 մետր։ Մետրոպոլիտենի թունելներում ևս գժերի տեղադրման աշխատանքները միանգամայն բավարար էին։ Դոկտերերին տեղադրվեց 1830 մետր ռելս և մնում էր տեղադրել ընդամենը 1900 մետր։ Նախարարական աշխատանքները ևս լավ էին ընթանում, կատարվել էր 1837 հազ. ռուբլու աշխատանք, մնում էր իրականացնել ևս 357.5 հազար ռուբլու աշխատանք, դեռ բավականին անելիքներ կային հիդրոմեկու-

սացման և հարդարման աշխատանքների ուղղությամբ:

...Քանի որ մետրոպոլիտենի շինարարությունում ամբողջական պատկերն ավելի ցայտուն նկատվեց 1980թ. դեկտեմբեր ամսվա վերջին, այդ իսկ պատճառով նոյեմբեր ամսում կատարված աշխատանքներին կանորադառնանք շատ հակիրճ:

«Բարեկամություն» կայարանում հարդարման և երեսպատման աշխատանքները կատարում էին Մոսկվայից եկած մետրոշինարարները: Մեծ աշխատափրությամբ և բարձր որակով աշխատանքներ էին կատարում Ալեքսանդր Չուրանովի ղեկավարությամբ երեսպատող բրիգադը: Երեսպատման նուրբ օպերացիաները բժախնդրորեն էին կատարում բրիգադի անդամներ Վլադիմիր Կարպույկուն, Նիկոլայ Կարբիչնը, Բորիս Սաղաթելյանը, Ելենա Վախրուչյան և Ստենա Դանիլովը: Հարդարման և երեսպատման աշխատանքներն ամբողջությամբ ավարտվեցին դեկտեմբեր ամսվա առաջին կեսին: Ստորգետնյա կայարանի դահլիճում հարդարման լայնածավալ աշխատանքներ էին տարկում: Սկսվել էին սյուների մարմարապատման աշխատանքները, ընթացքային կայարանում և տեղադրվում էին մարմարի սալիկները:

Հորատման աշխատանքներն ավարտելուց հետո միայն պայմաններ ստեղծվեցին գծերի վրա աշխատողների թիվը լրացմել հորատող բանվորներով: Այդ աշխատանքներին մեծ թափով ծեռնամուխ եղան N 160 շինոնտաժային վարչության, NN 3, 6, 8 բունելային ջոկատների մասնագետները, ինչպես նաև մեր հյուրերը՝ Լենինգրադից, Տալինից, Թբիլիսից, Բաքվից, Խարկովից:

Երևանի մետրոպոլիտենի շինարարությունում տեղի ունեցավ հիշարժան երևույթներից մեկը. «Հայրունելշինի», «Մոսմետրոշինի» և «Լենմետրոշինի» հորատողները «Զորավար Անդրանիկ» -Ռամազ Երթուղու նոյեմբերի 20-ին կատարեցին ծախ ընթացքային բունելի վերջին հորատման աշխատանքները: Դրանով իսկ ավարտվեց հիմնական 8-րդ աշխատատար պրոցեսը՝ մետրոպոլիտենի առաջին հերթի հորանցումն ընթացքային բունելներում: Այսպիսով օժանդակ ստորգետնյա բունելների հետ միասին ընդհանուր երկարությունը կազմեց 13 կմ: Երկու բունելների միացման հորանցումը հանձնարարվեց Արտյոն Առաքելյանի հորատողների բրիգադին:

...1980թ. նոյեմբերի 24-ին «Սասունցի Դավիթ» կայարանից աջ ըն-

թացքային թունելի 6650 մետր ոնցերի վրայով դեպի «Բարեկամություն» կայարան դանդաղ ընթացք վերցրեց երկնագույն ճեպընթացը: Մետրոպոլիտենի գծերով անցավ փորձնական գնացքը: Պատմական պահը ազդարարեց երևանցիներին իրենց «կենցաղում» շուտով մուտք գործող մետրոյի գործարկման մասին:

Մետրոյի առաջին փորձնական գնացքի գործարկումը բարձր տպավորություն թողեց բոլորի վրա, բարոյական ուժ, նոր լիցք հաղորդեց մետրոշինարարներին և հետագա օրերին, մինչև մետրոպոլիտենի գործարկումը, աշխատում էին չքուլացող տեմպով /այդ մասին ստորև/:

... Այն, ինչ արվում էր «Բարեկամություն» տեղամասում, բոլոր հատվածներում, կարելի է ասել, աշխատանքի վերջին փուլն էր: Զախ ընթացքային թունելում, օրինակ, ավարտված էր գծերի բետոնապատումը, ծեռնամուխն էին եղել նախնական ճաքրմանը, դուրս էին բերվում մեխանիզմները, մետաղի ջարդնները և այլն: Մինչև դեկտեմբերի 15-ը այս հատվածում ամեն ինչ ավարտվեց՝ լվացին, մաքրեցին բունելները, որոնք լրիվ պատրաստ էին ընդունելու երկրորդ փորձնական գնացքը: Բացի այդ սկսեցին անցման միջանցքի, այսինքն՝ շարժասանդուղների մասից մինչև կայարանասրահն ընկած հատվածի գրանիտապատման և մարմարապատման աշխատանքներն:

«Բարեկամություն» տեղամասում «Հայելեկտրամոնտաժ» տրեստի 1-ին շինոնտաժային վարչությունը կատարում էր էլեկտրամոնտաժային աշխատանքները: Նրանց կողմից հիմնական աշխատանքներն ավարտվել էին և մնում էին ոչ մեծ ծավալի գործեր՝ ուժաքարշային ենթակայանում պետք է տեղադրվեր երկու քարշային և ուժային տրանսֆորմատորներ, ավարտվում էին ստորգետնյա և վերգետնյա կայարանների ճարտարապետական լուսավորման նախագծերի իրականացումը, կաբելային կուլեկտորների տեղադրումը և այլն, որոնք ավարտվեցին դեկտեմբերի 15-ին:

...Գործարկման նվիրական օրը, ինչպես ասում են, սարերի հետևում չեղ, և այդ հանգամանքն էլ իր յուրահատուկ կնիքն էր դնում աշխատանքների ընթացքի վրա, քանի որ այլև նահանջի ճանապարհ չկադարձական անհնարին էր դառնում գրաֆիկների խախտումը: /Ոչ շինարարների մեղքով աշխատանքների ծախողումների դեպքում անմիջապես ցանցային գրաֆիկում կատարվում էին փոփոխություն-

ներ, հետևաբար խոսքը վերաբերում է ճշտված գրաֆիկներին։ Այդ ոգով էին աշխատում գրեթե բոլոր տեղամասերում, բոլոր բրիգադները։ Շինարարության արագ տեմպերը չէին ազդում կատարվող աշխատանքների որակի վրա, քանի որ մետրոպոլիտենն այն կառուցն էր, որ տեղ բացառվում էր «մի կերպ անենք, հետո կշտկենք» աշխատանքային ոճը։

«Մարշալ Բաղրամյան» տեղամասի աշխատանքների մասին։ Վերգետնյա կայարանը, որը շատ-շատերի համար մի տեսակ անհասկանալի կառուց էր թվում, առագործեն ստանում էր իր նախազօքային տեսքը։ Այս համեմատաբար ընդարձակ շինհրապարակում նեղվածք էր, բայց իսկական իմաստով։ Կողք կողքի աշխատում էին մեկ տասնյակի հասնող մասնագիտությունների տեր մարդիկ, և բոլորն էլ շտապում էին, ժամանակին ավարտել աշխատանքները։ Իսկ բակում երթեմն ուղը դնելու տեղ չէր լինում։ Իրար հետևից մոտենում էին հսկա բետոնատարները ամենատարբեր շինանյութերով։

Սկսվել էր ինժեներական եզակի կառուցվածք հանդիսացող տաճիք /մակերեսը մոտ 900 քառակուսի մետր/ փափուկ ծածկի պատրաստումը, որն իրականացնում էր Ա. Կիրակոսյանի բրիգադը։ Այստեղ հատուկ ուշադրություն էր դարձվում մեկուսիչ շերտերի որակին, բոլոր աշխատանքները նախատեսված էին ավարտել դեկտեմբերի 17-ին։

Վերին կայարանասրահի հսկայական տաճիքը հենված էր 4 կետերի վրա, իսկ պատերը պետք է լինեն միայն թափանցիկ։ Մեխանիկ Յ. Վարդանյանի դեկավարած մասնագետների խումբն արդեն ծերնամուս էին եղել ապակե պատերի հավաքման և մոնտաժման աշխատանքներին։

Դրանց կմախքը մոնտաժվում էր ոսկեգույն այսումինի շրջանակների մեջ, որոնք ստացվում էին Մոսկվայից։ Միայն թափանցիկ պատերի համար օգտագործվում էր մոտ 600 քառ. մետր ապակի։ Ապակե պատերի պատրաստման վերջնական ժամկետն էր դեկտեմբերի 27-ը։ Սույն էր, սակայն երթիմշինցիները ժամկետը չխախտեցին։

Կայարանասրահում եռանդուն կերպով գործում էր հարդարողները։ Նույնություն, Լենինգրադից, Կրաստանից ստացված տարրեր երանգների գրանիտասալերով պատվում էին կայարանասրահի հատակը և պատերը։ Նախատեսված էր գրանիտապատել 1000 ք.մ։ Այս

աշխատանքները կատարվում էին երկու հերթափոխով։ Գրանիտապատողների և ծեփագործների բրիգադների աշխատանքները գրաֆիկով իրականացնելու համար մեծ օգնություն էին ցույց տալիս բուհերի ուսանողները։

Ընդերքում ևս ոչ մի օր չէր թուլանում աշխատանքային թափը։ Այդ օրերին կարևոր ուղղություններից մեկը գծերի պատրաստումն էր, գծային տնտեսության կարգավորումը։ Այ ընթացքային թունելում /որտեղ հիմնականում ավարտված էին գծերի տեղադրման և բետոնապատման աշխատանքները/ կարգի էին բերվում ուղեգծերը։

... «Սասունցի Ղավիթ» կայարանում ավարտվում էին առաջին հերթի գծերը, որոնց տեղադրվում էին երկարուղային գծերի դիմաց։ Վերգետնյա նախարարի կառուցող «Երթիմշին» N 30 շինվարչության կողեւկից ծերնամուս եղավ այս աշխատանքներին 1980թ. ապրիլից։ Ղեկտեմբերի 20-ի դրությամբ ավարտման եզրին էր կառանատուցի շինարարությունը իր ծածկով, ծախ նախարարիվ, դրամարկղային դահլիճով և ծառայասենյակներով։

Շինմոնտաժային աշխատանքները կատարվում էին Յրանտ Մաքսիսյանի բրիգադի կողմից, որոնց հաջողությունների հիմնական գաղտնիքն աշխատանքի կազմակերպման և վարձատրման տնտեհաշվարկային եղանակով աշխատելու մեջ էր։ Այս խմբում գերազանց աշխատանքով լուրջ հաջողությունների հասան Զորաք Մուրադյանը և Մնացական Վարդանյանը, մոնտաժող Տիգրան Սարգսյանը, զողող Նիկոլայ Կնյազեցը, երեսպատողներ Մարտիրոսյանը և Յովհաննես Զաքարյանը, քարտաշներ Բենիկ Յամբարձումյանը, Զավեն Եղիազարյանը և Սերգեյ Խոստակյանը։

... Եթե մետրոյի վերը նշված տեղամասերում, կարելի է ասել, օրեր էին մնացել աշխատանքների ավարտին, ապա դեկտեմբերի վերջին օրերին պարզ նկատվեց, որ անելիքները մեծ են «Յանրապետության հրապարակ», «Երիտասարդական» տեղամասերում։ «Յանրապետության հրապարակ» տեղամասում վերգետնյա կայարանի շինարարության ավարտին անհրաժեշտ էր ոչ պակաս, քան երկու ամիս, իսկ ստորգետնյա տեղամասում դեռ շատ ու շատ ամելիքներ կային, նույնիսկ ավարտման մոտավոր ժամկետի մասին կարծիք արտահայտելը հաճելի եղարականգման չէր բերի։

Գրեթե նույն վիճակում էին «Երիտասարդական» կայարանի աշխատանքները, իհարկե, ստորգետնյա տեղամասում վիճակն այնքան էլ անմիտարական չէր: Իսկ վերգետնյա հատվածում արդեն պարզ նկատվում էր ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի յուրօրինակ ճարտարապետական մտահղացման արդյունքը: Այստեղ մեծ բափով էին ընթանում աշխատանքները: Դեկտեմբեր ամսին մեծածավալ աշխատանքների շնորհիվ մեծ շրջադարձ կատարվեց բոլոր տեղամասերում: Ամրողական, սակայն, աշխատանքների ավարտին դեռ ժամանակ էր պետք, 1980թ. մետրոյի գործարկումը տեղի չունեցավ...

\* \* \*

1981թ. առաջին իսկ օրից կազմակերպված և լարված աշխատանքներ էին տարվում մետրոպոլիտենի շինարարության բոլոր տեղամասերում: Համառոտ կանգ առնենք կատարված հիմնական մոնտաժային աշխատանքների վրա:

1981թ. հունվար-փետրվար ամիսներին «Բարեկամություն», «Մարշալ Բաղրամյան», «Սասունցի Դավիթ» կայարաններում ամբողջությամբ ավարտվեցին նախատեսված բոլոր աշխատանքները, «Երիտասարդական» կայարանում աշխատանքներն ավարտվեցին մարտի 4-ին, «Հանրապետության հրապարակ» կայարանում նախատեսված աշխատանքները ևս ավարտվեցին նույն ժամանակ, բացառությամբ միշտ սպասարակից /այն ամբողջությամբ ավարտվեց դեկտեմբերին/:

Ընթացքային թունելներում հիդրոմեկուսացման ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ կատարվեցին: «Երիտասարդական», «Հանրապետության հրապարակ» և «Սասունցի Դավիթ» կայարաններում հունվարին շահագործման հանձնվեցին շարժասամուղուղըները, իսկ «Բարեկամություն» և «Մարշալ Բաղրամյան» կայարաններում կատարվում էին շարժասամուղըների տեխնիկական փորձարկումները և փետրվարի վերջին հանձնաժողովը, բարձր գնահատականով, ընդունեց այն:

«Բարեկամություն» կայարանի նախասրահների շինարարությունը սկսվել էր 1980թ. փետրվարին «Երքինշինի» N 27 շինվարչության կողմից: Մեկ տարվա ընթացքում կատարել են 12 հազ. խ.մ հողային, 2000 խ.մ բետոնի, երկարքետոնի և այլ աշխատանքներ: Նրանց ուժերով կա-

յարանի կողքին վեր խոյացավ կապի տունը, Զարբախում կառուցվեցին մետրոպոլիտենի դեպոյի շինությունները:

Դինգ կայարաններում ավարտվեցին քարշային ենթակայանների աշխատանքները: Ներգետնյա կայարաններում և ընթացքային թունելներում նորմալ ջերմություն, խոնավություն պահպանելու համար տեղադրվեցին հզոր օդափոխիչ սարքը: «Դայլեկտրալույս» արտադրական միավորումը մեծ օգնություն ցույց տվեց մետրոպոլիտենի լուսավորության հարցում և այլն: 1981թ. հունվար-փետրվար ամիսները կարելի է բնութագրել մետրոշինարարների համար շինարարական աշխատանքների ավարտի փուլ և մոնտաժային աշխատանքների ամենածանրաբեռնված ու դրանց հաջող ավարտի ամիսներ:

1981թ. հունվարին շահագործման հանձնվեց կապի շենքը, տեղադրվեցին սարքավորումներ, որոնց օգնությամբ ապահովվելու էր երթևեկության կարգավորումը, էլեկտրամատակարաման սարքավորումների և շարժասամուղուղըների կառավարումը: Ամբողջությամբ կապի աշխատանքները «գերազանց» գնահատականով ավարտվեց 1981թ. փետրվարին: «Դայկապշին» տրեստի կոլեկտիվի քրտնաջան աշխատողներից առանձնահատուկ պետք է նշել մասնագիտացված շինմոնտաժային վարչության կատարած ծանրակշիռ աշխատանքը, հատկապես վարչության պետ Միշա Նազարեթյանի և գլխավոր ինժեներ Լեոնիդ Գասպարյանի սրտացավ և հետևողական գործելակերպը մոնտաժային գործի կազմակերպման առաջին օրից մինչև դրա հաջող ավարտը:

Ինը լարված տարիներ պահանջվեցին, որպեսզի շինարարները բարդ հիդրոերկրաբանական պայմաններում մայրաքաղաքի տրանսպորտով առավել ծանրաբեռնված փողոցների տակ տեղադրեն տրանսպորտային արագընթաց մայրուղի, հնքանափառ նախասրահներ և արժանանան պետական հանձնաժողովի գերազանց գնահատականին: 1981թ. փետրվարի 15-ի դրությամբ «Մետրոշինի» վագոնաշինական գործարանից ստացվեց նոր կոնստրուկցիայի 36 վագոն /տաս օր հետո ստացվեց ևս 9-ը/, Խարկովից և Մոսկվայից եկան գնացքների առաջին ամիսներին շահագործումն ապահովող մի մեծ խումբ վագոնավարներ:

Երբ 1981թ. մետրոպոլիտենը պետք է գործարկվեր, էլեկտրական

հավաքակայանը դեռ պատրաստ չէր և հնարավոր չէր իրականացնել գնացքների նույթը, քանզի ըստ նախագծի հավաքակայանի Շյուլը պետք է միանար «Շենգավիթ» կայարանին:

Դամաձայն պետական հանձնաժողովի որոշման, վագոնների վերանորոգումը և տեխնիկական սպասարկումը պետք է կատարվեր Անդրկովկասի Երևանի Երկարգծի բաժանմունքի վագոնների դեպոյում, սակայն դա դժվարություն էր առաջացնում, քանի որ մետրոպոլիտենի վագոններն անհրաժեշտ կլիներ տեղափոխել երկարուղային գծերով։ Այդ իսկ պատճառով որոշվեց վագոնների փորձարկման, կարգավորման, վերանորոգման համար «Սասունցի Շավիթ» կայարանում կառուցել ժամանակավոր շինություն, որտեղ ծանր և չհարմարեցված պայմաններում, շուրջ հինգ տարի /1986թ./, վարպետ Լեռնիդ Ֆերոսեկը /Մոսկվայի մետրոպոլիտենից/, փականագործներ Սամվել Անտոնյանը, Քերոր Մնացականյանը և ուրիշներ կատարում էին վերոհիշյալ աշխատանքները սկսած 1980թ. սեպտեմբերից։ 1980թ. հոկտեմբերին այս տեղ կատարվեցին մետրոպոլիտենի առաջին գնացքների փորձարկումները և կարգավորումը։ Առաջին մեքենավար-հրահանգիչն էր Ռաֆայել Քրիստոփորի Գեյվանդովը։

Մետրոպոլիտենի վարչությունում մինչև մետրոյի շահագործումն ամենօրյա հետևողական աշխատանք տարվեց բաժինների և ծառայությունների կազմակորնան ուղղությամբ։

Կարգանքի տուրք նատուցենք Երևանի մետրոպոլիտենի կարևորագույն ծառայությունների և երթևեկության ծառայությունների հիմնադիրներին, երթևեկության ծառայության դեկավար Բարկեն Պողոսյանին /ապահովում է գնացքների երթևեկության կազմակերպումը, ուղևորների ընդունումը, կուլտուրական սպասարկումը և կայարանների սանհիտարական մաքրությունը/, շարժակազմի ծառայության դեկավար Մերուժան Շահնազարյանին /ապահովում է մետրոպոլիտենի գնացքների տեխնիկական սպասարկումը, ուղևորների տեղափոխումը/, գծերի և բունենքների ծառայության դեկավար Զուրաբ Ունչյանին /սպասարկում է Վերգետնյա և ստորգետնյա ուղիները, ստուգում գծերի վիճակը, վերանորոգում, տալիս է աշխատանքը սկսելու թույլտվություն/, ազդանշանների և կապի ծառայությունների դեկավար Արմենակ Զորյանին /ապահովում է ազդանշանային սարքավորումների աշխա-

տանքը, գնացքային ռադիոկապը, հեռախոսակապը/, էլեկտրաենթակայանների և ցանցերի ծառայության դեկավար Կալերի Դանդուրովին /ապահովում է մետրոպոլիտենի կայարանների և ստորաբաժանումների լուսավորությունը/, էլեկտրամեխանիկական ծառայության դեկավար Լեռնիդ Սավչենկոյին /ապահովում է շարժասանդուղքների աշխատանքը, վերանորոգումը, պոմպերի նորոգումը/, որոնք քայլանդրորեն վերաբերվելով կադրերի ծիշտ ընտրության հարցին, իրենց ուժը և եռանդը չխնայեցին ծառայության աշխատողների պատասխանատվությունը քարծրացնելու, անհրաժեշտ կարգ ու կանոնն ապահովելու ուղղությամբ։ Նրանց կողմից ամուր հիմքի ստեղծման շնորհիվ Երևանի մետրոպոլիտենը հետագայում դասվեց, ոչ միայն նախկին Խորհրդային Միության, այլև նրա սահմաններից էլ դուրս, մետրոպոլիտենների ընտանիքում ամենառաջազարդ և օրինակելի կազմակերպությունների շարքը։

1981թ. փետրվարի 24-ին պետական հանձնաժողովի ԽՍՀՄ ճանապարհային հաղորդակցության նախարարի առաջին տեղակալ Վ.Ս.Պախոնովի գլխավորությամբ ստորագրվեց Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի ընդունանական ակտը։ Նրանուն Երևանի մետրոպոլիտենի Միության մեջ 8-րդի շինարարությանը տրվեց «գերազանց» գնահատական։

## ՈՐՊԵՍ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԱՆԴԱՍ

1980թ. գարունն էր։ Դեռ նոր էի մտել աշխատասենյակ, երբ հեռախոսի գանգը հնչեց։ Վերցրեցի հեռախոսավորողը։ Երքաղկոնի արյունաբերության և շինարարության գծով նոր ընտրված քարտուղարն էր Ալբերտ Դանիելյանը։ Իրեն հատուկ համեստությամբ, իրավիրեց իր մոտ, նշելով որ եթե հնարավոր է անմիջապես։

Ալբերտ Դանիելյանին գիտեի վաղուց։ Երքաղկոնը իմ աշխատած տարիներին նա Ավտոպահեստամատերի գործարանի գլխավոր տեխնոլոգն էր, այնուհետև գլխավոր ինժեները և, որպես գրագետ ինժեներ-մեխանիկ, քաղաքի արդյունաբերողների մոտ մեծ հեղինակություն էր վայելու։ Պատահական չէր, որ արտադրության խոշոր գիտակ, Երևանի ավտոգործարանի տնօրեն Ս.Ավանյանին «Դայգյուլտեխնիկա-

յի» կառավարիչի պաշտոնին նշանակելուց հետո, վերակառուցվող մեծ ապագա խոստացող պատողործարանի տնօրին նշանակվեց Ալբերտ Դանիելյանը, որը երեք տարի աշխատելուց հետո ընտրվեց Երքաղկոմի քարտուղար: Բարձրահասակ, սիրունատես, կիրթ և բավականին համեստ բնափորության տեր քարտուղարից սպասելի էր անձանք զանգահարել շրջկոմի բաժնի վարիչին:

Բայց ինչու՞ էր կանչում, մինչ այդ ոչ մի անգամ անձանք հեռախոսվ չեր զանգահարել:

Ալբերտ Դանիելյանի քարտուղարութին տեղեկացրեց, որ նա մենակ է և ինձ է սպասում: Ինչպես հատուկ էր իրեն, բարեհամրույր ժախտով դիմավորեց, որպիստեղուն հարցրեց և հետո անմիջապես անցավ բուն խնդրին: Ենթուվ մետրոպոլիտենի շինարարության աշխատանքների մեջ ծավալից և դժվարություններից որոշվել էր ստեղծել ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի ժամանակավոր շտաբ մետրոյի շինարարության աշխատանքները հսկելու և օգնություն կազմակերպելու համար: Նպատակն էր մայրաքաղաքի, հանրապետության աշխատավորության ուժերը մորիլիզացնել և ուղղել շինարարության օգնելու գործին: 1980թ. հունվարից այդ պարտականությունը դրվել է Երքաղկոմի առաջին քարտուղարի Լենինի Ներսեսի Ներսեսյանի վրա /շտաբի պետն էր ՀՍՍՀ Նախարարների խորհրդի, շինարարության գծով նախագահի տեղակալ Յանուար Արամի Դայրապետյանը/: Լ. Ներսեսյանը իր մոտ էր հրավիրել Երևանի կուսակցության շրջկոմների առաջին քարտուղարներին ու գործկոմների նախագահներին և տեղեկացրել, որ շտաբի որոշմամբ, մետրոյի հինգ կայարաններում լինելու են շտաբի ներկայացուցիչներ, կուսակցական և պետական պատասխանատու աշխատողներ, որոնք ժամանակավորապես թողնելով իրենց հիմնական աշխատանքը, մինչև մետրոյի շինարարության առաջին հերթի առաջին հատվածի ավարտը լինելու են միայն իրենց հանձնարարված տեղանակատում: Որպես շտաբի ներկայացուցիչներ, նրանք ոչ միայն օգնելու են շինարարական կազմակերպություններին, գրադարձու են շտաբի հանձնարարությունների անվերապահորեն կատարման հարցերով, այլ նաև հետևելու են շինարարության ընթացքին, և գործերի վիճակին, անհրաժեշտության դեպքում գեկուցելու են շաբաթ մեկ կայացող շտաբի նիստում, այլև կոորդինացնելու են տարբեր շի-

նարարական կազմակերպությունների աշխատանքները՝ լինելով տվյալ տեղամասի առաջին պատասխանատուն և ղեկավարը: Նա ասաց նաև, որ որոշվել է «Բարեկամություն» տեղամասի շտաբի ներկայացուցիչ և շինարարական աշխատանքների պատասխանատու նշանակել Շահումյանի շրջգործկոմի նախագահի տեղակալ Վլադիմիր Ղազարյանին, «Մարշալ Բաղրամյան» տեղամասում՝ ՀԿԿ Երքաղկոմի շինարարության և քաղաքային տնտեսության բաժնի հրահանգիչ Եղուարդ Կարապետյանին, «Հանրապետության հրապարակ» տեղամասում՝ Երքաղյորհի գործկոմի կապիտալ շինարարության վարչության բաժնի վարիչ Հովհաննես Գրիգորյանին, «Սասունցի Դավիթ» տեղամասում՝ Օրջոնիկիձեի շրջգործկոմի նախագահի տեղակալ Շուրա Յարությունյանին: Քետո ավելացրեց «Երիտասարդականի» տեղամասի շինարարական աշխատանքների պատասխանատուն կլինի Ռուդիկ Գևորգյանը:

Պա ինձ համար անսպասելի էր: Որքան էլ գրադարձ էի մետրոյի շինարարությամբ, բայց ես մետոյի մասնագետ չեմ: Լինելով ինժեներ-մեխանիկ, անգամ սովորական շինարարությամբ գրադարձ մտքովս չեր անցել, իսկ այժմ առաջարկում են, ավելի ծիշտ որոշել են, և ես պետք է համաձայնեմ, դրվածքն այդպես էր կուսակցությունը հանձնարարում է: Մտաբերեցի, թե ինչպես երեք տարի առաջ, մայրաքաղաքում տրանսպորտային սպասարկման տալունային համակարգի անցնելու աշխատանքները բարելավելու նպատակով, մարդատար տրանսպորտային ծեռնարկություններին գործնական օգնության ցույց տալու համար, Երևանի յուրաքանչյուր պարկ ժամանակավոր աշխատանքի ուղարկեցին տրանսպորտի նախարարի տեղակալներին, «Հայուղնորտանս» տրեստի կառավարիչին՝ գործկոմների նախագահների տեղակալների հետ միասին, որոնք մոտ երեք ամիս, օրական ոչ պակաս քան 15 ժամ եղան ծեռնարկություններում: Ինձ էլ ուղարկել էին նորքի զանգվածում գտնվող ավտոպարկը: Կատարված տեղաշարժերի, ծեռնարկած միջոցառումների մասին հանգանակալից խոսվեց քաղաքի տրանսպորտային ծեռնարկությունների ակտիվի ժողովում: Սակայն մետրոն ավտոներնարկություն չեր, այլ շինարարական բարդ ու պատասխանատու կազմակերպություն էր, իր հետաքրքրությունների հետ մեկտեղ յուրօրինակ մոտեցումներ պահանջող, որից բարացիրեն ան-

տեղյակ էի: Կարծես կարդաց մտքերս, հասկացավ մտավախությունս, ժպտալով ասաց. «Գիտեմ, որ շինարար չես, ինժեներ-մեխանիկ ես, տրանսպորտմիկի բուն մասնագիտությունից հեռու կանգնած մարդ ես, սակայն տեղեկացրին, որ աշխատել ես մարդատար N 4 ծեռնարկությունում երկու ամսից ավելի, հանրապետության տրանսպորտի նախարարի տեղակալ Սամվել Բաղդասարյանի հետ: Եվ հենց այդ հաշվի առնելով Լեռնիդ Ներսեսիչն հանձնարարեց «առաջինը գրել Ռուդիկի ազգանունը ամենահետ մնացող «Ուսանողական» տեղամասում աշխատելու համար»: Այնուհետև ավելացրեց, որ շոջկոմի առաջին քարտուղարները տեղյակ են, անհրաժեշտության դեպքում շտարի ներկայացուցիչները կարող են անձանք դիմել շրջանի ցանկացած հիմնարկենարկությունների դեկավարներին բանվորական ուժով, որակյալ մասնագետներով և տեխնիկական այլ հարցերով օգնության համար:

Ամեն ինչ պարզ էր:

Անմիջապես վերադարձա շրջան:

Ինչպես սպասում էի, կուսշրջկոմի առաջին քարտուղար Պավել Սաֆյանը պատրաստակամություն հայտնեց անհրաժեշտության դեպքում շրջանի կոլեկտիվների ուժերը մորիլիզացնելու ճանապարհով օգնել բոլոր հարցերով: Իհարկե շրջանի հոգսով, խնդիրներով տարված, շոջոմի առաջին քարտուղարը աշխատում էր անսպառ եռանդով ու սրտացավորեն և նրան «խանգարելո» ճիշտ չէր լինի, նա շատ անելիքներ ուներ... աշխատեցի նրան չանհանգստացնել: Պետք է տեղյակ պահեի նաև կնոջս: Որպես 7-րդ տասնամյակս «Եզրափակող» մարդ, ցանկանում եմ ասել հետևյալը: Ընթերցողներից շատերը երիտասարդ կլինեն, աղջիկ, թե տղա, թեկուզ մի քանի նախադասությամբ ուզում եմ մեջ բերել կնոջս հետ խոսակցությունը, որպեսզի ընթերցողը /հատկապես աղջիկները/ հետևություններ անեն իրենց հետագա կյանքի համար: Առաջ անցնելով ասեմ, որ մեկ անգամ ևս համոզվեցի, որ տղամարդու քախտը հետևաբար ընտանիքում, շրջապատում իրեն ճիշտ դրսնորելը, նույնիսկ նրա առաջնթացը /խոսքը վերաբերում է ազնիվ և արժանապատիվ կեցվածքի դրսնորմանը/ շատ ու շատ հարցերում պայմանավորված է կնոջ խելացի, խելամիտ մոտեցումով:

Կինս լսելով երքաղկոմի քարտուղարի հետ տեղի ունեցած խոսակցության մասին, ուրախությամբ բացականչեց, ասելով՝ դա նշանակում

է, որ քո աշխատանքը գնահատում են և ինքն ամեն ինչ կանի ինձ օգնելու համար, եթե նույնիսկ ծանրաբեռնվածության պատճառով երթեմն տուն էլ չգնամ: Այսքանը բավական էր, որպեսզի ես լիցքավորվեի և պատրաստական ու անմնացորդ նվիրումով ամսներ շարունակ գրադպեի մետրոյի շինարարությամբ: Իսկ այդ ժամանակ տղաս եղիշեն ընդամենը վեց տարեկան էր, իսկ աղջիկս լիանան, դեռ նոր էր դարձել երկու տարեկան:

...Մենք բազմիցս եղել ենք մետրոյի շինարարությունում, այնտեղ աշխատանքի անցնելն, ավելին, գործի բոլոր մանրամասնություններին տեղյակ լինելը և շտարի նիստին հարցերին պատասխանելը, այն էլ, խիստ պահանջկոտ շտարի պետին Լեռնիդ Ներսիսյանին, ոյուրին չեր: Բացի այդ 344 Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Ղեմիրյանը, հաճախ գալիս էր մետրո, շտարի անդամների հետ, զրուցում գործերի վիճակի մասին, տեղեկանում ամեն-ինչի մասին և հանձնարարություններ էր տալիս ոչ միայն շտարի դեկավարությանը, այլև իր սովորության համաձայն, մեզ էլ էր հանձնարարություններ տալիս: Սակայն ամենակարևոր այն էր, որ մատակարարման հետ կապված, ինչպես նաև մասնագետներով և բանվորական կարգերով պահովվելու հարցերը անմիջապես լուծում էր իր կամ միութենական դեկավարների միջոցով:

Երբեք չեմ մոռանա, որպես արդեն մետրոշինարարի ընտանիքի անդամի, «Երիտասարդական» տեղամասի ստորգետնյա կայարանում կարեն Սերոբիչի հետ իմ առաջին հանդիպումը: Ինքնին ստեղծվեց իրավիճակ, շտարի անդամներից առանձնացանք և սկսեցինք գրուցել: Այդ խիստ, բայց ինձ համար շատ սիրելի և արդեն հանրահայտ դեկավարը «Ռուդիկ ջան ...» բառերով, դիմելով ինձ իր յուրահատուկ ժպիտով սկսեց, հետո այնպիսի ջերմ խոսակցություն տարավ, կարծես նպատակ ուներ ինձ ոգևորել, մինչ աշխատանքների ավարտը «չլիցքարափկելու» համար ...

Մետրոշինարարությունում հետագայում ականատես եղա Կարեն Ղեմիրյանի կողմից մարդկանց ուշադիր ունկնդրելու, նրանց ուղղություն տալու, լավ աշխատանքների համար պարարտ հող ստեղծելու, խրախուսելու բազմաթիվ դեպքերի ...

Պայմանավորվածության համաձայն, առավոտյան N 160 շինմուտաժային վարչության պետ ժորժ Ավանեսյանի հետ եղանք «Երիտա-

սարդական» կայարանի տեղամասում, որը գտնվում էր Արովյան և Տերյան փողոցների միջև ընկած հատվածում բնակելի շենքերի բակում: Ուղղահայաց հորանը, որը տեղամասը «անուցող» հիմնական մուտքն էր, տեղափորձած էր Արովյան փողոցի վրա գտնվող /Մոսկովյան փողոցի հարևանությամբ/ «Ուրենի» խանութի շենքի բակում: Որ կողմը նայում էինք, շինանյութեր էին, հերթափոխության շտապող կամ հերթափոխն ավարտած շինարարների մեջ հոսք էր: Ժորժ Բագրատիչը տեղեկացրեց, որ անկախ վերջին երկու տարիների ծեռնարկած կոնկրետ միջոցառումներից, տեղամասի երկրաբանական բարդությունների պատճառով դեռևս հնարավոր է հաղթահարել դժվարությունները և մյուս տեղամասերի համենատ այստեղ աշխատանքները հետ են 2-ից 2.5 անգամ: Ընթերցողին ծանոթ Կարեն Աղամյանն արդեն բավականին աշխատանքի փորձ էր ծեռք բերել, երկու տարի աշխատել էր այստեղ որպես տեղամասի պետ և քանի որ տեխնիկական հարցերին գործնական ընթացք տայլու անհրաժեշտությունը զգացվել էր, արդեն որպես շինվազրության գլխավոր ինժեներ, «Դայրութելշին» վարչության դեկավարությունը որոշել էր նրան քողնել այս տեղամասում միաժամանակ, ելեկով անհրաժեշտությունից, զբաղվելու էր մյուս տեղամասերի տեխնիկական հարցերով: Վարչության պետը մեծ ոգևորությամբ էր պատմում Երիտասարդ գլխավոր ինժեների միանգամայն ճիշտ ընտրության մասին: Իրոք, Երիտասարդությանը հարգող և աճեցնող դեկավարը միշտ բարի է լինում:

Ճիշտեցի ժորժ Ավանեսյանի հետ մեր առաջին հանդիպումը: Ցանկանում են ընթերցողին հակիրծ ներկայացնել նրա անցած ուղին, մի մարդու, որը դեկավարելով Երևանի մետրոն կառուցող շինվազրությունն իրավամբ իր աշխատանքով նվաճեց Երևանյան մետրոպոլիտենի «համար առաջին» շինարարի փառավոր անունը: Դայրը լեռնագործ էր, և նա շարունակել էր հոր գործը: Նետո Կավարտ բանավանից Ավանեսյանը տեղափոխվել էր շրջենտրոն և 16 տարեկանից, 40 տարի անընդմեջ /շիազված այն մեկ և կես տարին, որ աշխատել էր որպես Դրագդանի ցեմենտի գործարանի տնօրին շահագործման սկզբում/ իր կյանքը կապել հանքերի, ստորգետնյա կառույցների հետ: Երեք տարի Դափանի պյոնի հանքերում որպես խառատի աշակերտ աշխատելուց հետո, տեղափոխվել է Կրիվոյ Ռոգ, որ ինստիտուտում սովորելուն գուգըն-

թաց պշխատել է հանքում: Ինստիտուտն ավարտելուց հետո արդեն որպես նոր շրջանավարտի, հանքերից մեկում ինժեներ-մեխանիկ աշխատելու ժամանակ, ուժեղ վքարից ծանր վիրավորվում է, բժիշկները կարողանում են ժ.Ավանեսյանի կյանքը փրկել. նա զրկվում է ոտքի մատներից: Ժորժ Բագրատիչին, որպես փորձված ինժեների, 1958թ. նշանակում են Կրիվոյ Ռոգի հանքի հարստացնող ֆաբրիկայի տնօրին: Դա լեռնային ինժեներին հրավիրում են Դայաստան, մեր հանրապետությունում աղի հանքի բացման առիթով և այդ օրվանից սկսած ողջ կյանքի ընթացքում անմնացորդ նվիրվեց հանրապետության թունելների կառուցման գործին: Դայաստանում չկա մի շինություն /Պուշկինի լեռնանցք, Երևանի աղի հանք, Մեղրաձորից դեպի Մարգարահովիտ գնացող թունելներ և այլն/, ուր իր լուսան ներդրած չլիներ: Բոլոր տեղերում լինելով որպես պատասխանառու աշխատող, շինարարության վարչության պետի տեղակալ թե պետ, իրեն դրսւորել է որպես փորձված և հմուտ կազմակերպիչ, խելացի ինժեներ: Նա ոչ միայն փայլուն «գերազանց» գնահատակներով դպրոցը, ինստիտուտն էր ավարտել, այլև որպես ինժեներ, յուրաքանչյուր քայլափոխում տեսանելի էր նրա գերազանց հիշողությունն ու ունակությունները: Զարմանալի հիշողության տերը բացարձակորեն ոչինչ չեր մոռանում և երբեմն անճիշտապես մտքում հաշվում էր շինարարությանը վերաբերվող բարդ խնդիրներ, ապշեցնելով շրջապատին: Եվ պատահական չէր, որ նրա մականունը դրել էին «Ժորժ Դաշվիչ»: Կիհշեր՝ որ օրը ով և ինչպիսի աշխատանքներ է կատարել և նոյնիսկ, որ ժամին: Այս բոլորի հետ, չնայած չափից ավելի խստապահանջ էր, ընկերական էր և մարդկային անկեղծ փոխարքությունների մեջ մտնելը, յուրաքանչյուրի համար նրան դարձրել էր սիրելի, ճիշտ կլինի ասել պաշտելի: Այսպիսի մարդիկ քիչ են լինում: Եվ ես ուրախ եմ, որ շուրջ մեկ տարի, բախտ ունեցա պետի մոտիկից շփելու ժորժ Ավանեսյանի հետ, դաշնալ մոտիկ ընկերներ:

... Գործերին մակերեսային ծանրթանալուց հետո, առկա վիճակը ճիշտ պատկերացնելու նպատակով, եղանք նաև մյուս տեղամասերում: «Բարեկամություն» և «Մարշալ Բաղրամյան» տեղամասերի հետ համեմատության եզրեր գտնել չեն կարելի, ստորգետնյա, հատկապես կառամատույցների շինարարության դժվար օպերացիաները կարծես թե ամբողջությամբ ավարտվել էին, սկսվել էին սալահատակման աշխա-

տանքները: Մեր տեղամասից դեպի «Հանրապետության հրապարակի» տեղամաս ձգվող երկու շարքով 800-ական մետր երկարություն ունեցող թունելներով լրիվ ավարտվել էին հրատանան, ամրականակի տեղադրման աշխատանքները, և թունելի պատերի ամրացնան նպատակով ցեմենտ էին ներարկում նրանց մեջ, աշխատանքներ էին տարվում կայարանի, կառամատույցի և մյուս օբյեկտների շինարարության ուղղությամբ: Արդեն որպես «Երիտասարդական» տեղամասի աշխատանքներով զրադարձ աչքերով նայելով աշխատանքներին, բոլորովին այլ պատկեր տեսա: Երբեք չէ սպասում, որ մեր հատվածում, մյուսների համեմատ, աշխատանքներն այդքան շատ հետ են: Ժորժ Բագրատիչը տեղամասի «այուների» հետ ծանոթացրեց, մարդիկ, որոնց անունը մետրոշինարարների մոտ մեծ հեղինակություն էին վայելում: Դատագայում անձամբ համոզվեցի, որ, իրոք, նրանք մեծ եղանակ էին ստեղծում գործերի ողջ ընթացքում: Հատկապես հիշողությանս մեջ թարմ մնաց ամրանագործների բրիգադավար Զուրաբ Բառնալյանի, երեսպատող Լյուտովիդ Սոխոյանի, հրատողներ Միքայել Գրիգորյանի և Կալեն Նազարյանի օրինակելի աշխատանքը: Ցանկանում եմ կանգ առնել հրատողների բրիգադի բրիգադավար Մարտին Ավետիսյանի աշխատանքային գործունեության վրա, որն իր ընկերների նկատմամբ սրտացակ վերաբերմունքով առաջին իսկ հանդիպումից հիացմունք և քարի հետք թողեց հիշողությանս մեջ:

Գալով մեր տեղամաս նկատեցինք, որ բանվորները կառամատույցի պայթեցման աշխատանքները նոր էին վերջացրել, և նրանց պետք է փոխարիներ Մարտին Ավետիսյանի բրիգադը:

Թունելներում պայթեցման աշխատանքներն ավարտելուց հետո անմիջապես գործի էին դրվում օդափոխիչ հղոր սարքերը: Օդը մաքրվելուց և պայթեցվող հատվածն ստորգելուց հետո միայն բույլատրվում էր աշխատանքները վերսկսել: Ահա թե ինչո՞ւ բրիգադիր Մարտինն իր ընկերների Ռազմիկ Հայրապետյանի, Յուրա Հակոբյանի, Արամայիս Մանուչարյանի, Սերգեյ Հակոբյանի հետ շտապում էին, որպեսզի պայթեցումից հետո արագորեն մաքրեն բունելախորշը, որը լցված էր ժայռաբեկորներով և հողաշերտերով: Պայթեցումից քանդված ապառները շարժաերսկավատորով լցուցին վագոնների մեջ: Մարտինի մասին շատ էի լսել, բայց շատ թիւ առիթներ էին եղել իրար հետ խոսելու:

Ժորժ Բագրատիչը նրա մասին իմ հարցին պատասխանեց, որ նա Դոկտորներությանի շրջանի Գետաշեն գյուղից է: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Տաթկի ՀԵԿ –ում, որտեղ և ծեռք է բերել հարուստ փորձ: Եթու հրավիրվել է Երևան մետրոյի շինարարությունում աշխատելու: Ավելացրեց ասելով, որ հրատառող բրիգադիրներից Մարտինի բրիգադը ամենաառաջավորներից է, ամենավտանգավոր և կարևոր հատվածներում չի թողնում, որ բրիգադի անդամներից մեկը մոտենա տեղամասին, ամբողջ ծանրությունը վերցնում է իր վրա: Մարդասիրության, լավ ընկեր լինելու հատկությունների շնորհիվ մետրոշինարարները նրան շատ են սիրում: Եվ հոգոց հանելով շարունակեց, որ մեքենա վարելիս ոչ իր մեղքով վճարել է ուղևորին: Դատարանը Մարտինին մեղավոր համարելով, տվել է ամենաքույլ պատիժը մեկ տարի հարկադիր: Կուսակցական կազմակերպությունը քննելով հարցը, հաշվի առնելով նրա բարեխիճը աշխատանքը և կուսակցության նկատմամբ նրա մեծ նվիրվածությունը, հայտարարել է նկատողություն և խնդրել շրջկոնին հաստատել ժողովի որոշումը: Սակայն կուսակցության քարացած օրենքների հետևանքով շրջկոնը վտարել է նրան կուսակցությունից: Նոյնիսկ հարկադիրով դատապարտվածները իրավունք չունեին մնալու կուսակցության շարքերում: Բազմաթիվ խնդրանքները, բողոքները չեն ընդունվել ոչ Երևանում, ոչ էլ Մոսկվայում: Առաջ անցնելով՝ ասեմ, որ հետագայում, շուրջ մեկ տարի իրար հետ աշխատելով զգացի, որ իրոք անգուգական մարդ է, սիրելի բոլորի կողմից իր անկեղծ վերաբերմունքի, մարդկանց անմնացորդ նվիրությանորինիվ: Կարողացա խոսիս տերը լինել, դիմելով Երքաղկոմի, Կենտկոմի համապատասխան ընկերներին ներկայացրի Մարտին Ավետիսյանին, ինչպես որ կար, ինչպես իր եռթյունն էր: Վերջապես տրվեց համաձայնություն նոր հիմունքներով կուսակցության շարքերն ընդունվելու: Դա չարիքի փոքրագույնն էր: Այսպիսի կոմունիստ շարթային բանվորների շատ հանդիպեցի: Իրոք, երջանկություն էր Մարտինի նման անկեղծ մարդկանց հետ շփվելը:

Ժորժ Ավանեսյանի գնալուց հետո նկատեցի, թե ինչպիսի արագությամբ յուրաքանչյուրն իր գործն էր անում, աշխատելով մտածված, չափած ու ծևած: Ստորգետնյա կայարանում հանգիստ կանգնել չէիր կարող: Մարդկանց անընդհատ շարժը, շինանյութերի տեղափոխությը

մերենաների /խոսքը վերաբերում է տարբեր օպերացիաների համար նախատեսված փոքր մերենայացմանը/՝շարժը, բացի հիմնական բանվորներից, տարբեր կազմակերպություններից օգնող ուժի առկայությունը և նրանց կողմից աշխատանքի ռիթմին համապատասխան շարժումները, գործողությունների արագ կատարումը նմանում էր սրվակի մեջ եռացող ջրի մոլեկուլների շարժումներին, որոնք ուսանող ժամանակ տեսել էի խոշորացույցով քիմիական լաբորատորիայում։ Դրանց էլ գումարած բանվորի տագնապալի ճայնը։ «Ծուտ արեք, պոմադեն աշխատացրեք, ջրի մակերեսը բարձրանում է, այլև հնարավոր չէ շարունակել զողման աշխատանքները», կամ «Արագացրեք, բենտամիտը վերջանում է, մեխանիզմը պարապուրտ է տալու» և այլն, և այլն։ Մարդ կարող էր այս պայմաններուն իրեն կորցնել։ Եվ իրոք, ես ինձ կորցրի։ Եվ կազմակերպական, և տեխնիկական բոլոր հարցերով բանվորները դիմում էին Կարեն Աղամյանին, որը խիստ գրաղված էր, նրան խանգարել չէր կարելի, ուրիշներին էլ դիմել, որևէ բանի մասին տեղյակ լինելու «ա»-ն ու «բ»-ն սովորելու, իետո աստիճանաբար կուրսի մեջ մտնելու համար, անհարմար էր։ Արաջին մի քանի օրն անհմաստ ման էի գալիս, մոտենում կոնկրետ գործով գրաղվողներին, երբեմն գրույցի բռնվում, հարցեր տալիս պարզում եղելությունը։ Ընթերցողը թող ինձ լավ հասկանա, ամոք չէ չիմանալու դեպքում մարդկանցից հարցնելը, սակայն արտադրության, շինարարության մեջ երբեմն անզգույշ մոտեցումը, միամիտ հարցադրումները կարող են ծաղրանքի, անեկդոտի առարկա դառնալ։

Հիշում եմ, 1978թ. «Գարուն» ամսագրում գրված էր /այդ մասին հակիրծ կասվի հետո/, որ արծակագիրը որպես «ծպտյալ» հորատող բանվոր աշխատանքի է ընդունվում այս տեղամասում։ Արաջին օրը որպեսի «փորձության» ճանապարհն անցնի, մշտական աշխատող բանվորները դույլը նրա ծեղզն են տալիս և ասում «գնա Կիլյան» տեղամաս, Շովակիմյան Լեռնիդին գտիր, ասա՝ տղաները մի դույլ լատոկ են ուզում....»։ Լսելով հորատող բրիգադի անդամնին, հարյուրավոր մետրեր կտրելով հասնում է տեղ։ Պարզվում է կատակը. այդ «մի դույլ լատոկ» ոչ այլ ինչ է, եթե ոչ մի տոննանոց բետոնե սալ։ Նման «փորձության» բարեբախտաբար չենթարկվեցի։ Փառք Աստծո, ամեն ինչ հարք անցավ ...

Նեղ մասնագիտությունների առանձնահատուկ գաղտնիքներին

նույնիսկ մակերեսորեն ծանոթանալու համար օրեր էին պետք։ Սակայն ոչ մասնագետին անմիջապես պարզ է դառնում, որ մետրոպոլիտենի շինարարության աշխատանքների հիմնական զարկերակը մեխանիկական և էլեկտրական ծառայությունների աշխատողների ծեղզում է։ Առանց նրանց չեն վառվի խավարը ցորդ էլեկտրալամպերը, չեն աշխատի մերենասարքավորումներն ու հորատող մոլորդերը, երկրի մակերես չեն մղվի ստորգետնյա ջրերը, որը հատկապես առատ էր այստեղ և եթե փոքր ինչ հապաղեն, հորատողների փորած թունելները կլցվեն ջրով, առաջանցումն ու վահանակների ամրապնումն անհնար կլինի։

Տեղանասում առաջիններից մեկը, որի հետ ծանոթացա մեխանիկական ծառայությունների ղեկավար, փորձված մեխանիկ Ուուբեն Մկրտչյանն էր։ Ինչ խոսք, մասնագիտությանը լավ տիրապետելու, աշխատանքի հաջողության հիմնական գործոնն է։ Իետագայում նկատեցի, որ Ուուբենն իր գործի հսկական գիտակ է բարիս բուն իմաստով, անմիջապես ծայնից, մեխանիզմը դեռ ամբողջությամբ չքանդած բրիգադի անդամներին կտար «դեղատոմսը», արագ կասեր ինչ անել ու կանցներ մեկ այլ կարևոր գործի։ Մետրոշինարարության այս բարդ ժխորի մեջ նկատվեց, որ գործի հաջողության համար թիւ նշանակության չունի նաև համբերատարությունը, սառը դատողությունը, վճռական խոսքը։ Բարձրահասակ, նիհար, լուրջ դեմքով, հանգիստ քայլվածքով Ուուբեն Մկրտչյանին մեկ կտեսնեի հորատողների մոտ, մեկ էլ, կարծես թե վայրկյան հետո բետոն ներարկողների մոտ։ Նա այս ետ մնացող տեղամասում հայտնագործություն էր և թող չափազանցություն չքվա, մեծ է նրա ներդրած լուման տեղամասի աշխատանքների արագացման գործում։ Այդ կարծիքի էին ընկերները։

Այստեղ ցայտուն նկատվեց, որ գործի հաջողությունը պայմանավորված է նաև մեխանիկական և էլեկտրական ծառայությունների անընդհատ և հրատապ փոխգործողությամբ։ Տեղանասի էլեկտրիկների ղեկավարն էր Ավետիք Գրիգորյանը, որը կարծես Ուուբեն Մկրտչյանի հակապատկերը լիներ։ Սակայն դա արտաքրուստ էր։ Ավելի քչախոս էր, սակայն անմիջապես նկատվում էր նրա անհանգիստ բնավորությունը, սրտացավ վերաբերմունքը։ Նրան երբեք մենակ չէիր տեսնի, միշտ կտեսնեիր աշխատանքնային ընկերների հետ էլեկտրական խափանման վայրում։ Ասում էին, որ առանց նրա գործը տեղից չի շարժվի։ Գու-

ցե դա էր պատճառը, որ ամիսների ընթացքում ինձ պարզ չեղավ, թե նա ո՞ր հերթափոխում է տվյալ օրն աշխատում: Անհանգիստ բնավորության տեր Ավետիք Գրիգորյանը բոլոր հերթափոխներին թեկուց մեկ ժամով, որպես պարտադիր օրենք, լինում էր տեղամասում:

Ինացա, որ հաշվի առնելով տեղամասի աշխատանքնային ծանր վիճակը և էլեկտրական ծառայությունների օպերատիվ գործողությունների անհրաժեշտությունը, հրահանգավորված է, որ տեղամասում աշխատանքային ժամերից հետո հաճախակի լինի շինվարչության գլխավոր էներգետիկը: Ինչ հետաքրքիր գուգադիպություն, գլխավոր էներգետիկը ներուս Ֆեղայի Պոլիկինիացետառում աշխատած տարիների գործընկեր էր և իմ սիրելի Գուրգեն Սարգսյանի /տեխնոլոգիական սարքավորությունների գործարանի տնօրենի տեղակալ/ կրտսեր որդին: Ինչպես ջրի երկու կարիլ, նաև էր հորը աշխատաեր, սրտացակ Ֆելիքս Սարգսյանը, իր բարեխիղ աշխատանքով յուրօրինակ փայլ էր տալիս շրջապատին:

Առաջին իսկ օրից կարողացա արդյունավետ գործ կատարել, որն ինչ խոսք օգնության ծառացած հարցի արագ կարգավորմանը և մեջու էլ հավատ առաջացավ, որ սկզբու չեմ լինի շրջապատում: Եվ ահա թե ինչպես:

Կարծես դիտավորյալ, ջրահեռացման պոմպերը մեկը մյուսի հետևի խափանվեցին: Տագնապ առաջացավ բոլորի մեջ: Նշանակում էր ոչ միայն դադարեցվելու էն շատ օպերացիաների հրականացումը, այլև կատարված աշխատանքներից շատերն աստիճանաբար մնալու էն ջրի տակ իր բոլոր բացասական հետևանքներով: Մի առիթով առնչվել էի ՀՍՍՀ ներքին գործերի նախարարության հակարդեհային պաշտպանության վարչության պետ գնդապետ Փայլակ Յարությունի Յակորյանի հետ և անմիջապես կրահեցի, որ միակ փրկությունը նրան դիմել է, նրանից օգնություն խնդրելը: 10 րոպե հետո Փայլակ Յարությունովիշը տեղամասում էր հակարդեհային երկու ծառայության մեջնաների հետ, և 10 րոպե և շուրջ 30 մետր խորությունից ջուրը հրշեց մեքնաների կոմպրեսորների միջոցով սկսեց երկոր երես բարձրանալ: Մինչ այս դեպքը, որևէ պոմպի խափանման դեպքում, բավականին ժամանակ էր անցնում վերանորոգելու, ապա այն աշխատեցնելու համար, և տվյալ հատվածի աշխատանքները դադարեցվում էն մինչև պոմպի

վերանորոգումը: Երկու երեք օրվա ընթացքում նկատեցի, որ պոմպերի խափանումը երեմն լինում են օրվա ընթացքում երկու և ավելի անգամ: Երկորորդ քայլը ավելի որոշիչ և վճռորոշ եղավ: Դեպքերից մեկից հետո անմիջապես գնացի Փայլակ Յակորյանի մոտ, պատմեցի հրավիճակը և որպես ամենաջրառատ տեղամասի: Խնդրեցի անհրաժեշտության դեպքում իրենց հետ անմիջական կապ հաստատող ընկերոջ միջոցով մեկ մեքենա մշտապես կցել տեղամասին մինչև պոմպի վերանորոգումը: Լուս և ուշադիր լսելուց հետո նախ որպես ավագ ընկեր խիստ դիտողություն արեց, որ հեռախոսով այդ մասին ասելու փոխարեն տեղամասից կտրվել և եկել եմ իր մոտ և անմիջապես կարգադրեց սահմանել մեկ, եթե զգացվի մոտալուտ վտանգը /երեմն պայքեցումներից հետո ջրի նոր արագ հոսող աղբյուրներ էն հայտնաբերվում/, երկու մեքենաներով անմիջապես ապահովել տեղամասը և ավելացրեց անկախ այն բանից ես տեղում կիմեն թե ոչ: Զգալով իմ և Փայլակ Յարությունիցի ընկերական հայրաբերությունները, երեմն ինձ էն ոխնում այլ տեղամասերին և օգնություն ցույց տալու հարցում: Իհարկե անմիջապես կատարվում էր, սակայն ինձ դիմելու կարիք չկար, կարելի էր դիմել այդ նույն մարդուն, հայրենասեր մարդուն և նա անվերապահորեն կատարեր խնդրանքը: Մարդը պետք է օգնություն խնդրելու ունակություն էլ ունենա, խոսքը վերաբերում է ոչ թե անձնականին, այլ ընդհանուրի շահերին, դա դեկավարի հիմնական հատկություններից մեկը պետք է լինի... Ցանկանում եմ պատմել այդ միտքը հաստատող մի դեպքի մասին:

Արդեն մեկ, երկու ամիս էր, ինչ աշխատում էի, նկատեցի մեր աշխատանքների ամենախանգարիչ հանգամանգներից մեկը: Արարատի ցեմենտի գործարանից ցեմենտի ոչ համաչափ մատակարարումն էր: Մինչդեռ ցեմենտի բացակայության պատճառով սկզբնական օպերացիայի ծախողումը շղթայած անդրադառնում էր հաջորդական մյուս բոլոր գործողությունների վրա: Զգացի, որ ժորժ Ավամեսյանը չի կարողանում հիմնավորապես վերացնել այս բացը: Իհարկե, ահազանգերից հետո ցեմենտը ստացվում էր, սակայն ժամերի կամ մեկ օրվա կորուստ էր լինում: Այդ հարցերի հիմնական պատասխանատվությունը որված էր «Յայրունելչին» վարչության դեկավարության վրա: Դիմեցի նրա օգնությանը: Տեղաշարժը բավարար չէր: Ցեմենտի մատակարարման խափանման դեպքերից մեկի ժամանակ վրդիկված, տեղամասի

պահեստից նոր էի Եկել գրասենյակ, ընկերներից մեկն իմանալով վրդովնունքիս պատճառը, ինձ խորուրդ տվեց. «Իզուր ես այդպես Վրդովվում, անծամբ գնա Արարատի ցեմենտի գործարանի տնօրեն Լևոն Պետրոսյանի մոտ շատ խիստ, բայց բարի ու հասկացող մարդ է: Ներկայացիր, վիճակի մասին պատմիր, անպայման կընդառաջի» և ավելացրեց, որ «Երեմն գործարանն էլ մեղք չի ունենում, հարցեր կան, որ ժամանակին մետրոշինարաների կողմից չեն լուծվում»:

Գործարանի տնօրենի առնձնասենյակում եմ: Ասացի, որ «Երիտասարդականը» մետրոյի ամենահետին տեղամասն է և շինարարության բախտը կախված է իրենցից: Ուշադիր և համբերությամբ լսելով, մի պահ լրությունից հետո շիրակցու շեշտադրությամբ ասաց. «Էղոնց տիրու մերը... արդեն որ տարին է մետրոյի շինարարությունն ընթանում է, «Հայրունելշինի» հետ կապված շատ չլուծված հարցեր կան և մինչև այսօր ոչ մի անգամ այստեղ ոտք չեն դրել, միայն այստեղ, այնտեղ բամարասում են, պատվից ցած են համարում մի անգամ մարդավարի գան, նստեն, հարցերը վերջնականորեն լուծեն ու գնան /խոսքը հիմնականում վերաբերում էր «Հայրունելշինի» ղեկավարությանը Ռ.Գ./: Այտես, ռայկոնի բաժնի վարիչ ես և այս կարևոր հանձնարարությունն էլ դրել են վրադ, վագելով Եկել հասել ես էստեղ, բա ես կարող ե՞մ մերժել: Իմացիր, որ թեզ համար կանաչ ճանապարհ է բացվում, սրանից հետո նեղություն մի քաշիր, հեռախոսով զանգ տուր կամ աշխատանքի տեղը, կամ տուն, ցեմետը անմիջապես կուղարկեն մեքենաներով: Միայն մի պայմանով, որ թեզ տված ցեմենտը չլսեմ, չիմանամ, որ որևէ տեղամասի տվել ես, այլ կերպ այլևս ինձանից ոչինչ չես ստանա, կմոտենամ չոր օրենքով»: Այդես էլ եղավ և ոչ մի անգամ ցեմենտի նեղություն չկրեցինք: Անհրաժեշտ է հիշատակել ցեմենտի գործարանի տնօրենի հետ վերջին հանդիպման մասին ևս: Նոր տարվա նախօրյակին էր, 1980թ. դեկտեմբերի վերջին օրենք էին: Իմացա, որ այլևս ցեմենտ չեն մատակարարելու, մինչև Նոր տարվա համար համապատասխան լիմիտ իջեցնելը նախարարների խորհրդի կողմից /տարօրինակ էր բայց ճիշտ դուրս Եկավ ըստ Երևույթին շինարարների մոտ կային հարցեր, որոնցից ելնելով նրանք խուսափում էին ստեղծված վիճակի մասին տեղեկացնել վերադասին/: Զգացի, որ այլևս զանգ տալով հարց չի լուծվի: Անմիջապես գնացի Լևոն Պետրոսյանի մոտ: Շատ ցերա ընդու-

նեց, լսեց, հետո հիշեցրեց իր կողմից դրած պայմանը և կանչելով մատակարարման բաժնի պետին, կարգադրեց չորս մեքենայով (ի դեպ են երկուսն էի ուղելի), յուրաքանչյուրը 12 տոննա տարողությամբ, ցեմենտով բեռնված մեքենաներ ուղարկել «Երիտասարդական» տեղամաս: Մնում էր արագ վերադառնալ Երևան, լուծել պահեստավորման հարցը, որն այնքան էլ հեշտ չէր:

Երկու մեքենա ցեմենտը շատ արագ փոքր վագոններով հորանով իջեցվեց աշխատատեղերը, մեկը դատարկեցինք պահեստում, չորրորդի համար տեղ չլինելու պատճառով վագոնների մեջ բեռնաբավեցին և կանգնեցրին օժանդակ գծերի վրա: «Հայրունելշինի» ղեկավարները Եկան և խնդրեցին մի մեքենա ցեմենտ վագոններից դատարկել մեքենայի մեջ այլ տեղամաս տեղափոխելու համար: Պարզ է, որ ոչ միայն տղանարդկային խոսքին տեղը լինելու, այլև հետազայում տեղամասում ցեմենտի պակասի դեպքում հարցի լուծեումը չխոչընդոտելու համար հրաժարվեցի: Ընդհանուր շահերից ելնելով նաև վերաբերմունքից, դգոհողներ էլ են եղան, բայց հետազայում սառը դատելով գտան, որ ճիշտ են վարվել: Եթե հիշողությունն չի դավաճանում /արդեն անցել է ավելի քան 20 տարի/ մեկ շաբաթ ոչ մի տեղամաս ցեմենտ չստացավ, մինչդեռ մենք մեծ բափով աշխատում էինք...

Այս բոլորն ասվեց ոչ նրա համար, որ ընթերցողը «հմ դերի ու նշանակության» մասին եղրակացության գա: Ոչ: Գիտեմ, չի բացառվում, որ Երիտասարդ ընթերցողներից շատերը գրադեցնեն բարձր պաշտոններ, կամ այլ բարձունքներին կանգնած մարդկանց հետ հարաբերությունների մեջ լինեն: Նրանցից յուրաքանչյուրը պետք է լավ իմանա ինչպիսի հասարակադ էլ լինի, պաշտոն տրվում է մեծ պարտականություններ իրականացնելու, օրինականությունները պաշտպանելու համար և վստահված գործում հաջողությունների հասնելու համար, մարդկանց հետ պետք է ազդիվ փոխարարությունների մեջ լինել, և էությամբ, և կեցվածքով հասարակ ու մարդկային:

Աստիճանաբար, բայց շատ արագ կարողացա տիրապետել տեղամասում կատարվող աշխատանքների տեխնոլոգիական պրոցեսներին, իրենց հաջորդականությամբ, այնպես որ հնարավորություն ունեցա օրվա ընթացքում մեկ անգամ շատ կարծ խորհրդակցությունում այս կամ այն հարցի մասին իմ կարծիքն արտահայտել: Խսկ երբ հասավ այն պա-

իը, երբ ինչպես Կարեն Աղամյանն ասաց «այլևս Չեզ «Փռացնել» հնարավոր չե», առաջարկությունն ընդունեցի և ամբողջությամբ անցած ինպարտականությունների կատարմանը /առաջին օրից անցել էր մեկ ամսից մի փոքր ավելի/:

Բարացիորեն ոչ մի անգամ, նույնիսկ հարցին տեղյակ լինելով էր, ինձ երբեք թույլ չտվեցի խառնվել տեխնիկական հարցերին, իմանալով այդ ոչ մի բանվոր նման հարցերով ինձ չեր դիմում, դա Կարեն Աղամյանի պարտականությունն էր, և նրանից խորհուրդներ հարցնելով ամբողջությամբ մտա կազմակերպչական բեռի տակ:

Երևանի մետրոպոլիտենի շինարարությունը խորհրդային Միությունում իրականացվող խոշոր ինտերնացիոնալ կառույցներից էր, որի աշխատանքներին նաևն ակցում էր, կարելի է ասել ողջ խորհրդային երկիրը: Երևան եկան մետրոշինարարները Մոսկվայից, Կիևից, Լենինգրադից, Թբիլիսից, Բաքվից, Միության այլ քաղաքներից: Եվ բոլորի նպատակը նույն էր եղբայրական հանրապետության մայրաքաղաքի մեջ ու կարևոր կառույցը համատեղ ուժերով ժամանակին և անքերի շահագործման հանձնել:

Մետրոշինարարների հսկայածավալ աշխատանքների մասին մամուլում շատ է գրվել, սակայն այդ օրերին մեծ արձագանք գտավ հորատողների մի բրիգադի աշխատանքը նաև «Երիտասարդական» տեղամասում, որի միասին կիսումն է հակիրճ:

Լենինգրադի հորատողներն աշխատում էին «թումելեզր» տեղամասում /«Չորավար Անդրամիկ»/ կայարանի հատվածում, նրանք 1980թ. ապրիլ-մայիս ամիսներին առաջացան 73 մետր: Ռեկորդային արդյունքի հասավ բազմաբնույթ մետրոշինարար, Սոցիալիստական աշխատանքի հերոս Միխայիլ Տիխոնիրովի ղեկավարած բրիգադը, որը մեկ ամսում անցահատեց 55 մետր, իր ստորգետնյա գոտեմարտի հմուտ հրամանատարների Վլադիմիր Բարկինի, Ալեքսեյ Չուպրակովի, Վասիլի Եգորովի, Պյոտր Ռատուշնի և մյուս ընկերների հետ: Եվ այդ աշխատանքներն իրականացվում էին ստորգետնյա առատ ջրերի պայմաններում, դրանք կանխելու համար անհրաժեշտ էր լինում ժամում արտամդել մոտ 45 խորանարդ մետր ջուր, իսկ եթե անցահատման աշխատանքները ժամանակին չկատարվեին, պարզ էր, հետ էին մնալու հիդրոմեկուսացման աշխատանքները: Մեր հյուրերի աշխատանքի օրինա-

կը պատահաբար չըերվեց: Նման աշխատանքի ոճը, դժվարությունների հաղթահարման ուղիները և մեր բանվորների ու մեր հյուրերի աշխատանքի օրինակելի ծևերն անտեղի չեն: Դրանք դառնում էին նաև մյուս տեղամասների «սեփականությունը»: Եվ այսպիսի լավագույն օրինակների, փորձերի տարածման գլխին կանգնած էին, չնայած իր խիստ ծանրաբեռնվածությանը, Կարեն Աղամյանը և գործի առաջընթացին մեծ տոն տվող «Հայրունելչինի» գլխավոր ինժեներ Դմիտրի Ռզյանկինը:

«Երիտասարդական» տեղամասի փորձառու հորատողների մասին խոսվել է, այլ վիճակում էին սալահատակնան աշխատանքները: Բացառությամբ վերգետնյա կայարանի, ուր սալահատակումը կատարում էին մեր հանրապետության շինարարները (այդ նաևին ստորև կասվի), ստորգետնյա սալահատակնան բոլոր աշխատանքներն իրականացվում էին Մոսկվայի և Լենինգրադի բրիգադների կողմից: Չկար մի ողակ, որտեղ աշխատանքներին չնաևն ակցեին Միության տարբեր կազմակերպություններից, այլ մետրոշինարարություններից եկած մարդիկ:

Երևանի մետրոշինարարությունում քիչ չեն այն կազմակերպությունների թիվը, որոնք աշխատում էին բոլոր հատվածներում և երբեմն էլ անհրաժեշտությունից ելնելով, իրենց ուժերը կենտրոնացնում էին մի տեղամասում, վերջացնում նախատեսված գործը, ապա տեղափոխվում կամ ուժերը «ցրում» մյուս տեղամասեր: Սա մետրոշինարարների առանձնահատուկ «բնավորության» գիծն էր, որը նկատվում էր ամենուրեք որպես աշխատանքների հաջողության հիմնական շարժիչ ուժ:

Անառակա ամիսներին նկատելիորեն «Երիտասարդական» կառուցվող շինարարական հրապարակները: Տեղամասում ամեն օր կարելի էր տեսնել մետրոշինարարի արտահագուստով տասնյակ կենսուրախ երիտասարդների, որոնք աշխատում էին բոլոր հերթափոխներին: Նրանք մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներն էին և իրենց երրորդ քննաշրջանն անցկացնում էին մետրոպոլիտենի շինարարությունում:

Հուլիս-օգոստոս ամիսներին երիտասարդ կառուցվողների շարքերը համալրեցին ավելի քան 200 նորեկներ պոլիտեխնիկական ինստիտուտից, որոնցից շատերն աշխատեցին «Երիտասարդական» տեղամա-

սույն Նրանք նախապատրաստական բաժանմունքի այն ունկնդիրներն էին, որոնք արդեն դարձել էին առաջին կուրսեցիներ: Իրենց կյանքում այդ կարևոր հրատարությունը պատահիները որոշել էին նշանավորել ազգանվեր գործով մասնակցել մայրաքաղաքի խոշորագույն օրյեկտի շինարարությանը: Եվ պետք է ասել, որ մասնակցում էին երիտասարդներին հատուկ եռանդով ու պատասխանատվությամբ: Տղաներին կարելի էր տեսնել տարբեր բնույթի աշխատանքներ կատարելիս: Նրանք մետրոշինարարներին օգնում էին բետոնային հիդրոմեկուլացման և այլ աշխատանքներում, միաժամանակ հաղորդակից էին աշխատանքային մեծ կոլեկտիվի առօրյային, սովորում էին հաղթահարել դժվարությունները, ծեռք էին բերում աշխատավոր մարդու լավագույն ունակություններ, մի հանգամանք, որ, ըստ իս, խիստ կարևոր է երիտասարդի որպես մարդ, ծեավորման գործում:

Այս, դա իրոք այդպես էր. մինչև ուսանող դառնալը, երիտասարդներն աշխատանքային մկրտություն էին ստանում այնպիսի մեծ կոլեկտիվում, ինչպիսին մետրոշինարարությունն էր: Մետրոպոլիտենում աշխատելը, ըստ Երևան նրանց առաջին լուրջ պրակտիկան էր, որն անկասկած հետագայում կօգներ էլ ավելի լավ հասկանալու կյանքը և կնպաստեր նաև լավ սովորելուն: Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողական-շինարարական ջոկատը 200 մարդ ղեկավարում էր պոլիտեխնիկական ինստիտուտի ավագ դասախոս Դ. Պետրոսյանը, որն իրեն հանճնարարված գործը կատարում էր մեծ բարեխնդությանը:

Ուսանողության օգնությունը մետրոպոլիտենի շինարարությանը շարունակվեց մինչև մետրոպոլիտենի շահագործման հանճնելը: Այսուել հիշատակենք միայն 1980թ. սեպտեմբերին երիտասարդության կողմից ցույց տրված օգնությունը: Սեպտեմբերի առաջին կեսի շաբաթ և կիրակի օրերին, ինչպես բոլոր տեղամասերի կայարաններում և ընթացքային ներգետնյա նախարարներում ու դահլիճներում ԲՈՒՀ-երի 200-ից ավելի ուսանողներ մասնակցեցին մետրոպոլիտենի համար կազմակերպված բանվորական շաբաթօրյակին: Այն կազմակերպել էին Մյասնիկյանի կոմերիտմիության շրջկոմը, որի ղեկավար Արտավազդ Յախշիրեկյանը մեծ բարեխնդությամբ էր նախապատրաստվել: Լավ աշխատեցին Պոլիտեխնիկական ինստիտուտի, Պետական համալսարանի ուսանողները: Օրինակելի նախաձեռնությամբ հանդես եկան

երկանի բժշկական ինստիտուտի ուսանողները: Նրանք հասարակական հիմունքներով շինարարների համար բացեցին բուժական կետեր: Կոմիտասի անվան կոմսերվատորիայի և գեղարվեստաթերական ինստիտուտների ուսանողները մետրոշինարարների համար տվեցին համերգ: Ասենք, որ սկսած 1980թ. սեպտեմբերից մինչև մետրոյի առաջին հերթի գործարկումը, մայրաքաղաքի ԲՈՒՀ-երի շինօկատներն իրենց օգնությունը բերեցին մետրոշինարարներին: Կառույցի տեղամասեր գործուղվեցին բազմաթիվ կոմերիտականներ ու երիտասարդներ: Ամբողջությամբ վերցրած մետրոպոլիտենի շինարարությանը մասնակցեցին 25 հազար կոմերիտականներ և երիտասարդներ, ԲՈՒՀ-երի և տեխնիկումների ուսանողներ:

\*\*\*

Անառվա շոգ օր էր. հուլիս ամիսը: Ավեստակյանի հուշարձանի հարկանությամբ գործող տեղամասում շինարարությունը թևակոփել էր իր նոր փուլը: Սկսվել էր թեք հորանի հրացումը: Վրաստանի մայրաքաղաքի «Թունելմետրոշինի» N5 թունելային ջոկատի մոնտաժային կազմակերպության մարդիկ, որ եկել էին օգնելու հայ գործընկերներին. ծեռնանուկ եղան շարժասամոդուլը մոնտաժային աշխատանքներին: Մետրոպոլիտենի շարժասամոդուլը մոնտաժելը, բարդ մասնագիտություն է, որը պահանջում է թե բարձր որակավորում, թե բացարձակ ճշգրտություն: Տեղադրման ժամանակ թույլ տված աննշան խախտումը կարող էր խիստ բացասաբար անրադառնալ ամբողջ հանգույցի հետագա աշխատանքների վրա:

Վրաստանի մասնագետները տեխնոլոգիական լավագույն ժամանակում նորմայով նախատեսված 10-ի փոխարեն, 6 օրուն ավարտեցին շարժասամոդուլի հիմնական հանգույցներից մեկի մոնտաժումը (դա հանգույցի կարևոր օլակներից էր): Իրենց բարեխիղդ աշխատանքով աչքի ընկան հատկապես բրիգադավար Նոդարի Մագլակելիձեն, մոնտաժողներ Վաժե Ենոքիձեն, Զոնի Միքաշվիլին և ուրիշները: Աշխատանքի եստաֆետը որոշ ժամանակով ընդունեցին N160 շինվարչության աշխատակիցները, որոնք իրականացրին, այսպես կոչված, հովանոցների մոնտաժումը և թեք հորանցը ներքելի մասի բետոնապատման աշխատանքները: Ի դեպք վրացի մասնագետների հետ կողը-կողը աշ-

խատում էին նաև Երևանի մետրոշինարարները, որոնք հավաքման, մոնտաժման ողջ գործընթացում ծեռք էին բերում շարժասանդուղքների մոնտաժման բարդ մասնագիտությունը, հանգամանորեն ծանրանում մեխանիզմներին, այնպես որ, մետրոպոլիտենի գործարկելուց հետո կարող էին ինքնուրույն շահագործել շարժասանդուղքները:

Թթիլսիի մետրոշինարարների խմբի ղեկավարն էր Յաչյա Գրիգորյանը: Մոնտաժային աշխատանքներն արագացնելու նպատակով Թթիլսիի նրանց օգնության եկավ մոնտաժային նոր խումբ, որը մեծ թափով սկսեց մասնակցել շարժասանդուղքի տեղադրմանը: Մինչև գործարկման օրը հաշված ամիսներ էին մնում: Մոնտաժումը պետք է իրականացվեր թեր հորատանքի ներքևի մասից և արդեն հուլիսի 12-ին հասցեց վերգետնյա կայարանին, որի ներքնահարկում հետազայտված տեղադրվեց մերենայացման բաժինը:

Արդեն շարժասանդուղքների գգալի մասը 70 տոկոսը, հոկտեմբերի սկզբներին մոնտաժված էր: Ավարտվել էր մետաղական կոնստրուկցիաների տեղադրումը: Տեղադրվեցին քաշող շղթաները, ինչպես նաև շարժասանդուղքի եզրակողերը: Վրաստանի մետրոշինարարները շարունակեցին աշխատել էլ ավելի մեծ ջանասիրությամբ, ժամանակի սղությունը դա էր պահանջում: Բայց մարդկանց մոտ նկատվում էր տրամադրության որոշ անկում, ջղային վիճակ: Հիշում եմ, մի անգամ, ոչ բրիգադավարը, ոչ էլ բրիգադի անդամները գտի չին իրենց աշխատանքից: Նրանց թևաթափ լինելն անտեղի չէր: Օրերը թռչում էին, բայց չին ստացվել անվանակները: Դասարակ դետալներ էին, բայց դրանց բացակայությունը կանգնեցնում էր աշխատանքները, առանց դրանց հնարավոր չէր կատարել հաջորդ մոնտաժային աշխատանքները: Շարժասանդուղքի բազրիներն սկսեցին տեղադրել, բայց լրիվ կոմպլեկտ ստացված չէր: Շարժասանդուղքի սարքերն ու շատ դետալներ ստացվում էին ուշացումով, երբեմն էլ տեխնիկական խոտանով և ստիպված բանվորները տեղում վերացնում էին թերությունները: Իրոք, նրանց մտահղությունը հասկանալի էր: Թթիլսիները պետք է տեղադրեին նաև «Յանրապետության իրապարակ» կայարանի շարժասանդուղքները, որն այնքան էլ հեշտ գործ չէր:

Ըստ սահմանված նորմաների, մեկ շարժասանդուղքը մոնտաժելու համար անհրաժեշտ էր 4-ից 5 ամիս: Այլ ելք չկար: Ստեղծված վիճա-

կի նասին մանրամասն գեկուցվեց շտարում: Գործնական միջամտությունը ոչ միայն մեր տեղամասում լուրջ բեկում մտցրեց, այլև հնարավորություն ստեղծվեց հետազայում «Յանրապետության իրապարակ» տեղամասում աշխատանքներն սկսել և ավարտել բարեհաջող ձևով:

Ըստ եւրյան, վերգետնյա կառույցն ինժեներական առումով բարդ կառույց չէ: Սակայն «Երիտասարդական» տեղամասի վերգետնյա կայարանում գործերը դժվարությամբ էին ընթանում: Զգձգվում էր շինարարությունը, որն իրականացնում էր մայրաքաղաքի լավագույն շինարարական կազմակերպություններից մեկը «Երքինշին» տրեստը. ինչպես ասում են, այստեղ իրենց գործը չստացվեց: Դրա հիմնական պատճառը գերլարվածությունն էր, նրանց էր հանձնարարվել կառույցներ վերգետնյա բոլոր կայարանները: ՅԿԿ Կենտկոմի և կառավարության շտաբը միանգամայն ճիշտ որոշում կայացրեց: 1980թ. մայիսի 19-ից օրյեկտի հետազա շինարարության աշխատանքները հանձնարարվեցին մեր շրջանի համաշինարարական N3 տեղամասի N 15 շինարարությանը: Որի պետն էր Վլահիսի Եղիշի Ավետիսյանը: Կայարանի կառուցումը վարչության շինարարներին հանձնելուց հետո ինձ մոտ ոչ մի կասկած չկար, որ լուրջ դրական տեղաշարժեր են լինելու, ինեն առաջն իսկ օրից:

Ի դեմ պետք է ասեմ, որ Վոլոյյա Ավետիսյանին դեռ դպրոցական նստարանից էի ճանաչում: Սովորել էինք նույն դպրոցում, ինձանից չորս դասարան բարձր էր: Բարձրահասակ, գեղեցիկ արտաքինով երիտասարդ էր, ճարպիկ և խելացի: Երբեմն համբերությունից դուրս գալով, շրջապատի մարդկանց զգաստացնում էր իր կտրուկ ու խելացի մոտեցմամբ: Նրան լավ հոգու և ազնիվ վերաբերմունքի համար շատ էին սիրում: Վոլոյյան որպես շինարարության վարչության պետ, ստանձնել էր վերգետնյա կայարանի մետրոշինարարության ամենահետին տեղամասի ղեկավարությունը: Մեր շրջանի շինարարության ղեկավար աշխատողների մեջ նա համարվում էր արդարամիտ ու խստապահանց մարդկանցից մեկը, միաժամանակ նրան սիրում էին որպես շիտակ ու անկեղծ մարդու:

Շինարարությանը մեծ թափ հաղորդելու համար Վ.Ավետիսյանը նախ իրականացրեց նախապատրաստական որոշակի աշխատանքներ, մշակեց շինարարության հետազա գործողությունների հատկ

ծրագիր և գրաֆիկ: Շինհրապարակում սկսեցին գործել Երկու բրիգադներ (հետագայում դրանք կրկնապատկվեցին), որոնցից մեկը ղեկավարում էր Յենիշիկ Գալստյանը, մյուսը՝ Սմբատ Յարությունյանը, տեղամասի պետն էր Աշոտ Յրազյանը: Շինհրարության աշխատանքներն արագացնելու նպատակով աշխատանքներից կազմակերպվեցին Երկու հերթ, այսպես ասած, հոսքային եղանակով: Երկրորդ հերթում աշխատող բրիգադը պատրաստում էր կաղապարները, տախտակամածները, այսինքն աշխատանքային ծակատ էր ստեղծում առաջին հերթի բրիգադի համար, որի խնդիրն էր իրականացնել բետոնային և այլ շինհրարական աշխատանքներ: Ի դեպ, Երկրորդ հերթափոխի համար ստեղծվեցին աշխատանքի և հաճախության անհրաժեշտ պայմաններ:

Պարզ էր, որպես «Եիտասարդական» տեղամասի շինհրարության առաջին պատասխանատուի, իմ պարտականությունների մեջ էր մտնում նաև օգնությունն ու շինհրարական աշխատանքների իրականացման նկատմամբ հսկողությունը վերգետնյա կայարանի շինհրարության հարցում ևս: Պետք է խոստովանեմ, որ չզգացվեց իմ օգնության ու հսկողության անհրաժեշտությունը: Խստապահանջ, ամեն մի մանրունքի վրա մեծ ուշադրություն դարձնող և հետևողականություն ցուցաբերող Վոլոդյա Ավետիսյանից պահանջելու կարիք բոլորովին չկար: Ինչպես ասում են, ապա թող մեկն ու մեկը փորձեր ժամանակին ու բարձր որակով չկատարեր աշխատանքը: Ցանկանում են առանձնահատուկ նշել Վ.Ավետիսյանի կատարողական բարձր կարգապահության մասին: Մեր ստվորության համաձայն, ես ու Վոլոդյան շտաբի նիստից առաջ թունում էինք Երքաղկոնի բաժինը, տեղեկանում, արդյոք Երքաղկոնի բյուրոյի որշմամբ մեր տեղամասին հանձնարարություն տրված է, թե ոչ (նաև ծանոթանում էինք մեզ վերաբերվող ՀԿԿ Կենտկոմի և կառավարության որոշումների հետ), հետագայում անհրաժեշտ միջոցներ ծեռնարկելու համար: 1980 թ. ապրիլի 11-ին Երքաղկոնի բյուրոյում քննարկվել էր «Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի շահագործումն ապահովելու համար լրացրացիչ միջոցառումներ ծեռնարկելու մասին» հարցը: Այս շատ տարրողունակ որոշման կետերից մեկում հանձնարարվել էր «Երիտասարդական» կայարանի շինհրարությունն իրականացնող կազմակերպությանը մինչև 1980 թ. հոկտեմբերը ավարտել կայարանի շրջակա տարածքի (իմնականում մուտքի հատվածում) բարե-

կարգման աշխատանքները:

Ինչպես ասվեց, Վոլոդյա Ավետիսյանը տեղամաս տեղափոխվեց 80-ի մայիսին (ըստ իս տեղամասում մեկ ամսվա ընթացքում որոշման կատարման անթափարար վիճակն էր թելաղրել Երքաղկոնի ղեկավարությանը, այնտեղ կատարել կազմակերպչական փոփոխություններ): Եվ ինչպիսի կատարողական բարձր պատասխանատվություն և շինհրարական խորը գիտելիքներ առկա էին Վ.Ավետիսյանի մոտ: Նախ տեղամասում աշխատանքների անցնելուց հետո ծեռնամուխ եղավ վերոհիշյալ որոշման կատարման համար ցանցային գրաֆիկի կազմելուն, և ամիսների ընթացքում նկատում էի, ինչքան էլ խիստ ծանրաբեռնված լիներ, խստապահանջորդն հետևում էր յուրաքանչյուր օրվա նախատեսված գործը կատարելուն: Ամենայն պատասխանատվությամբ և խստապահանջորդն իր և իր ենթակաների նկատմամբ վերաբերվում էր նաև տրված չուրաքանչյուր հանձնարարության նկատմամբ: Տման, իրոք փորձառու և բարեխիղը մարդկանցից շատ բան կարելի էր սովորել:

Ես էլ սովորեցի ...

Վերգետնյա հատվածում ամեն մի աշխատանք, ամեն գործողություն կատարվում էր բարձր որակով: Մի հարցում կարողացա Վոլոդյային օգտակար լինել: Նույնության քարի գործարանի տնօրեն Լյովա Սակարյանն ուսանողական մոտ ընկերներից էր: Երբեմն սալիկները ժամանակին և որակով տալու, կամ անորակների տեղը նորերը բերելու նպատակով չեղ սպասում «Հայրունելշինի» ծառայությունների օգնությանը, անմիջապես ինքը էլ գնում գործարան, Վոլովյայից վերցնում էի պահանջվող սալիկների ցուցակը և հարցերը լուծում: Շուրջ մեկ տարի աշխատելով Վոլովյայի հետ շատ մտերմացանք, սիրեցի նրան, որպես մեծ եղբոր: Ոչ մի բան անհետևանք չի մնում... Նրա մեջ բռնկվող մեծ էներգիան իր արդյունքը տվեց, ապարայուն չանցավ նրա աշխատանքը, այսօր էլ յուրաքանչյուր ոք կնկատի «Երիտասարդական» կայարանում իրականացված շինհրարական բարձրորակ աշխատանքը:

Այո, ինչ խոսք, շինհրարին յուրահատուկ քրտնաշան ու անմնացորդ, յուրաքանչյուր օր և օրվա ընթացքում ոչ պակաս 12 ժամ տարիներ շարունակ աշխատելը իր հետևանքներն ունեցան: Վոլովյա Ավետիսյանը կյանքից շուտ հեռացավ, Երևանցիներին որպես բարի հիշատակ թողնելով Գյուղատնտեսական ակադեմիայի նոր մասնաշենքը,

Կոնսերվատորիայի նորակառուց համալիրը, «Պլանի գլխում» մանկական հիվանդանոցի շենքի շարունակությունը, «Երիտասարդական» մետրոյի կայարանը, այլ բազմաթիվ ու բազմապիսի վարչական ու բնակելի շենքեր:

...80-ի ամունը ամենամեծ առաջընթացն այն էր, որ արդեն Կիևան փողոցից գետնի տակով Դանրապետության հարավարակ կարող էին անցնել հետիոտն և հեռու չեր այն օրը, երբ ճեղքնթացով նույն ճանապարհով կանցնեին գնացքները: Այդ ստորգետնյա ճանապարհի մի մասը «Նվաճեց» Կորյուն Սելքոնյանի դեկավարած հորատողների բրիգադը, որը հետո օգնության հասավ «Երիտասարդական» տեղամասին:

**«Երիտասարդական» կայարանի գործարկվող կոմպլեքսի հիմնական աշխատանքների տեմպերը առ 1.07.80թ.**

Աղյուսակ N 5

Աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Կատարված հունիսին	Մուն է կատարել առ 1/7-80թ
Ընթացքային թունելներ	մետր	190.3	455.4
Կայարանային թունելներ	—, —	25.3	146.9
Տեղաբրկած են ռելսեր թունելներում	—, —	1545	6449
Դիդրոմեկուսացման աշխատանքներ ընթացքային թունելներում	—, —	250	2530
Դիդրոմեկուսացման աշխատանքներ կայարաններում	—, —	—, —	595
Կայարանների հարդարում	հազ.ռութ.	76.2	1529.4
Վերին կայարանների շինարարություն	—, —	109.8	953

Որպեսզի ընթերցողը (հատկապես շինարարությանը մոտ կանգնած մարդիկ) պատկերացնի, թե դեռ «Երիտասարդական» տեղամասի շինարարներին ինչքան աշխատանք էր մնում կատարել, ցույց տանք մեկ ամսում (հուլիսին) կատարած աշխատանքների ծավալը և հետագա անելիքները:

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կայարանները հարդարողների, ամրանագործների, բետոնագործների տրամադրության տակ էին: Աջ կայարանային թունելի հատվածում գրեթե ամբողջությամբ ավարտվեց գրանիտապատումը, իսկ հոկտեմբերի ամսին և նոյեմբերի առաջին օրերին ամբողջությամբ մարմարապատվեցին նախատեսված բոլոր հատվածները: Երեսպատճան այս աշխատանքները կատարում էին Մուսկվայի «Մետրոշինի» մասնագետները, որոնք աշխատում էին մեծ բարեխոցությամբ և բարձր որակով:

Կառույցի գլխավոր վտանգի գրունտային ջրերի դեմ պայքարելու համար կիրառվում էր պոլիմերային զանազան բաղադրություններով ցեմենտային լուծույթների ներարկման մեթոդը: Թուցե վահանակների մեջ եղած ծայրակցատեղերն առավել հերմետիկ դարձնելու նպատակով լայնորեն օգտագործվում էին խեցեր, լաքեր, մածուկներ, հերմետիկացնող նյութեր:

Բոլոր գործողությունները կատարելուց հետո վերջնափուլում ներարկվում էր իջևանի բենտանիտը, որը ներարկելուց հետո կարծեք վահանակների հետևում ամեն ինչ քարանում, կպչում էր նրանից, փոխում ջրի հունը դեպի երկրի ընդերք: Այս գործը մեծ նրբություն և հմտություն էր պահանջում ներարկողից: Բացի այդ, ներարկողը պետք է ունենար համապատասխան գիտելիքներ, որպեսզի ստորգետնյա ընդերքի տարրերի մասերի պայմաններում կրահեր և օպերացիաները կատարեր ժամանակին: Ահա թե ինչու, թունելագործի որակյալ աշխատանքը մեծապես պայմանավորված էր նաև ներարկողի գիտելիքներից, գործին լավ տիրապետելուց: Պատահական չեր, որ այդ օպերացիայով գրավող մարդկանց դասում էին բարձրորակ բանվորների շարքը: «Երիտասարդական» տեղամասում նման բրիգադների մեջ լավագույնների շարքում էր դասվում Սամվել Խաչատրյանի բրիգադը:

Բրիգադիր Սամվել Խաչատրյանը մեծ հեղինակություն էր վայելում մետրոշինարարների շրջապատում: Ոչ միայն բրիգադի անդամները, այլև ողջ տեղամասի աշխատողները մեծ հարգանք ունեին նրա նկատ-

մամբ: Նա իր գործի գիտակն էր և երիտասարդ որակյալ շատ բանվորներ էր աճեցրել: Սեխամնզմի խափանման դեպքում հաճախ ոչ միայն իր, այլև մյուս բրիգադի համանման աշխատանքով զբաղվողները, նոտենում էին Սամվելին, խնդրում նրա օգնությունը: Արագործն սարքի թերությունները հայտնաբերում էր, իետո աշխատացնում, ցույց տալիս սարքի նորությունները և գնում իր գործին:

Բրիգադում ներարկող բանվորներից էր Գևորգ Ավետիսյանը, որի նկատմամբ, որպես մասնագետի և սրտացավ ընկերոջ, մեծ հարգանք ուներ Սամվել Խաչատրյանը: Գևորգը 1980թ. փետրվարին արձագանքելով համաժողովրդական կառույցին մասնակցելու կոչին, երեք ամսով եկել էր մետրո, որպես բանվոր աշխատելու համար (ավարտել էր Երևանի պետական համալսարանի քիմիական ֆակուլտետը, աշխատում էր հանրապետության բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության նախարարությունում որպես հրահանգիչ): Նրա աշխատահրությունը, սրտացավությունը գործի նկատմամբ և կազմակերպչական ունակությունն էին պատճառը, որ Գևորգին ընտրեցին N 160 շինմոնտաժային վարչության կոմերիտական կազմակերպության քարտուղար: Նրա նկատմամբ տածած մեծ վստահությունը, բանվորական առողջ մքննուրուն ստիպում են ընդմիշտ հրաժարվել նախարարությունում աշխատել և հետագա իր գործունեությունը կապել մետրոպոլիտենի հետ: Գևորգն իր գործունեությունը ծավալեց հենց բանվորական տեղում, երիտասարդության շրջանում, նրանց մեջ ներարկելով ակտիվ ու սրտացավ մոտեցում գործի նկատմամբ: Արդեն ժամանակի խորքից, ավելի քան 20 տարի անց, վերիշելով Գևորգ Ավետիսյանի աշխատանքը, ասենք, որ նա իր գործունեությամբ նպաստեց ետ մնացող տեղամասում աշխատող երիտասարդների ուժերի մորիլիզացմանը: Իսկ երիտասարդությունը տեղամասում կազմում էր անծնակազմի մոտ 50 տոկոսը: Քիչ չէին դեպքեր, երբ աշխատանքն ավարտած երիտասարդները նրա դեկավարությամբ աշխատել են մեկ հերթափոխ և, իսկ արտակարգ իրավիճակների դեպքում աշխատել են նույնիսկ եռերը: N 160 շինմոնտաժային վարչությունում հասարակական կազմակերպությունների փոխկազմակերպված գործունեությունը ևս իր դրական ազդեցություն էր բռնուում: Բազմաթիվ համատեղ աշխատանքներից թերենք մեկ օրինակ: Շինվարչության շինկոմի նախագահ Սաշա Մուրադյանը և

կոմերիտական կազմակերպության քարտուղար Գևորգ Ավետիսյանն ամեն միջոց ծեռնարկում էին աշխատողներին ոգևորելու, նրանց մոտ բարձր տրամադրություն ստեղծելու համար: Յամատեղ ուժերով հաճախակի կազմակերպում էին գրողների, դերասանների, պատերազմի և աշխատանքի վետերանների, այլ մեծ հեղինակություն ունեցող անձանց հանդիպումները շինարարների հետ: Յանդիպումները կազմակերպվեցին գրողների միության քարտուղար Մկրտիչ Սարգսյանի, գրողներ Գևորգ Էմինի, Միքայել Շաքիրյանի, հանրապետության ժողովրդական արտիստներ Վլադիմիր Աբաջյանի, Արմեն Խոստիկյանի, ՀՍՍՀ ժողովրդական արտիստուիի Վերա Ջակոբյանի, հանրապետության վաստակավոր արտիստներ Կիմ Երիցյանի, Ռաֆայել Զորանջյանի, վաստակավոր արտիստի Վարդուհի Խաչատրյանի, վաստակավոր արտիստ Արտաշես Միքայելյանի և այլ հանրաճանաչ մարդկանց հետ: Յանդիպումներ էին կազմակերպվում նաև տարբեր բնագավառների նշանավոր անձանց հետ միաժամանակ: Երբեք հնարավոր չէր մոռանալ «Երիտասարդական» տեղամասում նման միջոցառումների կազմակերպումը հենց հերթափոխությունների ժամանակ, հանդերձարանի բաց տարածքում փայտե նատարանների վրա նստած: Նման միջոցառումներն իրենց դրական հետքն էին թողնում մետրոշինարարների աշխատանքների հաջող ընթացքի վրա:

Առաջ անցնելով ասենք, որ մետրոպոլիտենի շահագործման շեմին 1981թվականի փետրվարի 18-ին N 160 շինվարչությունը և նրա հասարակական կազմակերպությունները «Երիտասարդական» տեղամասի կայարանի սպասարարության շինարարության ավարտի կապակցությամբ կազմակերպեցին հանդիպում տեղի շինարարների և մեզ օգնության եկած Միության շինարարների հետ (որոնք աշխատում էին մեր տեղամասում): Երախտիքի խոր զգացումով անցավ միջոցառումը, ուր դարձյալ զգալի էր Սաշա Մուրադյանի և Գևորգ Ավետիսյանի սրտացավ վերաբերմունքը:

...Որքան մոտենում էր մետրոյի առաջին գնացքի փորձարկման օրը, այնքան աշխատանքների լարվածությունը մեծանում էր: Յասարակական սննդի շուրջօրյա սպասարկումն ապահովված էր, քննելու հարցն էլ լուծվեց երրորդ հերթափոխից հետո, չորրորդ հերթափոխի աշխատողներին, հերթափոխի պետին, այլ աշխատողների հանձնարա-

րություն տալուց հետո միայն, ինքնաթափ մեքենայով կարողանում էի գնալ տուն: Մետրոյից բացակայելը, հատկապես շահագործման հաճախ նելու վերջին ամիսներին, տևում էր ոչ ավելի քան մեկ ժամ: Նույն մեքենայով եռ էի վերադառնում:

Չգիտեն ինչպես կոհիսի ընթերցողը, սակայն ժողովրդի կողմից անհամբեր սպասումների մասին պատկերացում կազմելու համար ասեն հետևյալը: Իմ սիրելի մորաքույր Յուղաբերը մահացել էր: Գիշերը զալու և գնալու ժամանակ տանեցիները խորը քնի մեջ էին: Դաջորդ օրը, երբ տուն եկա, կինս սպասում էր և ասաց, որ երկրորդ օրն է, ինչ մորաքույր մահացել է, այսօր թաղումն է:

Բանվորական հագուստի վրայից հագա անձրևանցու և գնացի թաղման: Երբ ասացի, թե չեմ կարող գերեզման գնալ, հարազատներս միաբերան, ասացին թե այդպես էլ կարծում էինք, բայց այսօր էլ չպետք է գայիր, նույնիսկ հանգուցյալը թեզ կներեր: Թաղման կապակցությամբ մեկ ժամով բացակայելը անախորժ հետևանքներ կանոնավոր: Ընդհիշմանը, ժամը 14.00-ին արդեն սովորություն էր դարձել հերթով մոտենում էի բանվորական տեղերին, նայում, թե արդյոյք իիննական բանվորները, հատկապես Մոսկվայից, Լենինգրադից եկած սալարկող բրիգադներն, ապահովված են անհրաժեշտ ցեմենտով և այլ նյութերով: Օժանդակ բանվորները, ուսանողները, երբ տեսնում են, որ ես բացակայում եմ, անհրաժեշտությունից ելնելով շտապ կանչում են կարեն Աղամյանին տեղամասերից մեկում տեխնիկական հարցեր պարզաբանելու նպատակով, երբ տեսնում են, որ նա էլ է բացակայում, նրանք միմյանց հետ պայմանավորվում են իրենց «ազատություն» տալ և մինչև սալարկող վարպետներն ընդհիջումից կգան, ուսանողներն անհետանում են, նրանց հետևից նաև մյուս օժանդակ բանվորները: «Մետրոշին» հիմնական բանվորները, ինչպես նաև Մոսկվայից, Լենինգրադից եկածները տեսնում են որ օժանդակ բանվորները գնացել են, իրենք էլ պարզ է, առանց նրանց օգնության աշխատել չեն կարող, նրանք էլ են գնում: Գետնի տակ կառամատուցի տարածքում երկու հարյուրից ավելի աշխատողներից ընդամենը երկու բրիգադավարներ են մնում: Եկա տեղանաս, տեսածիս չեմ հավատում, որպես «նվեր» բրիգադիրներից, մեկը թե տասը բոլոր առաջ շտարի պետը շտարի անդամներով եկան և ոչ մի խոսք չփոխանակելով՝ վերադարձան: Երեկոյան ժամը 6-ին կայա-

ցած շտարի նիստն այս անգամ ավելի երկար տևեց, ավելի քան երեք ժամ: Անցավ շատ լարված, Լեռնիոյ Ներսիսյանի հանգիստ, բայց զարալից տոնը բոլորին զգաստացրել էր: Երբեմն խիստ հայացքով ինձ էր նայում: Պարզ էր, օրվա առիթ տվող «հերոսը» եւ էի: Շտարի նիստից հետո անմիջապես ինձ մոտեցավ Յանան Յայրաբետյանը վրորվկած խոսեց փորձնական ուղերթի նախօրյակին տեղամասում չլինելու և «սյուրպրիզի» մասին: Երբ իմացավ եղելությունը, ցավակցեց, հանգիստ շունչ քաշեց և ավելացրեց, թե կրահում էր, որ մի արտակարգ դեպք պատահած կլինի: Յանգստացրեց, «սև ամպերն էլ» հեռացան...: Աշխատանքի ընթացքում երբեմն հարցեր էին առաջանում, որոնց լուծման համար անհրաժեշտություն էր զգացվում իրատապ ընթացք տալ և գիտեի, որ միշտ պատրաստական երքաղկոնի շինարարության և քաղաքային տնտեսության բաժնի աշխատողները օգնության ծեռք կմեկնեին: Նպատակահարմար չէ նրանց կողմից սատար կանգնելու օրինակներ բերել, բայց մեկ օրինակով գործերին թեկուզ մակերեսորեն ընթրողին տեղեկացնելը, գտնում են նպատակահարմար:

1980 թ. մայիսի 8-ի 34Կ Կենտկոմի բյուրոյի որոշման կատարման, Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթը շահագործման հանձնող տեղամասին օգնություն ցույց տալու հարցը, մայիսի 16-ին քննարկվեց երքաղկոնի բյուրոյում, ընդունվեց չորս կետից և երկու հավելվածից բաղկացած որոշում: Եվ երքաղկոնի բաժնի աշխատողների կողմից ինչպիսի բանինացություն և սրտացավություն մետրոպոլիտենի յուրաքանչյուր բանվորական տեղում կոնկրետ օգնություն կազմակերպելու համար: Ասածը հաստատելու համար բերենք «Երիտասարդական» տեղամասին վերաբերվող օգնություն ցույց տալու հանձնարարություններից օրինակներ:

«Երիտասարդական» կայարանի նախասրահի, «Երիտասարդական» կայարանից մինչև «Յանրապետության իրապարակ» ընթացքային բունելի, թեք հորանի և համատեղված քարշային ենթակայանի շինարարությունը արագացնելու համար երքաղկոնի բյուրոն խորհրդային կուսչկոմին հանձնարարեց մինչև մայիսի 20-ը ապահովել լրացուցիչ բանվորական ուժով: Տեղամասի տարբեր հատվածներում մասնագիտական յուրօրինակ աշխատանքներ իրականացնելու համար, եւնելով կատարվելիք աշխատանքների ծավալներից անհրաժեշտ քանա-

կով, մասնագետներ պահանջվեցին մայրաքաղաքի հիմնարկ-ձեռնարկություններից: Այպես. մեր տեղամասի համար Քանաքեռի այսումինի գործարանից պահանջվեց մինչև մայիսի 20-ը ուղարկել 10 մարդ, Երևանի մաքենատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտից 15, Երևանի ավտոգործարանից 5, «Դայէլէկտրալուս» արտադրական միավորումից 15, «Էլէկտրոն» արտադրական միավորումից 7, «Երարդշին» տրեստից 10 մարդ և այլն (ընդամենը 8 կազմակերպություններ, 77 բարձրորակ մասնագետներ): Մյուս տեղամասերի համար ևս ցատ կատարվելիք աշխատանքների, անհրաժեշտությունից ելնելով օգնություն կազմակերպեցին մյուս շրջկոմներից, մայրաքաղաքի հիմնարկ-ձեռնարկություններից:

Ուշադրություն դարձեց հետևյալ փաստի վրա: Մետրոպոլիտենի շնարարությանը վերաբերող լրացուցիչ օգնության հարցը Երքաղկոմում քննարկվել էր չորս օր առաջ: Սակայն շնարարության ռիթմին, նրա «զարկերակի խփողին» ինչպիսի բարեխիդա ուշադրություն պետք է ցուցաբերվեր, որ Երքաղկոմի շնարարության բաժնի աշխատողները առաջարկությամբ մտնեին քաղկոմի առաջին քարտուղարի նոտ, խնդրեին արտահերթ բյուրո հրավիրել տեղամասերում արագ օգնություն կազմակերպելու համար: Թեկուզ այս որոշումն ընթերցելով, մտաբերեցի մեկ օրվա ընթացքում կարծեք որպես փրկարար ուժի, հիմնարկ-ձեռնարկություններից ուղարկված մարդկանց շնորհիկ հանգիստ շունչ քաշելու պահը: Նման պահեր թիզ չեղան և, թեկուզ այս առիթով, միշտ տեղիք են տալիս երբեք չմոռանալ փաստական տվյալներով Երքաղկոմի բաժնի իմ կուսակցական աշխատանքային ընկերներին, իրականում գիշեր ու զոր մետրոպոլիտենի առաջընթացքի հոգսերով ապրող իմ «բանվորական» ընկերներին:

Փորձնական ուղերթից առաջ, ինչպես մետրոշնարներն էին ասում փորձնական գնացքի փորձարկման աշխատանքներին պետք էր նախապատճառ պահել: Մետրոպոլիտենի ընդունված բոլոր օրենքներին համապատասխան, բացի կայարաններում կատարվող աշխատանքներից կարծ ժամանակահատվածում լուրջ ուշադրություն պետք է դարձվեր ընթացքային բունելներում հայտնաբերված թերի աշխատանքները լիովին ավարտելու և եղած թերությունները վերացնելու վրա:

Մետրոպոլիտենի շնարարությունը տարբեր մասնագիտություննե-

րի տեր աշխատողների համար դարձավ աշխատանքային հիանալի դպրոց, որտեղ հատկապես երիտասարդները բացի համապատասխան մասնագիտությունները ծեղանքություն ամուր կամք, հաստատականություն, դժվարությունները հաղթահարելու վճռականություն: Այս հատկություններով օժտված մետրոշնարարները փորձնական գնացքի փորձարկման նախօրյակին մեկը մյուսին փոխարինելով մասնակցում էին բազմաբնույթ աշխատանքների: Ինչ խոսք, յուրաքանչյուր երևանցի անհամբեր սպասում էր պաշտոնական փորձարկման օրվան:

Մեր ապրումները նկարագրելի չեն... Այսօր էլ, որպես սուրբ մասունք, պահում են մետրոյի առաջին գնացքի փորձարկման ուղերթի անցարությը:

1980 թ. նոյեմբերի 24-ը էր: Մտորգետնյա մայրուղով փորձնական ուղերթ պետք է կատարեր առաջին գնացքը: Առաջին ուղևորներն էին, կառուցողները, մետրոպոլիտենի շնարարության հետ առնչվող կազմակերպությունների ղեկավարները, ինչպես նաև կուսակցական սովորական աշխատողներ: Երկնագույն ճեպընթացի մեջ էին ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի շտաբի անդամները:

Ժամը 14-ին «Սասունցի Դավիթ» կայարանից ճեպընթացը շարժվեց: Անցավ ընդամենը մի քանի րոպե և պատուհանից տեսանք «Զորավար Անդրանիկ», «Դանրապետության հրապարակ», «Ուսանողական», «Մարշալ Բաղրամյան», «Բարեկամություն» կայարանները: «Ուղևորներիս» «ուռաներով» ցերմորեն ողջունում էին այդ կայարաններում աշխատող մետրոշնարարները:

Փաստորեն դա նշանակում էր հասել է շնարարության ամենավճռական պահը, կիզակետը, որից այն կողմ, մինչև գործարկումը շատ քիչ աշխատանք էր մնում: Դիշեցի սեպտեմբերի առաջին օրերը, երբ ընթացքային բունելով ընկերներից մեկի հետ ոտքով, ծեղներիս ջահերը բռնած հասանք «Դանրապետության հրապարակ» կայարանը: Ուղղակի սարսափեցի: Անկախ այն բանից, որ արդեն մեծ աշխատանքներ էին կատարվել, «Երիտասարդական» տեղամասը դեռևս շատ ու շատ էր մնում: Դիշեցի ինձ հասած այն լուրը, որ խորհրդային Միության «Գլխավումելմետրոշնի» կառավարիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Յուրի Կոչելի ներկայությանը «Դայրունելչին» վարչության պե-

տին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Ղենիրյանն ասել էր. «Հանրապետության հրապարակ» տեղամասը շահագործման կիհանձնվի, բայց «Երիտասարդականի» ծախողումը քո խղճի վրա ծանր է նստելու...» Այդ օրը նշված երկու կայարանների միջև եղած փորձնական ուղերի ընթացքից երևաց, որ ճեղքվածքը գրեթե փակվել է: Հատկապես վերջին երեք ամսվա ընթացքում մեր տեղամասի տղաները մեծ գործ էին կատարել, բայց մյուս տեղամասերում աշխատանքները, գուցե չնշին վերապահումներով, գրեթե ավարտվել էին, նոյնիսկ մամուլում տպագրված «Սատոնի Դավիթ», «Բարեկամություն», «Մարշալ Բաղրամյան» կայարանների սրահների ընդիմուր տեսքի նկարների շարքում «Երիտասարդականի» նկարը բացակայում էր: Մեղքս չքացնեմ, մարմնովս սարսուր անցավ, կառուցի ավարտին հասնելու համար ոչ պակաս 4-5 ամիս էր պահանջվում...

Գնացքի փորձնական ուղերի շեմին մետրոշինարարները փառավոր ուղի անցան: Այդ մասին են վկայում թվերը, փաստերը, կատարված աշխատանքների ծավալները, որոնցից մի քանիսը մեջ բերենք:

Շինարարության սկզբից մինչև թողարկման օրն իրացվեցին ավելի քան 70 մլն. ռուբլու կապիտալ ներդրումներ: Իսկ միայն 1980թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում 18 մլն. ռուբլու շինմոնտաժային աշխատանքներ: Երկրաբանական դժվար պայմաններում, համեմատաբար կարծ ժամանակամիջոցում անցկացվեց 10332 մետր ընթացքային, 1428 մետր կայարանային թունելներ, մոտ 290 տրամագծի թունելներ ենթակայարանների, ողափոխության կայարանների, սանհանգույցների համար:

Շինարարության սկզբից Երևանյան ընդերքից դուրս բերվեց 430 հազար խորանարդ մետր ապար, կատարվեցին ավելի քան 20 հազար խորանարդ մետր բետոնապատման, պատրաստի թունելներում մոտ 4.5 հազ.գծամետր հիդրոմեկուսացման աշխատանքներ: Թունելներում տեղադրվեցին 22 հազար տոննա թուշե վահանակներ, մոտ 800 կմ տարրեր տեսակի կարելներ, աջ ընթացքային թունելում տեղադրվեցին 6950 մետր ռելսեր, իսկ ծախ ընթացքային թունելում այդ աշխատանքները մոտենում էին ավարտին: Կայարանները և վերգետնյա սրահները սկսվել էին տասնյակ հազարավոր քառ. մետր մարմարով, տրավերտինով, գրանիտով, տուֆով հարդարելու աշխատանքները: Անփոփ արդ-

յունքը պետք է լիներ այն, որ ստորգետնյա մայրուղիով օրական փոխադրվեր 430 հազար ուղղութեան:

... 1980-ի դեկտեմբերի երկրորդ կեսից «Երիտասարդական» տեղամասի շինարապարակում սկսվեց ժամանակավոր կառույցները քանդելու աշխատանքները, առավել խնամքով հավաքվեցին շինանյութերի մնացորդները, ջարդունները, հեռացվեց շինարարական աղբը, մասնակիորեն կարգի բերվեցին տարածքները: Այս բոլորն ազդարարում էին շինարարական աշխատանքների ավարտի մասին: Աստիճանաբար նման աշխատանքների ծավալն ավալանում էր: Արդեն մի քանի օր եր անցել ամսվա առաջին կեսից, երբ մի տեղամասի վերգետնյա կայարանաբարի շինարապարակում հոնդում եր էքսկավատորը, իսկ ինքնաբար կերը կրում էին շինարարական աղբը: Այս ամենը կառուցի ավարտի փաստացի նշաններն էին, չնայած շատերի կարծիքով դեռ կար, ոչ պակաս քան երեք ամսվա աշխատանքը:

Որքան էլ ցանկալի չեր տեղամասի վերգետնյա կայարանի մոտից ստորգետնյա հատվածի շինարարություն ազգաբնակչության այցելությունը, շարունակում էր: Մարդկա անհամբեր սպասում էին շինարարության ավարտին, որն ավելի ցայտում նկատվեց մետրոյի առաջին գնացքի փորձնական երթից հետո: Ստիպված կտրուկ միջոցներ ձեռնարկվեցին, ոչ միայն աշխատանքներին չխանգարելու, այլև պատահաներից խուսափելու, անվտանգության կանոնները պահպանելու համար:

Երևան քաղաքի ներքին գործերի վարչությունում, մետրոպոլիտենի պահպանության նպատակով դեռ 1980թ. օգոստոսին ստեղծվել էր ներքին գործերի բաժին, որի առաջնահերթ նպատակն էր ապահովել ուղևորների անվտանգությունը և մետրոպոլիտենի պահպանությունը: Ներքին գործերի մետրոպոլիտենի պահպանության քանի առաջին միլյուն էր միլիոնի փոխանցուածու էմիլ Մովսեսի Յովհաննիսյանը: Եվ եթե այդ ամիսներին, հատկապես միլիոնի հետևողական աշխատանքի շնորհիվ, պահպանվեց անհրաժեշտ կարգ ու կանոն և ոչ մի դժբախտ դեպք չպատահեց, ապա արդյունք էր նաև էմիլ Յովհաննիսյանի խստապահանջության, հետևողականության, նրա անքուն գիշերների: (Ի դեպք մետրոպոլիտենի աշխատանքի ավելի քան 20 տարիների ընթացքում չի եղել և ոչ մի արտակարգ պատահար):

... Հինհրապարակում չեն երևում թթիլիսիի «Մետրոշինի» մասնագետները: Եվ իրոք, նրանք դեկտեմբերի 15-ին ավարտելով շարժասանդուղի 48-ժամյա անընդհատ փորձարկումը, իրաժեշտ տվեցին տեղամասին: Վրացի մետրոշինարարները մեզ մոտ աշխատանքներն ավարտելուց հետո սկսեցին «Հանրապետության հրապարակ» տեղամասի շարժասանդուղի մոնտաժումը:

Ինչպես միշտ, շինհրապարակում հանդիպում էի N3 տրեստի N5 շինվարչության պետ Կոլոյյա Ավետիսյանին և քանի որ շինվարչության աշխատանքների ողջ պատասխանատվությունը դարձյալ նրա վրա էր, հազվադեպ էր բացակայում տեղամասից (հիմնականում վարչության օրյեկտների հետ կապված հարցերով աշխատեներն էին զալիս մետրոյի շինտեղամաս): Սակայն երկիրը աշխատանքի ժամանակ միշտ ներկա էր նրան փոխարինողը Աշոտ Յրացյանը, որը մինչև վերջին օրը մեծ պատասխանատվությամբ ու բարեխղճությամբ էր կատարում աշխատանքները: Կոլոյյան ուրախությամբ ասում էր, որ երեսպատման աշխատանքների ճնշող մեծամասնությունը ավարտվել են, տղաները գուգահեռ վերացնում են եղած աննշան թերությունները: Շինարարները ծեռնամուս էին եղել ապակե պատերի հավաքմանը, որի մասերը ցավոք ստացվում էին ուշացումներով: Մի խոսքով, ըստ նրա գրաֆիկի շինարարները գործերը պետք է ավարտեն մեկ ու կեսից, երկու ամսվա ընթացքում:

Գործերը վատ չեն ընթանում նաև «Երիտասարդականի» թեք հորանի տեղամասում, որը դեկավարում էր Արամայիս Մանուկյանը: Ընդերքում արագ թափով շարունակվում էին մարմարապատման աշխատանքները: Կայարանային թունելներից դեպի շարժասանդուղը տանող միջանցքում դրվում էին գրանիտասալերը, որոնց ավարտին քիչ էր մնում: Բավկալանին լարված էին աշխատում էլեկտրամոնտաժողները, որոնք ևս ավարտման եղրից շատ հեռու չեն: Մնում էր կայարանարահի տանիքի թեք խողովակը պատել չժամգոտվող թիթեղներով, որոնց տեղադրությունը և ներքևի հարդարման աշխատանքներն իրականացվեցին մեկ ամսվա ընթացքում:

Շարժասանդուղից ստորգետնյա միջանցիկ կայարան իջնող աստիճանի սկզբում, ստեղծվեց մի միջանցիկ հրապարակ: Սա աշխատանքների ամենածանրաբեռնված հատվածներից մեկն էր (հենց այս

տեղ աշխատանքների հետ մնալը կանխվեց հիմնականում շուրջօրյա և հատկապես համալսարանի ուսանողների քրտնաջան աշխատանքի շնորհիվ): Այս հատվածում սկսվեցին հարյուրավոր էլեկտրալամպերի տեղադրման աշխատանքները:

Ժանանակի սղությունն ստիպում էր այստեղ կատարել նաև այլ աշխատանքներ առանց մեկը մյուսին խանգարելու: Կայարանի այս փոքր հատվածում հետագայում շարունակող ճարտարապետական հմուտ լուծումները սովորական թունելը վերածեցին ստորգետնյա լուսավոր ու գեղեցիկ պալատի: Տեղանասի թունելների աշխատանքներն իրականացնում էին «Մետրոշինի» Մուսկվայի N 901 հատուկ շինարարական գնացքի և Լենինգրադի մասնագետները, որոնց մի մասը հարդարում էր բաղարային առաստաղը, մյուսները պատրաստում էին գրանիտե հատակները, մարմարապատում պատերը: Մինչև դեկտեմբերի վերջն իրականացվեց կայարանային թունելների հարդարման աշխատանքների մոտ կեսը, մյուս մասն իրականացվեց 81-ի հունվար-փետրվար ամիսներին:

...Այժմ հակիրծ կանգ առնենք «Երիտասարդական» կայարանի «Կնքահոր» ճարտարապետ Ստեփան Յայկի Քյուրքյանի աշխատանքներին: Չլինելով մասնագիտությամբ ճարտարապետ, ինձ իրավունք չեմ վերապահում նրա գործունեությանը գնահատական տալ, բայց որպես երևանի բնակիչ և Յայաստանի քաղաքացիներից մեկը շատ շատերի կարծիքն արտահայտած կլինեմ, եթե ասեմ, որ «Երիտասարդական» կայարանի, նրանից առաջ և հետո կառուցածների համար նրան անվերապահորեն կարելի է դասել Ալեքսանդր Թամանյանի ու Ռաֆայել Խորելյանի, Թունիաբյանի ու Մարկ Գրիգորյանի արժանի ժառանգործների և նրանց ճարտարապետության նորովի մտածող ու յուրօրինակ հետևորդների շարքը: Աշխատանքի թերումով ինձ բախտ վիճակվեց շուրջ մեկ տարի գրեթե ամենօրյա շինան մեջ լինել Ստեփան Քյուրքյանի հետ, որին ես ընդունեցի որպես մեծ ճարտարապետի, մեծ մարդու և լավ ընկերոց:

Ստեփան Քյուրքյանին ես վաղուց էի ճանաչում: Նա հաճախ գալիս էր մեր թակի հարևանությամբ գտնվող տունը: Տարիների ընթացքում, հատկապես կամերային տան շահագործումից հետո, նա մեծ համբավ ծեռք բերեց, այնպես որ բոլորս էլ մեծ հարգանքով էինք լցված նրա

**Ակատմամբ:** Ակզրնական շրջանում գոնե շաբաթը մեկ անգամ, հետագայում օրը մի քանի անգամ, իսկ մետրոյի ավարտի վերջին ամիսներին լարված աշխատանքի բոլոր ժամերին, երբեմն նույնիսկ գիշերները հանդիպում էին և հաճախ հուչում էր իմ հետագա քայլերն ու անելիքները: Ժամանակի ընթացքում նրա հետ կապված քավականին հիշողություններ կուտակվեցին, որոնցից մի քանիսը ներքևում հակիրծ կիշշատակվի: Բայց այստեղ կցանկանայի խոսել նախագծի հետ կապված նրա մի քանի մտորումների մասին, որոնք շատերիս վրա ի սկզբան մեծ տպավորություն բռնեցին:

Կայարանների ծևավորնան համար լավագույն նյութեր էին ընտրվել գրանիտ ու մարմար, որոնք աչքի էին ընկնում թե երկարակեցությամբ ու դիմացկունությամբ, թե գեղեցիկ տեսքով: Ստորգետնյա պատերն ու հատակը մի շարք առանձնահատկությունների հետևանքով, որպես կանոն, շատ արագ են կեղտոտվում, և դրանց մշակումն ու հաճախակի լվացումը մետրոպոլիտենի առօրյայի գործունեության պարտադիր աշխատանքներից են: Այդ առումով էլ գրանիտը և մարմարը հիանալի նյութեր են. դրանք հեշտությամբ են լվացվում, մաքրվում, որից հետո վերագտնում իրենց բնական տեսքը: Ահա թե ինչու Ստեփան Քյուրքչյանը նախատեսել էր պատերն ու հատակը ամբողջությամբ ծածկել Փամբակի գրանիտով: Զևավորնան պարզ և գուսապ արտահայտածիցները ճարտարապետորեն հաջող լուծումով, կայարանի ընդարձակ սրահին հաղորդում են ժամանակակից, հաճելի և հարմարավետ, աչքի համար հրապուրիչ տեսք:

Սովորաբար ընդունված էր մետրոպոլիտենի կայարանների առաստաղները ներկել սպիտակ գույնով. յուրմինեսենտային լամպերի լույսը, ծուլվելով այդ սպիտակին, դառնում է մի տեսակ սառը և անկենդան: «Երիտասարդականի» նախագծի հեղինակն այլ լուծում էր գտել: Նրա մտահաղացմանը կայարանի ամբողջ թաղը ներկվեց բաց ոսկեգույնով, որից սրահի լուսավորությունը ստացավ արևային երանգ և ջերմություն: Առաջ անցնելով ասեմ, որ կառամատույցի աշխատանքները դեռ չափարած /մետրոյի շահագործումից շուրջ մեկ ամիս առաջ/ հարդարման աշխատանքների շեմին, ՀՍՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Յանան Յայրապետյանն առաջարկեց ստորգետնյա կառամատույցի առաստաղի կենտրոնով մոտ 103 մետր երկարու-

թյամբ տեղադրել լրացուցիչ գեղեցիկ լուսամփոփներ, որոնք ընդունվեցին ճարտարապետի կողմից, և, իրոք, կառամատույցն էլ ավելի գեղեցիկ և լուսավոր ստացվեց:

Ինքնատիպ և հետաքրքիր լուծումներով աչքի է ընկնում կայարանի վերգետնյա հատվածը Այն տեղադրվեց օղակածև գրոսայգում նախկին «Լոռի» ռեստորանի տեղում, վնաս չհասցնելով ոչ մի ծառի ու թփի: Նախագծի հաստատման մասին հետաքրքիր հիշողություններ պատմեց ճարտարապետը: Փաստորեն այս ճարտարապետության «կնքահայրը» եղել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը: Ահա թե ինչու: Պետշինը դեմ էր եղել «Լոռի» ռեստորանի տեղում կայարան կառուցելուն: Վերջին խորհրդակցության ժամանակ, որը տեղի է ունեցել առաջին քարտուղարի աշխատասենյակում, նա հարց է տվել. «Անկախ նրանից, թե կայարանը որտեղ կտեղադրվի, եթե նաև նախագիծը տեսնեք արտասահմանյան որևէ երկրում, ինչպիսի՞ գնահատական կտար մտահացմանը»: Բոլոր դեմ եղողները, այդ թվում նաև Պետշինի նախագահը, միաբերան ասել են. «Դոյակապ է բոլոր առումներով»: Պատասխանը լինում է. «Դե, որ դուք այդ կարծիքին եք, ես էլ եմ նույն կարծիքին, էլ բան ի՞նչ է, մեկ այլ տեղում ավելի լավ ռեստորան կարող ենք կառուցել, քան «Լոռի» ռեստորանն է»: Եվ այսպիսով ընդունվում է նախագիծը:

Շարունակելով նախագծի մասին խոսել ասենք, որ «Երիտասարդական» կայարանի դեպի վերգետնյա սրահ առաստաղից թեքությամբ դուրս է գալիս խողովակային մի ծավալուն պատկեր, դա, ըստ էության, շարժասանդուղքի հորանի շարունակությունն է, որը, ինչպես նահապետական տներում երդիկը, սրահի լուսավորման աղբյուրն է: Այդ ծավալի ներսում տեղադրվեցին ճաշակով ծևավորված լուսատուներ. դրանք երեկոյան ժամերին սրահը ողղողում են ցերեկային լույսով: Ճնարամնորեն օգտագործելով տեղանքի առանձնահատկությունները նախագծի հեղինակը ծգտել է հասնել սրահի մատուցեների օգտագործման առավել հետաքրքիր և ինքնատիպ լուծումների: Խողովակածն սրահի սկզբնամասում գրեթե շարժասանդուղքի հենց եղի մոտ, առաստաղի վերկից մոտ երկու մետր երկարությամբ կախված էր հաստ երկարե ծողը. նրա ուժը բավական էր հետագայում տեղադրված «թռչող արբանյակի» ծանրությունը կրելու համար. «լուսատուները» նախ

պայծառ լույսով լրացուցիչ լուսավորելու էին շարժասանդուղքի ողջ տարածքը, երկրորդն էլ բարձրացողի տպավորությունն այնպիսին էր լինելու, թե ինքն էլ արբանյակին գուգահեռ թռչում է: Ցավոք, այն չիրականացավ:

... Մետրոպոլիտենի ողջ շինարարության մասին խոսելիս պետք է ասել հետևյալը. 1980թ. դեկտեմբերի յուրաքանչյուր օրն անցնում էր շատ լարված: Ամբողջությամբ ավարտվեց մետրոպոլիտենի շինարարության ավարտն ազդարարող բոլոր թունելների անցահատումը, տեղադրվեցին նաև ուղեգծերը և կոնստակտային ռելսերը, ավարտվեց ուղեգծերի բետոնապատումը, տեղադրվեցին շարժասանդուղքները, գորեք ամբողջությամբ հարդարվեցին երեք ստորգետնյա կայարանները, իրականացվեց էլեկտրամոնտաժային աշխատանքների մեծ մասը: Թվային արտահայտությամբ պատկերն այսպիսին էր. 1980 թվականին իրացվեցին մոտ 23 մլն ոուրլու շինոնտաժային աշխատանքներ պլանավորված 15 մլն. ոուրլու դիմաց, տեղադրվեցին շուրջ 3 մլն ոուրլու սարքավորումներ, իրացվեցին 30.8 մլն ոուրլու կապիտալ ներդրումներ: Ըստ տեղեկությունների գորեք ամբողջությամբ ավարտվել էր «Կիևան», «Մարշալ Բաղրամյան», «Սասունցի Դավիթ» կայարանների շինարարությունը: Իսկ ի՞նչ վիճակում էին գտնվում մյուս երկու «Հանրապետության իրապարակ» և «Երիտասարդական» կայարանները: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չեղավ լինել «Հանրապետության իրապարակ» տեղանասում: Ըստ №160 շինոնտաժային վարչության դեկավարության այնտեղ վիճակը շատ ծանր էր: Աեր «Երիտասարդական», տեղանասում վերգետնյա կայարանի շինարարությունը մոտենում էր ավարտին: Ստորգետնյա կայարանասրահում արագ թափով ընթանում էր կառամատույցների և սրահի հարդարման գործը, դեռ նոր պետք է սկսվեին և ավարտվեին սյուների սալապատման աշխատանքները: Կարելի էր ասել, որ ավարտվել էին հարդարման աշխատանքների մոտ 65 տոկոսը, հետևաբար 1981թ. անելիքները դեռ շատ էին, ոչ պակաս երկու-երեք ամիս դեռ լարված աշխատանք էր պահանջվում...

Նոր տարվա աշխատանքային առաջին օրից կարծես օր-օրի մետրոյի շինարարության մեծածավալ աշխատանքների մեջ ավելի հստակեցվում էր կատարվելիք գործերի ամբողջական պատկերը, սակայն դրան գուգահեռ գերծանրաբեռնվածությունն ավելանում էր: ճիշտ է,

1980թ մետրոն շահագործման չիանձնվեց (հնարավոր չէր, ընթերցողը մյուս տարիների համեմատ 80-ի ծանրաբեռնվածությունից կեզրակացնի), սակայն դա մեր տրամադրությունների վրա բացասական ազդեցություն չունեցավ. չէ՝ որ 1980թ. կատարվեց ահռելի աշխատանք:

Ծանրաբեռնված աշխատանքը պահանջեց 1981թ հունվարի 3-ից ամբողջովին արգելել աշխատանքի ժամին մարդկանց վերելակից օգտվելը (բացառությամբ հերթափոխի ժամերին և արտակարգ դեպքերում): Այս հարցում առաջին օգնականը եղավ ուղղահայաց հորանի վերելակավար Մանուչակ Յակոբյանը: Նրա մեծ սրտացավորունը ժամանակի կորսուի վերացման ուղղությամբ (վերելակի ոչ նպատակային, հաճախ մարդկանց անտեղի տեղափոխությունը) նկատում էին բոլորը: Նրա բարի, շիտակ և խիստ բնավորությունը կարծեք աշխատանքի լավ կազմակերպման առաջին գրավականն էր, և պատահական չէր, որ նրան բոլորը հարգում, և կարելի է ասել, խոնարհաբար լսում էին: Ահա թե ինչու որոշեցի հենց առաջին օրից «հիմքը» լավ դնել. Մանուչակի հերթափոխի ժամանակից արգելել վերելակով մարդկանց տեղափոխելը: Եվ ինչպիսի՝ բարեխսղություն: Քանի որ իրեն էր վստահվել «առաջնեկը» լինել այս գործում, մյուս բոլոր հերթափոխություններից առաջ գալիս, վերելակի աշխատողների համար իրահանգավորում էր անցկացնում, քաղցր լեզվով ու կատակով էլ խիստ զգուշացնում էր իրենց պարտականությունները սրբորեն կատարել և գնում էր: Եվ մեկ օրվա ընթացքում հասարակ թվացող, բայց շատ կարևոր հարցը լուծվեց առանց աղմուկի, «ըմբռնումով», Մանուչակի մեծ օգնության շնորհիվ:

Մանուչակն էլ երևանի դարի հզոր կառույցում, աշխատանքն սկսել էր «զրոյից»: Նա 1976թ. Ախալքալաքից տեղափոխվել էր Երևան, անմիջապես աշխատանքի անցել արագընթացում և առաջին իսկ օրից աշխատել «Երիտասարդական» տեղանասում: Վերելակավարի հեշտ թվացող, բայց շատ պատասխանատու գործի ծեռնարկմանն օգնեցին 76-ին տեղանասի պետ Կ.Աղամյանը և հերթափոխի պետ Բ.Տոնոյանը: Տարիների ընթացքում Մանուչակ Յակոբյանն իր ճշտապահությամբ և կարգապահությամբ ծեռք բերեց օրինակելի աշխատողի համբավ և պատահական չէր, որ նա արժանացավ «Աշխատանքային արիության համար» մեդալի:

.. Ենշտ չէր 28մ ուղղահայաց իջնել կամ բարձրանալ օրվա մեջ Եր-

բեմն մի քանի անգամ, սակայն ինչպես երևաց, տեղին էր: Զրի հարցը էլ լուծված էր. ստորգետնյա ջրերը խմելու համար պիտանի էին:

Նոր տարվա աշխատանքային առաջին իսկ օրվա նպատակային քայլը եղավ Խորհրդային շրջանի հիմնարկ-ծեռնարկությունների ղեկավարներից խնդրել տեղամաս, օգնության ուղարկել որակյալ բանվորներ. ինչը կատարվեց մեծ բարեխղճությամբ: Անհրաժեշտությունը թելարեց վերանայել շրջանի կազմակերպությունների կողմից մետրոյի շինարարությանը մասնակցողների ցուցակը: Նպատակահարմարությունից ելնելով շրջանի տեխնիկունների պրոֆ. տեխնիկական ուսումնարանների սովորողների թիվը ոչ միայն ավելացվեց, այլև նրանց դասացուցակներում կատարվեցին փոփոխություններ մետրոյի շինարարության առաջին հերթին մասնակցողների համար, դասացուցակները փոփոխվեցին. նրանց ուսուցումը կազմակերպվեց նաև երկրորդ հերթին (նախկինում մեկ հերթափոխով էր): Արդյունաբերության, տրանսպորտային և այլ կազմակերպությունների կողմից մետրոյի շինարարության օգնությունն իրականացվում էր հիմնականում նրանց աշխատանքի ավարտից հետո: Ի դեպ, այս փոփոխությունները և մետրոյի աշխատանքներին մասնակցելը կազմակերպությունների կողմից իրականացվում էր բացարձակապես կամավորական սկզբունքով: Չորրորդ հերթափոխի գիշերը ժամը 2-ից մինչև առավոտյան 8-ը, աշխատանքներին օգնություն ցույց տալու ավելի գործնական ու հստակ բնույթ կրեց, ցուցաբերվեց ավելի բժանմունքում, հաշվի առնեց առաջին հերթի աշխատողների մեծ թվաքանակի առկայությունը և ծանրաբեռնված աշխատանքը: Հստակեցվեցին միլիշիայի երևանի սպայական ուժորոցի ունկնդիրների, համրապետության ներքին գործերի նախարարության հակակողեհային պաշտպանության աշխատողների, երևանի պետական համալսարանի, պոլիտեխնիկական ու Բրյուսովի անվան ուսուաց և օտար լեզուների հնատիտուտների ուսանողների աշխատանքները, հնարավորինս ավելացվեց մարդկանց քանակը: Կազմված նոր գրաֆիկի համաձայն բարձր պատասխանատվությամբ, առանց որևէ խափանման դեպքի, հունվար-փետրվար ամիսներին հիմնարկ-ծեռնարկություններից բանվորական ուժի մեջ օգնությունն իր որոշիչ դերը կատարեց: Փետրվարի երկրորդ կեսից այլ կազմակերպություններից գործուղվածների թիվը ավելացավ ...

Փետրվարի առաջին օրերն էին: Յետաքրքրություն առաջ եկավ անձամբ լինել կայարաններում, տեսնել գործերի առկա վիճակը: Այդ գաղափարին նպաստում էր այն, որ տեղամասով անցնելու էր շինանյութ տեղափոխող գնացքը և քանի որ կես ժամից նորից հետ էր վերադառնալու, որոշեցի գնացքով լինել մյուս տեղամասում:

«Դանրապետության հրապարակի» տեղամասը մտնելով ցավով զգացի, որ չնայած խիստ կազմակերպված և լարված աշխատանքին այստեղ դեռ շատ ու շատ անելիքներ կան: Դայտնի էր Դովիհաննես (Դովիկ) Գրիգորյանի խստապահանջությունը, գործին գիտակ լինելը և այս բոլորն օգնում էր յուրօրինակ դժվարությունների հաղթահարմանը...

Տեղամասում հրանները մաքրվում էին քար ու ցեխից, շինարարական աղբի մնացորդներից: Յորատողներն արդեն այլ աշխատանքներ էին կատարում թետոնապատճան վերջին հիմնականում պոմպակայանների ծածկի աշխատանքները: Դովիկն ասաց, որ աշխատանքներն իրականացնում էին կոմերիտական-երիտասարդական բրիգադի անդամները, որոնք տեղամասի լավագույն աշխատողներից էին:

Յորատող թետոնագործների կողքին աշխատում էին եռակցողներն ու մարմարագործները, ապարատավարներն ու էլեկտրամեքենավարները: Տեղամասի մարդիկ ավարտին էին հասցրել տասներորդ կամարի մարմարապատումը: Մարմարածածկ սրահում մննտաժվում էին էլեկտրական ջահերը, փորձարկվում էին շարժասանդուղընները մեխանիզմների հուսալիությունը ստուգելու համար:

Տեղամասում մայրաքաղաքի հիմնարկ-ծեռնարկությունների, գերատեսչությունների շատ աշխատողներ, ուսանողական շինարարական ջոկատների մարտիկներ մասնակցում էին թունելների մաքրման ու լվացման աշխատանքներին, կատարում այլև այլ հանճնարարություններ:

Դ.Գրիգորյանի հետ բարձրացանք վերգետնյա կայարանը: Շատ էի լսել «Երքիմշին» տրեստի հատուկ տնտեսաշվարկային շինարարական տեղամասի պետ Վահե Մանուկյանի մասին, որի մարդիկ կառուցում էին վերգետնյա կայարանը, Դովիկն էլ, նեռ վերև չքարձրացած ասաց, որ կայարանում Վահեի հայտնվելն ուղղակի փրկություն էր: Տեղամասի պետին ճարտարապետ Զիմ Թորոսյանը խորհուրդներ էր տալիս: Ներ Դովիկը չեր հասցրել ծանրթացնել Վահե Մանուկյանի հետ, երբ տեսավ,

որ մենք գրկախառնվեցինք: Կահեն եղրորս բաջանադն էր: Իրոք, հարս հպարտանալու տեղ ուներ, իսկ ես նոր իմացա, թե ում մասին էր խոսքը: Իրոք, Կահե Մանուկյանը փայլում էր որպես շինարար և կազմակերպիչ:

Մետրոպոլիտենի մյուս տեղամասերում բացարձակապես ուրիշ պատկեր էր, կարելի է ասել, աշխատանքների ավարտին օրեր էին մնում: Տեղամասերում նույնպես վերգետնյա աշխատանքներ էին կատարում: «Սասունցի Դավիթ» կայարանում գրեթե բոլոր աշխատանքներն արդեն ավարտվել էին, կարծես արդեն անցել էին «մշտական աշխատանքի»: Կայարանի պետք ցուցումներ էր տալիս կենտրոնացված պոստի հերթափակներին, օպերատորներին, գնացքն ընդունող և ճանապարհող հսկչներին: Վիճակը լավ էր նաև «Բարեկամություն» և «Մարշալ Բաղրամյան» կայարանների մետրոշինարարների մոտ: Տեղամասերում միակ աշխատանքը, որ դեռ չէր ավարտվել սանհիտարական մաքրությունն էր, որով զրադշում էին շինարարներին օգնող ուժեղը: Իսկ «Երիտասարդական» տեղամասում, որ «Դանրապետության հրապարակ» տեղամասից շատ ու շատ առաջ լինելով՝ անհրաժեշտ էր, դեռևս ոչ պակաս, քան մեկ ամսվա քրտնաջան աշխատանք ...

Մետրոպոլիտենի շինարարությունը ժողովրդական կառույց էր, իսկ դա նշանակում էր, որ մայրաքաղաքի աշխատավորական կոլեկտիվներն ակտիվորեն էին մասնակցում ստորգետնյա մայրուղու աշխատանքներին, ամեն կերպ աջակցում, օգնում աշխատանքների հաջող ավարտին: Միայն «Երիտասարդական» տեղամասում (նաև մետրոպոլիտենի շինարարության մյուս տեղամասերում), 1980թ. և 1981թ հունվարից, մինչև մարտի 7-ը յուրաքանչյուր հերթափոխում օրական հարյուրավոր երևանցի բանվորներ և ծառայողներ, ուսանողներ և պրոֆետեխնիկական ուսումնարանների սաներ ակտիվորեն մասնակցում էին մետրոպոլիտենի շինարարությանը իրենց անձնվեր աշխատանքով համեստ ներդրում ունենալով մայրաքաղաքի առաջին ստորգետնյա մայրուղու ստեղծման գործին:

Յիշողության մեջ վառ է մնացել հանրապետության ներքին գործերի նախարարության համակարգի աշխատողների, միլիցիայի կրտսեր հրամկագնի դպրոցի կուրսանտների, իրշեց պահպանության աշխատողների հայրենանվեր, ջանասեր և քրտնաջան աշխատանքը: Մետրո-

պոլիտենի շինարարության վերջին մեկ տարվա ընթացքում նրանցից օրական թվով 400 մարդ մասնակցում էին մայրուղիների կառուցմանը և մասնավորապես «Երիտասարդական» տեղամասում, որտեղ օրական աշխատում էին 200 մարդ: Այլ կերպ ասած, ծանր ֆիզիկական և հրատապություն պահանջող գործերը վստահվում էին այս շինողկատներին: Նրանց կողմից հատկապես շինարարության թեժ ժամանակահատվածում միայն մեր տեղամասում ամսական կատարվում էին 60-80 հազ. ուրելու աշխատանքներ:

Տեղամասում աշխատելուս առաջին օրը ծանոթացա Երևանի միլիցիայի սպայական դպրոցի կոմիսար Էդվարդ Ալեքսանի Մնացականյանի հետ, որին նախարարը հանձնարարել էր ոչ միայն իր դպրոցի սաների աշխատանքների, այլև նախարարության ստորաբաժանումների և մյուս կազմակերպությունների գործունեության կողրդինացման գործի ղեկավարումը: Նրա մասին դեռ Երքաղկոնում իմ աշխատանքային ընկերը՝ Ռոբերտ Ստեփանյանը, (այսօր աշխատում է որպես տուրիզմի, երսկուրսիաների հանրապետական խորհրդի նախագահ) մեծ ակնածանքով էր հիշում խամ և խոպան հողերում հանրապետության կոմերիտականների, երիտասարդների ուժերի նորիլիզացման գործում նրա կատարած մեծ աշխատանքի մասին: Դայրենական պատերազմի մասնակիցը, 50-ականներին ՀԼԿԵՄ Կենտկոմի երկրորդ քարտուղարը այդ ժամանակ ղեկավարում էր խամ և խոպան հողերի յուրացման համար հանրապետությունից գործուղված մարդկանց աշխատանքը: Յետագայում կուսակցության շրջկոմի քարտուղարի, հանրապետության գերագույն դատարանի կոլեգիայի անդամի, պատասխանատու այլ աշխատանքների բովով անցած մարդուն հանձնարարվել էր նորիլիզացնել և 4 հարյուրավոր աշխատողների մետրոպոլիտենի շինարարությանն օգնելու համար: Էդվարդ Ալեքսանդրովիչին կտեսնեիր միշտ ստորգետնյա աշխատանքների ամենաքեժ տեղերում, ուր կատարվում էին ամենապահանատու աշխատանքները: Իրոք, երջանկություն է հանդիպել նաև պարզ ու հասարակ, խիստ և հոգատար ղեկավարի: Բարձրահասակ և լայնաթիկունք, ուրախ հայացք և քարեհամբույր տեսք ուներ Էդվարդ Մնացականյանը: Նրա անունը հատկապես հարազատ էր «Երիտասարդական» տեղամասի աշխատողներին, ուր նրա օգնությունը զգացվում էր յուրաքանչյուր քայլափոխում:

Այժմ շատ հակիրծ կանգ առնենք Երևանի մետրոպոլիտենի շինարարությունում հանրապետության ներքին գործերի նախարարության աշխատողների կատարած անգնահատելի գործերին: Միլիցիայի տասնյակ աշխատակիցներ արդեն չորրորդ տարին էր հերթապահությունից հետո ազատ օրերին մետրոպոլիտենի տարբեր տեղամասում աշխատում էին որպես հորատողներ, ամրանագործներ և այլն: 1980թ. նոյեմբերին միլիցիայի ավելի քան 800 աշխատողներ ևս դիմեցին ՆԳ նախարարության ղեկավարությանը Երևանի մետրոպոլիտենի շինարարության աշխատանքներին մասնակցելու խնդրանքով: Ավելի քան 400-ական աշխատակիցներ 1980թ. նոյեմբեր-դեկտեմբեր և 1981թ. հունվար-փետրվար ամսներին մետրոպոլիտենի շինարարության կաղորային բանվորների հետ աշխատեցին հիդրոերկրարանական դժվարին պայմաններում ցուցաբերելով բարձր կազմակերպվածություն և կարգապահություն: Նրանց ուժերով կատարվեցին շինմոնտաժային աշխատանքներ, տեղադրվեցին մետրոպոլիտենի հիմնական գծերի ավելի քան մեկ կիլոմետր ռելսեր: Մեծ աշխատանք կատարվեց 4 կմ գծամասի բետոնապատճն գործում: Բարձրվեց և վեր հանվեց հարյուրմվոր խորանարդ մետր շինարարական աղբ, հորատվեցին և ընդլայնվեցին կայարանամուտքերի անցուղիները: Բետոնապատվեց 2 կմ գծամաս, բարձրվեց և վեր բարձրացվեց հարյուրավոր տոննա մետաղի ջարդոն: Թունելախորշում կառուցվեց 2.5 կմ բետոնապատ ծառայողական անցուղի, մաքրվեցին 7կմ դրենաժային առուներ: Յայկական ՍՍՀ ներքին գործերի նախարար, միլիցիայի գեներալ-մայոր Ե.Պատալովին ուղղված շնորհակալական նամակում «Դայթունելշին»-ի վարչության պետ Լ. Դարությունովը գրում է. «ԴՍՍՀ ՆԳ աշխատակիցները, ցուցաբերելով հայրենասիրական նախաձեռնություն, գործնական շեֆական մեծ օգնություն ցույց տվեցին Երևանի մետրոպոլիտենի I-ին հերթի շինարարությանը»:

Շինարարական ջոկատի անդամների մեծ մասը միլիցիայի շարքային և կրտսեր հրամկազմի դպրոցի սաներ էին: Անձնուրաց աշխատանքի համար նոյեմբեր ամսին խրախուսվեցին միլիցիայի ավագ լեյտենանտ Խ.Ավետիսյանի, միլիցիայի կապիտան Ա.Բրուտյանի, միլիցիայի լեյտենանտ Վ.Միխայիլովի, միլիցիայի կապիտան Ժ.Աբելյանի բրիգադ:

1980թ. դեկտեմբերին մեր «Երիտասարդական» շինտեղամասում իրենց լավագույն աշխատանքով աչքի ընկան միլիցիայի ավագ լեյտենանտներ Օ.Անոյանի և Խ.Ավետիսյանի դեկավարած հերթափոխությունները: Առանձնապես լավ աշխատեցին Երևանի ՆԳ վարչության միլիցիայի աշխատակիցներ Գրիգոր Նիկողոսյանի, Վալերի Ղարիբյանի, գերատեսչության ստորաբաժանման աշխատակիցներ Բարկեն Սահակյանի, ժորա Կարապետյանի, Աշոտ Մանուկյանի, Երևան քաղաքի հրշեց ստորաբաժանման նարտիկներ Աշոտ Միքայելյանի, Արտյուշ Կոստանյանի, Ջակոբ Բոյաջյանի, Դանիել Մկրտչյանի հերթափոխային խմբերը: Մետրոյի «Դանրապետության հրապարակ» տեղամասի գիշերային հերթափոխության աշխատանքին մասնակցում էին նաև միլիցիայի սպայական դպրոցի սամերը:

1981թ. հունվար ամսին աշխատանքային լավագույն օրինակ ցույց տվեց միլիցիայի մայոր Յ.Նազարյանի դեկավարած բրիգադը: Կոլեկտիվը 50 անդամով 5 օրում քանդեց և տեղափոխեց ավելի քան 100 խմ. արդեն կարծրացած երկարքետոնե թափոն: Նոյն ամսում շնորհակալ աշխատանք կատարեց ՆԳ վարչության ստորաբաժանումների միլիցիայի շինբրիգադի 50 հոգուց բաղկացած կելեկտիվը: Արբուր Բլրույանը, Սարգս Գասպարյանը, Ռաֆիկ Վարդանյանը, Թոոնիկ Սարիբեկյանը և նրանց գործընկերները մեծ օգնություն ցույց տվեցին «Դայկելստրամոնտաժ» կազմակերպության մասնագետներին մետրոպոլիտենի կայարանների լուսավորության, կաբելային ցանցի, մետաղյա կոնսորտիուկցիաների մոնտաժման աշխատանքներում:

«Մարշալ Բաղրամյան» կայարանի շինտեղամասում հունվարին լավ աշխատեցին միլիցիայի մայոր Մարտին Առաքելյանի դեկավարած բրիգադի անդամները, Ռազմիկ Ջարությունյանը, Անդրանիկ Բարսեղյանը, Սեդրակ Սահակյանը, Կնյազ Ջամբարձումյանը:

Մուկվայից Երևան մետրոպոլիտենի շինարարությանն օգնության եկած ինժեներ Ա.Տիտովսկին և մյուս աշխատակիցները հիացմունքով էին խոսում Լենինական քաղաքի ՆԳ վարչությունից միլիցիայի շարքային և կրտսեր հրամկազմի դպրոց վերապատրաստման եկած միլիցիայի սերժանտ Արամ Մանուկյանի դեկավարած 12 հոգուց բաղկացած բրիգադի անդամների մասին: Մասնակցելով մետրոպոլիտենի շինարարությանը օրվա իրենց աղաջադրանքները նրանք կատարեցին 150

տոկոսով: 1981թ. փետրվարից մետրոյի «Երիտասարդական» կայարանի շինտեղանատում քրտնազան աշխատանքներ կատարեցին Երևան քաղաքի ՆԳ վարչության պահակապարեկային ծառայության ստորաբաժանումից միլիցիայի դպրոց վերապատրաստման եկած Սաշա՞՛Աֆյանը, Թաթոս Բագոյանը, Եղիկ Մինոնյանը, Երևանի ջրմուղի պահպանան ջոկատի միլիցիոներները, Կիրովականից, Սևանից և հանրապետության այլ ՆԳ բաժիններից գործուղված բազմաթիվ աշխատակիցներ:

Այս, արժե դրվատանքի խոսք ասել միլիցիայի այն աշխատակիցների մասին, ովքեր իրենց հիմնական ծառայությունը կատարելու հետ մեկտեղ ջանք չխնայեցին ակտիվորեն մասնակցելու մայրաքաղաքի մետրոպոլիտենի շինարարության շնորհակալ գործին: Նրանց աշխատանքը նաև լավագույն օրինակ էր միլիցիայի շարքերը համալրած Երիտասարդ աշխատակիցներին:

Եվ ինչպես ասվեց այս աշխատանքների կազմակերպման գործին միշտ, օր ու գիշեր, անքուն գիշերներ անցկացնելով, կանգնած էր Երևան քաղաքի մետրոպոլիտենի կառուցմանն օգնության եկած ՀՍՍԴ ՆԳն շինարարական ջոկատի հրամանատար, ՀՍՍԴ ՆԳն քաղդաստիարակչական աշխատանքի բաժնի պետը միլիցիայի գնդապետ Եղվարդ Մնացականյանը, մարդ որի գործը տեսանելի էր Երևանի մետրոպոլիտենի շինարարության բոլոր տեղամասերում, և նա այն փոքրաթիվ մարդկանցից էր, որն իր ծանրակշիռ հետքը թողեց Երևանյան հազվայության շինարարական կառույցում:

Երևանի մետրոպոլիտենի շինարարությունում հայրենանվեր գործ կատարեցին նաև, ինչպես արդեն ասվել է, մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները: Չեմ կարող նորանալ մի դեպք, որը առիթ եղավ ավելի ուշադիր լինելու ուսանողների նկատմամբ մետրոպոլիտենի շինարարությունում և բարելավելու նրանց աշխատանքները:

1980-ի ձմեռը ցրտաշունչ էր, հետևաբար ստորգետնյա և հատկապես թունելներում քամիներն ավելի էին դժվարացնում նորմալ աշխատանքի ապահովումը: Ուսանողների դեկավարներին ասվել էր, որ առանձնահատուկ ուշադրություն դարձվի նրանց տաք հագնելու վրա, որի նկատմամբ խիստ հսկողություն էր սահմանվում: Սակայն պարզ-

վեց, որ ավելի վտանգավոր և դժբախտ դեպքեր կարող էին լիներ: Երրորդ հերթի ավարտից հետո հիմնական աշխատողներից մեկը, մոտենալով ինձ, տեղեկացրեց, որ ուսանողներից ոնանք չեն կարողանում գիշերը դիմանալ անքնությանը և գաղտնի, աչքից հեռու գնում և քնում են թուցեավանակների մեջ (դա բառակուսի կափարիչի տեսք ունի մեկական մետր և ավելի մեծ չափերի): Միազնագը ցնողությունը բավական էր որևէ մեկը երկու ժամ նման ցուրտ քանու տակ քնի, պարզ էր դրա հետևանքը: Մինչդեռ ուսանողները 18-21 տարեկան Երիտասարդներ էին: Գիշերը ժամը 2-3-ի միջև ընկած ժամանակահատվածում հանդիպեցի նման մի դեպքի: Այս օրն ինչ-որ պատճառով բացակայում էր շինուազատի դեկավարը: Մինչև առավոտյան նոր հերթափոխի գալը, տարբեր հատվածներում աշխատող տղաների մոտ էի գնում, առաջարկում, համոզում, որ ժամանակից շուտ աշխատանքները վերջացնեն և տուն գնան: Ոչ մեկը չիանածածնվեց: Դրանից խիստ սրավիշեցին: Սակայն Երևանյան ընթացք տալ էր պետք, անհետևանք թողնելը հետագայում վատ հետևանքների պատճառ կարող էր դառնալ:

Կուսկոմիտեների քարտուղարներին խնդրեցի առավոտյան տեղամաս ուղարկեն մեզ մոտ աշխատանքի մեջ ընդգրկված ԲՈՒՆ-Երի ֆակուլտետների դեկաններին, շինուազատների դեկավարներին: Ներքից նոր էի վեր բարձրացել, մինչև պայմանանավորված ժամը դեռ կես ժամ կար, աչքերս նոր էի փակել... Յանկարծ դուռը բացվեց և ցածրածայն, շշուկով, թե «... ծայս մի բարձրացրեք, նոր է եկել ներքեկից»: Նստածն տեղից վեր թռա: Միգուցե այդ անքուն գիշերը և ընկերական խիստ խոսկցությունն շրջադարձային եղավ: Դրանից հետո միայն խիստ կամավորական սկզբունքով և անհրաժեշտ հսկողության պայմաներում կազմկերպվեց ուսանողների աշխատանքը 3-րդ և 4-րդ հերթերին:

Խորհրդային շրջանի բոլոր կազմակերպություններն եւ փայլեցին իրենց հայրենանվեր վերաբերունքով և սրտացավ մոտեցմանը: «Երիտասարդական» տեղամասի ամեն մի օղակում, ուր պահանջվում էր օժանդակ բանվորական ծեռք, սրտացավորեն աշխատեցին շրջանի հիմնարկ ծեռնարկությունների կոլեկտիվները: Սակայն նրանցից առանձնացվեցին մարդիկ, կոլեկտիվներ, որոնց հնարավոր չէ մոռանալ: Նրանք դարձան մետրոշինարարների ներ օրվա լավ ընկերները: Խոսենք նրանցից մի քանիսի մասին:

Ըստ պայմանավորվածության շրջանի կազմակերպությունների կոլեկտիվները ժամանակից շուտ գալիս էին տեղանաս: Նրանցից առանձնացվեցին կոլեկտիվներ, որոնք կազմակերպված, առանց ինձ տեղյակ պահելու գալիս էին տեղանաս, խնդրում իրենց ուժերն օգտագործել ամենակարևորագույն հատվածներում: Նրանցից էր «Հայարդկապ» արտադրական միավորման կուսկազմակերպության քարտուղար Յայկ Վշտունին, որը հատկապես մետրոյի շինարարության ավարտի վերջին ամիսներին գրաֆֆիկից դուրս կազմակերպում էր Զրվեծի բանավանից ավտորուսներով 3-րդ հերթափոխի աշխատողներին տեղանաս բերելը և նրանց աշխատանքների հստակ դրվագը: Նույն պատկերն էր Երևանի շինարարական, ինդուստրիալ մանկավարժական և կոռուպտատիվ տեխնիկումների կոլեկտիվներում, տնօրեններ Ուրբերտ Խաչատրյանի, Ռոբերտ Հովսեփյանի և Լեմս Տիտանյանի զլասվորությամբ: Մետրոյի տեղանասի բոլոր աշխատողների համար տեսանելի էր Երևանի ֆինանսատնտեսագիտական տեխնիկումի կոլեկտիվի դրական աշխատանքը: Տնօրեն Մելք Թորգոնյանը ևս մեծ պատասխանատվությամբ և բարեխողորեն էր վերաբերվում տեղանասին օգնելու հարցին: Տեխնիկումի կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Արաքելյանը, հատկապես մետրոյի գործարկման նախօրենին, գրեթե ամեն օր, գրաֆֆիկից դուրս 25-50 ուսանողների հետ գալիս էր տեղանաս: Մետրոշինարարները կարծես նրա զալուն էին սպասում և խնդրում էին, որ հատկապես այդ տեխնիկումի ուսանողներից, որպես օժանդակ բանվորներ, տան իրենց տրամադրության տակ: Բոլորի համար Ուրբերտը դարձել էր սիրելի և հոգատար ընկեր, բացի մեկից ... Մետրոյի շինարարության ավարտի վերջին օրերին, տեղանաս էր գալիս ՀՍՄ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Յանն Հայրապետյանը: Մի օր էլ, երբ Ուրբերտը ուսանողներին հանձնարարություն էր տալիս, Յանն Արամիչն ինձ մոտենալով վլորվված ասաց, թե արդեն որերորդ օրն է, ինչ հերթափոխի ինժեները միայն մի խումբ մարդկանց է հանձնարարություն տալիս և նրանց կողքից չի հեռանում, փոխանակ արագ կերպով հետևի նաև մյուս բրիգադների աշխատանքներին: Հայտնեցի, որ նա ֆինանսատնտեսագիտական տեխնիկումի կուսկազմակերպության քարտուղարն է... Նշված ընկերները և շատ ու շատ ուրիշներ իրենց հայրենիքն, ազ-

գին ծառայելու զգացումից դրդված վճռական օրերին մեծ նվիրումով օգնեցին մետրոյի շինարարական ամենածանր տեղամասին: Առանց շափազանցության, մեծ եղավ խորհրդային շրջանի աշխատավորական կոլեկտիվների կողմից բանվորական ուժով մետրոպոլիտենի աշխատանքներին օգնելու ավանդը «Երիտասարդական» տեղանասին օժանդակ բանվորական ուժով ապահովելու գործում: Քերենք մեկ օրինակ, որի ամփոփ պատկերով կերևա շրջանի կազմակերպությունների կողմից մետրոյի շինարարությանը ցույց տրվող անհրաժեշտ օգնությունը:

Մետրոյի շինարարության ընթացքում հաճախ զգացվում էր շինարարական որոշ գործիքների, մեխանիզմների պահանջ: Այս առումով ոչ մի անգամ «Երիտասարդական» տեղանասը նեղության մեջ չեղավ: Հատկապես արդյունաբերական, շինարարական կազմակերպությունները միշտ պատրաստակամ օգնում էին նման հարցերում: Հիշում եմ, շտարի հիստերին, երբեմն խնդրվել է շրջանի դեկավարներից իրենց կազմակերպությունների միջոցով օգնել շինարարներին այս կամ այն սարքավորումներով, մեխանիզմներով, գործիքներով և այլն: Նման դեպքերում միշտ հանդիպում էի Վոլոյյա Ավետիսյանի քմիջօնով հայցքին: Նման հարցեր մեր տեղանասի համար երբեք չեն բարձրացվել, ծառացած բոլոր հարցերը շատ արագ և ժամանակին լուծվել են խորհրդային շրջանի հիմնարկ-ծեռնարկությունների կողմից: Շինարարության ողջ ընթացքում և հատկապես ավարտի վերջին ամիսներին աշխատանքային ճակատ ստեղծելու համար անհրաժեշտություն էր զգացվում գողման ապարատների թվաքանակի ավելացումը: Արխիվային նյութերն ընթերցելիս, պարզ նկատվում է թե վերջին ամիսներին այս հարցի վրա ինչպիսի առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում շտարի նիստերում: Մեր շրջանի շատ կազմակերպությունների դեկավարների, հատկապես «Հայարդկապ», «Ալմագ», Տեխնոլոգիական սարքավորումների արտադրական միավորումների, «Մասիվ», «Նորք» գործարանների զլասվոր տնօրեններ Յայրիկո Միրզոյանի, Կարմելիս Միտոյանի, Ֆելիքս Պարոնյանի, տնօրեններ Յովի Մելքոնյանի, Կառլեն Խլաթյանի, շրջանորդի գործկոմի շինվերանորդման վարչության պետ Զավեն Պետրոսյանի սրտացավ մոտեցումների շնորհիվ երբեք այդ ապարատի պակասը զգացինք: Հիշում եմ, տեղանասում շին-

մոնտաժային վարչության պետերից մեկը մոտեցավ և խնդրեց տեղամասի համար ծեռք բերել երկու զողող ապարատ: Դրանից քիչ առաջ Վոլոյյա Ավետիսյանի հետ տեղամասուն կազմակերպություններից ծեռք բերած ապարատների պահպաննան մասին էր խոսք գոնում: Վոլոյյան նայելով ինձ, քննիչների պահպաննան մասին էր խոսք գոնում: Վոլոյյան նայելով ինձ, քննիչների պահպաննան մասին էր խոսք գոնում: Վոլոյյան նայելով ինձ, քննիչների պահպաննան մասին էր խոսք գոնում: Վոլոյյան նայելով ինձ, քննիչների պահպաննան մասին էր խոսք գոնում:

Տեղամասի շինարարական աշխատանքներին օգնություն ցույց տալու գործում հատկապես մեծ էր շինարարական աշխատանքների ավտոմատացման տրեստի կառավարիչ էղուարդ Մարկոսյանի օգնությունը: Կրժանի է հիշատակել մի դեպք: Մոտենում էր մետրոյի շինարարության ավարտը: Ստորգետնյա կայարանի 103մ երկարությամբ կառամատույցի վերջնամասում հատկահի մինչև առաստաղ՝ աջ ու ձախ սպասարանների միջև ընկած հատվածը կարկասով պետք է անջատվեր, ինտեկ մասում օժանդակ սպասարկման կառույցներ իրականացնելու համար և կարկասի երեսի ողջ հատվածում պետք է ամրացվեր «երիտասարդություն» պատկերող գիպսից պատրաստված քարեւեֆո, որը պարզ է, թերև, սակայն երկաթե ծողերով ամրացված, գիպսով ծևավորված պատկերներ էր (1մx1մ, երբեմն ավելի մեծ կտորների մասերով), դրանք պետք է հավաքեին զողման եղանակով: Կառամատույցի վերջնամասի «պատ» հասկացությունը սահմանափակված էր դեպի վերև և կողքեր ձգվող ծողերով, որոնց վրա պետք է հավաքվեր և շունչ առներ ողջ պատկերը (այցելուների գնահատմամբ այն մետրոպոլիտենի ամենահաջող գործերից մեկն է): Տասնյակ գիպսե մասերը տեղափոխվեցին կառույցների ստորգետնյա սկզբնամասը (հեղինակն է ճարտարապետ Մտեփան Քյուրքյանի կինը, տիկին Ռուզաննան): ճարտարապետը դիմելով ինձ, խնդրեց արագ կազմակերպել դրա հավաքման գործը: Խոսակցությունը ավարտելուց հետո պատահաբար եկավ այդ գործի հետ առնչվող դեկավարը քանդակագրործական կոմբինատի տնօրենը: Դիմելով նրան, խնդրեցի աշխատանքներն այնպես կազմակերպել, որ պեսզի մի քանի օրվա ընթացքում ամրողությամբ ավարտվեն քարեւեֆո մասերի հավաքման (զողման միջոցով) աշխատանքները: Ընթերցողը թող ների, գրած չիամարի անհամեստության, գրվելու է այնպես,

ինչպես եղել է: Տնօրենը շատ նեղացած դիմեց ինձ, թե «ընկեր Գևորգյան, ինչ է, ինձ ձեռ եք առնում, չե՞տ որ ես կոնքինատի տնօրեն եմ, բա կարելի է այս դժվար գործը մի քանի օրվա մեջ ավարտել»: Աշխատանքների ավարտին հաշված օրեր էին մնացել և նման անակնկալ ... Մի կերպ ինձ զապելով հարցրեցի, թե քանի օր է անհրաժեշտ այս գործը ավարտելու համար: Պատասխանը եղավ մեկից մեկ և կես ամիս: Ուրիշ ասելիք չունեի, ամեն ինչ պարզ էր, խնդրեցի ինձ ծանոթացնել մասնագետի հետ:

Թիշտ է ասվում, որ յուրաքանչյուր մարդ իր գործով պետք է գրադվի, այլ կերպ «ամենագետները» կսիփեն դիմացինին շարժվել իրենց քնահաճույքով: Արտադրության մեջ աշխատանքային փորձս այս անգամ էլ չդաշվաճնեց:

Մասնագետի, որակյալ բանվոր Պետիկ Բերբերյանի հետ խոսակցությունը տեղի ունեցավ փետրվարի առաջին օրերին ժամը 14-ի կողմերը: Իմ այն հարցին, թե մինչև այսօր ժամը 24-ը երկաթ կարկասին բարելիեֆի մասերը ամրացնելու, աշխատանքներն ամբողջությամբ ավարտելու համար քանի զողող բանվոր է անհարժեշտ, պատասխանեց երկու գորոդ և տաս օժանդակ բանվոր: Պատասխանեցի կտրվի 4 գորոդ և 20 օժանդակ բանվոր:

Մեկ ժամվա ընթացքում եղուրադ Մարկոսյանն անձանք 4 զողման ապարատով և մասնագետներով եկավ տեղամաս: Անմիջապես այդ աշխատանքներին տրամադրվեց 20 օժանդակ բանվոր: Անհարժեշտությունից և պատասխանատվությունից ելնելով Կարեն Աղամյանին խնդրեցի տեղամասի բոլոր հարցերով ինքը գրադվի և ոչ մեկը որևէ հարցով ինձ չխանգարի ու սկսեցի գրադվել միայն այդ գործով: Ընդմիջումներով ժամը 24-ին վարպետ Պետիկն աշխատանքների չորս հինգերորդ մասն արդեն ավարտել էր: Խնդրեց գնալ տուն, հանգստանալու՝ առավոտյան 2 ժամվա ընթացքում այն ավարտելու խոստումով: Արդեն ամբողջությամբ քարելիեֆը հավաքվել էր, երբ իմ զանգով կոմքինատի տնօրենը եկավ տեղամաս: Տեսավ, որ ողջ աշխատանքն ավարտված էր: Նրան ասացի: «Ուրեմն քո գործունեությունն այսպես է ընթանու՞մ»: Կոմքինատը մեր շրջանի կազմակերպություններից էր: Այդ դեպքն էր պատճառը, թե այլ հանգամանք, այնպես էլ չիմացա, միայն ասեմ, որ մետրոյի շինարարությունից վերադառնալով իմ մշտական աշխատան-

քին, տեղեկացա, որ կոմբինատի տնօրենը տեղափոխվել էր այլ աշխատանքի:

...Մետրոպոլիտենի շահագործման ավարտի շեմին, նոտ 10 օր առաջ, բացի խորհրդային շրջանի կոլեկտիվների գրաֆիկով նախատեսված մասնակցությունից, անհրաժեշտություն զգացվեց դիմել խորհրդային շրջանի շրջտորհրդի գործկոմի բնակչահագործման տեղամասերի, այլ կազմակերպությունների օգնությանը ստորգետնյա և վերգետնյա ողջ տարածքները, կառանատույցները և այլ տարածքներն, անհրաժեշտ սահմանական տեսքի բերելու, սալահատակված մարմարե, գրաֆիտե հատվածները շատ նրբուեն մաքրելու, ստորգետնյա կայարաններին հարող աջ ու ձախ բունելների տարածքները շինարարական աղբից ծերազատելու համար:

Այս գործին մեծ բարեխղությամբ մասնակցեցին բոլորը, սակայն անհնարին է նորանալ երկու կազմակերպությունների ամենօրյա և խիստ լարված աշխատանքները: Գործկոմի ընթացիկ վերանորոգման գրասենյակի աշխատողները վերջին ավելի քան մեկ ամսվա ընթացքում տեղամասի աշխատողներին ապահովեցին բահերով և պատզարակներով: Այս հարցով անձամբ զբաղվում էր գրասենյակի ղեկավարը Ռաֆիկ Սեղրակյանը և զիսավոր ինժեներ Ֆելիքս Միսկարյանը: Այդ նույն ժամանակահատվածում շրջանի սանձաքրման գրասենյակի աշխատողները՝ 70-80 հոգով տնօրեն Քրաչիկ Գևորգյանի զիսավորությամբ յուրաքանչյուր հերթափոխում մաքրում էին ավելի քան մեկ կա երկարությամբ ընթացքային բունելները (տեղամասին հատկացված հատվածը), իսկ վերգետնյա և ստորգետնյա կայարանները, դրանց սալահատակները ուղղակի փայլեցրին: Բոլորն էլ աշխատում էին մեծ ջանահրությամբ նման բարեխղում մոտեցում, քիչ եմ տեսել: Իսկ տնօրեն Քրաչիկ Գևորգյանն իր սրտացավ և բարյացկան վերաբերմունքով, պահանջկոտ մոտեցմամբ դարձյալ իր բարձրության վրա էր:

\*\*\*

... 1981թ մարտի 7-ն էր: Ժամը 12-ին «Բարեկամություն» կայարանում տեղի էր ունենալու երկանի մետրոպոլիտենի հանդիսավոր բացումը: Չնայած գերիոգնածությանս, չկարողացա հանգիստ քննել: Առավոտյան ժամը 8-ին «Երիտասարդական» կայարանում էի: Ստորգետն-

յա տեղամասի տարրեր հատվածներում լինելուց հետո շարժասանդուղով բարձրանում էի, երբ նկատեցի, որ վերգետնյա կայարանի սպասարակում, շարժասանդուղքի սկզբնամասի մոտ կանգնած վեր էին նայում ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի մետրոպոլիտենի շինարարության շտաբի ղեկավարները Երքաղկոմի առաջին քարտուղար Լեռնիդ Ներսիսյանը, ՀՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Ջրան Ջայրապետյանը և Երքաղիտորհրդի գործկոմի նախագահ Մուրադ Մուրադյանը: Լեռնիդ Ներսիսյանը տեսնելով ինձ հարցուց, թե ինչպես կարող ենք արագորեն հեռացնել առաստաղից կախված 2 մետրանոց այս ծողը: Ընթերցողը թող պատկերացնի թնդանորի փողի պատկեր ունեցող շարժասանդուղքի հենց սկզբնամասում կախված էր այդ ծողը: Ըստ ճարտարապետ Ստեփան Քյուրքչյանի նախագծի, ինչպես ասվել է Վերը, պետք է կախվեր արբանյակի տեսքով երկար ճարտարապետական յուրօինակ լուծում ստացած «հիթիոը»: Յովս ունենալով, որ մետրոյի շահագործումից հետո «հիթիոը» կպատրաստվի, ծողը թողնվել էր: Իսկ ինձնից հարցնում էին, թե ինչպես արագ կերպով այն վերացվի, այլայն կարեն Ղեմիրճյանի ծեռքից պրծում չի լինի: ... Յակահրդեհային մեքենայի օգնությամբ, շրջանից բերված ապարատի միջոցով այն կտրվեց և առաստաղն արագ սպիտակեցվեց: Լեռնիդ Ներսիսյանը մի քանի թերություններ ևս նկատել էր, որոնցից մի քանիսը ես աչքաբող էի արել: Այս բոլորը մեկ ժամվա ընթացքում, շրջանի շինվերանորոգման վարչության պետ Զավեն Պետրոսյանի ղեկավարությամբ, վարչության բանվորներն արագ վերացրին: Առաջ անցնելով ասեմ, որ մետրոպոլիտենի բացման արարողությունից հետո, հանարապետության ղեկավարությունը, հերթով լինելով մետրոյի կայարաններում, եղավ նաև մեր «Երիտասարդական» կայարանում: Ինչ խոսք, այդ օրը կարծեք նոր հմայք էր ստացել «Երիտասարդական» կայարանը և, ըստ իս, մեծ հետաքրքրությամբ ու մանրամասնորեն զննեցին ճարտարապետական մտահղացումները:

Լեռնիդ Ներսեսիչի խիստ և հսկող աչքից չէին վրիպել ժամ առաջ տրված հանձնարարությունները: Մոտենալով ինձ, սեղմեց ծեռու ժամանով, ջերմ ու բարեհանքույր տեսքով դիմեց ինձ. «Ապրես, Ուուիկ ջան, շատ հաջող կատարել ես բոլոր հանձնարարությունները»: Առաջին անգամ այդ խիստ ու պահանջկոտ մարդու բերանից «ջան» բառը

լսեցի: Մետրոպոլիտենի աշխատանքների բոլոր մասնակիցներն այսօր հիշում են, որ շատ գործնական քայլերի հետ մեկտեղ Լեռնիդ Ներսիսյանի խառությունն ու պահանջկոսությունն իր վճռորոշ դերն ունեցավ։ Բոլորս էլ անսահման երջանիկ էինք։

Այս և անհամբեր սպասումի երկար օրերի մնայուն և հավերժ հետք քողոնոյ և մեկ տարեգործություն։ 1981թ. մարտի 7-ից կամոնավոր աշխատանք պետք է կատարեր Երևանի մետրոպոլիտենը։

Մեր մայրաքաղաքի համար դա խոշոր իրադարձություն էր, որը մեծ ուրախություն և ոգևորություն էր առաջացրել Երևանի աշխատավորության, ողջ բնակչության շրջանում։

Մենք, Երևանցիներս, կարծես արդեն ընտելացել էինք այն բանին, որ մայրաքաղաքում մեկը մյուսի հետևից շահագործման էին հանճնվում ինքնատիպ, հոյակապ խոշոր կառույցներ և դրանք դիտվում էին որպես սովորական, առօրյա աշխատանքի արդյունք։

Սակայն մետրոպոլիտենի շահագործումը չէր կարող չհուգել յուրաքանչյուր բնակչի։ Ինչպես հայտնի է, մետրոպոլիտենը փողոցային հասարակական տրանսպորտ չէ։ Այն լիովին հուսալի է և անկախ փողոցային երթևեկության ցանցի վիճակից, եղանակից, ուղևորների փոխադրումը կատարվում է ժամում 35-40կմ արագությամբ, վերգետնյա տրանսպորտի 16-17կմ ժամ արագության փոխարեն։

Դժվար է նկարագրել, թե ինչ էր տեղի ունենում Երևանում։ Չափ ու սահման չկար մարդկանց, հատկապես ստորգետնյա կյանքին տարիներ շարունակ ընտելացած մետրոշինարարների ուրախությանը։ Հայաստանի մայրաքաղաքը տոնական հանդերձանքի մեջ էր։ Տարած երջանկություն ինծ վիճակվել է ապրել առաջին անգամ (որն անհամեմատելի է որևէ ուրախության հետ) 1945թ. մայիսի 9-ին, երբ ռադիոյով հաղորդվեց պատերազմի հաղթական ավարտի մասին, երկրորդ անգամ՝ 1968թ. ամռանը, երբ տոնվում էր Երևանի 2750-ամյակը (ողջ օրը, մինչև առավոտ մայրաքաղաքի կենտրոնական հրապարակը լեփ լեցուն էր, մարդկանցով, տասնյակ խմբերով «քոչարի» էին պարում) և երրորդ անգամ 1981թ. մարտի 7-ին, երբ կենտրոնական փողոցներով գուրնա դիուլ մարդիկ բռնել էին մետրոպոլիտենի «Քարեկամություն» կայարանի ճանապարհը, ուր տեղի էր ունենալու մետրոյի բացման արարողությունը։ Պետք էր տեսնել, թե ինչիսի հուզմունքով ու անհամբերու-

թյամբ էին մարդիկ սպասում այդ երջանիկ պահին։ Դա խկական տոն էր՝ համաժողովրդական տոն, որ խինով ու ուրախությամբ էր համակել բոլորին։ Յանարապետության ամենահեռավոր գյուղերից անգամ մարդիկ եկել էին կիսելու երևանցիների ուրախությունը։ Թերթերում տպագրված Արմենպրեսի կարծ հաղորդագրությունը՝ Երևանի մետրոպոլիտենի բացման մասին, անհամբերության ուրախության ալիք էր առաջացրել մարդկանց մեջ։

«1981 բվականի մարտի 7-ից բացվում է կամոնավոր երթևեկություն «Քարեկամություն» կայարանից մինչև «Սասունցի Դավիթ» կայարան։ Աշխատանքի ժամերն են...» Թերթերում հրատարակված այս պաշտոնական հայտարարությամբ սկսվեց խորհրդային Սիության ութերորդ աշխատող մետրոպոլիտենի Երևանի մետրոպոլիտենի աշխատանքային կենսագրությունը։

Հայաստանի մայրաքաղաքի բնակիչները վաղուց էին սպասում այս պահին և ամեն ինչ արեցին այն մոտեցնելու համար։ Քաղաքի և հանրապետության արդյունաբերական ծեռնարկություններում «կանաչ» ճանապարհ էր բացված մետրոպոլիտենի պատվերների առջև։ Երևանի ծեռնարկություններից, բուհերից, տարբեր կազմակերպություններից, բոլոր շրջանների աշխատավորական կոլեկտիվներից համաժողովրդական կառույց ուղարկվեցին շինարարական ջոկատներ։

Չեշտ չէր Երևանի ընդերքի հետ գործ ունենալը։ Նախազօղողները, ճարտարապետները, շինարարները ստիպված էին լուծել մի շարք այնպիսի բարդ տեխնիկական խնդիրներ, որոնք աննախադեպ էին խորհրդային Սիության և արտասահմանյան մետրոշինության մեջ։ «Դեպի Երևան», անձայրածիր խորհրդային Սիության բոլոր կողմերից ծգվում էին հարյուրավոր անտեսանելի գծեր, հեռագրային ապարատները, հեռագրերը հաղորդում էին մետրոշինի պատվերները ժամանակին կատարելու, մասնագետների մեկնելու, կառույցի ընթացքի, շահագործողների կայրերի պատրաստման հետ կապված հարցերի օպերատիկ լուծման մասին։

Երևանի մետրոպոլիտենի կառույցը հիրավի ինտերնացիոնալ կառույց էր։ Մեզ եղայրաբար օգնում էին Մոսկվայի և Լենինգրադի, Ռիգայի և Սվերդլովսկի, Զապորոժիեի և Ղնեպրովետրովսկի, Պերմի և Խարկովի, Նովոչերկասկի և Նովոսիբիրսկի աշխատավորական կոլեկտիվները։

Մետրոպոլիտենի կառուցումը նոր փայլուն էջ էր մեր գեղեցիկ երևանի բուրճ վերակերտման ու բարգավաճման տարեգրության մեջ։ Կարո՞՞ն էր արոյոք մի հին երևանի պատկերացնել, թե կանցնի ընդամենը վեց տասնամյակ և հետամնաց, փոշու մեջ կորած փոքրիկ քաղաքը կվերածվի միլիոնանոց քաղաքի և նրա ստորգետնյա ուղիներով կայանան մետրոյի երկանգույն գնացքները։ Հիշենք ծիածառշը...

Ցույց տալով անձնվեր աշխատանքի օրինակներ, մետրոշինարարների բազմազգ կոլեկտիվը հսկակայան մասշտաբի աշխատանքներ կատարեց։ Բացվեցին 12,5 կիլոմետր տարատեսակ թունելներ, կատարվեցին 630 հազար խորանարդ մետր հողային, 92 հազար խորանարդ մետր բետոնային և երկաթբետոնային աշխատանքներ։ Փոխադրվեցին ավելի քան 1,5 միլիոն տոննա հող և քար, զգվեցին 19,2 կիլոմետր ռելային ուղիներ, 680 կիլոմետր կարել։ Կայարանների և նախակայարանների ճարտարապետական ձևավորման և հարդարման վրա ծախսվեց 40 հազար քառակուսի մետր գրանիտ, մարմար և այլ նյութեր։

Մետրոպոլիտենի կառուցման աշխատանքների առաջին իսկ օրից մինչև 1981թ. մարտը կատարվեց 88 միլիոն ռուբ. կապիտալ ներդրումներ, որից միայն շինոնտաժային աշխատանքների բաժինը հասավ 75,2 միլ. ռուբ.։ Շինարարները համար և անզիջում պայքար էին մղում բառացիորեն 12,5 կիլոմետրանոց հատվածի յուրաքանչյուր սանտիմետրի համար։ Խորհրդային երկրի ամենափորձառու հորատողները տարակուտում էին ծանրանալով երևանի երկրաբանական քարդ կառուցվածք ունեցող ընդերքին։ Այդ պատճառով էլ Լենինգրադի լավագույն հորատողների բրիգադները, որոնք իրենց հարազատ քաղաքի ընդերքում ամսական անցահատել էին 1100 մետր, մեզ մոտ 45-50 մետրը համարում էին գերազանց ցուցանիշ։

...Երևանի մետրոպոլիտենի հանդիսավոր բացման արարողությունը տեղի ունեցավ 1981թ. մարտի 7-ին։ «Բարեկամություն» կայարանում հավաքվել էին մետրոն կառուցող շինարարական կազմակերպությունների աշխատակիցների, մայրաքաղաքի աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչները, մայրաքաղաքի հյուրերը։ Այստեղ էին նաև ՀԿԿ կենտկոմի և Հայաստանի կառավարության ղեկավարները։ Ժամը 11-ին հանդիսավոր արարողությունը բացեց ՀԿԿ Երքաղկոմ

## Որպես կոլեկտիվի անդամ...



N160 շինոնտաժային վարչության պետ ժողով Ավանեսյանը (ձախից), ՀԿԿ կենտկոմի և ՀՍՍՀ նախարարների խորհրդի շտաբի «Երիտասարդական» կայարանի ներկայացուցիչ Ռուդիկ Գևորգյանը և վարչության շինկոմի նախագահ Սաշա Մուրադյանը



Զախից. «Հայկապշին» տրեստի կառավարիչ Ռոբերտ Տոնյանը, տրեստի շինոնտաժային վարչության գլխավոր ինժեներ Լեռնիդ Գալստյանը, տրեստի մոնտաժող բանվոր Սամվել Չատինյանը և Ռուդիկ Գևորգյանը տեղամասի շինարարության ավարտի շեմին



1981թ. փետրվարի 18

Մետրոյի գործարկման շեմին հուշանվերներ և պատվոզրեր են հանձնվում «Երիտասարդական» տեղամասում Միության քաղաքներից եկած երևանյան մետրոպոլիտենի աշխատանքներին մասնակցած շինարարներին:



N160 շինմոնտաժային վարչության շինկոմի նախագահ Սաշա Սուրայանը (աջից), և կոմերիտմիության կոմիտեի քարտուղար Գևորգ Ավետիսյանը հուշանվեր և պատվոզր են հանձնում պատերազմի վետերանին:



Նկարում N 160 շինմոնտաժային վարչության մի խումբ աշխատողներ: Զախից հորատողների բրիգադավայրներ Յուրա Չատինյանը, Մարտին Ավետիսյանը, տեղամասի մեխանիկ Ռուբեն Սկրտչյանը, հիդրոմեկուսացնողների բրիգադավայր Սարգիս Վարդանյանը, գլխավոր ինժեներ Կարեն Ադամյանը:



Վոլոդյա Ավետիսյան  
N3 տրեստի N 15  
շինվարչության պետ



Նկարում Կարեն Ադամյանը, հորատողների բրիգադավայր Քաջևան Աղջոյանին հանձնարարություն է տալիս



«Հայրունելշինի» գլխավոր մարկչեղեր Իվան Իվանովը Սիուբյան տարրեր քաղաքներից եկած Երևանում աշխատող մարկչեղերների հետ



«Հայրունելշինի» մի խումբ դեկավար աշխատողներ N160 շինոնտաժային վարչության պետ Ժորժ Ավանեսյան, «Հայրունելշինի» վարչության պետ Լեռնիդ Հարությունով, N160 շինոնտաժային վարչության գլխավոր մեխանիկ Սուրեն Սեդրակյան, «Հայրունելշինի» գլխավոր մարկչեղեր Իվան Իվանով

ովքը վաստիո մշամասություն նետու վաստգր ստուգա ստուգա



## Մետրոյի շինարարությանը օգնող «շինարարները»



Գեղրգի Թովմասյան

Պողոլսկ քաղաքի կաբելի արտադրական  
միավորման գլխավոր տնօրեն



Փայլակ Զակորյան

ՀՍՍՌ ՆԳ նախարարության հա-  
կահրդեհային պաշտպանության  
վարչության պետ




Եղվարդ Մնացականյան


ՀՍՍՌ ՆԳ նախարարության կողմից  
մետրոպոլիտենի աշխատանքնե-  
րին մասնակցող համակարգի աշ-  
խատանքները ղեկավարող



ՀՍՍՌ ՆԳ նախարարության շինարարական  
ջոկատի մի խումբ աշխատողներ (կենտրո-  
նում է Մնացականյանն է)



«Շենգավիթ» կայարանի շինարարությունում



առաջին քարտուղար Լեռնիդ Ներսիսյանը: Այնուհետև խոսք ասաց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Ղեմիրյանը, նա հակիրծ և բովանդակալից բնորոշեց Երևանի Մետրոպոլիտենի շինարարների անցած դժվարին, քայլ պատվավոր ուղին, նշեց, որ Մետրոպոլիտենի ուղեգիծը գցվում էր բացառիկ բարդ, ինժեներակրաքանական հարակիություն:

Մետրոպոլիտենի գործարկված հատվածում տեղադրվել էին ավելի քան 9 հազար տոննա բարդ սարքավորումներ, թունելներ էին իջեցվել հայուրավոր տոննանոց մեծածավալ սարքեր և հարմարանքներ: Շինարարությանը մասնակցել են տասնյակ ու տասնյակ մասնագիտությունների տեր մարդիկ նախագծողներ, իորատանցողներ, մարկեյներներ, պայթեցնողներ, մննտաժողներ, էլեկտրիկներ, էլեկտրամուտաժողներ, զոդողներ, հյուսներ, կապավորներ և ուրիշներ, որոնք եկել էին Խորհրդային Միության տարբեր հանրապետություններից, քաղաքներից:

Չնայած բոլոր դժվարություններին «Հայրունելչին» փառապանծ կոլեկտիվը մեծ հաջողությամբ կատարեց բոլոր հանձնարարությունները: Կառույցին ակտիվորեն մասնակցող «Արփասևանշինի», «Հայտրանշինի», «Երթինշինի», «Գլխերևանշինի», «Հայկապշինի», ՀՍՍՀ Նախարարների խորհրդի մննտաժային և հատուկ շինարարական աշխատանքների գլխավոր վարչության կոլեկտիվները պատվով կատարեցին առաջարդարված խնդիրները:

Հսկայական ծավալի ստեղծագործական աշխատանք կատարեցին «Հայետտրանսնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը, որն իրականացրեց մետրոպոլիտենի նախագծումը և «Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը, որը կատարել էր կայարանների ճարտարապետական նախագծերը, ինչպես նաև քաղաքի կոմպլեքսային տրանսպորտային սիստմայի և քաղաքային կոմունիկացիաների վերակառուցման նախագծերը:

Իրենց լուրջ ներդրումները կատարեցին կոմերիտականներն ու երիտասարդները, մասնավորապես ուսանողությունը, քաղաքի պրոֆետիստուսումնարանների սովորողները, գործարանների և ֆաբրիկաների աշխատողները, միլիցիայի և այլ կազմակերպությունների աշխատավորական կոլեկտիվները:

Կառույցի համար բազմաթիվ պատվերներ կատարեցին Խորհրդային Միության հանրապետությունների, և առաջին հերթին Ռուսաստանի Ֆեռնադաշիայի ծեռարկությունները, որոնք Երևանի մետրոպոլիտենին մատակարարեցին վագոններ, շարժասանդուղքներ, քարշային ենթակայանների սարքավորումներ, օդափոխչ կայաններ, թուշ վահանակներ, ռելետր, կարել և այլ անհրաժեշտ նյութեր:

Մետրոյի առաջին ուղեմասի հանդիսավոր բացման կապակցությամբ կարեն Ղեմիրճյանը սրտագին երախտագիտություն հայտնեց ԽՄՀՄ տրանսպորտային շինարարության և ճանապարհային հաղորդակցության նախարարություններին, անձամբ նախարարներ Իվան Ղմիտրիկիչ Սոսնովին, Իվան Գրիգորիկիչ Պավլովսկուն, ինչպես նաև «Գլխավորնելմետրոշինի» ղեկավարներ Յուրի Անատոլիկիչ Կոշելկին, Կազիմիր Ստանիսլավովիչ Յանչևսկուն և «Գլխավորությունի» ղեկավարներ Բորիս Ալեքսեևիչ Շելկովին, Վիկտոր Յակովլիկիչ Պախոնովին մետրոպոլիտենի կառուցման գործում հանրապետությանը ցույց տված նրանց ակտիվ, հետևողական օգնության համար:

Առանձնահատուկ ընդգծվեց Յայաստանի կոմկուսի կենտկոմի և հանրապետության կառավարության կողմից ստեղծված մետրոպոլիտենի գործարկումն ապահովող շտարի և նրա շինարարության կողրդինացման հանձնաժողովի կազմակերպչական հսկայական աշխատանքը, քաղաքային կուսակցական կազմակերպության, կուսակցության Երևանի քաղկոմի և շրջկոմների, քաղխորհրդի և շրջխորհրդների աշխատանքը, որոնք ուղղություն էին տալիս մետրոշինարարների գործունեությանը, մշտական հոգատարություն ցուցաբերում կառույցի կարիքների նկատմամբ:

... Դժվար է գերազանցահատել մետրոպոլիտենի նշանակությունը քաղաքի կյանքում, հատկապես ռելիյեֆային այնպիսի քարդ պայմաններում գտնվող քաղաքի, ինչպիսին է մեր Երևանը: Երևանյան մայրուղիները, իրենց գառիքափ ու կորագծերի փոքր շառավիղներով, քաղաքի հին մասի փողոցների խիտ ցանցը, առանձին բարձրունքների վրա գտնվող նոր շրջանների միմյանցից կտրվածությունը սահմանափակում են վերգետնյա տրանսպորտի սովորական տեսակների հնարավորություններն ու դժվարացնում նրանց աշխատանքը: Ուստի Երևանի համար մետրոն ոչ միայն պարզապես քաղաքային տրանսպորտի ամե-

նաարագ տեսակն է: Այն մասսայական փոխադրումների բոլոր հիմնական պրոբլեմների արմատական լուծման և ուղևորների սպասարկման կուլտուրայի խիստ բարելավման հզոր միջոց է:

Ծահագործման համանական ուղեմասն իր հիմնակայարաններով՝ «Բարեկամնություն», «Մարշալ Բաղրամյան», «Երիտասարդական», «Յանրապետության հրապարակ», «Սասունցի Ղավիթ» լոկ սկիզբն էր Երևանի մետրոպոլիտենի համար: Շարունակվելու էր «Ուսիա» կինոթատրոնի մոտ գտնվող «Զորավար Անդրանիկ» կայարանի շինարարությունը դեպի «Սասունցի Ղավիթ» կայարան տանող Երկրորդ ելքը: Աշխատանքներ էին կատարվում շարունակելու ուղեգիծը դեպի «Գարեգին Նժդեհ» հրապարակը: Դրանով ավարտվելու էր մետրոպոլիտենի առաջին հերթի գործարկումը 10,5 կմ Երկարությամբ:

Կարեն Ղեմիրճյանը, Երևանի մետրոպոլիտենի առիթով ասած բացման խոսքում մեծ գնահատական տալով մեր աշխատողների հայրենանքեր աշխատանքին, նշեց լավագույնների անունները, Երևանի մետրոպոլիտենի առաջիկա և ապագա մեծ ծրագրերը, կոչ արեց հավատարիմ մնալ մայրաքաղաքի լավագույն սովորույթներին կազմակերպված ու նպատակային աշխատանքների հրականացման ճանապարհով առաջիկա տարիներին անվերապահորեն իրականացնել մետրոպոլիտենի շինարարությունը դեպի Աջափնյակ և 26 կոմիսարների անվան շրջանը, իսկ հաջորդ հինգ տարիներին՝ բոլոր ուղղություններով մայրաքաղաքի հեռավոր ծայրամասերը:

Վերջում Կարեն Ղեմիրճյանն ասաց.

«Այսօր Երևանի մետրոպոլիտենը սկսում է իր բարի և հավիտենական ծառայությունը մարդկանց: Եվ մենք Երևանցիներս, կարող ենք մինչյանց գերազանց շնորհավորել մեր քաղաքի կյանքի, մեր ամբողջ հանրապետության կյանքի այդ հիրավի մեծ ու բերկուլի հրադարձության առիթիվ:»

Բարի երթ քեզ, Երևանի մետրո:»

Հինարարներին, մետրոպոլիտենի շահագործմանն օգնող կազմակերպություններին շնորհավորական խոսք ասելուց հետո Կարեն Սերոբի Ղեմիրճյանը կտրեց ավանդական ժապավենը:

Մետրոպոլիտենի գլխավոր կապալառում՝ «Յայունելշին» շինարարական վարչության պետ Լեռնիդ Հարությունովը, հակիրծ գեկուցու-

մից հետո, մետրոպոլիտենի սիմվոլիկ բանալին հանդիսավոր հանձնեց մետրոպոլիտենի վարչության առաջին պետ Իվան Պապինին:

Այդ րոպեից Երևանի մետրոպոլիտենի Երկնագույն գնացքներն սկսեցին իրենց ամենօրյա աշխատանքը:

Առաջին գնացքի մերենավարը Դապետնակ Լյուդվիգի Առաքելյանն է, որն աշխատում է մինչև օրս, մերենավարի օգնականը՝ Դակոր Դովիաննեսի Ասատրյանը:

Նպատակահարմար է նշել նաև, որ 1981թ. մարտ ամսին 25 օրվա ընթացքում մետրոպոլիտենը տեղափոխել է 2925000 ուղևոր, օրական միջին հաշվով 117000 ուղևոր: Նույն թվի ապրիլին, երբ հետաքրքրությունը մետրոպոլիտենի հանդեպ նվազեց, ուղևորների թիվը հասավ 1900000-ի:

Սկզբնական շրջանում գնացքները կազմված էին 4 վագոնից, սակայն նույն թվի հոկտեմբեր ամսին անցան եռավագոն գնացքների: Ուղևորափոխադրումների տվյալները հուշեցին եռավագոն գնացքների արդյունավետությունը:

Մետրոպոլիտենի բացման առթիվ Լենինգրադի /Սանկտ-Պետերբուրգ/ Դրամահատարանը թողարկեց հուշանշան և մեղալ «Երևանի մետրոպոլիտեն»: Երևանի կրնյակի գործարանը նվիրեց «Երևանի մետրոպոլիտեն» կոնյակը:

## Մետրոպոլիտենի Շինարարության ընթացքը (1981 թ. ապրիլ – 1990թ.)

Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի առաջին տեղամասի գործարկումից հետո, հետագա աշխատանքների հրականացման ուղղությամբ տարվում էին գործնական քայլեր և նախագծողների և շինարարների կողմից:

«Շայպետրանսնախագիծ» ինստիտուտում լարված աշխատանքներ էին գնում կառուցվող մետրոպոլիտենի նախագծային նախահաշվային փաստաթղթերի ապահովման ուղղությամբ: Շինարարներին էր հանձնվել «Զորավար Անդրանիկ» կայարանի կառուցման գծագրերը: Այս կայարանի շինարարությունն ընթանում էր գործող մետրոյի պայ-

մաններում, որը ինժեներական բարդ և պատասխանատու մի հանգույց էր և նմանը չուներ առհասարակ մետրոլինարարության պատմության մեջ: Կատարվեցին նաև «Սասունցի Դավիթ» կայարանից մինչև «Գործարանային» կայարանի վերգետնյա մայրուղու բանվորական գծագիրը, այն ընթանում էր Երևանի երկարուղագծի հարևանությամբ, հատելով Թամանցիների փողոցը: «Գործարանային» կայարանի գործարկումը նախատեսված էր 1982թ., որի նախագիծն իրականացրել էր «Երևաննախագիծ» ինստիտուտը: «Սասունցի Դավիթ»-«Գործարանային» գծի շահագործմամբ հարավային արդյունաբերական շրջանի խոշոր արդյունաբերական օբյեկտները կվապեցին քաղաքի կենտրոնի հետ և դրանով զգալիորեն կավելանար մետրոպոլիտենի ուղևորահոսքը: Ավարտվել էին «Ծենգավիթ» կայարանի նախագծային աշխատանքները, որը պետք է կառուցվեր Սողոմոն Տարոնցի փողոցի մոտակայքում: Այդ կայարանի ծախս մայրուղուց դուրս էր գալու մետրոպոլիտենի վագոնային դեպոն, որի գծագրերն ավարտին մոտ էին: «Ծենգավիթ» կայարանից մայրուղին թեքվելու էր ծախս՝ «Գարեգին Նժդեհի» հրապարակ և այս կայարանով ավարատվելու էր մետրոպոլիտենի առաջին հերթը, որի երկարությունը կազմելու էր 10.5 կմ.: «Շայպետրանսնախագիծ» ինստիտուտի կողմից կազմվել էր «Ծենգավիթ» կայարանից մինչև «Գարեգին Նժդեհի» հրապարակ» կայարանի տեխնիկական նախագիծը, որի հաստատումից հետո կատարվելու էր բանվորական գծագրերը:

Շաշվարկները ցույց էին տալիս, որ մետրոյով երթևեկող ուղևորների թիվը կիսամի 100 հազարի, եթե շահագործման հանձնվի քաղաքի ամենաբանուկ խաչմերուկում գտնվող «Զորավար Անդրանիկ» կայարանը: 4 կմ երթուղին մինչև Շայելեկուրագործարան հասնելու դեպքում զգալի կնվազի վերգետնյա ուղևորահոսքը՝ վերգետնյա տրանսպորտը կրեռնաբարափակվի:

1981թ. նախատեսված էր իրացնել 16 մլն.ռուբլու կապիտալ շինարարություն, որից 8 մլն. ռուբլին կազմում էին շինմոնտաժային աշխատանքները: Հունվար-ապրիլ ամիսներին շինարարներն արդեն իրացրել էին այդ գումարի կեսը՝ 4 մլն. ռուբլի:

Խճչակ հայտնի է, «Շանրապետության հրապարակ» կայարանի առաջին հերթի հետ շահագործման հանձնվեցին միայն երեք որոշնա-

խորշեր /ստորգետնյա միջին կայարանասրահը երեքական կամարով/: Մետրոյի գործարկումից հետո միջին կայարանասրահում լայն ճակատով առաջ էին մղվում շինարարական աշխատանքները: Միաժամանակ 8 որմնախորշերում, կայարանասրահի երկու կողմերում իրականացվում էին երեսպատճան աշխատանքները: Մետրոշինարարները ծեռնամուխ էին եղել նաև ջրամեկուսիչ շերտերի ստեղծման գործին: Արդեն երկում էր, որ մինչև տարեվերջը կայարանն ամբողջությամբ կշահագործվի:

«Զորավար Անդրանիկ» կայարանում 1981-ի առաջին կիսամյակի դրույթամբ շինարդից մաքրվել և հետագա աշխատանքների համար ստեղծվել էր 7 հազար խոր.մետր աշխատանքային ճակատ: Կատարվում էին աջև և ձախ կայարանային բունելների տրամագծերի մեծացման աշխատանքները: Փոքր բունելներում ավարտվել էր պոլապակայանների պատրաստումը: Զգալի աշխատանքներ էին կատարվել էլեկտրաներակայանների ու ցանցերի, կապի, ազդանշանային և էլեկտրամեխանիկական ծառայությունների գծով: Ծենգավիրում կառուցվում էր էլեկտրադենական, որը նախատեսվում էր շարժակազմի վերանորոգման և մեքենավարների հանգստի համար և այլն:

1981թ. եզրափակվեց ևս մեկ հաջողությամբ: Ամբողջությամբ ավարտվեցին «Հանրապետության հրապարակ» կայարանի շինարարական աշխատանքները: Յիշավի, կայարանի համալիրը ճարտարապետական հետաքրքիր լուծումներով հանդիսավոր տեսք ունի: Կայարանն իր ամբողջ հմայքով և գեղեցկությամբ լոիկ պատրաստ էր 1981թ. դեկտեմբերին:

Հատկապես մեծ տպավորություն է թողնում մետրոշինարարության նորություններից մեջը՝ կայարանասրահի դիմացի հայելազարդ պատը՝ 40 ք.մ մակերեսով, որտեղ արտացոլված է սրահը՝ ստեղծելով ընդարձակության պատրաստ:

N160 շինմոնտաժային վարչությունը հաջողությամբ կատարեց իր վրա դրված աշխատանքները: Ինչպես հայտնի է, վեց որմնախորշերի մարմարապատումը /սկզբնական շրջանում/ կատարել էին Մոսկվայի «Մետրոշինի» հատուկ աշխատանքների վարչության մասնագետները, իսկ մնացած 22 որմնախորշերի մարմարապատումը կատարեցին N160 շինմոնտաժային վարչության Յ. Պողոսյանի, Ա. Աղաբարյանի, Յ. Նար-

գիզյանի, Ա. Բաղայանի, Մ. Եղիազարյանի ղեկավարած բրիգադները: Եվ ինչպես պարզ երևում է արդյունքից, ոչ մի կամար իր որակով չի գիշում մեր բարեկամների՝ Մոսկվայի «Մետրոշինի» բանվորների կառուցածին:

Այս տեղամասում Մոսկվայի մետրոշինարարների ուժերով կատարվեցին կայարանասրահի հատակի գրանիտապատումը, առատաղի հարդարումն ու ներկումը և այլն: Ավարտվեց նաև վերին կայարանասրահի բաց բակի շինարարությունը: Այն իրականացնում էին «Երթիշինի» շինարարները, որոնք կայարանը կառուցեցին երեք մուտքով /Նալբանդյան փողոց, Յանրապետության հրապարակ և գլխավոր պողոտա/: Կայարանի, այսպես ասած, բաց բակի հարդարման և ձևակորնան աշխատանքները, որ իսկապես գեղագիտական հաճույք է պատճառում, մեծ բարեխղճությամբ կատարեցին «Երթիշին» տրեստի Վ. Մանուկյանի ղեկավարած հատուկ տնտիկավարկային տեղամասի մարդիկ: Նրանց ջանքերով ստեղծված այս կառույցն արժանիորեն լրացնում է Հանրապետության հրապարակի ճարտարապետական համալիրը: Նշենք շինարարական աշխատանքների իրականացմանը նպաստող հետևյալ փաստի մասին: Երգակովի բյուրոյում 1981 թ. հունիսի 12-ին քննարկվեց «Երևանի մետրոպոլիտենի շինարարության ընթացքը և նրա արագացման միջոցառումների մասին» հարցը: Այստեղ մետրոպոլիտենի շինարարության առաջին հերթի (մինչև «Գարեգին Նժեթիկի հրապարակ») շինարարության հաջող ավարտի հետ մեկտեղ, առանձնահատուկ ուշադրություն է դարձվում «Հանրապետության հրապարակ» կայարանի շինարարության ամբողջական ավարտի վրա: Նշվում է, որ ՀՍՍՀ շինանյութերի արդյունաբերության նախարարության նույնությունում բարի մշակման գործարանից չի մատակարարվել անհրաժեշտ շինանյութ, հարդարման աշխատանքներն ավարտելու համար: Նպատակահարմարությունից ելնելով բյուրոն որոշում է կայացնում խնդրել հանրապետության կառավարությանը շինարարական աշխատանքներն արագացնելու համար տեղամասին լրացուցիչ տրամադրել ստորգետնյա տրանսպորտային միջոցներ, և հարդարման աշխատանքների համար հատկացնել լրացուցիչ ֆոնդ նույնությունում բարի մշակման գործարանից մարմար ստանալու նպատակով: Կառավարության օգնությամբ աշխատանքներում լուրջ բեկում է կատարվում: Մեծ

եղավ նաև Սպանդարյանի շրջանի հիմնարկ-ձեռնարկությունների օգնությունը տեղամասին, որի աշխատանքները ղեկավարում էր կուսշրջկոմի քարտուղար Ռուբեն Կանդայանը:

Կարելի է ասել, որ մետրոի առաջին հերթի առաջին հատվածի շահագործումից հետո, շինարարության հետագա ընթացքի գործում որոշիչ է ազդեցություն ունեցավ Դայաստանի կառավարության 1981թ. սեպտեմբերի 2-ի «Երևան քաղաքի մետրոպոլիտենի շինարարության աշխատանքների մասին» որոշումը: Խոսենք այս որոշման կենսագործման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին:

Կառավարությունում նշվեց, որ հանրապետությունում շինարարական և մոնտաժային կազմակերպությունների, նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև Միության բազմաթիվ կազմակերպությունների համախմբված ու նպատակային աշխատանքի շնորհիվ 1981թ. մարտին «Գերազանց» գնահատականով շահագործման հանձնվեց Երևանի մետրոպոլիտենի «Բարեկամություն» կայարանից մինչև «Սասունցի Դավիթ» կայարանի հատվածը: Գործերը հաջող էին ընթանում նաև մյուս ամսներին, որի հետևանքով 1981թ. առաջին կիսամյակում շինմոնտաժային աշխատանքների պլանը կատարվեց 116,5 տոկոսով, իսկ նախատեսված 5,2 մլն. ռուբ. դիմաց կատարվեց 6 մլն.ռուբ. աշխատանք:

Գործերի հետագա ընթացքը պահանջում էր խորությամբ վերլուծել կատարված աշխատանքը, վեր հանել տեղ գտած թերություններն ու բացերը, նախատեսել գործերի հաջող ընթացքի ուղղությունը: Դենց այս գործելակերպից ելնելով կառավարությունը հիմնականում կանգ է առել խոշընդոտող Երևանի վերացման վրա: Արձանագրվեց, որ «Սասունցի Դավիթ»-«Գարեգին Նժդեհի հրապարակ» հատվածում աշխատանքները շատ դանդաղ են ընթանում: Կառավարությունը հետագա կարևոր քայլը համարեց 1981-1985թթ. ընթացքում գործնական միջոցառումների իրականացման շնորհիվ ավարտել մետրոպոլիտենի այս հատվածի շինարարական աշխատանքը, հանձնել շահագործման, միաժամանակ ապահովել Աջափնյակ քաղամասում մետրոյի շինարարության լայնածավալ աշխատանքները: Դանձնարարվեց հանրապետության պետպահանին մինչև 1981թ. հոկտեմբերը ճշտել առաջիկա հիմք տարիներին Երևանի մետրոպոլիտենի հատկացվող կապիտալ

ներդրումների ծավալը և այն բաշխել ըստ տարիների: «Դայապետուրանսնախագիծ» ինստիտուտի կողեկտիվի առաջնահերթ խնդիրը համարվեց արագացնել միութենական ճանապարհների հաղորդակցության նախարարությանը ներկայացվող դեպի Աջափնյակ քաղամաս գնացող Երևանի մետրոպոլիտենի շինարարության տեխնիկա-տնտեսական հիմնավորումները և մինչև 1981թ. վերջը ներկայացնել կառավարության համատամանը: Երևանի մետրոպոլիտենի և «Դայթունելշինի» վարչությունների դեկավարներին հանձնարարվեց. միութենական ճանապարհների հաղորդակցության և ճանապարհային շինարարության նախարարություններին ներկայացնելու նպատակով տալ առաջիկա ժամանակահատվածում կատարվելիք աշխատանքների ծավալները նրանց կողմից հետագայում հանապատասխան լուծում ստանալու նպատակով և մինչև 1981թ. նոյեմբերի 15-ը կազմել 1981-1988թթ. կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների ցուցակը՝ ըստ տարիների:

Մետրոպոլիտենի շինարարության հետ առնչվող մի շարք կազմակերպությունների պարտավորեցվեց կազմել «Սասունցի Դավիթ» կայարանից մինչև «Գործարանային» կայարան հատվածում իրականացվող շինարարության օրացուցային պլանն այն հաշվով, որպեսզի այդ հատվածը շահագործման հանձնվի 1982թ.: Այդ նպատակով առանձին ստորաբաժանումների տրվեցին կոնկրետ և գործնական հանձնարարություններ հատկացված ֆոնդերի իրացման, ոչ ստանդարտ սարքավորումների, սարքերի, հանգույցների, անհրաժեշտ քանակի կարելային իրերի ապահովման, երկարության տեղափոխումները ժամանակին կատարելու համար և այլն: Դանձնարարությունները կոնկրետ էին, ոչ միայն նշվում էին կատարման ժամկետները՝ ըստ ամսների, այլև ամսաթվերով, «քծախնդրորեն»: Վերջում խնդրվում էր միութենական ճանապարհների հաղորդակցության և տրամսպորտային շինարարության նախարարությունների դեկավարներ և Պավլովսկուն և Ի. Սոսնովին տալ համատեղ հրաման Երևանի մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանից մինչև «Գործարանային» կայարան հատվածը 1982թ. շահագործման հանձնելու համար:

Ծուրջ մեկ տարի մասնակցելով մետրոպոլիտենի շինարարության համար ստեղծված շտարի նիստերին, եկա այն հաստատ համոզման,

որ կառավարության ընդունած որոշումներն ու կարգադրություններն անվերապահորեն կատարվում էին, և, որ ամենակարևորն է՝ նախատեսված ժամկետներում:

Եթզանիկ թերումով, արխիվային նյութերն ուսումնասիրելիս ծեղս ընկավ վերոհիշյալ որոշումը /ՀՍՍԴԿՊԱ 116 մ ց լ, գ. 10/, որտեղ նշվում է. ասենք՝ հանձնարարել ՀՍՍԴ պետմատին /ընկ. Ե.Ասցատրյան/ մինչև 1981թ. սեպտեմբերի 15-ը հասնել այն բանին, որ «Սասունցի Դավիթ» կայարանից «Գործարանային» կայարան հատվածն ապահովվի անհրաժեշտ քանակի բարձր լարման գրահապատ կարելով, «Դայտրանսշինին» /ընկ.Ե.Ավետիսով/ մինչև 1981 թ. նոյեմբերի 30-ը «Սասունցի Դավիթ» կայարանից մինչև «Գործարանային» կայարան հատվածում ապահովվել տեղամասի և շրջակա արդյունաբերական ծեռնարկությունների, մերժատար երկարուղային ուղիների գծերի տեղադրելը: «Դայտտանսնախագիծ» ինստիտուտին /ընկ. Վ.Դանդուրով/, մինչև 1981թ. հոկտեմբերի 1-ը ապահովել Տյուլեմին փողոցի հատվածում ուղեկամրջի նախագծային, նախահաշվարկային փաստաթղթերը: ՀՍՍԴ շինանյութերի արդյունաբերության նախարարությանը /ընկ. Լ.Ղազարյան/ մինչև 1981թ. հոկտեմբերի 1-ը «Դանրապետության հրապարակ» տեղամասի նախարարի աշխատանքներն ավարտելու համար տրամադրել անհրաժեշտ քանակի երեսպատճան քարե սպիկներ և այլն:

Ըստ երևույթին պատասխանատու անձի, կամ կազմակերպության ղեկավարի կողմից որոշումն անմիջապես հսկողության տակ է վերցվել, և վերը թվարկված մյուս կետերի կողքին դրվել է «պյուս» նշանը և «հսկող աչքի» կողմից գրվել «կատարվել է»: Կառավարությունում կարգ և կանոնի դրվագքը և նման կառուրագույն որոշումների կատարման գործում Ֆադեյ Սարգսյանի հետևողականությունն իր հետքն էր բողել:

Արխիվային բոլոր փաստաթղթերից պարզ նկատվում է, որ ամենայն մանրամասնությանը հետևողական աշխատանք է տարվել հարցերը ժամանակին լուծելու համար: Ավելին, վերոհիշյալ որոշումից հետո, հանձնարարություններ կատարելու, շտարի նիստի ժամանակ բարձրացված հարցերը լուծելու համար ՀՍՍԴ նախարարների խորհրդի նախագահը 1981թ. նոյեմբերի 11-ին և նոյեմբերի 13-ին արել է երկու գրավոր կարգադրություն բավականին կարևոր հանձնարարու-

թյուններով, կոնկրետ ժամկետներով: Նման գործնական կարգադրություններ եղել են գրեթե բոլոր ամիսներին: Եվ այսպես շարունակվել է ամիսներ, տարիներ ...

Կառավարությունում պարբերաբար քննարկվում և վերլուծվում էր մետրոյի շինարարության հետ առնչվող կազմակերպությունների գործունեությունը: Ինոր դրական տեղաշարժն ակնառու էր:

Ամբողջությամբ ավարտվեցին «Սասունցի Դավիթ» և «Գործարանային» կայարանների հատվածում վերգետնյա ուղետարի աշխատանքները՝ 1.3 կմ երկարությամբ: «Դայրունելշին» վարչությունն ապահովեց այդ հատվածի ողջ երկարությամբ ցանկապատի և մետրոպոլիտենի հիմնական գծերի տեղադրման աշխատանքները: Դանրապետության մննտաժային և հատուկ շինարարական աշխատանքների գլխավոր վարչությունը ծեռնանուի եղավ եներգասնուցման բարձրավոլտ կաբելների տեղադրման աշխատանքներին: «Գործարանային», «Շենգավիթ» և «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանների ուղղությամբ սկսվել էին ընթացքային և կայարանային բունելների լեռնահորատանցման աշխատանքները: Բավական է ասել, որ այս հատվածում, ոչ պակաս քան երկու հերթափոխում մեծ լարվածությամբ աշխատում էին 14 շինարարական և մննտաժային կազմակերպություններ:

ՀՍՍԴ նախարարների խորհրդի որոշմամբ երկանի մետրոպոլիտենի վարչությանը, «Դայրունելշինին», «Դայբետտրանսնախագիծ» ինստիտուտին հանձնարարվեց վերանայել «Ջորավար Անդրանիկ» կայարանի շինարարության ընթացքը, մշակել համապատասխան կոնստրուկտիվ մոտեցումներ և կազմել համապատասխան ծրագիր կայարանը 1985թ. շահագործման հանձնելու համար:

\* \* \*

Դայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության կողմից միշտ առաջնահերթ ուշադրություն է դարձվել երկանի մետրոպոլիտենի շինարարությանը: Պատահական չէ, որ տարբեր առիթներով հանրապետության կազմակերպությունների, ողջ հասարակայնության ուշադրությունը քննովել է այս կառույցի վեա: Այդ առիթով արժանի է հիշատակել ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍԴ նախարարների խորհրդի 1982թ. հունիսի 15-ի համատեղ որոշումը, որը վերաբերում է հանրապետու-

թյան կարևորագույն կառույցները հսկողության տակ վերցնելուն: Այս որոշմամբ հսկողության տակ էր վերցվում 1,3 կմ երկարությամբ 3,3 մլն. ռուբլի արժողությամբ Երևանի մետրոյի «Սասունցի Դավիթ» կայարանի և «Գործարանային» կայարանի միջև ընկած հատվածի շիանարարությունը ու հանձնարարավում էր հանրապետության նախարարություններին և գերատեսչություններին, գլխավոր և ենթակապալառու կազմակերպություններին, համատեղ մշակել միջոցառումների պլան տեղամասում 1982թ. նախատեսված աշխատանքները կատարելու համար, միաժամանակ նրանց պարտավորեցնելով եռամսյակը մեկ ՀԿԿ Կենտկոմին և ՀՍՍՀ Նախարարների խորհրդին գեկուցել շինարարական աշխատանքների ընթացքի մասին:

Որոշման կատարման հսկողության պատասխանատվությունը որպես էր ՀԿԿ Կենտկոմի համապատասխան բաժնի վրա: Հանրապետության կուսակցության, կառավարության գործունեությանը ծանոթ, նույնիսկ ամենաներքին օղակի աշխատողները, նաև տնտեսական ոլորտի դեկավար աշխատողները լավ էին հասկանում, թե ինչ է նշանակում հսկողություն իրականացնելը ՀԿԿ Կենտկոմի կողմից, որովհետև լավ գիտեին Կարեն Դեմիրճյանի անգիտում պահանջկուտությունն ընդունված որոշման յուրաքանչյուր կետի անվերապահ կատարման նկատմամբ:

1982թ. հոկտեմբերի 29-ին կառավարությունը նորից քննարկեց Երևանի մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերվող հարցը: Անկախ այն բանից, որ մայրաքաղաքի կուսակցական կազմակերպությունները, քաղաքային կոմիտեն՝ շրջկոմների միջոցով, մեծ օգնություն էին ցույց տալիս մետրոպոլիտենի շինարարությանը: Մետրոյի առաջին հերթի առաջին հատվածի գործարկումից հետո մետրոյի շինարարությամբ գրադարձությունը շտարի պետի պարտականությունները նորից ստանձնեց կառավարության նախագահի տեղակալ Յանատ Ջայրապետյանը, որն իր քրտնաջան աշխատանքով մեծապես նպաստեց մետրոյի աշխատանքներին, ծրագրերի իրականացման գործին:

1982թ. կատարվեցին նախատեսված շինարարական կարևորագույն բոլոր աշխատանքները:

Երևանի մետրոպոլիտենի ստեղծման տարեգրության մեջ, որպես ամենադժվարին հատվածներից մեկը, անկասկած կմնա «Զորավար Անդրանիկ» կայարանի շինարարությունը: Այստեղ 1982թ. առաջին իսկ

ամիսներին հիմնական աշխատանքն ընթանում էր երկու ուղղությամբ՝ կայարանի շարժասանդուղի թեք հորանի և N 7 ուղղահայաց հորանի:

Առաջին ուղղությունում գործում էր Արտյոն Առաքելյանի ղեկավարած բրիգադը: Այս բրիգադի ղեկավարին բնորոշենք մի քանի նախադասությամբ: Ա.Առաքելյանը բանակից գորացրվելուց հետո սկզբում աշխատել է Տարեկ Հեկ-ում հորատանցողի մասնագիտությունը, միշտ նույն կերպ էր բացատրում՝ սիրում եմ մեծ ու համախմբված կոլեկտիվում աշխատել: Ավելի քան տաս տարի Ա.Առաքելյանը ղեկավարեց Արփա-Սևան շինարարական բունելի լավագույն հորատողների բրիգադը: Նրա աշխատանքը բարձր գնահատվեց, արժանացավ Աշխատանքային Կարմիր դրոշի շքանշանի, իսկ 1974թ. ընտրվեց ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր: Առանց արտադրությունից կտրվելու նա հասցրեց ավարտել Ղափանի լեռնամետալուրգիական տեխնիկումը: Ծանոթացավ հորատանցման աշխատանքների «գաղտնիքներն» և հետո ինքը սովորեցրեց աշակերտներին: Եվ պատահական չէր, որ նրա նախկին աշակերտները, արդեն մեծ համբավի տեր հորատողներ Գևորգ Ջայրապետյանը, Սերգեյ Բիշարյանը, Վաղիմ Ավանեսյանը երախտագիտության խորը գգացումով էին լցված Արտյոն Առաքելյանի նկատմամբ և բոլոր մետրոշինարարները ցնծությամբ ընդունեցին այն լուրը, որ նա երկրորդ անգամ, Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի շինարարության մեջ անմնացորդ նվիրումով աշխատանքի համար պարզեւորվեց կառավարության բարձր պարզուով՝ «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով: Եվ նրան վստահել էին ամենածանր տեղամասերից մեկը:

Ինչպես նախատեսվել էր, հանրապետության կառավարության որոշմամբ Երևանային մետրոպոլիտենի առաջին հերթի երկրորդ տեղամասի առաջին կայարանը լինելու էր «Գործարանայինը»: Այս կայարանն սպասարկելու էր գործարանային մի մեծ շրջան: Եվ միանգամայն հասկանալի էր Երևանցիների մեծ հետաքրքրությունը մետրոպոլիտենի այդ հատվածի շինարարության նկատմամբ:

Թվում էր, թե այդ հատվածի աշխատանքները պետք է համեմատաբար ոյլուրին լինեին: «Սասունցի Դավիթ» կայարանից մինչև «Գործարանային» ընդամենը 1,7 կմ է, ուղեմասը վերգետնյա է, չկան հորա-

տանցման, ընդերքի աշխատանքների հետ կապված դժվարություններ և այն: Բայց այդպես չէր: Այստեղ առկա էին այլ կարգի դժվարություններ:

Նախ ասենք, որ այնպիսի շինհրապարակ, որը գոյություն ուներ «Գործարանային» տեղամասում, մեղմ ասած հազվադեպ կարելի է հանդիպել: Բավական է ասել, որ նրա երկարությունը հասնում էր 200 մետրի, իսկ լայնությունը հազիվ՝ երկարության մեկ տասներորդին: Շինհրապարակի մի կողմում «Դաշտմնեքենա» արտադրական միավորնան պոմպեի արտադրության մասնաշենքերից մեկն էր, մյուս կողմում Մասիս-Երևան երկարությային գիծը: Շինհրապարակում այնպիսի նեղվածք էր, որ գնացք անցնելիս կոռումկի սլաքը շրջում էին երկարգծին զուգահեռ դիրքով: Իսկ օրական քանի գնացք էր անցնում:

Առաջնահերթ խնդիրն էր տեղափոխել երկարգծինը, որի աշխատանքներն արդեն սկսվել էին: Երկարգծի տեղափոխման համար ամրացվել էր գործող կամրջի աջ կողմի թերե դեմքով կանգնենք դեպի «Երևան» կայարանը/ հենարանային մասը, կառուցվում էր հատուկ սյունաշար: Սյունաշարերը նախատեսված էր հանձնել ապրիլի 25-ին: Շինհրապարակում էին արտակարգ դժվարին պայմաններում և անկախ այս ամենից, սյունաշարերը պատրաստ լինելու դեպքում նրանք նախատեսված ժամկետում գործը պետք է ավարտեին: Իսկ սա նշանակում էր լայն ճակատով, ամբողջ թափով շարունակել կառամատույցի, շարժասանդուղքի սրահի, կայարանասրահի կառուցման աշխատանքները: Սակայն արհամարելով տեղամասում եղած լուրջ դժվարությունները մեծ բարեխողությամբ աշխատում էին հյուսն-թետոնագործ Վիգեն Միմոնյանը, բետոնագործ ժորա Թովմասյանը, մոնտաժողներ Արարատ Սահակյանը ու Ռոմիկ Ասատրյանը, կոռումկավար Մադո Քոչարյանը:

«Գործարանային» կայարանում «Երքիմշին» տրեստի N 25 վարչության կոլեկտիվը 1982թ. առաջին կեսի ավարտին ծեռնամուխ էր եղել հիմնական խնդիրներից մեկի վերջնական լուծմանը՝ սկսել էր կայարանասրահի շինհրարությունը: Օր օրի աճող աշխատանքային մեծ թափը նկատելի էր և արագորեն փոխվում էր շինհրարության համայնապատկերը: Յուլիսի հենց առաջին օրերից սկսվեցին կայարանասրահի հոդային աշխատանքները, որին միաժամանակ մասնակցում էին հինգ

եքսկավատորը: Աշխատանքներն իրականացվում էին երկու հերթով և որպեսզի կատարված գործի մեջ թափի մասին գաղափար կազմնենք, ասենք, որ միայն հինգ հորից հանվեց 8 հազար խ.մ հող: Յուլիսի 10-ից շինհրարանները ծեռնամուխ եղան կաղապարման և ամրանեների տեղադրման աշխատանքներին: Գրեթե ավարտվել էր կառամատույցի երկարթունն կոնստրուկցիաների մոնտաժումը: Ժամանակն էր ծագկը տեղադրել և սկսել սալապատումը: Ծագկը պատարաստվել էր բազմահորշ թերեւ կոնստրուկցիաներից, որոնք ստացվել էին Լենինգրադից: Արժանի է հիշատակել անլուծելի համարվող այս գործի մասին հետևյալը:

ճարտարապետ Յենրիկ Ղուկասյանի և գլխավոր կոնստրուկտոր Զոն Յովակիմյանի մտահղացմամբ որոշվեց կառամատույցի 108 մետր երկարության և 19,5 մետր լայնության ծածկն իրականացնել բուրգածև հավաքովի արմոցենենտյա տարրերից կազմված կոնստրուկցիայով:

Այդ ժամանակ արմոցենենտյա հավաքովի տարրերը նորույթ էին հանրապետությունում: Նախագիծը հաստատվեց և «Երքիմշին» տրեստը հանձն առավ յուրացնել ֆունկցիոնալ գեղագիտական և տեխնիկատնտեսական պահանջներին հանապատասխանող ժամանակակից ու հանրապետությունում լայն կիրառում ակնկալող այդ կոնստրուկցիաների արտադրությունը, սակայն վիճակված չէր այդ տարիներին մեր հանրապետությունում յուրացնել նշանակած կոնստրուկցիաների արտադրությունը:

Դարվածային կառույցի շինհրարության սեղմ ժամկետներն ստիպեցին փնտրել այլ ելք և այդ ելքը գտնվեց՝ կառամատույցի ծածկի հավաքովի տարրերի արտադրությունն իր վրա վերցրեց Լենինգրադի երկարթունյա կոնստրուկցիաների գործարաններից մեկը և այն կատարեց անբերի:

Իր նախադեպը չունեցող աներևակայելի իրողություն է: Նևայի ափին մեր բարեկամների արտադրած ծածկի 1310 հավաքովի տարրերը վերածվեցին ավելի փոքր քանակի միջանկայլ բլոկների, երկարույով տեղափոխվեցին Երևան մեծապես նպաստելով շինհրարության ավարտի մոտեցմանը:

Այդ ընթացքում «Երքիմշին» տրեստի շինհրարանները ծեռքերը ծալած չեն նստել և արդեն ավարտել էին կառամատույցի պատերի և հա-

տակի մարմարապատման և գրանիտապատման աշխատանքները:

Երբ վաստակաշատ շինարար, «Երթիմշինի» տրեստի կառավարիչ Պետրոս Թումանյանին հարցնում էին, թե չի՞ վախենում, որ շինարարության հերթականության խախտման պատճառով կառավատույցի ծածկի տարրերի մոնտաժման ժամանակ կարող են վնասվել հատակի գրանիտապատման մակերեսները, նա պատասխանում էր, որ ինը ոչ մի դրակ կորցնելու իրավունք չունի, և վստահ է, որ իրենց ինժեներներն ու մոնտաժողները կգտնեն այդ խնդիր լուծումը:

Եվ իսկապես, նախագծի գլխավոր կոնսուլտոր Զոն Յովակինյանի և շինարարության աշխատեկ Ալբերտ Մուրադյանի համատեղ աշխատանքով մշակվեց ծածկի մոնտաժման ոչ ստանդարտ եղանակը: Մոնտաժողների բրիգադը՝ բազմահմուտ Արարատ Սահակյանի ղեկավարությամբ, այդ աշխատանքները կատարեց փայլուն ձևով, ծածկապատման աշխատանքների ժամկետը կրծատվեց չորս ամսով: Ի դեպ, կառավարությունը ծածկի տարրերի միացումը զողման եղանակով մեր բանվորների կողմից կատարվեց մեծ վարպետությամբ և աշխատանքները ռենտգենյան մեթոդով ստուգելուց հետո բարձր գնահատականի արժանացավ:

... «Գարեգին Նժեթի» տեղամասում աշխատանքներն սկսվելիս կոլեկտիվում հաշվում էր մեկ ու կես տասնյակ մարդ: Մի քանի ամիսների ընթացքում և հատկապես 1982թ. երկրորդ կիսամյակում աշխատողների թիվը հասավ 120-ի, որոնցից 70-ը ընդգրկված էին ստորգետնյա աշխատանքներում:

Տեղամասում կոլեկտիվի խնդիրն էր արագ կառուցել «Գարեգին Նժեթի» հրապարակ» կայարանը: Յիշենք, որ կայարանի բունենքներն անցահատելու համար պետք է բացելու օժանդակ թունելներ, այսպես ասած, մոտեցման միջանցքներ՝ մի քանի հարյուր մետր երկարությամբ: Յուստեմբեր ամսին արդեն անցահատվել էր 90 մ, բետոնապատվել էր 50-ը: Օրական օգտագործվում էին 80-85 խորանարդ մետր շաղախ, աշխատանքներն իրականացվում էին չորս հերթափոխով:

Մետրոպոլիտենի առաջին հերթի առաջին տեղամասի բողարկումից հետո շինարարական աշխատանքների բարելավման համար իրոք վճռորոշ նշանակություն ունեցավ կառավարության 1981թ. սեպտեմբերի 2-ի որոշումը: Առաջարկված խնդիրների կատարման ուղղությամբ

տարվող գործնական քայլերն իրենց արդյունքը տվեցին: 1982թ. հոկտեմբերի 1-ին կառավարությունն անորոշարձավ 1981թ. սեպտեմբերի 2-ի որոշմանը: Եվ միանգամայն տեղին նշեց, որ մետրոպոլիտենի շինարարության հետ առնչվող շինարարական-մոնտաժային կազմակերպությունները, նախարարություններն ու գերատեսչությունները հաջողությամբ կատարեցին իրենց առջև դրած խնդիրները:

Իրոք, լուրջ աշխատանքներ կատարվեցին: Ամբողջությամբ պահպանվեցին «Սասունի Դավիթ» կայարանից մինչև «Գործարանային» կայարանն ընկած 1.3 կմ երկարությամբ վերգետնյա մայրուղու աշխատանքները: Կառավարության կողմից հսկողության ապահովման, շտաբի գործնական քայլերի իրականացման շնորհիվ ոչ միայն 1982թ. հետագա ամիսներին, այլև 1983թ. կատարվեցին որոշակի տեղաշարժեր:

\*\*\*

«Յայրունելշին» վարչությունը և «Յայպետտրանսմախագիծ» ինստիտուտի աշխատողները գործնական քայլեր ձեռնարկեցին 1983թ. առաջին խկա ամիսներից մետրոպոլիտենի շինարարության բարդ հատվածի՝ «Զորավար Անդրանիկ» կայարանի աշխատանքներում դրական տեղաշարժ ապահովելու համար: Խախ նախագծողները, երբեմն ելնելով ստեղծված բարդ իրավիճակից, հնարամիտ և գիտականորեն հիմնավորված մոտեցումների շնորհիվ ստեղծեցին նախագծեր, որոնց լուծումը միայն հնարավորություն կընծեռներ այնտեղ իրականացնել շինարարություն: «Յայրունելշին» վարչության և N 25 քունելային ջոկատի ինժեներական անձնակազմի և նախագծողների ուժերով «Զորավար Անդրանիկ» կայարանում սկսեցին իրականացվել ինքնատիպ նախագծերի ներդրումը շինարարության մեջ:

1983թ. առաջին կիսամյակում հանրապետության Կապի նախարարության «Յայկապշին» տրեստի աշխատողների ուժերով պահպանվեց կապի բոլոր կաբելների փոխադրումները «Գործարանային» կայարանից մինչև «Գարեգին Նժեթի» հրապարակ» կայարանը և ինչպես նաև դեպոյի տեղամասի համար: Տրեստի շինարազությունների միջոցով բարականին աշխատանքներ կատարվեցին մետրոպոլիտենում՝ կապի ապահովման հետ կապված գործնական քայլերի իրականացման ուղ-

դուրյամբ:

«Դայրումելշինը» մինչև 1983թ. Երքաղգործկոմին և հանրապետության կայի նախարարությանը փոխանցեց անհրաժեշտ քանակի կարելեր, խողովակներ և այլ շինարարական նյութեր՝ «Գործարանային» կայարանից մինչև «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանի հատվածում կայի աշխատանքների և կոմունիկացիաների տեղափոխման գործն իրականացնելու համար: Ինչպես միշտ, այս անգամ ևս Երքաղգործկոմի ենթակա համապատասխան կազմակերպությունները ժրագրված աշխատանքները կատարեցին ժամանակին:

Ըստը մեկ տարի տևեց «Գործարանային» գեղեցիկ կայարանարակի հողային աշխատանքը. հազարավոր խորանարդ մետրեր հող հանվեց: Սկզբնական շրջանում աշխատանքները կատարվում էին երկերը, այնուհետև՝ եռահերթ: Մեծ լարվածությամբ էին աշխատում բոլոր բրիգադները: Այս կառուցի նման դժվար օրյեկտի շինարարները քիչ էին հանդիպել, և այդ բարդությանն էլ գումարվեց ցրտաշունչ ձմեռը: Այս պայմաններում «Գործարանայինը» եղավ «Երքիմշինի» կամքի, համերաշխության, առաջադրված նպատակին հասնելու վճռականության վկայություն: Միայն ասենք, որ այս ուրանիստ կայարանարակի մետաղակնախիքի բարդ հյուսման աշխատանքները կատարեցին «Երքիմշինի» ամրանագործները: Երևանցիներին պարզեած այս հիմնալի նվերի «Գործարանային» կայարանի ստեղծման վրա ծախսվեց ավելի քան 4,1 մլն. ռուբլի:

Մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» - «Գործարանային» ուղեահատվածի գործարկումով Լենինյան շրջանի ավելի քան 100 հազարանոց աշխատավորության արդյունաբերական հանգույցն արագընթաց տրանսպորտով կապվեց մայրաքաղաքի կենտրոնին: Խորհրդանշական էր նոր կայարանի «Գործարանային» անվանակոչումը: Վրեն կարելագործներն ու քիմիագործներն, ավտոդրուագործներն ու մեթենաշինարարները ամառ թե ձմեռ, «պիկ» թե հանգիստ ժամերին երկնագույն ճեպընթացով աշխատանքի կիասմեին հաշված րոպեների ընթացքում:

Երևանի մետրոպոլիտենի ամենաբանուկ կայարաններից մեկը ներդաշնակում էր Աշխատանքի հրապարակի ճարտարապետական համալիրին, «Գործարանայինի» շքամուտքերից մեկը բացվում է դեպի

հրապարակ: Ու բանվորի հավաքական կերպարը մարմնավորող «Փառք աշխատանքին» մոնումենտալ արձանը բրոնզե հայացքով ասես ուղեկցում էր աշխատանքի շտապող իր գործընկերներին:

Ահա այդ մոնումենտալ կորողի հարևանությամբ մետրոյի շինարարները կանգնեցրին իրենց աշխատանքի կորողը՝ «Գործարանային» կայարանը:

Երջանիկ պատահականությամբ տեղեկաց «Փառք աշխատանքին» մոնումենտալ արձանի գաղափարի հեղինակին՝ արձանի «կնքահորը»:

Մետրոյի բացման այս ուրախ արարողության մասին խոսելիս վերիշենք Երևանում մարզահամերգային համալիրի հրեթեի դեպքը: Այդ դժբախտ դեպքի օրը ես այնտեղ չեմ եղել, սակայն հայտնի է բոլոր Երևանցիներին /և ոչ միայն նրանց/, ինչպես է արտասվել Ղենիրճյանը, ապա իրեն հավաքելով, սիրտ է տվել բոլորին, թե՝ «Մեր ծեռքերով կառուցենք նորը և ավելի լավը, քան նախորդ դահլիճն է եղել...»: Իրոք, մաքուր սրտի տեր մարդիկ և հատկապես ժողովրդի նվիրյալները, գիտեն ազգի համար և մաքառել և տիրել և ուրախանալ: Մետրոպոլիտենի առաջին հերթի գործարկման օրը բախտ ունենալով մոտիկ գտնվել Կարեն Ղենիրճյանին, հանդիսավոր բացման արարողությունից հետո, նա եղավ բոլոր կայարաններուն, մանրազնին ուսումնասիրեց, իր տպավորությունները ասաց: Տրամադրությունը շատ բարձր էր, բայց նրա յուրահատուկ ծիծաղը դեռ նրա ուրախության չափանիշը չէր: Աչքերին նայելիս կնկատեիր նրա ուրախ հայացքը, նրանցից դուրս թռչող կայծերը՝ դեպի հավերժություն, ինչպես իր անունն է...

Երևանի մետրոպոլիտենի շահագործման առաջին իսկ օրը Կարեն Սերոբիչն իր մոտ է կանչում կուսակցության Լենինյան շրջկոմի առաջին քարտուղար Քրիստ Մանղայյանին և իր ուրախ, ժպտադեմ հայացքով նրան ասում է:

«Դանրապետության արդյունաբերական առաջին խոշոր կենտրոնը Լենինյան շրջանն է և շատ ուրախ եմ, որ շրջանի կենտրոնում կառուցվեց «Գործարանային» կայարանը: Մետրոպոլիտենի նախագծերը նայելու առաջին իսկ օրը ծնվեց այն միտքը, որ «Գործարանային» կայարանի մոտ ապագայում կառուցվի բանվորի հավաքական կերպարը մարմնավորող «Փառք աշխատանքին» մոնումենտալ արձան: Դումով

մենք վարձահատույց կլինենք մեր Յայսատանի, մայրաքաղաք Երևանը շենացնող բանվոր դասակարգի անմնացորդ վերաբերմունքին, նրա կողմից նպատակային թափված քրտինքին»:

Նշել է արձանի տեղադրման վայրը և իր կարծիքն ասել հրապարակի ծևակորման, բարեկարգման մասին, վերջում ավելացրել է, «Գործարանում աշխատածն տարիներին հիացել եմ արտադրության բանվորների աշխատանքով, այնուհետև մայրաքաղաքի շինարարներով և հատկապես Յրազդան ստադիոնի շինարարներով։ Սակայն տարիներ շարունակ մետրոյի շինարարության ավարտի համար անմնացորդ նվիրումով բանվորների աշխատանքը վեր էր բոլորներ սպասելիքներից։ Որպես ականատես՝ երջանիկ եմ և հպարտ, որ ունենք այսպիսի բանվոր դասակարգ։ Այս թե ինչու, որպես երախտիք նրանց թողած հետքերի, մեր կողմից բանվորի կերպարը հավերժացնող կորող պետք է կառուցենք»։

Այս մասին ինձ պատմեց հետազայում Քրիստ Մանդասյանը 1993թ. ամռանը, երբ պատահաբար հանդիպեցինք ինքնաթիռում։

Ցավոր, 1992 թե 93 թվականին այդ արձանը մեկ գիշերվա ընթացքում հանեցին...

... Մետրոյի պողպատե մայրուղով արդեն անցել էին տասնյակ փորձնական գնացքներ, գծերը դիմացել բոլոր քննություններին, և մետրոպոլիտենի գծային ծառայության մասնակիցները փաստում էին, որ դրանք մոնտաժվել են բարձր որակով։ Այս փորձարկումներից հետո նիսայն 1983 թ. հուլիսի 11-ին մեղյան ունեցավ «Գործարանային» կայարանի և ուղեհատվածի գործարկումը։

«Գործարանային» շահագործումը համար աշխատանքի արդյունքն էր բանվորների, ինժեներատեխնիկական աշխատողների, ճարտարապետների, կոնստրուկտորների և բոլոր նրանց, ովքեր իրենց ուժերը, գիտելիքները, կարողություններն ու փորձը նվիրաբերեցին Երևանի համար կենսական նշանակություն ունեցող մետրոյի շինարարությանը։ Գովեստի խոսքերի են արժանի կայարանի նախագծի հեղինակ, ճարտարապետ Շենրիկ Ղուկասյանը, գլխավոր կոնստրուկտոր Զոն Հովհաննեսյանը շինարարության առաջավորներ՝ «Երթիմշին» տրեստի ամրանագործ Սահակ Մանուկյանը, մոնտաժող Սլավիկ Նարիմանյանը, երեսպատող Անդրանիկ Կիրակոսյանը, աշխատեկ Աշոտ Մանուկյա-

նը, «Յայտրանսչին» տրեստի ավագ աշխատեկ Էդուարդ Սահակյանը, գծային էլեկտրիկ Արայիկ Ղազարյանը, «Յայթունելչին» վարչության փականագործ-մոնտաժող Պետուշ Ալեքսանյանը, «Թթվալունելչին» վարչության մոնտաժող Դիմուրի Կինցուրավիլին և շատ ուրիշներ։ Նոր ուղեհատվածի և կայարանի շինարարությանը մասնակցեցին նաև շինարարներին օժանդակող շատ հիմնարկ-ծեռնարկություններ։

«Գործարանային» դարպասների բացման օրը հավաքվել էին մետրոշինարարները, բանվոր-ծառայողները, արտադրության վետերանները, կուսակցական, սովետական աշխատողներ, հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ։ Յայսատանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Ղեմիրյանը միտինգի մասնակիցների ծափահարությունների ներքո կտրեց խորիդանշական ժապավենը։ Նա ներկաներին ցերմորեն շնորհավորեց կայարանի և ուղեհատվածի բացման առիթով, նոր և մեծ հաջողություններ մաղթեց նրանց աշխատանքում։ Յանրապետության դեկավարները նստեցին գնացք։ Վազոններում տեղ գրանցուին մետրոյի շինարարները և արդյունաբերական ծեռնարկությունների աշխատողները։ Յաղորդավարի ծայնը հայտարարեց. «Յաջորդ կայարանը «Սասունցի Ղափի»։ Առաջին ուղեւտար գնացքն իր կապույտ սլաքը ուղղվեց դեպի քաղաքի կենտրոն։

... Զարգացման մեծ հեռանկար ուներ Երևանի մետրոպոլիտենը։ Գնալով նոր բափ էր ստանում «Զորավար Անդրանիկ», «Ծենգավիթ» և «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանների շինարարությունը։ Բաղաքի ընդերքի բացառիկ բարդ երկրաբանական պայմաններում «Յայրունելչին» վարչության, Միության տարրեր քաղաքներից եկած հորատողները հերոսական աշխատանքներ էին կատարում նշված կայարանների միջև ընկած ստորգետնյա ուղիները նախատեսված ժամկետներում բացելու համար։

Դեռևս թարմ էր «Գործարանային» գործարկման առաջին տպավորությունը։ Հիրավի, հաճելի և անշափ կարևոր իրադարձություն էր մետրոպոլիտենի յուրօնչյուր նոր ուղենակի շահագործման հանձնումը։ Պարզ է, որ Երևանցիների և հատկապես Լենինյան շրջանի ազգաբնակչության, աշխատողների ու շահագործումը բևեռվել էր կառուցվող հաջորդ տեղամասի, նոր կայարանի շինարարության վրա։ Տեղեկատվու-

թյան բոլոր միջոցներով հաճախակի մեկնաբանվում էր մետրոշինարարների գրեթե յուրաքանչյուր քայլը, այնպես որ բնակիչները գրեթե ստուգ գիտեին, թե երբ շահագործնան կիանձնվի հաջորդ կայարանը:

1983 թվականի սկզբներին «Գարեգին Նժդեհի հրապարակ» տեղամասում ստեղծվեց նոր՝ թեր հրանի տեղամասը, որի դեկավար նշանվեց Միխաղի Պոժիղալը: Անվանումն արդեն իսկ հուշում էր, որ այն ստեղծվել է կայարանի թեր շարժասանդուլքի հրանի և սպասարկման հետ կապված ստորգետնյա պահեստների, այլ մակերեսների շնորհարության համար: Շնորհարները փետրվարին ձեռնամուխ եղան տարածքի հրացման աշխատանքներին:

Ամբողջ «Գարեգին Նժդեհի հրապարակ» վերածվել էր ընդարձակ շինհրապարակի և բոլոր կողմերից երևում էր լեռնային համալիրը, որը վկայում էր, որ այստեղ գործում են շինարարները: Իրականացվում էր «Գարեգին Նժդեհի հրապարակի» կայարանի թեր հրանի անցահատումը, որի ավարտելուց հետո սկսվելու էր կայարանի անցահատումը հրապարակի կողմից: Իսկ մյուս ծայրից այդ գործն անում էր N160 շինոնտաժային վարչության՝ Վ. Գևորգյանի դեկավարած N10 հրանի տեղամասի կոլեկտիվը:

Դատկապես յուրաքանչյուր շաբաթվա վերջում ավելի ցայտուն էին նկատվում մետրոշինարարների կատարած աշխատանքները: «Գործարանային» կայարանի շահագործումից մեկ շաբաթ էլ չեղ անցել, հարևան «ստարտի» պատրաստվող հաջորդ կայարանում արդեն ավարտվել էին կենցաղային մասնաշենքի շինարարությունը, և սկսվել էին ներսի հարդարման աշխատանքները, կառուցվել էին անցուղիները, բարեկարգվել գեղեցկացվել էր շինարարական բակը:

Կայարանային թունելների նիշին հասնելու համար տեղամասի մարդիկ պետք է բացեին 211 և 124 մետր երկարությամբ երկու թունելները, դրանց վերջնամասում պետք է իրականացվեին մի շարք լեռնային աշխատանքներ: Այդ աշխատանքները հիմնականում ավարտվել էին, և հորատողները գործում էին կայարանային թունելների մատուցներում: Սա ամենակարևոր աշխատանքներից էր, առանց որի ավելի լայնածավալ գործողությունների ձեռնարկումն անհնարին էր:

Մինչև կայարանային թունելի անցահատումը, մետրոշինարարները պետք է բացեին յոթական մետր ընթացքային թունելները: Վերջիններում

և մոտեցման թունելի հատման մասում անհրաժեշտ էր կատարել միաձույլ թեսոնապատում, այդ գործը վստահվել էր Ս. Շահուլվարյանի ղեկավարած հորատողների բրիգադին: Ամեն ինչ պատրաստ էր մեծ ճակատով աշխատանքներն իրականացնելու համար:

Ինչպես հայտնի էր բոլորին, «Գարեգին Նժդեհի հրապարակի» կայարանի գործարկման ժամկետը նախատեսված էր 1985թ.: Չնայած մինչ այդ օրը կար երկու և կես տարի, բայց մեծ էին նաև կատարվելիք աշխատանքների ծավալները:

Դժվար չէր կրահել, որ թեկուզ շինանյութերի մատակարարման գործում տեղի ունեցող վիճակումներն անպայման բացասաբար կանդրադառնան առաջադրանքերի կատարման վրա, լրացուցիչ դժվարություններ կստեղծեն մետրոշինարարների աշխատանքում: Այդ նպատակով խոսենք աննշան բվացող մի հանգամանքի բետոնի համաչափ մատակարարման մասին: Չարաքական տեղամասում անհրաժեշտ էր 120 խորանարդ մետր բետոն: Սակայն երկու շաբաթվա աշխատանքների արդյունքից պարզվեց, որ 36-38 խորանարդ մետրից ավելի չեն ստանում: Իսկ բետոնն աշխատանքների իրականացնան հարցն էր: Սուտեցման թունելը վաղուց բացված էր, պետք է բետոնացվեր հատման մասը, որպեսզի սկսվեր անցահատումը: «Բետոնի քաղցը» տանջում էր ոչ միայն N10 հրանի կոլեկտիվին, տարբեր տեղամասերում և թետոնի պատճառով աշխատանքը չէր ընթանում անհրաժեշտ տեմպով: Ահա թե ինչու մետրոպոլիտենի շտարի նիստում, որը կայացվել էր 1983թ. հուլիսի 25-ին, այս նաև սուր խոսակցություն գնաց և շտարի նախագահ, ՀՍՍՀ նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Յանտ Յայրապետյանի կողմից կոնկրետ համեմարտարություններ տրվեցին՝ կարծ ժամանակում վերացնելու «աննշան» բվացող թերությունները: Դետագա ուսումնասիրություններից պարզ նկատվում է, որ նման հարցադրումներ չեն եղել, և աշխատանքներն ընթացել են իհմնականում մշակված ցանցային գրաֆիկին համապատասխան: Եվ իրոք, մետրոշինարարության մեջ «մանրութներ» չկան: Ի դեպ, մետրոշինարարները միայն պահանջողի դերում չեն, որ հանդես են եկել: Չատ հաճախ իրենց ինժեներատեխնիկական անձնակազմի ուժերով կարողացել են իրենց նտահացումներով արագ կերպով լուծել անլուծելի բվացող խնդիրներ, երբեմն էլ հանդես են եկել իրենց սեփական նախածեռնությամբ,

որն էլ դրական արդյունք է տվել: Օրինակ, բավական է ասել, որ միայն 1983 թվականին N 160 շինոնտաժային վարչության մասնագետները սեփական ուժերով պատրաստեցին երեք էրեկոտր /թուշե վահանակ-ներ մոնտաժելու հարմարանք/, որը մեծապես նպաստեց աշխատանք-ների արագացմանը:

Բացի «մանրութերից» շատ հաճախ տեղի էին ունենում իրոք խոշ-որածավալ աշխատանքների ծախողման դեպքեր, որոնց դեմքն առնելը կարծեք անհնար էր: Դեպքեր շատ են եղել, լուծվել են Միության և հան-րապետության կազմակերպությունների ուժերով՝ միայն և միայն գործ-նականորեն ճիշտ և ժամանակին հարցերին ընթացք տալու շնորհիվ: Եղել են դեպքեր, երբ շատ ու շատերը, նույնիսկ «փորձված» մարդիկ մտածում էին, որ անհնարին է հայրահարել առաջին ամիսների պարա-պուրդը: Սակայն հայրահարվում էր հանրապետության նյութատեխնիկական մատակարարման, նրա դեկավարի՝ Եղիշե Ասցարյանի և հատկապես այս գործի առաջին պատասխանատու ան-ձի, հարգված ու սիրված Իվան Պապիկի անքում աշխատանքի, հետևողականության և սրտացավ մոտեցման շնորհիվ: Սակայն լինում էին դեպքեր, երբ նրանց սրտացավ վերաբերմունքն էլ չէր օգնում գոր-ծի դրական ընթացքին: Օգնության էին հասնում հանրապետության կազմակերպությունները և կարծեք թե անհնարինը դառնում էր հնարա-վոր, մեծ ջանքերի ներդրմամբ՝ կանխվում ծախողումը: Բերենք միայն մեկ օրինակ:

1983թ. գարնանամուտին Երևանի մետրոպոլիտենի օբյեկտներում ծանր դրություն ստեղծվեց: Ակզրնական շրջանում որոշ ընդհատումներով, հետո բոլորովին դադարեց երկարեցող կոնստրուկցիայի բլոկ-ների մատակարարումը: Որոշ տեղամասերում հորատանցման աշխա-տանքները դադարեցին, մինչեւ Սիության ճանապարհային շինարա-րության նախարարության կողմից Բարվի և Տաշբենդի երկարեցող կոնստրուկցիաների գործարաններին հանձնարարվել էր համակարգ-ված և համաշափ Երևանի մետրոպոլիտենին մատակարարել երկարե-ցողուներ, կոնստրուկցիաներ, որի համար էլ Յայսատանից նրանց հատ-կացվել էր մեր մետրոպոլիտենին հասանելիք ֆոնդից ցեմենտի և ար-մատուրայի անհրաժեշտ քանակ: Կոնստրուկցիաներով ժամանակին չափահանգելը կրախի առաջ կանգնեցրեց մետրոյի շինարարությունը:

Վիճակը փրկեցին «Յայիհրոբունելշինի» և Զարենցավանի երկաքբ-տոնե կոնստրուկցիաների գործարանները: Կառավարության օգնու-թյան /համապատասխան ֆոնդերի տրամադրման/ և մետրոպոլիտենի վարչության ու «Յայբունելշինի» գործնական օգնության ու հետևողա-կանության, ինչպես նաև գործարանների ինժեներատեխնիկական աշ-խատողների /«Յայբունելշինի» մասնագետների հետ/ շնորհիվ շատ կարծ ժամանակում սկսեցին թողարկվել երկաքբետոնե կոնստրուկցի-անները: Ի դեպ, պետք է ասել, որ Զարենցավանի «ցենտրալիտ» գործա-րանն այդ կարևոր կոնստրուկցիայի թողարկման համար կազմակեր-պեց հզոր հրապարակ: Մինչև տարվա վերջը թողարկվեցին երկաքբ-տոնե 42 բլոկներ: Կանխվեց կարևոր հանգույցի աշխատանքների ծա-խողումը:

«Գործարանային» կայարանի շահագործումից հետո մայրաքաղա-ցի բնակչությունն ավելի էր հետաքրքրվում, թե մեծ ուղևորահոսք ունե-ցող «Զորավար Անդրամիկ» կայարանը երբ կգործարկվի: Անկախ տե-ղամասի աշխատանքների բարդությունից, մետրոյշինարարները գործ-նական քայլերով ծգոտում էին տեղամասի աշխատանքները շուտ ավարտել: Սեպտեմբերի վերջին Արտյոն Առաքելյանի բրիգադը կատա-րեց միջին կայարանային բունելի անցահատումը՝ հնարավորություն տալով աշխատանքային ճակատ քացել դեպի դուրս եկող որմնախորշ, ներքին հենակետային գետնանցքի հատվածում, որը գտնվում էր ըն-թացքային բունելի կողքին: Սա ամենաբարդ աշխատանքներից մեկն էր, որի հրականացումը հնարավորություն տվեց ստեղծել հենարա-կողային կայարանային բունելներում աշխատանքները լայնորեն իրա-կանացնելու համար:

Արդեն ամբողջությամբ անցել էին արտաքին հենակետային գետ-նանցքը և ծեռնամուխ եղել բետոնապատճան աշխատանքներին, որոնք իրականացվում էին անընդիատ աշխատանքի պայմաններում ժորա Ալեքյանի և Արտյոն Առաքելյանի բրիգադների կողմից: Բացի այդ Արտյոնը կատարում էր միջին կայարանային բունելում տրամսֆորմա-տորի ենթակայանի ուղղությամբ հորատանցման աշխատանքները: Չնայած ծեռնարկված և գործնականորեն իրականացված մեծ ծավալի աշխատանքներին՝ տեղամասում գործերի ավարտի մասին դեռևս խոսք լինել չէր կարող: Օր օրի առաջացող ստորգետնյա աշխատանք-

Ների բարդությունները ցույց էին տալիս, որ կայարանի շահագործումն իրականացվելու է ոչ թե նախատեսված ժամկետում, այլ ոչ շուտ, քան երկու տարի հետո:

Ավարտին էր մոտենում 1983 թվականը: Տարվա առաջին ամիսների համեմատ «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանի պատկերը խիստ փոխվել էր: Արդեն որերորդ ամիսն էր՝ չկային շատրվանները, զովաշունչ պուրակը, իսկ դրանց տեղում բացվել էին երկու խոշոր շինուազարկներ, որտեղ գործում էին թեք հորանի տեղամասի շինարարները: Այդ ամենը մայրաքաղաքի ստորգետնյա մայրուղու նոր ուղևասի շինարարության, այսպես ասած, երևացող մասն էր: Ընդերքում թունելների տեղամասում, ամեն ինչ բարվոք վիճակում էր, աշխատանքներն ընթանում էին գոաֆիկի համաձայն: Բավական է ասել, որ միայն մեկ շաբաթվա ընթացքում դեկտեմբերի 5-10-ը, աջ ընթացքային թունելի հորատանցողները պլանավորված 8.4-ի փոխարեն հորատանցել էին 9.8 մետր, որն իրականացվում էր տեղամասի պետ Գ.Դանիելյանի հսկողությամբ:

Թունելների տեղամասի կոլեկտիվի առաջադրանքն էր երկու թունելներում անցահատելմոտ 490-ական մետր՝ մինչև «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանը: Աջակողմյան թունելն անցահատվում էր փորձառու մետրոշինարար Ալեքսան Մասուրյանի, իսկ ձախակողմյան՝ Ավագ Մնացականյանի ղեկավարած բրիգադի կողմից:

1983թ. «Գարեգին Նժդեհի հրապարակ» տեղամասը շինարարների համար հաջող տարի եղավ: Ամրողությամբ ավարտվեց տեղամասի կենցաղային հատվածի շինարարությունը, և մետրոշինարարների տրամադրության տակ կային ցնցուիդ 8 խցիկ՝ կանաց և տղամարդկանց համար, չորանոց, բուժկետ, հարմարավետ աշխատասենյակներ: Իհարկե, տեղամասում եղան դժվարություններ, որոնք կոլեկտիվի ուժեղ կամքով և համառությամբ հաղթահարվեցին:

1983 թվականի բոլոր ամիսներին աշխատանքները լավ էին ընթանում մետրոպոլիտենի երկրորդ հերթի «Ազափինյակի» տեղամասում: N 24 հորանը (գտնվում էր Մաթենատիկական մեթենաների գիտահետազոտական ինստիտուտի հետևի հատվածում) բոլոր կողմերով շրջապատված էր բնակելի շենքերով և հրապարակի նեղվածքի պատճառով հորանի համար ստացված սարքավորումները դասավորելուց հետո

շարժվելու տեղ չկար: Այստեղ արդեն սկսվել էր լեռնային կոմպլեքսի մոնտաժումը: Փականագործ մոնտաժողների բրիգադը ղեկավարում էր հորանի գլխավոր մեխանիկ Ռուբեն Մկրտչյանը: Լավ էին աշխատում զողող Գրիշա Սարգսյանը, մոնտաժողներ Յայկ Պողոսյանը և Վասիլի Մկրտչյանը: Մեծ հաջողություններ էին ձեռք բերել նաև հորատողներ Սերգեյ Ասմարյանը և Սերգեյ Յարությունյանի, կոմպլեքսային բրիգադի բրիգադավար Ալեքսանդր Նավասարդյանի մարդիկ: Յորանի գլխավոր մեխանիկ Ռուբեն Մկրտչյանի կողմից աշխատանքերի հստակ կազմակերպման շնորհիվ մինչև տարվա վերջն ավարտվեցին հորանի շինարարական աշխատանքները:

«Դայպետտրաննախագիծ» ինստիտուտի թունելների բաժինը ժամկետից շուտ ավարտեց 1983թ. նախատեսված նախագծային - հետազոտական աշխատանքները և ձեռնամուխ եղավ 1984-1985թթ. նախատեսված աշխատանքների հրականացմանը: Պահանջորդված էր մինչև 1985թ. հուլիսի 1-ը ավարտել առաջին հերթի բանվորական գծագրերը, «Գործարանային» կայարանից մինչև «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանը: Նախագծային աշխատանքները մեծ թափով կատարվում էին Ժ.Ռուչյանի, Ա.Պապյանի, Ն.Յովհաննիսյանի, Լ.Շիգրանյանի ղեկավարությամբ: Լավ էին աշխատում նախագծողներ պահագ ինժեներ Գ.Արիլովը, Վ.Մկրտչյանը, Ա.Շովիաննիսյանը:

...1983 թվականի նոյեմբերին Դայպատանի կառավարությունը նորից քննարկեց «Երևանի մետրոպոլիտենի շինարարության մասին» հարցը: Ընդունված հանձնարարականների կատարումը որոշիչ եղավ 1984թ. աշխատանքների լայնածավալը գործողությունների ձեռնարկման համար: Կառավարությունը խնդրեց ԽՄՀՍ տրանսպորտային շինարարության նախարարությանը Երևանի մետրոպոլիտենի շինարարություն ապահովել անհրաժեշտ քանակի բուժք վահանակներով, իսկ ԽՄՀՍ ծանապարհային հաղորդակցության նախարարությանը՝ հատկացնել լրացուցիչ կապիտալ ներդրումներ՝ Աջափնյակ և 26 կոմիսարների շոշան գնացող մետրոյի գծի նախագծային հետազոտական և շինարարության իրականացման նախապատրաստական աշխատանքների համար: Միութենական նախարարությունները կատարեցին Դայպատանի կառավարության խնդրանքը:

\*\*\*

ՀՍՍԴ Նախարարների խորհրդի կողմից ֆինանսների և այլ կարևոր հարցեր հոգալուց հետո հնարավորությունը ընձեռվեց 1984թ. ընթացքում Երևանի մետրոպոլիտենի կառուցմամբ զբաղվող կազմակերպություններին ծեռնամուխ լինել անհրաժեշտ աշխատանքների կատարմանը:

Նախ, մետրոպոլիտենի վարչությունը 1984թ. առաջին եռամյակին լիմիտավորեց «Հայպետրանսախագիծ» ինստիտուտին Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի երկրորդ տեղամասի համար ստանդարտ և ոչ ստանդարտ սարքավորումների նախագծերի մշակման, անհրաժեշտ փաստաթղթերի ստեղծման համար: Այս աշխատանքները կատարվեցին իհմնականում 1984թ. առաջին կիսամյակի ընթացքում: Բացի այդ, նախագծողները ծեռնամուխ եղան տնտեսական և սոցիալական զարգացման ողջ ծրագրին համապատասխան, Աջափնյակի և 26 կոմիսարների շրջանի տեղամասերում մետրոպոլիտենի գծերի երկարացման նախագծային աշխատանքներին, ինստիտուտի պատվերների իհման վրա «Երևաննախագիծ» ինստիտուտը 1984թ. առաջին եռամյակին ամբողջությամբ ավարտեց «Գարեգին Նժդեհի հրապարակ», «Զորավար Անդրանիկ» կայարանների, ինչպես նաև ստորգետնյա կայարանների և սպասարակների բանվորական գծագրերը և ճարտարապետական մշակումները:

Երևանի մետրոպալիտենի վարչությունը, «Հայթունելշինը», ՀՍՍԴ արդյունաբերության շինարարության նախարարությունը, Երքաղ-խորհրդի գործկոմը և «Հայպետրանսախագիծ» ինստիտուտը Երկու ամսվա մանրազնին ուսումնասիրություններից հետո ծշտեցին «Գործարանային» կայարանից մինչև «Գարեգին Նժդեհի հրապարակ» և «Զորավար Անդրանիկ» կայարանների շինարարական աշխատանքների հրականացման գրաֆիկը, այս հաշվով, որպեսզի 1985 թվականին ապահովվեր նրանց շահագործումը: /նիշտ է, շահագործման ժամկետների մեջ որոշ շեղումներ եղան, սակայն պատճառները միանգանայն օբյեկտիկ էին, չպետք է անտեսել մետրոշինարարների անձնության աշխատանքը:/

Երքաղխորհրդի գործկոմի ենթակա շինարարական կազմակերպությունների գործնական աշխատանքի շնորհիվ նախատեսված ժամ-

կետին՝ 1984թ. սեպտեմբերի 1-ին ավարտվեց ամենակարևորագույն աշխատանքներից մեկը՝ «Գործարանային»-«Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանների միջև հատվածում հաղորդակցման գծերի փոխադրումների աշխատանքը. որի շնորհիվ ստորգետնյա աշխատանքների ընթացքում պարապուրդ չառաջացավ: Նույն հաջողությամբ իրականացվեց «Գարեգին Նժդեհի հրապարակի» վերակառուցման նպատակով նախատեսված կոմունիկացիաների տեղափոխումը հնարավորություն տալով ժամանակին ավարտել հրապարակի աշխատանքները: Անհրաժեշտ է միաժամանակ նշել, որ հանրապետության Պետմատը Երքաղգործկոմին ժամանակին հատկացրեց 10,5 կմ կարելը, որը մեծապես նպաստեց աշխատանքների ավարտին:

Չարենցավանի գործիքաշինական գործարանը, Լենինականի (Գյումրի) դարրնոցա-մանիչային արտադրական միավորումը, հղկող հաստոցների գործարանը, Երևանի տեխնոլոգիական սարքավորումների արտադրական միավորումը, Կիրովականի (Վանաձոր) ավտոգեն և Երևանի ֆրեզերային հաստոցների գործարանները, «Հայքինմեքենա» արտադրական միավորումը, Երևանի «Հաստոցանորմալ» և Չարենցավանի «Ցենտրոլիտ» գործարանները 1984թ. առաջին խև օրից Երևանի մետրոպոլիտենի համար պատրաստեցին ստանդարտ և ոչ ստանդարտ սարքավորումներ: Հանրապետության արդյունաբերության շինարարության նախարարությունը սկսած 1984թ. ապահովեց մետրոշինարարներին Երկարքետոնե հատուկ կոնստրուկցիաներով: Ի դեպ, 1984-1985թթ. նախատեսված էր շինարարներին տալ 2,5 հազ. խորանարդ մետր կոնստրուկցիաներ: Մինչև տարվա վերջը 1,25 հազ. տոննա կոնստրուկցիայի համաշափ մատակարարումը մեծապես նպաստեցին մետրոշինարարների աշխատանքներին:

Հանրապետության մոնտաժային և հատուկ մոնտաժային գլխավոր վարչությանը ևս կառավարությունը կոնկրետ հանձնարարություններ տվեց: «Հայթունելշինի» հետ պայմանագրային սկզբունքով, որպես ենթակապայառու կազմակերպություններ, գլխավոր վարչության ստորաբաժնումներն էլեկտրամոնտաժային և սանիտարատեխնիկական աշխատանքներ կատարեցին մետրոպոլիտենի տեղամասերում և ամրող-ջությամբ վերցրած ժամանակին ավարտեցին 1984թ. նախատեսված աշխատանքները:

Մետրոպոլիտենի բոլոր տեղանասերում 1984 թվականի առաջին իսկ օրերից լայնածավալ աշխատանքներ սկսվեցին:

Մետրոշինարարների 1984թ. կատարվելիք աշխատանքների ծրագիրը պարզ էր. «Գարեգին Նժդեհի հրապարակ» տեղամասում կատարել աջ և ձախ կայարանային թունելների անցահատումը, դրանցում սկսել հարդարման աշխատանքները, ավարտել նաև ընթացքային թունելների անցահատումը՝ յուրաքանչյուրը 50-ական մետր երկարությամբ, ծեռնամուխ լինել միջին կայարանային թունելների անցահատմանը, սկսել ու ավարտել ստորգետնյա ուժաքարշային ենթակայանի շինարարությունը:

Իհարկե հետագայում ցույց կտրվի, թե արդյո՞ք մետրոշինարարներն իրենց առջև դրված խնդիրները հաջողությամբ կատարեցին: Մի քան պարզ էր, Նոր տարին սկսեցին մեծ հաջողությամբ, իսկ հետագա աշխատանքներում տեսանելի էին մետրոշինարարների սրտացավությունն ու գործի նկատմամբ մեծ պատասխանատվությունը, իրենց նպատակին հասնելու վճռականությունը:

Երևանյան մետրոպոլիտենի գործարկման երրորդ տարվա առաջին եռամսյակում կարևոր իրադարձություն նշվեց մետրոպոլիտենի կյանքում՝ իրականացվեց աջ ընթացքային թունելի միացումը «Թունելեզր»-«Գարեգին Նժդեհի հրապարակ» հատվածում: Դա լուրջ ծեռքբերում էր, ոչ միայն նոր ուղենասի շինարարության գործում, այլ ընդհանրապես մետրոշինարարության մեջ: Թունելների միացումը տեղի ունեցավ «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանից 54-րդ և «Շենգավիթ» կայարանից 389-րդ մետրի հիշում:

Հավաքափակուլիք: Մետրոպոլիտենում կա այդպիսի մի հատված՝ վերջին կայարանների հարևանությամբ: Դա հիմնականում երկայուղ փակուլիք է, որտեղ կարճատև դադարի համար կայանվում են գծում եղած գնացքները: «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանի շինարարությանը գուգընթաց կառուցվում էր նաև հավաքափակուլիքն: Այստեղ աշխատում էր Ապրես Բաբայանի ղեկավարած հորատողների բրիգադը: Այս բրիգադը ևս համարվում էր Երևանի մետրոշինի ամենառաջավոր բրիգադներից մեկը և «Հայրունելշինի» ղեկավարությունն առաջին իսկ օրից նրանց ուղարկեց «Գարեգին Նժդեհի հրապարակ» տեղամասի ամենաքարող օդակներից մեկում աշխատելու համար: Նրանց ու-

ժերով արդեն կատարվել էր 24 մետր անցահատում: 1984թ. առաջին եռամսյակը դեռ չավարտված «Գարեգին Նժդեհի հրապարակ» տեղամասում մետրոշինարարները կատարեցին եռամսյակի խնդիրները:

1984թ. երկրորդ եռամսյակից Օրջոնիկիձեի պողոտայից (այժմ Արշակունյաց) ոչ հեռու N 25 թունելային ջոկատի N 3 տեղամասի հորատողները (պետ Ա.Բուշնակ) ծեռնամուխ եղան 85 մետր առվափոսի (խրամատ) փորելուն, որտեղ պետք է դրվեն թուզե վահանակների օղակները և դրանք ծածկվեին հողով: Դրա հորատանցումն սկսվում էր «Շենգավիթ» կայարանի կողմից: Մարտի առաջին օրերին աջ թունելով անցել էին 320 խոր.մետր, ծախում՝ 300 խոր.մետր:

Գարեգին Նժդեհի անվան կենտրոնական հրապարակում աշխատում էր թեր մուտքի տեղամասի կոլեկտիվը: Ինչպես 1984թ. առաջին, այնպես էլ երկրորդ եռամսյակի բոլոր ամիսներին այստեղ աշխատանքները կատարվում էին ժամանակից 5 օր շուտ: Առավել մեծ հաջողությունների հասավ Ս.Սարգսյանի բրիգադը, (օդակավարներ Ի.Կարապետյանը, Վ.Սիմոնյանը, Ա.Կոպեյկոն և Ա.Անդրեասյանը):

...Միանգամայն հասկանալի էր Երևանցիների անհանգստությունը՝ օր առաջ տեսնել «Զորավար Անդրանիկ» կայարանի գործարկումը: Իրոք, անշափ սուր էր զգացվում նրա կարիքը մայրաքաղաքի գերբեռնված կենտրոնում: Ինչպես ասացինք, «Զորավար Անդրանիկ» կայարանի շինարարությունն աննախադեպ փորձ էր երկրի մետրոշինարարության մեջ: Ենշտ է, նման փորձ գործող մետրոյի պայմաններում մեզանից առաջ կիրառվել է Մսոկվայի մետրոշինարարության մեջ: Մինչդեռ մեզ նույն առաջ պայթեցնան կես քայլ առաջ անցնել հնարավոր չէր: Իսկ այստեղ ինչպիսին էր գործերի վիճակը 1984թ. առաջին կիսամյակում:

Աշխատանքների բացառիկ անբարենպաստ վիճակը «չեզզբացմելու» նպատակով «Դայակտուրանսախագիծ» ինստիտուտը 1984թ. առաջին եռամսյակի վերջին ներկայացրեց նոր նախագիծ «Զորավար Անդրանիկ» կայարանի աշխատանքները կատարելու համար: Աշխատանքներում լուրջ տեղաշարժ կատարելու համար կազմակերպվեց երկու տեղամաս՝ թեր հորանի և N 7 հորանի: N 25 թունելային ջոկատի մարդիկ հորատանցման մեծ աշխատանքներ էին կատարում միջին կայարանային 103 մետր երկարություն ունեցող հատվածում: Դորա-

տանցման աշխատանքների իրականացման շնորհիվ 1984թ. երկրորդ եռամսյակի վերջին փակվեց առաջին եռամսյակից առաջացած ճեղքվածքը: Այս գործում իրենց պատշաճ բարձրության վրա գտնվեցին Արտյոն Առաքելյանի դեկավարած կոմպլեքսային բրիգադի աշխատողները:

...Գործերի վիճակն անհամեմատ լավ էր N 160 շինոնտաժային վարչությունում, որտեղ արդեն երրորդ տարին էր ինչ դեկավարում էր Կարեն Աղամյանը: Բավական է ասել, որ 1984թ. առաջին կիսամյակում շինոնտաժային վարչության նարդիկ կատարեցին այնքան աշխատանք, որ չեր կատարվել նույնիսկ ամբողջ 1983 թվականին: Այսինքն, 1983թ. ամբողջությամբ իրականացվել էր 2 մլն 188 հազ.ոություն, իսկ 1984թ. առաջին կիսամյակում 2 մլն. 198 հազ.ոություն աշխատանք: Խելացի և բանհմաց շինվարչության երիտասարդ պետը գործերի կազմակերպման մեջ փորձ էր կուտակել: Նրա դեկավարած շինվարչության բոլոր օդակներում, հատկապես 1984թ. ընթացքում, դրական լուրջ տեղաշարժ կատարվեց: Օգոստոսի 10-ին տեղի ունեցավ ծախ ընթացքային թունելի միացումը: Միացումն իրականացրեց Յուրա Չատինյանի դեկավարած հորատանցողների օդակը: Տեղամասում գործնական քայլեր էին ծեռարկել նաև աշխատանքները շուտ վերջացնելու համար և երկրորդ՝ նախապատարաստվել էին մեծ հանդիսավորությամբ նշելու այդ օրը: Տղաները չորսն էին՝ բրիգադավարից բացի: Նրանք իրենց լավ աշխատանքի, բարեխղճության և բարձր կարգապահության շնորհիվ բարի համբավ էին վայելում ամբողջ շինոնտաժային վարչությունում: Դրանք էին Վոլոյյա Խլդարյանը, Արիստոսել Պոպովը, Ավետիք Պետրոսյանը և Արտյուշա Շովիաննիսյանը:

...«Ծենգավիթում» սկսվել էին բուն կայարանի կառուցման աշխատանքները: Տեղամասի նարդիկ սեպտեմբերի 14-ին լցուցին բետոնի առաջին խորանարդ մետրը: Դա կոլեկտիվի կյանքի ամենանշանավոր օրերից մեկն էր: Չնայած կայարանն աշխատում էր բաց եղանակով և այն լինելու էր միակամար, սակայն բետոնացումը բարդ գործ էր և իր կոնստրուկցիայով յուրօինակ էր: Կայարանի շինարարական աշխատանքների համաչափությունն ապահովելու համար անշափ կարևոր էր ունենալ համապատասխան մետաղական կաղապարներ: Զոկատի մասնագետների ուժերով պատրաստվեցին երկու կաղապար պատերի

հանդիպակաց հատվածների բետոնապատճան համար՝ յուրաքանչյուր 4,5 մետր բարձրությամբ և 6 մետր երկարությամբ: Դրանք արդեն օգտագործվում էին: Մասնագետներն ավարտում էին առաստաղի կամարած կաղապարի պատրաստումը: Այդ ամենը որպես մեկ ամբողջություն տեղադրվելու էր շարժվող հարմարանքի վրա, որի օգնությամբ բազմատոննանոց կաղապարը համենատարար հեշտությամբ կտեղաշարժվեր: Այդ մեկ կաղապարով իրականացվելու էր ոչ միայն կայարանասրահի բետոնապատումը, այլև կառամատույցներինը՝ 103 մետր երկարությամբ նախասրահը, ուժաքարչային ներքակայանը: Ընդհանուր երկարությունը հասնելու էր 204 մետրի: Այդ վիթխարի շինությունը միաձույլ բետոնով կառուցելու համար պահանջվում էր մեծ քանակի ամրան: Թունելային ջոկատում հիմնվեց հատուկ ամրանային արտադրանք, որի խնդիրն էր ժամանակին ստեղծել կայարանի և հիշատակված մյուս օրյեկտների ամրանային կմախքը:

Զոկատի կողմից «Գործարանային» ուղղությամբ շարունակվում էր ընթացքային թունելների հորատանցումը: Մնացել էր անցահատել աջ ընթացքայինում՝ 150, ծախում՝ 180 մետր: Ինչ խոսք, միաժամանակ երկու կայարանների շինարարությամբ զբաղվելը ծանր էր ջոկատի աշխատողների համար, սակայն շատ ու շատ խոշընդուների վերացման ժանապարհով աշխատանքները լավ էին ընթանում:

Երևանի մետրոպոլիտենի շահագործումից անցել էր շուրջ երեք տարի և արդեն երևանցիների կենցաղի մեջ էր մտել մետրոպոլիտենը, այդ են վկայում, «Գործարանային» կայարանի՝ ուր շահագործման չիանձնված մետրոյից օգտվող մարդկանց քանակի ավելացումը: Ամբողջությամբ վերցրած երևանի մետրոպոլիտենից օգտվելու պատկերը հետևյալն է: Եթե 1981թ. մետրոպոլիտենով օգտվողների թիվը կազմում էր 17,4 մլն. ուղևոր, մյուս երկու տարիներին պատկերը եղավ 18,1 և 21,5 մլն. մարդ: Մինչդեռ արդյունաբերական ծեռարկությունների հարևանությամբ գտնվող «Ծենգավիթ» կայարանի շահագործումն էլ ավելի կրաքելավեր մայոքաքաղաքի տրանսպորտային ապահովումը: Անհանդանելի էր այս գործարանային կայարանի դեպի վագոնի հավաքականի ելքը երկու ճանապարհային ընթացքային թունելների կառուցման պահումը համարակալ կարությունը կատարվել էր առաջարկական բաղադրամասի այս հատվածը մետրոպոլիտենի գծով կապել քաղաքի կենտրոնի հետ: Բա-

ցի այդ, հնարավորություն կընծեռվեր շուտափույթ շահագործման հանձնել վագոնի հավաքակայանը,(այն այսօր գտնվում է «Շենգավիթ» կայարանին հարող տարածքում)առանց որի մետրոպոլիտենում նորմալ աշխատանքի ապահովումն անհնարին էր: 1984թ. նոյեմբերի առաջին տասնօրյակում 2600 մետր ընթացքային թունելից, շինարարաներին մնում էր կատարել 310 մետրը, որի համար ծավալվել էր լարված աշխատանք:

Երևանի մետրոպոլիտենի շինարարության համար «Հայիդրոնախագիծ» ինստիտուտի գեղեցիկայի բաժնի վարիչ Յ. Մալխասյանի գլխավորությամբ կատարվեցին ներգետնյա հատկագիծնան բարձրորակ գեղեցիկական հետազոտություններ, որի շնորհիվ «Հայրունելշինի» շինարարները գերազանց գնահատականով կատարեցին հանդիպակաց խորշերի փորվածքները:

«Հայրունելշինի» մարկեյերներն այդ աշխատանքներն կատարեցին մեծ ճշտությամբ: N 160 շինմոնտաժային վարչության հորատողները մարտին ավարտեցին «Շենգավիթ» կայարանի և «Գործարանային» հրապարակի միջև աջ ընթացքային թունելի, իսկ օգոստոսին՝ ծախ ընթացքային թունելի հանդիպակաց փորվածքամիացումը: Միացման անծշուտությունը չանցավ 25 միլիմետրից: Բարխիղճ և կազմակերպված աշխատանքով մեծ հեղինակություն վաստակեցին N 160 շինմոնտաժային վարչության մարկեյերներ Ժ.Գրիգորյանը, Զ.Անտոնյանը, հերթափոխի մարկեյերներ 8.Օգանովան, Ե.Սկրիտովան, Տ.Տիգրանյանը, Բ.Գրիգորյանը, ինչպես նաև մարկեյերների աշխատողներ Ա.Շտենկոն և Լ.Իվանյանը:

Բարվի և Տաշքենդի համապատասխան կազմակերպությունների երկարետուն կոնստրուկցիաները ժամանակին չառաքելու պատճառով առաջացած ճեղքածքն աստիածանաբար վերացավ և այս ուղղությամբ արմատական բեկում նկատվեց հատկապես 1984թ. երկրորդ կեսից: «Հայիդրուներգոշինի» շարքախի շինանյութերի ծեռնարկությունը կազմակերպված ու բարեխղճորեն կատարեց մետրոշինարարների պատվերը: Գործարանի տնօրեն Գ.Խուլյոյանը, գլխավոր ինժեներ Կ.Չարչյանը և արտադրանախ պետ Կ.Բարաջանյանը ծեռնամոլուս եղան իրենց իսկ կողմից մշակված՝ Երևանի մետրոյի շինարարության համար անհրաժեշտ կոնստրուկցիաների բողարկման աշխատանքնե-

րին: Նրանք կազմակերպեցին հատուկ տեղամաս երկարետուն բլոկներ թողարկելու համար և մի շարք այլ կազմակերպչական տեխնիկական միջոցառումների իրականացման շնորհիվ լուրջ հաջողությունների հասան: Դամապատասխան սարքավորումներ, մետաղական կաղապարներ ստացան Զարենցավանի Դաստոցաշխանական և հանրապետության գյուղատնտեսության նախարարության մեխանիկական վերանորոգման գործարաններից: Նրանք բարի հետք թողեցին մայարացարակի մետրոշինարարության գործում:

...ինչպես հայտնի է Երևանի մետրոպոլիտենի շինարարության առաջին հերթն ավարտվելու էր «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանով: N 160 շինմոնտաժային վարչության կոլեկտիվն արդեն ծեռնամուխ էր եղել մայրաքաղաքի ստորգետնյա մայրուղու երկողորդ հերթի ստղծնանց: Իսկ 1984թ. ընթացքուն ինչպիսի աշխատանքներ կատարվեցին այստեղ: Նախ դեպի Աջափնյակ գնացող մետրոյի նոր ուղեմասի շինարարությունն սկսեց իրականացնել N 24 հորանի: Ուժիկ Ալեքսանդրի դեկավարած տեղամասի կոլեկտիվը: Այստեղ մինչև 1984թ. երկրորդ եռամսյակի վերջն ավարտվեցին լեռնային կոմպլեքսի աշխատանքները: Այս աշխատանքները հանձնարարվել էր առաջավոր բրիգադավար Մերգեյ Շարությունյանին: Նա 1966թ. աշխատել էր Տարեկ-ում, իսկ 1974թ. տեղափոխվել N 160 շինմոնտաժային վարչություն: Նրան հանձնարարվել էր ամենադժվարին տեղամասերը: Նրա բրիգադը «Մարշալ Բաղրամյան» կայարանում կառուցեց տրանսֆորմատորյին ենթակայանը, օդափոխության սրահը: Այստեղ առաջին իսկ օրից նա մեծ թափով ծեռնամուխ եղավ Աջափնյակ գնացող գծի շինարարությանց: Արդեն պատրաստվել էր ուղղահայց հորանը և հորատանցումները, ընդուած մոտեցել էին ծախ ընթացքային թունելի մատուցներին, որտեղից պետք է սկսեն հորատանցումները: Սկսել էին ամրակապման, բետոնապատճան աշխատանքները: Ստեղծված էին մոնտաժային խցիկներ: Զարկ է նշել, որ բոլոր աշխատանքները կատարվում էին ծեռքով, դեռ չկային համապատասխան հարմարանքներ ու մեխանիզմներ և պարզ է, որ նման պայմաններում աշխատանքի տեսքերը ցածր էին: Տեղամասի կոլեկտիվի 1984թ. խնդիրն էր իրականացնել ընթացքային թունելների անցահատումը: Նորատանցողները մինչև 1984թ. վերջը գրեթե հասել էին Հրազդանի կիրճին: Բացի այդ,

տեղամասի մարդիկ կառուցում էին նաև «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի փարձարարական տեղամասը, որտեղ պետք է մշակվեին անցահատման առավել արդյունավետ եղանակներ: Առաջին հայացքից N 24 հորանի տեղամասում իրականացվող աշխատանքի տեմպերը ցածր էին: Տեղամասում դեռ գործում էր երկու հերթափոխ, որը պայմանավորված էր աշխատանքների արագության զարգացմամբ:

... «Հայրունելշին» վարչության 1984թ. գործունեության մեջ տեղի ունեցած մեծ տեղաշարժերը: Իրականացվեցին մի շարք կազմակերպչական տեխնիկական միջոցառումներ, որոնցից առաջանայինը կաղորերի ծիչու ընտրությունն էր: «Հայրունելշին» վարչության պետ նշանակվեց Եղուարդ Կարապետյանը: Ղեկավար աշխատանքների առաջ քաշեցին արժանի պահեստային կաղորերին: Օրինակ N 25 թունելային ջոկատի նախանիկ Ռուտիկ Գրիգորյանը սկսեց ղեկավարել ամենակարևոր օղակներից մեկը՝ Մեխանիզացիայի վարչությունը, որտեղ մինչ այդ աշխատանքները ծախողվել էին: N160 շինոնտաժային վարչության հնժեները, վարչության կուսկազմակերպության քարտուղար Անդրեյ Արոյանն անձնական նախաձեռնությամբ իր վրա վերցրեց Ետ մնացած «Շամպա» տեղամասի պետի պարտականությունները, 6 ամսվա ընթացքում շտկեց գործերի վիճակը և տեղամասը 84 թվականի վերջին դասվեց ամենաառաջավորների շարքում: Ավելի հետևողական աշխատանք տարվեց Երիտասարդ կաղորերի շրջանում: Այսպես, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը երկու տարի առաջ ավարտած շրջանավարտներից առաջ քաշեցին և նշանակվեցին այնպիսի պատասխանատու պաշտոնների, ինչպիսիք շինվարչության գլխավոր ինժեների, վարչության պետի տեղականների, բաժնի վարչների, տեղամասի պետերի պաշտոններն էին: Կաղորերի ծիչու ընտրությունը, Երիտասարդ կաղորերին աշխատանքային մեծ հնարավորությունները տալը, նրանց ուժերի նկատմամբ դրսևորած մեծ հավատը տվեց իր դրական արդյունքը: Բավական է միայն ասել, որ 1984 թվականին, վերջին տարիների համեմատ, մեծ հաջողությամբ «Հայրունելշինը» և հիմնականում մետրոյի շինարարությամբ գրադարձու N 160 շինոնտաժային վարչությունն ու N 25 թունելային ջոկատը կատարեցին պետական առաջադրանքները տեխնիկա-տնտեսական բոլոր ցուցանիշների գծով: Նշենք նաև, որ 1984 թվականին 1983 թվականի համեմատու-

թյամբ աշխատաժամանակի կորուստները կրճատվեցին 2,5 անգամ, կադրերի հոսունությունն այդ կարծ ժամանակաշրջանում կրճատվեց 3,8 տոկոսով:

\*\*\*

«Հայրունելշին» վարչությունը 1981-1985 թթ. իր առջև որված խնդիրների իրականացման ուղղությամբ որոշակի հաջողություններ ծեռք բերեց: Ֆիշտ Է. 1982-1983թ.թ. նախանձի տարիներ Եղան հատկապես մետրոյի շինարարության ամենաբարդ տեղամասերում, սակայն վարչության կողմից կազմակերպչական տեխնիկական միջոցառումների իրականացման և հատկապես 3Կ4 կենտրոնի և ՇՍՍՀ Նախարարների խորհրդի կողմից ծեռք առաջ միջոցառումների, ղեկավար կաղորերի փոփոխման, Երիտասարդ կաղորերի առաջ քաշման շնորհիվ նկատվեցին դրական տեղաշարժեր, այն հատկապես նկատելի Եղավ 1984-1985թ.թ. ընթացքում և մասնավորապես 1985 թվականին: Տեղաշարժն ակնառությունը ուղղություններով: Վարչության կոլեկտիվի ուժերով կատարվեցին բավականին աշխատանքներ Երևանի մետրոպոլիտենի, Երևան-Յրազդան երկարգծի, Սևանի ավտոճանապարհային թունելների շինարարությունն իրականացնելու գործում: «Հայրունելշին» Ենթակայության կազմակերպություններից Երևանում մետրոպոլիտենի շինարարության աշխատանքներն իրականացնում էին N 160 շինոնտաժային վարչության և N 25 թունելային ջոկատի կոլեկտիվները: Երևանից դուրս հանրապետության տարբեր հատվածներում աշխատում էին վարչության Ենթակայության տակ գտնվող թունելային ջոկատները: Նրանց օգնում էին «Հայրունելշին» մեխանիզացիայի վարչությունը, ավտորազման և մի շարք այլ ծառայություններ: NN 8,17,23 թունելային ջոկատների և հանրապետության այլ շինարարական և մոնտաժային կազմակերպությունների ջանքերի շնորհիվ 1986թ. Ամանորի նախօրյակին շահագործման հանձնվեց Երևան-Յրազդան երկարգծը: Այս կարևորագույն խնդիրների իրականացման գործում «Հայրունելշին» բոլոր օղակների աշխատողները ջանք և եռանդ չխնայեցին հանրապետության շինարարության կարևոր օղակներում աշխատանքները պատվով կատարելու համար...

...«Ծենգավիթ» կայարանը շինարարության առաջին օրից մինչև

1985թ. դեկտեմբերը կառուցվում էր N 25 թունելային ջոկատի կոլեկտիվի կողմից, դեկտեմբերի 1-ից այդ կարևոր արաջադրանքը կատարելու պատիվը վատահիվեց «Դայավախթերանորոգումշինի» N 1 շինավարչությանը, որը մինչև այդ իրականացրել էր Լենինգրադյան փողոցի ստորգետնյա անցումը, Մարզահամերգային համալիրի 2-րդ հերթը և մի շարք այլ օբյեկտներ: Նոր շինվարչության պետն էր փորձված շինարար Սու Քոչարյանը:

«Շենգավիթ» կայարանը համարվում էր ստորգետնյա: Շինարարությունն ընթացավ բաց եղանակով, այսինքն՝ մեծ չափեր ունեցող բացված փոսորակում աշխատանքներն իրականացվեցին «վերգետնյա» եղանակով: Կայարանի շինարարության ավարտից հետո օրյեկտը անբողոքվին ծածկվեց:

Շինվարչությունը թունելային ջոկատից վատ ժառանգություն չտացավ: Փոսորակի հիմնական մասը բացված էր և 2 ամսվա ընթացքում կատարվեց 7 հազար խոր. մետր հողային աշխատանք: Թունելային ջոկատից ստացված շատ արժեքավոր «նվերը» կայարանի միանձույլ բետոնացման շարժական կաղապարի հարմարանքն էր, որը ստեղծվել էր մետրոշինարարների մտահղացմամբ ու նախաձեռնությամբ: Ծիշտ է, այն լրիվ ավարտված չէր, սակայն առաջին իսկ օրից շինվարչության կոլեկտիվը շարունակեց գործը. պատրաստեց հանդիպակաց պատերի կաղապարները և հետագայում ստեղծվեցին կաղապարների 4 լրակազմ, որոնց շնորհիվ հնարավոր եղավ բարդ աշխատանքներն իրականացնել առանց պարապուրդի, այսինքն ստեղծվեց շինարարական աշխատանքների իրականացման անընդհատ գործընթաց:

Վարչության աշխատանքների կայուն որթմն սկսվեց Նոր տարվա առաջին իսկ օրից: Շինարարներն օրական լցնում էին 70-80 խոր. մետր բետոն: Դա սկզբնական շրջանում բավարար էր: Ամրողությամբ պետք է լցվեր 10 հազար խոր. մետր բետոն, որի աշխատանքների ավարտը նախատեսված էր մինչև 1985թ. սեպտեմբերի 1-ը: Դեռևար պետք էր տեմպերը զարգացնել, այլ կերպ կծախողվեր ողջ ծրագիրը: Այդ պատճառով շինարարները ծեռնամուխ եղան շարժական կաղապարների բարի ավելացմանը: Փետրվարին գործում էր մեկ աշխատեկություն, որի կոլեկտիվում ընդգրկված էին շուրջ 80 մոնտաժողներ, բետոնագործ-

ներ, հյուսներ և այլ բանվորներ, նրանց թիվն ավելացավեց երեք անգամ: Աշխատեկությունն սկսեց աշխատել 3 հերթով, և ևս մեկ ամիս ու կազմակերպվեց շուրջօրյա աշխատանք:

Շինվարչության աշխատողներն իրենցից պահանջվող կազմակերպական հարցերը լուծելուց հետո առաջնահերթ խնդիր համարվեց լրջորեն հետևել շինանյութերի մատակարարմանը: Ցավոք, խստաշունչ ծմեռն իր կամքն էր թելադրում: Անհրաժեշտ էր բետոնապատել հատակի որոշ հատվածներ և հիդրոմեկուսացնել դրանք: Իսկ ծյունից ու սառուցից ազատվելու համար պահանջվում էր լրացուցիչ ջանքեր, ժամանակ: Զներային պայմաններում բետոնային շաղախի կապակցման ընթացքն արագացնելու նպատակով տեղակայվեց շոգի արտադրող հարմարանք, որի շնորհիվ շաղախի քանակն աստիճանական ավելացավ, օրական ապահովվեց 150-160 խոր. մետր: Նույնը կարելի է ասել նաև ամրաների մասին, շինվարչության մեխանիկական արհեստանոցի կողմից պատրաստվում էին ամրանային կմախքի մասերը, որոնք և անմիջապես տեղադրվում էին: Ի դեպ, արհեստանոցներն էլ էին կատարում բարդ կոնստրուկցիաների ամրանային կմախքների պատրաստման աշխատանքներ, ստեղծվել էին ծանր մասերը հեշտությամբ տեղափոխելու հիմնալի պայմաններ:

Չնայած խստաշունչ ծմունք, փետրվարի առաջին իսկ օրերից սկսվեց «Շենգավիթ» կայարանի կողային պատերի բետոնապատումը, նախապատրաստական աշխատանքներ տարվեցին նոր հատվածների, կամարի առաջին հատվածի բետոնապատման համար: Չուգահեռ կատարվում էր նաև ուժաքարշային ենթակայանի շինարարությունը: Պատերի ամրանային կմախքը բավականին բարդ կառույց էր, սակայն մեծ փորձության ճանապարհ անցած մասնագետները հմտորեն էին կատարում հանճնարարված գործը: Իրենց պարտականությունները վարպետորեն էին կատարում մոնտաժող լեկտրատոռակցողներ Մաքսի Մնացականյանը, Գուրգեն Կակոսյանը /Երկուսն էլ մասնակցել էին մարզահամերգային համալիրի դժվարին շինարարությանը/, Լյովա Քոչինյանը, հյուսն Խորեն Սարգսյանը և ուրիշներ: Ըստ գրաֆիկի բետոնապատման աշխատանքները պետք է ավարտվեին սեպտեմբերի 1-ին, շինարարները ծգտում էին առաջ անցնել գրաֆիկից: Այդպես էլ եղավ: Կազմակերպված և համերաշխ կոլեկտիվի հիմնական նպատակն էր

«Շենգավիթ» կայարանի գործարկումը կատարել նախատեսված ժամ-կետում և, ինչպես ասվում էր, մինչև «քանալին».....

Ավարտվեց 1985թ. առաջին կեսը: «Շենգավիթ» կայարանում, գործոք լավ էին գնում, սակայն մեծանում էր լարվածությունը շինհրապարակում: Հինարարները «Դարավավիանորոգչին» տրեստի N 1 շինարարության կողմից կատարված գործնական քայլերի շնորհիվ բետոնապատման մեջ ծավալի աշխատանքներ էին ծեռնարկել: Նրանց ուժերով ստեղծվում էր 204 մետր երկարությամբ միաձույլ բետոնե հսկայածավալ մի «խողովակ», որի մի մասում տեղաբաշխվելու էին տարբեր ծառայությունների համար նախատեսված շինությունները, մյուս կեսում լինելու էին կայարանասրահը և կառամատույցները:

«Դարավավիանորոգչին» տրեստի կառավարիչ Սպարտակ Վիրաբի Ղազարյանի սրտացավ և հետևողական աշխատանքի շնորհիվ, շինգարչության աշխատանքներն արագացնելու նպատակով մի կարևոր գործ և ծեռնարկեց: Տրեստի երկարքետոնե կոնստրուկցիաների գործարանը ծեռնանում է եղավ մետրոպոլիտենի նոր պատվերների կատարմանը: Ակտեցին թողարկել «Շենգավիթ» կայարանի շինարարության համար անհրաժեշտ որմնասալեր, ծածկասալեր և այլ կոնստրուկցիաներ: Դրանց ժամանակին և կազմակերպված նատակարարումը նպաստեց շինարարական աշխատանքների արագացմանը:

Ինչպես ասվեց «Դարավավիանորոգչին» տրեստին հանձնարարվել էր ճարզահամերգային համալիրում կատարել աշխատանքներ: Ի դեպ, այդտեղ նրանց տրված աշխատանքների ծավալները փոքր չեն և կատարվեցին մեջ բարեխղճությամբ: Սակայն հարկ է նշել տրեստի ինժեներական մտքի ճկունության և հարցերի լուծման հետևողականության մասին:

Ինժեներատեխնիկական անձնակազմի կողեկտիվ ուժերով կատարվեց պոլիկեն ինքնասնուցվող թաղանթով համալիր ծածկի հիդրոմեկուսացումը: Նրանց նախաձեռնությամբ այս փորձը մետրոշինարարության մեջ առաջին անգամ կիրառվեց «Շենգավիթ» կայարանում: Այստեղ օգտագործվեց նշված, ինքնասնուցվող թաղանթը, որը ինարակորություն տվեց հիդրոմեկուսացման համեմատաբար խնայողական, բայց շատ հուսալի շերտը ստեղծել: Ի դեպ շինարարության պետք իր ինժեներական մտահղացումներով նույնպես նախակցեց եղակի կա-

ռուցում՝ այդ նորամուծությունների ներդրմանը, որոնք կիրառվել էին մարզահամերգային համալիրում և իրենց նախաձեռնությամբ էլ, տեղի պայմանները հաշվի առնելով ներդրվեցին նաև «Շենգավիթ» կայարանում:

Դեռ առջևում կար 6 ամիս, մինչև «Շենգավիթ» աշխատանքների ավարտը: Ծտարի նիստերից մեկում պարզվեց, որ N25 թունելային ջոկատին և «Դարավավոնորոգչին» տրեստին օգնություն է պետք: Անմիջապես առաջարկություն եղավ դիմել արդեն փորձության ճանապարհ անցած «Երքիմշին» տրեստի օգնությանը, մասնականդ, որ «Գործարանային» կայարանի շինարարությունում կոլեկտիվն իրեն փայլուն էր դրսորել: Եվ ահա ստացվում է համրապետության կառավարության նախագահի կազմադրությունը «Գործարանային-Շենգավիթ» ամենաանհրաժեշտ օղակի Թամանցիների փողոցի վրա ծգվող ուղանցում կամուրջի շինարարությունը հանձնել «Երքիմշին» տրեստին:

Կամուրջը տեղավորվելու էր հին գուգահեռ, և երկուսը միասին կազմելու էին մեկ ամբողջություն: Միա քէ ինչու նախագծի հեղինակը «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետ Քնարիկ Ֆիլոյանը, աշխատել էր հարազատ մնալ գործող կամրջի արտաքին ոժին և ծևավորմանը /ի դեպ դա նույնպես ինքն էր նախագծել 1952թ./:

Իհարկե, 1985թ. Երքիմշինցիները հաջողությամբ կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Վերը ասվել է նաև «Դարավավիանորոգչին» տրեստի կատարած գործնական և ստեղծագործական աշխատանքի մասին: Հանրապետությունում կազմակերպություններ կային, որոնք մետրոպոլիտենի շինարարության տարիներին, անհրաժեշտությունից, իրադրության իրամայական պահանջներից ենթելով իրենց հավաքական ուժն օգտագործել էին մետրոյի շինարարության հաջող որակով և արագ ավարտին հասցնելու գործին:

Երկրորդ նպատակը հակիրծ կանգ առնել նրանց հսկող «աչքի», հանրապետությունում այդ հարցերի առաջին պատասխանատուի և կազմակերպչի ՀՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ, մետրոշինարարության շտաբի դեկանար Յանան Յայրապետյանի գործունեության վրա: Նրա կենսագրության վառ ապացույցը հանրապետությունում 13 տարիների ընթացքում շինարարության պատկերն է: Սակայն ցանկանում ենք մեկ-երկու նախադասությամբ խոսել նրա

կատարած աշխատանքի մասին երևանի մետրոպոլիտենում:Այն շատ տարողունակ է և բազմարնույթ: Սակայն նշենք նրա միայն մեկ կարողունակության հատկանիշը:

Դրանու Հայրապետյանն ամենայն նախամասնությամբ գիտեր բոլոր շինարարական կազմակերպությունների հնարավորությունները, ճանաչում էր նրանց դեկավարներին, նույնիսկ ծանօթ էր շարքային աշխատողների ունակություններին, բնավորության գծերին: Եվ պատահական չէր,որ նույնիսկ, կարծեք անհուսալի դեպքերում նա կգտներ հարցի լուծման բանալին, գործը տեղից կշարժեր: Տեղյակ լինելով մետրոպոլիտենի շինարարությունում յուրաքանչյուր օր կատարված աշխատանքներին, արագ կերպով կողմնորոշվելով՝ անմիջապես շինվարություններին, տրեստին նոր ուժեր կմատակարարելու աշխատանքներում արագ տեղաշարժ կատարելու համար: Դրանու Հայրապետյանի գործնական, հայրենասիրական զգացմունքի, կարծեք անսպառ աղբյուրի տիրոջ և հոգատար մարդուն բնորոշելու համար բերենք երկու օրինակ:

1982 թվականն էր, հեռախոսազանգով տեղեկացրին, որ Գայի փողոցի ծայրամասում, դեպի Նոր-Նորի հինգերորդ և վեցերորդ զանգածները միացնող և կառուցվող կամուրջը փլվել է և կա մարդկային գոհ: Անմիջապես մեկնեցի դեպքի վայր: Դեպքից անմիջապես հետո պատահականորեն այդ տեղով անցնելիս է լինում Դրանու Արամիչը հանրապետություն ժամանած հյուրերի հետ: Տեղում եղա այն ժամանակ, երբ դեպքի մասին հանրապետության կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանին տեղյակ պահելուց և արագ գործնական քայլեր ծեռնարկելուց, հյուրերին այլ ուղեկցողի հետ ճանապարհ դնելուց հետո կառավարության շինարարության պատասխանատու անձին թելադրում էր դեպքի հետ կապված կառավարությունում քննարկվելիք հարցի որոշման նախագծի տեքստը ողջ խորությամբ, առաջնահերթ ուշադրություն դարձնելով պատահարից զոհվածի հուղարկավորության հարցին, նրա ընտանիքի հոգսերի լուծմանը: Այդ ժամը ապրում երի մեծ չնորացավ նաև մեկ այլ «հարցի» մասին: Մոտ երկու ժամ հետո, երբ նկատեց, որ ամբողջ թափով ընթանում են վթարի հետևանքների վերացման հետ կապված աշխատանքները, ապահոված է տեղամասում շուրջօրյա աշխատանքը, նայելով ինձ՝ դիմեց հանձնարարու-

թյուն կատարող կառավության ներկայացուցիչին՝ (իհարկե ելնելով մետրոյի շինարարությունում ստեղծված մոտիկ հարաբերությունները որպես իր կողմից մեծ ընկերոջ հոգատար վերաբերմունքի դրսկորման) ասելով «Երկրորդ կարևոր հանձնարարությունը՝ չթողնեք Ռուտիկի Գևորգյանին գիշերն անցկացնի այստեղ, ես շատ լավ գիտեմ նրան, հակառակ դեպքում ինձ կզանգահարեք»: Հատ էի լսել, որ շինարարական օրյեկտներում անքուն գիշերներ անցկացնող կառավարության նախագահի տեղակալը շրջապատի մարդկանց նկատմամբ հոգատար և սրտացավ է եղել միշտ, մոռանալով իրեն:

Գիրքը տպագրության հանձնելու նախօրյակին, մի քարի մարդ Դրանու Հայրապետյանի անունն առանձնահատուկ նշելու համար, տեղեկացրեց, որ «Աշխարհի ստորգետնյա շինարարություն» ամսագրի 2000թ. NN 5,6 համարներում «Պուշկինի թունելի գործարկման 30 տարին» խորագրով տպագրվել է Գայանե Տիգրանյանի հոդվածը, որը Պուշկինյան ավտոճանապարհային թունելի կառուցման առեղծվածի մասին շատ հետաքրքի նյութ է պարունակում: Եվ ինչ պարզվեց:

60-ական թվականներից սկսած, երբ Դրանու Արամիչը եղել է հանրապետության ավտոճանապարհային շինարարության և շահագործման նախարար, մտահղացել է կառուցել ավտոճանապարհային թունել Բազումի լեռնաշղթայի տակ՝ Պուշկինի լեռնանցքում:

Այդ շինարարությունն իրականություն դարձնելու նպատակով նա դիմել է «Կապետտրանս» ինստիտուտի առաջավոր մասնագետ, տրանսպորտային թունելների և մետրոպոլիտենի նախագծման ասպարեզում մեծ հեղինակություն վայելող «Մետրո և թունելներ» բաժնի վարիչ Վլադիմիր Դանդուրովին: Եվ մտահաղացումը դաշնում է իրականություն: Դանդուրովի գլխավորությամբ մասնագետները կատարում են նախագծային աշխատանքները և ներկայացնում հաստատման: Թունելի կառուցումն իրականացվում է շնորհիվ Դրանու Հայրապետյանի /պատվիրատու/, Վլադիմիր Դանդուրովի /նախագծող/ և Լեռնիդ Հարությունովի /շինարար/ սերտ համագործակցությամ:

Բարձրորակ և խորամուտ շինարարները, որ լի էն հայունիքն ծառայելու պատրաստակամությամբ, այդ մեծ գործն իրականացնելու համար դիմում են փոքր խորամանկության:

Այդ ժամանակաշրջանում 3 նրա ռուբլուց թանկ շինությունների ֆի-

նանսավորումը կատարվում էր միութենական բյուջեից, որը թույլատրվում էր հազվադեպ, ՍՍՌ կառավարության որոշմամբ: Այդ իսկ պատճառով Հրանտ Արամիչն ուղղություն է տախս նախագծողներին, ասելով, որ աշխատանքներին իրականացնելու համար անհրաժեշտ է նախագծով ցույց տալ, որ իբր նրա արժեքը մոտ երեք միլիոն ռուբլի է: Այդ իսկ պատճառով Պուչկինյան թունելի նախագծի օլիսավոր ինժեներներ Վ.Դանդուրով, Մ.Բուկա, Կ.Ստեփանյան, Ա.Կուրիսկո/ հաշվարկային արժեքը հաշվում են 3 մլն. ռուբլի գումարի չափով, ինչը մի քանի անգամ ցածր էր թունելի իրական արժեքից: Ինչ խոսք, այդ գործում եղել է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Անտոն Քոչինյանի համաձայնությունը և աջակցությունը:

Թունելի ֆինանսավորումը հաստատվում է հանրապետության կառավարության կողմից, և 1966թ. ամռանը սկսվում են թունելի շինարարական աշխատանքները: Շինարարությունն իրականացվում է միութենական ճանապարհային շինարարության նախարարության «Գլխավոր Շելմետրոշին» N 307 շինոնտաժային գնացքի կողմից /պետ Գ. Զարությունով, գլխավոր ինժեներ Բ. Գոգուա, հյուսիսային և հարավային ճակատամուտքերի տեղանասերի պետեր Բ. Մելիքյան և Վ. Արքամչուկ/: Թունելի շինարարությունն ավարտվում է 1971թ. հոկտեմբերին: Շինարարության արժեքը կազմեց մոտ 12 մլն. ռուբլի, որը ամենացածրն էր ԽՍՀՄ-ում /մեկ գծամետր թունելի արժեքի համեմատությամբ/:

1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո ստուգումները ցույց տվեցին թունելի կոնստրուկցիայի դիմացկունության բարձր որակը:

Այցել է ավելի քան 30 տարի, ինչ Պուչկինի թունելը շահագործման է հանձնվել: Մոտ մեկ տարի առաջ թունելը վերակառուցվել և բարեկարգվել է, ինչ շնորհիկ կրաքալավակի տնտեսական և ռազմավարական կապը Հայաստանի ու հարևան Վրաստանի միջև, իսկ նրա միջոցով նաև Ռուսաստանի և այլ երկրների հետ:

Չերազմահատելով Երևանի մետրոպոլիտենի շինարարությունում կառավարության նախագահի տեղակալի դերը, միայն Պուչկինի թունելի ստեղծումը բավական է, որ Հրանտ Արամի Հայրապետյանի անունը չնոռացվի:

«...Դժվար է գնահատել Հրանտ Հայրապետյանի գործունեությունը

շինարարության բնագավառում: Իր անմիջական պարտականություններին գուգընթաց նա կարողանում էր լավ հարաբերություններ ստեղծել շինարարների և շինարարական կազմակերպությունների ղեկավարների հետ: Նման մթնոլորտը մեծապես նպաստում էր աշխատանքների հաջողությանը»<sup>1</sup>.

\*\*\*

Հանրապետության կառավարությունը 1985թ. նոյեմբերի 1-ին քննարկեց «Երևանի մետրոպոլիտենի շինարարության ընթացքի մասին» հարցը: Խորությամբ վերլուծելով 1985թ. անցած ամիսների գործունեությունը, նշվեց որ Երևանի մետրոպոլիտենի օբյեկտներում հաջողությանը են ընթանում շինոնտաժային աշխատանքները:

Կառավարության որոշումը նշանավորվեց նրանով, որ վճռորոշ և արմատական քայլեր կատարվեցին մետրոպոլիտենի դեպի Աջափնյակ տանող երկրորդ հերթի շինարարությունում լուրջ բեկում նտցնելու ուղղությամբ: Նախ հանձնարարվեց Երևանի մետրոպոլիտենի վարչությանը 1986թ. համար նախատեսնել 500 հազար ռուբլի՝ կիլոյան փողոցից Աջափնյակի թաղամաս մետրոյի գծի անցկացման նախապատրաստական աշխատանքների իրականացման համար: Կառավարության հանձնարարությամբ «Հայպետրանսմախագիծ» ինստիտուտը 1986թ. առաջին եռամսյակի վերջին ավարտեց «Բարեկամություն» կայարանից դեպի Աջափնյակ գնացող մետրոյի գծի տեղամասի բանվորական գծագիրը և այն ներկայացրեց հաստատման Տրված նախագծերի հիման վրա Երքաղդործկոմը հողհատկացումներ նախատեսեց կիկայն փողոցի և Աջափնյակի շրջանի տարածքներում: 1986թ. ապրիլին Երքաղդործկոմը համապատասխան կազմակերպությունների միջոցով իրականացրեց ստորգետնյա կոմունիկացիաների փոխադրման աշխատանքները:

Կառավարության այս որոշումը շրջադարձային եղավ Երևանի մետրոպոլիտենի երկրորդ գծի նախատեսված աշխատանքները ցանցային գրաֆիկով 1986թ. քոլոր հատվածներում իրականացնելու համար:

.... 1986թ. հունվարի 26-ին շահագործման հանձնվեց Երևանի մետրոպոլիտենի «Ծենգավիթ» կայարանը: Եվ գնացըների ճանապարհը

1. Ֆադեյ Սարգսյան, «Կյանքի դասերը» (ՀՀ Գիտություն՝ իրավաբանական գործություն, Երևան 2000, էջ 85)

ավելացավ և 1.7 կմ-ով, «Բարեկամություն» կայարանից մինչև «Շենգավիթ» ուղևորները հնարավորություն ունեցան անցնել 12-15 րոպեում:

Եզակի էր այս կայարանը, որի կառուցման համար շինարարները հաղթահարեցին վերգետնյա և ստորգետնյա բազում արգելվածը: Հենց «Գործարանային» կայարանից մետրոյի գծերը հատվում էին թամանցիների լայնահուն փողոցի հետ: Սակայն գործող երկարուղային կամուրջը շնորհիվ հեշտացավ անցումը, նրան զուգահեռ մետրոյի համար կառուցվեց կամուրջ: Իսկ մի քանի մետր անց նորից հատում այս անգամ Օրջոնիկիձեի պողոտայի հետ: Այսինք էլ հենց նախագծողներն ու կառուցողները գտան դժվարին հանգույցի ամենաարդյունավետ լուծումը՝ բացվեց հսկա խրամուղի, մոնտաժվեցին թունելները և ապա ծածկվեցին: Արդեն «Գործարանային» կայարանից հետո 300 մետր բաց ճանապարհն անցնելուց հետո գնացքը «սուլցում է» երկրի ընդերքը: Ըստ որում, ինչպես ասվել է «Շենգավիթ» կայարանը ևս կառուցվեց բաց եղանակով:

Դժվար էր նաև հենց թունելների հորատումը: Ամեն մետրի առաջ անցումն ապահովվում էր միայն ամրակապով, քանի որ գիծն ընկած էր մակերեսին մոտ, և ամեն րոպե կարելի էր սպասել փլուզումների:

Դիշենք այս հատվածի շինարարական աշխատանքներն իրականացնող կազմակերպություններին «Հայթունելշինի» N 25 թունելային ջոկատ, «Երքիմշին» տրեստ, «Հայավիանորոգչին», և այն յուրօրինակ դժվարությունները, որոնք շինարարների մեջ զանքերի շնորհիվ հաղթահարվեցին այս փառահեղ կոլեկտիվների կողմից: Անսահման մեջ աշխատանքներ կատարեցին գործի հետ առնչվող շատ շինմոնտաժային կազմակերպություններ, իմնարկ-ձեռնարկություններ:

Հանրապետության աշխատավորների համար մետրոպոլիտենի նոր կայարանի բացումը բերկրայի տոն էր: Այդ առթիվ հունվարի 26-ին հարյուրավոր երևանցիներ էին հավաքվել «Շենգավիթ» կայարանի հրապարակում:

Առաջին գնացքը «Շենգավիթ» կայարանից հանդիսավորությամբ դուրս եկավ երթուղի:

Մետրոպոլիտենի նոր կայարանի բացմանը ներկա էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Ղեմիրյանը, ՀՍՄ Նախարարների

խորհրդի նախագահ Տաղեյ Մարգսյանը, հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Յանատ Ուկանյանը և հանրապետության մյուս դեկավարները:

«Զորավար Անդրանիկ» կայարանում 1986թ. առաջին ամիսներից կառուցղական աշխատանքները վերգետնյա կայարանների շինարարությունում, նոր փուլ էր մտել, օր-օրի արագություն էր զարգացնում: «Ռոսիա» կինոթատրոնի հարևանությամբ Հոկտեմբերյան պողոտայի և Մարքսի փողոցի միջև բացված բավականին խոր փոստրակում, ուր ծավալվել էին բազմարնույթ աշխատանքներ:

Ցայ շինարարների հետ կողք-կողքի ստորգետնյա ուղիներ էին գցում Մոսկվայի, Լենինգրադի, Մինսկի և Թրիլիսիի հորատողները, սալարկողների բրիգադավարն էր Կ. Շամեյանը Մոսկվայից:

N160 շինմոնտաժային վարչության մետրոշինարարները 1986 թ. ամռանը «Գարեգին Նժենի» կայարանում արդեն աշխատանքային փուլի այնպիսի կիզակետում էին, որի ժամանակ գործի արագ ավարտի հիմնական գործողությունը հանրավում էին երեսպատճան աշխատանքները: Ինչ խոսք, արդեն բավականին փորձ էր կուտակվել տեղի որակյալ բանվորների միջոցով նման աշխատանքների իրականացումն ապահովելու գործում:

Ի դեպ, պետք է ասել, որ մետրոշինարարների մոտ բնավորության մի յուրահատուկ գիծ էր ծևակվորվել, որով նրանք տարբերվում էին մյուս շինարարներից: Անկախ այն բանից որ տեղամասում իրենց կարիքը չի զգացվում, օրը գոնե մեկ երկու անգամ լինում էին տվյալ տեղամասում, պարզելու իրոք որևէ օգնության կարիք չէի՞ն զգում: Յենց դրանով կարել է բացատրել, որ N 160 շինմոնտաժային վարչության գլխավոր մեխանիկ Սուլեն Սեղրակյանի և գլխավոր ինժեներ Յայկ Բաստրմաջանի ներկայությունը հաճախ այս տեղամասում անհրաժեշտություն չէր, սակայն նրանք օրվա գրեթե բոլոր ժամերին լինում էին շինարարություններ տեղամասի պետ Յամելետ Յարությունյանին գործնական օգնություն ցույց տալու համար:

1986թ. դեկտեմբերի սկզբներին «Զորավար Անդրանիկ» տեղամասի ընդերքում լիովին ավարտվել էին ամրակապման, օժանդակ, տեխնիկական սենյակների և ենթակայանի բետոնապատճան աշխատանքները և արդեն ծեռնամուխ էին եղել հարդարման ու երեսպատճան աշ-

**խատանքներին:** Անվտանգությունն ապահովելու նպատակով, թունել-ներում պետք է ստեղծվեին պաշտպանական վահանակներ կախովի առաստաղներ տեղադրելու համար: Այդ աշխատանքներն ավարտելուց հետո վահանակը պետք է ապամոնտաժվեր և գիշերային ժամերին երեսպատճեն կառամատույցների ետին պատերը: Եվ այս ամենն ամիսներ շարունակ, անկախ վահանակի ապամոնտաժման ամենօրյա «անտեղի» նույնանման աշխատանքների կրկնությունից:

Բնական խոչընդոտմերն անսպասելի էին նաև նախարարների շինարարությունն սկսելիս: Բանն այն էր, որ շինհրապարակի այդ տարածքով անցնում էր Գետափի բետոնապատ հունը, որը լիովին հիդրոմեկուսացված չէր: Պետք էր պաշտպանիչ բետոնաշերտով մեկուսացնել մոտ 100 մետր երկարությամբ հատված: Աշխատանքներն ավարտվեցին տարեվերջին, որից հետո հրապարակն ամբողջությամբ տրամադրվեց վերին նախարարի շինարարությունն իրականացնող բրիգադներին: Տեղամասն ամենարարդն էր երևանի մետրոպոլիտենի շինարարության պրակտիկայում, և հանձննան ժամկետների հետ մեկտեղ շինարարներին մտահոգում էին կառույցի հուսալիության և որակի հարցերը: Այնինչ մի քանի ժամվա ընթացքում հնարավոր էր շինարարական աշխատանքների որոշ և կարևոր գործողություններ ի չիք դառնային և նրանց վերականգնման համար պահանջվեր ամիսներ: Իրոք, այս կայարանում աշխատանքները դժվարացնում էին ոչ միայն գործող մետրոպոլիտենը, այլև Գետափի հարևանությունը: Կարծես «Դամոկլյան» մի սուր էր կախված կայարանի գլխին: Եղել են դեպքեր, երբ Գետառը «կատաղել» էր, ուժեղ անձրևաջրերի պատճառով ոչ միայն ջրերի քանակն ավելացել է, այլև մետրոյի շինարարության հենց բերանին կուտակված ջուրը վտանգի առաջ է կանգնեցրել հատկապես հարդարման և շատ այլ աշխատանքներ, իսկ ստորգետնյա տեղամասում կուտակված ջրերի հեռացումը պահանջում էր օրեր: Այստեղ հարգանքի տուրք պետք է մատուցել և նորից հիշել հանրապետության ներքին գործերի նախարարության հակարդեհային պահպանության տնտեսության պետ, զնդապետ Փայլակ Ջակոբյանին: Երբեք չեմ մոռանա մի դեպք: Հորդ անձրևից հետո, Գետափի ջրերի հոսքը շատ ուժեղ էր և «Զորավար Անդրանիկ» կայարանի մոտ: Օղակածն գրուայգու վերջին մեծ լճակում կուտակված ջրերն ամբողջությամբ լցվում էին մետրոյի ստոր-

գետնյա կայարանները, աշխատանքներին պատճառելով մեծ վնաս, հատկապես հարդարման և նմանատիպ աշխատանքներին: Ահազանգից հետո դեռ դեպքի վայրը չհասած, արդեն Փայլակ Ջակոբյանի գլխավորությամբ հակարդեհային չորս մերենաներն այնտեղ էին և լճակից կուտակված ջրերը դուրս էին մղում ու Գետառն էին լցնում: Պահանջվեց նույնքան մերենա և կանչել մետրոյի ստորգետնյա ջրերը հեռացնելու համար: Ջակարդեհային ողջ ջրկատը հերոսական աշխատանք կատարեց, նրանց միջոցով փրկվեց հազարավոր ռուբլիների հասնող կատարված աշխատանքը: Դիշատակության և արժամի վարչության պետի անհանգիստ բարեհոգի, սրտացավ մոտեցումը: Երբեն, դեռ սկսված անձրևի ժամանակ առանց ահազանգի, ներքին ծայնի թելադրանքով, նախորդը հակարդեհային պաշտպանության անձնակազմը տեխնիկայով կուտարկեր «Զորավար Անդրանիկ» կայարանի տեղամասը:

...Մետրոպոլիտենի երկրորդ հերթի գործարկման մասին կառավարության 1985թ. նոյեմբերի որոշումը, այս ուղղությամբ ծեռնարկվող միջոցառումները և անհրաժեշտ հակողության իրականացումը որոշակի աշխուժություն նստցրեցին աշխատանքի բոլոր հատվածներում: Նախ 86-ի առաջին իսկ օրերից գործնական քայլեր կատարվեցին Կիևյան-Ազաֆինյակ հատվածի շինարարության իրականացնան նախապատրաստական աշխատանքների ուղղությամբ: Այս կարևոր գործի ծեռնարկումից հետո, հատկապես 86-ի ամռան ամիսներին մեծ թափ ընդունեցին շինարարական աշխատանքները: Երկրորդ հերթի շինարարության N24 հորանցը հանձնվեց բունելագործների N 25 ջրկատին:

«Արագած» կինոթատրոնի մոտ գտնվող ուղղահայաց հորանի տեղամասում նոյեմբերի վերջին օրերին մեծ թափով իրականացվում էին հորատանցման աշխատանքները: 27.5 մետր ուղղահայաց հորանցի մեկ մետրը փորված էր: Աշխատանքներն սկսելու առաջին իսկ օրերին պարզվեց, որ հորատողներն ի վիճակի են մինչև տարվա վերջ իրականացնել ողջ հորատանցման աշխատանքները: Եվ նրանց քրտնացան աշխատանքի արդյունքում իրականացվեց նախատեսվածը: Նրանց նպատակն էր 1987 թվականից սկսել հորիզոնական հորատանցումը:

Հորատողների բրիգադավար Թաթուլ Ջարությունյանի կազմակերպված աշխատանքի շնորհիվ, հորատողներ L.Ավետյանը, Ն.Կոլեսո-

վը, Պ.Պապյանը, Ս.Բիդիսորյանը կարողացան մինչև տարվա վերջ կատարել ողջ աշխատանքը, և ավարտվեց 27.5 մ. ուղղահայաց փորվածքը:

... 1987 թվականի շեմին «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանում աշխատանքային լարված իրողություն էր: Այստեղ մեծ թափով ընթանում էին հարդարնան աշխատանքները: Շարունակ վեր ու վար էին անում բեռնախցիկները, բարձրացվում ապարի վերջին խորանարդ մետրը, ժամանակավոր խողովակներն ու ռելսերը, հորան էին իջեցվում երեսապատման սալիկներ, լուծույթ, ցեմենտ, ամրաններ: Ներքևում միաժամանակ մի քանի բրիգադ էր աշխատում երեսապատում էին պատերը, կամարները:

\*\*\*

Մայրաքաղաքի մետրոշինարարների աշխատանքը պսակվեց նշանակալից նոր հաջողությամբ: 1987թ. հունվարի 5-ին շարք մտավ Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի վերջին «Զայրամասային/«Գարեգին Նժդեհի հրապարակը» կայարանը:

Երևանի մետրոպոլիտենի գնացքները հասան «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանը: Դրանով ամրողացավ ստորգետնյա մայրուղու առաջին հերթի գիծը 10,5 կմ երկարությամբ: Արդեն մետրոպոլիտենի գնացքները երևեկություն կատարեցին «Բարեկամություն» կայարանից մինչև օֆի վերջին կայարանը, այդ ճանապարհն անցնելով ընդամենը 17 րոպե 30 վարկյանում:

Նոր կայարանը Ամանորի նվերը եղավ Երևանցիներին: Օբյեկտն աչքի էր ընկնում շահագործման լավ տվյալներով, ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, գեղեցիկ ձևավորմանը: Նրա ստեղծման համար իրենց ջանքերը, եռանդն ու փորձը ներդրեցին հազարավոր հորատողներ, մոնտաժողներ, հարդարողներ և այլ մասնագիտության բանվորներ, ինժեներներ: Գլխավոր կապալառուն՝ «Հայրունելշին» վարչությունն էր, նախագծողը՝ «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտը: Կայարանի և համապատասխան թունելների կերտմանը մասնակցեցին խորհրդային երկրի տարբեր հանրապետությունների և ազգերի ներկայացուցիչներ, որոնք կազմեցին կառույցների ինտերնացիոնալ մեծ կուեկտիվը: Այսպես, Թբիլիսիի մետրոշինարարները մոն-

տաժեցին շարժասանդուղները, Մոսկվայի հարդարողների մասնագիտացված բրիգադն իրականացրեց գրանիտի և տուֆի երեսպատման աշխատանքները: Կառույցի ստեղծմանն ակտիվորեն մասնակցեցին Կրասնոդարի, Ռոստովի և այլ քաղաքների շինարարները, Յայաստանի շինարարական և մոնտաժային մի շարք կազմակերպություններ «Հայլեկտրամոնտաժ», «Հայկապշին», «Հայսանտեխմոնտաժ» տրեստները, Երևանի մետրոպոլիտենի վարչությունը, որի ծառայությունները կատարել են սարքավորումների կարգավորման ու փորձարկման աշխատանքները: Այս կայարանի կառուցման գործում մեծ ներդրում ունեցան Լենինյան շրջանի, (այժմ՝ Շենգավիթ համայնք) բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկություններ: Հարկ է նշել, որ Լենինյանի կուսչորչումը մետրոպոլիտենի շինարարության ողջ ընացքում ու հատկապես 1986 թվականին, հաճախակի է քննարկել մետրոշինարարությանը վերաբերող հարցեր, գործնական միջոցներ ծեռնարկել շինարարներին օգնելու և ամենօրյա հսկողություն սահմանել, մասնավորապես «Գարեգին Նժդեհի հրապարակ» տեղանասի համար, շրջանի արդյունաբերական ծեռնարկությունների կողմից անհրաժեշտ սարքավորումները ժամանակին պատրաստելու, կազմակերպություններից որակյալ բանվորական ուժով կառույցի աշխատանքներին ընդգրկելու ուղղությամբ:

Նորակառույց կայարանի գործարկումը հնարավորություն տվեց թերևացնել քաղաքային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը, ապահովել ուղևորների կուլտուրական սպասարկումը, գգալիրեն կրծատել փոխադրամանակը: Կայարանը մի ամբողջություն կազմեց «Գարեգին Նժդեհի հրապարակի» ստորգետնյա այլ շինությունների հետ: Հրապարակի վերակառուցումն իրականացվեց «Երկունունշին» գլխավոր վարչության շինարարների կողմից: Նախատեսվեցին այս-տեղ ստեղծել կինոդահիլճ, գեղարվեստական գործերի ցուցարան, սպասարկման այլ ծառայություններ:

Երևանի մետրոյի առաջին հերթն ունենալու էր 9 կայարան: «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանը դարձավ 8-րդը:

\*\*\*

1988թ. ողջ ժամանակահատվածում աշխատանքային մեծ լարվածությամբ որոշ հատկանիւններում շուրջօրյա աշխատանք էր կատարվում:

Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի վերջին «Դայթունելշին» N 41 շինարարական ջոկատի աշխատողները, հաղթահարելով «Զորավար Անդրանիկ» կայարանի շինմոնտաժային աշխատանքները բոլոր դժվարությունները, քայլ առ քայլ առաջ էին մղում օրյեկտի հիմնական մուտքի կառուցման գործը: Բետոնային աշխատանքներն այստեղ կատարվում էին Համեմտ Հարությունյանի ռեկավարությամբ գործող տեղամասը, որն իրենից ներկայացնում էր տարբեր ազգությունների ներկայացուցիչներից կազմված մի համերաշխ ընտանիք: Այստեղ իրենց հայ ազգի գործընկերներ թելման Միքայելյանի, Օնիկ Շովիհաննիսյանի, Ալբերտ Սասունյանի, Արտակ Մկրտչյանի և մյուսների հետ կողք կողքի աշխատում էին հույն Ֆյորի Լազարև, ուկրաինացի Նիկոլայ Բարդաշովը և շատ ուրիշներ: Խոկ քարեկամությունը, ինչպես հայտնի է, կարող է հաղթահարել բոլոր դժվարությունները: Թեև կոլեկտիվի անդամները մեծ մասամբ հորատանցողի, մասնագիտություն ունեն, բայց իրենց վրա էին վերցորել բետոնագործների պարտականությունները ևս և հաջողությամբ հրագործում էին կայարանաշենքի կառուցումը: Բետոնագործների կոլեկտիվին մեծ օգնություն էին ցույց տալիս հույն ամրագործները, ուկրաինացի էլեկտրաեռակցողները, հայ ազգի հյուսները: Նրանք բոլորն էլ աչքի էին ընկնում իրենց բարեխնդությամբ, աշխատասիրությամբ և կարգապահությամբ, որը հատուկ է բոլոր մեծ ընտանիքների գավակներին:

«Զորավար Անդրանիկ» կայարանի վերգետնյա մուտքասրահը, փաստորեն, ստորգետնյա կառույց է: Նախագծողներն ընտրել էին այս տարբերակն այն պարզ պատճառով, որպեսզի շենքը վճառ չպատճառի «Ուսիհա» կինոթատրոնի ընդհանուր տեսքին: Տեղամասի կոլեկտիվն արդեն ավարտել էր կայարանաշենքի բոլոր հենապատերի կառուցման աշխատանքները, տեղադրվել էին միաձույլ տանիքի բոլոր հեծանները, որի վրա պետք է դրվեին ծածկասալերը: Անելիքները դեռ շատ էին, բայց շինարարները համոզված էին, որ իրենց կիաջողվի ծրագրվածից շուտ ավարտել ծածկապատումը, դրանով իսկ ճակատ բացել հարդարողների համար:

Զնան ընթացքում բավականին ծգծվեցին շենքի կառուցման աշխատանքները, քանի որ հնարավոր չէր ամրող ճակատով ծավալել բետոնի տաքացման գործը: Խոշընդոտների հետևանքով առաջացած

ճեղքվածքը հետագա ամսիներին փակվեց և մինչև 1988թ. վերջին օրերը կայարանում գործեղը լավ էին ընթանում:

... 1988թ. Աջափնյակի «Արագած» կինոթատրոնի մոտակայքում, Հալաբրյան -Աբեյան փողոցների խաչմերուկի շինհրապարակում դրվեցին Երևանյան ստորգետնյա մայորուղու երկրորդ հերթի շինարարության հիմքերը: Նախատեսված էր 1990թ. մետրոյի «Բարեկամություն» կայարանից գնացքը հանել Հրազդանի գեղատեսիլ կիրճը, հասցնել մինչև Աջափնյակում կառուցվող երկու կայարանները, որոնց միջև ընկած հեռավորությունը 1500 մետր էր: Խոկ ինչպիսի աշխատանքներ կատարվեցին այս հատվածում:

Դեպի Աջափնյակ թաղամաս գնացող մետրոյի կառուցման աշխատանքները /մինչև 1991թ./ կատարվեցին չորս տեղամասում: «Բարեկամություն» կայարանից գնացող գիծը N 24 հորանից շարունակվեց դեպի Հրազդան գետը: Փաստորեն, ամբողջությամբ աջ և ձախ ընթացքային բունելները հորատանցվեցին: «Դայթունորանսախագիծ» ինստիտուտի ճարտարապետները ծերնամուկս էին եղել դեպի աջափնյակ գնացող /«Արագած» կինոթատրոնի մոտ/ կամրջի նախագծման աշխատանքներին, որի նախագծի ճարտարապետն է Մելյոն Բաղդասարյանը:

«Արագած» կինոթատրոնի մոտ կառուցվեց N 25 հորանը: Այն անբողջությամբ պարտվեց և սկսվեց դեպի ապագա կայարանը գնացող /հորանից ոչ շատ հեռու/ օժանդակ բունելների հորատանցումը: Այս տեղամասում ավարտվեց շարժասանդուղների թեր բունելի հորատանցումը:

Զգալի աշխատանք կատարվեց նաև N 26 հորանում, որը տեղափորված էր Զանիբեկյան և Շիրակ փողոցների միջնահատվածի տարրածքում: Այստեղ կառուցվեց հորանային համալիրը, դեպի ընթացքային բունելները գնացող օժանդակ բունելները: Ընթացքային բունելներում հորատանցվեցին շուրջ 50-ական մետր հատված:

... Շուրջ 10 տարի տևեցին «Զորավար Անդրանիկ» կայարանի շինմոնտաժային աշխատանքները: Այստեղ շինարարության ծգծաման պատճառը շինարարները չեն: Շիշենք, որ արգապահ օբյեկտը կառուցվում էր յուրօրինակ պայմաններում: Միությունում բացառիկ երևույթ հանդիսացող այդ շինարարական աշխատանքները կատարվեցին առանց ընդհատելու մետրոպոլիտենի աշխատանքները: Պայթեցումնե-

րը, հորատանցումները, մոնտաժային և այլ աշխատանքները կատարվում էին գիշերվա միայն այն ժամին, երբ գծում գնացքների երթեւկությունը դադարեցվում էր: Կայարանը կառուցվեց մեծ դժվարություններով: Երկրի վրա այս կառույցի արժեքը կազմեց 16 միլիոն 770 հազար ռուբլի, երկի ավելի շատ քան որևէ այլ կայարանի վրա ծախսվեց:

Կայարանը շահագործման հանձնվեց 1989թ. նոյեմբերի 29-ին: 1987 թ-ից կայարանի շինարարությանը ծեղոնամուխ եղան N41 թունելային ջոկատի մասնագետները, նրանք շարունակեցին նախորդ տարիներին N160 շինմոնտաժային վարչության և N25 թունելային ջոկատի սկսած գործը: Կայարանի շինարարական աշխատանքներին մասնակցեցին նաև բազմաթիվ շինարարական և մոնտաժային կազմակերպություններ, որոնց քրտնաջան աշխատանքը երթեք հնարավոր չէ մոռանալ: Առանձնապես հիշատակնան արժանի են N41 թունելային ջոկատի Պ. Հովհաննիսյանի դեկավարած տեղամասի փականագործ-մոնտաժողներ Ա. Վարդանյանի, Ռ. Երիցյանի, Էլեկտրիկ-փականագործ Ս. Առուշանյանի, հորատողներ Է. Բաղայանի, Օ. Օհանյանի անունները, որոնք շինարարության սկզբից մինչև ավարտն աշխատեցին տեղամասում: Էլեկտրական սարքավորումների մոնտաժման ու կարգավորման աշխատանքները կատարվեցին «Հայէլեկտրամոնտաժ» տրեստի N1 մոնտաժային վարչության Ն. Մուսոյանի տեղամասի մոնտաժողները:

«Զորավար Անդրանիկ» կայարանի շինարարության մասին պահպանված փաստաթղթերի մեջ էր երթադիրի գործկոմի 1989թ. դեկտեմբերի 2-ի որոշումը, նպատակահարմար գտա տպագրել այն:

Երևանի մետրոպոլիտենի՝ շահագործման հանձնված կայարանը «Զորավար Անդրանիկ» անվանելու մասին երևան քաղաքի գործադիր կոմիտեն որոշում է.

Ըստուներով երևանցիների առաջարկությունը՝ Հոկտեմբերյան պղոստայի վրա շահագործման հանձնված մետրոպոլիտենի նոր կայարանն անվանակոչել «Զորավար Անդրանիկ»

Գործկոմի նախագահ՝  
Գործկոմի քարտուղար՝

Ա.Մ. Գեղամյան  
Ա.Ա. Մակարյան

Ողջունելի էր երթադիրի գործկոմի ընդունած որոշումը՝ երևանի մետրոպոլիտենի «Հոկտեմբերյան» կայարանը «Զորավար Անդրանիկ» վերանվանելու մասին: Այդ տարիներին, որպես քաղ-

խորիրդի մշտական հանձնաժողովներից մեկի ղեկավարի, մոտիկից շփվելով Երթադիրի գործկոմի աշխատանքներին, զգացել ենք Երթադրությունը նախագահ Արտաշես Գեղամյանի մարդկանց ունկնդրելու և արժեքավոր առաջարկությունները գործնականորեն լուծելու ունակությունը:

«Զորավար Անդրանիկ» կայարանի շահագործման առաջին իսկ օրից ապացուցվեց, որ մայրաքաղաքի ամենածանրաբեռնված տրամս-պորտային ուղևորահոսք ունեցող հատվածում մեկ օր շուտ մետրոյի կայարանի շահագործումը, իրոք, բնակչության համար կենսական նշանակություն ուներ: Բավական է ասել, որ մինչև «Զորավար Անդրանիկ» կայարանի շահագործումը մետրոպոլիտենով օրական միջինը տեղափոխվել է 110 հազար ուղևոր, կայարանի շահագործումից հետո այդ թիվը հասել է 135-140 հազարի:

Սիլիկյան թաղամաս գնացող ծանապարիի եզրին կառուցվեց N29 հորանային համալիրը: Այն ամբողջությամբ պարտվեց: Կառուցվեց նաև նեպի կայարանային համալիր գնացող 500 մ երկարություն ունեցող թունելից 80 մ հատվածը:

Երևանի մետրոպոլիտենի երկրորդ հերթի շինարարության ավարտով «Քարեկամություն» կայարանը կվապեր Աշխամյակ թաղամասի հետ, կունենար 3.2 կմ երկարություն: Կայարաններից մեկը նախատեսված էր կառուցել «Արագած» կինոթատրոնի հարևանությամբ, մյուս՝ Աշտարակի խճուղու մոտ կառուցվող Յոյւսիս - արևմտյան բնակելի զանգվածի մատույցները: Երևանի մետրոպոլիտենի երկրորդ հերթն իր նախագծային վկայականն ստացել էր «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտում, «Երևաննախագիծ» ինստիտուտի հետ համատեղ: Նախատեսված էր այս հատվածում իրականացնել ընդհանուր արժեքով 77 միլիոն ռուբլի շինմոնտաժային աշխատանքներ /մինչև 1989թ. նոյեմբերը ծախսվեց 8 մլն. ռուբլի/: Դրա գործարկումով Յոյւսիս-արևմտյան բնակելի թաղամասը կվապեր քաղաքի կենտրոնի և հարավային թաղամասերի հետ:

...1993թ. «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտում սկսվեց «Զարբախ» կայարանի նախագծումը և շինարարությունը միաժամանակ: 1996թ. դեկտեմբերի 25-ին շահագործման հանձնվեց վերոհիշյալ կայարանը, թվով 10-րդը, որը վերգետնյա միագիծ ուղիով, որպես կցու-

ոի, սկիզբ է առնում «Շենգավիթ» կայարանից և ունի 1575մ երկարություն: Մետրոպոլիտենի այս հատվածը նախատեսված է մետրոշինության տեխնիկական նորմերին համապատասխան:

Երևանի մետրոպոլիտենի վրա, իր 10 կայարաններով ծախսվեց 160 միլիոն ռուբլի:

## «ԶՈՐՅՈՒՐԴ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ»

Երևանի մետրոպոլիտենի ժիշտության մեջ կառույցի շինարարությամբ միայն շինարարները և նրանց հետ առնչվող կազմակերպությունները չեն, որ գրադարձ էին:

«Զերևացող շինարարները» մետրոպոլիտենի շինարարության գործում իրենց մեջ դերն էին կատարում: Դրանք նամուլի, ռադիոյի և հեռուստատեսության աշխատողներն էին, որոնք թերթերի և ամսագրերի, ռադիոյի և հեռուստատեսության միջոցով լուսաբանում էին մետրոյի շինարարության ողջ ընթացքը, Երևանցիներին տեղյակ պահում գործերի՝ ինչպես դրական առաջընթացի, այնպես էլ տեղ գտած թերությունների ու հոգսերի մասին: Կարելի է վստահորեն ասել, որ նրանց գործունեությունը ոչ միայն նպաստում էր նայրաքաղաքի մետրոպոլիտենի շինարարության հաջող և ժամանակին ավարտին, այլև նրանց ակտիվ միջամտությունը մեծապես օգնում էր շինարարներին: Այնպես, որ «չորրորդ իշխանությունն» իր ծանրակշիռ դերն էր կատարում Երևանի մետրոպոլիտենի շինարարության գործում: Այս առումով տեղին է նրանց գործունեությանն անդրադառնալ հանգամանորեն, ըստ պատշաճի ներկայացնել այն երախտավորներին, որոնք իրոք, սրտացակ մոտեցմամբ ազգանվեր գործ կատարեցին և ուսումնասիրությունները թորին հանձնելով ստեղծեցին արժեքավոր ու մնայուն գործեր: Այստեղ շատ հակիրճ կխոսվի միայն որոշ ամսագրերում, թերթերում հրապարակված մի քանի կարևոր տեղեկությունների մասին, որոնցից ընթերցողն ամբողջությամբ գաղափար կկազմի 1970-1980-ական թվականներին նրանց կատարած գործերից, լցվելով հավատով, որ հետագայում «չերևացող» նվիրյալների թողած հետքը մանրակրկիտ կլուսարանվի և կդառնա մեր ժողովորդի կատարած գործերի արժանի օրինակներից մեկը:

\*\*\*

1978 թ. հունվարին Երևանի մետրոպոլիտենի շինարարության մասին ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի որոշումը լայն արձագանք գտավ հանրապետության նամուլի, ռադիոյի և հեռուստատեսության աշխատողների շրջանում: Ուսումնասիրությունները ցույց

տվեցին, որ համապետությունում առաջինը «Գիտություն և տեխնիկա» ամսագիրն արձագանքեց պատմական այս որոշմանը, որի էջերում տպագրված հոդվածները գրված են գիտական և գործնական խորը վերլուծությամբ, մետրոշինարարներին օգնելու, բազմակողմանի տեղեկատվություններ մատուցելու պատրաստակամությամբ։ Եվ այն կատարվել է առանց պահ իսկ կորցնելու, հանրահայտ որոշումը հրապարակելուց գրեթե անմիջապես հետո։ Ասածն ապացուցվում է թեկուզ այն պարզ փաստով, որ դեռ երկու ամիս չանցած, «Գիտություն և տեխնիկա» ամսագրի 1978թ. 3-րդ համարը գրեթե ամբողջությամբ նվիրվել է մետրոպոլիտենի շինարարությամբ։ Որպեսզի ընթերցողի համար պարզ լինի ամսագրում տպագրված ողջ փաթեթի ծանրակշիռ արժեքը, թվարկենք համարում զետեղված լայնածավալ հոդվածների միայն խորագրերը։ Գալինա Բելյակա՝ «Համաշխարհային մետրոշինարարության գարգացման պատմությունը», Եֆիմ Ռեզնիչնենկո՝ «Մոսկվայի մետրոյի կառուցման պատմությունը» («Մետրոստրոյ» ամսագրի գլխավոր խմբագիր), Միխայիլ Լեբեդև՝ «Մոսկվայի մետրոպոլիտենի տեխնիկան» (Մոսկվայի մետրոպոլիտենի գլխավոր ինժեների տեղակալ), Ն.Շինոփեև՝ «Դիշում է առաջին մեթոնավարը», Նինա Ֆեդոսյակ՝ «Սովետական միության օգնությամբ», Սվետլանա Պոնոնմարենկո՝ «Մետրոյի թունելների հորատման աշխատանքների մեքենայացումը», «Աշխարհի մետրոպոլիտեների շարժակազմը» (հեղինակը «Գիտություն և տեխնիկա» ամսագրի պատասխանատու քարտուղարն է), Եֆիմ Ռեզնիչնենկո՝ «Մետրոյի աղնուկի պակասեցման պրոբլեմը» («Մետրոստրոյ» ամսագրի գլխավոր խմբագիր)։

Անսագրի հոդվածները կարծեք մետրոյի շինարարության մտահղացում-նախագծում-շինարարություն շղթայի ստեղծման մի անգնահատելի «բառարան լինի» հագեցված քաղաքների մետրոշինարարություններում եղած դժվարությունների հաղթահարճան ուղիների բացահայտումներով, գործնական և գիտական հիմնավորնամբ, նախագծողների և կառուցողների իրականացման ուղիների տարրերակներով։ Իրոք, անսագրի հասել է իր նպատակին օգնել սկսած մետրոշինարարությամբ ապրող մարդկանց իրենց աշխատանքային գործողություններում։

Զարմանք է պատճառում խմբագրության հեռատեսությունն. առա-

ջին իսկ համարից նախապատրաստելով երևանցիներին ապագա մետրոպոլիտենի ուղևորներին, պատրաստ լինել և խուսափել ոչ հաճելի անակնակալներից, դժբախտ պատահարներից։ Եվ դրանք լուսաբանվում են երեմն մի քանի նախադասությամբ, լակոնիկ ու պարզ լեզվով, տպագորիչ նկարչական պատկերներով, միաժամանակ նրանցում ընդգրկվել են հետաքրքիր դեպքեր, փաստեր, կարծ մեկնաբանություններով։ Պարզ երևում է, որ նպատակ են ունեցել փաստերն ու օրինակներն այնպես ներարկել ընթերցողի ուղեղում, որպեսզի երբեք դրանք չնորացվեն։ «Խայտարդես փաստեր, դեպքեր, թվեր» ընդհանուր խորագրի տակ այդ փոքրիկ «հոդվածները» կարծեք անհրաժեշտ են յուրաքանչյուրին, առանց որի չես կարող ճիշտ օգտվել մետրոյի ծառայություններից, իսկ բազմաթիվ թվերին, փաստերին տեղյակ լինելը կարծեք սեր և սպասում է արթնացնում դեպի ապագա մետրոպոլիտենը։

Զարմանալի է, ինչպես է հաջողվել խմբագրությանը երևանի մետրոպոլիտենի շինարարության իրականացման թույլտվությունից հետո կարծ ժամանակում այդքան լայնածավալ և արժեքավոր հոդվածներ հարապարակել ամսագրում։ Դրանց «ծննդի» պատմությունը հետաքրքիր է։

«Գիտություն և տեխնիկա» ամսագրի պատասխանատու քարտուղարն իմ դասընկեր Ռաֆայել Ջարությունյանն էր։ Նեռ դպրոցական տարիներին կնքվեց նրա մականունը «քայլող հանրագիտարան»։ Այդ տարիներին ժողովրդական տնտեսության, գիտության և տեխնիկայի յուրաքանչյուր բնագավարից, նույնիսկ գիտական շատ հետազոտությունների ուղղությամբ տարվող աշխատանքների մասին այնքան տեղեկություններ գիտեր, որ ոչ միայն մեզ, այլև ուսուցիչներին զարմանք էր պատճառում։ Ընտանեկան դաստիարակությունը և բնածին ունակություններն իրենց դերը կատարել էին։ Պարզ էր, որ հետագա տասնամյակներին ավելի խորացած հետաքրքրասիրությունները և անձամբ գիտությամբ գրադարձելն իր որոշիչ խոսքը պետք է ասեր։ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո աշխատում էր գիտահետազոտական ինստիտուտում, ապա պոլիտեխնիկական ինստիտուտում անցավ դասախոսական աշխատանքի։ Արդեն գիտմականի անուն վաստակած տեխնիկական գիտությունների թեկնածու Ռաֆայել Ջարությունյանին ճանաչում էին շատերը, այդ թվում նաև «Գիտություն

և տեխնիկա» ամսագրի գլխավոր խմբագիր, ակադեմիկոս Մարտին Վահանի Կասյանը և նրա առաջարկությանը մանկավարժական ու գիտական աշխատանքների հետ մեկտեղ Ռաֆայել Հարությունյանը «Գիտություն և տեխնիկա» ամսագրում ստանձնեց պատասխանատու քարտուղարի պարտականությունները: Եվ ակադեմիկոսը, և գլխավոր խմբագիր տեղակալը Ռայկական Գիտատեխնիկական լրատվության և տեխնիկատնտեսական հետազոտությունների ու գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Լեոնարդ Ֆրանցի Սարուխանյանը, գրադարձուկ իրենց բազմապիսի աշխատանքային գործունեությամբ, խմբագրական ծանրաբեռնված աշխատանքը դրել էին պատասխանատու քարտուղարի վրա: Ռաֆայել Հարությունյանի բարեխիղճ աշխատանքը, բազմակողմանի և խորը գիտելիքները ինարավորություն տվեցին ավելի հետաքրքիր դարձնել ամսագրի աշխատանքները:

Երևանի մետրոպոլիտենի շինարարության նախարար Նախ Նրան ուղղում է ավագ ընկերոց, «Կոմունիստ» թերթի գլխավոր խմբագրի Բորիս Մկրտչյանի մոտ: Մանրակրկիտ քննարկելով մետրոպոլիտենի շինարարության աշխատանքներին նպաստելու հարցը, որոշում են «Կոմունիստ» թերթում, ինչպես նաև Շայաստանի լրագրությունում ստեղծել «քորակցական կետ», պարբերաբար անդրադառնալ Երևանի մետրոյի նախագծնան ու շինարարության հարցերին:

Ռաֆայելն իր առջև խնդիր է դնում հանդիպել «Մետրոստրոյի» ամսագրի գլխավոր խմբագրի Եֆիմ Ռեզնիչենկոյին, խնդրել ամսագրի աշխատողների ուժերն օգտագործել մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերվող հետաքրքիր տեղեկատվություններով «Գիտություն և տեխնիկա» ամսագրում հանդես գալու համար: Այս խմբագրությունն իր յուրօրինակ աշխատանքային բնույթով, ինչպես այն ժամանակ ընդունված էր ասել «փակ» խմբագրություն էր, ամեն մի մարդ չէր կարող «սողոսկել» խմբագրության դրույթով, չէ որ խմբագրության գործունեության հետ կապված հեռուներ տանող, ստորգետնյա շատ անցուղիներ գաղտնի էին, որոնցից մեկն էլ Կրեմլ տանող անցուղին էր:

Ռաֆայել Հարությունյանն իր գիտական ներդրումներով, մտահեցումներով նաև «փակ», «գաղտնի» աշխատանքներով ճանաչված էր Շայաստանից էլ դուրս, հատկապես Մոսկվայում, տարիներ շարունակ, որպես Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտնական, Մոսկվա-

յի թերեւ համաձուլվածքների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի, Կույրիշիկի և Կրասնոյարսկի այլումինի գործարանների հետ զբաղվում էր «ժողովրդական տնտեսության մեջ օգտագործվող այլումինի համաձուլվածքից բարձր արտադրողական տեխնոլոգիական գծերի վրա պրոֆիլների ստացման» հոլով կարևոր թեմայով, որի համար հետազոյւմ նա արժանացավ ԽՄՀՍ Նախարարների խորհրդի պետական մրցանակի: Այս բոլորից հետո կասկածել նրա բարի ու անկեղծ, հայրենավեր մղումներին: Պետանվանգության աշխատողները տարբեր ծևերով «պրոֆիլակտիկ» հետազոտություններ կատարելուց հետո տվեցին իրենց համաձայնությունը, որպեսզի «Գիտություն և տեխնիկա» համագործակցի «Մետրոստրոյ»-ի հետ: Զերք է բերվում վատահություն: Ավելին, գլխավոր խմբագրի Եֆիմ Ռեզնիչենկոյն, տեսնելով Երիտասարդ գիտնականի, լրագրողի անսահման ու անմնացորդ նվիրումը նեպի իր քաղաքի կարևորագույն հոգսերից մեկը, Երևանի մետրոպոլիտենի շինարարության օգնություն ցույց տալու վճռականությունը, դառնում է նրա մեծ ընկերն ու առաջին օգնողը: Նախ՝ Ռաֆայել Հարությունյանի համար կանաչ ճանապարհ է բացվում Երևանի մետրոյի նախագծողներին, շինարարներին օգնելու նպատակով հանրահայտ «Մետրոստրոյի» խմբագրության ողջ հնարավորությունների հետ ծանրանալու համար և երկրորդ հատուկ խմբագրական ընդլայնված կոլեգիայում քննարկվում և մշակվում է միջոցառումների հստակ ծրագրի ըստ թեմաների, Ծերելով կատարման ժամկետը «Գիտություն և տեխնիկա» ամսագրում կոլեգիայի անդամների, թղթակիցների կողմից արժեքավոր հոդվածներով հանդես գալու համար: Այս բոլոր աշխատանքների կողրդինացման և դեկավարման պարտականությունները դրվում են բազմավաստակ ժուռնալիստ, խմբագրության բաժնի վարիչ Սվետլանա Պոնոմարենկոյի վրա, որն իր անհանգիստ բնավորությամբ, ինչպես ասվում է, նի ուժը Սոսկվա, մյուսը Երևան, Ռաֆայել Հարությունյանի հետ աշխատելով, իր ծանրակշիռ գործն է կատարում:

Կառույցի ոգին հասկանալու համար ամսագրի պատասխանատու քարտուղարը և Մոսկվայի թղթակիցը խորությամբ ուսումնասիրում են մետրոպոլիտենի նախագծման և շինարարության «Ներ տեղերի» վերացման համար անհրաժեշտ պատվերները, որպեսզի «Մետրոստրոյ» ամսագրի աշխատողները համապատասխան հոդվածներով հանդես

գան ի օգնություն Երևանի անփորձ մետրոշինարարներին,որպեսզի նրանց ծանոթացնեն տարրեր Երկրներում ստորերկրյա կառույցների ժամանակ առաջացած բարդությունների հաղթահարման ուղիների հետ, նախագծողներին, ճարտարապետներին վերջին ժամանակահատվածում ստեղծված նորագույն լուծումների, հորատող ծանր ֆիզիկական աշխատանքը մերենայացնելու խնդրի հետ մետրոպոլիտենի ինժեներատեխնիկական աշխատողներին և մատակարարող ծառայություններին տեղեկացնեն, հորատման աշխատանքների մերենայացնան, նոր տեխնիկա ծերը բերելու հնարավորությունների հետ և այլն:

Եվ ահա 1978 թվականի առաջին իսկ ամիսներից, հիմնականում մինչև 1988 թվականը, բացի հիշատակված հոդվածներից ծնունդ են առնում «Պողպատյա հորատող մերենաները», «Մետրո քան քաղաքներում» «Պրագայի մետրոպոլիտենի նոր մայրուղին», «Աշխարհի մետրոպոլիտենների շարժակազմը», «Խորհրդային Միության գործող և նախագծվող մետրոպոլիտենները» և մեծ արժեքը ներկայացնող ծավալուն այլ հոդվածներ:

«Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտին, որը Երևանի մետրոպոլիտենի ստեղծման ողնաշարն էր, օգնել էր պետք նոր տեղեկատվություններով: Արդեն փորձված նախագծողներին հեշտությամբ չէր կարելի համոզել, որ յուրաքանչյուր «նորածին» մտահղացումը նախորդից լավն է, համարել էր պետք, այն էլ խորությամբ, տեխնիկական, տնտեսագիտական պարամետրերի խորն ու հավաստի տվյալներով: Այս բոլոր Ռաֆայել Հարությունյանը լավ էր հասկանում հատկապես Վլադիմիր Դանդուրովի հետ սերտ հարաբերությունների մեջ մտնելով: Եվ այդ էր պատճառը, որ յոթանասունական թվականների վերջին, համակարգչային տեխնիկայից գորև պայմաններում, ամիսներ շարունակ լարված ու քրտնաշան աշխատանքի շնորհիվ ամսագրի պատասխանատու քարտուղարը, օրինակ «Գիտություն և տեխնիկա» ամսագրի 1978 թ. 10-րդ համարում «Աշխարհի գործող մետրոպոլիտենները» խորագրի տակ սինմատիկ ցույց տվեց գործող, նորություններով հագեցված աշխարհի 50 կարևորագույն մետրոպոլիտենների հիմնական «պարամետրերը», սկսած քաղաքների ազգաբնակչության թվից, մետրոպոլիտենների տեխնիկատնտեսական կարևոր ցուցանիշներից, վերջացրած սպասարկման աշխատանքների հետ կապված հարցերով: Նեղ մասմա-

գիտական «դիտարկումները» չեն կարող հայտնաբերել մի որևէ կարևոր տեղեկություն, որն արծարծված չինի բավականին ծավալուն սխեմայի մեջ: Ինչպիսի մեծ բարեխղճություն, նախագծողներին, կառուցողներին օգնելու ինչպիսի ցանկություն պետք է ունենա մարդը, որ քախնդրորեն մոտենա այդպիսի արժեքավոր գործին:

Իրոք, ամիսների ընթացքում գործնական աշխատանքային մթնոլորտ է ստեղծվում «Մետրոստրոյ», «Գիտություն և տեխնիկա» ամսագրերի աշխատողների ու Երևանի մետրոպոլիտենի շինարարության հետ առնչվող կազմակերպությունների և մասնավորապես «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվի «մետրո և քունելներ» բաժնի համապատասխան աշխատողների միջև: Հատկապես սերտ աշխատանքային կապեր են ստեղծվում գիտնական-թղթակից Ռաֆայել Հարությունյանի և նախագծող Վլադիմիր Դանդուրովի միջև: Երբեմն բանավեճերի մեջ մտնելով միմյանց հետ, նրանց անկեղծ փոխհարաբերությունները մեծապես նպաստել են գործին: Ամսագրի պատասխանատու քարտուղարի մոտ վառ հիշողություններ է թողել Վլադիմիր Կոնստանտինովիջը, հուսով ենք, որ դրանք կհանձնվեն թղթին:

Եկեւ էր և այն ժամանակը, երբ ոչ միայն անհրաժեշտ էր «սովորեցնել» Երևանի մետրոպոլիտենով գրադվոր մարդկանց, այլև ցույց տալ, թե ինչպիսի հայրենանվեր գործեր են կատարվել Երևանի ընդերքում, ինչպիսի հեռանկարային զարգացում էր ապրելու նայրաքաղաքի մետրոպոլիտենը: Աշխարհի մետրոնախագծողներին, շինարարներին ինչպիսի նորանություններ են մտցրել աշխարհի մետրոշինարարության մեջ: 1979 թվականի «Գիտություն և տեխնիկա» ամսագրի 7-րդ համարը գորեք լրիվ նվիրված էր Երևանի մետրոպոլիտենի շինարարությանը: Տպագրվել էր «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Դանդուրովի և ինստիտուտի «Մետրո և քունելներ» բաժնի պետ Արկադի Կուրիսկոյի «Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթը», Երևանի կառուցվող մետրոպոլիտենի տնօրինության պետ Իվան Պապիկի՝ «Կառուցվում է Երևանի մետրոպոլիտենը», «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի «Մետրո և քունելներ» բաժնի գլխավոր մասնագետ Ռոմուալդ Գեղամյանի «Երևանի մետրոյի գների զարգացման հեռանկարները», Երևանի կառուցվող մետրոպոլիտենի

տնօրինության գլխավոր ինժեներ Սերգեյ Բաղալովի «Երևանի «Մետրոշին» արդյունավետություն և որակ», «Հայրունելշինի» վարչության պետ Լեռնիդ Հարությունովի՝ «Հայրունելշինը» կառուցում է Երևանի մետրոն», Երևանի մետրոպոլիտենի կայարանների ճարտարապետների և այլ իրավասու անձանց տարբեր խորագրերով տպագրված հոդվածները։ Կարում ես և հպարտությամբ լցվում։ Կարծեք ակնրարթային արագությամբ է ստեղծվել հիացմունք պատճառող հայ մասնագետների զարմանահրաշ գործերը։ Անհնարին է նույնիսկ ոչ մասնագետ, գործից հեռու կանգնած մի հայորդի կարող և չփառտանա նրանց սրափ մտածելակերպի, պրպտող մտքի արդյունքով։ Յուրաքանչյուր հոդված իր խոսքն է ասում ընթերցողին, համեստ ներկայացնում մտածածն ու արածը, որը մարդու մեջ արթնացնում է շինարարության օգնելու մեջ ցանկություն։ Պարզ է, հոդվածները «միս ու արյուն» են ստացել պատասխանատու քարտուղարի անքուն գիշերների շնորհիվ։ Իրոք, Ռաֆայել Հարությունյանը հասել էր իր նպատակին։ Որպես գրվածի ապացույց և որպես ականատես ասեմք, որ «Գիտություն և տեխնիկա» ամսագրում Երևանի մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերվող հոդվածները մեծ հետաքրքրություններ էին առաջացնում ոչ միայն մետրոյի հետ առնչվող մարդկանց, այլև հասարակության մեջ ընդհանրապես։ Պարզ է, որ ուղղակի, թե անուղղակի ճանապարհով հոդվածներն օգնում էին մետրոպոլիտենի շինարարությանը, որակյալ շատ մասնագետներ իրենց պատրաստակամությունն էին հայտնում անձնական մասնակցությամբ օգնել դժվար օղակներում աշխատանքների իրականացմանը։

«Գիտություն և տեխնիկայում» գունավոր ներդիրով առաջին անգամ տպագրվեց Երևանի մետրոպոլիտենի ուրվագծային գծագիրը։ Վերևի ծախ անկյունում Սասունցի Դավթի նշանավոր պատկերով։ Այս ուրվագծային գծագիրն արտաստացին սփյուռքի համարյա բոլոր թերթերը և այն աննշան փոփոխություններով այսօր ճամփորդում է Երևանի մետրոպոլիտենի ամեն մի վագոնում՝ սպասելով լավ օրերի, երբ էկոլոգիայի գաղափարների հաղթանակը կիանգեցնի այդ գծագրի ընդարձակմանն ու ծավալմանը։

Հասարակությանը, ազգին նվիրվելու համար միայն բնածին ունակությունը քիչ է, ընտանեկան ճիշտ դաստիարակություն է պետք հենց

օրորոցից։ Դիշում եմ, դեռ ստալինյան տարիներին 15-16 տարեկան Ռաֆայելի թևակոր խոսքը։ «Ազգի համար պայքարի կարևորագույն ճակատը որտեղ է ես այնտեղ եմ»։ Այն ժամանակ շատերի համար անհասկանալի, վտանգավոր էին հնչում այս խոսքերը։ Իրոք, միայն բազմակողմանի զարգացած «քայլող հանրագիտարանը», ազգանվեր ծնողների դաստիարակված որդին, կարող էր նման նախադասության հեղինակը լինել։ Իր կյանքի անցած ողջ ժամանակահատվածում Ռաֆայել Հարությունյանը հավատարիմ մնաց իր ազգանվեր սկզբունքին։ Իրավամար նրա հայող, հայ ժողովրդի արժանի զավակ, ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի աշակերտ Վարագդատ Մարտիրոսի Հարությունյանը երջանիկ հայր է։

Դիմա քան երբեւ, ոչ թե խոսքով, այլ անմնացորդ նվիրումով, ազգին նվիրյալներ են պետք։

\* \* \*

... 1978 թվականին «Գարուն» ամսագրի 7 և 8 համարներում լուս տեսավ «Հայրերի դիմանկարները» որդիների համար» խորագրով ակնարկը, որը մեծ արձագանք գտավ հանրապետությունում։ «Գարուն» ամսագիրը գլխավոր խմբագիր Վարդգես Պետրոսյանի հմուտ և բանիմաց աշխատանքի շնորհիվ մեծ հեղինակություն էր վայելում հանրապետության ընթերցանության շրջանում։ Իսկ այս հոդվածը Երևանի մետրոյի շինարարության, Երևանցիների երազանքի մասին էր և պատահական չէր, որ «Գարուն» ամսագրի այդ համարները մի քանի օրվա ընթացքում սպառվեցին։

... «Գարուն» ամսագրի խմբագրության գործուղումով արձակագիր, ժուռնալիստ Մերուժան Տեր-Գուլանյանը մեկ ամիս աշխատում էր Երևանի մետրոպոլիտենի շինարարության «Բարեկամության» տեղամասում, մոտիկից տեսնում, ճանաչում ստորգետնյա աշխատանքը, թունելագործի դժվար մասնագիտությունը։ Բանվորները նրան ընդունում էին որպես հերթական նորեկի, որին պետք է սովորեցնեին հորատանցողի մասնագիտությունը։ Լրագրողի «ծպտյալ» աշխատանքի մասին N 160 շինմոնտաժային վարչության պետ ժողով Ավանեսյանը տեղյակ է պահում «Բարեկամություն» տեղամասի պետ Գագիկ Մարտիրոսյանին, և այդպես էլ մինչև վերջ նրա աշխատանքային ընկերները չի-

մացան նրա ով լինելը:

Ինչպես արդեն ասվեց ժուռնալիստներից մեկն աշխատանքի անց-նելով մետրոպոլիտենում, իր աշխատանքային «մկրտությունը» ստա-նում է մի տոննա բետոնե սալը լատուկը «բերելով»: Դա Մերուժան Տեր-Գուլանյանն էր:

Ժուռնալիստը մեկ ամիս աշխատելով մետրոյի շինարարությունում որպես հորատող բանվոր, մեծ սիրով է լցում իր բանվորական ընկեր-ների նկատմամբ: Նրանց մարդկային անկեղծ նվիրվածությունը միմյանց նկատմամբ, անմնացորդ նվիրումը աշխատանքին և կարելի է ասել, անձնագործ վերաբերմունքը գործի նկատմամբ, ուղղակի գերում է լրագորդին: Բրիգադի աշխատողներ Սպարտակ-Ռազմիկ-Գորգեն-Աշոտ-Կոլոյա կերպարներով ամփոփում է մետրոպոլիտենում աշխա-տող կոլեկտիվի անդամների կերպարը, որպես մաքուր ու գուլալ հոգու տեր մարդկանց, նվիրյալների, հայրենասերների: Եվ նրանց հոգու խոր-քից է ասում հորատողներից մեկը. «Ես մի քիչ ամազում եմ մեր քաղաքի այն տղամարդկանց համար, որոնք իրենց ապրուստը վաստակում են թերեւ աշխատանքով: Նեշտ վաստակի ծգտումը, աննկատելիորեն խաթարում է նրանց մարդկային հոգին, տանում հոգեսոր անպտղու-թյան, դարձնում նյութին գերի, օտարացնում հասարակությունց»:

Նրանց միջև տեղի ունեցող երկխոսությունց «ծնունդ» է առնում ընտանիքի դաստիարակության դերը հասարակության համար ազնիվ ու նվիրյալ, հայրենիքի նկատմամբ անսահման սիրո գաղափարը:

Բրիգադիր Ռազմիկի հայրը պատերազմի տարիներին գյուղի կոլտնտեսության նախագահն էր: Մի օր գյուղի ֆերմայի վարիչը նա-խագահի տունը կարասով յուղ է բերում: Ռազմիկի մայրն այս յուղով ճաշ է պատրաստում: Հայրը գալով տուն, տեսնում է կինը յուղով եփած ճաշ է մատուցում իրեն, հարցնում է, թե որտեղից է ծեռք բերել յուղը: Երբ իմանում է եղելությունը, ճաշով ափսեն հրում է մի կողմ, բարկա-նում, կարասով յուղը կապում է կնոջ մեջքին և ստիպում, որ ծանր կա-րասը շալակած տանի ֆերմայի վարիչի տունը: Խեղծ կինը լալով խնդ-րում է ամուսնուն, ու հրաժարվի իր ասածից, բայց ոչ մի ճար չի լինում: Այդպես լալով էլ կարասը տանում է:

Ակնարկաշարում այս մասին պատմելով հեղինակը բերում է Ռազ-միկի և Սարգիսի միջև կայացած հետևյալ խոսակցությունը.

«... Սարգիսը, որ նստել էր մեքենայի հարթակին, բարձրածայն ծի-ծաղեց:

- Ռազմիկ, հայրը որ ժամանակին էն յուղը ետ չտար, ինչ գործ ունե-իր այստեղ, կանայիր քեզ համար, կարգին կապրեիր:

Ռազմիկը ժպտաց, հետո եկավ, նստեց Սարգսի դիմաց:

- Ինչ պիտի անեի, որ ավելի լավ ապրեի:
- Պրոֆեսոր որ դառնայիր:
- Ինչ գործը պրոֆեսորի գործից էլ լավ է, - շարունակելով ժպտալ, ասաց Ռազմիկը...»

Որոշ հարցերի պատասխանելուց հետո Ռազմիկը ասում է. «Բա որ բոլորը պրոֆեսոր դառնան, ես գործը ո՞վ է անելու, գիտես քանի աշա-կերտ եմ ունեցել...»:

Ռազմիկի և մեկ այլ հորատողի Աշոտի խոսակցությունից բերենք մի հատված: Աշոտն ասում է. «Ուրիշի հողից նավք է դուրս գալիս, քա-րածովին է դուրս գալիս, դու էլ ծիրանով ես ուրախանում»: Պատասխա-նը լինում է. «Մենակ ծիրանն է. խաղողը, դեղձը, ջուրը... կյանքն էլ դրանք են, ել ի՞նչ ես ուզում, համ էլ ուրիշն իր լավ երկիրը քեզ չի տա, մերը այս է»: Ֆիշտ այսօրվա ժամանակին է վերաբերվում...»

Ռազմիկի ընտանեկան դաստիարակությունն է եղել պատճառը /հա-շատ պարզ նկատվում է/, որ հեղինակն ակնարկաշարը վերնագրել է «Հայրերի դիմանկարը որդիների համար»: Պատահական չէր, որ նման դաստիարակություն ստացած անծը գլխավորեց երևանի մետրոպոլի-տենի հորատողների բրիգադներից մեկը, այն դարձնելով ամենառաջա-վորներից մեկը: Եվ պատահական չէր նաև, որ մարդկանց, իր հայրենի-քի նվիրյալին Ռազմիկ Հայրությունյանին, «Հայրունելշինի» քազմահա-զարանոց կոլեկտիվն առաջարդեց հանրապետության Գերագույն խորհրդի պատգամագոր:

Ընթեղողը հիշում է «Երիտասարդական» կայարանի շինարարու-թյունը դեկավարող շինվարչության պետ Վոլոյյա Ավետիսյանի գործու-ներությանը տված զնահատականը: Կարծեք շինարարության ինժենե-րական աշխատանքին որդեգորվածներն ի ծնե պետք է լինեն Վոլոյյա Ավետիսյանի նման շինարարության աշխատանքներին նվիրված, բան-վորի հոգեբանությանը գիտակ անձնավորություններ, հասարակ ու ան-միջական մարդիկ: Դրանում ես մեկ անգամ ևս համոզվեցի պոլիտեխ-

նիկական ինստիտուտի երիտասարդ շրջանավարտներ, «Նորելուկ մանուկներ» Կարեն Աղամյանի և Գագիկ Մարտիրոսյանի օրինակով, աշխատանքային գործունեության առաջին հսկ օրից նրանց հետ չփվելով, աստիճանաբար, բայց արագ ըստ պատշաճին, նրանց առաջընթացին ու բարձր տեղաշարժին ականատես լինելով: Սակայն, քանի որ ակնարկաշարում խոսքը գնում է նաև Գագիկ Մարտիրոսյանի մասին, կանգ առնենք միայն նրա կերպարի բնորոշման վրա:

Թվում է, թե մեկ ամիսը բավարար չէ մարդուն լավ ուսումնասիրելու, նրան ըստ արժանվույն գնահատականի արժանացնելու համար: Մերուժան Տեր-Գուլանյանը կարծ ժամանակում զարմանալիորեն խորությամբ ուսումնասիրելով, պատշաճ գնահատականի է արժանացնում Գագիկ Մարտիրոսյանին որպես շինարարության ամենաբարդ օյակներից մետրոպոլիտենի շինարարության կրտսեր դեկապարի, մարդկային լավ հոգեբանի, բանինաց ու խելացի ինժեների: Գործին անմնացորդ նվիրումը, հավատն ու սերն էր պատճառը, որ մարդիկ անրոնազբոսիկ, ինքնակամ, երեմն անմիջապես Գագիկի մտածածը կրահելով, շինարար բանվորն ինըն է առաջարկել մնալ աշխատել որքան պետք է, միայն թե գործն առաջ գնա, իրենց դեկապարի սրտովը լինի:

Գագիկ Մարտիրոսյանը պոլիտեխնիկական ինստիտուտն ավարտելուց հետո, դեռ ստորգետնյա արագընթաց տրամվայի շինարարության ժամանակ, շատ կարծ ժամանակ հետո նշանակվում է հերթափոխի պետ, ապա՝ տեղանասի պետ: Երկու տարի բանակում ծառայելուց հետո, նորից վերադառնում է իր պատասխանատու աշխատանքին:

Միանգամայն ծիշտ է նշվում, որ առանց թունելագործի արտահագուստի և գլխարկի, Գագիկ Մարտիրոսյանը չափազանց բարետես է, ավելի շատ արվեստագետի, երաժշտի է նաև: Այդ “արվեստագետը” կարողացել է իր տեղանասի աշխատողների մեջ հավատ ներշնչել, որ նրանք կարող են ոչ միայն իրենց բանվորական ուժով, այլև գիտելիքներով նպաստել մետրոպոլիտենի շինարարության արագացմանը: Պատահական չէ, որ հորատող Զհանգիրը գյուտարարական առաջարկություն է անում և նրա առաջին խորհրդատուն լինում է տեղանասի պետը: Ով գեր մեկ անգամ հորատանցման աշխատանքներին ականատես է եղել, կիամոզվի, որ ինչպես ներենաշինության մեջ փականագոր-

ծական աշխատանքների համար պահանջվում են գիտելիքներ, գործի նկատմանը խելացի մոտեցում, նուրբ ձեռքեր, այստեղ ևս այս երեք հատկությունները անհրաժեշտ են հորատանցման աշխատանքների ժամանակ: Եվ ցանկալի էր, որ անկախ ինժեներական գիտելիքներից մետրոջինարարությանը որդեգրված յուրաքանչյուր շարքային, թե դեկապար աշխատող օժտված լինի այդ հատկություններով: Հողվածից երևում է, որ նման անգնահատելի հատկություններով է օժտված Գագիկ Մարտիրոսյանը և պատահական չէ երբեմն կարևոր հատվածներում հորատողն իր մուրճի վճռական հարվածը վստահել է փորձառու “բանվորին”, տեղանասի պետին: Երբեմն էլ հորատողը տեղեկացել է, որ պայթեցման ժամանակ պետք է ներկա լինի Գագիկը, ուրեմն նշանակում է որոշ մտավախություն կա, “շեֆը” անհանգիստ է, ուրեմն ապար քայլայված է: Եվ Գագիկ Մարտիրոսյանը սառնասրտորեն, առանց վախճանալու մտնելով վիլող առաստաղի տակ, թլունգի հարվածներով ցած է թափում կախված քարերը:

Հավատն ու սերը դեպի դեկապարը, խնդիրների իրականացման գործի առաջընթացի, հաջողությունների իիմնական գրավականներից է: Հողվածում այն ցայտուն նկատվում է:

Մետրոջինարարների մոտ ընդունված սովորության համաձայն երրորդ հերթի բրիգադը չորրորդ հերթի աշխատողների համար պատրաստում են շաղախով լցված երեք վագոններ: Արդեն պատրաստվում են տուն գնալու (ինչպես ասվել է, չորրորդ հերթափոխի աշխատանքը սկսվում էր գիշերը ժամը 2-ին), երբ նրանց է մոտենում տեղանասի պետը: Նրան տեղեկացնում են, որ աշխատանքային հերթափոխի համար ամեն ինչ պատրաստ է: Լուսն են Գագիկ Մարտիրոսյանի այն լուրը, թե չորրորդ հերթի աշխատողներին հանձնարարվել է շտապ տեղափոխվել այլ տեղանաս, երևան ՀԵԿ-ի ջրանցքի հետ կապված որոշ աշխատանքներ կատարելու համար: Նշանակում է, ոչ միայն գործը հետ կը թնաքեր, այլ տվյալ դեպքում երեք վագոնի արդեն պատրասի թետոնը կչորանար, կփշանար: Ամեն ինչ պարզ էր: Զհանգիրն իր բրիգադի անդամներով աշխատում են չորրորդ հերթափոխում:

Շինարարությունում ամեն ինչ չէ, որ հարթ էր գնում: Յերթափոխերից մեկի ժամանակ բանվորներն իմանում են, որ բաղնիքը չի աշխատում և առանց աշխատանքն սկսելու նրանք պատրաստվում են տուն

գագիկ Մարտիրոսյանը հանգիստ բանվորներին, հարց է տալիս, թե պատերազմի ժամանակ բաղնիք չկինըլու պատճառով, մարդիկ կռվի դաշտը թողնում և հեռանում էն, չէ՞ որ մետրոպոլիտենի ավարտին անհամբեր սպասում են երևանցիները։ Մարդիկ գործի են անցնում, նրանց հետ կողը-կողը աշխատում է տեղամասի պետը։ Ղեկավարի օրինակի ուժն անգնահատելի է... Ուշագրավ է ակնարկաշարում պատահականորեն Գագիկ Մարտիրոսյանի տուն գնալը թրակցի հետ։ Նկարագրելով հայ օջախի նիստ ու կացի մասին, միաժամանակ ասում է մի միտք, որը Գագիկին առաջին տարիներից հմացողների համար նորություն չէ, սակայն որոշ նկատառումներից ելնելով, նպատակահարմար է մեզ բերել։

«Տիկին Լատիրան (Գագիկի կինը Ռ.Գ.) սեղանին դրեց ընտանեկան ալբոմը։

Ահա տեսեք, մի քանի տարվա մեջ ինչքան է փոխվել,- ասաց նա ցոյց տալով ամուսնու լուսանկարը։»

Իրոք, կան մարդիկ, որոնք իրենց կյանքը նվիրում են գործին, հանուն մարդկանց բարօրության (այս խոսքն ասվում է առանց չափազանցության), մի կողմ դնելով իրենց անձնական կյանքը։ Նրանցից է Գագիկ Մարտիրոսյանը։

Փառք Աստծո, արդյունաբերության, շինարարության մեջ քրտինք թափող, սրտացավ դեկավար գնահատվում էր։ Ականատեսն եմ եղել, թե ինչպես մետրոշինարարների և նրանց հետ առնչվող մարդկանց կողմից օր-օրի մեծ հեղինակություն էր վաստակում Գագիկ Մարտիրոսյանը և պոլիտեխնիկ ինստիտուտի երիտասարդ շրջանավարտը մետրոյի շինանարարության հիմնադիրներից մեկը, աստիճանաբար ըստ պատշաճի գնահատվելով, գրադեցնելով պատասխանատու պաշտոններ, 7-8 տարվա ընթացքում դարձավ «Հայթունելշինի», այնուհետև Երևանի մետրոպոլիտենի վարչության դեկավարներից մեկը և այսօր էլ իր արժանի ավանդն է ներդնում Երևանի մետրոպոլիտենում։

Անդրադառնալով ակնարկաշարին, ասենք, որ սկզբից մինչև վերջին նախադասությունը մեծ հետաքրքրությամբ ընթերցվող հոդվածը, հեղինակ Մերուժան Տեր-Գուլանյանն ավարտում է հետևյալ նախադասությամբ։

«Դոդվածում ներկայացրել ենք մարդկանց մի փոքր խմբի, որոնք

քեզ համար, մեր քաղաքի համար մետրո են կառուցում, և նրանց անունները չեն փորագրվելու, ինչպես այն շենքի կառուցող վարպետի անունը, որտեղ դու ծնվեցիր ու ապրում ես։ Սակայն կարևոր այն է, որ սրանք այդ մասին չեն էլ մտածում, չեն էլ ակնկալում այդպիսի պատիվ, նրանք պարզապես իրենց տունն են կառուցում։ Յիշում եմ, թե ինչպիսի հետաքրքիր զգացողություն ապրեցի ես այն ծյունոտ առավոտյան, երբ ամրող գիշերն աշխատելուց հետո վերադառնում էինք տուն։»

Միգուց գրվածք և արված եղրահանգումները չեն ներկայացնում բարձրարժեք ակնարկաշարի ողջ պատկերը, սակայն համոզված ենք, որ ընթերցողը պատկերացրեց շինարարության, մարդկային հարաբերությունների այն առողջ մթնոլորտը, մարդկանց անկեղծ փոխհարաբերությունները, որը տիրում էր մետրոշինարարության կյանքում։ Եվ հիանալու չէ մոռանալ այս կառուցում ամսագրի միջոցով մարդկանց բարձր գնահատականի արժանացնելու այն ոգևորությունը, որը լայն արձագանքի շնորհիվ տիրում էր կառուցից օդակներում, բոլոր աշխատողների մոտ։ Իսկ նման ոգևորությունը նպաստում էր գործի առաջընթացին, շատ հարցերի հետ մեկտեղ, «նեղ» տեղերի վերացմանը մետրոպոլիտենում բանվորական ուժի հավաքագրմանը...»

\*\*\*

«Չորրորդ իշխանության» դերը մեծապես երևաց թերթերի միջոցով։ Յանրապետության բոլոր թերթերում արձարձվում էին մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերվող հոդվածներ։ Արժեքավոր նորություններով, աշխատանքներում տեղ գտած թերությունների վերլուծությամբ, առաջարկներով հանդես էին գալիս «Սովետական Հայաստան», «Կոմունիստ», «Երեկոյան Երևան» և «Վանգարդ» թերթերը։ Մետրոպոլիտենի շինարարության աշխատանքների լուսաբանման ուղղությամբ, սկսած 1978 թվականից մինչև մետրոյի առաջին հերթի ամրոջական գործարկումը, սիստեմատիկաբար հոդվածներով հանդես եկան հատկապես «Կոմունիստ» և «Երեկոյան Երևան» թերթերը։ Նրանք անզնահատելի դեր կատարեցին այս կարևոր շինարարության գործերի հաջող ավարտմանը նպաստելու գործում։ Ըստ արժանվույն գնահատելով նրանց գործունեությունը, գտնում ենք նպատակահարմար հակիրծ կանգ առնել այս երկու թերթերում տպագրված որոշ հոդվածների լու-

սարաննանը, ցույց տալով, թե ինչպես մամուլի միջոցով կարողացել են նպաստել, նույնիսկ անմիջականորեն օգնել մետրոպոլիտենի աշխատանքների բարելավմանը:

“Կոմունիստ” թերթի խմբագրությունն իր առջև խնդիր էր դրել լայնորեն լուսաբանելու մետրոպոլիտենի շինարարության աշխատանքների առաջընթացի լավն ու առաջավորը, գերծ մնալով ծևամոլություններից, գործնական մրցություն կազմակերպել մետրոշինարարության օդակներում և հատկապես շինարարական բրիգադների միջև։ Եվ երկրորդ՝ խոսել շինարարության առաջընթացին, աշխատանքների կազմակերպմանը խանգարող խոչնդուտների մասին և նրանց վերացման նպատակով խմբագրական հսկողության իրականացմամբ օգնել շինարարուներին։

“Լենմետրոշինի” N3 թունելային ջոկատի առաջավոր բրիգադի բրիգադավար, Սոցիալիստական աշխատանքի եերս Միխայիլ Շիխոնովիչը առաջարկություններ է անում շինարարական բրիգադների միջև մրցություն կազմակերպելու համար, որը հավանություն գտավ “Կոմունիստ” թերթի և «Դաշտունելչին» վարչության կողմից։ Ինչ խոսք, բացի այս երկու ուղղություններից, խմբագրությունը խորացավ նաև մետրոպոլիտենի աշխատանքներին վերաբերվող բոլոր հարցերի մեջ։

1980 թ. առաջին իսկ օրերին (հունվարին) “Կոմունիստ” թերթի գլխավոր խմբագիր Բորիս Սկրտչյանի աշխատասենյակում անցկացվում է գործնական խորհրդակցություն, ուր ներկա են լինում և՝ խմբագրության, և՝ «Դաշտունելչին», և՝ «Դաշտավայրանախագիծ» ինստիտուտի դեկան աշխատողները, կուսակցական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները։ Գործնական խորհրդակցությունում որոշվում է կազմակերպել «Կոմունիստ» թերթի թղթակցական կետը (կօր. ՊՍՀԿՏ)։ Նրա կազմում ընդգրկվում են Ռազմիկ Ջարությունյան N25 թունելային ջոկատի հորատող բրիգադի բրիգադավար, ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, Էվգարի Սահակյանը՝ «Դաշտունելչին» տեղամասի պետ, Արկադի Կուրիսկոն՝ «Դաշտավայրանախագիծ» ինստիտուտի նախագիծ գլխավոր ինժեներ, Սերգեյ Բաղալովը երևանի կառուցվող մետրոպոլիտենի գլխավոր ինժեներ, Ջամայակ Ջարությունյանը N160 շինոնտաժային վարչության կուսկազմակերպության քարտուղար, Անուշավան Բարեղամյանը՝ “Մետրոպոլիտեն”

պատի թերթի թղթակից։

Յարկ է նշել, որ տարիների ընթացքում, սկսած 1980 թվականից և հիմնականում մինչև 1987 թվականը թղթակցական խումբը մեծ բարեխղությամբ կատարեցին իրենց գործունեության համար նախատեսված բոլոր խնդիրները։ Նախ եռամսյակի ընթացքում ուսումնասիրվում էին շինարարական բրիգադների միջև փոխկապակցված աշխատանքները, նրանց միջև նախօրոք ծեռք բերված պայմանավորվածությունները, որոնց նպատակն էր գործնական մրցության կազմակերպումը։ Արդյունքներն անփոփով են խմբագրությունում մետրոպոլիտենում աշխատող առաջավոր բրիգադների դեկավարների մասնակցությամբ։ Առաջին տեղը շահող բրիգադն արժանանում էր “Կոմունիստ” թերթի պատվավոր հուշագրավին։ Ուշագրավն այն է, որ խստորեն հետևում էին մրցության ծևական նոտեցումներ խապար վերացնելուն։ Այս հարցում իրենց ծանրակշիռ ու սկզբունքային խոսքն էին ասում Լենինգրադի և Մոսկվայի մետրոշինարարները։ 1980թ. առաջին երեք ամիսներին ծեռք բերած հաջողությունների համար «Կոմունիստ» թերթի պատվավոր հուշադրությն արժանացավ «Լենմետրոշինի» N3 թունելային ջոկատի բրիգադավար Միխայիլ Շիխոնովիչը, իսկ չորրորդ ամսին թունելային ջոկատի հորատող Ստեփան Խաչատրյանի գլխավորած հորատողների կոլեկտիվը և որիշներ։ Իրոք, աշխատանքների ճիշտ կազմակերպումը, բանվորական բրիգադներին ունալ գնահատականների արժանացնելն իր դրական ազդեցությունն էր թողնում ողջ մետրոշինարարության վրա։

«Կոմունիստ» թերթի խմբագրության դեկավարության և թղթակցական կետի աշխատողների հետևողականության շնորհիվ հատկաբն 1980թ. առաջին օրերից մինչև մետրոպոլիտենի առաջին հերթի առաջին հատվածի շահագործումը «Կոմունիստ» թերթում ամսից երկու անգամ մեկ ամրողական էջի վրա տպագրվում էին մետրոպոլիտենի կյանքին և գործունեությանը վերաբերող հոդվածներ, ուր առաջընթացի հետ մեկտեղ, նշվում էին թերությունների և բացրողումների մասին։ Ցուրաքանչյուր ամսվա վերջում ընթեղողներին ներկայացվում էին մետրոպոլիտենում կատարված հիմնական աշխատանքները թվերով և գումարային արտահայտությամբ ու կատարվելիք աշխատանքների ծավալները։

Իհարկե, ըստ ընդունված կարգի, թերթերում արծարծված քննադատություններն անհետևանք չեն մնում: Նախ, ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍԴ Նախարարների խորհրդի մետրոպոլիտենի շտաբի կողմից մասնութիւնով քարծողով բարձրացված յուրաքանչյուր հարց վերցվում էր խիստ հսկողության տակ (այն իրականացնում էին շտաբի պատասխանառու քարտուղար, ՀԿԿ Երքաղկոմի շինարարության և քաղաքային տնտեսության բաժնի աշխատողներ, սկզբնական շրջանում Մեգել Բայբուրտյանը, ապա Գարիկ Մնոյանը) և անհրաժեշտության դեպքում կազմակերպություններին, կուսակցական, սովետական մարմիններին տրվում էին գործնական հանձնարարություններ հարցը ուսումնասիրելու դրականորեն գումարության համար: Եվ երկրորդը, հանրապետության կազմակերպությունները մամուլում տպագրված հոդվածներին ընթացք էին տալիս և տեղյակ պահում կամ շինարարներին, կամ շտաբին: Հանրապետությունից դուրս կազմակերպություններին վերաբերող քննադատությունները ևս անհետևանք չեն մնում:

Մետրոպոլիտենի շինարարության հոգաերի լուծման առաջին պատասխանատուն, ըստ ընդունված կարգի և հատկապես 1978թ. հունվարի 10-ի ՀԿԿ Կենտկոմի բյուրայի որոշմամբ, դրվել էր կուսակցության բոլոր քաղկոմ, շրջկոմների վրա, որոնք խիստ հսկողության տակ էին վերցրել իրենց տարածքներում գտնվող այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք այս կամ այն հարցով թեկուզ մազաշափ անգամ կապ ունեին մետրոպոլիտենի շինարարության գործերի հետ: Քանի որ Երևանի Խորհրդային շրջանի վարչական տարածքի մեջ էին գտնվում մետրոպոլիտենի հետ առնչվող երկու խոշոր կազմակերպությունները ինչպես ասվել է «Հայթունելինը» և «Հայպետտրանսախագիծ»՝ ինստիտուտը, ապա կուսակցության շրջկոմի բյուրոյում նրանց վերաբերող հարցեր շատ էին քննարկվում, գորեք ամեն ամիս և նրանց ցույց էր տրվում գործնական օգնություն: Այս առիթով որոշ պարզություն մտցնելու նպատակով թերենք միայն մեկ օրինակ:»

1980թ. հուլիսի 29-ին «Կոմունիստ» թերթում «Սուր ահազանգ» խորագրի տակ տպագրվեց «Առանց վերահսկման» վերնագրով հոդվածը, ուր ներկայացվում էր մետրոյի շինարարության հարցեր:

Հոդվածում նշվում է, որ մետրոպոլիտենի բոլոր օդակներում աշխատանքները լարված էին անցնում, առկա էին նորություններ, ծեռքբե-

րումներ, դժվարություններ: Բայց բարձրորակ մասնագետների կարիք կար: «Հայթունելինը» ղեկավարությունը դիմեց քաղաքի ծեռնարկություններին, խնդրելով մետրոպոլիտեն աշխատանքի գործուղել լավագույն, բարեխիղ արդյունաբերողների, որոշակի մասնագիտությունների տեր մարդկանց նրանց օգնությամբ մետրոյի աշխատանքներում արագ թեկում մտցնելու, և 1980թ. վերջին շահագործնան հանձնելու համար: Կոչին արձագանքեցին շրջանների ղեկավարները և մետրոպոլիտենի շինարարություն ուղարկվեցին անհրաժեշտ բվով մարդիկ: Սակայն հոդվածում բերվում են կազմակերպությունների անուններ, որտեղից մետրոպոլիտեն եկող անձիք որոշ ժամանակից հետո այլևս չեն հաճախել շինարարություն, նույնը՝ բարձրագույն ուսումնական հաստատություններից որպես օժանդակ բանվորներ եկած ուսանողները, փաստորեն կազմակերպություններից մարդկանց գործուղել են և դրանով ավարտել իրենց աշխատանքը, անբարեխիղները լքել են աշխատատեղը: Մինչդեռ յուրաքանչյուրի օգնությունը, հատկապես մասնագետների, անհրաժեշտ էր: Թերթի ըննադատական դիտողությունը քննարկեցին ոչ միայն անբարեխիղ վերաբերնությունը ցույց տվող կազմակերպություններում, այլևս շինարարության աշխատանքների հետ առնչվող բոլոր քաղկոմներում և շրջկոմներում: Եվ արդյունքը եղավ այն, որ նոյնիսկ մեկ բանվորի բացակայության մասին անմիջապես տեղյակ էր պահպում տվյալ կազմակերպության շրջանի ղեկավարությանը և անմիջապես գործը կարգավորվում էր:

«Կոմունիստ»-ի թրակցական կետում ընդգրկված անձիք հոդվածներով հանդես էին գալիս թերթում: Նրանցից հատկապես ակտիվ մասնակցություն էին ունենում «Կոմունիստ»-ի թրակից Անատոլի Շկովկը և «Հայպետտրանսախագիծ» ինստիտուտի նախագծի գլխավոր ինժեներ՝ Արկադի Կուրիսկոն, /որը գրադպուտ էր «Մետրո և բունենք» նախագծի գործունեությամբ:/ Անատոլի Շկովկի կողմից առաջ քաշված հարցերն այնպիսին էին, որոնք պահանջում էին արագ և օպերատիվ մոտեցում և պատահական չեր, որ դրանք ժամանակին քննարկվում և համապատասխան ընթացք էին ստանում:

Արկադի Կուրիսկոյի գրած հոդվածներն այլ բնույթ էին կողում: Նրա հոդվածների միջոցով լուսաբանվում էին Երևանի մետրոպոլիտենում ինժեներական մտքի, գիտական մտահղացուների ուղղությամբ տար-

վող աշխատանքները, նրանք ոչ միայն տեղեկատվական բնույթ էին կրում, այլև մետրոյի տարբեր տեղամասերում, օդակներում գիտության և տեխնիկայի նորույթների, խելացի մտահղացումների, քարոզչության ժանապարհով նպաստում էին դրանք մյուս աշխատատեղերում և ներդնելու գործին: Եվ Անատոլի Շկովլյան, և Արկադի Կուրսկոն իրենց թրակցական գործունեությամբ արժանի ներդրում կատարեցին երևանի մետրոպոլիտենի շինարարության գործում: Իսկ Անատոլի Շկովլյանը տարբերվեց բոլոր թթականիներից, լրագրողներից մի քարի հետո ևս թողնելով: Նրա հեղինակությամբ հրատարակվեց մի փոքր գրքով՝ «Երևանի մետրոպոլիտենը» խորագրով /Երևան, «Հայաստան» հրատարակչություն 1983թ./. և նույն ժամանակ Մուշեղ Միքայելյանի և Յայկ Մարգարյանի կողմից գրքով՝ հրատարակվեց «Սիսրանք» խորագրով /Երևան «Սովետական գրող» հրատարակչություն 1983թ./, որոնք ցավոք սրտի, մետրոպոլիտենի շահագործումից հետո երևանյան մետրոյի շինարարության աշխատանքներին վերաբերող առաջին և միակ քայլերն էին:

«Կոմունիստ» թերթի խմբագրության աշխատողների ավանդը մեկ այլ կարևոր գործում ևս անգնահատելի եղավ: Յուրաքանչյուր հոդվածաշարությամբ առանձին տեղ էր հատկացվում մետրոպոլիտենի շինարարությանը մասնակցող, Միության տարբեր ծայրամասերում գտնվող տասնյակ կազմակերպությունների կողմից անհրաժեշտ նյութերի, սարքավորումների պահանջվող այլ ապրանքների մատակարարման հարցին: Թերթի գրեթե բոլոր համարներում տեղադրվում էին «Ինչո՞ւ ժամանակին չեն ապահովում», «Թերթը հանդես է եկել, ի՞նչ է արվել» և այլ խորագրերով խորը ուսումնասիրված և հիմնավոր փաստերով հոդվածներ: Դրանք հաջորդ օրը ուղարկվում էին համապատասխան քաղաքներ, կազմակերպություններ և անհրաժեշտության դեպքում Մոսկվա վերադաս նախարարությունների և գերատեսչություններին: Եվ հասնում էին նպատակին: Բերենք մի քանի օրինակ:

1980 թ. մարտի 19-ի «Կոմունիստ» թերթում ասվում է, որ Ուստարակելու մետալուրգիական կոմբինատը սիստեմատիկաբար ծգծով է 130 տոննա պողպատի մատակարարումը:

Երևանի մետրոպոլիտենում ծանր վիճակ էր ստեղծվել կարելի արտադրանքի ոչ ժամանակին մատակարարման պատճառով: «Մոսկա-

բել», Տաշքենդի և Պերմի համապատասխան գործարանները խափանում են զրահապատ կարելի մատակարարումը, Կոլչուգենի և Կուրիշևի գործարանները հեռախոսային լարերը՝ 225,4 կմ կարելից, որն անհրաժեշտ էր կառույցին ընթացիկ տարում, առաջին եռամսյակին հատկացվել էր 2,2 կմ և այլն:

1980թ. ապրիլի 18-ին թերթում տպագրվում է «Թերթը համրես եկավ, ի՞նչ է արվել» խորագրով տեղեկատվությունը: Այստեղ ասվում է, որ մարտի 19-ին «Կոմունիստ» թերթը քննադատական հոդվածով համրես է եկել որոշ ծեռնարկությունների և կազմակերպությունների հասցեին նշելով, որ 1980 թ. Երևանի մետրոպոլիտենի շահագործումը ծախողվում է նրանց կողմից ժամանակին անհրաժեշտ նյութերով չափահանքելու պատճառով:

Ուստարակելու կոմբինատի կուսակցական կոմիտեի քարտուղար Կ. Քակարակը պատասխանում է, որ Երևանի մետրոպոլիտենի շինարարության առաջին եռամսյակին նախատեսված 325 տոննա մետաղի ուղարկվել է 250 տոննա, մնացած 65 տոննան կուղարկվի մինչև ապրիլի վերջը:

«Մոսկվարել» գործարանի տնօրենի տեղակալ Վ. Պրոսովը հաղորդում է, որ Մագնիտագորսկի «Տրամաչափ» (Կալիբր) գործարանում միավորման կողմից հումքը ժամանակին չառաքելու պատճառով ծգծով է միավորման կողմից կարելի արտադրությունը: Երևանից ստացված ահազանգից ելենելով մագնիտագորսկիները միջոցներ են ծեռնարկել և ապրիլ-մայիս ամիսներին ամբողջությամբ ծեղրվածքը կփակվի (հետագայում տեղեկացվում է, որ գործարանը ուղարկել է անհրաժեշտ քանակությունը): Եվ այսպես, մարտամասն ներկայացվում էր ընթերցողին, թե թերթի 1980թ. մարտի 19-ին տպագրված հոդվածին ինչ ընթացք է տրվել:

«Կոմունիստ» թերթի մեկ այլ 1980թ. հունիսի 4-ին տպագրված հոդվածից իմանում ենք, որ թերթի քննադատական դիտողություններն ուղարկվել են Միության մատակարարող կազմակերպություններին, իրենց դրական արձագանքներն ստացվել և պատասխանները տպագրվել են թերթում, ամրող տեքստով: Տպագրված է Բերդյանսկ քաղաքից, «Սոյագլավկարելը», որ «Ազովկարելը» շտապ միջոցներ է ծեռնարկել մատակարարումն ապահովելու համար: Արձագանքել են

Պերմ քաղաքի «Կամկաբել» արտադրական միավորումը, Տաշքեն քաղաքի «Տաշքենդկաբել» արտադրական միավորումը, Կիև քաղաքի «Տրանսիգնալ» գործարանը, Պրոկոպևսկ քաղաքի «Ավտոմատիկա» գործարանից և այլն:

Ինչն է ուշագրավը, եթե խմբագրությունն զգացել է, որ այս կամ այն կազմակերպության կողմից ծգձվում է հարցի լուծումը կամ պատասխանը գոհացուցիչ չէ, անմիջապես դիմել է վերադաս կուսակցական, սովորական մարմիններին, ծայրահեղության դեպքում նաև վերադաս նախարարություն, գերատեսչություն: Բավական է ասել, որ միայն 1980թ. մայիս ամսին «Կոմունիստ» թերթում մետրոպոլիտենի հոգսերին վերաբերող Միության /նաև հանրապետության/ 37 տարբեր հասցեներով ուղարկել են գրություններ, ստացել պատասխաններ, կոնկրետ շոշափելի արդյունքով: Եվ նրանք հասել են իրենց նպատակին:

Մետրոխնարարներն էլ իրենց համեստ վերաբերնունքով, երախտագիտությամբ «փոխատուցել» են խմբագրության աշխատողներին: Այսպես, 1981թ. հուլիսի 9-ի «Կոմունիստ» թերթում տպագրված տեղեկությունից ընթերցողն իմանում է, որ հերթական իինգշաբի օրը կայացել է թերթի խմբագրության աշխատողների հանդիպումը մետրոշինարարների հետ: «Դայթունելչինի» դեկավար Լեոնիդ Շարությունովը պատմել է մետրոպոլիտենի շինարարության ընթացքի մասին և նշել թերթի ցույց տրված այն անփոխարինելի օգնությունը, որի շնորհիվ հինարավոր է դարձել մորթիկացնել կոլեկտիվին շինմոնտաժային աշխատանքները հաջողությամբ կատարելու, շինարարների հոգսերին սատար կանգնելու հարցում:

Երևանի մետրոպոլիտենի վարչության, հանրապետության նյութատեխնիկական մատակարարնան, «Դայթունելչինի» աշխատողներն ամեն ինչ անում էին Միության շուրջ 250 կազմակերպություններից ստացվող գործնական օգնությունը ժամանակին շինարարությունում ներգրավելու համար: Այսպիսով «չերևացող» կազմակերպությունն էլ «Կոմունիստ» թերթի աշխատողները, իրենց հերթին գործնական քայլերով օգնեցին մայրաքաղաքի հզոր կառույցի մետրոպոլիտենի շինարարությանը: Եվ թեկուզ այս, նրա սրտացավության, հետևողականության, մնայուն հետք թողնելու գաղափարից ելնելով «Կոմունիստ» թերթի գլխավոր խմբագիր Բորիս Մկրտչյանին իրավամբ կարելի է դասել:

հայ ժողովողի արժանի զավակների շարքը:

\*\*\*

Երևանի շինարարության աշխատանքների բարելավմանը նպաստելու գործում լրատվական ծառայությունների մեջ անգնահատելի դեր կատարեց և միշտ իր օրինակելի բարձրության վրա գտնվեց «Երեկոյան Երևան» թերթը: Ուշագրավ է թերթում լույս ընծայված հոդվածների բովանդակությունը: 1978թ.-1989թ. վերջը սիստեմատիկաբար թերթում լույս են ընծայվել մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերող հոդվածներ: Շինարարության ամենաեռուն ժամանակահատվածում 1979թ. և հատկապես 1980թ. յուրաքանչյուր շաբաթ թերթն անդրադարձել է շինարարության ընթացքին:

Դրապարակված հոդվածները ոչ միայն մայրաքաղաքի ազգաբնակչությանը տեղեկացնում էին մետրոպոլիտենի յուրաքանչյուր տեղամասում, օղակում կատարված աշխատանքների. առաջավոր բանվորների իրոք, բարիս բուն իմաստով, սիրագործությունների մասին, այլև բարձրացնում հարցեր, երբեմն էլ ավելի խորը նաևնագիտական, որոնք ծառայում էին հետազոտությունների աշխատանքի կրծատման, փոքր մերենայացման ապահովման և այլ հարցերի լուծմանը: Առաջ էին քաշում նաև այլ հարցեր, և հուշում ինժեներական միտքն ու խելացի մտածելակերպն ուղղել շինարարական աշխատանքներին մեծ թափ հաղորդելուն:

Այս բոլորի հետ մեկտեղ, բարձրացվում էին հարցեր, որոնք տվյալ պահին հուգում էին մետրոշինարարներին, չլուծված խնդիրներ. որոնք խանգարում էին շինարարության արագ տեղաշարժին. Վերահսկում կառույցում տեղ գտած թերությունների և բացքողուների վերացման գործը հիմնավոր օրինակներով պահպանելով էրիկան, չարհամարհելով նույնիսկ սիսալներ թույլ տված ամենօրյա մաքառումներով ապրող թեկուզ փոքր օղակի աշխատողի բափած քրտինքը և նույնիսկ այս պայմաններում էլ ցույց էր տրվում նրա նաքառողի նկատմամբ երախտագիտության գգացումը: Միգուցե և միայն նման մուտեցմամբ «քննադատական» խոսք ասելով կարելի էր հասնել հաջողության: Եվ, ըստ իս, «Երեկոյան Երևան» թերթը հասավ իր նպատակին:

Բառացիորեն չափազանցություն չի լինի, եթե ասվի, որ մետրոպո-

լիտենի շինարարության ողջ ժամանակահատվածում, ուղղակի փայլեց «Երեկոյան Երևան» թերթի խմբագրությունը, նրա գործունեությունը վեր դասվեց բոլոր սպասելիքներից և նրա բարձունքում էր զտնվում թթվակից Ալբերտ Յարությունյանը: Չէ՞ որ թերթում տպագրված հոդվածների ավելի քան 90 տոկոսը գրվում էր նրա ծերքով: Բազմաթիվ հոդվածների ընթերցումից պառ նկատվում է, որ գրված տողերը ծնունդ են առել գետնախորշում, գիշերվա ընթացքում, ոչ բարենպաստ պայմաններում, նույնիսկ վտանգավոր ժամանակահատվածում, հորատման կամ պայթեցման րոպեներին էին ծնվել խնդիրների, տեսակետների, հարցերի լուժման բանալին...

Ալբերտ Յարությունյանը որպես պրոֆեսիոնալ ժուռալիստ բազմակողմանիորեն և խորը վերլուծության էր ենթարկում մետրոյի յուրաքանչյուր օղակի գործունեությունը, «շինարարի» աշքերով տեսնում թերթությունները ու չլուծված հարցերը: Նկատվում էր նաև, որ նրա հետևողականության շնորհիվ շատ ու շատ չլուծված հարցեր իրենց դրական լուծումն էին ստանում: Որպես ժուռալիստիկային «հարող» անձնավորություն, կարդալով նրա գրած հոդվածները, եկա այն եղակացության, որ ժուռալիստն այն հազվագյուտ անհատներից է, որը հանդիսանում է «անհատ կոլեկտիվ», շատ կոլեկտիվներ կցանկանային կատարել այնքան աշխատանք, թողնել այնպիսի հետք, ինչպիսին Ալբերտ Յարությունյանը:

Հուսով եմ, որ արժանի կմատուցվի և հետազայում Երևանի մետրոպոլիտենի շինարարության ընթացքում «Երեկոյան Երևան» թերթի ակտիվ միջամտության անգնահատելի աշխատանքը խորությամբ կվերլուծվի և կներկայացվի ընթերցողին, այստեղ նպատակահարմար ենք գտնում մեկ-երկու օրինակով ցույց տալ խմբագրության քննարկած, լուսաբանած հարցերը և դրանց արդյունքները:

Ժամանակին Երևանցիներին բարի լուր հաղորդելու, տեղի ունեցած շինարարական բացրողությունների վերացմանը նպաստելու հետ մեկտեղ, խմբագրությունը ձեռնամուխ եղավ լավագույն աշխատանքների քարոզության, օրինակելի գործի տարածման ճիշտ մեթոդների կիրառմանը:

Խմբագրության և մետրոշինարարների դեկավարությունները պայմանավորվեցին հիմնել «Երեկոյան Երևան» թերթի «Պատվո տախ-

տակ»: Յուրաքանչյուր ամիս ամփոփվում էին օղակների, բրիգաների, տեղամասերի, նաև անհատների աշխատանքը և նրանցից լավագույն-ներին արժանացնում «Երեկոյան Երևան» թերթի «Պատվո տախտակին»: Եվ,որ ամենակարևորն է, լավ աշխատանքների արդյունքներն անփոփվում էին բծախնդրորեն, արդեն ամիսների ընթացքում կոլեկտիվի անդամի համբավ ծեղք բերած Ալբերտ Յարությունյանի և N160 շինմոնտաժային վարչության շինկոմի նախագահ Սաշա Մուրահյանի գլխավորությամբ, հենց բանվորական տեղում ճիշտ գնահատականները պարզելով, անհատ անձանց աշխատող բանվոր-շինարարի միասնական կարծիքը ներկայացվում էր «Երեկոյան Երևան» թերթի խմբագրական կոլեգիային, ժյուրիի քննարկմանը: Իսկ կոլեկտիվին անհատ անձանց ճիշտ գնահատականի արժանացնելը միշտ իր որական հետքն է բողոքում:

Սովորաբար խորհրդային կարգերի ժամանակ հիմնարկ-ծեռնարկությունների կողմից ստանձնած սոցիալիստական մրցությունը ոչ ամբողջությամբ, սակայն երթեն մի շարք հարցերում միանգամայն ձևական բնույթ էր կրում: Անժխատելի է այն փաստը, որ խելացի տնտեսական դեկավարի, կուսակցական, հասարակական կազմակերպությունների ճիշտ մտածելակերպի շնորհիվ նրգությունը ճիշտ կազմակերպելով, ձևանոլությունը մի կողմ դնելով, շատ շատերը կարողանում էին լուրջ հաջողությունների հասնել: Ինչ վերաբերում է «Երեկոյան Երևան» թերթի «Պատվո տախտակին» արժանացնելուն, նպատակը մեկն էր ծեռնարկած միջոցառման շնորհիվ նպաստել լավին ճիշտ գնահատական տալ, շրջապատի համար օրինակելի դարձնել, մարդկանց տրամադրությունը բարձրացնել: Մի՞թե պարզ չէ, մարդկային հոգեբանությունն այնպիսին է, որ նույնիսկ փոքրիկ դարը ճշմարտությունը հածելի չէ: Իսկ փոքր խրախուսանքն, այս էլ պատվաբեր խրախուսող ի լուր բոլորի «Երեկոյան Երևան» թերթի միջոցով, քուտինք թափող մարդու մասին, ժողովրդին տեղեկացնելը, իր արժանի հետքն էր թողնում շրջապատում, աշխատատեղերում: Նկատում էինք, թե ինչպես անհատները, օղակի, բրիգադի անդամներն ինչպիսի մեծ ոգևորություն էին ապրում: Այս առումով արժանին պետք է հատուցել շինկոմի նախագահ Սաշա Մուրահյանին, վարչության կոմսոմոլի կոմիտեի քարտուղար Գևորգ Ավետիսյանին: Շինկոմի նախագահն ուղղակի ատելու-

թյամբ էր լցված ծևական մոտեցումների նկատմամբ: Դաճախ հենց այդ պատճառով վեճի էր բռնվում շրջապատի որոշ ընկերների հետ: Նրա գաղափարակիցն էր վարչության պետք: Իրոք, ծևական մոտեցումներից զերծ գործողությունները «Երեկոյան Երևան» թերթի և մետրոշինարարների համատեղ խրախուսական միջոցառումները նպաստեցին հասնել աշխատանքային լավագույն արդյունքներին:

Մետրոպոլիտենում կատարվող մեծ ծավալի աշխատանքներում, ինչ խոսք, լինում էին թերություններ և բացքողումներ: Գործերի սեղմ տեմպերի, կատարված ահեղի աշխատանքների մեջ նրանք շատ չնշին էին, նույնիսկ մեծ բացքողումների առկայության պայմաններում էլ գործի հետ առնչվող շինարարության մեծ մասշտաբներով գրադպող որևէ կազմակերպության հասցեին խիստ քննադատական խոսք ասելը բացարձակապես տեղին չէր լինի: Սակայն երբեմն գործը պահանջում էր խորությամբ պարզել առկա վիճակը, վեր հանել թերություններն ու կազմակերպել կոնկրետ օգնություն դրանք վերացնելու համար: Եվ խմբագրությանը դա միշտ հաջողվում էր:

«Սասունցի Դավիթ» կայարանի և դրան կից օժանդակ կառույցների, էլեկտրաներակայանների, կարսայատան, արտաքին կոմունիկացիայի կառույցների, մազուրի տարրողության, ծանրոցների բաժանմունքի նոր պահեստի շինարարությունն իրականացնելու համար անհրաժեշտ էր իրացնել անդրեկարուղու Երևանի բաժանմունքին պատկանող շենքերից մեկը, ինչպես նաև հանել այդ տարրածքով անցնող Երևարգիք: Նկատի ունենալով շինհրապարակի իրացման լուրջ հնարավորությունները, դեռ 1978թ. հունվարին վերադաս օրգանների կողմից համապատասխան որոշում էր ընդունվել, որի համաձայն այդ աշխատանքները պետք էր ավարտվեն մինչև 1979թ. մայիս ամիսը: Ելնելով դրանց, մետրոպոլիտենի տնօրինությունը կազմել էր շինարարական աշխատանքների կատարման գրաֆիկ, համապատասխան կազմակերպություններին տվել առաջադրանքներ: Այդ օրվանից անցել էր շուրջ մեկ ու կես տարի, բայց 1980թ. մարտ ամսվա դրությամբ թե կառուցողները և թե նախագծողները, ինչպես նաև մետրոպոլիտենի վարչությունը չեն կարողացել ամել այնպես, որպեսզի չխախտվի կառույցի շինարարության ժամկետը: Դրա մասին 1980թ. ապրիլի 1-ին «Երեկոյան Երևան» թերթը համեստ եկավ լայնածավալ հոդվածով: Որոշվեց հարցը

քննարկել մետրոպոլիտենի օպերատիվ շտաբում: Երբաղկոմի շինարարության և քաղաքային տնտեսության բաժնի աշխատողներն սկսեցին խորը և գործնական ուսումնասիրությունները (բաժնի ղեկավարն էր Եղուարդ Մշիկանյանը, որն իր բարեխնդությամբ և սրտացավությամբ մեծապես նպաստում էր բաժնի աշխատողների ուժերի մորիկացմանը, մայուարալքում իրականացվող շինարարության աշխատանքների հաջող ավարտին):

Պարզվեց, որ Ալբերտ Յարությունյանը, և որպես լրագրող, և որպես շինարարության գործից հասկացող մարդ, այնպիսի քախնդրութեն, պրոֆեսիոնալ մոտեցում էր ցույց տվել կայարանի հոգսերն ուսումնասիրելիս ու մասնագիտորեն շարադրել իրավիճակը, որ Երբաղկոմի նարդիկ եղածի վրա ոչինչ ավելացնելու հնարավություն չունեցան: Ահա թող ընթերցողները տեղյակ լինեն, ինչպիսի բարեխնդությամբ և վարպետորեն է Երեկայացը, ընթերցողին: մետրոպոլիտենի շինարարությանը վերաբերող բոլոր հոդվածները տարիներ շարունակ լրագրող Ալբերտ Յարությունյանը:

Մետրոպոլիտենի «Սասունցի Դավիթ» կայարանի շարունակության հարցի քննարկումը, որքան էլ այն կոնկրետ և գործնական էր, պահանջեց Երկար ժամանակ և խոր տպավորվեց մասնակիցներին մեջ: Ենտագյում չեղավ համանան մի դեպք, որ նկատվեր բացահայտ անհամաձայնեցված աշխատանքի երևույթ: Փաստորեն հարցի քննարկումը շրջադարձային եղավ, կազմակերպություններում, համագործակցության բանալին «գտնվեց» նաև այլ օրյեկտների աշխատանքի համար: Վերոհիշյալ օբյեկտի շինարարության ընթացքի մանրազնին քննարկումը, խիստ միջոցների ծեռնարկումը դաս հանդիսացավ հետագա գործերի համար ևս: Մետրոյի «Սասունցի Դավիթ» կայարանի շինարարության մասին հարցի քննարկումից հետո, կոնկրետ, գործնական և հետևողական աշխատանքի շնորհիվ նի քանի ամսվա ընթացքում նկատվեց, որ շինարարներն իրենց աշխատանքները կատարեն նախատեսված նոր ժամկետում: Եվ իրոք, 1981թ. նախաշեմին գրեթե ամբողջությամբ ավարտվեցին աշխատանքները: «Չերևացող շինարարը» իր գործը կատարեց ...

«Երեկոյան Երևան» թերթում տպագրվում էին նաև մետրոշինարարների բազմաթիվ հոդվածներ, տրվում հարցազրույցներ, որոնցում

և պարզ նկատելի այս կարևորագույն կառուցի շինարարական առաջնաբացը: Բավականին լավ հոդվածներով հանդես էին գալիս նաև մեզ օգնողները, տարբեր քաղաքներից եկած մետրոշինարարները զգտելով իրենց կողմից բարձրացված հարցերի լուծմամբ և նպաստել մետրոյի շինարարության աշխատանքներին:

Քերենք նրանց կողմից գրված հոդվածների հակիրճ նկարագիրը, որով տեսանելի կլինի մեզ օգնողների, մեր հյուրերի կատարած աշխատանքների և «չնչին» դիտողությունների եռւթյունը:

1980թ. ապրիլի 5-ի «Երեկոյան Երևան» թերթում լուսաբանվում էր Երևան եկած մեր հյուրերի աշխատանքը: Յոդվածից ընթերցողն իմանում է, որ Երևանի մետրոպոլիտենի շինարարության «թունելեզրի» տեղամասում աշխատում են Լենինգրադի N8 բունելային ջոկատի առաջին տեղամասի մարդիկ: Նրանք աշխատանքային ճակատ էին ընտրել թունելեզրի ամբողջ տեղամասը և որոշել էին, իրենց գործերն իրականացնել սեփական ուժերով՝ որպես «Հայրունելշինի» N25 թունելային ջոկատի ենթակապալառու կազմակերպություն: Յոկտեմբերին տեղամասում գործում էին հորատանցողների 4 բրիգադներ, որոնցից մեկը դեկավորում էր բազմավաստակ մետրոշինարար, Սոցիալիստական աշխատանքի հերոս Միխայիլ Տիխոնովիչը, որն արժանացել էր մեր հայրենակիցների մեկուսացնողների, փականագործների և ընդհանուրաբես շրջապատում աշխատող ինժեներատեխնիկական ողջ անձնակազմի մեջ սերն ու հարգանքը: Դեկավարի և նրա աշխատանքային ընկերների համախմբված ընտանիքի կուտակած մեջ փորձի և պրատող մտքի արդյունք էր, եթե Երևանյան բարդ ընդերքի պայմաններում գտնում են «Գաղտիքներ» և 1980թ. առաջին իսկ ամիսներին կարողացան ամսե-ամիս, մետք առ մետք ավելի շատ հորատել: Թերթում նշվում է. «Թվում է թե գործերի վիճակը լավ է, բայց իրենք լենինգրադցիները գտնում են, որ իրենց ցուցանիշներն այնքան էլ բարձր չեն: Կարելի է, և անհրաժեշտ է հասնել էլ ավելի բարձր տեմպերի, եթե մետրոշինարներին խանգարող բնական դժվարություններին (ընդերքի բարդ կառուցվածքը, գետնաջրերը և այլն) չափելանան նաև արհեստական խոչընդոտները»: Չենց այդ մասին էլ լենինգրադցիները սրտացավորեն, որպես մի ընտանիք անդամներ, խոսում և վերլուծում են, անում արժեքավոր առաջարկություններ: «Թունելեզրի» հերթափոխի պետ Ի. Սա-

ցուլսով միանգամ այն ծիշտ էր մեկնաբանում, որ մետրոշինարարության մեջ հաջողության հիմնական պայմաններից է բոլոր օղակների համահունչ աշխատանքը: Եթ մնացած օղակներից մեկի պատճառով եթե չինի փոխկապակցված աշխատանք, կտուժի ընդհանուր գործը: «Երևանի ընդերքի երկրաբանական առանձնահատկություններին անծանոթ էին մեր տղաները», ասում էր Ի. Սացուլսովը և այդ հանգամանքն էլ որոշիչ դժվարություններ էր ստեղծում: Սակայն կոլեկտիվը կարծ ժամանակում ընտելացավ դժվարություններին, ծեռնարկեց դրանք հաղթահարելու միջոցներ և գործն ընթացավ ինչպես որ պետք է: Որպես Երևանյան մետրոշինարար, թվացող «մանրութեների» մասին ժամանակին տեսյակ է պահպել «Հայրունելշինի» դեկավարությանը, հատկապես սպասարկող ինքնարաք մեքնաների ժամանակին չգալու մասին: Ահա ինչ է ասվում. «Տեղամասում աշխատանքներն սկսվում է ժամը 8-ին, իսկ մեզ սպասարկող ինքնարաք մեքնաները (ապարներ հեռացնելու համար) հայտնվում են ժամը 10-ին»: Մեկ օր մեքնան ուշ է եկել նույնիսկ 5 ժամ ուշացումով և պարզվում է, որ ավտոճեռնարկությունում կայացել է կոլեկտիվի ժողով...

Թող տպավորություն չափեղծի, թե ցանկանում ենք ասել, որ մամուլի ահազանգից հետո, ինչպես ասում են «հալած յուղի պես» ամեն ինչ հարթ էր գնում: Կարևոր այն էր, որ լարված աշխատանքի պայմաններում մամուլի «ձեռքը» միշտ գտնվեր շինարարության «զարկերակի» վրա և յուրաքանչյուր դեպքում արագ կարողանային նպաստել մետրոյի շինարարությանը, եկ դա նրանց հաջողվում էր: Քերենք ևս մեկ օրինակ:

Ինչպես ասվել է, մեր հյուրերը, մետրոպոլիտենի շինարարների հետ միշտ համագործակցված էին աշխատում և երեմն էլ համատեղ կիսում իրենց հաջողություններն ու դժվարությունները «կլոր սեղանի» շուրջ: Նման հավաքույթներից մեկում արձանագրվեց մի փաստ, որը դուրս չմնաց «Երեկոյան Երևան» թերթի հսկողությունից:

Այսպես, հավաքույթներից մեկում արձանագրվում է ուղղակի հարցագրույցից մի դեպք և ծնվում է մի փաստաթուղթ, որը հասցեագրվում է տեղամասի դեկավարությանը ու փաստաթուղթի հեռախոսագրի ողջ տեքստը հետևյալ բովանդակությամբ տպագրվում է «Երեկոյան Երևան» թերթում:

## ՀԵՌԱԽՈՍԱԳԻՐ

Ապարները թունելից հեռացնելու համար նախատեսված տրանսպորտային միջոցների բացակայության պատճառով ծախ կայարանային թունելի հորատանցողների բրիգադը՝ թվով 12 մարդ, 4-րդ հեթափոխում 5 ժամ պարապուրդ տվեց:

**Մինսկի մետրոյի թիվ 1 թունելային ջոկատի  
թիվ 5 տեղամասի պետ՝ Ս.Ս.Բերկուտով  
07.08.80թ.**

Պարզաբանելու համար ընթերցողին հիշեցնենք, որ 4-րդ հեթափոխում աշխատում էր գիշերվա ժամը 2-ից մինև առավոտյան ժամը 8-ը: 6 ժամից 5-ը՝ պարապուրդ. մեծ կորուստ էր:

Միա այստեղ էր, որ այս անգամ ևս նշված փաստի կողքով անտարելու չանցավ «Երեկոյան Երևան» թերթի խմբագրությունը և 1980թ. օգոստոսի 11-ին թերթում «Յոկտեմբերյան» տեղամասի հոգսերը և գործերը խորագրով հանդես գալով թերթը նշեց.

«Երեկոյան Երևան» թերթի խմբագրությունն իր հերթին դիմում է ՀՍՍՀ ավտոնորդիային տրանսպորտի նախարարության թիվ 3 տրեստի 6-րդ ԱՏԶ-ի դեկավարությանը.

«... Այսպես ե՞ք օգնում մայրաքաղաքի խոշորագույն և կարևորագույն կառույցին: Որտե՞ղ է Ձեր վարորդների քաղաքացիական խիդը: Խմբագրությունը հուսով է, որ 6-րդ ԱՏԶ-ի կոլեկտիվը միայն դրական պատասխան կտա այս հարցերին»:

Նման և այլ կարգի կազմակերպությունների կողմից մետրոշինարաններին խոշընդոտող բազմաթիվ փաստեր արձարձվել են թերթի կողմից և դրանցից բառացիորեն ոչ մեկը անհետևանք չի մնացել: Ըստերցողին հիշեցնենք նաև, որ մետրոպոլիտենի շինարարության շտաբն էլ իր հերթին նիշտ հետևում էր. թե հանրապետության նախարարություններն ու գերատեսչությունները, հիմնարկ-ծեռնարկություններն ինչպես են արձագանքում թերթում տպագրված հոդվածներին:

Նշենք հետևողական մոտեցման մի վառ օրինակ. թերթում բարձրացված յուրաքանչյուր հարցի պատասխանը տպագրվում էր հաջորդ համարներում ու նշվում էին, թե ինչպիսի միջոցներ են ծեռնարկել

հարցերը լուծելու, թերությունները վերացնելու համար և մենք նկատում էինք. որ չկա բարձրացված մի հարց, որի մասին հետագայում չտպագրվեր թերթում:

Յանձինս լրատվական ծառայությունների, խոսվեց մամուլի «Չորրորդ իշխանության», Երևանի մետրոպոլիտենի աշխատանքային գործունեության ուղղակիորեն չմասնակցող, սակայն նրա աշխատանքներին նպաստող ազգանվեր գործի մասին: Բառացիորեն նպատակ չէր հետապնդվում «ազատ մանուլի» գաղափարը գովերգել «գլավիտի» առկայության պայմաններում: Սակայն կյանքի կնճռոտ հարցերին և ինչպես այստեղ նշված մետրոպոլիտենի խնդիրների լուծմանը, երբեք չէր խանգարում, որևէ գործոն: Չ՞է որ մամուլի աշխատողները լավ գիտեն, որ ընդհանրապես կյանքին խոչընդոտող հանգանանքների ճնշող մեծամասնությունը կարելի է լուծել իրենց միջոցով: Երևանյան մետրոյի շինարարության ողջ ընթացքում, յուրաքանչյուր քայլափոխին բանվորներն զգում և տեսնում էին իրենց գնահատելու արդյունքը շինարարության բոլոր օղակներում գիտեին նաև, որ թերթի նկատմամբ արհամարիական վերաբերմունքը ևս անհետևանք չի մնա:

## ՅԱՄԱԽՄԲՈՂ ՈՒԺԸ

Ինչպես նշվեց, Երևանի մետրոպոլիտենի բացման ժամանակ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը բարձր գնահատեց ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի կողմից ստեղծված Երևանի մետրոպոլիտենի շինարարության աշխատանքները կոորդինացնող և ղեկավարող օպերատիվ շտաբի դերը մայրաքաղաքում դարձ հզոր կառույցի շինարարության գործում: Շատ հակիրծ խոսենք նրա աշխատանքների մասին:

Օպերատիվ շտաբի բուն նպատակն էր գործնական և կազմակերպչական աշխատանքով օգնել շինարարության բոլոր օղակներում մետրոպոլիտենի աշխատանքները հաջողությամբ ընթանալու համար: Երկրորդ կարևոր գործն այն էր, որ հետևողականորեն հայտնաբերվեն շինարարության մեջ «նեղ» տեղերը և արագ կազմկերպելով վերացվեն, թույլ չտալով, որ աստիճանաբար հիմնահարցերն ավելանան: Այլ կերպ ասած, կայացած նիստերում քննության էին առնվում շինարարության բոլոր հարցերը, պարզում խանգարող հանգամանքներն ու պատճառները, միջոցներ ծերնարկում թե տեխնիկական, թե կազմակերպչական հարցերը ժամանակին լուծելու ուղղությամբ: Շտաբի նիստերը անցկացվում էին Երբաղկոմում: Դաճախ նիստերն անց էր կացվում՝ «ոտքի վրա», լինելով բոլոր տեղամասերում: Օրինակ նիստերից մեկը եղավ 1980թ. հունվարին, գրվեցին 160 միջնադասումներ, որոնք կատարվեցին մեկ ամսվա ընթացքում: Երբեմն անհրաժեշտ էր լինում հրատապ հանձնարարություններ տալ ծերնարկություններին (Զարենցավանի գործիքաշինական արտադրական միավորում, Երևանի ավտոգործարան և այլն) պատրաստել կոնստրուկցիաներ, ոչ ստանդարտ սարքավորումներ, որոնք անմիջապես արձանագրվում էին և եթե տնտեսությունների ղեկավարներն այդ ժամանակ հրավիրված չէին լինում, ապա մեկ օրվա ընթացքում շտաբի պատասխանատու քարտուղարը որոշումը գրավոր ներկայացնում էր կազմակերպությանը, նշելով հանձնարարության կատարման ժամկետը:

Մետրոպոլիտենի շինարարության շտաբի կազմում ընդգրկվել էին կառույցի հետ առնչվող ղեկավար ընկերներ, մարդիկ, որոնք իրենց գրաված դիրքով, աշխատանքային փորձով մեծապես նպաստում էին

շինարարության հաջող ընթացքին: Օպերատիվ շտաբի անդամներն էին Երևանի քաղաքորհրդի գործկոմի նախագահ Մուրադ Մուրադյանը, ՀԿԿ Երբաղկոմի արդյունաբերության և շինարարության հարցերով գրադիր քարտուղար Ալբերտ Դանիելյանը, ՀՍՍՀ նյութատեխնիկական մատակարարման վարչության կառավարիչ Եղիշե Ասցատրյանը, Երևանի մետրոպոլիտենի վարչության պետ Իվան Պապիկը, «Դայրունելշին» վարչության պետ Լեոնիդ Դարությունովը, «Դայդետրանսնախագիծ» հնատիտուտի տնօրեն Վլադիմիր Դանդուրովը, մետրոպոլիտենի շինարարության հետ առնչվող հանրապետության տարբեր նախարարությունների ղեկավարներ, խոշոր տրեստների կառավարիչներ և այլն: Ինչպես ասվել է, շտաբը ղեկավարում էր ՀՍՍՀ Նախարարների խորհրդի նախագահի տեղակալ Քրանտ Դայրապետյանը: Եթևագայում մետրոյի գործարկումից շուրջ մեկ տարի առաջ շտաբը ղեկավարեց ՀԿԿ Երբաղկոմի առաջին քարտուղար Լեոնիդ Ներսիսյանը: Նա մետրոյի գործարկման այդ ժամանակահատվածում մայրաքաղաքի կուսակցական, սովետական աշխատողների ուժերի նորիլիկացման, Երևանի հիմնարկ-ծեռնարկությունների կուլեկտիվներին ավելի լայնորեն ընդգրկելու առումով իր դրական և որոշիչ դերն ունեցավ: Նիստերի աշխատանքներին մասնակցում էին նաև մետրոյի շինարարության հետ առնչվող գործնական օգնություն ցույց տվող նախարարությունների և գերատեսչությունների, մետրոպոլիտենի շինարարության մասնակցող խոշոր կազմակերպությունների ղեկավարներ, կարևոր օղակներում աշխատող շինարկության պետեր, ճարտարապետներ, նախագծային ինստիտուտների տնօրեններ, այլ հիմնարկ-ծեռնարկությունների, ծառայությունների ղեկավար ընկերներ: Երբեմն շտաբի պատասխանատու քարտուղարը նիստին ապահովում էր հանրապետության, մայրաքաղաքի այն հիմնարկ-ծեռնարկությունների, նախարարությունների և գերատեսչությունների ղեկավարներին, որոնց ներկայությունն այս կամ այն առիթով անհրաժեշտ էր:

Նիստը կայանում էր յուրաքանչյուր շաբաթ օր, երեկոյան ժամը 18.00-ին: Շտաբի աշխատանքները խիստ գործնական էին և այնտեղ բարձրացված հարցերն անհետևանք չին մնում: Խորհրդակցություններն ինչքան էլ կոնկրետ ու արդյունավետ էին անցնում, ծանրաբեռնագայությունն այնպիսին էր, որ շտաբի նիստը տևում էր ոչ պակաս երեք

Ժամ: Որպեսզի պարզ լինի գործնական աշխատանքների ողջ պատկերը ասեմ, որ հարցադրումները հստակ էին, չկրկնվող և տեղին: Ի դեպք բարձրացվում էին հարցեր և տրվում համապատասխան լուծումներ, եթե մինչ շտարի նիստի գալը հարցադրողի կողմից առաջարկված հարցերը համապատասխան կազմակերպության կողմից լուծում չէին ստացել, կամ այնպիսի հարցեր էին, որոնք հիմնականում կարող էին լուծվել միայն շտարի օգնությամբ:

Գրեթե միշտ շտարի նիստերին մասնակցում էր կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանը, հաճախ նիստերի աշխատանքներին մասնակցում էր ՀԿԿ Կենտկոմի արդյունաբերության և շինարարության գծով քարտուղար Կարեն Ղանբարյանը: Արդեն ասվել է, որ «Գլխավունելմետրոշինի» կառավարիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Յու. Կոչելկը տարվա ընթացքում մի քանի անգամ գալիս էր Երևան և յուրաքանչյուր անգամ Կարեն Ղենդիրճյանի հետ լինում էր մետրոպոլիտենի տարրեր տեղամասերում, շտարի անդամների հետ մանրագնին ուսումնասիրում էր գործերի վիճակը և անհրաժեշտության դեպքում անմիջապես ընթացք տալիս առաջ քաշված հարցերին: Մետրոյի շինարարության պարտի վերջին 5-6 ամիսներին գրեթե միշտ շտարի խորհրդակցությանը մասնակցում էին արդեն «Երևանաբնակներ» «Գլխավունելմետրոշինի» կառավարիչի տեղակալ Կ. Յանչևսկին, գլխավոր ինժեներ Ա. Կարապովը, նյութատեխնիկական մատուկարարնանքանի պետ Ե. Բարանովսկին, արտադրական բաժնի պետ Ա. Սինարևսկին:

Ինչպես ընթերցողը նկատեց, և հանրապետության, և մայրաքաղաքի նեկավար ընկերների ու դրանց էլ գումարած միութենական մետրոպոլիտենի նեկավարների մասնակցության պայմաններում պարզ էր, որ շտարի նիստի ժամանակ բոլոր բարձրացված հարցերը պետք է լուծվեին արագ, գրոնական: Շտարում տրված հանձնարարությունները կոնկրետ էին, նշվում էին դրանց կատարման ժամկետները, խստապահնջությունն ու կատարողական կարգապահությունը գտնվում էր պատշաճ բարձրության վրա և, որ ամենահիմնականն էր, բարձրացված յուրաքանչյուր հարց իր սպառիչ պատասխանն էր ունենում: Շտարը, որպես Երևանի մետրոպոլիտենի շինարարական կազմակերպությունների համախմբիչ ուժի, նպատակային ուղղվածությամբ և օգնությամբ,

իր վճռորոշ դերն ունեցավ:

Ինձ բախտ վիճակվեց մասնակցել ոչ միայն դարի հազվագյուտ կառույցի աշխատանքներին, այլև ականատես լինել շինարարական ուրույն բնագավառի գործունեությանը, որտեղ բացառապես այդ աշխատանքներում ընդգրկված առանձին-առանձին օղակների գերազանց աշխատանքը կլիներ անհնարին, եթե չապահովվեր փոխկապակցված գործողություններ: Գուցե սա հազվագյուտ շինարարական ճյուղերից էր, որի հաջող ավարտի առաջին գրավական աշխատանքների կողինացումն էր, ամեն մի գարկերակի խփոցի միշտ, նույնիսկ ակնթարթային արագությամբ ընկալումն ու նույն արագությամբ հարցին ընթացք տալը: Դա արդյունաբերաշինարարական յուրօրինակ մեխանիզմ էր իր բոլոր բարդություններով, գրոնական քայլերով: Յենց այսպիսի տպագործություն ստացա ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՍՀ Նախարարների խորհրդի կողմից ստեղծված գրոնական շտարի աշխատանքային բազմաբնույթ և նպատակային գործունեությունից: Տեղյակ չեմ, արդյո՞ք միութենական Գլխավոր մետրոշինի կամ այլ կազմակերպությունների կողմից կատարվել է հաշվարկ, թե խորհրդային Միությունում կառուցված մյուս մետրոպոլիտենների համեմատ, Երևանի մետրոպոլիտենը որքանով արագ է կառուցվել: Ծայրահեղության մեջ չեմ ընկենում: Բավական էր «Քերահավատու» կամ «Ընդդիմադիրը» կարծամանակահատվածում Երևարաբնական այդ ծանր պայմաններում, ականատես լիներ բանվորների շուրջօրյա գերլարված աշխատանքին, կամ եթե բարձրորակ ինժեներատեխնիկական մասնագետները ոչ թե գետնախորշի, այլև մետրոյի շտարի աշխատանքներին մասնակցած էլ չլինեին (խոսքը վերաբերվում է մետրոպոլիտենի աշխատանքներից ոչ հեռու կանգնած անձնագործություններին) և այսօր ուսումնասիրեն հանրապետությունում մետրոյի շինարարության վերաբերյալ ընդունած որոշումները, փաստաթղթերը, կատարված աշխատանքների ակտերին, մասնագիտական գործնական ինչպիսի ոչ հաճելի դիրքորոշում էլ ընդունեն, վերջում կզան նեկ հանողան՝ բացարձակ ծշմարտություն է Երևանում մետրոպոլիտենի առաջին հերթի շինարարության արագ ավարտը (իհարկե հաշվի չառնենք ոչ շինարարների մեղքով, նյութերի պակասության և այլ հանգանակներով պարապուրդ տալը, որից գրեթե գերծ էր նույնիսկ գործարկման նախօրյակի վերջին ամիսներին): Եվ

այս հարցում անզնահատելի է շտարի կատարած աշխատանքը: Ահա թե ինչու ստեղծված սրտացավ ու գործնական մընոլորտը շատ էր ոգևորում Միության տարբեր քաղաքներից եկած աշխատողներին: Միաժամանակ պետք է ասել, որ նրանք ևս անզնահատելի աշխատանք կատարեցին և երախտիքի զացումը պարտավորեցնում է խոսել նրանց մասին, թեկուզ ոչ մանրամասն իշխատակել կատարած արժեքավոր գործերը:

Ծտարում կատարողական կարգապահությունը բարձր էր, յուրաքանչյուր իր ուժերի հնարավորության սահմաներում, (երբեմն ավելի շատ) ամեն ինչ անում էին թեկուզ մեկ օր մետրոն շուտ շահագործելու համար: Մասնակցելով շտարի նիստերին, համոզվում էի, որ կայացած որոշումների օբյեկտիվ և ծանրակշիռ էին, այդ պայմանավորված էր դեկավար ու փորձառու կադրերի ճիշտ ընտրությամբ ու նրանց հստակ գործելակերպով: Ամեն ինչ չէր որ հարթ էր գնում, երբեմն լինում էին թերություններ, բացթողումներ և նկատվում էր, որ դրանք հիմնականում աշխատանքների գերծանրաբեռնվածության, առանց չափազանցության գերհզնածության հետևանք էին: Այդ երևում էր բոլորի աչքերից, սակայն ոչ մեկը չէր տրտնջում, նույնիսկ եթե դիտողությունն էլ լինում էր ոչ տեղին: Իրար հասկանում էին, չիասկանալու ժամանակ էլ չկար:

Նպատակ չեմ հետապնդել մետրոպոլիտենի շինարարությունում աշխատող դեկավարների գործունեությանը գնահատական տալ: Նրանց գնահատականնեն ստեղծվել էին տասնյակ տարիների փորձությունների, մաքառումների ճանապարհով և շտարի նիստի ժամանակ նկատվում էր դեկավար աշխատողների հրական պատկերը և ցանկանում եմ մտրումների առումով իմ զգացածը թղթին հանձնել: Զգացի, որ ի սկզբանե, տարիների ընթացքում տնտեսական օղակներում կադրերի ընտրության ճիշտ քաղաքականության շնորհիվ մետրոպոլիտենի աշխատանքների հետ առնչվող թղթոր դեկավարները, յուրաքանչյուր իր տեղում հգոր սյուն էին և նրանց հավաքական ուժը պետք է երկրաբանական բարդ պայմաններում իրենց մասնագիտական ճիշտ մոտեցումները դրսկորեին: Եվ ճիշտ լուծումներ էին տալիս, չեն արձանագրվել միայլ մոտեցումների, հարցերի ոչ ճիշտ լուծման դեպքեր: Նույնը և որոշումների կայացման գործում: Օրինակ, պարզ ճշմարտություն է այն, որ երևանի բազմաբնույթ և բազմապահի հոգսերի պայմաններում

քաղաքի դեկավարությանը մետրոպոլիտենի ամենօրյա հոգսերով ծանրաբեռնելը, գրադեցնելը, ճիշտ չէ: Սակայն ականատես էին լինում շտարի նիստերին քաղաքորիրոյի գործկոմին տրված հանձնարարությունների տարափին, գործկոմի նախագահ Մուրադ Մուրադյանի և նրա առաջին տեղակալ Յուրի Զավարյանի միշտ գործնական և ճիշտ քայլերին: Միանգամայն տեղին էր կառավարության որոշումը, մետրոպոլիտենի հետ կապված մայրաքաղաքի կոմունիկացիաների շինարարության գծով գլխավոր պատվիրատուի դերում երքաղգործկոմի հանդես գալը: Եվ չեղավ մի դեպք, որ քաղաքործկոմին տրված որևէ հանձնարարություն չկատարվեր: Կատարողական բարձր կարգապահությամբ լուծվում էին նաև նյութատեխնիկական մատակարարման հարցերը: Ինչպես ասվեց, այսպիսի հարցերով գրադվում էր մետրոպոլիտենի վարչությունը, նրա դեկավար իվան Պապիկը, որի դերն այս հարցում անզնահատելի էր: Սակայն ինչպես ասված է, այս ծով գործերի մեջ «փայ ու բաժին» էր մնում, նաև որոշ մարդկանց, հանրապետությունում այս գործի դեկավար, շտարի՝ աշխատանքների մասնակից, մեծ ճանաչում ունեցող Եղիշե Թևոսի Ասցատրյանը (նախկինում աշխատել էր ժողովնախորհի նախագահ, կենտկոմի քարտուղար և այլն): Նրա գործնական հատկություններն ու Միության տարբեր ծայրամասերում մարդկանց, կազմակերպությունների հետ ունեցած մեծ կապերը, Եղինակությունը օգնեցին մետրոշինարարության մատակարարման հարցերը ժամանակին լուծելուն: Եվ ինչպիսի կատարողական բարձր կարգապահություն այդ պատկառելի տարիքի տեր մարդու կողմից: Ըստ օպերատիկ շտարի պետի կարգադրության, մետրոպոլիտենի շինարարության շտարի անդամները, գործով առնչվող այլ շատ դեկավարներ աշխատանքների ավարտից հետո պետք է մինչև Երեկոյան 10-ը լինեին իրենց աշխատատեղերում: Շտարի պատասխանատու քարտուղար, 344 Երքաղկոմի բաժնի աշխատող Գարիկ Մնոյանը պատմում էր, որ Եղիշե Թևոսվիչը ժամը 10-ից հետո ինչքան էլ ուշ տուն գնար, կամ՝ անհրաժեշտության դեպքում բացակայեր, կտեղեկացներ և կհարցներ, արդյոք իրեն նոր հածնարարություն տրվելո՞ւ է: Իրոք հաջողությունների հիմնական գրավական կարգապահության մեջ է: Իսկ այստեղ՝ նաև դեմիրճյանական կարգապահության խիստ ոգին:

...ինչ խոսք, հարյուրավոր կազմակերպությունների կողմից մետ-

րոյի կարիքների համար նորմալ սպասարկման պայմաններում էլ երբեմն լինում էին, մատակարարման թերացումներ, երբեմն էլ զգացվում էր ժամկետից շուտ որոշ սարքավորումների ստացման անհրաժեշտություն: Վերիիշենք մետրոյի հիգիենի լուծման հետ կապված մի դեպք, որն իհարկե յուրօրինակ է, սակայն նմանատիպ օգնության դեպքեր շատ են եղել: Օպերատիվ, շտապ մատակարարման դեպքերից մեկի առիրվ պատասխանառու քարտուղարը զանգահարում է Եղիշե Ասցաւորյանին: Յաջոր դրականորեն է լուծվում, սակայն քարձոր լարման կարելի ծեռքբերման համար շինարարները խնդրում են ոչ ուշ քան 3 օրվա ընթացքում այն հասցնել մոնտաժողներին: Գարիկ Մնոյանը զանգահարում է Լենինական խորելով քաղկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ Տաճառ Սարգսյանից, օգնություն: Անմիջապես խնդրանքին դրական պատասխան է լսում: Յաջորդ օրը, ոչ մի լուր չստանալով, նորից զանգահարում է, նորից խոստանում են ... Երրորդ օրը Գ. Անոյանը Լենինական է ուղարկում շտարի ներկայացուցչին: Եվ ինչ: Իրոք Գյումրեցու «հյուրասիրությանը» չափ ու սահման չկա: Յենց առաջին մեկ ժամվա ընթացքում պարզվում է, որ այդ մեծ պահանջարկ ունեցող կարելը քաղաքի ոչ մի կազմակերպություն չունի: Անլուծելի դեպքի մասին հայտնում են կուսքաղկոմի առաջին քարտուղար Դոնարա Յարությունյանին: Տեղեկանում է, որ կազմակերպություններից մեկը ոչ ուշ քան 10 օրից ստանալու է այդ կարելը: Քարտուղարն ասում է. «Քեկուզ մեկ ամիս էլ ուշ ստանան, օգնել է պետք մետրուշնարարներին»: Որոշում են արդեն նոր մոնտաժած տրոլեյբուսի գծերը հանել և ուղարկել Երևան: Գյումրեցիները գտնում են, որ թեկուզ քաղաքում մեկ ամիս էլ ուշ շահագործման հանձնվի տրոլեյբուսի գիծը՝ ոչինչ, մայրաքաղաքին անհրաժեշտ է օգնել ... Իրոք, Երևանի մետրոյի շինարարությամբ ապրում էին բոլորը, ողջ Երևում մետրոպոլիտենի շինարարության նկատմամբ դրվածքն էր այդպիսին, նաև մոտեցումն ու դաստիարակությունը ...

Կարեն Դեմիրճյանը մետրոպոլիտենի գործարկման օրը դրվատանքի խոսքեր ասաց այն շինարարական կազմակերպությունների հասցեին, որոնք տարիներ շարունակ մեծ ջանասիրությամբ և աշխատեցին մետրոշնարարությունում: Նրանց դեկավարներից շատերը մինչև այս կառույցը, տարիների ընթացքում հանրապետությունում մեծ հետք քո-

ղած մարդիկ էին և նրանց էր վստահվել ստորգետնյա բարդ կառույցի հիականացումը: Ինձ հնարավորություն ընծեռվեց նրանց հետ շուրջ մեկ տարի առնչվել: Երբեք հնարավոր չէ նորանալ «Երքիմշին» տրեստի կառավարիչ Պետրոս Թումանյանին, ՀՍՍՀ Նախարարների խորհրդի, «Մոնտաժիատուկչին» գլխավոր վարչության պետի տեղակալ (որը կոորդինացնում և ղեկավարում էր Ենթակա շինվարչությունների աշխատանքները, առաջին պատասխանառու անձն էր) Միքայել Մկրտչյանին, «Դայտրանսչին» տրեստի կառավարիչ Երվանդ Ավետիսյանին, «Դայելեկտրանստած» տրեստի կառավարիչ Բոգդան Յարությունովին, «Արփասևանչին» տրեստի կառավարիչ Աբրամ Սարգսյանին, «Դայկապչին» տրեստի կառավարիչ Ռոբերտ Տոնյանին, որոնք իրենց Ենթակա վարչությունների և այլ ստորաբաժանների գործունեության նկատմամբ անհրաժեշտ օգնություն և ղեկավարություն ցուցաբերելու շնորհիվ կարողացան Երևանի մետրոպոլիտենը դարձնել նման շինարարությունների մեջ օրինակելիներից մեկը: Այս շինարարության հաջող ավարտով և ցույց տվեցին, որ, իրոք, նրանց իրավմամբ կարելի է համարել խորհրդային կարգերի 70 տարիներին մեր հանարապետության շինարարության զարգացման կրող սյուներից:

Դանրապետության բազմաթիվ շինարարական և մոնտաժային կազմակերպությունների լավագույններից լավագույններին ընտրեցին մետրոպոլիտենի շինարարությունն իրականացնելու համար: Յատկապես հաշվի էր առնվել նրանց ղեկավարների աշխատանքային մեծ փորձն ու կազմակերպչական ունակությունը: Երբեմն շինարարական աշխատանքների ժամանակ գործի հաջող ավարտի թելադրանքով կատարվում էին կադրային փոփոխություններ: Մետրոպոլիտենում աշխատող կադրերի ծիծու ընտրության վերաբերյալ բերենք երկու օրինակը:

Երևանի վերգետնյա կայարանների շինարարությունը կատարում էր «Երքիմշին» տրեստը, որն արդեն 20 տարի էր ինչ ղեկավարում էր Պետրոս Թումանյանը և փորձառու շինարարի համբավ էր վայելում: Ստամբուլում ծնված, հայրենիքում բնակություն հաստատած Պետրոս Թումանյանը պատերազմի տարիներին պարտելով Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, հետապերազմյան բոլոր տարիներին, շինարարության դիսպետչերից, աշղեկից աճած կաղըր շինարարական մեծ աշխատանքներ կատարեց Քաջարանում, Ղափանում, Եղավ-

Երևանի այսումինի գործարանի շինարարության դեկավարը: 1959թ. գլխավորելով «Երքիմշին» տրեստը նրան վստահվեց Եղեռնի հուշարձանի, «Հրազդան» ստալինի, ինչպես նաև բազմաթիվ արդյունաբերական օբյեկտների, բնակելի շենքերի շինարարությունը: Մեծ ճանապարհ անցած շինարարը երիտասարդ ավունով, գիշեր ու ցերեկ աշխատում էր նոտրոպոլիտենում: Նրա շինարարության հարցերի գիտակությունը բացահայտ ծևով նկատվում էր շտարի նիստերի ժամանակ: Դժվար էր պատկերացնել մետրոյի կայարանների ժամանակին, որակով և հաջող ավարտն առանց տրեստի կառավարիչի գործնական և հմուտ քայլերի: Մետրոյի շինարարության ավարտի վերջերին, հանկարծ նա ծանր հիվանդացավ: Նրա աշակերտը Ռոբերտ Մելիքյանը կարողացավ հաջողությամբ ավարտին հասցնել կայարանների շինարարությունը:

Մետրոպոլիտենի շինարարությունում առաջին անգամ հանդիպելով «Հայկապշին» տրեստի կառավարիչ Ռոբերտ Տոնոյանին, նրա գործունեությանն անտեղյակ մարդը կզարմանար, թե ինչպես կարելի է այդպիսի հույժ կարևոր աշխատանքների դեկավարությունը Վստահել մի երիտասարդի: Սակայն տրեստի աշխատանքներին որոշ չափով ծանրանալուց հետո, կարծիքը բոլորովին կփոխվեր:

1968թ. Ռադիոլեկտրակապի տեխնիկումի, 1976թ. Մոսկվայի Էլեկտրակապի ինստիտուտի շրջանավարտը (հեռակա) 4 տարվա ընթացքում դարձավ հանրապետության խոշոր տրեստներից մեկի կառավարիչ: Սակայն նա աշխատանքային գործունեության 8 տարիների ընթացքում, որպես բարդ մասնագիտության հարուստ գիտելիքների տեր մարդ և լավ կազմակերպիչ, իրեն այնպես էր դրսկորել, որ աշխողեկի պաշտոնից 1978թ. նրան վստահվել էր դեկավարել «Հայկապշին» վարչություններից մեկը: Երկու տարի աշխատելով մետրոպոլիտենի բարոյ ու պատասխանատու աշխատանքներում, իրեն փայլուն դրսկորեց: Յետագա տարիներին մետրոյի համար իրականացվելիք կապի աշխատանքներն ավելի ծավալուն էին լինելու, նրանք պետք է շահագործեն նաև մետրոպոլիտենի կապի տունը: Հանրապետության դեկավարությունը, մետրոպոլիտենի շինարարության շտարը գտան, որ այդ աշխատանքներն անխափան իրականացնելու համար, նպատակահարմար է տրեստի կառավարիչ նշանակել արդեն այս գործում եր-



«Զորավար Անդրամիկ» տեղամասում, հորանի հիմնանցքի մոտ դեմ դիմաց ընդառաջ եկող Լենինգրադի (ձախից) և Մինսկի մետրոշինարարները հորատանցման հաջող ավարտի կապակցությամբ շնորհավորում են միմյանց



«Մոսմետրոշինի» հորատողների բրիգադավար, Սոցիալստական աշխատանքի հերոս ԽՍՀ Շեպելյեվը (կենտրոնում) իր բրիգադի անդամների հետ



**«Զորավար Անդրանիկ» տեղամասում N25 բունելային ջոկատում աշխատող մոմտաժողների առաջավորների բրիգադը։ Զախից աջ Մնացական Մնացականյանը, Անուշավան Վարդանյանը, Վանիկ Սահակյանը, Ռոստոմ Ահարոնյանը**



**Հենրիկ Կարանյան**  
ՀՍՍՐ պետական հաշվառդաշտական կենտրոնի քածնի վարիչ, մետրոպոլիտենի ուղարկափոխադրութերի և ուղարկափոխադրութերի հեռամարտական կազմակերպության նախագծի ղեկավար




**Արտաշես Դովսեփյան**  
Քանակագործ, «Էսաունցի Դավիթ» կայարանի կառամատույցի քամուակի հեղինակ



**Լիլի Վարդանյան**  
Քանակագործ, «Գործարանային» կայարանի կառամատույցի քամուակի հեղինակ



**Ռաֆայել Դարությունյան**  
«Գիտություն և տեխնիկա» ամսագրի պատասխանատու քարտուղար



**Բորիս Մկրտչյան**  
«Կոմունիստ» թերթի պլանվոր խմբագիր



**Արքեստ Դարությունյան**  
«Երեկոյան Երևան» թերթի թղթակից


**Բորիս Մկրտչյանը «Կոմունիստ» թերթի պատվավոր հուշադրությունում է «Լենինետրոշինի» N3 թունելային ջոկատի բրիգադավար, Անցհայտական աշխատանքի հերոս Միխայել Տիխոնովիչին**



Գագիկ Մարտիրոսյան  
«Բարեկամություն» տեղամասի պետ



## **Մերուժան Տեր-Գուլանյան «Գարուն» ամսագրի արձակագիր**





ԵՐՄԱՆԻ ՄԵԽՐՈՎԱՐԴԻՄԵՆԻ «ԳՐԾԱՐԱԾԱԼԻՑ» ԿԱՊԱՐԱԲԻ ՇԱԾՈՎՐ





Երևանի մետրոպոլիտենի շահագործման անձնակազմի  
հիմնադիր և երկարամյա աշխատող  
մի խումբ ղեկավարմեր



Փայլակ Զավարյան  
Երևանի մետրոպոլիտենի  
տնօրենի առաջին տեղակալ



Գրիգորյակ Զույան  
տնօրենի տեղակալ



Ստեփակ Խաչատրյան  
«Ազգանշանան և կապի»  
մասնաճյուղի պետ



Օվաճյակ Դովեփյան  
«Քարշ» մասնաճյուղի  
պետ



Հովհաննես Հարությունյան  
«Էլեկտրատեխնիկական»  
մասնաճյուղի պետ



Վարդան Գրիգորյան  
«Տեխնոլոգիական տե-  
սական գնացքների,  
հիմնանորոգման» տե-  
ղամասի պետ



Լևոն Կարապետյան  
«Կապի» ուղենասի պետ




Ցոլակ Նաֆարյան  
«Էլեկտրատեխնիկական» մա-  
սնաճյուղի գլխավոր ինժեներ

## «Երևաննախագիծ» ինստիտուտից

Երևանի մետրոպոլիտենի ճարտարապետական, նախագծային  
աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցած անձիք

### «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտից



Արշակ Սահոնյան  
գլխավոր ինժեներ



Վարդիք  
Բարխունյան  
Տնօրենի տեղակալ  
(այժմ տնօրեն)



Մամիկոն Ասատրյան  
Ելեկտրանինիկական  
բաժնի պետ



Էղուարդ  
Բայանդուրյան  
Ավտոմատիկայի և  
կապի բաժնի պետ



Ժաննա Պուչյան  
Մետրո և բունելներ  
բաժնի նախագծի  
գլխավոր ինժեներ



Լևեն Փափազյան  
Մետրո և բունելներ բաժնի  
նախագծի գլխավոր ինժեներ



Դեմքու Շովհաննիսյան  
Մետրո և բունելներ բաժնի  
շինարարական աշխատանքների կազմակերպման գլխավոր մասնակտ




Լևեն Կամադարյան  
Զրաբառակարգում,  
կոյուղի և ջեռուցում  
բաժնի պետ



Նավիք Ալիխանյան  
Տեխնիկական բաժնի  
պետ



Արշակ Խաչատրյան  
Ինստիտուտի  
տնօրեն



Վարդիք Միհնասյան  
«Հանրապետության  
հրապարակ»  
կայարանի  
ճարտարապետ



Իվա Մանուչարյան  
«Մարշալ Բաղրամյան» և  
«Գարեգին Նժդեհ» կայարանների  
գլխավոր կոնստրուկտոր



Հենգել Հակոբյան  
«Հանրապետության  
հրապարակ»  
կայարանի գլխավոր  
կոնստրուկտոր



Արշակ Խաչատրյան  
«Ջորջականթյուն»  
կայարանի գլխավոր  
կոնստրուկտոր



Վարդիք Գևորգյան  
«Մարտիրոսյան» և  
«Սասունցի Ղավիր»  
կայարանների գլխավոր կոնստրուկտոր



Զոն Ռովակիմյան  
«Գործարանային»  
կայարանի գլխավոր կոնստրուկտոր



Արեգ Խորայելյան  
«Սասունցի Ղավիր»  
կայարանի ճարտարապետ



Արշակ Շաքարյան  
«Գործարանային»  
կայարանի գլխավոր  
կոնստրուկտոր



Նկարում ծախսից աջ՝ Արշակ Միհնասյան «Ծենգավիր»  
կայարանի ճարտարապետ, Ռոմեն Զովհակյան և Սուրեն Բուրիսաշյան «Ջորջավառ Անդրանիկ» և «Ծենգավիր» կայարանների ճարտարապետներ

կու տարի մեծ փորձություն անցած, դեռ 30 տարին չըոլորած Ուրբերտ Տոնոյանին: Նշանակումը միանգամայն ճիշտ դուրս եկավ:

Ուրբերտ Տոնոյանին, տրեստի ղեկավար նշանակվելու գրեթե առաջին իսկ օրից, առնչվեցի նրա հետ: Երքաղկոմում, այնուհետև խորհրդային շրջանում աշխատած տարիներին անմիջական կապի մեջ են գտնվել որոշ կարևորագույն, վճռական օրականերում աշխատող արդյունաբերական, շինարարական խոշոր կազմակերպությունների ղեկավարների հետ, որոնք հանրապետությունում մեծ հեղինակություն էին վայելում: Հանդիպել եմ ոչ քիչ թվով մարդկանց, որոնք իրենց խորը գիտելիքներով և կազմակերպչական մեծ ունակություններով՝ իմ մեջ անջնջելի հետք են թողել: Որանցից մեկն էլ Ուրբերտ Տոնոյանն էր: Քիացմունք պատճառեց գիտելիքների առկայությունը, նրա մեծ շրջահայեցությունը ու հարցեր լուծելիս ծիծառ կողմնորոշվելու բնատուր ունակությունը (դա պարզ նկատվում էր նաև շտարի նիստերի ժամանակ), Մետրոպոլիտենի շինարարության ավարտի վերջին ամիսներին, Տոնոյանը հաճախակի էր լինում «Երիտասարդական» տեղամասում: Նկատվում էր, թե ինչպես երկար ժամանակ վեճի առարկա դարձած այս կամ այն հարցը, նրա կողմից անմիջապես լուծում էր ստանում:

... Մետրոպոլիտենի օպերատիվ շտարի նիստերի ժամանակ պարզ երևում էր, որ մետրոյի շինարարության յուրաքանչյուր քայլին տեղյակ է Կարեն Ղեմիրյանը: Երկու շաբաթը մեկ շտարի անդամներով, մետրոպոլիտենի տեղամասերում լինելով հանրապետության առաջին ղեկավարին չեղ գոհացնում: Ինձ բախտ է վիճակվել լինել նրա ենթակա աշխատողներից մեկը երքաղկոմում աշխատած տանրիներին: Կարեն Մելորիչը արյունաբերության գծով քարտուղարն էր: Նրա մոքի թրիչքի, բացարիկ տաղանդի մասին մեր ժամանակի պատմությունն ուսումնասիրողները դեռ շատ ու շատ են գոելու, սակայն, ցավոք, այնտեղ չի երևա նրա անհանգիստ բնավորության առնածնահատկությունները, որը բնածին հազվագյուտ գծերի դրսնորման համար կարծեք խթանիչ ներ էր կատարում: Քանի որ խոսքը գնում է օպերատիվ շտարի աշխատանքներին և ամբողջությամբ վերցրած մետրոշինարարությանը, իսկ դրանք սերտորեն կապված են Կարեն Ղեմիրյան անվան հետ, ասենք հետևյալը: Շինարարությանը վերաբերվող ստորև հիշատակվող թեկուզ մեկ օրինակը բնորոշում է նրա անհանգիստ բնավորու-

## Երևանի մետրոպոլիտենի շահագործումից 22 տարի անց...



Մետրոպոլիտենի շտարի մի խոսքը աշխատողներ: Նաև ծախսից Ռուսիկ Գևորգյանը, եղուարտ Միհկանյանը, Դովիհան Անագնանը, կանգնած են ծախսից եղուարտ Կարսաքետյանը, Գայոհի Մելքոնյանը, Շուրա Չարությունյանը, Մերգեյ Բայրուրտյանը, Վաղոնի Ղազարյանը

թյունն ու մեծ և անսահման հեղինակությունը:

Երգաղկոնում Կարեն Դեմիրճյանի երկաթյա կարգապահությունն ու անհանգիստ բնավորությունը բոլորիս էր հայտնի: ՀԿԿ Կետկոմի քարտուղար ընտրվելուց հետո առաջին խև օրից իմ ընկերներն ասուն էին, որ նրա բնավորության բնութագրական գժերն ավելի են «խստացել»: Մեկ անգամ հեռակա կարգով զգացի նրա խիստ ու սրտացավ մոտեցումը: Գործի արիթով եղա հանրապետության նախարարներից մեկի մոտ: Ընդամենը 20 րոպե էի մոտը և այդ ժամանակ չորս անգամ զանգահարեց Կարեն Դեմիրճյանը: Չորրորդ զանգից հետո նախարարը լսափողը տեղը դնելուց հետո, այդ պատկառելի, իր գործում հանրապետությունում առաջին գիտակը հիացմունքով ասաց «Ես զարմանում եմ, ինչպիսի ուղեղի տեր է Կարեն Սերոբիչը: Ես, որ տասնյակ տարիներ առնչվում եմ աշխարհի շատ պետությունների հետ մեր համակարգի հարցերով և անընդհատ մտածում եմ դրա կատարելագործման մասին, իմ արտասահման գնալու հետ կապված խորհուրդներ է տալիս ուշադրություն դարձնել այնպիսի հարցերի վրա, որ շատերիս մտքով էլ չի անցնում, իսկ դրանք շատ արժեքավոր են: Յուրաքանչյուր շաբաթ զանգահարում է գործերի վիճակին տեղեկանալու համար, ամեն անգան մի հարցի վրա ուշադրություն է դարձնում: Զարմանք է պատճառում իր գիտակությամբ, հեռատեսությամբ ու սրտացավությամբ»: Պարզեց, որ Կարեն Դեմիրճյանը Մոսկվայից նոր էր Վերադարձել, նրան տեղեկացրել էին նախարարի արտասահման մեկնելու մասին և նա անմիջապես զանգահարում էր և խորհուրդներ ու հանձնարարություններ էր տալիս:

Բերված օրինակը վկայում է Կարեն Դեմիրճյանի սրտացավության մասին գործի նկատմամբ ընդհանրապես և մետրոյի շինարարության՝ նկատմամբ գուգահեռ անցկացնելու համար: Բոլորը գիտեին, որ Կենտկոմի առաջին քարտուղարը տեղյակ է յուրաքանչյուր օրվա ընթացքում մետրոյում կատարված աշխատանքների մասին:

Դեկավարի անգնահատելի բնավորությամբ, դիմացինին ունկնդրելու ունակությամբ, կառավարության նախագահ Ֆադեյ Սարգսյանն օժտված է նաև մարդկանցից խորհուրդ հարցնելու կարևոր հատկությամբ: Նա Կարեն Սերոբիչին պետք է յուրաքանչյուր օր տեղյակ պահեր և խորհրդակցեր մետրոյի գործերի հետագա ընթացքի մասին:

Պարզ է, շտարի դեկավարն էլ իր հերթին տեղեկություններ էր տալիս գործերի վիճակի մասին: Կարեն Սերոբիչի անձնական մասնակցությունը և օգնությունը մետրոյի շինարարության դժվար հարցերի լուծման գործում անգնահատելի է, իսկ դրանք քիչ չեն: Մետրոյի շտարի նիստերին մասնակիցներս, յուրաքանչյուր նիստի ժամանակ այն ցայտուն նկատում էինք: Պարզ երևում էր, որ միութենական հանրապետությունների կողմից օգնության հետ կապված դժվարություններում վճռական իր վերաբերմունքն էր դրսուրում Կենտկոմի առաջին քարտուղարը: Այստեղ ոչ միայն մեծ դեր էր խաղում նրա գրաված դիրքը, այլև նրա հեղինակությունը ողջ խորհրդային երկրով մեկ: Ահա դրա համար ցանկանում են խոսել նի դեպքի մասին: Մակայն մինչև կոնկրետ օրինակին անցնելը, հիշենք հետևյալը:

Առողջական վիճակից ելնելով հաճախ լինում էի բուժման, որտեղ լինում էին նաև Միության տարբեր վայրերից եկած կուսակցական, սովորական աշխատողներ: Առանց գունազարդման ասեն, որ տարիների ընթացքում տարբեր հանրապետություններից եկած մարդկանց կարիքը գործերի վիճակին մասին շատ բարձր էր, հատկապես՝ դեկավար աշխատողների մոտ: Լայնորեն տարածված էր բելոռուսիայի կոնկրետ Կենտկոմի առաջին քարտուղար Մաշերովի կարծիքը, թե Կարեն Սերոբիչը Միության ամենաերիտասարդ ու տաղանդավոր դեկավարներից մեկն է, իսկ նրա կարծիքը գնահատվում էր ողջ երկրով մեկ ... Շատերը եղել էին Յայասատանում և ԽՍՀՄ-ում 80-ական թվականների երկրորդ կեսին Միությունում սանդի պակասի, իսկ մեր մոտ դրա կայուն վիճակը բացատրում էին ոչ միայն մեր առաջին քարտուղարի լավ աշխատանքով, այլև անսահման մեծ հեղինակությամբ և ամենուրեք մեր հանրապետության համար նրա կողմից հարցերի լուծման իր յուրօրինակ ձևերով:

Եվ այս բոլորի ամփոփ պատկերն էր մետրոյի շինարարությունը...

Շտարի նիստի ժամանակ պարզվեց, որ «Յանրապետության հապարակ» կայարանի պատերի երեսպատման համար Ուզբեկստանի Գազանի հանրավայրից մարմարի ստացումը բոլորովին անհույս է և տեղեկացրել էին, որ ոչ մի երաշխիք չկա, որ մատակարարում լինի առաջիկա ամիսներին: Շահագործման հանձնվող հինգ կայարաններից մեկի վերաբերյալ նման լուրջ ցնցող էր: Դա նշանակում էր ամբող-

ջուրյամբ վերցրած մետրոպոլիտենի ժամանակին հանձննան ձախողում: Պարզ էր, առանց առաջին քարտուղարի օգնության հարցի լուծումն անհնարին էր:

Հանրապետության կառավարության նախագահի տեղակալ Հրանտ Հայրապետյանի ներկայությամբ Կարեն Ղեմիրյանը խոսում է Ուգբեկստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ռաշիդովի հետ: Հաջորդ օրը Հրանտ Արամիչը հանրապետության շինանյութերի արդյունաբերության նախարար Լիտվին Ղազարյանի և «Հայրունելշին» վարչության ներկայացուցչի հետ ինքնաթիռով մեկնում են Տաշքենդ: Հայրունելշինի ներկայացուցիչ, N160 շինմոնտաժային մաքրության կուսկազմակերպության քարտուղար Յամայակ Հարությունյանից ինացանք հետևյալը:

Առաջին օրը Հայաստանի կառավարության նախագահի տեղակալը լինում է Ուգբեկստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարի մոտ, այնուհետև նրանց կառավարության նախագահի տեղակալի, շինանյութերի արդյունաբերության նախարարի մոտ: Կարծեք գործերը վատ չեն ընթանում: Պարզում են, որ Տաշքենդից 70կմ հեռավորության վրա գտնվող Գյուլքենդի քաղաքում գտնվող քարի մշակման կոմբինատը ոչ միայն հարուստ է Գագանի հանքավայրից ստացվող հումքով այլև ձեռնարկության պահեստում գտնվում է մեզ անհրաժեշտ երեսպատման մարմարը: Զնայած դրան մերժում են անհրաժեշտ որակի մարմար տալ, առաջարկելով մեզ համար ոչ պիտանի, անորակ մարմար: Պարզվում է, որ պահեստավորված և արտադրվող մարմարը խիստ կարգադրությամբ պետք է տրվի Ուգբեկստանի երկու առաջնահերթ կառույցներին Տաշքենդում կառուցվող համագումարների պայմատին և Ռաշիդովի ծննդավայրում կառուցվող իր համալիրին (որպես Խորհրդային Միության աշխատանքային կրկնակի հերոսի): Ահա թե ինչու նրանք առաջարկում են իրենց կառույցի համար ոչ պիտանի սալերը, կամ էլ սպասել: Իսկ մետրոյի շահագործմանը հաշված ամիսներ էին մնացել...

Գնում են Ուգբեկստանի շինանյութերի արդյունաբերության նախարարի մոտ, նորից ապարդյուն...

ճարահատյալ երեքով գնում են կառավարության նախագահի տեղակալի մոտ: Յամայակ Հարությունյանը պատմում էր, որ ինքը և Լիտ-

վին Ղազարյանն ընդունարանում նստած լսում էին նախագահի տեղակալ Հրանտ Հայրապետյանի վրդոհվված ծայնը և այդ բոլորից հետո զարմանք պատճառող քար լուսույնը: Մի քանի րոպեից հետո երկուսով դուրս են զալիս սենյակից և մեքենաներով բոլորը ուղևորվում են քարի կոմբինատ: Կառավարության նախագահի տեղակալը կարգադրում էր անհրաժեշտ մարմարով առաջին հերթին ապահովել Հայաստանին: Պարզվում է, երբ Հրանտ Արամիչն գգում է, որ ոչ գործի կարևորությունը և ոչ վրդոհվված տոնը չեն ազդում նախագահի տեղակալի վրա, վերցնում է «ՎՉ» հեռախոսը և անմիջապես զանգահարում է Կարեն Սերոբիչին, տեղեկացնելով, որ «Ռաշիդովի հետ Զեր խոսելուց հետո էլ ոչ մի դրական տեղաշարժ չկա»: Լսելով Կարեն Ղեմիրյանի անունը, Ուգբեկստանի նախարարների խորհրդի նախագահի տեղակալը տեղից վեր է թռչում և առաջարկում միասին զնալ կոմբինատ ...

10 օրվա ընթացքում Հայաստան է ուղարկվում բարձրորակ մարմարե սալիկներ ...

Նպատակահարմար չգտնելով շտարի նիստերին մասնակցող հանրապետության շինարարության, իրոք հզոր սյուների մասին հանգամանալից խոսել, կարծեք հրանայական պահանջ եմ գգում թեկուց հակիրծ գրել երկու մեծությունների մասին: Մեկն արդեն հուշ է դարձել, մյուսի նկատմամբ էլ բոլորիս երախտիքի զգացմունքն է ինձ գամել սեղամին և պահանջում է անպայման նրան երկտողի արժանացնել: Ավելին, գիրքը տպագրվելուց հետո որոշել եմ նրան վերաբերվող հատվածը թարգմանել ռուսերեն և ուղարկել արդեն բոլորիս համար վաղուց սիրելի դարձած մեր բարեկամին: Եվ այսպես.

Առաջին անգամ, արդեն որպես «Երիտասարդական» կայարանի ներկայացուցիչ, մուտք գործելով Երևանի մետրոյի շինարարության շտաբը նկատեցի, որ «Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Դանդուրովի նկատմամբ բոլորը մեծ հարգանք ունեն: Նրա հետ մի քանի անգամ առնչված մարդը չէր կարող նկատել մեծ ինտելեկտի տեր մարդուն, ստեղծագործողին, կազմակերպչին: Մետրոյի նախագծման մեծ բերն ուսին նա միշտ գտնվում էր տեսանելի բարձունքում: Իր բնատուր ունակությամբ շրջապատում լինելով ճանաչված մարդ, իսկ առանձնահատուկ մասնագիտությամբ՝ առաջինը հանրա-

պետությունում, անհրաժեշտ եմ համարում շատ սեղմ ներկայացնել նրա հետ կապված որոշ հիշողություններ:

Հատ հակիրծ ասվել է Վլադիմիր Կոնստանտինովիչի անցած ուղու մասին, միայն ավելացնեմ, որ արդեն մեծ համբավի տեր «Կավգիպրոտրանս» ինստիտուտի նախկին աշխատողը ոչ միայն կարծ ժամանակ իր դեկապարած կոլեկտիվն օրինակելի դարձրեց հանրապետությունում, այլև տեսանելի էր, թե ինչպիսի մեծ հեղինակություն է վայելուն աճրող Խորհրդային Միուրյան մետրոշինարարության բազմահազարանոց ընտանիքում: Պատահական չէր, որ Կրաստանում հայորդու աշխատանքը բարձր գնահատվեց 1968թ. Վլադիմիր Կոնստանտինովիչը պարզեցրեց «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով, իսկ 1971թ. արժանացավ Վրաստանի վաստակավոր ինժեների բարձր կոչման:

Ոչ շատ հեռավորությունից, մայր հայրենիքից նկատվում էր Վ.Դանդուրովը՝ որպես ճարտարապետ - կառուցող: Չե՛ որ Յայաստանում մասնագետներ չունենալով՝ Վրաստանի կառավարության միջոցով նրա օգնությանը էին դիմում: Մինչդեռ Յայաստանում խոշոր կառուցների կողմին պետք է կատարվեին Երևանի արագընթաց ստորգետնյա տրանսպորտի նախագծային աշխատանքները և ապա իրականացվեր շինարարությունը:

Խորհրդային շրջանի կազմավորման առաջին իսկ օրից (1972թ.) առնվելով ինստիտուտի աշխատանքների հետ նկատեցին նրա, որպես տնօրենի և դեկապարի բացարիկ ունակությունը, մեծ աշխատամիտությունը, սրտացակությունն աշխատանքի և շրջապատի նկատմամբ: Որպես շրջանի ամենաերիտասարդ նախագծային կազմակերպություն, գոյության կարծ ժամանակում, դեռ մինչև 1975թ., նախագծեց Խևան-Դրազդան, Մասիս-Նուռնուս Երկարգետը, Դավիթաշենի կամուրջը, Ողջի-Դեբակիին լեռնանցքի ճանապարհը: Վլադիմիր Դանդուրովը տարեցտարի հզորացրեց իր գիտական հիմնարկը, ստեղծեց բաժիններ, հզորացրեց գոյություն ունեցողները, նյութատեխնիկական բազան: Նրա դեկապարությամբ կոլեկտիվն սկզբնական շրջանում կատարեց Երևանում արագընթաց ստորգետնյա տրամվայի և հետագյուն (1977թ.) մետրոյի և նրա հետ կապված մի շարք նախագծերի դժվարին և պատասխանատու գործը: Ինստիտուտի մասնագետները կա-

տարեցին Երկրաբանական և տեղագծագրական աշխատանքներ, նախագծեցին ուղեգծեր, ավտոմատ կառավարման գծեր, կամուրջներ, ուղետարներ: Հսկայածավալ աշխատանքները իրականացնում էին, աշխատելով առանց չափազանցության, մինչև երեկոյան ժամը 10-ը, երբեմն էլ ավելի ուշ: Նախապատրաստվեցին մետրոյի նոր գծերի տեխնիկատնեսական հիմնավորումները դեպի Աջափնյակ, Զեյթուն, Նոր Նորքի զանգված, Ավան, Շահումյան, Նոր Արեշ:

Յուրաքանչյուր անգամ շիվելով կոլեկտիվի աշխատողների հետ, զգացվում էր նրանց կողմից Վլադիմիր Դանդուրովի նկատմամբ մեծ հարգանքը ու սերը: Պատահական չէր, որ ինստիտուտի բոլոր բաժնի վարիչները, գլխավոր մասնագետներն աշխատանքի ավարտից հետո տուն չին գնում, քանի դեռ տնօրենն իր տեղում էր: Ինացանք, որ Դանդուրովն արգելել էր իր ծննդյան 60-ամյակի առթիվ որևէ միջոցառում ծեռնարկել: 1980թ. դեկտեմբերի 11-ը էր: Երեկոյան ժամը 8-ին Խորհրդային կուսչորչումի առաջին քարտուղար Պավել Սաֆյանի հետ եղանք ինստիտուտում, իրոք ողջ կոլեկտիվն աշխատում էր: Պ.Սաֆյանը խնդրեց իրահանգել աշխատողներին 10 րոպեով դադարեցնել աշխատանքները պատճառաբանելով, թե ցանկանում է կոլեկտիվի հետ մի երկու խոսք փոխանակել և շերմ խոսքեր ասաց հոբելյարի նախին: Գիշեր ու զօր աշխատող բարձրահասակ, հպարտ կեցվածքով և մեծ հնտելեկտի տեր մարդը, որն իր կոլեկտիվի անդամների հետ մեծ հետք էր թողել, մեծ պարզ համարեց իր ծննդյան 60-ամյակ նշելու անակնելով: Պարզվեց, որ այդ առնական մարդը կրծքի տակ մի փիսրուն սիրտ ունի ... Վերաբերմունքը բարձր դասեց, քանի հր տասնյակ տարիների անքուն գիշերները ...

Յայաստանում աշխատած իր առաջին հիմն տարիների գնահատականը եղավ 1976թ. «Յոկտեմբերյան հեղափոխության» շքանշանով նրան պարզեցրելը, իսկ Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի թողարկման կապակցությամբ Վլադիմիր Կոնստանտինովիչը պարզեցրեց Երկրորդ «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով:

Եվ 1993թ. նոր պայմանների առաջին գոհերից մեկը եղավ Վլադիմիր Դանդուրովը: Ինչ-ինչ նպատակներից ելնելով նա ձերբակալվեց և որոշ ժամանակից հետո որպես անհիմն բանտարկվածի, ազատ արձակվեց: Չղիմանալով անմարդկային վերաբերմունքի ցնցումներին, մի

քանի ամիս հետո նա կնքեց իր մահկանացուն: Դժբարմացված պետության առկայությունը հնարավորություն չտվեց նրան հողին հանձնել ըստ պատշաճի: Մեծ կորուստը հասարակությունը գրեթե չնկատեց և նրան հավերժություն ծանապարհեց իրեն գնահատող, հարգող ու սիրող իր շրջապատը: 74 տարեկան էր, դեռևս լի ստեղծագործական ավ-յունով և մտահղացումներով: Սակայն նա ինչ էլ արեց ծեռակերտ հիշ-ատակ եղավ նրա պայծառ անվանը: Նա հայրենիքին ժառանգություն բրդեց ավտոճանապարհներ, կամուրջներ, երկարօքներ, թունելներ, մետրոպոլիտեն, ավարտուն և անավարտ շինարարական նախագծեր, որոնք դարձան նրա համար ծեռակերտ հուշարձաններ:

... Անցան տարիներ, կարծեն թե սարույցը կոտրվեց: 2000թ. դեկտեմբերի 6-ին, «Հայաստանի հանրապետություն» թերթում «Մնայուն վաստակ» խորագրով տպագրվեց մի հոդված՝ նվիրված Վլադիմիր Դանուրովի ծննդյան 80-ամյակին:

Այժմ մի այլ երախտավորի մասին:

Խորհրդային Միության մետրոջինարարների մոտ նա հայտնի էր «Ունիկալ Յանձնակի» անունով և սրանով նաև բնորոշվում է մի մարդու կերպարը. որն իր արժանավայել կեցվածքով սրտացավորթյամբ և մարդկանց օգնելու պատրաստականությամբ օրինակելի էր «Գլխունելմետրոջինի»: և նրա հետ առնչվող շատ կոլեկտիվների համար: Սակայն երևանցիների երախտագիտությունը պարտավորեցնում է շնորհակալական խոսքից առաջ ընթեռողին ներկայացնել այդ իրոք զարմանալի մարդուն:

Ազգությամբ բելոռուս, «ծնունդով» ուկրաինացի, «կրթությամբ» ուսւ Կազմիր Ստանիսլավովիչ Յանձնակին 1953թ. ավարտելով Մոսկվայի Երկարուղային տրանսպորտի ինժեներական իստիտուտը «Կամուրջներ և թունելներ» մասնագիտությամբ, իր գործունեությունն սկսում է աշխատելով Մոսկվայի մետրոպոլիտենում: Սկզբնական շրջանում գրադեցնում է տեղանախ պետի պաշտոնը: Բարեխիղճ, գիտուն և սրտացավ, ինչպիս նաև բարձր կազմակերպվածությունը աստիճանաբար առաջ է տանում. աշխատում է որպես շինոնտաժային վարչության գլխավոր ինժեներ, վարչության պետ, ապա պատասխանատու պոստեր է գրադեցնում: Դեռ 40-ը չլրացած նրան նշանակում են «Գլխունելմետրոջին» կառավարիչ տեղակալի պաշտոնին: Նրա դեկա-

վարությամբ և անձնական լուրջ մտահղացումների ներդրումով, նա հորատանցման համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց: Նրա բարձր տեխնիկական գիտելիքներն ու գործնական ներդրումները հատկապես ի հայտ են գալիս Մոսկվայի «Նոգինյան հրապարակի» երկու կայարաններում հիդրոտեխնիկական աննախադեպ բարդ պայմաններում սարքավորումների տեղադրման գիտագործնական քայլերն իրականացնելիս: Այստեղից էլ առաջ է եկել նրա «Կնքանունը» «Ունիկալ Յանձնակի»: Նա մեծ ակտիվությամբ իր լուման է ներդրել Մոսկվայի մետրոպոլիտենի օղակային գծի կառույցների շինարարության իրականացման գործում: Նրա մտքի արգասիքն են հանդիսանում միութենական քաղաքների մետրոպոլիտենների կառույցներում պոլիտեխնիկային նյութերի և կոնստրուկցիաների տարբեր դետալների լայն կիրառումը: Այսպիսի հեղինակություն, գիտելիքներ, փորձ ունեցող մարդը օրեր ամիսներ շարունակ երևանի մետրոջինարարների համար «շարժահղողոր ամիկ» էր:

Կազմիր Ստանիսլավովիչը գրեթե միշտ երևանում էր, իսկ մետրոյի շահագործման վերջին ամիսներին ներ մայրաքաղաքից չեռացավ: Նա հատկապես մետրոպոլիտենի առաջին հերթի շինարարկան աշխատանքների իրականացման վերջին ամիսներին հանդես եկավ նյութատեխնիկական մատակարարումն ապահովելու, հատկապես Միության մետրոջինարարների կողմից ցույց տրվող օգնության բոլոր գործերը կոորդինացնողի դերում: Իր գիտելիքներն ու ունակություններն աննացող գործադրեց նոր տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիայի ներդրման գործում երևանի մասնագետներին օգնելու համար: Նրա կողմից խիստ հսկողության տակ էր վերցված «գլավկի» կողմից արված կարգադրությունները և, անհրաժեշտության դեպքում, այստեղ չլուծված հարցերին դրական ընթացք տալու համար անմիջապես ահազանգում, խնդրում էր օգնություն Մոսկվայից: Սկասում էինք, որ երբ անհրաժեշտություն էր գցացվում փորձված մասնագետների, կամ մետրոջինարարների 1-2 օրվա ընթացքում լուծում էր ստանում Միության այլ քաղաքների մետրոջինարարների երևան գործուղելով: Նա անմիջական իր հսկողության տակ էր վերցրել մետրոպոլիտենի լեռնագործության համար նախատեսված հանրապետություն մուտք գործող սարքավորումների և շինանյութերի մատակարարման գործը: Մետրո-

յում աշխատողներից ով չի նկատել այդ համեստ, անհանգիստ և սրտացավ մարդուն շինարարության ողջ ընթացքում, առաջին հերթափոխում, թե ուշ գիշերը: Նրա հասարակ, մարդկային և հետևողական բնակորությունն էր պատճառը, որ յուրաքանչյուր ոք անկաշկանդ կղիմեր նրան տեխնիկական և կազմակերպչական հարցերում օգնության ակնկալիքով: Նրա անմիջական օգնության շնորհիվ, մեր օրյեկտիվ ահազանգը հաշվի առնելով «Երիտասարդական» կայարանում, հարդարման երեսպատման աշխատանքների ծախողումը կանխելու համար Մոսկվայից և Կիևից ուղարկեցին լրացուցիչ մետրոշինարարներ, որպայլ մասնագետներ: Բնավորության մի յուրահատուկ գիծ ուներ, որը չնկատվեց որևէ մեկի կողմից: Ծարի նիստերին շատ լուրջ կնստեր: Նրա ծայնը խորհրդակցությունների ժամանակ որևէ անգամ մենք չենք լսել: Սակայն շատ լուրջ խնդիրների, դրսի հետ կապված անհրաժեշտ հրատապ հարցերի առաջ քաշման ժամանակ մեկս մեկից անկախ, կարծես հարցի լուծման «բանալին» փնտրելով նայում էինք գլուխը կախ, ինքնահոսով օրատեսորի մեջ նշումներ կատարող կազմիր Ստանիսլավովիչի ծեռքի շարժումներին: Ուրեմն հարցը լուծվեց: Եթե շատ հրատապ էր, արդեն գիտեինք, որ նույնիսկ 1-2 օրվա ընթացքում ինքնաթիռով կզար օգնությունը: Դա արվում էր լրությամբ և նույնիսկ շտարի պետն էլ նպատակահարմար չէր գտնում նրան դիմել: Նրա հետ առնչվող որևէ մարդ երբեք չի մոռանա այդ սրտացավ մարդուն:

Հայաստանիւմ երկրաշարժի ծանր օրերին բոլորս գգում էինք Նիկոլայ Ռիմսկովի ներկայությունը: Փառք Աստծոն միանգամայն տեղին էր նրան սրբացնելը, որպես հայ ժողովրդի նվիրյալ բարեկամի:

Զգիտեն ինչու միշտ լսելով Նիկոլայ Ռիմսկովի անունը, պատկերացնում եմ Երևանի մետրոյի շինարարության ժամանակ, գիշերով ռետինե երկարածիտ կոշիկները հագած, «Յանրապետության հրապարակ» կայարանից թունելախորշով «Երիտասարդական» կայարան, ջրի հոսանքին հակառակ քայլող կազմիրի Ստանիսլավովիչին, նրա անքուն աչքերը: Նա էլ Երևանի մետրոյի շինարարության Նիկոլայ Ռիմսկովն էր ...

## ԱՐԺԱՆԻ ԳՆԱՐԱՏԱԿԱՆՆԵՐ

Երևանի մետրոպոլիտենի առաջին գծի շինարարության առավել աչքի ընկնող, մասնակիցներին շքանշաններով և մեդալներով պարգևատրելու ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահության

### ՅՐԱՍԱՆԱԳԻՐ

Երևանի մետրոպոլիտենի առաջին գծի շինարարության ժամանակ ծեռք բերած հաջողությունների համար պարգևատրելը.

### ՅՈՒԿՈՒԹԵՄԲԵՐՅԱՆ ՅԵՂԱՎՈԽՈՒԹՅԱՆ շքանշանով

ԱԼԵՔՍԱՆ ՎԱՆՈՂԻ ՄԱՆՍՈՒՐՅԱՆԻՆ - «Յայրունելշինի» N160 շինոնտաժային վարչության հորատանցողների բրիգադիր

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԻ շքանշանով

ԼԵՊՈՒՀԻ ԱՐԿԱԴԻԻ ՅԱՐՈՒԹՅՈՒՆՈՎԻՆ - «Յայրունելշինի» շինարական վարչության պետ:

Աշոտ ՅԱՄԱՅԱԿԻ ԲԱՐՍԵԼՈՅԱՆԻՆ - «Յայրունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

ՄԻԽԱՅԵԼ ԻՎԱՆԻ ԲՈՆԴԱՐԻՆԻ - «Յայրունելշինի» շինարարական մոնտաժային վարչության փականագործ-մոնտաժող:

ՎԼԱԴԻՄԻՐ ԿՈՆՏԱՆԻՆԻՆԻ ԴԱՆԴՈՒՐՈՎԻՆ - «Յայպետության նախագիծ» ինստիտուտի տնօրեն:

ՍՈՒՐԵՆ ԹՈՂՈՎԻՍԱՆԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ - «Յայրունելշինի» N916 շինարարական-մոնտաժային վարչության ավտոգրեյթերի մեքենավար:

ՅՐԱՆՏ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԹԱԴԼԱԿՍՅԱՆԻՆ - «Երքինշին» տրեստի N 30 շինարարական վարչության կոնվեքսային բրիգադի բրիգադավար:

### ԾՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ շքանշանով

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԵՍԻ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ - «Յայարդմոնտաժ» տրեստի N3 մոնտաժային վարչության մոնտաժողների բրիգադավար:

ՅՐԱՆՏ ԱՐԱՄԻ ՅԱՅՐԱՊԵՏՈՅԱՆԻՆ - ԽՍՀՄ Նախարարների խորհուրդի նախագահի տեղակալ:

**Երվանդ Եգորի Ավետիսովին** - «Հայտրանսշին» տրեստի կառավարիչ:

**Արտյոմ Մամիկոնի Առաքելյանին**—«Հայթունելշինի» N25 թունելային ջոկատի հորատանցողների բրիգադավար:

**Գևորգ Մկրտիչի Յարությունյանին** - «Հայթունելշինի» պետի տեղակալ:

**Ենոք Էլոյի Ասատրյանին** - «Երքինշին» տրեստի N 27 շինարարական վարչության աշխատանքների ավագ թողարկող:

**Յրազ Բագրատի Կոգանյանին** - «Հայթունելշինի» N 160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցողների բրիգադավար:

**Վիկտոր Արմենակի Լազյանին** - «Հայթունելշին» N 160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցողների բրիգադիր:

**Իվան Գևորգի Պապիկին** - Երևանի մետրոպոլիտենի վարչության պետ:

**Ռազմիկ Միշայի Սարգսյանին** - «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցողների բրիգադիր:

## Պատվո Նշան շքանշանով

**Կարեն Գրիգորի Ադամյանին** —«Հայթունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության գլխավոր ինժեներ:

**Անատոլի Լևոնի Այդինյանին**—«Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության փականագործ-մոնտաժող:

**Վիլեն Արտավազդի Յարությունյանին**—«Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի բաժնի պետ:

**Լևոն Բորիսի Բաղդասարյանին**—«Հայսանտեխմոնտաժ» տրեստի N4 մոնտաժային վարչության փականագործ սանտեխնիկ:

**Անդրանիկ Ռուբենի Գևորգյանին** - «Հայէլեկտրանմոնտաժ» տրեստի N1 մոնտաժային վարչության պետ:

**Տերգեյ Յայկի Զանիկյանին**—«Հայտրանսշին» տրեստի N916 շինարարական վարչության խառատ:

**Աշոտ Ուսկանի Եգանյանին**—«Երքինշին» տրեստի տնտիաշ-վարկային տեղամասի հյուսն:

**Ռաֆիկ Ավետիսի Իգիրյանին**—«Հայթունելշինի» մեխանիզացիայի վարչության պետ:

**Խոկանդար Ավետիկի Կիրակոսյանին**- «Հայթունելշինի» մե-

խանիզացիայի վարչության վերամբարձի մեքենավար:

**Արտաշես Պետրոսի Մելքոնյանին** — «Երքինշին» տրեստի կառավարիչի տեղակալ:

**Միքայել Զօդֆուգարի Մկրտչյանին**—ՀՍՍՇ հատուկ շինմոնտաժային վարչության պետի տեղակալ:

**Ռուբեն Դմայակի Մկրտչյանին**—«Հայթունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության մեխանիկ:

**Իլյուշա Տիգրանի Թամամյանին**—«Հայթունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցողների բրիգադիր:

**Զիմ Պետրոսի Թորոսյանին**—«Երևաննախագիծ» ինստիտուտի N3 ճարտարապետական արվեստանոցի ղեկավար:

## Աշխատանքային Փառքի III աստիճանի շքանշանով

**Մարտուն Մուշեղի Ավետիսյանին**—«Հայթունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատողների բրիգադիր:

**Ռոստոմ Մխիթարյանին** Ահարոնյանին - «Հայթունելշինի» N25 թունելային ջոկատի էլեկտրագազաեռակցող

**Պավլիկ Գրիգորի Բաղդասարյանին**—«Հայթունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության էլեկտրագազաեռակցող

**Խաչիկ Յարությունի Վարդանյանին**— N3 ավտոմոբիլային տրեստի N1 բեռնատար ավտոտրոնսպորտային ծեռնարկության վարորդ:

**Լյուդվիգ Անուշավանի Յարությունյանին**—Երևանի «ԵրԱԶ» ավտոմոբիլային միավորման փականագործ գործիքավորող:

**Վլադիմիր Գարեգինի Զաքյանին**—«Արփասկանշին» հատուկ վարչության հորատանցող:

**Ժողեկա Ստեփանի Գեշուկյանին**—«Հայէլեկտրանմոնտաժ» տրեստի Երևանի առաջին մոնտաժային վարչության էլեկտրամոնտաժողների բրիգադիր:

**Յովհաննես Միքայելի Ղոլոյանին**—«Հայտրանսշին» տրեստի արտարական ծեռնարկությունների կոմբինատի ամրանագործ:

**Նիկոլայ Դեմյանի Կոչոնին**—«Հայտրանսշին» N 160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Ալեքսեյ Եֆիմի Կրիվոշապովին**—«Հայթունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Լոգիկ Պավելի Լեռնտևին**—Մոսկվա քաղաքի «Մոսմետրոշի-

նի» հատուկ աշխատանքների վարչության քարտաշ-գրանիտավորող:

**Սեղբակ Մմբատի Մարքարյանին** — «Երքիմշին» տրեստի արտադրա-տեխնոլոգիական կոմպլեկտավորման վարչության վարորդ:

**Անատոլի Դմիտրիի Մինսկովին** — Մինսկի «Մինսկմետրոշին» N1 թունելային ջոկատի փականագործ մոնտաժող:

**Ֆաբրիտա Ամազանի Մուրարակշինին** — «Հայթունելշին» մեխանիզացիայի վարչության բետոնախառնիչ տեղակայման օպերատոր:

**Սուրեն Գաբրիելի Սահակյանին** — Զարենցավանի գործիքաշինական արտադրական միավորման ֆուզերագործ:

**Սոկրատ Շիրինի Ստեփանյանին** — «Երքիմշին» տրեստի շինարարական իրերի կոմբինատի ամրանագործ:

**Լևոն Մանուկի Խանտամիրյանին** — «Երքիմշին» Տրեստի N25 շինարարական վարչության քարտաշ:

**Տիկոլայ Յակոբի Չոբանյանին** — «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Սարգսի Ամրաստանի Շահվերդյանին** — «Հայթունելշին» ավտոբազայի վարորդ:

## Աշխատանքային Արիության մեջալով

**Մարտուն Սավադի Յայրապետյանին** — Նուռնուսի քարի մշականան գործարանի քարի սղոցավար:

**Պատվական Յովսեփի Յայրապետյանին** — «Հայպետրանսախագիծ» ինստիտուտի հորատող վարպետ:

**Սամվել Խաչատորի Յայրապետյանին** — «Երևանշին» արտադրական մոնտաժային միավորման N 15 շինարարական-մոնտաժային վարչության հյուսն:

**Մանուշակ Ռուբենի Յակոբյանին** — «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Ժորա Թիստոֆորի Ալեքսանյանին** — «Հայթունելշին» N25 թունելային ջոկատի հորատանցողների բրիգադիր:

**Լևոն Նահապետի Յարությունյանին** — «Հայէլեկտրամանտաժ» տրեստի N1 մոնտաժային վարչության բրիգադիր:

**Սերյոժա Յարությունի Աբայանին** — «Հայտրանսչին» տրեստի N 916 շինարարական վարչության հյուսն:

**Յուրի Յարությունի Աբայանին** — «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Սերգեյ Վահանի Բայրուրտյանին** — Հայաստանի Կոմկուսի կենտրոնի հրահանգիչ:

**Էդիկ Մուշեղի Բարսեղյանին** — «Հայթունելշին» մեխանիզացիայի վարչության երսկավատորի մեթենավար:

**Վանիկ Յայկի Գալստյանին** — «Կամուրջ» տրեստի N486 «Կամուրջագնացք» մոնտաժող:

**Սպարտակ Շադինի Գևորգյանին** — «Հայտրանսչին» ավտոբազայի մեթենավար:

**Վլադիմիր Ավանեսի Գոգանյանին** — «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության փականագործ մոնտաժող:

**Մարտին Անդրանիկի Գրիգորյանին** — «Քաղցրմուղչին» շինարարական վարչության բանվոր:

**Պյուտր Յակովի Լամանովին** — Լենինգրադ քաղաքի «Լեննետրուշին» N3 թունելային ջոկատի հորատանցող:

**Մնացական Թադևոսի Մարգարյանին** — «Երքիմշին» տրեստի N 30 շինարարական վարչության հյուսն:

**Զավեն Տիգրանի Մաթևոսյանին** — «Հայէլեկտրամապարատ» արտադրական միավորման Երևանի «Ելեկտրամապարատների» գործարանի փականագործ:

**Համլետ Արամայիսի Միրզոյանին** — «Երքիմշին» տրեստի տնտեսահաշվարկային տեղամասի քարտաշ:

**Ավետիս Բենյամինի Սերոբյանին** — «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատող:

**Սիմոն Գրիշայի Սուլոյյանին** — «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Վալերի Գրիգորի Մտեպանովին** — Տաշքենդ քաղաքի «Տաշքենդմետրոշին» N1 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Ռաֆիկ Ավետիսի Մտեփանյանին** — «Հայթունելշին» N25 թունելային ջոկատի փականագործ-մոնտաժող:

## Աշխատանքային Գերազանցության մեջալով

**Յովհաննես Կարապետի Ավագյանին** — «Հայթունելշին» N25 թունելային ջոկատի հաճքահան բանվոր:

**Ռազմիկ Խոսրովի Յայրապետյանին** — «Հայթունելշին» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցող:

**Անատոլի Սեմյոնի Ալեքսանդրովին—«Հայրունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության փականագործ-մոնտաժող:**

**Իվան Գեորգիի Ալեքսանդրյանին—«Հայպետրանսնախագիծ» ինստիտուտի էլեկտրալուսանկարիչ:**

**Արշակ Բագրատի Առաքելյանին—«Հայէլեկտրալուս» արտադրական միավորման երևանի «Էլեկտրալամպերի» գործարանի փականագործ-նորոգող:**

**Տենրիկ Ահարոնի Հարությունյանին—«Հայրունելշինի» արտադրական-տեխնիկական կոմպլեկտավորման վարչության բանվոր:**

**Մինաս Ավետիսի Բարայանին—«Երքինշին» տրեստի N28 մեխանիզացիայի շինարարական վարչության կոմպրեսորի մեքենավար:**

**Յակոբ Գրիգորի Բաղդասարյանին—երևանի մետաղական կոնստրուկցիաների գործարանի փականագործ:**

**Լենդրուշ Աբգարի Բաղդասարյանին—«Երքինշին» տրեստի N27 շինարարական վարչության հյուսն:**

**Ստեփան Ապրեսի Բաղդասարյանին—«Հայրունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության փականագործ-մոնտաժող:**

**Արտաշ Սամսոնի Կարոսյանին—«Հայրունելշինի» N25 բունելային ջոկատի հորատանցող:**

**Միքայել Գեորգիի Վիկիչովին—«Հայրունելշին» մեխանիզացիայի վարչության էլեկտրագազառակցող:**

**Ալբերտ Արքամելիքի Զաքարյանին—«Արփասկանշինի» հատուկ վարչության փականագործ:**

**Դրանտ Սարգսի Զաքարյանին—«Հայրունելշինի» ավտոբացի վարորդ:**

**Սուրեն Գրիգորի Իրիցյանին—երևանի Կլարա Ցետկինի անվան կարի արտադրական միավորման փականագործ:**

**Սամվել Սերյոժայի Ղազարյանին—«Հայկապշին» տրեստի հատուկ շինոնտաժային վարչության մոնտաժող:**

**Ալեքսանդր Ալեքսանդրի Կապացևիչին—«Խարկովմետրոշինի» N 705 շինարարական մոնտաժային վարչության հորատանցող:**

**Ավետիք Գյուլարի Կիրակոսյանին—«Հայտրանսշին» տրեստի N916 շինարարական վարչության ավտոբեռնիչի մեքենավար:**

**Կոտե Դրբասի Մրադյանին—«Հայտրանսշին» տրեստի գլան-վացքանորոգման բազայի վերանորոգող մեքենավար:**

**Աշոտ Վարդանի Մուրադյանին—ՀՍՄ ավտոմոբիլային ճանապարհների շինարարության և շահագործման նախարարության հա-**

**տուկ կամրջաշինարարության վարչության նոնտաժողների բրիգադիր:**

**Ռազմիկ Մովսեսի Յովհաննիսյանին—Լենինի անվան հայկական էլեկտրամեքենաշինական գործարանի թործիչ:**

**Կարագդատ Յովհաննեսի Պետրոսյանին—«Հայրունելշինի» մեխանիզացիայի վարչության փականագործ մոնտաժող:**

**Սեյրան Սուրենի Սարգսյանին—«Երքինշին» տրեստի N25 շինարարական վարչության բանվոր:**

**Վաչագան Վարագդատի Սարգսյանին - «Հայարդօդափոխության» շինոնտաժային վարչության փականագործ մոնտաժող:**

**Յուրա Նավասարդի Թավաքալյանին—«Հայրունելշինի» N25 թունելային ջակատի հորատանցող:**

**Միքայել Սերյոժայի Խաչատրյանին—«Հայրունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության փականագործ մոնտաժող:**

**Օնիկ Արշակի Շահսուլվարյանին—«Հայրունելշինի» N160 շինարարական-մոնտաժային վարչության հորատանցողների բրիգադավար:**

### **ԽՍՀՄ Գերագույն խորհրդի**

**նախագահության նախագահ՝ Լ. Բրեժնևը:**

**ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության  
քարտուղար՝ Մ. Գեորգաձե:**

**29 հուլիսի 1981թ. Սոսկա. Կրեմլ**

\*\*\*

Երևանի մետրոպոլիտենի շինարարությանը նասնակցած, նրանց աշխատանքների բարելավման հաջող ավարտի գործունեությանը նպաստող շատ անծինք ըստ պատշաճի գնահատվեցին նաև հանրապետության գերագույն մարմինների կողմից: Բարձր գնահատականների արժանացան նաև մետրոպոլիտեններից օգնության եկած տարբեր կազմակերպությունների լավագույն աշխատողների՝ «Հայպետրանսնախագիծ» ինստիտուտի գլխավոր ինժեներ Սարգսի Անտոնյանը, «Գլավմետրոպոլիտենի» պետի տեղակալ Կամիչ Մահմադովը, «Հայրունելշինի» գլխավոր ինժեներ Դմիտրի Ռոյանկինը, «Երևաննախագիծ» ինստիտու-

տի N 5 արվեստանոցի գլխավոր կոնստրուկտոր Իլի Մանուկյանն արժանացան հանրապետության վաստակավոր ինժեների կոչման, «Գլխավոր մետրոնշինի» կառավարիչի տեղակալ Կազիմիր Յանչևսկին, «Դաշտավայրում առաջարկելու համար» պատվավորության մեջ՝ առաջարկելու համար առաջարկավոր կոչմանը: Մետրոպոլիտենի էլեկտրամատակարարման սարքավորումները կարգավորելիս մեծ օգնություն ցույց տվեց Մոսկվայի մետրոպոլիտենի բրիգադը՝ էլեկտրավագումատիկայի ուղամասի պետ՝ Լենինի Տեղական գլխավորությամբ: Նա մեր մասնագետների հետ որակով և ժամանակին սարքերը նախապատրաստեց շահագործման: Իր գերազանց գնահատականի համար նա պարզեց հանրապետության գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Դաշտավայրության, Միության շատ կազմակերպություններից ևս աշխատելու տեղամասի պետեր, բանվորներ, ինժեներա-տեխնիկական աշխատողներ երևանի մետրոպոլիտենի գործարկման աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար արժանացան հանրապետության գերագույն խորհրդի նախագահության պատվոգրի, վաստակավոր ինժեների, վաստակավոր շինարարի կոչման:

Երևանի մետրոպոլիտենի շահագործումից հետո պարզ նկատվեց, որ միութենական նախարարությունները ոչ միայն ակտիվորեն նպաստում էին շինարարության ողջ ընթացքի հաջող ավարտին, այլև նրանց կողմից ըստ պատշաճի գնահատվում էին արժանավորները:

Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի թողարկման կապակցությամբ պատվիրատուն «Գլխավոր մետրոպոլիտենը» շինարարության գլխավոր կապալառուին՝ «Դաշտավայրում» և նրա ենթակապալառու կազմակերպությունների աշխատողներին պարզեց համար փոխանցեց մեկ միլիոն ռուբլի: Պարզեալիք արժանացան արժանացան Միության ութերրորդ մետրոպոլիտենի բոլոր այն աշխատողները, որոնք իրենց լավ աշխատանքով աչքի ընկան արագընթացի շինարարությունում: Երկար տարիներ քրտնաջան աշխատանքն ըստ արժանվույն բարձր գնահատվեց:

Աշխատանքի գնահատումը շարունակվեց նաև հետագա տարիներին, տարբեր մոտեցմանը և յուրաքանչյուր արժանավոր օրերի հետ կապված: Այդ առիթով՝ նշենք երկու դեպք:

«Սասունցի Ղավիթ» - «Գործարանային» ուղեհատվածի և նշված վերջին կայարանը ժամանակից շուտ շահագործման հանձնելու համար միութենական ճանապարհային շինարարության նախարար Ն.Ս.Կոնարկի հրամանով աշխատողներից մեկն արժանացավ «պատվավոր երկարությանի» կոչման, անվանական ժամացույցներով պարզեց հինգ, իսկ դրամական պարզեց հինգ համար աշխատողներ: Դանրապետության կազմակերպությունները ևս մեծ թվով մարդկանց գնահատականի արժանացրին:

1983թ. ԽՄԴՄ ժողովրդական տնտեսության ցուցահանդեսի ժողովի որոշմամբ «Մարշալ Բաղրամյան» կայարանի ճարտարապետներ Ս.Ա. Կողեղցյանը, Ա.Ն. Զուրաբյանը և Ա.Ա. Ազատյանը որպես հեղինակ-ճարտարապետներ պարզեց հինգ բրոնզե մեդալով: Իսկ «Դաշտավանականագիթ» հնատիտուտի նախագծի բաժնի գլխավոր ինժեներ Ս.Ղուշյանը կայարանների՝ տնտեսապես ճիշտ մշակված լուծումների համար, նույն ժողովի կողմից պարզեց արծաթե մեդալով:

Եվ ոչ մի լավ երևույթ անտարբերության չի արժանացրել, այլ ինչոր ծևով նշվել, մեծարվել, գնահատվել է:

ՀԿԿ Կենտկոմի և ՀՍՄՇ Նախարարների խորհրդի մետրոպոլիտենի աշխատանքները կորորդինացնող շտարի աշխատողները և հատկապես նրանցից երիտասարդներն ըստ պատշաճի գնահատվեցին: Բերենք որոշ աշխատողներին վերաբերող օրինակներ:

Մետրոպոլիտենի շտարի պատասխանատու քարտուղարի պարտականությունները կատարում էին ՀԿԿ երթադիմի շինարարական և քաղաքային տնտեսության բաժնի աշխատողներ սկզբնական շրջանում Սերգեյ Բայրությանը, հետո Գարիկ Մնոյանը: Նրանց հետևողական և թափանորդ աշխատանքները տեսանելի էին շարքային աշխատողներին ու հատկապես հանրապետության ղեկավարությանը: Նրանց գործունեությունը մեծ դեր խաղաց շտարի ընդունած որոշումների հսկողության իրականացման, առաջացած հարցերի գործնական և ժամանակին լուծման գործում: Որոշ ժամանակ հետո Սերգեյ Բայրությանը տեղափոխվեց Կուսկենտկոմ՝ պատասխանատու աշխատանքի հետագայում ընտրվեց Երքաղխորհրդի գործկոմի նախագահի

առաջին տեղակալ: Շտաբում նրան փոխարինած Գարիկ Մնոյանը մետրոյի շահագործումից հետո աշխատանքի անցավ Երևանի Մաշտոցի շրջգործկոմում որպես նախագահ: Երօադկոնի նշված բաժնի մյուս աշխատող էղուարդ Կարապետյանը, որը որպես շտարի ներկայացուցիչ կողորդինացնում և դեկավարում էր «Մարշալ Բաղրամյանի» տեղամասը, նշանակվեց «Դայրունելշինի» վարչության պետ, հետագայում նա անցավ աշխատանքի Երօադխորհրդի գործկոմում որպես նախագահի տեղակալ: «Բարեկամություն» տեղամասի շտարի ներկայացուցիչը՝ Վլադիմիր Ղազարյանը գրադեցրեց Շահումյանի շրջգործկոնի նախագահի առաջին տեղակալի պաշտոնը, ապա կարծ ժամանակից հետո տեղափոխվեց Երօադխորհրդի գործկոնի բարեկարգման և ճանապարհային տնտեսության գլխավոր վարչություն, որտ տարիներ շարունակ դեկավարեց մայրաքաղաքի ազգաբնակչությանը սպասարկող այդ ամենաբարդ օդակը: «Սասունցի Դավիթ» տեղամասի շտարի ներկայացուցիչ Շուրա Դարությունյանի աշխատանքը ևս բարձր գնահատվեց, մետրոպոլիտենի շահագործումից անմիջապես հետո նա գրադեցրեց Օքոնիկիծեի շրջգործկոնի նախագահի առաջին տեղակալի, ապա նախագահի պաշտոնը և մեծ բարեխսղությամբ էր կատարում իր պարտականությունները:

Ինչպես ասվել է, վերգետնյա կայարանների շինարարության աշխատանքները հանձնարարվել եր՝ «Երքիմշինտեստին» /նշվել է, որ 1980թ. սկզբներից միայն «Երիտասարդական» կայարանի շինարարությունը տրվել էր այլ շինվարչության/ նրա կառավարիչ Պետրոս Թումանյանի անսպասելի ծանր հիվանդությունից հետո այդ աշխատանքները դեկավարեց տրեստի գլխավոր ինժեներ Ոորելու Մելիքյանը և մինչև մետրոպոլիտենի առաջին հերթի առաջին հատվածի գործարկունք մեծ բարեխսղությամբ և հմտորեն դեկավարեց տրեստին հանձնարարված աշխատանքները: Նրա Երևացող գործը հանրապետության դեկավարությանը հուշեց, որպեսզի նա անցնի ավելի պատասխանատու աշխատանքի և կարծ ժամանակից հետո նշանակվեց հանրապետության արդյունաբերության շինարարության նախարար:

Շուրօրինակ ճանապարհ անցավ «Հանրապետության Դրապարակ» տեղամասի մետրոպոլիտենի շտարի ներկայացուցիչ Շովիաննես Գրիգորյանը: Մինչև մետրոյում աշխատանքի անցնելը, ինչպես ասվել

է, նա աշխատում էր Երքաղխորհրդի կապիտալ շինարարության վարչությունում՝ որպես բաժնի վարիչ: Մինչ այդ գրադեցրել է նոյն վարչության պետի տեղակալի պաշտոնը: 1977թ., թե 1978 թվականին, Կրուպակայայի անվան միջնակարգ դպրոցի կաթսայատունը պայթելու և մարդկային զոհ տալու պատճառով, որպես պատասխանատու աշխատողի Շովիաննես Գրիգորյանին զարգեցրած աշխատանքից և հեռացրին կուսակցության շարքերից:

Ինչ խոսք, այս ողբերգական դեպքի արիթով որպես կաթսայատուրով գրադպողի նրա մեղքը շատ ու շատ չնշին է եղել, սակայն դրվածքն էր այդպես, ոչինչ անել չեր կարելի և նա խստ տուժեց: Ըստ իս, նրա մշուշապատ մեղքի բաժնը և մարդկային խոնի թելադրանքն էր դրել կուսակցական դեկավարությին իրենց իսկ ծեռորդ կուսակցություններից վարդպանի նշանակել 744 Կենտկոմի և ՀՍԴՍ Նախարարների խորհրդի Երևանի մետրոպոլիտենի շինարարության շտարի ներկայացուցիչ «Հանրապետության հրապարակ» տեղամասում նախ «մեղքերը քավելու» և երկրորդն էլ նրա ուժերն այդ կարևոր տեղամասում օգտագործելու համար: Մետրոյում աշխատելու ժամանակ մոտիկից առնչվեցի նրա հետ: Նրա բարձր կազմակերպված աշխատանքը, սրտացավ մոտեցումը գործի նկատմամբ, լավ հոգու և սրտի տեր լինելը տեսանելի էր բոլորին: Ընթերցողն ինացավ, որ «Երիտասարդական» տեղամասը, ըստ դեկավարության գնահատականի, շատ ու շատ հետ էր «Հանրապետության հրապարակ» տեղամասից: «Երիտասարդական» ամբողջությանը շահագործնան հանձնվեց, սակայն հարևան տեղամասի շինարարությունն անբողջովին ավարտվեց 9 ամիս հետո: Այս փաստը ոչ մի առջևություն չունի Շովիաննեսի աշխատանքի հետ և մեր տեղամասով չի գնահատվում ին և նրա աշխատանքը: Չե որ ին մեջքին կանգնած էր մեր ողջ խորհրդային շրջանը, մինչդեռ նա այս առունով գրեթե մենակ էր...

Որպես կուսակցական աշխատող, քաղաքի և հանրապետության կուսակցական դեկավարության կողմից կատարած այս մարդկային քայլը /իրը հնարավոր էր մեծ աղմուկի տեղից տար «սրտացավ» մարդկանց կողմից անանուն նամակ գրելու պատճառ դառնար/ իմ և գործին տեղյակ բոլոր հնացողների, ընկերներին կողմից միշտ բարձր է գնահատվել: Իսկ մետրոյի շինարարության պատրիժ հետո նրան վերա-

կանգեցին կուսակցության շարքերում, բավականին լուրջ աշխատանքներ վստահեցին /եղավ շինվարչության պետ, «Կոմունշին» տրեստի կառավարիչ/։ Եվ մինչև վերջերս, ավելի քան 8 տարի, նա դեկավարեց մայրաքաղաքի ազգարնակչությանն սպասարկող ամենաբարդ ու պատասխանառու գործերից մեկը՝ Երևանի ջրմուղ կոյուղու գլխավոր վարչությունը։ Ստեղծված լուրջ դժվարություններից անկախ բոլորս նկատում էինք նրա բարեխիղճ և քրտնաջան աշխատանքը։

Ես էլ անմաս չմնացի գնահատականից։ Ավելի քան 20 տարի է ինչ շահագործման է հանձնվել Երևանի մետրոպոլիտենը և ինչ հասցեին ասված ու արված յուրաքանչյուր քայլը հիշում եմ ամենայն մանրամասնությամբ։ Շնորհակալ եմ բոլորից ինձ տված բարձր գնահատականների համար։ Դնարավոր չե այդ մասին հիշատակել նույնիսկ շատ չնչին մանրամասնությամբ, անհամեստ չգտնվելու համար։ Միայն հակիր ասեմ, որ մետրոյի շահագործման հանձնելու հաջորդ աշխատանքին օրվա /մարտի 8-ը աշխատանքային օր չեր/ առավոտյան 9 անց 5 րոպեին կուսչղջկոմի առաջին քարտուղար Պավել Սաֆյանը շտապ կանչեց, որոց հանձնարարություններ տվեց՝ ասելով, որ Երքաղկոմի առաջին քարտուղարի կարծիքն է, որ ինձ պետք է ընտրեն կուսչղջկոմի երկրորդ քարտուղար։ Ֆիշտ է այս գործընթացը ծգծգվեց մի քանի ամիս, սակայն մետրոյում աշխատելը եղավ պատճառը, որ հետագայում ընտրվեցի կուսչղջկոմի երկրորդ քարտուղար։ Միաժամանակ արժանացա կառավարական պարզեցի։ Բայց իմ երկրորդ բանվորական կոլեկտիվ, մետրոպոլիտենի իմ աշխատանքային բանվոր ընկերների գնահատականը ինձ համար վեր է շատ ու շատ բարձր պարզեցի։ Դա երբեք չեմ նորանա...»

Արդեն մետրոյի շահագործումից հետո Կարեն Աղամյանը հեռվից տեսնելով ինձ, վագելով ընդարաց եկավ, հուզված ողջագուրվեց և տեղեկացրեց, որ իրեն ներկայացնում են կառավարական բարձր պարզեցի՝ «Փարքի Նշան» շքանշանի։ Ուրախության չափ չկար։ Չե որ ես նրան շատ էի միրում և մեկ տարի կողք կողքի աշխատել էինք, խելացի ուղեղը բարձր էր գնահատվում, նա տեսնիկական հարցերի գիտակներից մեկն էր, արագներացի աշխատանքների առաջին իսկ օրից մասնակցել, մաքառել, անքուն գիշերներ էր անցկացրել։ Նրա դեկավարած կոլեկտիվն էր հիմնականում իրականացնում կառույցի ստորգետնյա

հատվածի ամենաբարդ ու դժվարին գործը։ 1989թ. նա արժանացավ կառավարական երկրորդ բարձր պարզեցի «Աշխատանքնային կարմիր դրոշ» շքանշանի, 1988թ. ընտրվեց, իսկ 1995թ. վերընտրվեց, որպես թունելագործների միջազգային ասոցիացիայի անդամ, գործուղվեց Անգլիա, Իտալիա մասնակցեց Լամանշի թունելի վրարի կանխման ուսումնասիրությունների աշխատանքներին։

Ինչպես ասելի է, նա հետագայում դեկավարեց N 160 շինոնտաժային վարչությունը, ապա «հայրունելշինը», խորհրդային կարգերի վկուգումից հետո «Երևանում» դադարեցվեց մետրոպոլիտենի շինարարությունը։ «Գլխավորնելմետրոշինում» Կարեն Աղամյանի ունեցած մեծ հեղինակությունը նրան հնարավորություն տվեց աշխատանքի անցնել և Մոսկվայում դեկավարել շինոնտաժային վարչությունը, որը կատարում էր ոչ միայն Մոսկվայի մետրոշինարարության, այլ այդ մեծ քաղաքի օղակային նոր ճանապարհի շինարարության աշխատանքները։ Վարչության աշխատողները Երևանի նախկին մետրոշինարարներն էին։ Նրա սրտացավ մոտեցման շնորհիվ հարյուրավոր մարդիկ ապահովեցին աշխատանքով։

Աստիճանաբար գրադեցնելով ավելի պատասխանառու պաշտոններ՝ ավելի ու ավելի ցայտուն դրսուրվեց նրա համակելի կերպարը, որպես օրինակելի դեկավարի, հոգատար ընկերոջ, սրտացավ անձնավորության։ Արդեն գիրքը տպագրության հանձնելուց առաջ իր մահկանացուն կնքեց Կարեն Գրիգորի Կղամյանը, հիշատակ թողնելով իր բարի անունն ու Երևանցիներին թողած իր հետքը։

«...Սպասվում էր, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից պարզեցի արժանացած 27 մարդկանցից բարձր պարզեցի կարժանանա N160 շինոնտաժային վարչության պետ՝ ժորժ Ավանեսյանը։ Ընթերցող նկատեց, որ Երևանի մետրոպոլիտենի շինարարության առաջին իսկ օրից, ինչպիսի հերոսական աշխատանքներ է կատարել N160 շինոնտաժային վարչության կոլլեկտիվը։

Ժորժ Ավանեսյանը կարողացավ հաղթահարել շինարարության անախատեսելի դժվարությունները, համախմբել կոլեկտիվին իր հստակ աշխատանքով, մարդկային վերաբերունքով։ Տարիներ շարունակ գիշեր ու գօր աշխատելով, տունուտեղը մոռացած դեկավարը դարձավ մետրոպոլիտենի շինարարության առաջին շարժիչ ուժը, հա-

ջողուրբյունների կատալիգատորը, բոլորի սիրելին:

Մետրոպոլիտենի շահագործման շեմին ստորգետնյա անցուղիներից մեկում չեղևացող տեղում նա գլուխը հարվածում է երկաթին, որը նրա համար եղավ ճակատագրական: Մետրոյի գործարկումից անցել էր մեկ ամիս: Տեղեկանալով ժորժ Բագրատիչի առողջական վատ վիճակի մասին, համոզելով նրան տեղափոխեցինք իհվանդանոց: Պետք էր տեսնել, թե ողջ բուժանձնակազմն ինչպես դիմավորեց մետրոշինարարին: Իրոք, նրա անունը լայնորեն տարածվել էր, շատերն էին լսել նրա գործերի մասին, դարձել էր, առանց չափազանցության, սիրելի անձնավորություն: Յաջորդ օրը բուժման նպատակով մեկնեցի քաղաքից: Վերադարձիս կինս տեղեկացրեց, որ մեկ շարաբ առաջ մահացել է ժորժ Բագրատիչը:

Արդեն անցել է ավելի քան 20 տարի, ինչ մեզ հետ չէ ժորժ Ավանեսյանը քայլ եթե Երևանի մետրոպոլիտենի շինարարությունում աշխատած, նրա հետ առնչված մարդկանց հարցնեն, թե Երևանի համար մեկ մետրոշինարարն ո՞վ է, անկասկած, բոլորը միաբերան կասեն ժորժ Բագրատի Ավանեսյանը:

Նմաններն են ազգային հերոսները /թեկուզ հետմահու/, նմանների անուններով պետք է կոչվեն մետրոպոլիտենների կայարանները...

## ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՑ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Այժմ ընթերցողին հակիրճ ծանոթացնենք մետրոպոլիտենի շինարարությունում, մետրոյի շահագործման մեջ գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների օգտագործման, մեր հայ գիտնականների նախագոյնների, շինարարների նորանուծությունների մասին:

Մետրոպոլիտենը քաղաքային ուղևորատար տրանսպորտում, ապահովում է ուղևորների հարմար, էժան և անվտանգ գիտադրությունը:

Այն բարդ, բազմածյուղ ինժեներատեխնիկական կառուցվածք է: Մետրոպոլիտենի շահագործումը, ըստ տնտեսության ծյուղերի, իրականացվում է արտադրական տարբեր ծառայությունների կողմից, որոնց թվին են պատկանում շարժակազմի, էլեկտրադեպոյի, երթևեկության կապի, ճանապարհային, շարժասանդուղքային, բունելային կառուցվածքների, էլեկտրաներակայանների ու էլեկտրացանցների, սանիտարատեխնիկական ծառայությունները:

Նախկին Խորհրդային Միության մետրոշինության գարգացման հետ միասին կատարելագործվեց նաև մետրոպոլիտենի տեխնիկան, ընդ որում, հաշվի առնեցին գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները, շահագործման փորձը և այս բոլորը ներդրվեցին Երևանյան նորակառույց մետրոպոլիտենի բոլոր օղակներում, ծառայություններում:

Շարժակազմի կատարելագործումն ընթացավ վագոնի կշիռը նվազեցնելու, գործարկումն արագացնելու, ավտոմատ կցումը բարելավելու, կիսահաղորդչային տեխնիկայի բազայի վրա ավտոմատիկայի սխեմաներ ներդնելու և առավելագույն արագություն բարձրացնելու ուղղությամբ:

Մետրոպոլիտենի շահագործման ողջ ժամանակաշրջանում մշակվեց և յուրացվեց տեխնիկատեսական և դինամիկական բնութագրերով վագոնների նոր տեսակներ, որոնք առաջին անգամ ներդրվեցին Երևանի ստորգետնյա երթուղիներում: 81-717/81-714/ — մակնիշի վագոնների վերջին մոդիֆիկացիայում հատկապես աճեց ավտոմատիկայի այնպիսի համակարգերի դերը, ինչպիսիք էին գնացքների ավտոմատ կառավարումը, քարշային շարժիչների դաշտի տիրահստորային կարգա-

Վորումը, արագության ավտոմատ կառավարումը:

Զգալիորեն քարալավվեց նոր տեսակի վագոնների ուղևորասրահների լուսավորությունը, օդափոխությունը և ընթացքի սահունությունը, մեքենավարի աշխատանքային պայմանները:

Վագոնները կահավորվեցին ավտոմատիկայի կոմպլեքսային համակարգով, գնացքային ռադիոկապով, ռադիոինֆորմատորներով, պահեստային գործարկման սխեմայով:

Աշխատանքները տարվեցին քարշային շարժիչների վրա լարվածության իմպուլսա-տիրիստորային համակարգով անռեսոստատ կարգավորման և անռեսոստատ գործարկման ուղղությամբ:

Մետրոպոլիտենի վագոնները պատրաստվեցին Միտիչչի մեքենաշինական գործարանում Կիրովի անվան «Դինամո» և Մոսկվայի արգելակների գործարանների հետ համատեղ: Այդ վագոնների մշակմանը գործուն մասնակցություն ունեցան վագոնաշինության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտը, Մոսկվայի տրանսպորտային ինժեներների ինստիտուտը: ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Կրժանովսկու անվան էներգետիկայի ինստիտուտը, Ռուսական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Պատոնի անվան եռակցման ինստիտուտը և գիտահետազոտական ու կոնստրուկտորական այլ կազմակերպություններ:

Վագոնի կշիռը /տարան/ իջեցվեց երեք տոննայով: Այն կահավորվեց քարշային շարժիչների դաշտի իմպուլսատիրիստորային կարգավորման համակարգով, որով հնարավորություն տրվեց ցանկացած արագությունից իրացնել ավտոմատ էլեկտրական արգելակում, ինչպես նաև կառավարման ավտոմատ համակարգերով, որոնք գզալի չափով բարձրացնում են երթևեկության գրաֆիկի կատարման ճշգրտությունը, ապահովում գնացքների քարշի վրա ստացվող էլեկտրաներգիայի նվազագույն ծախսը, բարձրացնում շարժման անվտանգության աստիճանը և հնարավորություն տալիս ավելացնել անցնող գնացքների քանակը մեկ ժամում:

Ուղևորասրահն առավել հարմարավետ դարձնելու համար տեղակայվեցին յումինեսցենտային ջահեր: Յարկադրական օդափոխությունն զգալիորեն բարելավվեց սրահի օդափոխությունը, ինչպես նաև իջեցրեց աղմուկի մակարդակը վագոնում:

Մեքենավարների աշխատանքային տեղը փոխադրվեց Խցիկի միջն մասը: Ծակատային մեծ ապակու աղջկում տեղափորվեց գնացքի կառավարման վահանակը: Խցիկում առկա կոնդիցիոները մեքենավարի համար ապահովեց հաստատուն միկրոլիմա:

Վագոնների տարրողությունն ավելացնելու նպատակով նրանցից մի մասը պատրաստվեց առանց կառավարման խցիկի /խցիկներ թողնվում էին միայն գնացքի վերջին վագոններում/: Բացի դրանից, ուղևորասրահը որոշ չափով լայնացվեց, որը հնարավորություն տվեց յուրաքանչյուր վագոնի տարրողությունն ավելացնել մոտ 30 մարդով:

Վերանայվեցին մետրոպոլիտենի նախագծման ու կառավարման շինարարական նորմաները և կանոնները, որտեղ առավելագույն չափով արտացոլվեցին մետրոշինարարության բնագավառում հայրենական և արտասահմանյան գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները:

Քննարկենք մետրոպոլիտենի այն հիմնական սարքավորումների տեխնիկական բնութագրերը, որոնք ապահովեցին մասսայական ուղևորափոխադրումները, նրանց անվտանգությունն ու երթևեկության անխափանությունը:

**Կառուցվածքներ:** Մետրոպոլիտենի կառուցվածքների թվին են պատկանում թունելներն ու շբանուտքային սրահները, կամուրջներն ու էստակադները, հորանները: Մետրոպոլիտենի շինարարների աղջ սկզբից ևեր խնդիր էր դրվել ստեղծել դարաշրջանին արժանի կառուցվածքներ:

Առաջին կայարանից մինչև «Գարեգին Նժեթիկի հրապարակ» կայարան մետրոպոլիտենով երթևեկողները տեսմում են, թե ինչպիսի վարպետությամբ է կառուցվել այն, մարդու մասին ինչպիսի հոգատարությամբ են հագեցված ճարտարապետական - հատակագծային և ինժեներատեխնիկական լուծումները:

Եսթետիկական պահանջներն ապահովելուց բացի բոլոր կառուցվածքները կոնստրուկցիաները, և օգտագործման, և հարդարման նյութերի դիմացկունությունն ապահովում են գնացքների շարժման անվտանգությունն ու անխափանությունը, սարքավորումների ու հարամարանքների նորմալ գործունեությունը: Այս նպատակով կատարվեց կառուցվածքների վիճակի սիստեմատիկ ուսումնասիրություն: Նրանց

պահպանման տեխնոլոգիան նախագուշացնում է անսարքությունների երևան գալը և ապահովում նրանց ծառայության երկարակեցությունը:

Կայարանների շքամուտքային սրահների, բունենքների նորոգման և պահպանման համար մշակվեցին և ներդրվեցին տարրեր մեքենաներ և մեխանիզմներ, շարժական հղող փոշեծծիչներ, ունիվերսալ աշտարակներ, հղող ներկապուտտեր, հավաքովի ենթակամուրջներ, լուծույթապոմպեր, կոնտեյներալվացուցիչներ: Կայարանների, բունենքների պատերը լվանալու համար կան հատուկ ագրեգատներ, որոնք յուրաքանչյուր կայարանի վրա վատնում են 15 րոպեից ոչ ավելի:

Թունեների պարբերական լվացման համար օգտագործվում են լվացող ագրեգատներ, որոնք ջրի հղող շիթերով բունելի ողջ պարագնով հեռացնում են պատերին նստած փոշին:

**Կայարանային տնտեսություն:** Ուղևորների սպասարկման կուլտուրան բարձրացնելու և վերահսկող-դրամարկղային գործողություններն ավտոմատացնելու նպատակով կայարանները կահավորվեցին երթևեկության վճարի ստուգող կետերով: Նորմալ դրության դեպքում այդ ավտոմատներն անցնելու համար բաց են և ուղևորի ճանապարհը փակում են միայն այն դեպքում, եթե ընդունող սարքի մեջ չի գտնվում ժետոնը: Հակիչ ավտոմատի գծով այս կառուցվածքը, որն աշխատում է «բաց անցում» սկզբունքով մշակվել և ներդրվել է առաջին անգամ Խորհրդային Միության մետրոպոլիտեններում 70-ական թվականների սկզբներին, ի տարբերություն ավանդույթային փակ պտուտաղների: Ավտոմատի թողունակությունը մեկ ժամում մինչև 8 հազար ուղևոր է: Միենան կատարված է կիսահղորդչային սարքերով և ունի ուղևորների քանակը հաշվող հարմարանք:

Տվյալ ավտոմատի տարատեսակ են հանդիսանում միայն ուղևորների ելքի տեղերում կիրառվող, ինչպես նաև կոմքինացված այն ավտոմատները, որոնք աշխատում են ինչպես մուտքերի, այնպես էլ ելքերի համար:

Ուղևորափոխադրումների գծով օպերատիվ հատուկ աշխատանքը կազմակերպելու համար մեծ նշանակություն ունեն ուղևորներին ինֆորմացիա հաղորդելու տեխնիկական միջոցները: Դրանց թվին են պատկանում տեղեկատու ծառայությունները, ռադիոինֆորմացիան

գնացքների ուղևորարահներում, շքամուտքային սրահներում, մակագրությունները, գնացքային ռադիոկապը, երթուղիների սխեմաները:

Կայարանների մեքենայացված մաքրման համար մետրոպոլիտենի տրամադրիվեց էլեկտրական հատակը լվացող մեքենաներ և ձեռքի շարժաբեռով աշխատող, ավլող մեքենաներ: Երևանյան մետրոպոլիտենի բոլոր կայարաններում առաջին անգամ տեղադրվեցին նոր բողարկված շարժական սանդուղըներ, որոնց հիմնական հանգույցների կառուցվածքի մեջ կատարվել էին էական փոփոխություններ: Զգալի փոփոխություններ էին մտցվել գլխավոր շարժաբերի հանակարգում, բարելավվել էին աստիճանների, քարշային շղթաների, ռեղուկտորների, բռնածողների կառուցվածքները: Արգելակման սահունությունն ու հուսալիությունը բարձրացնելու նպատակով կատարելագործվել էր աշխատանքային արգելակների կառուցվածքը և այլն: Կատարված բարեփոխումները թույլ տվեցին զգալի չափով բարձրացնել մեքենաների աշխատանքի հուսալիությունը, ավելացնել մինչ նորոգման վագքերը և նվազեցնել շարժասանդուղըների առաջացրած աղմուկը: Շարժասանդուղըների թողունակությունը մեկ ժամում 8000 ուղևոր է: Ուղևորափորների ավելացնան կարողությամբ մեծացվեցին աստիճանային ժապավենի շարժման արագությունը: Սկզբում այն եղել էր 0,5 մ/վրկ, ինու հասցեց 0,6 մ/վրկ, այնուհետև մինչև 0,75 մ/վրկ, իսկ երևան առարկածն արդեն հասցել էր 0,94մ/վրկ:

Ուղևորափորների հեռուստատեսային հսկողության համալիրի ներդրումը հնարավորություն տվեց շարժասանդուղըների խմբի կառավարումն իրականացնել միասնական օպերատիվ կետից: Փորձարկվեց շարժասանդուղքի տիրախտորային շարժաբերի սխեման, որը հնարավորություն տվեց աստիճանային ժապավենի շարժման արագությունը կարգավորել բեռնվածության համեմատ: Այսպիսով Խորհրդային Միությունում և Երևանի մետրոպոլիտենում տեղադրված «Ետ» տիպի նոր սերիայի շարժասանդուղըներն ավելի բարձր տեխնիկակատառական բնութագրեր ունեն:

**Կենտրոնական ուղեփակման համալիր և կապ:** Գնացքների շարժման լիակատար անվտանգությունն ապահովելու համար մետրոպոլիտենի բոլոր գծերը կահավորվեցին էլեկտրականանիկական կետավոր ավտոմատ կանգառ ունեցող ավտոմատ ուղեփակման /աեր-

օռլուկրօքա/ համակարգով: Պաշտպանիչ հատվածներն առանձնացված են մեկուսացված ինքնուրույն ուղերաժանմունքների ձևով, ընդ որում այդ բաժանմունքները յուրաքանչյուր լուսազդանշանի մոտ ունեն մեկուսացվող ծայրակցատեղների հարմարանք: Ավտոմատ ուղերական նշված համակարգի նախագծային թողունակությունը մեկ ժամում կազմում է 34 գույգ գնացք: Գծերի թողունակությունը ժամում մինչև 48-50 գույգ գնացքի հասցնելու համար համալիրը լրացվեց արագության առաջընթացքային հսկողության հարմարանքներով, որոնք հնարավորություն են տալիս ստուգել կայարանից հեռացող գնացքի արագությունը և դրանից կախված բացել նուտքային ազդանշանները:

Ուղիների ստուգումը պլանում և պրոֆիլում, ինչպես նաև ռելսերի վիճակի ստուգումը կատարվում է չափումների ավտոմատ գրանցում ունեցող հատուկ մասնագիտացված վագոններով, որոնք ունեն առաջընթաց ուղեչափիչ, ուլտրաձայնային դեֆեկտոսկոպ, ուղեհետախուզիչ կայան, եզրաչափային կոնտակտային ռելսի եզրաչափերի չափիչ: Ուղիների տնտեսության պահպանան և նորոգման աշխատանքների մեջենայացման նպատակով մշակվեց մեջենաների և մեխանիզմների համալիր ինքնագնաց ծնահավաք մեջենա, ուղիների բետոնի հիմքում կոնքերի փոխման մեջենա ալմաստային ֆրեզմերի օգտագործումով, կոնքերի և ռելսերի մաքրման մեխանիզմներ, ուղետեղակայման ամբարձիչ և այլն, որոնք ներդրվեցին երևանի մետրոպոլիտենում:

Քաղաքային ստորգետնյա երկաթուղում կարևոր նշանակություն է ստանում ուղևորների և սպասարկող անձնակազմի համար սանհիտարակիցներիկ բարենպաստ պայմանների ստեղծումը: Մետրոպոլիտենի կանոնադրությամբ սահմանված են խստ սանհիտարական նորմաներ, որոնցով որոշվում է օդի թույլատրելի ջերմաստիճանը, խոնավությունը, փոշու և ածխարթվի պարունակությունը: Այդ նպատակով մետրոպոլիտենի կայարաններն ու թունելները հագեցվեցին զանազան սանհիտարատեխնիկական սարքավորումներով՝ ընդհանուր ծավալային օդափոխության հորաններով՝ տեղական օդափոխության համալիրներով, ջրաբաժ տեղակայանքներով, ջրամատակարարման, կոյուղու և ջեռուցման կառուցվածքներով:

ՑԱԳ-ի աերոդինամիկական սխեմաներով մշակված եզակի առանց-

քային օդափոխիչների աշխատանքային անիվի տրամագիծը հասնում է 2,4 մետրի: Այդ օդափոխիչներն իրենց արտադրողականությամբ կայարաններում և թունելներում ապահովում են օդի եռապատիկ-քառապատիկ փոխանակությունը մեկ ամսվա ընթացքում:

Կայարաններում անհրաժեշտ ջերմաստիճանը ապահովվում է ձմռան և ամռան ժամանակաշրջանում օդափոխիչ հորանների աշխատանքի ռեժիմի փոփոխման հաշվին: Օդային միջավայրի վիճակը կայարաններում սիստեմատիկաբար վերահսկվում է հատուկ սարքերի օգնությամբ: Ծառայողական թույլուր շինությունները շարժասանդուղքային մեջենայական դահլիճները, բլոկպոստերը, դրամարկերն ունեն տեղական օդափոխություն: Այս ժամակարգի կենտրոնախույսը և առանցքային օդափոխիչները ունեն օդի մաքրման գտիչներ, օդասառեցուցիչներ և կալորիֆերներ օդի պահանջմուղ պարամետրերը պահպանելու համար:

Օդափոխիչներով կահավորված արհեստական օդափոխիչ հորանները քածանվում են ներհոսայինների և արտածգիչների: Յուրաքանչյուր հորան օդափոխիչների պրոցեսների ուղղությունը փոփոխելու ճանապարհով կարող է դառնալ ինչպես ներհոսային, այնպես էլ արտաքին: Ամռանը մետրոների միջին ջերմաստիճանը մեծ խորության կայարաններում կազմում է  $+21,70^{\circ}$  փոքր խորության կայարաններում  $+23,4^{\circ}$ , ծմրանը այդ ջերմաստիճանը համապատասխանաբար լինում է  $+14,40^{\circ}$  և  $+12,2^{\circ}$  /ամռանը օդի միջին արտաքին  $+20^{\circ}$  և ծմրանը  $+6,4^{\circ}$  – ինքըում /: Մետրոպոլիտենում սանհիտարատեխնիկական սարքավորումների աշխատանքն ավտոմատացվում է: Յիշնական ագրեգատների կառավարումն իրականացվում է դիսպեչերական կետից:

Տնտեսական և գրունտային ջրերը կայարաններից և թունելներից դրենաժամանակներին կառուցվածքներով հեռացվում են:

Շքամուտքային սրահների ջերմասպասարկումն իրականացվում է կենտրոնացված աղբյուրներից: Կայարանների սանհիտարական վիճակը բարելավելու համար թույլոր շքամուտքային սրահներն էլ ելքի դռների մոտ կահավորում են ոտքերի տակի վանդակներով: Աղբակուտակիչների մաքրման պրոցեսը մեջենայացվում է, որի համար կիրառվում են ջրահավաք ագրեգատներ, տղմածծիչներ և այլն:

Կայարանների ստորգետնյա տեղաբաշխման և մեծ ուղևորահոս-

բերի առկայության պայմաններում էլեկտրամատակարարման համակարգին ներկայացվում են բարձր պահանջներ: Նրա հուսալիությունից և անխափանությունից է կախված մետրոպոլիտենի բոլոր օղակների աշխատանքի ուժը: Դրա համար էլ մետրոպոլիտենն էլեկտրաներգիան քաղաքային սնուցման աղբյուրներից ստանում է իր սեփական ենթակայանների միջոցով:

Այստեղ 825 վոլտ լարվածությամբ եռաֆազ փոփոխական հոսանք է գնացքների քարշերի համար և 380, 220 և 127 վոլտ լարվածությամբ եռաֆազ փոփոխական հոսանք շարժիչային և լուսավորման բեռնվածությունների սննան համար: Բոլոր քարշային և համատեղված քարշայիցնող ենթակայաններն ավտոմատացված են և բերված են ավտոմատ կառավարման միասնական դիսպեչերական կետից: Ենթակայաններում տեղակայված հզոր կիսահաղորդիչային ուղղիչները, էլեկտրամագնիսական անջատիչները, անյուղ տրանժիումատորները, ավտոմատիկան, հեռուստամեխանիկան քացառում են մշտական հերթապահ անձնակազմի անհրաժեշտությունը: Էլեկտրամատակարարման համակարգի տարրերի հուսալիությունը, արագ գործողության էլեկտրական պաշտպանությունը, պահեստային ավտոմատ միացումն ապահովում են մետրոպոլիտենի բոլոր սպառչների անխափան սնունքը և հետևաբար ուղեկայանների հատուկ աշխատանքը:

Ինչ վերաբերում է մետրոյի անվտանգությանը, ապա ավելի, քան 20 տարիների մետրոպոլիտենի աշխատանքի ընթացքում այն կասկածի տակ առնելու առիթ չի եղել և դա պայմանավորված է ոչ միայն մետրոյում աշխատող 1200 մարդկանց բարեխիղծ աշխատանքով: Վքարային տարրեր իրավիճակների համար մշակված են ուղևորների տարհանման հատուկ պլաններ: Տրանսպորտային միջոցների ամենահաճախ պատահող վթարներն արգելակների պատճառով են լինում, իսկ մետրոն պահովագրված է դրանից: Բոլոր կայարաններում գործում է անվտանգ արգելակման համակարգ, որն անկախ մերենավարների գործունեությունից, արգելակում է գնացքը: Ի դեպք, երևանի մետրոպոլիտենում մի անգամ կայարանում խցիկից դուրս եկած մերենավարը անտեսած է լինում անվտանգության կանոնները և գնացքը շարժվում է առանց նրա ու բարեհաջող տեղ հասցնում բանից անտեղյակ ուղևորներին: Նշենք, որ կայարանից-կայարան ճանապարհի տարրեր հատ-

վածներում գնացքի արագությունը ևս ավտոմատ է կարգավորվում: Նշենք նաև, որ երևանի մետրոպոլիտենը քաղաքաշտանության օբյեկտների շարքում է և անհրաժեշտության դեպքում կարող է տեղավորել մայրաքաղաքի բնակչության 60 տոկոսին: Ստորգետնյա մետաղական դարպասները բարձրացնելով լրիվ մեկուսացվում են կայարանները և բացառում թունավոր գազի կամ ջրի ներթափանցումը:

Երևանի մետրոպոլիտենի սպասարկման ողջ ցանցը համալրված է միջազգային ստանդարտներին համապատասխան մեխանիզմներով, սարքերով, ավելին, հագեցված է գիտության և տեխնիկայի 1980թ. նորագույն նվազումներով, հետագա 10 տարիներին համալրվել է նոր ծեռքբերումներով: Երևանի մետրոն մետրոպոլիտենների ողջ ընտանիքում դասվեց օրինակելիների շարքը:

\* \* \*

«Դայպետուրանսնախագիծ» ինստիտուտի կոլեկտիվը մշակեց մի շարք տեխնիկական լուծումներ, որոնք նշանակալից ավանդ եղան ոչ միայն խորհրդային, այլև համաշխարհային թունելաշինության մեջ: Այս առունելի ուշագրավ են երևանի մետրոպոլիտենի շինարարության համար նախագծված տեխնիկական լուծումների խորը գիտական մոտեցումները: Միանգամայն ճիշտ եղրահանգումների շնորհիվ ոչ միայն ապահովեցին շինությունները ճարտարապետական, շինարարական խնդիրների բարձրորակ լուծումներով, այլև հնարավորություն տրվեց հաղթահարել և չեզոքացնել երևանի ստորգետնյա երկրաբանական պայմանների փոփոխությունները, ջրառատ միջավայրը, ֆինանսական միջոցների խնայողությամբ անուր իիմք ստեղծվեցին երևանում մետրոյի շինարարության լայնորեն ծավալմանը:

Բազմաթիվ արժեքավոր աշխատանքներից նշենք ինստիտուտի ճարտարապետների մի շարք գործեր:

Երևանի մետրոպոլիտենի միջկայարանային անցումային թունելների համար նախագծողները մշակեցին միասնականացված հավաքովի երեսարկման նոր տեսակ:

Մետրոպոլիտենի տեղամասերից մեկում շինարարությունն ընթանում էր ջրառատ միջավայրում, ջուրը շրջապատում էր թունելները և նրա մակարդակը թունելներից բարձրանում էր տասնյակ մետրերից

վեր: Շինարարներն աշխատանքներ կատարելու համար գետնի երեսից հորատանքքեր էին բացում, հատուկ ֆիլտրերով և խողովակներով պոմպեր դնում այնտեղ և ջուրը դուրս մղում թունելի ենթադրյալ մակարդակից ցածր: Այդ մեթոդի շնորհիվ թունելների շինարարությունը կատարվում էր ջրազուրկ, չոր ապարներում: Նախագծողներն առաջարկեցին հորանքըների փոխարեն կիրառել հորանքըների մի փունջ, որը փոխարինեց ուղեմասի երկանքով փորված բոլոր հորանքերին, դրանով իսկ տնտեսելով 1,5 մլն. ռուբ:

Կառուցվում էր 3 տեսակի մետրոպոլիտեն խորը հիմքերով, ոչ խորը հիմքերով և վերգետնյա: Երևանի մետրոպոլիտենի առաջին հերթի ծանապարհի վրա հանդիպում են բոլոր երեք տեսակները: Այս կամ այն տեսակի ընտրությանը նախորդում էր տնտեսական, տեխնիկական և քաղաքաշինական մանրակրկիտ և երկարատև աշխատանք՝ առավել նպատակահարմար տարրերակն ընտրելու և հիմնավորելու համար: Երկարատև, դժվարին և փշոտ է նախագծողի ուղին, մինչև այս կամ այն տարրերակն ընտրելու վճռական պահը: Բայց սխալվում է նա, ով նտածում է, թե նախագիծը հանձնվելուց հետո նախագծողի աշխատանքն ավարտվում է: Շինարարության ընթացքում առաջանում են մի շարք հարցեր /Երկրարանական պայմանների փոփոխություններ, անհրաժեշտ մեխանիզմների, սարքերի շինությունների բացակայություն և այլն/, որոնք պահանջում են նախագծային այս կամ այն նոր լուծումը: Նախագծային կազմակերպությունները կանոնավոր կերպով հրականացնում են հեղինակային հսկողություն շինարարության ընթացքում ու ելնելով շինարարության իսկ շահերից, կատարում փոփոխություններ, որոնք բարելավում են նախագծի շինարարության ցուցանիշներն ամբողջությամբ և վերջնական արդյունքում նորույնների հրականացման շնորհիվ մեծ տնտեսումներ են լինում: Այսպես, շինարարության ընթացքում թունելների փահանային հորատանցումը փոխարինվեց ելեկտրոնայինով, որը նշանակալի չափով պակասեցրեց շինարարության ծախսերը:

Ելեկտրատեղագիայի վերաօգտագործման համակարգի ստեղծումը Երևանի մետրոպոլիտենի հեռանկարային նախագծնան առաջնակարգ խնդիրներից մեկն էր: Օրինակ, «Զորավար Անդրանիկ» և «Բարեկամություն» կայարանների միջև գտնվող տարածությունը դեպի «Բարեկա-

մություն» կայարանը բարձրացող հատվածում միակողմանի թեք պրոֆիլ ունի: Այդ կայարանների նիշերի տարբերությունը 150 մ է: Հետևաբար, իջնող գնացքներն ելեկտրատեղագիայի ծախս չեն պահանջում, այլ ընդհակառակը, այն վերադարձնում են ցանցին: Եթե կարողանանք օգտագործել այդ հանգամանքը, ապա ելեկտրատեղագիայի այն տոկոսները, որ ծախսում են գնացքները, կվերադարձվեն ելեկտրացանց: Այդ պրոբլեմի լուծումը պահանջում է երկրի գիտական ուժերի ներգրավում, գնացքակազմերի և ենթակայանների կառուցվածքային փոփոխություններ: Երկայնական պրոֆիլի պայմաններում Երևանի մետրոպոլիտենի երթուղու ելեկտրատեղագիայի վերաօգտագործման հարցը հատկապես կարևոր նշանակություն ունի մեզ համար: Ինստիտուտի գիտականներին այս հարցը ևս հուզում էր:

«Հայպետտրանսնախագիծ» ինստիտուտի նախագծումները, հետազոտությունները ոչ միայն գործնական, այլև գիտական խոշոր արժեքներ են ներկայացնում:

«Հանրապետության իրապարակ» կայարանը, ինչպես նախագծվել և պատրաստվել է, ունի ստորգետնյա նախասրահ, շարժասանդուղքային թունել և բուժք վահանակներով երեք թունել: Սովորական սյուների փոխարեն հայ նախագծողներն ու շինարարներն ստեղծել են թերևացած սյուների նոր տիպ, իսկ միջին դահլիճի կամարը բարձրացված է, որն ամբողջությամբ կայարանին ընդարձակ ու թերև տեսք է հաղորդում: Այդ կայարանում հատկապես հաջողությամբ է կիրառվել հանրահայտ ճարտարապետ Զիմ Թորոսյանի նախագիծը: Նրա առաջ քաշած ճարտարապետական մի շարք պահանջները կատարել են նախագծողներն ու շինարարները: Այստեղ հարկ է նշել, որ հայ ճարտարապետների ստեղծած թերևացրած տիպի նոր սյուներն օգնեցին տնտեսելու մեջ քանակության նետաղ:

«Երիտասարդական», ինչպես նաև «Զորավար Անդրանիկ» կայարանը նույնպես ունի երեք թունել, յուրաքանչյուրը 8,5 մ տրամագծով և դարձյալ սյունատիպ եռակամար կայարան, միայն թե հայ նախագծողները, բուժք վահանակների փոխարեն, կիրառել են երկարթետոնն շապիկով և մետաղամեկուսիչով երկարթետոնն վահանակներ: Կայարանի այդ նոր տիպը հնարավորություն ընծեռեց տնտեսելու 2,5 հազ. տոննա մետաղ և ընդհանուր արժեքը կրծատվեց համարյա մեկ մլն ռուբլով:

Մետրոպոլիտենի երթուղու կենտրոնական տեղամասում որոնումների ժամանակ նոխագծողների առաջ լուրջ խնդիրներ առաջացան կոնստրուկցիոն որոշումների և արտադրության կազմակերպման հարցում ստորգետնյա առաջ ջրերի հոսքի ջրահեռացման հարցերը ճիշտ լուծելու ուղղությամբ: Նախատեսվեց և փորձաարտադրական եղանակով հաստատվեց ճիշտ մոտեցումը որոշվեց արհեստական ջրահեռացումն իրականացնել խորը հորատանցման եղանակով: Չնայած այն բանին, որ առանձին տեղամասերում դուրս մնվող ջրի քանակը ժամում հասավ 6 հազ. խմ, որը հազվագյուտ երևույթ էր մետրոշինարարության մեջ, ջրահեռացման այս եղանակն ամբողջությամբ իրեն արդարացրեց: Որպեսզի ջրի հեռացման ժամանակ մանր քարային մասերը ջրի հետ դուրս չգային, որի հետևանքով շենքերի և շինությունների հիմքերը կրուլանային և դեֆորմացիայի պատճառով դրանք լավագույն դեպքում կնստեին, «Հայպետորանախագիծ» ինստիտուտի նախագծողները մշակեցին հատուկ կոնստրուկցիա, որի շնորհիվ ջրահեռացումն իրականացվում էր ֆիլտրման եղանակով: Արհեստական իջեցման շնորհիվ ջրի մակարդակը թունելների շինություններում իրականացվեցին ամբողջությամբ չոր խորշում:

Հատուկ մոտեցում պահանջվեց «Զորավար Անդրանիկ» կայարանի և «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանի ուղղությամբ, երկարուղու շրջանում: Սովորաբար խորհրդային Միությունում ընդունված էր թունելները կառուցել ծանծաղ ներդրմամբ, աշխատանքներն իրականացնել բաց փորվածքների եղանակով և հետո այն ծածկել: Այս մեթոդով «Զորավար Անդրանիկ» կայարանը կավարտվեր 3-4 տարիների ընթացքում, որը գուգահեռ տրանսպորտի երթուղու բացակայության պատճառով անհնարին էր: Եթե անցնեին մայրուղու բավականաչափ խորացմանը, դա կիանգեցներ կոնքինացված սիստեմի իրականացմանը հորանի արհեստական ջրահեռացմանը և ջրի տակ աշխատելու եղանակով հորատանցման, հետևաբար թունելի ցանկապատումը կկատարվեր միայն երկարով, որի պատճառով մայրուղու մեկ կիլոմետրի արժեքը կբարձրանար 15 մլն. ռուբլով, իսկ գործարկումը կկատարվեր շատ տարիներ հետո: Ելքը գտնվեց, օգնեց տեղանքը: Այստեղ պատահականորեն ստեղծվել էր «ազատ միջանցք» երևան – Մասիս երկարգծի երկարությամբ: Իսկ եթե այդ միջանցքով բաց թողնվեր մետրոյի վեր-

գետնյա տրանսպորտը: Տնտեսական տեսակետից բոլոր եզրակացությունները հաստատում էին, որ հարցը ճիշտ է լուծվում: Կերպետնյա շինարարությունը գրեթե 7-8 անգամ էժան է ճանապարհի խորը ներդրման համեմատ, իսկ սաղը ներդրման համեմատ 4 անգամ: Այս եղանակը ոչ հաճախ է օգտագործվում, այն հնարավոր է միայն քաղաքի կառույցները չխախտելու դեպքում: Այստեղ, դա բնակելի թաղանասերին չեր խանգարում և տեխնիկատնեսական առումով իրեն լրիվ արդարացնում էր: Սակայն որպեսզի այս հնարավորությունն օգտագործվեր, անհրաժեշտ էր, որ ուղևորին առավելագույն չափով հարմար լիներ կայարանին մոտենալը: Նախազժային ինստիտուտը միահնգամայն խելացի լուծում տվեց, որն այսօր տեսնում և գգում են ուղևորները:

Մեծ դժվարությունների առջև կանգնեցին նախագծողները, երբ սկսվեց դեպի երկարգծի կայարան տանող ուղղության մետրոպոլիտենի նախագծնան փուլը:

Ինժեներակարաբանական հետազոտությունները ցույց տվեցին, որ ստորգետնյա տարբերակի դեպքում թունելների շինարարության համար հարկ կլինի փակել «Հանարապետության իրապարակ» կայարանից մինչև երկարգծի կայարան տանող գլխավոր փողոցը, որը կիանգեցներ շինարարության լրացուցիչ թանկացման, շահագործման ժամկետի գգալի ուշացման:

Այս դեպքում էլ Վլադիմիր Ղանդուրովը փայլեց իր ինժեներական մտքի բարձր մակարդակով և գտավ ամենաարդյունավետ տարբերակը: «Զորավար Անդրանիկ» կայարանից հետո դեպի երկարգծի կայարան մետրոյի ծրագիրը նախագծվեց վերգետնյա տարբերակով, բնակելի շենքերից դուրս գտնվող, գոյություն ունեցող երկարգծին գուգահեռ տարածքով:

... Հանրապետությունում առկա է լցանյութերի մեծ քանակ, որոնց հիման վրա ստացվում է թերև բետոն: Դրա տեսակարար կշիռն ավելի քիչ է, քան ծանր բետոնին: Դա լայնորեն կիրառվում է մետրոպոլիտենների շինարարության ժամանակ ստորգետնյա շինությունների ամրակապերի համար:

Թերև բետոններն ունեն ցածր առածկանության մողուլ, ինչը ամրակապին տալիս է ծկունություն, իսկ դա իր հերթին բերում է ապահով և ամրակապի հետ համատեղ աշխատանքի բարելավում և որպես

հետևանք, հնարավորություն է տալիս փոքրացնել ամրակապի հաստությունն ու թունելի ապարի հորատանցման ծավալը:

ԽՄՀՄ հաղորդակցության ճանապարհների նախարարության հատուկ հանձնաժողովը, քննարկելով «Հայրունելշինի» կողմից արված առաջարկությունը և այն բարձր գնահատելով որպես պիտանի և օգտակետ միջոցառում, համուկապես Հայաստանի մետրոշինարարության համար / թունք գիտահետազոտական, նախագծային և գործնական մշակումներում իրենց արժանի քննությունն էին քոնել/, թույլատրեց դրանց կիրառումը հանրապետության տրանսպորտային շինարարության մեջ:

Օրակարգում դրվեց թերև բետոնի կիրառումը մետրոպոլիտենի թունելների հավաքովի ամրակապի սալիկների համար, որը ևս լուրջ քննություն բռնեց: Ակգրնական շրջանում մետրոպոլիտենի շինարարությունում անցան փորձարկումներ, որից հետո թերև բետոնից պատրաստված կոնստրուկցիաները լայնորեն կիրառվեցին:

Թույլ ապարներում ջրի առկայության դեպքում, կամայից բարձր / շերք շերք / սովորաբար կիրառվում են թուշե վահանակներ, որոնք խիստ դեֆիցիտ կոնստրուկցիա են: «Հայպետտրանսախագիծ» ինստիտուտը և «Հայրունելշինը» համատեղ մշակեցին և ներդրեցին մետրոպոլիտենի ընթացքային թունելներում ամրակապի նոր կոնստրուկցիա: Երկշերտ ամրակապը պապիկվեց թունելների լրիվ ջերմանեկուսացումը և որ ամենակարևորն էր, իջեցրեց մետրոյի ժախար: Մեկ խորանարդ մետրում տրվեց 50 ռուբ, խնայողություն: Միայն մեկ տեղամասում այս եղանակով աշխատանքի շնորհիվ տնտեսվեց 7,5 հազ. տոննա չուցուին:

Երևանում մետրոպոլիտենի առաջին գծի շահագործումից հետո հեռանկարային գծերի շինարարությունն իրականացվելու էր համեմատաբար թիւ ջրահեռացման պայմաններում: Այն արդեն ցայտուն նկատվեց երկրորդ հերթի շինարարություն մասնակի առաջին խև օրից և պապայում կառուցվելիք տեղամասերի ուսումնասիրություններից հետո: Դրան համապատասխան մշակվեցին կայարանների և ընթացքային թունելների նոր ամրակապերի կոնստրուկցիաներ: Հաշվի առնելով նոր լուծումների իրականացման հարցը, նախագծման և շինարարության ընթացքում, «Հայրունելշինը», «Հայպետտրանսախագիծ» ինս-

տիտուտը, Երևանի մետրոպոլիտենի վարչությունը, ՇԿԳԴ-ի և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը կնքեցին ստեղծագործական համագործակցության պայմանագիր նպատակ ունենալով տեղական լցանյութերի հիման վրա ստանալ նոր երկարթետոնյա ամսուր կոնստրուկցիա: Այդ նպատակով «Հայրունելշինը» N24 հորանի տարածքում ստեղծեց արտադրական տեղամաս և կատարեցին լեռնային ճնշման չափումները ժամանակավոր ամրակապի վրա, իսկ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական լաբորատորիայում սկսեցին նյութերի ընտրությունն ու նրանց փորձարկումը երկարթետոնի բարձրորակ կոնստրուկցիաներ ստանալու համար: Արդյունքները գոհացուցիչ էին...

Մետրոշինարարանների և Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի համատեղ աշխատանքը իր հեռանկարային զարգացումն եր ապրում: «Հայպետտրանսախագիծ» ինստիտուտի տնօրեն, պոլիտեխնիկական ինստիտուտի «Կանուրզներ և թունելներ» առարկայի դասախոս Վլադիմիր Ղանդուրովի նպատակն եր ոչ միայն լավագույն ուսանողներին նախապատրաստել որպես ապագա նախագծողներ և կատարողներ, այլև որպես գիտնական շինարարներ, նախագծողներ:

Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնային տալուրգիական և ավտոճանապարհներ ֆակուլտետների «Լեռնային գործ» և «Կամուրջներ և թունելներ» ամբիոններում 1984 թ. հուլիսին ավարտվեցին դիվլոնային նախագծերի պաշտպանությունը և տվեցին ստորգետնյա շինարարության գծով ինժեներ շրջանավարտներ: Երիտասարդ մասնագետները լրացրին երկարգօն թունելների և մետրոպոլիտենի շինարարների, նախագծողների և շահագործողների շարքերը:

«Լեռնային գործ» ամբիոնում ամենահետաքրքիր նախագծերը երիտասարդ ինժեներներ խաչատրյանի և Փափազյանի նախագծերն էին: Նրանք իրենց դիվլոնային աշխատանքներում առաջարկել էին խոր ներդրման մեթոդը մետրոպոլիտենի շինարարության նոր տեսակ: Առաջարկվել էր անցնել կողային կառանատույցներով կայարանների տեսակին և երկգծային ընթացքային թունելներին:

Սովորաբար մետրոպոլիտենի գիծը մինչև 12 կմ երկարությամբ կառուցվում է՝ «Հայաստանի պայմանների համար»՝ 10-15 տարիների ընթացքում: Նրանց առաջարկության և հիմնավորումների շնորհիվ հնարավորություններ էին ընծեռվում գգալի կարծ ժամանակահատվածում

ավարտել նման հեռավորության մետրոյի գծի շինարարությունը նաև տալով կապիտալ ներդրումների մեջ խնայողություն։ Դասախոս Վլադիմիր Դանդուրովն իր ուսանողների հետ միասին հասավ անսպասելի հաջողությունների...»

Նախատեսվեց նմանատիպ մետրո նախագծել ու պատրաստել դեպի Ազաֆինյակ տանող գծի շինարարության ժամանակ։ Դա համաշխարհային մետրոշինարարության համար, այն էլ Երևանի ստորգետնյա բարդությունների պայմաններում, նոր նվաճում կլիներ...

...«Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվն, ուղղակի փայլեց Երևանի մետրոպոլիտենի կայարանների յուրօրինակ ճարտարապետական նորանունը քաղաքացիներով, մնացած շատ գործերի հետ մեծ պավան ներդրեց Երևանի ստորգետնյա ջրերն օգտագործելու, արդյունաբերության մեջ տեխնոլոգիական նպատակներով խմելու ջուրը դրանվ փոխարինելու ուղղությամբ։

Արժանի է հիշատակել, որ 1979թ. Հայկական ՍՍՀ պետշինի որոշմամբ, ստորգետնյա կայարանների ճարտարապետական – հարդարման աշխատանքների բոլոր 5 տեխնիկական նախագծերը, եքսպերտիզայից հետո, խրախուսանքի արժանացան։ «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետները քիչ ջանքեր չննայեցին, որ մեր ստորգետնյա պայմանները մյուսներից ավելի լավ տեսք ունենան։

Ստորգետնյա աշխատանքների նորմալ և անվտանգ պայմանների ապահովման համար մետրոպոլիտենի ուղղու երկայնքով, գրունտային ջրերը դուրս մղելու համար փորվեցին ջրի մակարդակն իջեցնող 70 հորատանքներ։ Յուրաքանչյուր տեղակայանքի փաստացի դեբետը հասնում է ժամում 120-140 լիմ։ Քիմիական վերլուծության տվյալների համաձայն, ջրի որակի ցուցանիշները, որոշակի շեղումներով համապատասխանում էին ԳՈՍՏ-ի պահանջներին, սակայն բակտերոլոգիական տվյալները կայուն չեն, այդ պատճառով ստորգետնյա ջրերը կարող էին օգտագործվել ջրավագանների սննան, փողոցների և կանաչ տնկինների ջրման տարբեր արտադրությունների տեխնոլոգիական նպատակների համար։ Արտադրվող ջրի նշանակալից մասը աննպատակ թափվում էր Գետառը և կոյուղու անձրևատար գիծը։

«Երևաննախագիծ» ինստիտուտը նշակեց քաղաքային տնտեսության կարիքների համար գրունտային ջրերի արդյունավետ օգտա-

գործման մի նախագիծ, որի համաձայն մասնավորապես արտամղվող ջուրը մատակարարվեց Կիրովի անվան Քիմկոմքինատի և Կոմերիտմիության անվան գրոսայգու լճին։ Այդ նպատակի համար խանջան և Կոունյանց փողոցների ճամփարաժանում կառուցվեց պոմպակայան։ Մետրոյի գործող հորատանցքների ջրի մատակարարման շնորհիվ Քիմկոմքինատը մեկ վայրկյանում տնտեսեց 800 լիտր խմելու ջուր և զգալիորեն բարելավվեց քաղաքի բնակչության ջրամատակարարումը։ Ստորգետնյա աղբյուրների ջրերը տրվեցին նաև գլխավոր պողոտայի պոմպակայաններին։ «Կարապի լճին», «Առագաստ» սրճարանի մոտ գտնվող ջրավագանին, ջրող ավտոմեքենաների համար ջրմուղ աշտարակներին և այլն։ Ջրի պաշարներն սպառվելուց շատ հեռու էին։ Այստեղ թերևս անհրաժեշտ էր հարցի կոմպեքսային լուծում։ Այդ իսկ պատճառով քաղխորհրդի գործկոնը քաղաքի շահագրգոված կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց այս կարևոր հարցի վրա։

...«Հայրունելշինի» աշխատողների գիտական մտահղացումները գյուտարարական առաջարկությունների իրականացման և գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումները Երևանի մետրոպոլիտենի շինարարության մեջ ներդնելու ողջ աշխատանքները դեկավարում եր փոձված հնութ գլխավոր ինժեներ Դմիտրի Ռոյանկինը։ Նա Միության թունելաշինության տարբեր կարևորագույն կառույցներում ինժեներական պատասխանատու գործեր դեկավարելուց հետո, շուրջ 15 տարի էր, ինչ Երևանու էր և Երևանի մետրոպոլիտենի շինարարության առաջին իսկ օրից դեկավարում էր նրա տեխնիկական ծառայությունը։ Որպես ինժեներական բարձր մտքի տեր իր շուրջը համախմբել էր պրատող մտքի, լավ կազմակերպող և մարդկանց կարծիքներին ընդուածող մարդկանց։ Նրա հաջողությունների ամենահիմնական ազդյակը սա էր։ Այս տեսանկյունով հակիրծ կանգ առնենք մեխանիկական ծառայությունների գործունեության վրա։

Մետրոպոլիտենի շինարարությունում նորագույն սարքավորումների և տեխնիկայի նորարարական առաջարկությունների ներդրման գործում մեծ ծառայություն մատուցեց N160 շինմոնտաժային վարչության գլխավոր մեխանիկ Սուրեն Սեղրակյանը։ Նա անցել էր կյանքի վերընթաց ճանապարհ։ Փականագործ մոնտաժողից էլեկտրամոնտաժնիկ, ապա ավագ էլեկտրիկ, էլեկտրամոնտաժային արտադրա-

մասի պետ, ապա առաջ էր քաշվել ավելի պատասխանատու աշխատանքի գլխավոր էլեկտրիկի, գլխավոր մեխանիկի պաշտոնի: Երևանի մետրոպոլիտենի շինարարությունում նա ուղղակի փայլեց: Մեխանիկական ծառայության հմուտ և բարեխիղճ, իրենց գործը սիրող մեխանիկների՝ Գարուշ Պապյանի, Ռուբեն Սկրտչյանի, Սաշիկ Ավանեսյանի, Վոլոյյա Յովհաննիսյանի, գլխավոր էներգետիկ Ֆելիքս Սարգսյանի հետ միասին կարողացավ տիրապետել և ծառայությունների ուժերով ներդնել այնպիսի նորագույն սարքավորումներ, ինչպիսիք են ՊԿ – 3 տիպի հորատանցման մեթենան, ԷՊՄ – T, ՊՄԼ- 1 բարձիչ մեթենաները. հաճաքարը դուրս հանող ԾԿԲ-20 տիպի սկեպերային կոնվեյերը, էլեկտրական ծակող սարքեր և այլն: Մեխանիկական ծառայության մարդիկ հանդես էին գալիս նորարարական առաջարկություններով, որոնք տալիս էին տնտեսական մեծ օգուտներ: Բերենք միայն մեկ օրինակ. Սուրեն Սեղրակյանն առաջարկեց և պատրաստեց հորանի հորատանցման համար լեռնային կոնվեյեր ինքնազնաց սայլակ, որի միջոցով մեթենայացվել և ավտոմատացվել էր ստորգետնյա հորանից ապարների հանումը դեպի վեր, նրա տեղափոխումն ու բեռնաբափումը: Միայն երկու հորանում այս կոնվեյերի ներդրումից տրվեց 5000 ռուբ. տնտեսում: Նորարարական առաջարկությունը Միության մետրոշինարարության մեջ սա եղակի էր և լայնորեն տարածելու համար այդ մասին տպագրվեց Մոսկվայում հրատարակվող «Տրանսպորտային շինարարություն» ամսագրի 1982թ. 7-րդ համարում, որը մեծ արձագանք գտավ Միության մետրոշինարարության օղակներում, առաջարկությունը ներդրվեց նոր կառուցվող մետրոպոլիտենների շինարարություններում:

«Դայրութելշինի» ստորաբաժանումների կողմից մետրոշինության մեջ գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներից բերենք ևս մի քանի օրինակներ:

Երևանի մետրոշինարարության մեջ տեխնիկական առաջընթացի շնորհիվ լայնորեն օգտագործվեցին շինարարությունում հավաքման բարձր աստիճանի որակավորում տվյալ երեսպատման տեխնոլոգիաներ, կիրառվեցին նոր արդյունավետ նյութեր, կատարելագործվեց խոր ջրհծեցման համակարգը, ներդրվեցին անկերային ամրակներ և այլն:

Դասկանալի է, որ ամեն մի նորույթ պահանջում էր շինարարության

նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի յուրացում: Այս այստեղ և մեքենացման վարչության և գլխավոր մեխանիկի, էլեկտրիկի ծառայությունները տեղամասերի հնմեներատեխնիկական աշխատողները համախմբված գործնական քայլեր էին կատարում նորագույն տեխնիկան իրացնելու համար: Այս ճանապարհով բոլոր տեղամասերում ներդրվեցին հանքախորշի կոնվեյսային հորատանցման ՍԲՈՒ-2Մ, ՍԲՈՒ-24, ԲՈՒՈ -2 մեխանիզմները: Կառույցներում մեծ տարածում գտան Խորհրդային Միության ՎՊԿ-10 և ՎՊԿ-7 մակնիշի բարձր բետոնատարողության վագնները, որոնք ունեն մինչև 20 տոննա բեռնատարողություն:

5,5-ից մինչև 9,5 մ տրամագիծ ունեցող հավաքովի երեսպատման տեղակայանը կատարվում էր ժամանակակից քայլող տիպի մեխանիզմներով: Դրանք մեքենայացված տեղակայում էին, ինչպես երկարետոնե, այնպես էլ թուժ վահանակների օղակները: Ամրացված տարածության լցումը կատարվում էր ԱՌ – 50 մակնիշի բարձր արտադրական պոմպերով ՌՄ- 750 շաղախային պոմպերի հետ միասին:

Կայարաններում իրականացվեցին բարձր արդյունավետ սեյսմիկ կապի, ստորգետնյա շինությունների ամրակապի տեխնիկական լուծումներ: Շենգավիթ կայարանը, ի տարրերություն նյութ կայարանների, միակամար է և կառուցվեց բաց եղանակով: Եքսկավատորով փորված փոսորակում, որն ուներ 105 X 22 չափեր և 15 մ խորություն, տեղադրվեց երկաթետոնե ամրակապը. կազմված էլիպսաձև տարածքային ամրակարկասով լցված բետոնի մասսայով: N 25 թունելային ջոկատի գլխավոր ինժեներ Ա.Պողոսը կազմեց կայարանի կարկասային ծածկի նախագիծը: Տեղամասի մեխանիկներ L. Խաչատրյանը և Գ. Գևորգյանը կազմակերպեցին ամրակարկասների արտադրանքը հենց տեղամասի մեխանիկական արհեստանոցում, որը գտնվում էր փոսորակից ոչ հեռու: Այստեղ պատրաստվել էր հատուկ ստենդ ամրակարկասի հավաքման համար, որը զգալիորեն կրճատեց աշխատատար պրոցեսը: N 25 թունելային ջոկատի գլխավոր մեխանիկ Ալեքսանդր Յարությունյանը նախագծեց և պատրաստեց շարժական հատուկ կաղապարման սարք, որը հավաքվեց հենց տեղում և նրա միջոցով փոսորակում կատարվեցին բետոնապատման աշխատանքները: Նոր տիպի սարքը հնարավորություն տվեց զգալիորեն կրճատել նաև ամրակապի հավաքման ժամանակը. ֆիզիկական աշխատանքը: Դետագայում այն լայնորեն տա-

րածվեց Միության մետրոշինարարություններում:

Ստորգետնյա հորանների շինարարական կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտը և «Հայքուննելշինը» արժեքավոր նորամուծության և գիտահետազոտական աշխատանքներ կատարեցին ջրամեկուսիչ էպօքսիդային ծածկույթների ստեղծման և մետրոպոլիտենի շինարարության մեջ ներդնելու ուղղությամբ և այս գործում իր անգնահատելի ծառայությունն ու ինժեներական խելացի մոտեցումը ցույց տվեց N160 շիննոնտաժային վարչության գլխավոր ինժեներ Կարեն Աղամյանը: Անկախ խիստ գրավածությունից, նա գլխավորեց ջրամեկուսիչ ծածկույթների գիտական մտահղացումների ներդրումը շինարարության մեջ:

## ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ԿԱՅԱՐԱՆՆԵՐԸ

Անենահին և ամենաերիտասարդ Երևանը 1981 թ. համալրվեց նոր հրաշալիքներով: Երևանում մետրոպոլիտենի շահագրոթումով նայրաքաղաք հարստացավ ճարտարապետական դարավոր ավանդույթների և ժամանակակից ինժեներական մտքի համարձակ գուգորդյան արդյունքով ազգային նոնկ կառուցված կայարաններով ու նախարարականներով: Ասած իհմնավորելու համար բերեմ Երևանի մետրոյի շինություններին վերաբերող աշխարհի մետրոնների գնահատականներ տվող փոքրարիվ գիտականներից մեկի կարծիքը: Ահա թե ինչ է գրել խորհրդային Միության տրանսպորտային շինարարության նախարարության քունելային և մետրոշինարարության գլխավոր վարչության պետ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Յուրի Կոչելկը: «Երևանյան մետրոն ոչ միայն տրանսպորտի վիճակի բարելավման միջոց է, այլև քաղաքի ճարտարապետության դեմքի լրացում: Այստեղ համարվել են և շինարարության առաջավոր ներդներ, և ազգային ճարտարապետության արտահայտչամիջոցներ: Օրինակ «Սասունցի Ղավիր» կայարանի վերգետնյա կառույցը, թվում է, թե առանձին յուրահատկություն ունենալ չեն կարող: Բայց ես, որ Խորհրդային Միությունում մասնակցել եմ 300 մետրոկայարանների բացմանը, գտնում եմ, որ նա լավագույններից մեկն է: Բարձր է նաև կառուցվող մետրոպոլիտենի որակը: Առհասարակ շատ բարձր է Երևանում կառուցվող մետրոպոլիտենի որակը: Ես ուզում եմ դարձյալ շեշտել, որ կայարանների ճարտարապետական լուծումները խիստ ինքնատիպ են և գրավիչ: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել ճարտարապետներին, նախագծողներին և դարձյալ նշել, որ կառույցները շատ լավ համարվուն են քաղաքի ընդհանուր տեսքին: Կարող եմ օրինակ բերել «Լեճինի հրապարակ» կայարանը, որն ասես քաղաքի շարունակությունը լինի գետնի տակ ...»<sup>1</sup>

Եվ իրավամբ, հայ նախագծողները, ճարտարապետները, Երևանյան մետրոյի բարձրարժեք գործերի ստեղծումով, մեզ հպարտանալու իրավունք տվեցին:

1. «Միանք» - «Խորհրդային գորոյ», հրատարակչություն, Երևան, 1983թ. էջ 23:

Խորությամբ ծանօթ լինելով Երևանի ընդերքին նախագծողների համար հեշտ չի եղել ստեղծել պայմաններ գեղարվեստական ճարտարապետական նոր արժեքներ հիմնելու համար: Դիդրոէլեկտրաքանական և տեղական այլ առանձնահատկություններն ազդել են հանգույցային տեխնիկական պրոբլեմների լուծման, աշխատանքների արտադրության երանակների ընտրության, պլանավորման և տեխնոլոգիական կառուցվածքների, տրամսագործական կոմպլեքսների հարմարադասման վրա: Երևանում մետրոյի ծնունդը մի նոր է բացեց այդ նմանատիպ կառույցների ընտանիքում նախագծման ու շինարարության մեջ, ամփոփող ստեղծագործական որոնումներ և նախկինում ծեռքբերված փորձի հարստացում: Երևանի մետրոյի երթուղու հետազոտության ժամանակ նախագծողները բախվեցին գրանիտային մի անսովոր միջավայրի, նաև ստորգետնյա ջրերի, հարկ եղավ արդյունավետ միջոցներ ծեռնարկել կառուցվածքների հուսալի հիմքեր ստեղծելու և հորատման անընդհատությունն ապահովելու համար: Ծոգ կիմայի պատճառով անհրաժեշտ դարձավ օդափոխության հատուկ համակարգի ստեղծումը, սեյսմիկ գոտին իր կնիքը դրեն թունելային կոնստրուկցիաների վրա: Ստեղծվեցին կարծր ու ճկուն հանգույցներ ունեցող միացումներով, հավաքովի տարրերով և ամրացնող սեյսմագոտիներով կոնստրուկցիաներ: Այս բոլորը «Դայպետրանսնախագիծ» ինստիտուտին հնարավորություն տվեց հիմք ստեղծել հետագայում ճարտարապետների կողմից բարձրարժեք գործեր ստեղծելու համար:

Եվ իրոք, «Երևաննախագիծ» ինստիտուտի ճարտարապետները բարձրարժեք գործեր ստեղծեցին: Եթե վերգետնյա կայարանները կառող էին ունենալ ընդլայնվելու հնարավորություններ, ապա ստորգետնյա կայարանների ու նախասրահների ծավալատարածական լուծումները չեին կարող տարափոխվել լայն սահմաններում, որովհետև դրանք անմիջականորեն կապված են ինժեներական երկրաբանության հետ: Այնուամենայնիվ ինչպես վերգետնյա, այնպես էլ ստորգետնյա կայարաններն իրենց բոլոր կառույցներով թիւ նվաճումներ չունեացան: Որանք բխում են մետրոյի կայարանների ճարտարապետությանը ցուցաբերած հատուկ վերաբերմունքից, լիարժեք տարածական, գեղարվեստական միջավայր ստեղծելու ծգոտումից: Եվ դա Երևանյան մետրոշինության առավելությունն է:

ճարտարապետական արտահայտչականության միջոցների ընտրության ժամանակ կարևորվել է ֆունկցիոնալ և էսթետիկական սկզբունքների փոխկապակցության կոնկրետ բացահայտումը: Այդ փոխկապակցության առանցքը հանդիսացավ ճարտարապետական գեղարվեստական լուծումների օրգանական համակցությունը, որը որոշակի գաղափարի ենթակա և ապահովեց ճարտարապետական արտահայտչականության լակոնիզմը: ճարտարապետության և կերպարվեստի սինթեզը կրեց միաձույլ բնույթ Երևանի մետրոյի բոլոր կայարաններում, միաժամանակ նրանցից յուրաքանչյուրն ունեցավ իր անհատական պատկերը: Անենուրեց նկատվում է ճարտարապետի, նկարչի և ինժեների ստեղծագործական համագործակցությունը:

Իրավամբ, հայ ճարտարապետները, հավատարիմ մնալով բամանյանական դպրոցի ավանդույթներին, իրենց ստեղծագործություններով ոչ միայն Երևանը հարստացրին նորագույն և ուրույն կառույցներով, այլև իրենց նոր խոսքն ասացին համաշխարհային մետրոշինարարության կորողներ ստեղծելու ուղղությամբ:

## «ՔԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ» ԿԱՅԱՐԱՆ



ՀԵՇԻԿԱՆ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Նախագծի գլխավոր ճարտարապետ, ՀՍՍՀ վաստակավոր ճարտարապետ

Երևան քաղաքի մետրոպոլիտենի առաջին հերթի կայարանը տեղադրված է բավականին բարդ տրանսպորտային հանգույցում:

Բացի տրանսպորտից, բարդ է նաև հետիունը շարժումը, և այդ հարցը կարգավորելու ու այն մետրոյի նախարարի հետ կապելու համար «Երևանախագիծ» ինսիտուտի ճարտարապետական արվեստանոցում նախագծեց բավականին մեծ ճարտարապետական մի համալիր՝ Մարշալ Բաղրամյան և Քոչարի փողոցների հատման կետում:

Համալիրի մեջ են մետրոպոլիտենի ստորգետնյա նախարարի իր ստորգետնյա կայարանով, կայարանի շինարարությունը և 14 հարկանի մետրոպոլիտենի վարչության շենքը:

Մետրոպոլիտենի առաջին կայարանի հարցը լուծելիս պետք էր, անշուշտ լուծել նաև վերը նշված հանգույցի պրոբլեմը: Նշված հանգույցի գրանիտե աստիճաններով իջնում ենք դեպի ստորգետնյա ան-

ցումները, որոնք հնարավորություն են տալիս դուրս գալ հանգույցի ցանկացած անկյունը կամ դեպի ստորգետնյա մետրոպոլիտենի նախարարի:

Նշված ստորգետնյա անցումներում նախատեսված են տարբեր տիպի, ինչպես օրինակ, ծաղկիների, հուշանվերների և ամսագրերի կրպակներ, սրճարաններ ջրի ու պաղպաղակի վաճառքի կետեր, միջքաղաքային և ներքաղաքային հեռախոսախցիկներ և այլ տաղավարներ: Նախատեսվեցին ցերեկային պայման լուսավորություն, գրանիտե հատակներ, մարմարի պատեր և ապակյա միջնորմներ:

Նախարարի նախագծված է պարզ ձևով, հատակը Փամբակի և Տաղիկական Հանրապետության Լենինարադ քաղաքի բաց գույնի գրանիտից է, պատերը Արմավիրի կարմիր տուֆից են, իսկ առաստաղը պատված է կախովի 30x30 սմ «սակմիդրան» նյութից պատրաստված ծայնակլանիչ սալիկներով:

Ստորգետնյա կայարանը սյունազարդ է: Դաիլիճն ունի մոտ 14-19 մ լայնություն և 100 մ երկարություն: Այն թաղային ծածկերով բաժանված է երեք մասի: Կենտրոնական, համեմատաբար մեծ թաղային ծավալի ծայրերում տեղադրված է ամբողջ մակերեսի չափով մի որմնաքանդակ ուրայան սպիտակ մարմարից, «Սասունցի Դավիթ» էպոսի թեմայով (հեղինակը ժողովրդական քանդակագործ, ՀՍՍՀ Գեղարվեստի ակադեմիայի բղթակից անդամ պրոֆեսոր Ղուկաս Չորաբյանն է): Հատակը նույն նախշն ունի, ինչ որ ստորգետնյա նախարարինն է: Սյուները երեսպատված են նույնական սպիտակ ուրայան մարմարով, ունեն կորածն ենք ընկած մակերևույթներ, որոնք երկարված են կարմիր պղնձից մշակված կորածն ժապավենով: Այդ ժապավենների մեջ է տեղադրված լուսավորության աղբյուրը: Գրանիտե հատակը երկու կողմից շրջանակված է հղկված բազալտ 115 մ երկարության և 20 սմ լայնության և ռետիխն շերտով, որպեսզի գնացքի հջողութերը և բարձրացողները չսայթաբեն: Այդ նույն և ռետիխն պատված մակերևույթի կենտրոնական մասում տեղադրված, միմյանցից 2-ական մ հեռավորության վրա գտնվող լուսավորության աղբյուրները, որոնք գնացքը մոտենալուն պես սկսում են բարեթ, գգուշացնել ուղևորներին: Սրահի աջակողմյան և ձախկողմյան պատերը երեսպատվել են Աղվերանի բավականին բաց գույնի մարմարով:

## «ՄԱՐԴԱԼ ԲԱԴՐԱՄՅԱՆ» ԿԱՅԱՐԱՆ



Սպարտակ Կնդեղյան  
Նախագծի գլխավոր ճարտարապետ, ՀՍՄՀ վաստակավոր  
ճարտարապետ

Երևանի մետրոպոլիտենի «Մարշալ Բադրամյան» կայարանը գտնվում է ՀՀ նախագահի նստավայրի շենքի ուղղությամբ. Պուշկինի անվան գրոսայգու տեղամասում, կենտրոնական ծառուղու վրա կայարանի նախարարական դիրքը պայմանավորված է մետրոպոլիտենի ստորգետնյա մայրուղու և գրոսայգու կենտրոնական ծառուղու առանցքների հատումով: Ծառուղին կապված է Մարշալ Բադրամյան պողոտայի հետ բազրիքավոր բաց վերնարարական մեջոցով, որոնք անմիջապես անցնում են կայարանի նախարարական մեջոցով: Իսկ նախարարական փողոցին է միանում ստորգետնյա անցումով և մուտքի բեռնաբափող հարթակով:

Կայարանի սրահն ունի 860 ք.մ մակերես, շինարարության հիմնական առանձնահատկությունը նրա ծածկն է, որն իրենից ներկայացնում է մետաղական բարդ կոնստրուկցիա: Տակայական մետաղե շրջանակի մեջ (335 X 26 մ չափերով) հենվում է չորս ծխնիների վրա, ստեղծելով

2,5 x 2,5 մ չափ 100 քառակուսիներ, որոնց վրա էլ բարձրացավ ծածկը: Շրջանակի երկարությունը 33, իսկ լայնությունը 28 մ է:

Դրամարկղային սրահը կամ ներքին հարկը Մարշալ Բադրամյան պողոտային միանում է ստորգետնյա անցումով և մետրոպոլիտենի մուտքի մեջ գտնվող բեռնաբափող հարթակի միջոցով:

Շենքի ծավալային տարածական կոմպոզիցիան բնութագրվում է հետևյալ գործոններով:

ա/ դրամարկղային սրահի ստորգետնյա անցումի և գրոսայգու կենտրոնական ծառուղու տարբեր բարձրության վրա գտնվող հարթակներով,

բ/ գրոսայգին շրջապատող կանաչ միջավայրով:

Առաջինը բնութագրված է գուտ ֆունկցիայով, որը բացահայտորեն արտահայտված է կոմպոզիցիոն լուծման մեջ: Երկրորդը՝ որպես հետևյանը առաջինի, գուսակ է և պարզ իր ճարտարապետությամբ, որը ներդաշնակում է շրջապատող միջավայրին՝ չծանրաբեռնելով պուրակ ավելորդ ծավալով, միաժամանակ հնարավորին չափ պահպանելով պուրակը:

Մետաղական քառանկյուն ծածկը կարծես ի մի է բերում և ընդհանրացնում տարբեր հարթակների կոմպոզիցիոն լուծումը և ամբողջական ավարտուն տեսք է տալիս ճարտարապետական լուծմանը:

Ստորգետնյա կառամատույցը եռակամար սյունաշար սրահ է, որի ճարտարապետական լուծումը նույնպես բնութագրվում է ծայրահետ պարզությամբ և հստակությամբ՝ դառնալով վերին սրահի ճարտարապետական ինտերյերի արժանի համալիրը: Կառամատույցին սրահը երեսպատված է հղված սպիտակ մարմարով և Փամբակի գրանիտով: Լուսավորությունը լուծված է բյուրեղապակյա պրիզմայածեն պլաֆոններով, որոնք իրան հեծաններ կապում են սյունաշարերը:

Զավվածություն ու պարզություն ներդաշնակված շրջապատի հետ: «Ոչ մի ավելորդ ծավալ» - այս սկզբունքով են առաջնորդվել նախագծի հեղինակները:

## «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ» ԿԱՅԱՐԱՆ



Ստեփան Բյուրքչյան  
Նախագիծ գլխավոր ճարտարապետ, ԴՍՄՀ վաստակավոր  
ճարտարապետ

Երիտասարդական կայարանը կառուցվեց այն թաղամասում, որտեղ ծգվում են Արովյան, Մոսկովյան, Տերյան փողոցները։ Կայարանը դուրս է գալիս Ավ. Խահակյանի հուշարձանի և Խտալիայի ու հայ բանվորների բարեկամության խորհրդանշող մարմարե ծեռքերի միջին տարածքում։

«Երիտասարդական» կայարանն ունի երկրաբանական երեք բաժանում, որոնցից երկուսը՝ եզրայինները, նախատեսված են որպես կառամատույցներ։ Մասնաւորապես փոքր են միջին հիմնական թուիչքից։ Այս երկու տարածությունները միմյանց են հաղորդակցվում որմնասյուների միջև քողնված բացվածքներով, որոնք լայնությամբ հավասար են որմնասյուների լայնքին։ Յ մ։

Այս ռիթմը՝ որմնասյան և բացվածքի ամխախտ անցումն են կայարանների ամբողջ 100 մ երկարությամբ և կազմում են նրա ճարտարապետական-տարածական ծևավորման հիմնական ելակետային թեման։ ճարտարապետական մեկնարանման նպատակը եղել է մեկը, որը և ամենակարևորն է մարդու համար ստեղծել ազատ և ընդարձակ տարածությունների զգացողություն և նրանից վերացնել ստորգետնյա

տարածություններում գտնվելու միտքը։ ճարտարապետական յուրաքանչյուր ծևավորում բխում է այս նպատակի իրականացման ցանկությունից։

Օրինակ՝ կայարանի հատակը, որը ծածկված է հայկական ողորկված գրանիտով, առանց որոշակի ծևավորման, տարածվել է մի կառամատույցի եզրից մյուսը։ Այդ լուծումը տեսողական ընդարձակություն է հաղորդում և մեղմացնում է կայարանի երկայնական, երեք մասերի ջլատման պատճառվ առաջացած նեղվածությունը։ Նույն նպատակով մեկ ուրիշ լուծում։ Քանի որ կայարանը միայն արհեստականորեն է լուսավորվում, ուստի նրա ծածկերը, ներկվեցին ոսկեգույն օխրայով և թղողում են ցերեկային լուսավորության տպավորություն, ու տարածությունը մասամբ լցվում է արևային լույսի շերմությամբ։ Լուսավորությունն ավելի շեշտում է ողորկված ուրայան սպիտակ մարմարը. դրանցով երեսպատվել են բոլոր որմնասյունները և երկայնական պատերը։

Կայարանի երկու ծայրերում տեղադրված վերելակները մարդկանց հասցնում են վերգետնյա նախարարանները։ Ինչ է իրենից ներկայացնում այդ կապը, դա մի թեք խողվակ է, ուր տեղադրված են շարժասանդուղքները, նրա մի ծայրին ստորգետնյա կայարանն է իր գնացքներով, իսկ մյուս ծայրը, միացած է վերգետնյա մի փոքր շինության հետ, որտեղ մարդիկ նախապատրաստվում են ուղևորության։ Այս ելքերի և նրանց նախարարանների փունկցիան, որն անշուշտ դարձավ ճարտարապետական տարածական լուծման թեման ելակետը։

Այս գաղափարի ճարտարապետական մեկնարանման անհրաժեշտությունն ավելի հրամայական է դարձնում պուրակի բավականին փոքր չափսերը, որտեղ ուղանկյունած ստեղծված կառույցի տեղադրությը ամենալավագույն լուծումներով հանդերձ, իր տեղը չէր գտնի և կրուլացներ պիւրակի ամբողջությունը։ Գետնուղին, որը մարդկանց դուրս է թերում գետնի երես, մի փոքր շարունակում է բարձրանալ ծածկից վեր և միաժամանակ լուծում նաև նախարարի բնական լուսավորության հարցը։ Չմոռանանք նաև այս հաճելի հանգամանքը, որ շարժասանրությունը բարձրացնող ներքեցին կարող է տեսնել երկնային հեռուները։ Նախարարի պահերը արտաքինից երեսպատվել են բաց երանգի տրավերտինով, իսկ գետնուղու վերգետնյա երեսպատման համար օգտագործվել են փայլեցված լատումները՝ ուղեգույն տրավերտինի բաց երանգը և պուրակի կանաչը ստեղծում են հաճելի կոլորիտ ու տրամադրություն։

Պուրակը ամբողջությամբ բարեկարգվեց մետրոյի «Երիտասարդական» նախարարի ճարտարապետական ոճին համապատասխան։

## «ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ» ՀՐԱՄԱԿ



Զիմ Մելիքյան

Նախագծի գլխավոր ճարտարապետ, ՀՍՍԴ վաստակավոր ճարտարապետ, ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի ակադեմիկոս

Երևանի մետրոպոլիտենի «Յանրապետության հրապարակ» կայարանը կառուցվեց քաղաքաշինության խիստ բարդ ու պատաժանաւոր համգույցում Գլխավոր պողատայի և Նալբանդյան փողոցի հատման կետում, վարչական նորակառուց շենքերի առջև ստեղծված փոքր հրապարակի վրա: Յանրապետության հրապարակ համալիրն այնքան ավարտուն էր և կատարյալ, որ ցանկալի չէր այնտեղ ունենալ մետրոյի վերգետնյա կայարան: Այդ իսկ պատճառով նախապատվությունը տրվեց ստորգետնյա տարբերակին:

Ի տարբերություն նախկին Խորհրդային Միությունում գործող մյուս մետրոպոլիտենների կայարանների, այստեղ համատեղվել են երկու տարբեր ֆունկցիաներ ունեցող կառույցներ: Մունագործի հանգույց հանդիսացող մետրոյի կայարանը համատեղված է հասարակական բնույթ ունեցող կառուցվածքի հետ:


Նորաստեղծ հրապարակը լուծվեց որպես երկու տարբեր հարթությունների համադրություն: Յանրապարակի վերին հիշյալ համընկնում է գլխավոր պողոտայի հարթությանը և կարծես այն շարունակված է: Լայնահուն բազալտ աստճանները բարձրանում են դեպի հրապարակ: Շարտարապետական փոքր ծերը, քանդակները, քարե նստարանները ու ծալվարասերը կազմում են պողոտայի սահուն շարունակությունը:

Այս հարթության վրա ներքին տարածության լույս ադրյուրը 35 մ տրամագծով 8 թերթանի վարդանման բացվածքն է: Յանրապարակը սալահատակվեց բազալտով: Գրանիտներ երեք լայն աստիճանները մեզ իջեցնում են դեպի ներքին բակը, որը հրապարակի հարթությունից ցածր է գտնվում, 4,5 մ և 60x60 ք.մ մակերես ունեցող մի տարածություն է: Այստեղ կառուցվեցին սրճարաններ, բար, հուշանվերների վաճառասեղաններ, հանգստի անկյուններ, դրված են ռեկլամային ապակյա պրիզմաներ, որոնք միաժամանակ լույսի ադրյուր են հանդիսանում:

Կենտրոնում վարդանախչ բացվածքի տակ կառուցվեց շատրվաններով ջրավազան: Զիմ շիթերը բարձրանում են մինչև հրապարակի հարթությանը, և մի յուրատեսակ կապ է ստեղծել վերևի և ներքին մակարդակների միջև:

Սրահը երեսպատված է ողորկ սալերով 20x20 քառակուսի մետրանոց մի տարածություն: Այստեղ գործում են դրամարկղեր, ավտոմատ սարքեր, օժանդակ սենյակներ: Լուսավորությունը գտնվում է առաստաղի ծածկի մեջ: Շարժասանդուղըներն իջնում են եռանակ սրահների տեսքով կառամատույց: Մեջտեղի սրահի չափերը 8,5 x 73,5 մ, կողքի սրահները 8x103,5 մ: Թաղը հենված է 30 մայթերի վրա, որոնց չափերն են 1x2,2 մ: Մայթերի միջև ընկած տարածությունը օգտագործվում է լուսավորելու, տեղեկատվության և ռադիոֆիկացիայի համար: Կառամատույցը սալապատվել է Փամբակի ողորկած գրանիտով: Մայթերը երեսպատվել են սպիտակ մարմարով: Սպիտակ մարմարե արկանները փայլում են կարելական ողորկված գրանիտով:

## «ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ» ԿԱՅԱՐԱՆ



**Օտար Խաչիկյան**  
Նախագիծ գիտակող ճարտարապետ, ՀՍՍՀ վաստակավոր ճարտարապետ

«ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ» կայարանը գտնվում է քաղաքի կենտրոնին հարող տրանսպորտային երեք կարևոր հանգույցներով կազմված եռանկյան մեջ, որոնց շուրջը տեղադրված են համարաշաբախին նշանակություն ունեցող մարդաշատ հիմնարկները:

«ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ» կայարանը նախագծված է երեք մուտքով:

Առաջինի մուտքը տեղադրված է «Ռոսիա» կինոթատրոնի պուրակուն և սպասարկում է Հոկտեմբերյան պողոտայի, Խանջյան և 26 կոմիսարների անվան փողոցների տրանսպորտային ծանրաբեռնված հանգույցը: Հոկտեմբերյան պողոտայի տակ կառուցված ստորգետնյա հետիոտն անցնան միջոցով այս մուտքը կապվեց քաղաքի կենտրոնական մասը բոլորոր օդակածն զբոսայգուն:

Երկրորդ մուտքը լինելու էր Օրգոնոկիծեի պողոտայի, Կարմիր բանակի և 26 կոմիսարներ փողոցների խաչմերուկում կառուցվելու էր ընդարձակ ստորգետնյա հետիոտն անցում: Այս հանգույցի շրջակայքում են գտնվում կրկեսը, Սունդուկյանի անվան թատրոնը, Հեծանվարապարակը և Սպարտակ մարզական համալիրը:

Երրորդ մուտքը Հոկտեմբերյան պողոտայի, Մարքսի և դեափի երկա-

թուղային կայարան նոր բացվող փողոցների հատումից առաջացող հրապարակն էր լինելու, որտեղ գտնվում է կենտրոնական հանրախանությունը: Վերջին երկու մուտքերը իրար էին միացվելու ուղիղ գծով և հաղորդակցվելու էին եռաշերտ շարժվող մայթերի միջոցով: 280մ ընդհանուր երկարությամբ այս ստորգետնյա հետիոտն անցնան կենտրոնում էր տեղավորվելու մետրոյի կայարան տանող գավիթը: Մուտքերի միջև նման կապի գոյությունը միաժամանակ հնարավորություն կստեղծեր առանց խաչմերուկները հատելու անցնել ծանրաբեռնված մի հանգույցից մյուսը:

Վերը ասվածից դժվար չէ նկատել, որ մետրոյի «ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ» կայարան տանող երեք մուտքերը գտնվում են տրանսպորտային բոլոր տեսակներով հագեցած մայթուղիների հանգույցներում, որոնց շուրջը դասավորված են համարաշաբախին նշանակություն ունեցող հանդիսատեսային, առևտուի, մարզական և այլ բնութի մարդաշատ հիմնարկներ:

Օր օրի աճող մարդկային հոսքերի շարժման թելադրանքով և ընդարձակ կայարան ունենալու նպատակով այն նախագծեց որպես եռակամար սյունասրահ, որի միջին կամարի երկարությունը 120մ է, իսկ կառամատուցային կամարները՝ 103մ: Միջին կամարի 2 ծայրերում տեղադրված են վերին և ներքին տանող մեխանիկական շարժման եռաշերտ աստիճանավոր ուղիներ (շարժասանդուղմեր), որոնց միջոցով խորքային կայարանը կապվում է, մի կողմից «Ռոսիա» կինոթատրոնի պուրակի տակ տեղադրված նախասրահի, իսկ մյուս կողմից 2-րդ և 3-րդ մուտքերի միջև գտնվող ստորգետնյա գավիթին: Նախասրահի ցերեկային լուսավորությունն իրականացվեց եռյակ երդիկների միջոցով, նախասրահը եռանկյունածն է:

Եռակամարի խորքային կայարանի, նախասրահի և գավիթի հատակները պատվեցին Փամբակի գրանիտի ողորկված սալերով, որոնց միացման կարելում դրվող պղնձե շերտերի օգնությամբ սալերի դասավորությանը տրվեց որոշակի տեսք: Եռակամար կայարանի սյուները և պատերը եռեսպատված են ողորկված սպիտակ մարմարով, իսկ նախասրահի և գավիթի պատերը՝ հջանի կարմրավուն կոնգլոմերատի սալերով: Կայարանի ներքին տարածությունները ծևակորված են գրանիտի, մարմարի և բրոնզի գուգադրությամբ: «Ռոսիա» կինոթատրոնի պուրակում տեղադրված «ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ» կայարանի մուտքը գլխավորն է, այն միաժամանակ պուրակի մի մասն է կազմում, բոլորածն է, և կենտրոնում կիսարաց տեսք ունի, իսկ բացվածքը երիգված է խճանկարով:

## «Սասունցի Դպրութ» ԿԱՅԱՐԱՆ



Բաղդասար Արգումանյան  
Նախագիծ գլխավոր ճարտարա-  
պետ, ՀՍՍՀ վաստակավոր ճարտա-  
ռապետ

Այստեղ համադրվել է առաջին հերթին կայարաններից վեցերորդը հաշված Մարշալ Բաղրամյան պողոտայի և Կիևյան փողոցի հատման հանգույցից: Կառուցվեց Երկաթուղային կայարանի դիմաց, նրա արևմտյան կողմուն գոյություն ունեցած ծանրոցների պահեստի մեկ հարկանի շենքի տեղում:

Ի տարբերություն նախորդ կայարանների, Երկաթուղային գծերին գուգահեռ տեղադրված այդ կայարանը վերգետնյա է, հանգամանք, որը կապված է կայարանի ճարտարապետական տեսքի, ուղևորների հոսքի և մետրոպոլիտենի յուրահատուկ տեխնոլոգիական և ինժեներական այլ հարցերի լուծման պայմանների հետ:

Ուղևորների հիմնական հոսքը կազմակերպված է կայարանամերձ հրապարակից, ուստի և կառուցվեց Երկու ստորգետնյա ուղի, առաջինը Երկաթուղային կայարանի նկուղային հարկից, որտեղ տեղավորված են ծանրոցների պահեստասենյակները: Ուղևորները ճճ լայնությամբ ստորգետնյա թունելով մտնում են մետրոյի կայարանի աջ ստորգետնյա դրամարկղային սրահը, որպեսզի շարժասանդուղքով բարձրանան

կառամատույց: Այս թունելը միաժամանակ սպասարկում է Երևան Ժամանող գնացքները և աստիճաններով կապված է կառամատույցների հետ: Դա աննշույլ ծանրաբեռնում է ստորգետնյա թունելը: Այդ պատճառով էլ, Երեւով ուղևորների ազատ և հարմարավետ հոսքն ապահովելու նպատակից, նախագծված է (ցավոք, այն դեռ չի կառուցվել) Երկրորդ ստորգետնյա թունելը, որը սկսվում է մետրոյի կառամատույցի ծախ կողմից Երկրորդ ստորգետնյա դրամարկղային սրահից, անցնում Երկաթուղային գծի տակով, դուրս գալիս կայարանամերձ հրապարակի հարավային կողմը, որը սկսվեց 500 տեղանոց հյուրանոցի կառուցումը: Այստեղ կենտրոնացված են քաղաքային և քաղաքամերձ ավտոտրանսպորտի կանգառները: Այդ Երկրորդ ստորգետնյա թունելուն նախանական էր տեղադրել շարժվող մայթի ժապավեն, որը կիեշտացներ ուղևորների մոտեցումը մետրոյի կայարաններին:


Մետրոյի կայարանը բաղկացած է վերգետնյա կառամատույցից, աջ և ձախ ստորգետնյա դրամարկղային սրահներից: Վերջիններին շուրջը դասավորված են մետրոն սպասարկող ամերաժշտ սենյակները: Կառամատույցի և ստորգետնյա դրամարկղային սրահների կապն իրականացվում է Երեքական շարժասանդուղքների համակարգով, որոնք ապահովում են ուղևորների անխափան հոսքը:

Մետրոյի կայարանի վերգետնյա և բարձր դիրքը թելադրել է նրա ճարտարապետական կերպարի լուծումը: Կառամատույցը 102 մ Երկարությամբ և 10 մ. լայնությամբ, ունի Երկաթետոնի կոնստրուկցիայի ծածկ, որը հենակում է ընդերկայանական առանցքով դասավորված 8 սյուների վրա: Այդ կոնսոլային համակարգը Երկու կողմից ավարտվում է ստորգետնյա սրահներով և շարժասանդուղքներն ամփոփող ծավալային շեշտադրությամբ: Ստորգետնյա սրահների պատերը քանդակագրված են «Սասունցի Դպրութ» եպոսի թեմաներով:

Բարձրաքանակների թեմայի ընտրությունը պայմանավորված էր հրապարակում տեղադրված «Սասունցի Դպրութ» հուշարձանով և հանդիսանում է դրա տրամարանական շարունակությունը:

Մետրոյի կայարանի ներքին և արտաքին ծևավորման մեջ օգտագործվել են տուֆը, գրանիտը, մարմարը և արդիական նյութեր:

## «Գործարանաշին» կազմը



Տեղայիկ Ղուկասյան  
Նախագիծ գլխավոր  
ճարտարապետ

«Գործարանային» կայարանը նման չէ ոչ մի այլ կայարանի, ինչպես մետրոյի շինարարության ճարտարապետությանը մոտ կանգնած մարդիկ են ասում նույնիսկ մետրոշինության մեջ, և ունի իր ուրույն դեմքը: Այս տեղանասում առկա անքարենպաստ պայմանները, ստիլը են շինությունների ստեղծման գործում յուրովի մոտեցումներ դրսւորել: Կայարանի ճարտարապետը գտնել է հարցի լուծման ամենածիշտ բանալին:

«Գործարանային» կայարանը տեղադրված է Թամանցիների փողոցի երկարուղային ուղետարի մոտ, անմիջապես կամուրջի կողման: Ուղևորները շարժասանդուղքով իջնում են կայարանասրահ, որը Թամանցիների փողոցի կողմից վերգետնյա փողոցի մակերևույթին հավասար նիշի վրա է: Մյուս երեք կողմերից ստորգետնյա է: Ի տարբերություն մյուս կայարանների, տեղային սուր պայմաններից ելնելով, ծիշտ լուծում է գտնվել մետրոպոլիտենի գիծը պետք է անցներ կայարանասրահի վրայով և գեղասահիք դպրոցի ետևի կողմից մտնելու էր թունել:

Կայարանն ինքնատիպ կառույց է: Նախ՝ կառամատույցի ծածկի

համար նախատեսված բուրգածն երկաթբետոնը հենվում է 2 առանցքների վրա: Ցուրօրինակ լուծում է տված կառամատույցին, նախատեսվեց նրան տալ ուր անկյան ձև, ուր կամարներով, որը գրադարձող շուրջ 350 ք.մ մակերես:

Ինչպես երևաց, իրոք, կայարանի ողջ ճարտարապետական լուծման գաղափարը շատ բարդ է: Չե՞ն որ ինչպես նշվեց, նրա նախագծման, պատրաստման ազատության աստիճանը քիչ էր: Եվ ճարտարապետորեն նրա լուծման պարզ տարբերակի առաջարկը միանգանայն ողջունելի էր և մեծ հավանության էր արժանացել: Այսօր, երբ այն արդեն գործում է, և ի տև բոլորի կատարվել են ճարտարապետի կողմից առաջարկված բոլոր խնդիրները, մետրոպոլիտենի կայարանի ողջ համալիրն ունի հաճելի տեսք:

Կայարանը հարդարվեց Արմավիրի կարմիր տուֆով, Փամբակի և Կառւստիճնսկի գրանիտով, ուզբեկական մարմարով:

Ուղևորների մոտեցումն ու եվակուացիան ապահովելու նպատակով լայնացվեց թամանցիների փողոցի ծախ մայթը՝ Օրջոնիկիձեի պողոտայից մինչև «Նախիթ» գիտատեխնիկական միավորման և կարելի գործարանի միջև գտնվող ստորգետնյա անցումը:

Գործարանային կայարանի դրամարկղային նախասրահը տեղադրված է երկարուղային կամուրջի ետևում: Նախասրահում, գրանիտե սալահատակի մուգ մոխրագույն ֆոնի վրա, ժիտումիրյան կարմիր գրանիտե զարդանկարն ու բրոնզագույն կախովի այլումին առաստաղը լրացնում են Արմավիրի կարմիր տուֆով երեսապատված որմնաքանդակների հանդիսավոր մթնոլորտը:

Կառամատույցի դիմացի քանդակագորդ պատը պատկերում է բանվորների մի հոծ զանգված: Կառամատույցային սրահի երկայնական պատկերը, ծածկը կրող սյունաշարի հետ մեկտեղ, առավել նկատելի է դարձնում սրահի ներքին տարածությունը: Նշված ներ բացվածքներում տեղադրված են սպիտակ մարմարե տարածական զարդարանդակներ, որոնք դրսից լուսավորվում են հատուկ լուսյերով: Սրահը ծածկված է բրգածն կենսոնավոր մետաղային թեք ծածկով, որի կառուցվածքն անաշխ անգամ է կիրառվում մեր հանրապետությունում: Կառամատույցի հատուկ սրբատաշ բազալտե սալահատակը նոյնպես ունի կարմիր գրանիտե զարդանկարներ:

## «Շենգավիթ» ԿԱՅԱՐԱՆ



Ռոմեո Զուլիհակյան  
Նախագծի գլխավոր ճարտարապետ, ՀՍՄՀ վաստակվոր ճարտարապետ

Երևանի մետրոպոլիտենի «Շենգավիթ» կայարանը գտնվում է Թամանցիների փողոցի մոտակայքում Արարատյան փողոցի վրա :

Այս կայարանը վերգետնյա է բաց տիպի: Այն կառուցվել է թեք, կանչապատ լանջով փոսորակի մեջ, շրջապատի մակերեսից մոտավորաբես 4 մ ցածք :

Մետրոյի գծերը դուրս են գալիս փոսորակի մի ծայրում տեղադրված խոշոր թունելից, անցնում փոսորակի կենտրոնով՝ նրա ողջ երկարությամբ ու մյուս ծայրով՝ նորից մտնում կայարանի նախարարի և Արարատյան փողոցի տակով անցնող թունել: Մետրոյի գծերի երկու կողմերից, փոսորակի թեք լանջերից դուրս եկող մայթերը պահում են կառամատույցները իսկ մայթի կոնսոլային հեծանները կառամատույցների ծածկերը: Այս երկու կառամատույցներից յուրաքանչյուրի երկարությունը 102 մ է, լայնությունը՝ 5 մ: Դատակները երեսպատված են բազալտի և գրանիտի հղկված նախշազգարդ սալերով: Մայթի միջև տեղադրված են երկար, հարմարավետ նստարաններ, ինչպես նաև սյունե լուսամփոփների տակ հարմարեցվել են հարմարավետ նստա-

րաններ: Իջնող և բարձրացող քաղաքացիների համար կառուցվել են երկու մասից բաղկացած գրանիտե լայն աստիճաններ, որոնք ուղևորներին կառամատույցից տանում են դեպի փողոցի հարթության վրա գտնվող կայարանի նախարարից: Շինության նախարարի ծավալն է միայն, որ վեր է բարձրանում գետնի մակերեսից և իր վրա է կրում կառույցի քաղաքաշինական նշանակության շենքը: Այս հանգամանքից ելնելով, նախարարի կենտրոնական մասը բարձրացված է մոտ 10 մ և այս բարձր մասի մեջ բացվածքով կազմակերպվեց կայարանի մուտքը շեշտելով մոտեցող ուղևորների շարժման ուղղությունը: Կողքի երկու ավելի ցածք ծավալների փոքր բացվածքները ելքեր են: Նախարարին են գտնվում ավտոմատ հսկչները: Այստեղ է տեղադրված նաև սպասարկող անձնակազմի սենյակը: Կառույցի պատերը դրսից և ներսից երեսպատվել են տրավերտինի ողորկած սալերով: Նոյն սալերով են երեսպատվել նաև կայարանի տանիքները, քանի որ դրանք գտնվում են շրջապատի մակերևույթից ցածք և ըստ ճարտարապետական լուծման բնույթի, շինարարության տանիքներն ընկալվում են որպես ճակատ:

Կայարանի մուտքի մեջ բացվածքով անցնող լայն մակերեսին բարձրաքանդակ է թամանցիների մարտական ուղղությանը ներու...

Կայարանում մարդկանց շարժման ընթացքով, ուղևորները են գրաֆիկական նշանացույցեր, մետրոպոլիտենի ցանցի սխեմաներ:

Գիշերն ամբողջ կառույցը լուսավորվում է ցերեկային լույսով:

## «ՀԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՅԻ» ԿԱՅԱՐԱՆ



Լևոն Գևորգյան  
Նախագիծ գլխավոր ճարտարապետ, ՀՍՍՀ վաստակվոր ճարտարապետ

Մետրոպոլիտենի առաջին հերթի կայարաններից վերջինը գտնվում է Երևանի խոշոր արդյունաբերական շրջանի բնակելի հոծ զանգվածի կենտրոնում՝ Գարեգին Սմբեկի հրապարակի հենց մեջտեղի հատվածում, որը զգալիորեն նպաստում է քաղաքային տրանսպորտի այլ ձևերի և փողոցների ծանրաբեռնվածության բեռնաբանմանը:

9-րդ կայարանը ներկայացնում է մի ընդհանուր քաղածածկ սրահ՝ 150 մ երկարությամբ, 16,5 մ լայնությամբ և 6,5 մ բարձրությամբ։ Այդ ընդհանուր սրահի մեջ են նաև երկու նախասրահները, որոնք տեղավորված են կայարանի երկու խորը տեղակայման սրահներում, անշուշտ խոշոր առավելություն ունի եռակամար կայարաններում նկատմամբ։ Մեկ ընդհանուր ծավալը, ուր գտնվում է թե կառամատույցը և թե երթուղիները, տպավորիչ են ընդարձակությամբ և վեհությամբ։ ճարտարապետական հմուտ լուծումը կառուցվածքին տալիս է գեղագիտական հետաքրքիր տեսք։ Ահա այս հիմնական զաղափարն է, որին

ծգտել է հեղինակը կայարանի ճարտարապետական մեկնաբանման վրա աշխատելիս։

Կայարանում ոչ միայն 102 մ երկարության կառամատույցը, այլև ամբողջ սրահն իր երկարությամբ լուծված է խոշորացված ձևով։ Ընտրված են շինանյութերի հազվագյուտ տեսակներ, կառամատույցի հատակը, թաղի պատային (հենվող) ուղղածիկ հարթությունները ծածկվել են միագույն, գրանիտով, բաց եզրամասերը երեսպատվել են այումին պանելներով։ Դրանց հետևի մասում են գտնվում լույսի աղբյուրները և հնժեներական զանազան հաղորդակցությունները։ Սակայն ճարտարապետական այս զուսակ ոճը հարստանում է հարթությունների սահուն անցումով, հատակի խոշոր նկարազարդումներով։

Կայարանի ներքին տարածության մեջ օգտագործված այդ ձևերի ներդաշնակությունը նպաստում է մարդկանց մեջ զարգացնելու գեղեցիկի զաղափարը, այսինքն ճարտարապետությունը կատարում է իր հիմնական ծառայություններից մեկը։ Ինչ վերաբերում է ճարտարապետության մեկ այլ ծառայությանը՝ հարմարավետությանը, ապա նախագծով առաջարկվեց և կառուցվեցին շարժասանդուղբներ, նստարաններ, ցայտաղբյուրներ։

Կայարանն ունի ճարտարապետությանը բնորոշ պարզության, զսպվածության և նախագծին հարազատ ճարտարապետական վերարտադրության հատկանիշներ։

## ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԽՍՀՄ պետական էքսպերտ հանձնաժողովը դեռ 1981թ. հավանություն տվեց և երաշխավորեց ԽՍՀՄ նախարարների խորհրդին հաստատել Երևան քաղաքի մարդատար տրանսպորտային զարգացման կոմպլեքս սխեման, որը կատարվել էր «Երևաննախագիծ» ինստիտուտի կողմից, հեղինակային կողեկտիվ՝ հանրապետության վաստակավոր ճարտարապետ Է.Պապյան, ճարտարապետ Ֆ.Մարկոսյան, հանրապետության վաստակավոր շինարար Գ.Մուրզա, ինժեներ Է.Ստեփանով («Երևաննախագիծ» ինստիտուտ) և Յ.Կարանյան (ԴՍՍՀ պետպլանի հաշվողական կենտրոն): Փորձաքննական խորհրդի 1982 թ. հունվարի 19-ի N 29 որոշումով նախագիծը հաստատվեց: Նախագիծը մշակման ժամանակ դիտարկեցին Վերգետնյա և արտափողոցային զանգվածային ուղևորատորանսպորտի համակարգի զարգացման բազմաթիվ տարրերակներ: Դիտարկվող տարրերակների տեխնիկա-տեխնսական ցուցանիշների վերլուծության արդյունքով, նախագծով իրականացման առաջարկեց ամենաօպտիմալ, նախորդներից տարրեր, մետրոպոլիտենի սկզբունքային նոր սխեմա: Նախագծով վերգետնյա տրանսպորտային տեսակների ամբողջական զարգացման մեջ նախատեսված էր մետրոպոլիտենի ընդլայնման մեջ հեռանկարները: Նախագիծը նախաձեռնել էր Երևանի մետրոպոլիտենի կառուցումը Երևոն փուլով առաջինը մինչև 1990 թվականը և երկրորդը հեռանկարում մինչև 2000 թվականը:

Միանգամայն տեղին մետրոպոլիտենը երթեմն անվանում են անընդհատ շինարարություն: Դրանում ծշմարտության մեջ բաժին կա: Խորհրդային Երկրի ստորգետնյա մայրուղիների առաջնեկը Մոսկվայի մետրոպոլիտենը, ինչպես նշվեց, սկսել էր կառուցվել դեռևս 70 տարի առաջ, այսօր էլ շարունակվում է նրա շինարարությունը:

Մոսկվայի համեմատությամբ մերը՝ Երևանյանը, տակավին մանուկ էր: Նրա առաջին ճեղքաբանները նոր էին ընթացք վերցնում, 1982 թվականի ավարտի շեմին մեծ տեմպերով կառուցվում էր առաջին հերթի երկրորդ ուղեմասը և հետևողական քայլեր էին կատարվում երկրորդ հերթի աշխատանքներն սկսելու համար:

«Երևաննախագիծ», «Հայպետորաննախագիծ» ինստիտուտների կողեկտիվներն աշխատանքներ էին տանում Երևանի մետրոպոլիտենի հետագա հերանկարների զարգացման նախագծերի իրականացման ուղղությամբ: Նոր խնդիրների կատարման համար մեկ անգամ ևս կառավարությունը, 1982 թվականի սեպտեմբերի որոշմամբ, պարտավորեցրել էր չքուլացմել մետրոպոլիտենի հեռանկարային զարգացման տեմպերը:

«Երևաննախագիծ» ինստիտուտում աշխատում էին երկու կարևոր թեմաների վրա: Այդ թեմաները՝ Երևանի մետրոպոլիտենի հատակագծերն էին 1986-1990թ. և 1990-2000 թթ. ժամանակաշրջանների համար: Նախ, ըստ հեռանկարի: Այն կազմված է երեք դիմանետրալ գծերից, որոնք ընդգրկում են քաղաքի բոլոր բնակելի շրջանները և քաղաքի կենտրոնական մասում կազմում են երեք տեղափոխման (գնացքափոփոխման) կայարաններ: Երևանի մետրոպոլիտենի զարգացումը նախատեսվում էր երեք ուղղությամբ, իրար խաչվելով՝ հյուսիս - արևմուտք - հարավ - արևմուտք / Ուագրշեն-Աջափնյակ-Կենտրոն-Հարավ արևմուտքի արդյունաբերական շրջաններ/: Արևմուտք-արևելք ուղղությամբ / Արևմտյան բնակելի զանգված - Կենտրոն-Նորքի բնակելի զանգված/: Յյուսիս-Արևելք-Հարավ / Երևան գործարան-Կենտրոն-Նոր-Արեշ-Հարավ արդյունաբերական շրջան/, ընդհանուր երկարությունը՝ 47 կիլոմետր 36 կայարաններով (գործող 10,5 կմ գծի երկարության և 9 կայարանների հետ միասին): Դրանք մետրոպոլիտենի շինարարական աշխատանքների ծավալի տեսակետից բավականին ծավալուն ծրագրեր են, որոնց հաջող իրականացումը լրջորեն կփոխեր մեր ստորգետնյա մայրուղու դեմքը, անհամեմատ կմեծանար նրա տարածքային ընդգրկվածության շառավիղը:

Նախագծային փաստաթղթերը հիմնականում կազմվում էին նախագծային երկու ինստիտուտներում.

- Ուղեգծերի և ստորգետնյա կայարանների կոնստրուկցիաների մշակում «Հայպետորաննախագիծ» ինստիտուտում

- Վերգետնյա կայարանների, նաև նրանց նախարարների նախագծումը և ստորգետնյա կայարանների ճարտարապետական ձևավորումը «Երևաննախագիծ» ինստիտուտում:

Նախ ասենք, որ ըստ առաջին հատակագծի, նախատեսված էր

մինչև 1986թ. ավարտել առաջին հերթի շինարարությունն ամբողջությանը, ապա դուրս գալ Աջափնյակ: Այդ նպատակի համար «Հայպետտանախագիծ» ինստիտուտի կողմից հրականացվեց Աջափնյակ թաղամաս գնացող մետրոպոլիտենի գծի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը (նախագծի գլխավոր ինժեներ Զոն Դարությունով), որը նշակվեց համատեղ «Երևաննախագիծ» ինստիտուտի հետ միասին: Նախատեսվեց հետագա տարիներին այդ ուղղություններում կառուցել երկու կայարան: Ի դեպ ուղղությունն սկսվեց «Բարեկամություն» կայարանից, և անցավ Դարձան կիրճով դեպի Աջափնյակի թաղամասը: Հայարյան-Աբելյան և Մազմանյան-Շիրազ փողոցների հատման միջև գցվելու էր խորը ներդրման կայարաններ: Գծի երկարությունը մոտ 3.6 կիլոմետր կառուցվելու էր երկու կայարան՝ մեկը «Արագած» կինոթատրոնից ոչ հեռու, մյուսը 15-րդ միկոշքանում: Մետրոպոլիտենի այդ գիծը Աջափնյակը և Դավիթաշենի թաղամասը կկապեր քաղաքի կենտրոնի և մյուս արդյունաբերական շրջանների հետ:

Երկրորդ ուղղությունը նախատեսված էր անցկացնել «Բարեկամություն» կայարանից դեպի Էլեկտրալանպերի գործարան /մետրոպոլիտենի այս հատվածի տեխնիկա-տնտեսական հիմնավորումները և կատարվել էին համատեղ վերը նշված ինստիտուտների կողմից, որոնց նախագծի կոմպլեքսի գլխավոր ինժեներն է Լևոն Տիգրանյանը/: Այս հատվածում ենթադրվում էր տեղադրել 4 կայարան Շիրվանզադեի անվան դպրոցի շրաջակայքում, կոլտնտեսային շուկայի մոտակայքում, Ազատության պողոտայի և Կոմիտասի փողոցի միացման հատվածում և չորրորդը «ԵրԱԶ» ավտոգործարանի մոտ: «Բարեկամություն» կայարանից մինչև «ԵրԱԶ» ավտոգործարանի հատվածում չորս կայարանների նախատեսումը քննարկման առարկա էր դարձել իրավասու կազմակերպությունների կողմից կայարանների թվի պատճառով: Դրանից ելնելով «Հայպետտրանսնախագիծ» և «Երևաննախագիծ» ինստիտուտները համատեղ նշակեցին նաև երեք կայարանների տարրերակը: Այս գիծը, 5 կմ երկարությամբ խորը ներդրմանը, կայարաններով կկապեր նոր վերակառուցվող Քանաքեռը և ողջ Արարակիրը քաղաքի կենտրոնով հարավային արդյունաբերական շրջանի հետ: Նախատեսվում էր դեպի Աջափնյակ գնացող մետրոյի շինարարությունն իրականացնել 1985-1990թթ. ընթացքում, իսկ դեպի «ԵրԱԶ» ավտոգործարան

գնացող գիծը 1990-1995թ. ընթացքում:

Դակիրծ կանգ առնենք երկու ուղղությունների վրա /մյուս ուղղությունների մասին ընթերցողը գաղափար կկազմի ներկայացված սխեմայից/:

Նախագծողների համար առաջին և կարևոր հիմնահարցերից էր դեպի նոր նոր գնացող մետրոյի գծի անցկացման հարցի արմատական լուծումը: Բան այն է, որ քաղաքի կենտրոնի («Հանրապետության հրապարակ») և նոր նոր գանգվածի հատվածի նիշերի բարձրությունների տարրերությունը տատանվում է ավելի քան 400 մետրի շրջանակում: Ակզերում ծագեց այն միտքը, որ նոր գանգվածի համար օգտագործվի խոշոր վերելակներ, որում տեղավորվեն 300-400 մարդ և դրանց միջոցով լուծել մետրոյի հատվածի շարունակությունը դեպի նոր նոր կոլտնտեսային շուկա: Սակայն այս առաջարկությունը չընդունվեց: «Երևաննախագիծ» ինստիտուտի կողմից մշակված տրանսպորտի գաղաքաման կոմպլեքսային սխեմայով նորքի գանգվածի ագգարնակչությանը մետրոպոլիտենով սպասարկելու համար նախատեսվեց Դարավ-Արևմտյան թաղամասից մետրոյի գիծն անցկացնել քաղաքի կենտրոն, ապա նոր-Մարաշից դեպի նորքի բնակելի գանգված: Թույլատրվեց ավելի մեծ թերություններով նախագծում, համեմատած եղած նորմատիվների: Այստեղ կայարաններից մեկը պետք է գտնվեր նորքի 5-րդ գանգվածի Ռազին ֆիրմային խանութի մոտ, մյուսը առաջին գանգվածի ունիվերսամի հարևանությամբ:

Ի դեպ, Հարավ-Արևմտյան թաղամասից Մաշտոցի պողոտայի շուկայի տակով մետրոյի գիծը գալու էր դեպի գլխավոր պողոտան և ապա «Երիտասարդական» կայարան: Դրանով իսկ Արևմտյան բնակելի թաղամասի բնակչության հնարավորություն կունենային քաղաքի կենտրոն հասնել ընդամենը 15-20 րոպեի ընթացքում /նույն հնարավորությունները կունենային Աջափնյակի, Երեբունու, նոր նորքի, Զեյթունի բնակչությունը/: Ամբողջությամբ վերցրած, նախատեսված մետրոշինարարության իրականացման դեպքում կտրուկ կնվազեր բնակչի կողմից ճանապարհի վրա ծախսան ժամանակի կորուստը:


Ցանկանում ենք ընթերցողին տեղեկացնել, թե «Հայպետտրանսնախագիծ» և «Երևաննախագիծ» ինստիտուտների կոլեկտիվները ինչպիսի խորը, հիմնավորված և քախնդրորեն բարեխնդությամբ էին լու-

ծում ամեն մի հարց. Երանց համար «մանրությ» հասկացողություն չի եղել, ամեն ինչ կարևոր էր: Այդ նպատակով բերենք հետևյալ օրինակ-ները:

Հատերն էին հարց տալիս, թե որքանով է նպատակահարմար «Դայ-պետուրանսախագիծ» ինստիտուտի կողմից «Ծենգավիթ» կայարանի ստեղծումը «Գործարանային» և «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայարանների միջև ընկած ոչ մեծ հատվածում: Սա էլ գիտականորեն խորը մտածված և ճիշտ հաշվարկված քայլ էր նախագծային կոլեկտիվի կողմից: Այս թե ինչու: «Ծենգավիթ» կայարանը, որպես այսպես ասած «ինքնուրույն» կայարան, այո, բոլորովին էլ նպատակահարմար չէր: Բայց նախագծողները նրան տվեցին «օգնողի» կարևոր դերը: «Ծեն-գավիթը» հանդիսանում էր «Գարեգին Նժդեհի հրապարակի» բեռնա-թափող կայարանը: Ոմանց դժվար է պատկերացնել, թե ինչպիսի ծան-րաբեռնվածություն կունենար «Գարեգին Նժդեհի հրապարակ» կայա-րանը, ուղևորների ինչ հոսք կընդուներ այն հատկապես «պիկ» ժամե-րին, երբ մեր մետրոպոլիտենն սկսեր գործել ամբողջ թափով, ասենք «Երևան» ավտոգործարանից մինչև «Էլեկտրամեքենաշինականը»: Եթե չկիներ «Ծենգավիթ» կայարանը, ապա անպայման խցանումներ կառա-ջանային «Գարեգին Նժդեհի հրապարակի» կայարանում: Նախագծող-ների կողմից խորությամբ ուսումնասիրված ուղևորների հոսքի վերլու-ծությունն էր ցույց տվել, որ «Ծենգավիթի» օգնությունն անհրաժեշտ էր:

«Երևաննախագիծ» ինստիտուտի կոլեկտիվի խորն ուսումնասի-րությունների և ճիշտ եզրահանգման արդյունքն այն էր նաև, որ նախա-տեսվեց որոշ կայարաններում ունենալ երկու մուտք և այս ուղղությամբ ևս ինժեներները, ճարտարապետները բավականին աշխատանքներ էին կատարել 1980 թվականի առաջին տարիներին: Այսպես, որոշ կա-յարանների երկրորդ մուտքի շինարարության իրականացումը նախա-տեսված էր մետրոպոլիտենի հետագա զարգացումով Վերը հիշատակ-ված առաջին հատվածում 1986-1990թթ. ընթացքում: Նախատեսված էր ճարտարապետական հետաքրքիր լուծումներով, «Երիտասարդա-կան» կայարանի երկրորդ մուտքը տեղաբաշխել Արովյան և Սայաթ-Նո-վա փողոցների հատույթի հատվածներում: Անչափ կարևոր նշանակու-թյուն կունենար «Զորավար Անդրանիկ» կայարանի երկրորդ «դարպա-սը»: Նախատեսված էր այն դուրս բերել կարմիր Բանակի (Գրիգոր Լու-

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆԻ ԳՈՐԾՈՂ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԳԾԵՐԸ



-  **Գործող գծեր**
  -  **Հեռանկարային գծեր**

Գծերի ընդհանուր երկարությունը 47 կմ՝ 36 կայարանով

սավորիչ) փողոց և ստորգետնյա անցումի շարժասանդուղքի հետ միասին լինելու էր հաճակառույցի բաղկացուցիչ մասը, որի շնորհիկ հաջողությամբ կլուծվեր 26 կոմիսարների (Ազաթանգեղոս), Կարմիր Բանակի (Գրիգոր Լուսավորիչ) փողոցների և Օրջոնիկիձեի (Արշակունյաց) պողոտայի խաչմերուկում տիրող բարդ հրավիժակի պարզեցման կարևոր խնդիրը: Մյուս ելքը նախատեսված էր դեպի հանրախանություն՝ նախատեսված էր և արդեն ամբողջությամբ նախագծվել և մասնակի կառուցվել էր «Սասունցի Դավիթ» կայարանի երկրորդ մուտքը, վերգետնյա կայարան ստորգետնյա շարժանայթով և այլ հարմարություններով: Ի դեպ, «Սասունցի Դավիթ» հրապարակին հարող, դեպի կառուցվող հյուրանոց գնացող ստորգետնյա թունելի համար կառուցված կառանակահատվածից ծայրում գտնվող սպասարակը գրեթե ամբողջությամբ ավարտված է, մնում է ստորգետնյա անցուղու կառուցումը:

Ինչ վերաբերվում է 1990-2000 թթ. Երևանի մետրոպոլիտենի երկրորդ փուլին, այն գտնվում էր մշակման գործընթացում և մինչև խորհրդային կարգերի փլուզումը գրեթե ամբողջությամբ ավարտվել էր, այդ ժամանակահատվածում արմատական լուրջ գործեր և կատարվեցին:

Մի բան պարզ էր, որ մինչև դարի վերջը մենք կունենայինք բուռն և զարգացող մեր մայրաքաղաքին վայել մետրոպոլիտենի զարգացման ուշագրավ հատակագիծ, որի իրականացումը կլիներ մեր ժողովրդի կարևոր և խիստ անհրաժեշտ, միևնույն ժամանակ գեղեցիկ նվաճումներից մեկը:

## ՎԵՐՉԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Փորձ արվեց Երևանի մետրոպոլիտենի շինարարության լայնածավալ աշխատանքների մասին խոսել մի քանի էջի սահմաններում, մինչեղու դարի հզոր կառույցը պահանջում է դրա մասին գրել հաստափոր գրեթե...

Երևանի մետրոպոլիտենի կառուցումը հանրապետության քաղաքաշինության առավել խոշոր խնդիրներից էր, որի լուծմանն ակտիվորեն մասնակցեցին հազարավոր մարդիկ՝ քաղաքաշինարարներ, ինժեներներ, ճարտարապետներ, շինարարներ... Մի քան անժմտելի է, առանց խորհրդային Միության մետրոշինարարների ընտանիքի, երկու հայուրից ավելի հիմնարկ-ձեռնարկությունների ամենօրյա և գործնական օգնության, համատեղ ջանքերի, հնարավոր չեր հրականացնել Երևանյան մետրոպոլիտենի համաժողովրդական դժվարին կառույցը:

Ում վիճակվել է թեկուզ մեկ օր աշխատել թունելախորշում, կիսականա, թե ինչ է նշանակում մեկ մետր հորատանցում կամ թուշ մեկ օդակի ամրակապում Երևանյան դաժան ընդերթի պայմաններում: Իսկ այդ մետրերն ու օդակները հազարներով են հաշվվում: Եվ քազմապիսի ու քազմաթիվ այլ աշխատանքներ, պրոբլեմներ, հոգսեր ու մտադրացումներ, չնայած աշխատեսված խոշնդոտներ, որոնց հաղթահարումը Հայաստանի Կոմկուսից և Կառավարությունից, նախարարություններից և գերատեսչություններից, մետրոշինարարներից պահանջեց համախմբված ուժի առկայություն, մեծագոյն ջանքեր:

Մետրոպոլիտենն ապագա կառույց է, և հուսով եմ, որ այս գործը կշրունակեն հավատով լցված, միշտ դժվարությունները հաղթահարող, մաքարող ու արարող հայ ժողովրդի գալիք սերունդները, այսօրվա դպրոցականները և գուց նաև նրանք, ովքեր դեռ չեն ծնվել: Ինչ խոսք, նրանց համար ավելի դյուրին կլինի դա. Կծնվեն նոր հայտնագործություններ, նոր առաջընթաց կապիրի գիտությունն ու տեխնիկան, նորից հարկ կլինի Երևանան ընդերթին շունչ հաղորդել: Առանց քաղաքաշինարարների, ինժեներների, էլեկտրիկների, հորատողների, մեքենավարների, մարկեյների, ճարտարապետների, եռակցողների, բետոնագործների գետնուղիներ և կայարաններ չեն կառուցվի: Ճիշտ է, այդ մասնագիտությունները նոր որակ կատանան, ավելի կվատարելագործվեն, բայց նախ հարկ կլինի դրանք սովորել ու տիրապետել... Թե ինչպիսին կլինի կառուցվող մետրոպոլիտենը, կախված է նրանից թե ովքեր են շարունակելու այս մեծ գործը, որի շինարարությունն սկսվեց ավելի քան 30 տարի առաջ, պայմանավորված է նրանց ազգանվեր աշխատանքով, կառուցելու ու շենացնելու այն շնորքով, որ ժառանգելու են նրանք իրենց հայրերից:

Նրանք, ովքեր երբեք մասնակցել և աջակցել են այդ կառույցին,

հպարտությամբ կիշեն այդ ժամանակաշրջանը: Ներկա և գալիք սերունդները երախտապարտ կլինեն բոլոր նրանց, ովքեր կրել են մետրոյի կառուցման հիմնական ծանրությունը: Երբեք չի մոռացվի մետրոպոլիտենի գաղափարի հրականացման արագընթաց տրամվայի շինարարության ընթացքում ազգի նվիրյալների կատարած մեծ աշխատանքը, որը սկիզբ հանդիսացավ: Սակայն յուրաքանչյուրը պետք է լավ իիշի մետրոյի շինարարության առաջին խկ օրից սկսված այն մեծ պարուս, մարդկանց, սերունդներին ծառայելու այն հումկու ալիքը, օգնող, խրախուսող, հեկավարող և հսկող այն հայացքը, որ կար մեզ մոտ: Այդ հայացքը, ինչպես Երևանի մետրոպոլիտենի շինարարության ժամանակ, միշտ կար ամենուրեք, և տեսել, զգացել ենք բոլորս: Այսօր էլ ես տեսնում եմ այդ հայացքը գործին յուրաքանչյուր տողատակին: Դա Կարեն Դեմիրճյանի հայացքն է, որը պետք է փոխանցենք դարերին...

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արժեքավոր գիրք հզոր կառույցի մասին	3
Նախաբան	8
Զիաթարշը, էլեկտրատրանսպորտը և	
քաղաքաշինությունը	9
Առանց որևէ հույսի...	23
Արագընթաց տրամվայի շինարարությունը	54
Եջեր Երեվանի մետրոյի շինարարության կյանքից	
Մետրոպոլիտենի շինարարությունը	76
Վճռորոշ ժամանակաշրջան	129
Որպես կոլեկտիվի անդամ	169
Մետրոպոլիտենի շինարարության ընթացքը	
(1981թ. ապրիլ - 1990թ.)	228
«Չորրորդ իշխանություն»	281
Դամախմբող ուժ	312
Արժանի գնահատական	331
Երևան մետրոպոլիտենի տեխնիկան,	
նորագույն լուծումների իրականացումը	345
Երևանի մետրոպոլիտենի կայարանները	365
Մետրոպոլիտենի հեռանկարները	386
Վերջաբանի փոխարեն	392



Օւլյեկ Եղիշը Գևորգյանը ծնվել է 1935թ. Երևանում: 1954թվականին միջնակարգ դպրոցն ավարտելոց հետո զորացրվել է բանակ: 1962թվականին ավարտել Երևանի դրամետների կանոնադրությունում: 1969 թվականին անձնելով աշխատանի 344 Երաշղործում, զբաղվել է նյարդավարի ծան արդյունաբերության հետ կառված հարցերով: 1972 թվականին նորասեղծ Խորհրդային շքանում 344 շքլոնի արդյունաբերության և տրամադրման բանի վարչ էր: 1982-1991թ. նույն շքանում եղանակ հարցում էր: Աշխատել է «Անբեյ» աստղիացիայի նախագահ: Այժմ «Գիտելիք» միության դաշտախանառու հարտակում է: Ո.Գևորգյանը քարեկիդ աշխատանի, կազմակերպական մեծ ունակության, աշխատահրության և խստահանջության ընորիկ Խորհրդային շքանում աշխատած 19 տարիներին շքանի առջև դրված խնդիրների հիմքանացման, կառուցված քաղաքասերի, տանակական կառավագական պատճենների համար պատճենագործման, շքանի բարեկարգման, նոր այգեգերի և դրույկների հիմնման առաջին դաշտախանառու անձերից է եղել:

1972թվականից անընդմեծ ընտրվել է շքխորհրդի, իսկ 1982 թվականից՝ Երևաղյուրհրդի ղազամավիր: Շուրջ 10 տարի լինելով Երևաղյուրհրդի բարեկարգման և կանաչապահության ղազամավորական հանձնաժողովի Հայաստանի մասնային ազգային ակադեմիայի անդամ: 1988 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1990 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1991 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1992 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1993 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1994 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1995 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1996 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1997 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1998 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 1999 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2000 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2001 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2002 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2003 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2004 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2005 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2006 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2007 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2008 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2009 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2010 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2011 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2012 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2013 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2014 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2015 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2016 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2017 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2018 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2019 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ: 2020 թվականից՝ Հայաստանի ազգային ակադեմիայի անդամ:

ՀԱՅՐԵՆԻ ՏԵՇԻՆ ԱՆՎԱԾԸ «ԵՐԵԿԵԿԱՎԱ ԵՐԱԱՆ» թարթու ՆԵՐ ԱՇԽԵՐՈՒՄ Ի ԽԱՂՋԱՄ ՈՒՏԵ «ԿԱՐՏԻԽԱՐՐԱ», ԻՐԱՎԱՅՐ ԿԱՎՈՐ Է ԽԱՄԱՐԵԼ ԱՊՐՈՒՄ ՎԱՐՈՐՈՒՅԹ, ՈՐ ԻՐԱ ԱՄԻԽՅԱԿԱՆ ԱՐՁԱՉԱ ԿՈԴ ՆՈ ԳՐՈՒՄ ԱՄԱՍԱՄՊՈՒՐՅԱՄ Ք-ԾՎԵՐ Ո ԽԱԾԵՒ Է ԽԱՄԱՐՄԱՆ ԳՈՒՄՆ ԴԱՎԻՇ՝ ԱՄԱՐԻՇ ԿՐԴԱՆԻ ՏԱԿԱՄՈՒՄԾՄ ՀԱՐԴՎԱՆՆԵՐԻ ԽԱԽԱՄ ՈՐՈՇԵԿԵՐԸ

Խորհրդային կարգերի օրու Ասրի ցըանի Սամարյան գյուղը  
է վելուց Վերակառւցման և շահագործման, Դայնական  
դաշտազմուն զիվածների հիշատակը հավեժացնող հուշա-  
ձանի կայացման, գյուղ բարեկազման և ասվայտապահման,  
Մայնի ցըանի Գանահովության գյուղը «Հյուս» կոչվի  
Քարեկավայ մասնաճյուղի հիմնման (որի ընդունվ գյուղը  
փրկվեց աղետայի արտագրից) և մի շարք այլ աշխատան-  
ների նախաձեռնողն ու կողրդինացնողն է եղել:

Բազմաթիվ ռադիոհաղորդումների, լավացին հոդվածների հետինակ է, եղուրներ ե ունեցել հայկական հեռուստաբուժամբ հասարակական դաշնա Երևանի համար համար աշխատնի բրդբաններ, հարցեր. Նա արժանացել է «Տուրքական Հայաստան» թերթի մագանակին: